



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱԳԱՆԵԱՆԻ

Կարգաթիվ 131



Digitized by Google

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

1894

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՐԵՑ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

معارف نظارت جليله سلك رخصتيله طبع اولقشدر



ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊՈՋԵԱՆ
Կարգաթիւ 131

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ԵՆ ՎԻՄԱԳՐ. Գ. ՊԱՂՑԱՏԵԼԵԱՆ

Սու լրան համամ հասցէսի, քիւ 14

1894

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

G. A. ...
(1911)
...

GRAD
EREN

629

02/28/96

ՀՕԻՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՖՆՏՔԼԵԱՆԻ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԿԸ 20ԵԵՄ

ԿԵՆԱՑ ԱՅՍ ԳԻՐԲԸ

Գ. Յ. Ն.

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
 Գ Ր Ր Գ Ր Ա Պ Ա Ճ Ե Ա Ն
 Կարգաթիւ.....

Գիրք մը, որոյ մէջ Աստուծոյ խօսքերը կան, գիրք մը որ աշխարհի շնորհած է փրկութիւն, եղած է եւ է բարեբար մարդկութեան, գեր ի վեր է սմէն գովեալէ. զի ուր բերանն Աստուծոյ կը խօսի, հոն կը լսէ բերանն մարդոյ:

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ Մէկ Աստուած կայ, ԵՐԵՔ անձնաւորութեամբ. Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Հոգի Աստուած (Մատթ. ԻՐ. 19):

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ Աստուած հոգի է եւ մարդն Աստուծոյ երկրպագելու է հոգւով եւ ճշմարտութեամբ (Յովհ. Գ. 24), վասնզի մեր հոգին որ իրմէն է եւ որոյ ձայնն է ճշմարտութիւն. Աստուծոյ հետ միշտ յարաբերութեան մէջ ըլլալու է. այս է ճշմարիտ հաւատքն ու կրօնք:

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ աշխարհ ազարակ մըն է, եւ մարդս հոն Աստուծոյ ձգուած հունտ է, որ չտօնիր եւ չծաղկիր, եթէ չտոնոյր ի աւետարանին կենդանութեան ցրովը (Մատթ. ԺԳ. 4—23), Ան որ պառուզ չբերեր, այսինքն բարեգործ չէ, կը կտրուի եւ կրակը կը ձգուի. իսկ ան որ պառուզ կը բերէ, կը փառաւորուի Աստուծոյ. այս է Աստուածային արդարութիւնը.—տալ փոխարէնը ինչ որ ընէ մարդ աշխարհիս մէջ կամ այժմ սատ եւ կամ ի հանդերձելու մն (Մատթ. Է. 19—24):

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ մարդ աշխարհս փայլելու է, այլ սակայն մարդ իւր վայելքին մէջ չափ ունենալու է. չափէն աւելի մոյութիւն է եւ ինչ որ մոյութիւն է, մեղք է (Մատթ. Զ. 31—34):

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ ան որ մեզք կը գործէ եւ անկապող է մեզքէ հրամարելու, ուրիմն ան գերի ու ծառայ է մնացայ, ուստի մարդ գիտնալու համար թէ ի՞նչ է աստուածանմանութիւնը, գիտնալու է թէ ի՞նչ է ճշմարտութիւնը, այսինքն ի՞նչու մեզք գործելու չէ (Յովհ. Ը. 31—58)

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ ծնողք են յարգելի իբրեւ պատելի Աստուծոյ, եւ չկայ ծնողասիրութենէն աւելի բան մը, որ առաքինական ըլլայ, ուստի Քրիստոս խափել կշտամբեց Փարիսեցիներն, որք խեղութիւրած էին, «Պատուեա զհայր քո եւ զմայր», տաճարանեայ պատուէրը (Մատթ. ԺԵ. 4—10)։

Աւետարանն է, որ կը վարդապետէ, թէ մարդ երկիրս ու երկինքը վայելիլու համար գիտութեան պէտք ունի. ուրիշներէն ուսանիլ, գրքերէ հրահանգուիլ եւ վարդապետիլ, լուսաւորել եւ լուսաւորուիլ, այսինքն ապիստութիւնը մերժել եւ միշտ ընդունիլ յայտ եւ լոյսով ողորդուիլ. այս է մարդն ամենեւին (Յովհ. Ե. 39, Զ. 45)։

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ Սէ՛րն է միայն մարդկային ազգի երջանկութեան էական պայմանը եւ սէրն երբեք ըլլալու չէ սահմանափակ, ոչ թէ միայն առ մեր ընկերս եւ առ բարեկամս մեր սէր ունենալ պէտք է, այլեւ առչարարարս եւ թշնամիս մեր, եւ այս սէրն ոչ թէ միայն առ կենդանութեան ըլլալ պէտք է, այլեւ յետ մահու եւս. օրինակ Քրիստոս, որ լացաւ Ղազարու գերեզմանին վրայ (Յովհ. ԺԳ. 35, ԺԱ. 35, Մատթ. Ե. 44)։

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ իշխանութիւնն է վերէն՝ երկինքէն հաստատուած, ուստի զայն խաբելն ու զաւանդելն է ամբարշտութիւն, եւ անաւոր մեզք. եւ թէ կայսերն կայսեր տայ եւ Աստուծոյն Աստուծոյն է մի միայն հիմն խաղաղութեան աշխարհի (Յովհ. ԺԹ. 11, Ղուկ. Ի. 25)։

Աւետարանն է, որ կը վարդապետէ թէ Յիսուս Քրիստոս է փրկութիւն աշխարհի. այն է մեր կերակուրը, մեր լոյսը, մեր կեանքը, մեր ճանապարհը, մեր հովիւր եւ մեր բարեկամը եւ որ զմեզ ոչ թէ միայն ընտանի կրնէ Աստուծոյ, այլ եւ զաւակ Աստուծոյ (Յովհ. ԺԱ. 25, ԺԳ. 6, ԺԲ. 46, Ժ. 11, ԺԵ. 14, Ա. 12)։

Աւետարանն է, որ կը քարոզէ թէ սմուսնութեան օ-

րէնքն է սուրբ միաւորութիւն. «Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ զմին ատիցէ կամ զմիւսն սիրիցէ» . հաւատարմութիւն առ մին եւ եթ : «Երանի՛ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» . միթէ այս չէ՞ սատուածային պատկն օրհնութեան : Եւ որպէս զի խէ բղջախոհութեան արմատը մարդկային սրտէն եւ ալ աւելի ամրապնդէ ամուսնութեան սրբութիւնը, եւ ընտանեկան երջանկութիւնն ապահովէ, կ'ըսէ . «Ամնայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն չնացաւ ի սրտի իւրում» : Նա է հաստատող ընտանեկան յաւիտենապէս կազմութիւնն ի մի զօր սիրոյ. «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ. 3—12) :

Եւ այս է կնիք Աւետարանին . — Նմանիլ Աստուծոյ — այսինքն այնքան գեր ի վեր առաքինի ըլլալ, մինչեւ Աստուածանման ըլլալ, այս է իմաստ սոյն խօսքին թէ «Եղբրուք կատարեալ, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե. 48) :

Ուրեմն Աւետարանն է աղբիւր բարութեան եւ ճանապարհ ճշմարտութեան, կեսնք եւ երջանկութիւն ամենայն մարդկան, «Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, ԵՆՈՐՀՔ եւ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ի ձեռն ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ եղեն» (Թով. Ա. 17) :

* . *

Աւետարանը շատ կանուխէն Հայոց մէջ քարոզուեցաւ, Թադէոս եւ Բարթոլոմէոս երկոտասան առաքեալներէն եւ յետոյ Յուզայ Թադէոս եօթանասուն եւ երկու աշակերտներէն՝ մեր առաջին լուսաւորիչներն եղան, որք առաւել թէ եւ քանիւ աւանդեցին իրենց քարոզութիւնները, այլ սակայն գրով եւս աւանդեցին անշուշտ, վասն զի անհնար էր նոր կրօնքով մը լուսաւորել այնպիսի ժողովուրդ մը առանց գրաւոր վարդապետութեան : Բայց որովհետեւ Հայք յայնժամ չունէին գիր, ուստի Ասորական կամ Յունական տառերով եւ հայաբարբառ յօրինեցան աւետարանական գրուածներ, քանի որ այն ժողովուրդն ոչ Յունարէն եւ ոչ Ասորերէն գիտէր : Ապացոյց այսմ է որ ի հնուց անտի մեր մէջ կայ աւանդութիւն, թէ

այս ու այն հատուկտոր կանոնները մեր առաքիալներէն գրուած թղթիկներէ մնացորդ են. Կ'երեւի թէ գրեթէ երեք դար այս ուղղութեան հետեւեցան մեր առաքեալներուն յաջորդները մինչեւ ցԳրիգոր Լուսաւորիչ, որոյ գրաւոր վարդապետութիւնները ամփոփուած կան Ագաթանգեղոսի պատմութեան եւ իւր Յաճախապատում անուն գրքին մէջ: Գրիգոր Լուսաւորիչէ յետոյ մեր սուրբ հայրապետներն նոյնը շարունակեցին մինչեւ ցգիւտ Հայ տառերուն, ապացոյց այսմ է որ Պարսիկներն Քրիստոնէութիւնը ջնջելու համար Ասորի եւ Յոյն տառադիր գիրքերն այրելու հետամուտ եղան: Այսպէս Քրիստոնէութեան առաջին դարէն մինչեւ ցհինգերորդ դար աւետարանի քարոզութիւնը անընդհատ շարունակուեցաւ եւ աւետարանի ճշմարտութեան լոյսը վառ մնաց առհասարակ Հայ ժողովրդեան մէջ: Արդարեւ չէ եղած երբեք ոչ մէկ ազգ որ իւր հին կրօնքն ու հաւատք ի բաց թօթափէ եւ յանկարծ հոգեւոր ստորին վիճակէ մը քարձքանայ նոր վիճակի մը այսինքն Քրիստոնէութեան, հինէն աւելի գերբնական եւ աւելի իմաստասիրական. ուրումն մտքերն էին պատրաստուած, մշտկուած ու ծաղկած, թէեւ առաւել քարոզութեամբ բանիւ բերսնոյ, քան գրով: Քրիստոնէական կրօնի այս յաղթանակն, որ եղաւ Հայոց մէջ, է Աստուածային նախախնամութեան հրաշալի գործերէն մին, վասն զի ազգ մը որ գիր չունէր, կը լուսաւորուէր այնքան արագ միւս ազգերէն, որք գիր ու ծաղկեալ դպրութիւն ունէին:

Այս անգիր ժամանակէն յետոյ Սուրբ Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ եւ իրենց աշակերտներն Աստուածաշունչը թարգմանելով հանպերձ յօրինեցին Աղօթքներ, որոց շատը կան այսօր ամփոփուած ի ժամագրքի եւ ի Մաշտոցի, նոյնպէս եւ Շարահայաններ, եւ այս ամենուն մէջ խառնելով ինչ ինչ տեսութիւններ Հին ու Նոր կտակարանաց մանաւանդ սուրբ Աւետարանին մէջ գրուած մեկնութեան արժանի այս կամ այն սողերու վրայ: Թէ եւ չգրեցին գոնէ չորս Աւետարաններուն համար ամփոփ

մեկնաբանական մէկ գիրք, այլ Յովհան Ոսկեբերանի Մատթէոսի եւ Յովհաննու աւետարանաց մեկնութեան գրքերը թարգմանելով, այլ եւս արժան չհամարեցան, թերեւս, նորը գրելու:

Սոյն ուղղութեան գրեթէ հետեւեցան յաջորդ դարերու մէջ մեր բոլոր հոգեւէր նախնիք, գրելով ներքողեաններ, զանձներ եւ ճառեր, որք Քրիստոսի մէն մի տնօրինութիւնները կը փառաբանէին: Սոցա մէջ ի Ե. դարու յիշատակութեան արժանի են Դաւիթ անյազթ, որ գրեց Ներքող ի Սուրբ Խաչն. Եղիշէ, որ գրեց Մեկնութիւն տրուակալիս աղօթից եւ ճառեր զՄկրտութենէ, զԱյլակերպութենէ, զՊաշելութենէ եւ զԹաղմանէ Տեառն եւ այլն: Մովսէս Խորենացի, որ ունի, ըստ աւանդութեան, ճառ ի Վարդափառն. Մամբրէ վերժանող գրեց ճառ ի Յարութիւնն Ղազարու եւ ի Գալուստ Տեառն յԵրուսաղէմ:

Իսկ ի Զ. Դարու Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց գրեց ճառ ի Մուռնդն Քրիստոսի եւ ներքողեան յԱստուածածին կոյսն. այլ է. դարու մէջ առաջինն եղաւ Բարսեղ Ճոն, որ Ոսկեբերանի նման գրեց Մեկնութիւն Մարկոսի Աւետարանի, որոյ ոչ ամբողջն այժմ կայ, այլ երկրորդ հատորը: Թէոդորոս Բոթենաւոր գրեց ներքողեան ի Սուրբ Խաչն եւ զովեստ յԱստուածածին կոյսն:

Նոյնպէս Ը. դարու մէջ Յովհան Օձնեցի գրեց Յաղագս կարգաց եկեղեցւոյ եւ յաղագս մեծի առուր միաշարաբու, նոյնպէս ընդդէմ երեւութականաց եւ Պաշիկեանց ճառեր: Եւ Թ. դարու մէջ Զաքարիա կաթողիկոս գրեց ճառեր վասն Մննդեանն Քրիստոսի, Մկրտութեան, Գալստեանն յԵրուսաղէմ, Տէրունական ընթրեաց, Չարչարանաց, Թաղման, Խաչի եւ Եկեղեցւոյ: Նոյնպէս Ժ. դարու մէջ Անանիա Նարեկացի ունի յանուն Եոզակաթի կամ Եկեղեցւոյ մէկ ճառ եւ Խոսրով Անձեւացի Մեկնութիւն ժամագրոց եւ Մեկնութիւն խորհրդոց արքայ պաւստազի, որոյ որդին Գրիգոր Նարեկացին իւր Նարեկ անուն աղօթագրքին մէջ աւետարանական ընտիր մեկնութիւններ ունի եւ ներքող ի Սուրբ Խաչն, յԱստուածածինն եւ յԱռաքեալսն, եւ շատ մը գանձեր:

ԺԱ. դարու մէջ Գրիգոր Մագիստրոս ութսունի չափ վարդապետական եւ իմաստասիրական թուղթեր ունի,

եւ ներքողեան Ի սուրբ Խաչն Աստուածընկաչ, Իսկ ժԲ. դարու մէջ Յովհաննէս Սարկաւագ վարդապետ իւր Աղօթագրքին եւ Յաղագս քահանայութեան ճառին մէջ ունի աւետարանական տեսութիւններ: Ներսէս Ենորհալի գրեց Մեկնութիւն Մասքեի, այլ անկատար, մինչեւ ի բանն «Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս (Ե. 17), Իգնատիոս Ենորհալի եւս գրեց Մեկնութիւն Դուկասու:

Ներսէս Լուսրոնացի ունի Մեկնութիւն պատարագաՄասուցի եւ ճառեր ի Համարածուին Քրիստոսի, ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, ի փոխուումն Կուսին, յձնառակ որդին եւ ի Տնանն: Իսկ Սարգիս Կոնդ Դուկասու եւ Յովհաննու Աւետարաններուն, եւ Արիստակէս վարդապետ Մատթէոսի աւետարանի մեկնութեանց թէ եւ ձեռնարկած են, այլ հետեւողութեամբ եւ շատ կարճաբան:

ԺԳ. դարու մէջ Վանական վարդապետ գրեց ճառ Ի բղխումն Հոգւոյն Սրբոյ եւ Մեծն Վարդան վարդապետ մեկնութիւն Աւետարանի Իսկ Յովհան Ծործորեցի (Պլուզ) շարունակեց եւ ամբողջացուց Մասքեոսի մեկնութիւնը, զոր Ներսէս Ենորհալի կիսատ թողած էր: ԺԴ. դարու մէջ Յովհան Որոտնեցի գրեց Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի, համառօտ: Իսկ Գրիգոր Տաթեւացի իւր Քարոզգրքին մէջ որ կը բաժնուի երկու հատորի եւ կ'ըսուին Ամարան եւ Զմեռան, ունի աւետարանական ընդարձակօրէն գրուած մեկնութիւններ: Իսկ ժԵ. դարէն մինչեւ այսօր, երբ այլ եւս գրաբարը գրեթէ տեղի տուաւ շչիարհարարին եւ սպագրութեան գիւտն եղաւ, թէ եւ մեկնիչներ եղան, այլ ոչ այնքան արժանի յիշատակութեան, միայն թէ կ'արժէ յիշատակել Մխիթար Աբբա, որ գրեց Մեկնութիւն Աւետարանի Մասքեոսի, կարի ընդարձակ: Յակոբ պատրիարք Նալեան, որ ունի Զեն Հոգւոյ գիրքը եւ ուրիշ աստուածաբանական մեկնութիւններ: Նոյնպէս Ներսէս Պատրիարք շարադրեց Ուսումն համարարքառ Աւետարան մը եւ Գարրիէլ եպիսկոպոս Այվազեան հրատարակեց Վարժ Յիսուսի հանդերձ համառօտ մեկնութեամբ եւ ինչ ինչ յաւելուածովք Ներսէս Ենորհալոյ քերթուածներէն:

Այս ամենէն զատ կան մեր մէջ ճառընտիրներ ,
Վարք Հարանց , Ոսկեփորիկ , Սոփիւրք եւ Քարոզգրքեր ,
Թուլ եւ Ժողովածոյն , որոց ամենուն մէջ կան աւետա-
րանական տեսութիւններ , իսկ մեր այլադաւան ազգային-
ներէն հրատարակուած աւետարանական տեսարկներէն
ու գրքերէն շատը , որոց մէջ գեր ի վեր է «Մեկնութիւն
չորից աւետարանաց հանդերձ տախտակու համաձայնու-
թեան» գիրքը , ընթեռնելով չվարանեցայ ընդունելէ այն
ամէնն , որք էին համաձայն վարդապետութեան մեր սուրբ
եկեղեցւոյն եւ միանգամայն էին ստոյգ գիտական տե-
սութեամբ , ըստ օրդի քրնական հետազօտութեանց :

. . .

Հայոց եկեղեցին ի հնուց անտի պատուէր տուած է , եւ
ոչ երբեք արգելած , Հին ու Նոր կտակարաններուն ընթեր-
ցումը . Գրիգոր Լուսաւորիչ բացէ ի բաց կը գրէ . «Պիտոյ
է միշտ դաստիարակութիւն Աւետարանին ի հրահանգել
զմեզ ի լուսութեան կարգս . զի յանձնուածեալք ի շնորհաց
Սուրբ Հոգւոյն ճշմարտութեամբ՝ անեցուցուք զվաս-
տակ արդարութեան սուրբ սրտիւ եւ ուղղափառ հաւա-
տով յԱստուած» : (Յաճախապ) : Եղիշէ Հայ Ժողովրդեան
համար կը գրէր . «Զի բազումք ի նոցանէ զգիրս սուրբս
ուսեալք ի մանկութենէ , զանձինս մխիթարէին եւ զըն-
կերան քաջայերէին» : Իսկ սգաւոր աիկիւններու համար
կը գրէր . «Սաղմոսք էին նոցա մրմունջք երգոց եւ ըն-
թերցումք սուրբ գրոց՝ կատարեալ ուրախութիւնք» :
Ղեւոնդ երէց կ'ատենարանէր այսպէս . «Եւ այլ զինչ եւս
երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ , զի
քան զիս տեղեկագոյնք եւ հմուտք էք Ս . կտակարանացն» :

Ղազար Փարպեցի եւս կը գրէ . «Պարտ եւ արժան էր
ամենայն հաւատացելոց այնքան զրդող եւ ծանօթ լինել
Աստուածային գրոց . . . մինչ զի չլինել կարօտ յայոց
ուսանիլ , այլ միայն յԱստուծոյ եւ յԱստուածային գրոց...
գործիք Քրիստոնէութեան ասացուածն Աստուածաշունչ
գիրքն է , զոր պարտ եւ պատշաճ էր ամենեցուն այնքան
գիտել , մինչ զի չլինել կարօտ յայլմէ ուսանիլ» : Ս . յայէս
ամէն կարու մէջ մեր հայրապետներն , մանաւանդ խոս-

րով Անձեւացի եւ Ներսէս Ենորհալի յորդորած են մեր ժողովրդեան ընթեանուլ եւ ուսանիլ Սուրբ Գիրքք խորին հաւատով եւ եթ, առանց երկրայութեան եւ իմաստակութեան, վասն զի նոքա, ինչպէս կը գրէ Ենորհալի, «Որ զկերպարանս բանին միայն ընթեանուն ի գիրո», եւ զգորութիւն մտացն ծածկելոյ ոչ կարեն ճանաչել ուղղապէս՝ վասն ոչ աշխատելոյ ուսմամբ ի նոսա, այլ ծեքեն զբանն ըստ թիւր եւ սկոր իւրեանց իմացուածոցն, եւ կարծին յանձինս, եթէ գիտեմք, լաւ էր նոցա ոչ բնաւ ճանաչել զգիրս, այլ կեալ անմեղութեամբ ընդ տգէտս եւ ոչ կորնչել, քան թէ մորար գիտութեամբ անկանիլ ի վին կորստեանն» (Ընդհանր.): Ուրեմն սուրբ գրքի ընթերցանութեան ասան ո՛րքոսն խորին հաւատք եւ խոնարհութիւն սրտի, զգաստ եւ արթուն միտք մարդ ունենալու է, որով ոչ թէ միայն Աստուծով շնորհք կ'առնու, այլ եւ իր անձին կը շահի երջանիկ կեանք եւ յաւիտենական փառք, ըստ անսուտ բանի Տեառն թէ «Որ հաւատայ, կեցցէ»:

Որքան որ հիները հոգեւէր զգացուներով եւ փայլուն բարեպաշտական գործերով, մինչ զի ստուարահատոր կրօնական դրքեր, յետ դիւտի տպագրութեան, յաջողեցան հրատարակիլ աներեւակայելի զոնոլութեամբ, եւ Լուսաւորչի լոյս հոււատքին լոյս ճրագը չմարելու համար ըրին ինչ որ կրնային ընել¹, եւ արգի նորերն ոչ թէ միայն թերացան եւ անսարքեր մնացին ի մասին կրօնի ծաւալման, այլ եւ չքաջալերեցին իսկ այն հանդէսներն որք հետզհետէ Օսմանեան երկրին մէջ սկսան հրատարակուիլ: Մինչեւ այսօր, բարէ, Հայը չունի գոնէ հանդէս մը որ Հայ քրիստոնէական կրօնը ջատագովէ եւ զայն սիրելի ընծայէ Հայ ժողովրդեան: Արգարեւ Սիօն եւ Յոյս Լոյս եւ Եկեղեցի հանդէսներ չյաջողեցան երկարատեւ կեանք ունենալ, կարծեմ, ժողովրդէն չգտնելով քաջալերութիւն, այլ սակայն Պօսնակ կամ Մոխակ չարթաթերթ հանդէսը, մինչդեռ երբեք չարժանացաւ բարերար-

¹ Արգար դպրէն սկսելով, որ տպագրեց Սաղմոսարանը 1645 ին

Ներու առատածեռնութեան, այլ մի միայն անհատական ուժով մը սկսաւ հրատարակուիլ եւ հսկայաքայլ յառաջուղիմել, չարաչար հարուածեցաւ, եւ բերան մը ժպրհեցաւ զիս, որ հրատարակողն էի, ծաղրել ժողովի մը մէջ. եւ զի հրատարակեց Արեւելք, հարկ եղաւ ինձ ուղղել Արեւելքի սոյն երկառըր.

1891 Եկեթ-գուշե Օգոստ. 15

Ձեր պատուական օրաթերքի մէջ ընթերցայ թէ երբ . . . ժողովոյ մէջ խօսք է եղեր թէ կրօնական հանդէսի մը խմբագրութիւնն առակախօսի մը մնացեր է, յայնժամ ժողովականք ի լուր այս անուան յիշատակութեան, ծիծաղեր են. այդ առակախօսն ինչպէս յայտ է, ես եմ:

Եթէ այդ ժողովականք գտնեն ինձ պէս եկեղեցական մը, որ կարող ըլլայ այդպիսի թերքի մը հրատարակութեան, առանց ռեւէ օգնականութեան եւ նպաստի, եւ ունենայ չորս հազարի չափ բաժանորդ, առգար ուրեմն իրենց այդ ծիծաղ. իսկ եթէ ոչ՝ ես ալ կուլամ այդ ծիծաղողներուն վրայ:

Մնամ աղօթարար

Թէ ե՞րբ գրուեցան աւետարանները. Մատթէոսի աւետարանը աւելի կանուխ գրուած է, իբր յամի Տեառն 38 եւ յետոյ Մարկոսի աւետարանը իբր 45 ին եւ ապա Ղուկասինը իբր 48ին, իսկ Յովհաննէս գրեց ամենէն յետոյ իբր 90-96ին². Բայց թէ կա՞ր արդեօք Երրայական լեզուով ամենահին աւետարան մը, որմէ օրինակուած ըլլան արդիները. կարծիք է այդ, վասն զի եթէ երբէք ըլլար, է՞ր կորսուէր այն, մանաւանդ որ հիներէն ոչ մէկ հայրապետ կամ վարդապետ այդպիսի աւետարանի մը յիշատակութիւնը կ'ընեն: Մեր այս չորս աւետարաններն են իրարմէ անկախ գրուածներ առաջնորդութեամբ Հոգւոյն Սրբոյ, որոյ մեկնութեան համար արժան համերեցայ

² Կ'աւանդուի թէ Մատթէոս Երրայեցերէն, Մարկոս Ղպտիբերէն, Ղուկաս Ասորեբէն եւ Յովհաննէս Յունարէն գրած ըլլան:

էին ու նոր գրուածներէ քաղուածներ ընել եւ ի մի աւել-
 փոփելով ծանօթագրել, որքան կարելի է համառօտ, թող-
 լով ինչ ինչ կէտեր որք զիւրիմաց էին եւ այնքան պէտք
 չունէին մեկնութեան. զոր օրինակ Յովհաննէս կը գրէ-
 « Յայնժամ առ Պրդատոս զՅիսուս, եւ դան եհար ». Յայտ-
 նի է թէ Պրդատոս չէր ծեծողը, այլ ծեծել տուողն էր :
 Նոյնպէս Ղուկաս կը յիշատակէ թէ տէրուհական ընթրեաց
 ատեն Յիսուս երկիցս բաժակ առաւ ու օրհնեց, մինչդեռ
 միւսները մէկ անգամ կը գրեն . Ղուկաս Պասէքի սկզբը-
 նաւորութեան առաջին բաժակն է որ կ'ակնարկէ, եւ
 զանց չընել յիշատակելէ վերջինն այսինքն այն բաժակը
 զոր Յիսուս օրհնեց եւ հրամայեց իր աշակերտներուն որ
 խմեն իբր իւր արիւնը, որպէս կը գրեն միւսներն եւս :
 Նոյնպէս Յովհաննէս կը գրէ . « Բայց է եւ այլ ինչ բազում
 զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըսաւ միտջէ,
 կարծեմ թէ եւ ո՛չ աշխարհս բաւական էր տանել զգիրտն,
 որ թէ գրեալ էին » : Այս խօսքէն իմանալու է թէ Յիսուս
 Աւետարաններուն մէջ չպատմուած գործերէն զսա՛ ուրիշ
 շատ գործեր ալ ըրած ունի, այնքան շատ որ կարելի
 չէր թուել :

Աւելորդ է յանձնարարել այսպիսի Աստուածաշունչ
 գրքի մը ընթերցումը . ով որ իր անձին, իր պերզաստա-
 նին եւ իր ազգին հրկրաւոր ու երկնաւոր երջանկու-
 թեանն է ցանկացող, սիրայօժար կ'ընթեռնու այս գիրքը,
 հաւատալով թէ « Ի Քրիստոս Յիսուս ամենայն գանձք
 իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ կան » (Կող. Բ. 3) :

Որովհետեւ մեր ազգային մամուլէն մինչեւ ցարդ
 Աւետարանի գրարարէ յաշխարհաբար թարգմանութիւն չէ
 եղած մանաւանդ ի Թուրքիա, — այլ միայն մեր այլպալան
 ազգայիններէն եղած են ատեն ատեն թարգմանութիւն-
 ներ*, որոց հարազատութեանը նկատմամբ միշտ տարս
 կոյսներ ունեցած են բարեպաշտ մերայինները, մանաւան

(*) 1825 ին և 1828 ին Նոր Կտակարանը աշխարհաբար տպուած
 ի Փարիզ եւ հետզհետէ այլուր :

գաւատացիները, — եւ թէ գէթ աւետարանի յաշխարհաբար թարգմանութեան համար հանդերձ մեկնութեամբ, շատերէ փափաք յայտնուած է միշտ, ուստի ձեռնարկեցի ըստ իմով-
սանն կարի գրաբար մեր Աւետարանը աշխարհաբարի զե-
րածել եւ ըստ վարդապետութեան մեր Առաքելական
սուրբ Եկեղեցւոյ մեկնաբանել, հետեւողութեամբ միշտ
մեր երանաշնորհ նախնեաց հոգեշունչ եւ գերընտիր գըր-
ուածոց :

Եւ զի մեր մէջ ստուարագոյն թիւ կը կազմեն այն-
պիսիներն, որք միայն կարգալ գիտեն եւ հին աշխարհա-
բար լեզուն դեռ կը գործածեն, ուստի անոնց համար բուն
իսկ Աւետարանը, որքան հնար է, աշխարհաբարի պարզ
ձեւով գրեցի, իսկ մեկնութիւններն որք քիչ մը գրա-
կան աշխարհաբարի ձեւ ունին՝ գրեցի անոնց համար որք
թէ կարգալ ու գրել գիտեն եւ թէ հետաքրքիր են կրօ-
նական գրուածներու մեկնութիւնը գիտնալու :

*
.

Եթէ օրհնէքի մը արժանաւորի մ բարեպաշտ բերաններէ,
կ'աղաչեմ որ այդ օրհնէքն ըլլայ յանուն յիշատակի Յըն-
տըջեան հոգեւոյս Յարութիւն էֆէնտի, որոյ անդրանիկ
ագնիւ որդին (Գառնիկ էֆէնտի) ինձ սատարեց եւ քա-
ջալերեց զիս գրելու եւ հրատարակելու համար սոյն
կենաց եւ փրկութեան գիրքը հանդերձ մեկնութեամբ :

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Մ Բ Ո Յ Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի

	ՄԱՍՔ.	ՄԱՐԿ.	ՂՈՒԿ.	ՅՈՂ.
Աստուածութիւն Բանին եւ մարտիրոսիւն:				Ա. 1-18
Սկիզբն Աւետարանին Ղուկասու:			Ա. 1-4	
Աւետումն ծննդեան Յովն. Մկրտչի:			» 5-25	
Աւետումն ծննդեան Քրիստոսի:			» 28-38	
Այց Մարիամայ առ եղիսաբէք:			» 39-56	
Ծնունդ Յովհաննէս Մկրտչի:			» 57-80	
Ազգահամար Տեառն ի Մասքեոսէ:	Ա. 1-17.			
Ազգ հրեւեսակի առ Յովսէփ	» 18-24			
Ծնունդ Տեառն մերոյ	» 25			
Աւետումն առ հովիւս:			Բ. 1-7	
Թլխասութիւն Տեառն:			» 8-20	
Տեառ նրնդառ.աչ (Տէրնասա):			» 21	
Գալուս մոզուց:	Բ. 1-12		» 22-38	
Փախուս Տեառն յԵգիպտոս:	» 13-15			
Վասն որ ի Քթըլեհէմ կոտորածի, եւ դարձի Տեառն յԵգիպտոսէ եւ ի Նազարէք բնակութիւն:	» 16-23		» 39-40	
Քրիստոս երկոսասանամեայ:			» 41-52	
* * *				
Քարոզութիւն Յովհաննու եւ մրկրոսութիւն	Գ. 1-12	Ա. 1-8	Գ. 1-20	
Մկրտութիւն Յիսուսի:	» 13-17	» 9-11	» 21-22	
Ազգահամար Տեառն ի Ղուկասէ:			» 23-38	
Փորձութիւն Յիսուսի ի սասանայէ:	Գ. 1-11	» 12-13	Գ. 1-13	
Վկայութիւն Յովհաննու զՅիսուսէ:				» 19 28
Նախակոչ երեք առաքեալք եւ Նաբանայէլ — Բարթողիմէոս:				» 29-51
* * *				
Սկիզբն նշանաց Տեառն ի Կանա:				Բ. 1-12
Երթ Յիսուսի յԵրուսաղէմ եւ առաջին արտաբուծումն վաճառականաց ի սահարէն:				» 13-25
Յիսուս ընդ Նիկողեմնոսի զիւրերի:				Գ. 1-21
Մկրտել Յիսուսի եւ աշակերտաց իւրոց եւ նոր վկայութիւն Յովհաննէս Մկրտչի:				» 22-36

	ՄԱՍՔ.	ՄԱՐԿ.	ՂՈՒԿ.	ՅՈՎԷ.
Քանաբկութիւն Յովնանու եւ երբ Յիսուսի ի Գալիլեա:	Գ. 12	Ա. 14	Գ. 14	
Յիսուս ընդ կնոջ Սամարացոյ:				Գ. 1-42
Հրապարակային քարոզութիւն Յիսուսի ի Գալիլեա:	» 17	» 14-15	» 15	» 43-45 » 46-54
Բժեկութիւն որդւոյ յազաւորագինն:				
Քարոզութիւնն Տեառն ի Նազարէք եւ ապա բնակութիւն ի Կափառնայում:	» 13-16		» 16-32	
Կոչումն յառաքելութիւն Յովնանեան եւ Զեբեթեան որդւոց եւ որս ձկանց:	» 18-22	» 46-20	Ե. 1-11	
Բժեկութիւն դիւահարին ի ժողովրդանոցին:		» 21-28	Գ. 33-37	
Բժեկութիւն զոխանչին Պետրոսի եւ այլոց:	Ը. 14-17	» 29-34	» 38-42	
Գարձեալ ի Գալիլեա բժեկութիւնք:	Գ. 23-25	» 35-39	» 43-45	
Բժեկութիւն բորոսին:	Ը. 2-4	» 40-45	Ե. 12-16	
Բժեկութիւն անդամալուծի միոյ:	Թ. 2-8	Բ. 1-12	» 17-26	
Կոչումն Մասքէոսի:	» 9	» 13-14	» 27-28	
* * *				
Բժեկութիւն անդամալուծին որ ի Պրոպայսիկէ:				Ե. 1-47
Հասկ կորզել առակերտաց ի շարքոյ:	ԺԲ. 1-8	Բ. 23-28	Զ. 1-5	
Բժեկութիւն զօսացեալ ձեռին:	» 9-14	Գ. 1-6	» 6-14	
Բժեկութիւն առ ծովեզերք Գալիլեայ:	» 15-21	» 7-12	» 12-19	
Ընտրութիւն երկոսասան առաքելոց:		» 13-19	» 20-49	
Լերինն քարոզ:	Ե. 2. Եւ Ը.		» 20-49	
Վասն ծառային հարիւրացեալ:	Ը. 5-13		Ե. 1-10	
Յարութիւն որդւոյ յաւրոյն ի Նային:			» 11-47	
Պատգամաւոր Յովն. առ Յիսուս:	ԺԱ. 2-19		» 18-35	
Պարսաւ առ անհաւատ քաղաք:	» 20-24			
Հաւեր առ վասակաբեկս:	« 25-30			
Օծումն Յիսուսի ի մեղաւոր կնոջ:			» 36-50	
Վերսինն քարոզութիւն Փրկչին ի Գալիլեայ:			Ը. 1-3	
Բժեկութիւն իսուլ եւ համբ դիւահարին:	» 22-37	» 20-30	ԺԱ. 14-23	
Վասն նշանի յերկնից:	» 38-45		» 16-36	
Մայր եւ եղբարք Յիսուսի:	» 46-50	» 31-35	Ը. 19-21	

* * *

	ՄԱՐԿ.	ՄԱՐԿ.	ԼՈՒԿ.	ՅՈՎԷ.
Առ ապ սերմանացանին:	ժԳ. 1-23	Գ. 1-29	Ը. 4-18	
Առ ապ որոմանց:	» 24-30			
Այլ եւ այլ առակի:	» 31-52	» 26-34		
Վասն մրկիին:	Ը. 18-27	» 35-40	» 22-25	
Իրք դիւանարացն Գերգեսացոց:		Թ. 57-62		
Դարձ Յիսուսի ի Կափառնայում:	» 28-Թ. 1	Ե. 4-21	Ը. 26-40	
Խնջոյք Մասթէոսի:	Թ. 10-17	Բ. 15-22	Ե. 29-39	
Յարութիւն դստեր Յայրոսի եւ կինն սեռաւես:	» 18-26	Ե. 22-43	Ը. 41-56	
Բժեկութիւն կուրացն երկուց եւ խուլ եւ համբ դիւանարին:	» 27-34			
Երրորդ այցելութիւն Տեառն ի Գա- լիլեա:	» 35-38	Չ. 1-6		
Վասն առաջելոցն Բարնոյթեան:	ժ. 1-ժԱ. 1	» 7-13	Թ. 1-6	
Գայթակղութիւն Նազարէթցոց:	ժԳ. 53-58	» 6		
Գլխաստրիւն Յովհաննէս Մկրտչի:	ժԳ. 1-12	» 14-29	» 7-9	
Դարձ առաջելոցն ի Բարնոյթենէ եւ վասն հինգ հազարացն:	» 13-21	» 30-44	» 10-17	Չ. 4-14
Յիսուս ի ծովու հետի:	» 23-36	» 45-56		» 15-21
* * *				
Բարնոյթիւն Տեառն ի Կափառ- նայում թէ մարմին իւր է նեմարիս կերակուր եւ արիւն իւր նեմա- րիս ընկելի, եւ սրտունջ Հրէիցն եւ գայթակղութիւն:				» 22-72
Յանդիմանութիւն փարիսեացոցն կեղծաւորութեան:	ժԵ. 1-20	Ե. 4-23		
Բժեկութիւն դստեր կնոջն Գանա նացոյ:	» 21-28	» 24-30		
Բժեկութիւն կուրաց, կաղաց եւ այ- լոց առ ծովեզերք Գալիլեացոց:	» 29-31	» 31-37		
Վասն չորից հազարացն:	» 32-39	Ը. 1-10		
Դարձեալ վասն նեանի յերկնից:	ժՉ. 1-4	» 11-13		
Վասն խմորոյ փարիսեացոց:	» 5-12	» 14-21		
Բժեկութիւն կուրին ի Քեթսայիղա:	» 13-28	» 22-26		
Դաւանութիւն Պետրոսի:	» 13-28	» 27-39	» 18-27	
Վարդավառ:	ժԵ. 1-13	Թ. 1-12	» 28-36	
Բժեկութիւն դիւանարին:	» 14-20	» 43-28	» 37-44	
արձեալ գուցակութիւն զչարչա- րանացն:	» 21-22	» 29-32	» 44-45	
ասն երկդրամենին:	» 23-26			
Խրոս խոնարհութեան եւ զգուռու- թեան ի գայթակղութեանց եւ նե- րել միլեանց անտանմանաբար: ըք Յիսուսի ի սօսն Տաղաւարահա-	ժԸ. 1-35	» 32-49	» 46-50	

	ՄԱՏՔ.	ՄԱՐԿ.	ՂՈՒԿ.	ՅՈՎԷ. Է. 1-10
բայ ի ծածուկ:				» 11-23
Հրապարակաւ Բարոզութիւն Յիսուսի ի սօնին,				Ը. 1-11
Իր կնոջն շնորհելով:				» 12-59
Վասն Բարոզութեանն թէ է Որդի Ասուծոյն Կասաղութիւն Հրէիցն				Թ. 1-41
Բժշկութիւն ի ծնէ կուրիս:				Ժ. 1-21
Առակ Բաջի հովուին:				
Վերջին մեկնումն Յիսուսի ի Գալիլէ:	ժԹ. 1-2	ժ. 1	Թ. 51-56	
Առաքումն եօթամասունն եւ երկուցն առակերաց:			ժ. 1-16	
Գարձ նոցա:			» 17-28	
Օրինակ Սամարացոյն բարեարի:			» 25-37	
Մարիամ եւ Մարթա:			» 38-42	
Գարձեալ վասն սեւչ աղօթելոյ:			ժԱ. 1-13	
Յիսուս յերուսաղէմ ի սօնին Նաւակասեաց:				Թ. 22-42
Յարութիւն Ղազարու:				ժԱ. 1-46
Երբ Յիսուսի յԵփրայիմ:				» 47-54
Ճաշ փարիսեցոյն եւ վայր առ փարիսեցիս եւ յօրինականս:				» 37-50
Բարոզութիւն Տեառն ի խոան:			ժԲ. 1-59	
Վասն Գալիլեացոցն կոտորելոց եւ առակ անասուդ թղենոյն:			ժԳ. 1-9	
Բժշկութիւն կնոջն կարկամելոյ:			» 10-21	
Ազդ գգուութեան ի Հերովդէ:			» 22-35	
Ճաշ Յիսուսի ընդ փարիսեցոյն:			ժԳ. 1-24	
Խրատ ուրացութեան անձին:			» 25-35	
Առակ կորուսեալ ոչխարին, դրամին եւ անառակ որդոյն:			ժԵ. 1-32	
Առակ պնիրաւ սնեսին, մեծասանն եւ Ղազարու:			ժԶ. 1-31	
Զգուութիւն ի գայթակղութեանց եւ վասն հաւատոյ:			ժԷ. 1-10	
Տասն բորոտ:			» 11-19	
Արքայութիւն երկնից եւ գալուստ Որդոյ մարդոյ:			» 20-37	
Առակ պնիրաւ դասաւորին, փարիսեցոյն եւ մաթաւորին:			ժԸ. 1-14	
Օրէնք ամուսնութեան անլուծանելի Օրհնութիւն ի վերայ մանկւոյն:	» 3-12	» 2-12	ժԹ. 19	
Եւխանն հարուստ:	» 13-15	» 13-16	ժԲ. 15-17	
Առակ մեակաց այգւոյն:	» 16-30	» 17-31	» 18-30	
Այս երիցս գուշակութիւն Տեառն գարչարանայն:	Ի. 1-16			
Փառասէր աղերս որդոցն Ջերէթեայ երկու կոյր յԵրիմով:	» 17-19	» 32-34	» 31-34	
	» 20-28	» 35-45		
	» 29-34	» 46-52	» 35-43	

	ՄԱՍԹ.	ՄԱՐԿ.	ՂՈՒԿ.	ՑՈՎԷ.
Զաֆէոս մաֆապէս եւ առակի սասն մնասու :			ԺԲ. 1-28	
Խորհուրդ Հրէիցն զՅիսուսէ եւ վնիռ Գայիափայ :				ԺԱ. 55-56
Գալուսո՞ Յիսուսի ի Բեթանիա :				ԺԲ. 19-11
Ծաղկազարդ :	ԻԱ. 1-11	ԺԱ. 1-11	ԺԲ. 29-44	» 12-19
* * *				
Անպատու թգենին, մաքրութիւն սահարին եւ Հայոցն զալուս, եւ սազնայ Տեառն :	» 12-19	» 12-19	» 45-48	» 20-36
Թգենին ցամաֆէայ :	» 20-22	» 20-26		
Վասն ի յեթանութեան Յիսուսի եւ առակի երկուց որդուց :	» 23-32	» 27-33	Ի. 1-8	
Առակի չար մտակաց :	» 33-46	ԺԲ. 1-12	» 9-19	
Առակի հարսանեաց որդույ թագաւորին :	ԻԲ. 1-14			
Վասն հարկատուութեան կայսեր կամ ոչ :	» 15-22	» 13-17	» 20-26	
Վասն յարութեան մեռելոց :	» 23-33	» 18-27	» 27-40	
Վասն թէ ո՞ր պատուիրանն է մեծ :	» 34-40	» 28-34		
Վասն թէ Բրիսոսս է որդի Դաւթի :	» 41-46	» 35-37	» 41-44	
Յանդիմանութիւն դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց :	ԻԳ. 1-39	» 38-40	» 45-47	
Լուսնայրույն :		» 41-44	ԻԱ. 1-4	
Վասն անհաւատութեան Հրէից :				» 37-50
* * *				
Աւեր Երուսաղէմի եւ կասարած աշխարհիս :	ԻԴ. 1-51	ԺԳ. 1-37	» 5-36	
Առակի սասն կալսանաց :	ԻԵ. 1-30			
Վասն վերջին դատաստանի :	» 31-46			
Ընթրիք ի Բեթանիա եւ չար խորհուրդ Յուդայի :	ԻԶ. 1-16	ԺԴ. 1-14	ԻԲ. 1-6	ԺԳ. 1-3
Վասն Պատէֆի :	» 17-20	» 12-17	» 7-18	
Վասն թէ ո՞վ իցէ մեծ :			» 24-30	
Ոճնալուայ :				» 4-20
Նեաւակումն Յուդայի մասնչի :	» 21-25	» 18-21	» 21-23	» 21-35
Էրուսական ընթրիք :	» 26-29	» 22-25	» 19-20	
Էրջին կիսակ Տեառն եւ աղօթք :				(ԺԴ. ԺԶ. ԺԷ.)
Վասն աւակերտացն փախստեան եւ ուրացութեան Պետրոսի :	» 30-35	» 26-31	» 31-38	ԺԳ. 36-38
Յիսուս ի Վերսեմանի :	» 36-46	» 32-42	» 39-46	
Բաւնութիւն Տեառն :	» 47-56	» 43-52	» 17-53	ԺԸ. 2-12
Յիսուս յատենի Աննայի եւ Գայիափայ :	» 57-58	» 53-54	» 54-55	» 13-15

	ՄԱՅՔ.	ՄԱՐԿ.	ԼՈՒԿ.	ՅՈՎԼ.
Ուրացութիւն Պետրոսի երկցս:	ԻԶ 59-75	ԺԳ 55-72	ԽԳ 56-62	ԺԸ 16-27
Մահավնիւ Սաղէսրիոնին եւ ծա- նակումն Տեառն:	» 59-68	» 55-65	» 63-71	
Յիսուս առաջի Պիղատոսի:	ԻԷ. 2	ԺԵ. 1	ԽԳ. 1	» 28
Յուդայ ի խեղդ:	» 3-10			
Առաջին հարցուփորձ Պիղատոսի:	» 11-14	» 2-5	» 2-5	
Յիսուս առաջի Հերովդի:			» 6-12	
Վասնբարեփոյթն յինելոյ Պիղատոսի	» 15-18	» 6-10	» 13-17	» 39
Անուրջ կնոջն Պիղատոսի:	» 19			
Տեսու բարաբբա:	» 20-23	» 11-14	» 18-23	» 40
Լուսցումն Պիղատոսի զձեռս իւր:	» 24-25			
Ծաղկումն Տեառն:	» 26-30	» 15-19	» 24-25	ԺԳ. 1-3
Նաչավնիւ Պիղատոսի:				» 4-16
Երբ Տեառն ի Գողգոթա:	» 31-33	» 20-22	» 26-32	» 17
Նաչելութիւն:	» 34-44	» 23-32	» 33-39	» 18-24
Աւագակն աջակողմեան:			» 40-43	
Մայր Տեառն առ խաչին:				» 25-27
Մահ Յիսուսի:	» 45-56	» 33-41	» 44-49	» 28-30
Նոցում կողին Յիսուսի:				» 31-37
Թաղումն Տեառն:	» 57-61	» 42-47	» 50-56	» 38-42
Պահապանք եւ կնիք գերեզմանի:	» 62-66			
* * *				
Երբ կանանցն իւղաբերից ի գե- րեզման:	ԻԸ. 1-4	ԺԶ. 1-4	ԽԴ. 1-2	Ի. 1
Մարիամ Մագքաղենացի մեկնի ի գերեզմանէն:				» 2
Միւս կանայք առնուն աւեթս ի ի հրեւակէն:	» 5-8	» 5-8	» 3-8	
Երբ Պետրոսի եւ Յովհաննու ի գե- րեզմանն:			ԽԴ. 12	» 3-10
Երեւումն Տեառն Մարիամ Մագ- ղաղենացոյ:		ԺԶ. 9-11		» 11-18
Ապա երեւումն Տեառն միւս կա- նաց:	» 9-10			
Անհաւատութիւն աւակերացն:	» 11-15		» 9-11	
Իք պահապան զինուորացն:		» 12	» 12-35	
Երեւիլ Տեառն երկուց աւակերացն:		» 14-18	» 36-49	» 19-25
Երեւումն Տեառն աստուցն:				
Գարձեալ երեւումն Տեառն եւ հա- ւաս Թովմայի:				» 26-29
Յիսուս առ ծովակին Տիբերիա:				ԻԱ. 1-23
Երեւումն Տեառն ի յերինն Գալիլեա առ-աւելոցն մեծասանից եւ ա- ւակերացն իբր հինգ հարիււրոց:	» 16-20			
Համբարձումն Տեառն:		» 19	» 50-53	
Սկիզբն Բարձրութեան աւակերացն		» 20		Ի. 30-31
Վերջ աւեսարանին Յովհաննու:				ԻԱ. 24-25

ԱՒԵՏԱԴԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ



Հ Ս

Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի



Գ Լ ՈՒ Խ Ա.

*¹ Աբրահամի որդի՝ Դաւթի որդի այն Յիսուս Գրիստոսի ազգատունմին գիրքը : *² Աբրահամ՝ Իսահակը ծնաւ . Իսահակ՝ Յակոբը ծնաւ . Յակոբ՝ Յուդան ու անոր եղբայրները ծնաւ : *³ Յուդա՝ Փարէան ու Զարան ծնաւ Թամարէն . Փարէս՝ Եզրոնը ծնաւ , Եզրոն՝ Արամը ծնաւ : *⁴ Արամ՝ Ամինադարը ծնաւ . Ամինադար՝ Նաասոնը ծնաւ . Նաասոն՝

1. Մարդ փափաք ունի շիակասատ երջանկութեան, այսինքն միշտ սպրելու եւ անեն քան զիտնալու եւ վայելելու : Այլ սակայն որքան եւ գործադրէ իւր ոյժն ու խելք , որքան եւ ձգտի երջանկութեան , կարելի չէ զայն գտնել աշխարհիս մէջ : Մարդկային սրտի մէջ եղած այս փափաքէն կարելի է համոզուիլ թէ մարդ միանգամ հաւն առած է երջանկութեան , ուստի ցարդ իսկ բուռն անձուկ կը զգայ առ այն , եւ թէ Աստուծոյ եւ իւր մէջ բուն մը պատահած է , որով մարդկային զեզեցիկ շէնքն ու աշխարհս աւեր մը կրած են :

Մարդուս անհուն փափաքաւ երջանկութեան ձկտելէն կը հետեւի թէ

Սաղմոնը ծնաւ : *5 Սաղմոն՝ Բոոսը ծնաւ Հաքաբէն . Բոոս՝
Ուրբէղը ծնաւ Հոութէն . Ուրբէղ՝ Յեսաէն ծնաւ . Յեսաէ՝
Դաւիթ թագաւորը ծնաւ : 6 Դաւիթ՝ Սողոմոնը ծնաւ Ու-
րիայի կնոջմէն : 7 Սողոմոն՝ Բորովամը ծնաւ . Բորովամ՝
Աբիան ծնաւ . Աբիան՝ Ասափը ծնաւ : 8 Ասափ՝ Յովսափատը
ծնաւ . Յովսափատ՝ Յովրամը ծնաւ . Յովրամ՝ Ուրիան ծնաւ :

Աստուծոյ ճշմարտութիւնը քննարկելու համար, որոյ հետքը կամ նշաններն են որ կան իւր մէջ տակաւին , եւ թէ այդ երջանկութենէն զրկուած է նախանձու այդ մեղքը զործելուն համար :

Այլ էր նախանձիւ . — Աստուած չուզելով որ իւր այս արարածը միւսներուն պէս լինի մեքենական արարած , ուստի իրմէն բան մը շնորհեց . « Եւ փշեաց յերեսս նորս շունչ կենդանի » , այսինքն անսահման խորհելու եւ գործելու շնորհը , զոր մարդ չարաչար գործածեց . չըրաւ զայն որ Աստուծոյ կամքին համաձայն էր . ըրաւ՝ որ հակառակն էր :

Մինչ այս շնորհք մարդ գիտէր թէ ինքն է արարած , արարիչ լինելու ձկտեցաւ . չխորհեցաւ թէ Աստուծոյ կարելի էր մարդանալ՝ յայտնուելով մարդուն , այլ ոչ երբեք մարդուն աստուածանալ , այսինքն մարդկային մտքի լոյսն աստուածային շնորհք էր , եւ ոչ ուրիշ բան , աստուածային մէկ ճառագայթն էր . այս էր որով մարդն « Եղեւ հոգի կենդանի » :

Արդարեւ մարդ ի սկզբան թէեւ ստեղծուած ու օժտուած էր զերագոյն շնորհք , այլ սակայն ունենալու էր բան մըն ալ , որ զինքն Արարչէն տարբերէր . աստուածային հրաման մը կամ պայման մը պիտի յիշեցնէր մարդուն թէ ինքն արարած է , հպատակ է իրմէ վեր մէկու մը , Աստուծոյ : Եթէ այսպիսի պատուէր մը չըլլար , եւ մարդն անսահման ապէր , ամէն բան գիտնար ու վայելէր , յայնժամ ինչ բանով պիտի տարբերէին Աստուած եւ մարդ իրարմէ : Ուրեմն մարդն արգիլուելու էր , կամ որ աւելի ճիշդն է , զրկուելու էր բանէ մը , որպէս՝ զի կապուէր Աստուծոյ հետ երկիւղախառն սիրով :

Եթէ մարդն այս կապը խզէր , այսինքն դաղըր երկիւղէ եւ սէրէ , պիտի կրէր իւր այս մեղքին պատիժը , մահը , բանի որ աստուածային բնութեան մէկ հանգամանքն էր արդարութիւնը : Այլ որովհետեւ աստուածային բնութեան միւս հանգամանքն ալ կար , գծութիւնը , ուստի սա յոյսը պիտի աւանդուէր մարդուն թէ երջանկութիւնն , որոյ համն առած էր միանգամ , պիտի գտնէր վերստին . սնս այս էր Մեծ-խորհուրդը :

Մարդ մեղանչելուն համար պատժուած էր . միայն թէ որովհետեւ պատիժը մեղքին համեմատութեամբ էր , ուստի տակաւին պիտի ապէր : Սակայն որքան անիծուած մարդն անիծուած երկրիս մէջ ինքզինքը տնտեսէր

9 Ողբի՛ Յովաթամը ծնաւ . Յովաթամ՝ Աքազը ծնաւ . Աքազ՝ Եզեկիան ծնաւ : 10 Եզեկիա՛ Մանասէն ծնաւ . Մանասէ՛ Ամովսը ծնաւ . Ամովս՛ Յովսիան ծնաւ : *11 Յովսիա՛ ծնաւ Յեքոնիան ու անոր հղբայրները Բաբելացիներուն ՏՂ գերութեան ատեն : 12 Բաբելացիներուն ՏՂ գերութեանէն ետքը , Յեքոնիա՛ Սաղաթիէլը ծնաւ . Սաղաթիէլ՝ Զօ-

իմաստութեան շնորհօք եւ ինքզինքը կառավարէր արդարութեան օրինօք , այլ միշտ ապրելու եւ ամեն լաւն գիտնալու եւ վայելելու՝ այս երեք փափաքներ , այսինքն յիակասատ երջանկութեան մը յոյսը պիտի ունենար անխախտ եւ միշտ : Արդ , եթէ այս յոյսն ի դերու պիտի ելնէր , ուրեմն մարդ խաբուած էր Աստուծմէ , եւ թէ Աստուած իւր այս գեղեցիկ՝ հոգւով եւ մարմնով միանգամայն գեղեցիկ արարածն աշխարհիս մէջ ճառագեղու միայն ենթարկած էր :

Եւ զի կարելի չէ ենթադրել թէ Աստուած զմարդ կը խաբէ , եւ կարելի չէ կարծել թէ ՆԱ , որ բարի է , իւր արարածին չարակրութենէն հաճոյք զգայ , ուրեմն առ մարդն յայտնաբերան մը պէտք կար , որպէս զի նա անշուստեան սպասէր , հաւատալով թէ ստեղծուած էր , ոչ թէ մեռնելու , այլ ապրելու համար . զի եթէ պիտի մեռնէր , Աստուծմէ մարդուս սրտին մէջ անմահութեան՝ միշտ ապրելու յոյսը դրուելուն պէտք չկար : Նոյնպէս եթէ պիտի տառապէր , եթէ տկարութենէ եւ տգիտութենէ պիտի շփոթխուէր , ուրեմն ի զուր իւր սրտին մէջ կը կրէր երջանկութեան մը յոյսը :

Բայց մարդ միշտ պիտի չապրէր աշխարհիս մէջ եւ ոչ պիտի գիտնար ու վայելէր ամէն բան , քանի որ մեղի գործած էր ու պատժուած : Նախ այդ մեղքէն սրբուելու էր , զի այդ մեղաց քառութեան պէտքը կար , եւ յետոյ մարդ պէտք էր որ կրէր փոփոխութիւն մը , ոչ այս աշխարհիս մէջ , քանզի աշխարհս ալ մարդուն հետ անիծուած էր . պէտք էր որ հին աշխարհս ալ վերջանար հին մարդուն հետ : Մեռնելովը մարդ իւր մեղքին պատիժը կը կրէր , այս էր արդարութիւնը . ապաշուտելովն իւր մեղաց քառութիւնը պիտի զոնէր , այս էր գժութիւնը : Արդարութիւն եւ գժութիւն անոս անպաշտ մարդն ու աշխարհս պիտի ենթարկէին փոփոխութեան մը , այսինքն աստուածային գժութիւնն ապաշառող մարդուն նոր աշխարհ մը պիտի շնորհէր , եւ արդարութիւնը փրկուած մարդուն նոր կեանք մը պիտի պարգեւէր , կեանք լիովի երջանկութեան :

Այլ այդ փոփոխութիւնը կրելու համար նախ մարդ Աստուծոյ հետ հաշտուելու էր . բայց ինչպէս կարելի էր այդ , քանի որ մարդկային բնութիւնն էր մեղապարտ : Նա իւր կամքէն , կարիքէն ու կիրքէն մղուելով

րարաբէլը ծնաւ : 13 Զօրարաբէլ՝ Աբիուզը ծնաւ . Աբիուզ
 Եղիակիմը ծնաւ . Եղիակիմ՝ Ազովը ծնաւ : 14 Ազովը՝
 Սադովկը ծնաւ . Սադովկ՝ Աքինը ծնաւ . Աքին՝ Եղիուզը
 ծնաւ : 15 Եղիուզ՝ Եղիազարը ծնաւ . Եղիազար՝ Մատթա-
 նը ծնաւ . Մատթան՝ Յակոբը ծնաւ : 16 Յակոբ՝ Մարիամի
 ամուսին Յովսէփը ծնաւ . որուն նշանուած էր կոյս Մա-

մեզք գործելու վիճակին ենթարկուած էր : Կամբէն մղուած մարդն ամէն
 բան ունենալու , կարիքէն մղուած մարդն ամէն բան վայելելու եւ կիրքէն
 մղուած մարդն ամէն բան խորտակելու , եւ երբեմն ինքզինքն անգամ ,
 մոլեգին ունի հակամիտութիւն : Արդ քանի որ մարդն էր այսպէս մեզօք
 վարակուած , ուրեմն Մէսը պէտք էր որ նախ զմարդն իւր մեղքէն սըր-
 բէր եւ յետոյ հաշտեցնէր Աստուծոյ հետ :

Այլ Սա , որ այս պաշտօնն ու գործ պիտի ստանձնէր , մեզք ունենա-
 լու չէր ամենեւին , որպէս զի օրինակու տնձին սրբութեան՝ մեղաց մար-
 մինը մահուամբ Թաղելով վերածէր փառաց մարմնոյ : Մարդկային այս
 առդար արիւնը միայն պիտի սրբէր մարդկային մեղսպարտ բնութիւնը ,
 եւ հին մարդն այսպէս Թէ պիտի նորոգուէր եւ Թէ պիտի տեղափոխուէր ,
 այսինքն նոր մարդ պիտի լինէր նոր աշխարհի մը մէջ :

Այլ Սա , որպէս զի այս բանն ընէր , հարկ էր որ կրէր մարդկային
 բնութիւնն ամբողջովին , առանց որոյ անհնար էր յարաբերութեան մտա-
 նել մարդուն հետ : Նաեւ կրելու էր միանգամայն աստուածային բնու-
 թիւնն ամբողջ , առանց որոյ անհնար էր մարդկային փրկութեան գործը
 կատարել : Ուրեմն Սա լինելու էր այնքան բարձր , որդի Աստուծոյ , որ
 կարող լինէր պարգեւել մարդուն աստուածայինը , փրկութեան շնորհքը ,
 եւ այնքան խոնարհ , որդի մարդոյ , որ կարող լինէր տալ Աստուծոյ ,
 մարդկայինը , փրկութեան զոհը , որով կը շնչուէր մեղքը յանուն գթու-
 թեան եւ կը խորտակուէր մահը յանուն արդարութեան : Եւ ահա այսպէս
 կը ճշմարտէր « Եւ Բանն մարմին եղեւ » հրաշափառ վարդապետութիւնը
 եւ կը լուծուէր Մեծ-խորհուրդը , որոյ աւետիսն առաջին մարդն Աս-
 տուծմէ եւ նահապետք առաջին մարդէն ստնելով պահպանեցին ընդ եր-
 կար , սոյն յուսով ապրելով եւ սոյն հաւատով ննջելով :

Այլ որովհետեւ մարդկային ուզոն ի ծագս աշխարհի պիտի ծաւալէր ,
 ուստի Թանկագին սոյն աւանդն օր մը հարկ էր յանձնել այնպիսոյ մը ,
 որոյ հաւատքն արժանի ընէր զինքն այս շնորհին , եւ որոյ ցեղն այս ա-
 ւանդին պահպանութեան պաշտօնն ստանձնէր : Ահա այս էր կոչումն
 Արարհամու եւ շնօրութիւնն իսրայելի :

Այս ցեղէն ահա կը ծագէր Արեգակն արդարութեան , որ լուսով պիտի

բիամ. որմէ ծնաւ Յիսուս որ Քրիստոս ըսուեցաւ : *17 Արդ՝ Աբրահամէն մինչեւ Դաւիթ բոլոր պորտերը՝ տասնըչորս պորտ . եւ Դաւթէն մինչեւ Բարեղոնեան գերութեան աւտեն տասնըչորս պորտ . եւ Բարեղոնեան դերութենէն մինչեւ Քրիստոս տասնըչորս պորտ :

18 Եւ Յիսուս Քրիստոսի ծնունդն այսպէս էր . անոր

ողոզէր աշխարհս , եւ պիտի հաստատէր Սէ մարդիկ միշտ պիտի ապրին ու գիտնան ու վայելեն ամէն բան , եթէ հաւատան շնորհաց եւ ճշմարտութեան , որ պարգեւեցաւ աշխարհի ի ձեռն Յիսուս Քրիստոսի , որ էր որդի Դաւթի , որդի Աբրահամու :

Յիսուս է լատինայոյն ձեւ Յէսու անուան , որ « Ծնողվա » բառին կրճատուածն է եւ կը նշանակէ փրկիչ :

Քրիստոս է յունարէն , հայերէն է օծեալ , իսկ եբրայեցերէնն է Մեսիա : Օծութիւնն էր նուիրական ընել բան մը որ Աստուծոյն էր եւ գերընտիր . սպասք եւ մարդիկ կը սրբանային օծութեամբ . քահանայներ եւ Թագաւորներ կ'օծուէին եւ մարգարէներն եւս յետ օծութեան պաշտօնի կ'սկսէին եւ կը կոչուէին օծեալ Տեառն . (Ծննդ. ԻԸ. 18; Ղեււ. Դ. 3; Աթազ. ԺԶ. 6; Գ. Թազ. ԺԹ. ԺԶ) : Յիսուս անուանեցաւ Քրիստոս , վասն զի ինքն էր քահանայ , մարգարէ եւ Թագաւոր , ոչ առժամեայ , այլ յաւիտենական :

3. Թամարի Յուդայի հետ պռունկութենէն ծնուած այս երկու զուակներ կը յիշուին Քրիստոսի սոյն ազգահամարի մէջ , վասն զի զուակներն ըստ օրինի պարտական չեն կրել իրենց ծնողաց մեղքին պատիժը : Թամար եւ Ռախաբ (5) յանուանէ կը յիշուին , զի սրբուեցան ամուսնութեամբ , իսկ Բերաբէ (6)՝ ոչ յանուանէ (Ծննդ. ԼԸ. Յետւ Բ. Զ; Բ. Թազ. ԺԱ. 1-27) : Այսպէս անա պռնիկներ՝ Թամար յայտնի եւ Բերաբէ լռելիայն , այլազգիներ՝ Ռախաբ եւ ՀռուՍ (5) կը յիշուին Քրիստոսի սոյն ազգահամարի մէջ ի կորանս հրէական սնապարծութեան և ի ցոյց սատուածային սիրոյ , անխտիր առ մարդիկ (ՀռուՍ Ա - Դ) :

11. Բարեղոնեան գերութեան սկիզբն եղաւ 606ին նոյս քան զՔրիստոս (Բ. Մնաց. ԼԶ) : Իսկ գերեզարձն եղաւ 536ին այսինքն 70 տարի յետոյ , որպէս արդէն զուշակած էր Երեմիա (ԺԵ. ԺԹ) :

17. Շնորհալի կը զրէ երբորդ (վերջին) ազգահամարի պորտերու համար . « իսկ ընդէր զի երկոտասան են նահապետքն , չորքոտասան անուանէ . Թուի Սէ զժամանակ գերութեանն ի կարգի ազգի զնէ , եւ զՔրիստոս եւս ի մէջ յարէ այսինքն Սէ սկիզբն վերջնոյ չորքոտասանին ասասցէ որ զՅէջնիա , որ յետ գերութեան զՍաղամիէլ ծնաւ , եւ կատարուամ լինի ան-

մայրը Մարիամ Յովսէփին նշանուած էր, դեռ իրարու քով չեկած՝ Հոգին Սուրբէն յղացած գտնուեցաւ: *19 Եւ Յովսէփ իր ամուսինը, որովհետեւ արդար ճշդ էր եւ չէր ուզեր որ զանի խայտառակէ, մտածեց լռելեայն զանի արձրկել: *20 Եւ երբ այս մտածութեան մէջ էր, ահա հրեշտակ Տեառն տեսիլքի մէջ անոր երեւցաւ, ու ըսաւ. «Յովսէփ

Քերի չորեքտասանիցն թիւ »: Բայց միանգամայն կարելի է կարծել Մարիամով տասն երեք եւ Քրիստոսով տասն ու չորս պորտ:

Հրեայներն այնպէս կը կարծէին թէ Յուդայական ցեղին մէջ, երեք 14-ական պորտերէ յետոյ, պիտի ծնի Մեսիայն, եւ այս պորտեր ոչ թէ անդրանկէ անդրանկի, այլ նշանաւորներէ կը հաշուէին, այս տեսութեամբ այն ազգահամարի մէջ գուցէ Որոգիս, Յովաս, Ամասիա (8) եւ Յովակիմ կամ Եղիակիմ (11) չեն յիշուած (Գ. Թագ. Ը. 24: ԺԲ. 1-21: ԺԴ. 1-21): Թող որ մեկնողներ կան թէ սորա իբր ամբարիշտ Սագաւորներ անարժան համարուած են յիշատակութեան: Կը կարծուի նաեւ թէ ուրիշ անուններ. եւս կան թողուած, զի Նասսոնէ մինչեւ Դաւիթ, զրեթէ 500 տարուան մէջ, միայն վեց պորտ՝ չէ այնքան հուսանական, քանի որ Աբրահամէն մինչեւ Մովսէս, որ այնքան տարի իսկ չտեսեր, կը յիշուին ու՞ նահապետներ, այն է ու՞ պորտ: Ուրիշ է Զուկասինը (Գ. 23-38):

19. Զուկաս կը պատմէ Գաբրիէլի աւետուածն առ Մարիամ, որոյ եւ այցն առ Եղիսաբէթ, Օգոստեան աշխարհամարն ու Մարիամի Յովսէփի հետ գալուստն ի Բեթլեհէմ, ուր հրեշտակներ կ'աւետեն հովիւներու Մեսիայի ծնունդը (Զուկ. Ա. 26-56: Բ. 1-21):

20. Նշանածները կին կոչել սովորական էր Հրէից մէջ. Յսկոր նահապետ կը պնդէ իւր նշանածին՝ Ռաբէլի համար. «Տուք ինձ զկինն, զի մտից առ նա» (Ծննդ. ԻԹ. 21):

21. Ուրեմն Մեսիայի բուն ժողովուրդը պիտի ըլլար սուրբ ի մեղաց:

23. Որովհետեւ կարելի չէր առանց Աստուծոյ մեզ հետ լինելուն փրկուել ի մեղաց, ուստի կանուխէն էմմանուէլ կը նշանակուէր մարգարէէն, այսինքն ընդ մեզ Աստուած (Եսայի Ե. 14):

25. Բառը «Մինչեւ» երբեմն ունի յաւիտեանի նշանակութիւն. «Այսպէս ազուան ոչ դարձաւ յետս, մինչեւ ի ցամաքել ջրոյն» (Ծննդ. Ը. 7): «Մեղքող դուստրն Սաւուղայ ոչ ծնաւ մինչեւ ցօր վախճանի իւրոյ» կարելի է կարծել թէ մեռնելէն յետոյ ծնաւ (Բ. Թագ. 13: Սաղմ. ճԹ. 4: Մատ. ԻԸ. 20):

25. Արու առջինեկ մը, որովհետեւ Աստուծոյ նուիրելու օրէնքը կար, անդրանկի կը կոչուէր, նոյն իսկ եթէ մէկ հատիկ ըլլար այսինքն իր-

աէփ՝ Դաւթի որդի, մի՛ վախնար քու Մարիամ կինդ քովդ առնելու. վասնզի անոր մէջ ծնուածը՝ Հոգին Սուրբէն է : *21 Որդի մը պիտի ծնի, ու անոր անունը Յիսուս դնես, զի ան պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն » :

22 Ու այս ամէնը եղաւ որ կատարուի. Եսայի մարգարէին ձեռքով Տէրոջմէ ըսուածը . *23 « Ահա կոյսը պիտի յը-

մէն յետոյ արու զաւակ չըլլար (Ելք. ԺԳ. 3: ԻԲ. 29, Ղեւտ. ԻԷ, Եբրայական լեզուի մէջ անդրանիկ բառին մեկհասիկ նշանակութեան շատ օրինակներ կան . Դաւիթ Աստուծոյ բերնէն կը գրէ Մեսիայի համար . « Ես անդրանիկ արարից գնա եւ բարձր բան զամենայն Թագաւորս երկրի » (Սաղմ. 2Ը. 28) : Պօղոս եւս կը գրէ Քրիստոսի համար . « Այլ յորժամ մուծցէ զԱնդրանիկն յաշխարհ, սսէ . « Երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ » (Եբր. Ա. 6) : Պօղոս Յիսուսը կ'անուանէ « Անդրանիկ ի մեռելոց » , վասնզի Յիսուս մեռելներէն մէկհատիկն էր , բանի որ անոր պէս ոչ որ ինքնագոր յարութիւն առած է եւ պիտի առնու (Բ. Կող. Ա. 8) : Նոյնպէս (Յայտ. Ա. 5: Եբր. ԺԲ. 23) :

Իսկ Շնորհալի կը մեկնէ . « Անդրանիկ ի Հոգւոյն սրբոյ եւ անուպական ծննդեանն . զի այլ որ ոչ ծնու այսպէս, որով եղև անդրանիկ բազում եղբարց ըստ Պօղոսի (Հռովմ. Ը. 29). զի որպէս նմա ի Հոգւոյն եւ ի կուսէ զըստ մարմնոյ ծնունդն եղև, եւ մեզ ի Հոգւոյն եւ ի ջրոյ՝ հոգեւորական ծնունդն եղիցի, որով լինիմք կրտսեր անդրանկանն ամենայն արարածոց (Կող. Ա. 15) : Արժանաւորեաց դարձեալ յարութեամբն լինել մեզ անդրանիկ, բանզի ամենայնիւ նմանեաց եղբարց, զգենլով զմարմինն և նովին մարմնովն առ զյաղթութիւնն փոխանակ ամենեցուն » :

Յետոյ Շնորհալի կը յաւելու թէ Աւետարանի մէջ (Մատթ. ԺԲ. 46-50 : Մարկ. Գ. 31-35 : Ղուկ. Ը. 19-21 : Յովհ. Է. 3-9) յիշուած Յիսուսի եղբայրներն էին ծնուած Յովսէփի ուրիշ մէկ կնիկէն, Մարիամէն առաջ, եւ թէ, եթէ Յիսուս բնական եղբայրներ ունեցած ըլլար, իւր Մարիամ մայրը չէր յանձներ խաչին վրայէն Յովհաննէսի (Յովհ. ԺԹ. 25-28) : Նսեւ Աստուծոյ որդին այսքան հրաշափառապէս ծնել է եւ Մեսիական աւետիսը լսել յետոյ, անբնական է կարծել թէ այնուհետեւ Յովսէփ ու Մարիամ ամուսնացած ըլլան (Մեկն. Մատթ) :

Ուրիշ մէկ փաստ . Հրեայք գիտէին թէ Մեսիայն կուսէ մը պիտի ծնէր, արդ՝ երբ Յիսուս սկսաւ քարոզել թէ ինքն է Մեսիայն, կրնային ցոյց տալ իւր եղբայրները, յայնժամ կենդանի Մարիամի տակաւին ունեցած կուսութիւնը բաւական էր կարկել նոցա բերանները : Աւետարանի

զանայ ու զաւակ ծնի, ու անոր անունը էմմանուէլ պիտի կանչեն, որ ըսել է՝ Աստուած մեզ հետ»:

24 Եւ Յովսէփ իր քունէն արթննալով հրեշտակ Տեառն ինչպէս որ հրամայեց՝ այնպէս ըրաւ, ու իր կինն իրեն առաւ: *25 Եւ չէր գիտեր զանի, մինչեւ որ ծնաւ իւր անդրանիկ որդին, եւ անոր անունը Յիսուս կանչեց:

ԳԼՈՒԽ Բ.

*1 Եւ Հերովդէս Թագաւորին օրերը՝ Հրէաստանի Բեթլեհէմի մէջ Յիսուսի ծնած ատեն, ահա արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ, *2 ու ըսին. «Ո՛ր է Հրեաներուն ծնած Թագաւորը, քանզի մենք արեւելքի մէջ տեսանք անոր աստղը, եւ եկանք անոր երկրպագութիւն ընելու»: *3 Եւ երբ լսեց Հերովդէս Թագաւորը՝ խռովեցաւ, ու անոր հետ

մէջ այս չէ յիշուած, մինչդեռ հրէական ամէն տնտակ չարանիւծ խօսք ու գործեր ճշդիւ կան նշանակուած:

Աւետարանի հակառակորդներուն, որք քրիստոնէութեան սկիզբէն մինչեւ ցմբրորդ դար, ամէն հնարի կը դիմէին Յիսուսի Մեթոյութիւնը ջրելու համար, այս միտէ չէր մէկ զօրաւոր գէնք: Եպիփան Կիպրացի որ 331-9402 ապրած է, կ'աւանդէ թէ հեթանոսներէ ու Հրեայներէ բաղկացած մասնախմբի ձեռամբ սուրբ Կոյսն ենթարկուեր է քննութեան, եւ մինչ նորա կուսութեան տկանատես նոյն հեթանոսներն ու ուրիշներ մկրտուեր են, այլ նորէն Հրեայք յամուեր մնացեր են:

Առ սուրբ Կոյս անասհման յարգութենէն զայժմակող եւ զըզուտող այս վերջին դարերու քրիստոնէայ աղանդաւոր բերաններն համբաւեցին թէ «Թագուհին երկնից» կոյս մնացած չէ յետ ծննդեան Յիսուսի. այս էր ծայրայեղութենէ մը ուրիշ ծայրայեղութեան մէջ գլորիլ, մինչդեռ Գալիթ գուշակած էր կանուխէն. «Կացցէ Դշխոյ ընդ աշմէ բումմէ ի հանդերձ սակեհուռն զարդարեալ եւ պսոճուճեալ» (Սաղմ. ԽԲ. 10-17): Եւ ինքն իսկ Մարիամ Սուրբ Հոգիէն ներշնչուած ուրախութեամբ կ'ըսէր Եղիսաբեթի. «Այսուհետեւ զիս բոլոր սպգեր պիտի երածնն» (Գուկ. Ա- 48):

1. Ղուկաս կը պատմէ Յիսուսի Թլխատութիւնը եւ տանարի բնօրոյսիւր: Եթէ Յիսուս տանարին ընծայուէր մոգերու փառսառէն յետոյ, յայն-

բոլոր Երուսաղէմ: *4 Եւ բոլոր քահանայապետներն ու ժողովրդին դպիրները ժողովելով հարցուց անոնց թէ Բրիսաոսս ո՞ւր ծնելու է: *5 Եւ անոնք ալ անոր ըսին. « Հրէաստանի Բեթլեհէմին մէջ, քանզի այսպէս գրուած է մարգարէին ձեռքով: 6 « Դուն ալ, Բեթլեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի իշխաններուն մէջ քնաւ փոքր չես, քանզի քենէ պիտի ելլէ իշխան, որ իմ Իսրայէլ ժողովուրդը պիտի հովուէ »: *7 Այն ատեն Հերովդէս գաղտուկ մոգերը կանչեց, ու անոնցմէ ստուգեց աստղին երեւցած ատենը: *8 Եւ զանոնք Բեթլեհէմ զրկելով ըսաւ. « Գնացէք, ստուգեցէք

ժամ մեծադրոյ պիտի ելլէր աղմուկ եւ ձերունի Սիմէոնի եւ Աննայի գոհարանուծիւնք ալ աւելի պիտի ազդէին ժողովրդեան եւ զրգռէին Հերովդէսը ընդ փոյժ դաւաճանել Յիսուսի կեանքը: Նոյնպէս Յովսէփի եւ Մարիամ յայնժամ աղքատօրէն տանարին ընծայ չէին բերել երկու տասրակ կամ ասլանի երկու ձագեր, քանի որ ոսկի ունէին, մոգերէն առած:

Հերովդէս էր Եղովմայեցի, Հռովմէական գերիշխան պետուծեան հպատակ թագաւոր, ուրեմն այլ եւս դադրած էր Իսրայէլեան թնտոհմիկ իշխանուծիւնը, եւ այս նշան էր գալստեան Մեքսիայի (Ծննդ. ԻԳ. 37):

Բեթլեհէմ կը Թարգմանուի Յուճ հացի եւ Եփրատ պտղաբեր կամ պրօդաճու. իրաւամբ այն, զի անտի պիտի վայելէին մարդիկ կենաց հացն ու պտուղը:

Մոգերն էին իմաստուններ ու քուրմեր որք եւ տեղեակ էին քաղցուծեան. մոլորութիւնն էր ժողոված ի հնուէն արդի Մոկս գաւառի մէջ եւ սոյն մոգեր հաւանօրէն անտի էին, եւ հոն ցարդ կան երեք գերեզմաններ, որք Մելքոն, Դասպար եւ Պաղտասար՝ այս երեք մոգերու անունով կը յիշուին. Թէեւ կարծողներ ալ կան Թէ մոգերն էին Բարբելոնէ կամ Արաբիայէ: Աւանդուծիւն մը կար արդէն բոլոր աշխարհիս մէջ Թէ երկնքէն Մէկը պիտի իջնէ ու ծնի եւ հաստատէ տիեզերական թագաւորութիւն մը:

2. Աստղն էր օգրեւեոյժ լուսեղէն նշան, որ առաջնորդեց մոգերուն, որպէս երբեմն Իսրայէլի լուսեղէն սիւնը (Ելք ԺԳ. 21):

3. Մայրաքաղաք Հրէաստանի, նախ Սաղէմ կը կոչուէր, յետոյ Յեբուս կոչուեցաւ, եւ այս երկու անուններու իրարու խառնուելէն վերջապէս Երուսաղէմ ըսուեցաւ: Հերովդէս խռովեցաւ, վասնզի գիտէր Թէ Հրեայք պիտի յարէին Անոր, որ էր ծննդեամբ Հրեայ եւ ի ծնէ թագաւոր եւ պիտի մերժէին զինքն ու իր ցեղը, որ չէր Հրեայ, իսկ Երուսաղէմ կը շփոթի կասկածելով Թէ մի գուցէ նորանոր խռովուծիւններ ու արիւնահեղուծիւններ վերստին վրդովեն իւր խաղաղուծիւնը զոր Անք գտած էր:

այն երախային համար, ու եթէ գտնէք, ինձի ալ իմացուցէք, որ ես ալ գամ, անոր երկրպագութիւնն ընեմ): *9 Երբ ասոնք թագաւորէն շաշ լսեցին, ելան գնացին. ու ահա այն աստղը զոր արեւելքի մէջ տեսած էին, անոնց առաջնորդեց, մինչեւ գալով կեցաւ հոն ուր երախան կար: *10 Երբ տեսան այն աստղը, շատ մեծ ուրախութեամբ ուրախացան: *11 Եւ տունը մտնելով տեսան երախան իր Մարիամ մօրը հետ, ու խոնարհելով անոր երկրպագութիւն ըրին եւ գանձերնին բանալով ընծայ տուին անոր, ոսկի ու կնդրուկ ու զմուռս: *12 Եւ հրաման առնելով ե-

Շնորհալի տարբեր կը մեկնէ. Իսրայէլ չար էր եւ չէր ուզեր իւր չարութիւններէն հեռանալ, այլ յօժար էր հանապազ կալ հակառակ Աստուծոյ: Կը յիշէ թէ Եսայի գուշակած էր արդէն. « Այլ նորս կամէին, թէ հրձիգ լեալ էին, զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, . . . Աստուած հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհի » (Թ. 5):

4. Քահանայապետներ կային, որք պաշտօնավարութենէ դադրած էին, վասնզի. ինչպէս Շնորհալի կը մեկնէ, այլ եւս եղծուած էին հին կարգն ու այս պաշտօնի սրբութիւնը. քահանայապետներ նաեւ կ'ըտուէին քահանայական քսան ու չորս դասակարգի զխաւորները (Մնաց. ԻԳ. 4): Իսկ դպիրներն էին օրէնքին մեկնիչներն ու վարդապետները եւ չէին կազմեր ուրոյն աղանդ, այլ էին կամ Փարիսեցի եւ կամ Սադուկեցի: Հրեայք ունէին զերագոյն ժողով մը 72 անդամէ բաղկացած, սանհեճտիոն անուն. այս էր Ծերակոյտը:

5-6. Ոչ թէ միայն Յուդայի հազարաւոր իշխաններուն մէջ, այլ համօրէն աշխարհի իշխաններուն փառաւորն ու հզօրը պիտի ըլլար (Միք. Ե. 2):

7. Հերովդէս գաղտուկ կանչեց մոզերը, որպէսզի ժողովուրդն իւր նենգաժուտ խորհուրդը չկռահէ, որպէս եւ չկասկածեցան մոզերն անգամ, ուստի հրաման առին հրեշտակէն չվերադառնալ Հերովդէսի քով (12):

8. Հերովդէս այնքան ապահով էր որ խորամանկօրէն մոզերու հետ իւր կողմէն մարդեր չըրկեց, այլ այս, որպէս Շնորհալի կը մեկնէ, էր Նախահնամական կուրուծիւն նորս, որ կը պատահի շատ անգամ աշաւուրը կարծուած չարերու իսկ:

9. Աստղը զոր երբեմն տեսած էին եւ իրենց առաջնորդած էր յԵրուսաղէմ, աներեւոյթ եղած էր, որպէսզի իւր նորանշան երեւոյթէն Հերովդէսն ու Երուսաղեմացիներն ալ աւելի չզրգուէին հետաքրքրութեան, անա նորէն կ'երեւէր եւ անոնց առաջնորդելով կը կենար երախային գտնուած տան վրայ:

բազի մէջ որ նորէն չ'դառնան Հերովդէսի քով, ուրիշ ճանքով գնացին իրենց երկիրը :

*13 Եւ երբ անկէ գնացին, ահա հրեշտակ Տեառն երազի մէջ Յովսեփին երեւցաւ ու ըսաւ. « Ել, առ երախան ու մայրը ու Եգիպտոս փախիր, եւ հոն կեցիր, մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս այդ երախային համար փնտռտուքի ետեւէ է »: 14 Ինքն ալ ելաւ, երախան ու աւոր մայրը գիշերանց առաւ, ու Եգիպտոս գնաց ու հոն էր մինչեւ Հերովդէսի մահը: *15 Որպէսզի կատարուի Տիրոջմէ ըսուածը մարգարէին ձեռքով՝ որ կ'ըսէ. « Եգիպտոսէն իմ

10. Ծնորհալի կը զրէ Թէ շատ ուրախացան, վասնզի Թէեւ Հրէական մարգարէութիւնը լսեցին, այլ զեռ տարակուսի մէջ էին եւ տրտմած աստղին անբերեղոյթ լինելուն համար, ուստի երբ զայն կրկին տեսան, շատ ուրախացան, համոզուելով Թէ առասպելի ու բազալանքի չէին հետամուտ:

11. Աստարակոյս մտերէն փոխադրուած էին տուն մը, ուր մնալ կը Թուի Թէ որոշած էին Մարիամ ու Յովսէփ, վասնզի Եգիպտոսէ երբ վերագարձան ի Հրէաստան, ի սկզբան մտադիր եղան հոն բնակելու, իրենց տոհմային քաղաքին, Բեթլեհէմի մէջ անշուշտ:

12. Մոգերն այդ տան մէջ ոչ Թէ իբր Ատոռւծոյ պատիւ ու երկըրպագութիւն ըրին Յիսուսի, այլ նորածին Թագաւորի օւ ընծայեցին ոսկի, կնդրուկ ու զմուռս, զորս սովոր էին մարդիկ մատուցանել Թագաւորներու: Ծնորհալի գեղեցիկ կը մեկնաբանէ. « Քանզի մարդիկ յոսկի պատկերս երկրպագելով դիւսց. . . օտարացուցին զնա յԱստուծոյ, իսկ նոքա ի դիմաց հեծանոսաց նուիրելով նմա զոսկին հանդերձ երկրպագութեամբ, անդրէն դարձուցին զպատուականութիւն նիւթոյն առ Արարիչն իւր, եւ կնդրուկն՝ քանզի անուշահոտ է, նշանակեցին զի հոտովն անուշից, որ ի նմանէ, լուծանելոց էր հոտն մահու, որ բղխեաց յօժէն, իսկ զմուսուն զի է նա բժշկական, յայտ արարին, զի բժշկելոց էր նա զբեկումն Արամայ »: Կնդրուկ անուշահոտ խէժ է, խունկ: Զմուռս է դառն խէժ համեմային: Կնդրուկ և զմուռս կը գործածուէին կրօնական պաշտամանց մէջ (Ելք Լ. 8. 23): Միայն Թէ զմուռս կը գործածուէր նաև դիակներ պատելու (Յովհ. ԺԹ. 39):

13. Եգիպտոսն էր մօտագոյն ապաստանարան, հոն սուրբ գերդաստանը կրնար ապահով ըլլալ, ուր շատ մը Հրեայներ ալ կ'ային եւ ունէին տաճար մը եւ ժողովարաններ (սինակոկա):

15. (Ովսէ ԺԱ. 1.) Աստուծոյ որդին էր Յիսուս եւ այս մարգարէութիւն կատարուեցաւ, վասնզի հին Իսրայէլն, որուն խոստացած էր Եգիպտոսէ, — մոլուծեան ու մոլորութեան աշխարհէս — հանուիլ, այլ եւս զադրած էր Աստուծոյ զաւակ ըլլալէ:

որդիս պիտի կանչեմ» : *16 Այն ասեան , երբ Հերովդէս տեսաւ որ մոգերէն խաբուեցաւ , սաստիկ բարկացաւ , եւ դրկեց , ջարդեց Բեթլեհէմի ու անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած երկու տարուրնէ վար բոլոր սղաքը , այն ժամանակին համեմատ զոր ստուգեց մոգերէն : *17 Այն ասեան կատարեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով ըսուածը՝ որ կ'ըսէ . 18 « Ռամայի մէջ ձայն լսուեցաւ , մեծ ողբ , կոծ ու լաց : Ռաքէլ իր զաւակները կուլար , ու չէր ուզեր մխիթարուիլ , քանիդ չկային » : *19 Եւ երբ Հերովդէս մտաւ , ահա հրեշտակ Տեառն Եգիպտոս Յովսէփին երեւցաւ

16. Բեթլեհէմի այս տղեկներուն կոտորածին քով ոչինչ կարելի է համարիլ այն անգթութիւններն զորս ըրաւ Հերովդէս , որպէս Յովսէփոս կը պատմէ . քահանայներ ու ազնուականներ սպաննել տուած էր , ողջ ողջ այրեց երկու հրեայ ռաբբիներ իրենց քառասուն աշակերտներովն որք իրենց ռաբբիներուն խորհրդով խորտակեցին այն ոսկեղէն արծիւը , զոր Հերովդէս դրաւ ի վերեւ տաճարի աւագ դրան . հետզհետէ իւր իրեք զաւակներն ու կինն անգամ , եւ ազգականներէն շատերն այս անսպասելի հրէշի կասկածոտ բնաւորութեան զոհուեցան , այլ ինքն ալ չարաչար սատակեցաւ , որդնոտելով եւ արեան մէջ խղրուած փչեց իւր խաւարային հոգին :

17-18. (Երեմ. ԼԱ. 15:) Ռաքէլի գերեզմանն էր Բեթլեհէմի մօտ , իբր Քէ Ռաքէլ գերեզմանէն ելլելով կ'ողբար այս զաւակներու աղէկտուր մահն , որք իրեններէն էին :

19. Գեղեցիկ կը մեկնաբանէ Շնորհալի , Քէ Աւետարանագիրն հեզօրէն չըսեր Քէ սատակեցաւ , այսինքն Հերովդէսի աստուածասաստ մահն ամենեւին չսկնարկեր , այլ այնպէս մը կը պատմէ , Քէ Հերովդէս իբր Քէ մեռած ըլլար խաղաղութեամբ :

22. Յովսէփ իրաւունք ունէր վախնալու , մանաւանդ զիտէր Արքեղայոսի հօրամոյն բնաւորութիւնը , եւ լսած էր Քէ Արքեղայոս մորձել տուած էր մէկ օրուան մէջ երեք հազար հոգիներ տաճարին ու քաղաքին մէջ : Եւ մինչ կը վարանէր , պատգամ առաւ երթալ ի Գալիլեա , որ Ազրիպպաս-Հերովդէսի իշխանութեան տակ էր . զուցէ հոն ալ երթալու պիտի վախնար , վասնզի Ազրիպպաս եղբայր էր Արքեղայոսի , այլ քաջ գիտնալով Քէ Աստուածային կանխատեսութիւնը կը պահպանէ սուրբ գերդաստանը , գնաց , որպէս երագին մէջ հրամայուած էր իրեն :

23. Նազարէթ կը բնակին , եւ Յիսուս կը կոչուի Նազովրեցի , այլ Աւետարանագիրն այս ականարկած մարգարէութիւնը չկայ Հին Կտակարանի մէջ :

երազի մէջ, 20 ու ըսաւ . « Ել, առ երախան ու մայրը, ու Իսրայէլի երկիրը գնա՛, քանզի մեռան անոնք որ երախայի չիղ համար փնտոտուքի մէջ էին »: 21 Ան ալ ելաւ երախան ու անոր մայրը առաւ, ու Իսրայէլի երկիրն եկաւ: *22 Եւ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի իր Հեւրովդէս հօրը տեղ, վախցաւ հոն երթալ, ու երազին մէջ հրաման առնելով՝ գնաց Գալիլիայի կողմերը: *23 Եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ ըսուած քաղաքը, որպէսզի կատարուի մարգարէներուն խօսքը թէ Նազովրեցի պիտի կանչուի:

Շնորհալի կը կարծէ թէ կորսուած կամ ջնջուած է այն: Կան շատեր, որք նկզէր բառին նշանակութեամբ, որ է բաժնել, կը մեկնեն թէ Յիսուս Նազովրեցի ըսուեցաւ զատուած, նուիրուած մէկն ըլլալուն համար. կան ուրիշներ որք նկզէր բառին նշանակութեամբ, որ է ոստ, շառաւիղ, կը մեկնեն թէ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ, որպէս Յայի զուշակած էր. « Եւ բղխեցէ գաւազան յարմատոյն Յեսեայ եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի » (ԺԱ. 1: ԾԴ: 2: Երեմ. ԻԳ: 5: ԼԳ: 15: Զաք. Գ. 2: 8: 12): Կայ ուրիշ մէկ մեկնութիւն աւելի եւս հաւանական . Գալիլեա Հրէաստանի ամենէն անարգ ու նուաստ հոչակուած երկիրն էր, եւ Նազարէթ ալ աւելի վատնուն, մինչ զի Նաթանայէլ անգամ, որպէս Շնորհալի եւս կը յիշատակէ, կը դժուարէր հուստալ թէ Նազարէթէն բարի բան մը կ'ընայ ելլել (Յովհ. Ա. 46): Հեծանոսներով խառնուած այդ երկրի Հրեայներուն լեզուն անգամ տարբեր էր Հրէաստանի միւս Հրեայներուն լեզուէն, ապա ուրեմն Նազովրեցի էր պարսուանուն, նախատանաց անուն, որպէս այս մտօք գործածեցին Քրիստոսի աշակերտներուն համար ալ (Գործք. ԻԴ: 5): Քրիստոս Նազովրեցի պիտի կոչուէր, որպէս զի լիով կատարուէր մարգարէութեանց սա խօսք թէ Մեսայն պիտի ըլլար անարգ, արհամարհուած ու նուաստացած (Յայի ԾԳ.):

Շնորհալի կը յաւելու . « Այլ թէ ընդէր Դուկաս ոչ սաէ հրամանաւ հրեշտակին զգնալն ի Նազարէթ . քանզի նա ոչ յետ դարձին յեզրպտոսէ զղնալն պատմէ, զորս ոչ գրեաց, այլ զայն որ յետ զարթութիւնս օրինացն կատարելոյ՝ դարձան ի Նազարէթ . քանզի կացեալ զքառասուն օր ի Բեթլեհէմ, բերին զանուակն յերուսաղէմ ի տաճարն . եւ անտի զընացին ի Նազարէթ եւ յայնմանէ յեզրպտոս, եւ յետ դարձին՝ ապա հրամանաւ հրեշտակին բնակեցան ի Նազարէթ »: Այսպէս Շնորհալի մոգբրունց գալուստը Յիսուսի տաճարին ընծայուելէն առաջ կը կարծէ, մինչդեռ ալ աւելի հաւանական է թէ Մարիամ եւ Յովսէփ Յիսուսը բերին տաճարը եւ նորէն տարին ի Բեթլեհէմ եւ անտի, մոգբրու գալուստէն յետոյ, Նազարէթ հանդիպելով՝ ուր երբեմն բնակած էին, զնացին յեզրպտոս, որով կը մխարանին Մատթէոս եւ Դուկաս:

Ք Լ Ա Ն Թ Ք .

^{*1} Այն օրերը Յովհաննէս մկրտիչ Հրէաստանի անապատին մէջ կուգայ քարոզել ^{*2} ու ըսել, «Ապաշխարեցէք, որովհետեւ երկնքի թագաւորութիւնը մօտեցած է»: ^{*3} Վա-

1. Ղուկաս կը պատմէ Գարրիէյի աւետիան առ Զաքարիա; որոյ եւ համրութիւնը, Յովհաննէսի ծնունդը, Զաքարիայի մարգարէական օրհներգութիւնը (Ա. 1-26. 57-79): Նոյնպէս Ղուկաս միայն կը պատմէ Սէ Յիսուս երբ տասներկու տարեկան էր, տաճարին մէջ վարդապետներուն հետ խօսակցելով առաջին անգամ ցոյց տուաւ իւր աստուածային իմաստութիւնը (Բ. 41-52): Կը յիշէ Սէ Յիսուս եւ Յովհաննէս կը զարգանային իմաստութեամբ եւ շնորհօքն Աստուծոյ (Ա. 80: Բ. 40-52):

Այն օրերը այսինքն երբ Յիսուս ի Նազարէթ կը բնակէր: Յովհաննէս՝ մկրտիչ կը յորջորչուէր, վասն զի մկրտութիւնն էր իւր պաշտօնին քռնն մասը, միւսներն էին աւետել Սէ Աստուծոյ արքայութիւնն այլ եւս հասած է, քարոզել ապաշխարութիւն պատրաստելով ժողովուրդը Մեսիային համար (Ղուկ. Ա. 17). և ցոյց տալ նոյն իսկ Մեսիայն (Յովհ. 29. 34, 36):

Յովհաննէս Հրէաստանի անապատին մէջ էր այսինքն ամայի տեղ, Մեռեալ ծովու մօտ: Շնորհալի կը դիտէ Սէ Յովհաննէս չուզեց երեւիլ բազմախուռն ժողովրդեան մէջ, որպէսզի կարծել չտայ Սէ իւր սուրբ բարբն ու վարք էին առ սէր սնտոի փառաց, այլ եկաւ Յորդանանու մօտ, ուր շատ քիչեր ունէին բնակութիւն. անապատացած սրտեր անապատի մէջ պիտի ժողկէին Մեսիայի երեւմամբ:

2. Յովհաննէս կ'աւետարանէ Սէ երկնքի ըստ Մարկոսի (Ա. 15) Աստուծոյ, Թագաւորութիւնը մօտեցած է եւ կը հրամայէ ապաշխարութիւն, արժանաւոր ժառանգ ըլլալու համար այդ արքայութեան, որ երկնային էր, վասնզի երկնքէն կ'իջներ, երկնքէն կ'սկսէր սուրբ սրտերու տալով միայն երկնային անվախճան բարութիւն ու երջանկութիւն:

3. Յովհաննէսի այս պաշտօնը կտնուիւն Յսայի մարգարէացած էր (Խ. 3): Նա, Յովհաննէս պիտի պատրաստէր ժողովուրդը Մեսիայի համար, որոյ եւ կարապետն ու քարոզը պիտի ըլլար: Շնորհալի եւս կը յիշատակէ Սէ ինչպէս որ սովորութիւն է Թագաւորի մը կամ նշանաւորագոյն անձի մը գալստենէն առաջ ճանապարհները մաքրել, հարթել եւ

սընդի աս է , որուն համար ըսուեցաւ Յսայի մարգարէին ձեռքով , որ կ'ըսէ . «Անապատին մէջ խօսքի ձայն . պատրաստ ըրէք Տեառն ճանապարհը ու շտկեցէք անոր շաւիղները » : * 4 Եւ ինքն Յովհաննէս ուղտի մազէ հագուստ ունէր եւ մաշկեղէն գօտի իր մէջքը ու անոր կերակուրն էր

կամ նոր շինել , այսպէս ժողովուրդն անա Յովհաննէսէն կը յորդորուի , որ իւր սիրտը նախապէս մարբէ ու շտկէ :

4. Որովհետեւ կուգար Յովհաննէս հոգևոյն Եղիայի (Ղուկ. Ա. 17) , որոյ եւ պաշտօնը կատարելու սահմանուած էր , որպէս եւ ընդհանուր կարծիք կար Սէ նախ Եղիա պիտի գոյ եւ ապա Մեսիայն (Մարկ. Թ. 11 : Մատթ. Ժէ. 10) , ուստի Եղիայի հազուստի տարազն ու կենցաղի եղանակն ունէր Յովհաննէս հազնելով մագեղէն ու մաշկեղէն գօտի կապելով (Գ. Թագ. Ա. 8) : Իսկ Յովհաննէսի կերակուրն էր մարախ , որ ըստ օրինաց արգիլուած չէր (Ղեւտ. ԺԱ. 22) , եւ վայրենի մեղր , որ կը զտուէր քարերու ձերպերուն ու ծառերու խոռոչներուն մէջ , ուրեմն վայրենի մեղուններէ շինուած մեղր . այսպէս Յովհաննէս , համանման Եղիայի , յանկարծ կ'երեւէր իբրեւ նոր մարգարէ մը ,

5. Որով ժողովուրդն որ քանի մը դարէ ի վեր մարգարէ տեսած չէր , եւ անձկութեամբ կ'սպասէր Մեսիական միտարուածեան մը , զունդագունդ սկսաւ վազել ի Յորդանան առ Յովհաննէս :

6. Այս մկրտութիւնն որքան որ մեղաց Թողութեան համար էր (Մարկ. Ա. 4 : Ղուկ. Գ. 3) , այլ որպէս Ենորհալի կը դրէ . « Ոչ Սէ իւրով մկրտութեամբն , ասէր Յովհաննէս , առնուլ Թողութիւն մեղաց , այլ որ զկնի նորա զալոց էր Հոգւոյն մկրտութեամբն » , էր իրապէս մկրտութիւն ապաշխարութեան որ կը կատարուէր շուշացմամբ : Այլ ջրոյ մէջ Թամսելով կամ ընկղմելով , Սէ ջուրը սրսկելով կատարելու է զայն . — ըստ աւանդութեանն , որ հիմնուած է Պօղոսի սա խօսքին վրայ « Թաղուեցանք մկրտութեամբ մահուան համար , կամ , « Թաղուելով Քրիստոսի հետ մկրտութեամբ (Հռովմ. 2. 4 : Կող. Բ. 12) , ընկղմամբ մկրտութիւնն է հին , եւ սրսկմամբ մկրտութիւն կը կատարուի միայն ի դէպս տարածամ մահու : Մկրտութեանէ առաջ ժողովուրդն իւր մեղքերը կը խոստովանէր Յովհաննէսին , ուրեմն խոստովանութիւնն իրարու՝ ազանդաւորական շաղակրատութիւն է , զի անա մկրտութեան սկզբնաւորութեան հետ կոյ խոստովանութեան պաշտօնեայն : Յովհաննէսի այս մկրտութիւնն էր օրինակ այն մկրտութեան որ Յիսուս Քրիստոսի անունով պիտի սկսէր : Յովհաննէսինն էր մկրտութիւն ապաշխարութեան , ուստի Առաքեալք վերստին մկրտեցին զանոնք , որք Սէեւ Յովհաննէսէն մկրտուած էին , այլ չէին

մարախի ու վայրենի մեղք : *5 Այն ատեն բոլոր Երուսաղէ-
մացիներն ու բոլոր Հրէաստան ու բոլոր Յորդանանի կող-
մը անոր կ'երթային , *6 Ու Յորդանանի մէջ կը մկրտուէին
անկէ ու կը խոստովանէին իրենց մեղքերը : *7 Եւ տեսնե-
լով Սաղուկեցիներէն ու Փարիսեցիներէն շատերն իրեն

առած Սուրբ Հոգին (Գործք. ԺԹ. 3-6). իսկ Յիսուսին էր մկրտուծին
շնորհաց , ոչ թէ Յովհաննէսէն շարունակութեամբ , այլ Յիսուսէն սկսե-
լով , զի նա պիտի մկրտէր եւ շնորհէր Սուրբ Հոգին , որպէս ըրաւ եւ
հրամայեց որ Առաքելը եւս մկրտեն (Յովհ. Գ. 23; Դ. 1-3) :

7. Փարիսեցիութիւնն էր ազանդ նշանաւոր առ Հրեայս , որովհետեւ
Փարիսեցիք կը դաւանէին թէ իրենք՝ իրենց գերագոյն իմաստութեամբն
ու առաքինութեամբ հասարակ ժողովրդէն շատ բարձր են , ուստի ուրոյն
դասակարգ մը կազմած էին , եւ կը կոչուէին փառաշայսիներն է քաժ-
նուած կամ զատուած :

Հրեայք Յուդա-Մակաբեանց շնորհիւ հազիւ թէ սկսած էին անդորրու-
թեան շունչ առնուլ , ազատ արտաքին հարատահարութիւններէ , սկսան
այլեւայլ ազանդներու բռնութեամբ զիրար տեսլ ու հալածել : Այս ա-
զանդներու զլխաւորներն էին Փարիսեցիք ու Սաղուկեցիք , որք Մակա-
բեան Յովնաթանի օրով մը աւելի անեցան ու զորացան :

Փարիսեցիք ի հաւատաւ աս նշանաբանն ունէին թէ չկայ անձնաշխա-
նութիւն , այսինքն կը հաւատային տեսակ մը ճակատագրի կամ վերին
տեսչութեան որ կը վարէ մարդկային անձնաշխանութիւնը : Գրաւոր օ-
րէնքներէն զատ՝ անդիր աւանդութիւններ ալ կ'ընդունէին եւ այս աւան-
դութեանց աւելի շատագով էին քան օրինաց (Մարկ. Է. 6-7) : Սորա ի-
րենց այս աւանդամոլութեան մէջ այնքան զակատեցան , որմէ անդին ի-
մաստակութիւնն մը ծայր չունէր . օրինակի համար խնդիր էր գիտնալ թէ
պէտք էր արդեօք հաւու մը շարած օրն ամսած հաւկիթն ուտելը : Սորա ի
վարս եւ ի խօսս կարի զգուշաւոր էին , այնքան վարպետ կեղծաւորներ ,
որք մէկ կողմէն իբր թէ յաչս ժողովրդեան կ'երեւէին արդար ու առաքի-
նի , եւ միւս կողմէն ժողովրդեան մարմինն ու հոգին ճնշելու չէին խղճե-
րնաւ : Խստիւ պախարակեց Քրիստոս սոցա բոլոր կեղծաւորութիւնները ,
զոր օրինակ սոցա ժոմապահութեան եւ աղօթելու ձեւերը (Մատթ. 2.
1-18) , տասանորդութեան եղանակն ու նոցա արծաթախրութեան բուռն
տենչը , նոյնպէս նոցա այլեւայլ գձուձ ու վատ գործերը (Մատթ. ԻԳ. 1-39) :
Ղուկ. ԺԶ. 14) : Այլ սոցա՝ մեղքն , անաւո՛ր մեղքն այն եղաւ , խորին ա-
տելութիւնն զոր ունէին օտարազգիներու դէմ , մանաւանդ գերիշխան սա-
զին , Հռովմէական տէրութեան դէմ , պատճառ եղաւ որ քարուքանդ կոր-

մկրտութեան եկած՝ կ'ըսէ անոնց . « Իժերու ծնունդներ ,
 ո՞վ ցուցուց ձեզ գալիք բարկութենէն փախչիլ : *8 Այսու-
 հետեւ ապաշխարութեան արժանաւոր պտուղ տուէք :
 *9 Ու ինքնիրեննուղ մի՛ ըսէք թէ մենք Աբրահամը հայր
 ունինք . կ'ըսեմ ձեզի , թէ Աստուած կրնայ այս քարերէ

ժանուի Երուսաղէմ ու ցիրուցան ըլլայ ամբողջ ազգն Հրէական :

Սաղակեցիք էին ուրոյն աղանդ , կը հաւատային անձնիշխանութեան
 այսինքն ամէն մարդկային գործք ազատ կամքի . ծնունդ եւ բնական պա-
 տահարներ՝ դիպուածական կը համարէին : Սաղակեցի Եբրայեցերէն առ-
 դատ կը նշանակէ , այլ Թալմուտեանք կը պնդեն թէ այս բառն ելած է
 Սաղովկ անձէ մը որ էր հիմնողի որ անոնք յղանդին : Որքա ամէն աւանդու-
 թիւն եւ անգիր օրէնք չընդունելով , Սուրբ Գործք միայն կ'ընդունէին կա-
 նոն հաւատոյ , կը դաւանէին թէ չկայ հանդերձեալ կեանք , չկան ոչ վարձք
 ու պատիժ , ոչ հոգի եւ ոչ հրեշտակ (Մատթ. ԻԲ 23 : Գործք. ԻԳ. 8) : Հա-
 ճոյքը պաշտել եւ աշխարհս վայելել , այս էր Սաղակեցիութիւնը : Սա-
 ղակեցիք թէեւ Փարիսեցեաց չափ ստուար թիւ չունէին : այլ սակայն ոչ
 նուազ ազգեցիկ էին , զի կային իշխաններ ու երէցներ , մինչեւ իսկ
 քահանայապետներ , որոցմէ տիրապայանն Կայիափայ եւ Անանիա որ
 հրամայեց Պողոսի բերնին զարնել (Գործք. ԻԳ. 4-5) , Սաղակեցի էին :
 Սոցա և Փարիսեցիներուն կ'ուղղէր Յովհաննէս իւր կծու խօսքն ըսե-
 լով . « Իժերու գաւակներ » եւ ոչ թէ Աբրահամու գաւակներ , որ-
 պէս կը պարծենային նորա (Ղուկ. Գ. 8 : Յովհ. Ը. 39) : Որքա այս-
 պէս խստիւ կը յանդիմանուին , վասնզի ոչ թէ Յովհաննէսի քարոզութեանն
 ու պաշտօնին հաւատալով եկած էին , այլ առ երեսս եւ հետաքրքրու-
 թեամբ միայն : Այս կծու խօսքն Ղուկաս կը ցրէ ուղղուած նաեւ ժողովրդ-
 դեան այն մասին որք եկած էին մկրտութեան , այլ չէին ապաշխարած ,
 այսինքն նոր առադողութեան մը հետաքրքիր , այլ ոչ նոր կենաց հետա-
 մուտ : Յովհաննէս յետոյ ի՞նչրու վնասակարութիւնն ու թոյնն ունեցող
 այս մարդերուն կը հարցնէ թէ ո՞վ թելադրեց զձեզ փախչիլ գալու բարկու-
 թենէն , պատճէն . Այս պատիժն էր ոչ թէ ժամանակաւոր , այլ յաւիտե-
 նական , քանի որ Աստուածային արդարութեան ժամն այլ եւս հասած էր ,
 գալատեամբ Մեսիայի , ուստի Յովհաննէս կը պնդէր բարոզելով ,

8. Տալ ապաշխարութեան արժանաւոր պտուղը , հոգեով ու մարմնով
 չկորսուելու համար :

9. Յետոյ Յովհաննէս Հրեայ ազգին սրտին դպչող ամենէն կծու խօսքը
 կ'արտասանէ . « Մի պարծիք թէ Աբրահամը հայր ունիք » , զոր Շնորհալի
 գեղեցիկ կը մեկնէ , թէ այդ պարծանքն էր առաւելագոյն դատապարտու-

Աբրահամի զաւակներ հանել : *10 Որովհետեւ անա կացինը ծառերուն արմատին քով կը դրուի , ամէն ծառ որ բարի պտուղ չտար , կը կարուի ու կրակը կը ձգուի : *11 Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար , բայց իմ ետեւէս եկողն ինչ չատ զօրաւոր է , ու ես անոր կօ-

ծիւն նոցա , վասնզի բարի արմատի մը չար ճիւղերն եղած էին , եւ Թիւր էր իրենց այն հաւատք Թէ Աստուած պիտի խնայէր իրենց որ չկորսուին , որով անզաւակ չմնար Աբրահամ , եւ Թէ խոստացուած ւաւտիսն Աբրահամու եւ անոր զաւակացն համար միայն էին , մինչդեռ Աստուած որ ամուլ , Սարայի քարացած արգանդէն Իսահակը շնորհեց Աբրահամի , կըրնար Աբրահամի նոր զաւակներ հանել այս քարերէն այսինքն հեծանոսներէն :

10. Յովհաննէս ապա սնուար պատիժը , վերահաս պատիժը կ'սայտաւնայ ըսելով . « Ահաւասիկ ատպարը ծառերու արմատին քով կը դրուի » . իւր խօսքն էր կտրուկ , ապաշխարութեան յարգորդ , կացինի նման սուր խօսք , որով կը հասկցնէ Սէ այլ եւս չկայ ակնառուԹիւն , որովհետեւ մարդն է Աստուծոյ այս դրախտի աշխարհիս մէջ տնկուած ծառ , ուստի բարի պտուղ բերելու է , ով որ չբերէ , կը կտրուի ու կրակը կը ձգուի . այս է գալու բարկութիւնը :

11. Ղուկաս կը պատմէ ժողովրդեան , մտաւարներուն ու զինուորներուն հարցումները Թէ ինչ ընելու են (Ղուկ. Գ. 10-15) , եւ մինչ ժողովուրդը կը խորհէր Թէ Յովհաննէսն է արդեօք Քրիստոսը , նա բացէ ի բաց կը խոստովանի Թէ իւր չրոյ մէջ ըրած մկրտութենէն հետեւցնելու չեն Թէ ինք Քրիստոսն է . այլ իւր ետեւէն , վասնզի Յիսուս իրմէն յետոյ ծնաւ , պիտի գայ նա , որ պիտի մկրտէ ի Հոգին սուրբ և ի հուր : Այսպէս Յովհաննէս իւր մկրտութենէն վեր մկրտութիւն մը կը քարոզէր եւ այդ մկրտութեան տէրն իրմէն այնքան վեր կը դաւանէր որ զինքն արժանի չէր համարէր նորա կօշիկներուն կապերն անգամ քակելու (Մարկ. Ա. 7) : Ինչ հօգոր փաստ Մեսիայութեանն Յիսուսի , մանաւանդ արտասանուած այնպիսոյ մը բերնէն , որ հին տնտեսութեան վերջին , այլ մեծագոյն մարգարէն էր (Մատթ. ՀԱ. 11) : Մկրտութեան այս շնորհն արդէն զուշակուած էր (Յովէլ Բ. 28-29; Ես. ԽԳ. 3) , եւ կատարուեցաւ Պէնտէկոստէի օրը (Գործք. Բ. 15-18) :

12. Գալու պատիժը զոր սպառնացաւ Յովհաննէս , այս անգամ կը ճշդէ Թէ հյր ձեռամբ պիտի ըլլայ , Մեսիայն իւր հեծանոցով այսինքն իւր արդարութեան գործիքով — խաչով պիտի սրբէր կալը — աշխարհս , եւ ցորենը — արդարը յարդէն այսինքն չար մարդէն գաւտելով , ցորենը իւր

չիկներն արժանի չեմ վերջնելու, ան պիտի մկրտէ զձեզ Սուրբ Հոգիով ու կրակով: *12 Որուն՝ հեծանոցն իր ձեռքին մէջ է, որ իր կալը պիտի մաքրէ ու իր ցորէնն ամբարը պիտի ժողվէ ու յարզը պիտի այրէ անմարելի կրակով: :

*13 Այն ատեն Յիսուս Յորդանան կուգայ Յովհաննէսի

շտեմարանին — արքայութեան մէջ պիտի ժողվէր, իսկ յարզը պիտի այլ բէր անշէջ կրակով — յաւիտենական պատժով դժոխքին մէջ: :

13. Երբ Յովհաննէս կ'ուստէր Մեսիայն, այն ատեն Յիսուս կուգա- Գալիլեայէն այսինքն Նազարէթէ: Բայց ինչու գար Յիսուս մկրտութեան, քանի որ մեզք չուներ, ուրեմն եւ ոչ պէտք ասպաշխարութեան, — Գրիստոս մարդ եղաւ, այլ թէ եւ մեղաւորներէն զատուած եւ մեղք չէր գի- թեւ. այլ մեղքի համար մեղաւոր համարեցաւ: Նա ընդ օրինօք ասրե- ցաւ (Գալ. Գ. 4), այսինքն ընելու էր, ինչ որ մարդիկ պարտին ընել: Նա պահեց օրէնքը, նոյն իսկ ծիսական օրէնքը եւ սոյն մկրտութեամբ մտաւ իւր քահանայապետական պաշտօնին մէջ, վստանքի հին քահանայու- Թիւնը կը լուացուէր նախ քան զպաշտօնն: :

14. Գուշակեց արդեօք Յովհաննէս. — հաւանական է, քանի որ նա իւր մօր արգանդին մէջէն ցնծալով ողջունած էր Մեսիայն (Ղուկ. Ա. 34), քայց որովհետեւ Յովհաննէս այլուր վկայած է թէ չէր ճանչեր Յիսուսը (Յովհ. Ա. 33), բայց եթէ մկրտութենէ յետոյ, կը հետեւի թէ գիտէր թէ Յիսուս է սրբազոյն ու մեծազոյն քան զինքն, քանի որ լսած էր անշուշտ իւր մօրմէն փոնէ Յիսուսի հրաշալի ծնունդը, միայն թէ Յիսուսի մեսիա- յութեան յայնժամ ունեցաւ հասցաստըն հաւատք, յորժամ տեսաւ երկնա- տուր նշանն այսինքն Սուրբ Հոգւոյն զայլուստն առ Յիսուս: Այսպէս Յով- հաննէս կը հրաժարի Յիսուսը մկրտելէ ըսելով. «Ես բնէ մկրտուելու եմ ու դու ինձ կուգաս»: Ենորհալի զեղեցիկ կը խօսի իբր Յովհաննէսի բեր- նէն. «Ես, ճրագս արեգականդ, եւ ձայնս բանիդ, փեսաւէրս փեսայիդ, որ ի ծնունդս կանանց մեծ»՝ անդրանկանդ ամենայն արարածոց, ես պէտս ունիմ ոչ միայն ի քէն մկրտիլ, այլ եւ յաղագս քոյին օրինաց՝ արեամբ»:

15. Յիսուսի արտասանած հիշեալ բառէն կը հետեւի թէ այն ստորին զիրքը զոր առած էր զայրով մկրտութեան իբր մեղաւոր, առժամայ էր- իւր բռն իտաքը ցոյց տալու զեռ ժամանակ կար: Վայելուչն այն էր որ մկրտուէր հիմա, որպէսզի արդարութիւնն ամբողջապէս կատարուէր: :

16. Յիսուս շուտով ջուրէն դուրս կ'ելլէ. շուշուղ բառէդ, որպէս Եր- նորհալի կը մեկնէ, կը հետեւի թէ Յիսուս մեղքեր խոստովանելու համար ջրին մէջ սպասելու պէտք չուներ. երկինք կը բացուի և Սուրբ Հոգին կ'իջ- նէ, երբ Յիսուս կ'աղօթէր (Ղուկ. Գ. 21), զոր եւ կը տեսնէ Յովհաննէս

քով, մկրտուելու համար անորմէ : *14Ն Եթովհաննէս կ'արգիլէ զանի ու կ'ըսէ . « Ինձ պէտք է քենէ մկրտուել ու դուն ինձի կուգաս » : *15 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . « Թող տուր հիմա , վասնզի այսպէս կը վայլէ մեզի բոլոր արդարութիւնն ամբողջացնել » . ու յետոյ թող տուաւ

(Յովհ. Ա. 32) : Հայր Աստուած կը վկայէ Սէ դա է իմ Զաւակս : Բոլոր հին ու նոր մեկնիչներ միաձայն կը խոստովանին Սէ այն օրուան մէջ Երրորդուծեան խորհուրդն յայտնուեցաւ . նախ Որդին յայտնուեցաւ , յետոյ Հոգին՝ որ իշաւ եւ ի Պերջոյ Հայր՝ որ վկայեց :

Ղուկաս կը յաւելու Սէ Հոգին մտրմնաւոր երեւումիւ , ազաւնիի նմանութեամբ իշաւ , եւ Հայր Աստուած առ Յիսուս ուղղեց իւր այս վկայութիւն . « Դու ես որդի իմ սիրելի » (Ղուկ. Գ. 22-23: Մարկ. Ա. 11) : Բառեքոչ այս Սեծեւ անմիաբանութիւններ ւլ աւելի կը հաստատեն Սէ Աւետարանագիրք իրարմէ անկաս զրամ են , ուրոյն ներշնչութեամբ :

Շնորհալի կը գրէ Սէ քնչու Հոգին ազաւնիի նմանութեամբ իշաւ . — « Զի զգոն է Պաշտոնն եւ հանգարտ , ըստ որում Հոգին հոգի ասի հեզուծեան . եւ դարձեալ զի զհին օրինակն յիշեցուցէ , զի յորժամ եհաս համօրէն աշխարհի ալէկոծութիւնն , յայնժամ նոյն Պաշտոն երբք առհաւատչեայ կենաց զտերեւն ձիծենոյն ի բերան , որ ունէր գնմանութիւն աստուածայնոյս այսմ Ազաւնոյ , որ փոխանակ ձիծենոյ տերեւոյ՝ զազատութիւն երբք ազգի մարդկան եւ զորդեզրութիւն առ ի Հօրէ օժմամբ իւրոյն սրբութեան » :

17. Հայր Աստուծոյ այս վկայութիւնն երկու անգամ եւս լսուեցաւ , նախ Յիսուսի պայծառակերպութեան լեռը եւ յետոյ տաճարին մէջ , եւ ամէն անգամուն երբ Յիսուս կ'ապօթէր (Ղուկ. Գ. 21. Թ. 28-35: Յովհ. ԺԲ. 27-28) : Այս որպիսի՝ յորդորական խրատ մեզ , որ քնք որդեգիր Աստուծոյ , հանապազ աղօթելու առ Աստուած , որպէսզի բացուի երկինք , եւ Աստուածային ողորմութեան դռներ ու երկնաւոր շնորհներ տեղան առ մեզ :

Հայր Աստուած հանեցաւ , այլ , որպէս Շնորհալի կը մեկնէ , « Ոչ ըստ Աստուածութեանն որով միշտ է հաճոյ Որդի Հօր , եւ Հայր Որդոյ համապատուութեամբն , այլ ըստ մարդկութեանն , որ յետոյ եղեւ , քունզի հաճեցայ ասելն ժամանակի է նշանակիչ , այսինքն զի հաճութեամբ Հօր եւ կամաւն եղեւ մարդ լինել Որդոյն , զի եւ լինելովն մարդ՝ հանեցոյց զկամս Հօր ընդ մարդկային բնութեանն » :

Յիսուսի մկրտութիւնը նաև զրամ են (Մարկ. Ա. 1-14: Ղուկ. Գ. 1-38: Յովհ. Ա. 29-35) :

անոր: *16 Եւ երբ մկրտուեցաւ Յիսուս, չուտով ջրէն ելաւ, ու ահա երկինք անոր բացուեցաւ եւ տեսաւ Աստուծոյ Հոգին որ կ'իջնէր աղաւնիի պէս, ու կուգար անոր վրայ: *17 Եւ ահա երկինքէն ձայն մը, որ կ'ըսէր. « Այդ է իմ սիրելի որդիս, որուն հաւանեցայ »

ՔԼՈՒԹ Գ.

*1 Այն ատեն Յիսուս Սաւրբ Հոգիէն տարուեցաւ անապատ, Սատանայէն փորձուելու համար: *2 Եւ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահելէն յետոյ, անօթեցաւ: *3 Եւ Փորձողը մօտենալով կ'ըսէ անոր. « Թէոր Աստուծոյ որդի ես, ըսէ որ այս քարերն հաց ըլլան »: *4 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ. « Գրուած է, Թէ հացով միայն չապրիր մարդ, այլ սամէն խօսքով որ կ'ելլէ Աստուծոյ բերնէն »: *5 Այն ատեն Սատանան առաւ բերաւ

1. Յիսուս Հօր տնօրինութեամբ յաշխարհ եկած էր, իսկ այժմ Սուրբ Հոգւոյն տնօրինութեամբ կ'երթայ յանապատ: Կարծողներ կան թէ Սինա լեռն էր փորձութեան տեղը, թող որ աւանդութիւն կայ թէ էր Սիրիոյ մօտ Յորդանանէն գրեթէ երեք ժամ հեռի ամայի ու բարձր լեռ մը, որ ցարդ կը կոչուի Քուարանդանիս, որ ըսել է քառասներեայ փորձութեան տեղ, ուր կան այրեր ու խոշոր ծակեր, որոց մէջ կը թուի թէ յայնժամ կային զազաններ, որպէս կը գրէ Մարկոս (Ա. 43), զորս Շնորհալի կը զիտէ միանգամայն աներեւոյթ զազաններ եւս, այսինքն ամբողջ զունդն սողայելեան:

Յիսուս Հոգիէն առաջնորդուեցաւ փորձութեան, ուրեմն մարդ պէտք չէ որ ինքնին ինքզինքը ենթարկէ փորձութեան, այլ կազմ ու զգոյշ ըլլալու է ուրիշն վերահաս փորձութեանց զիմադրել: Փորձութեան յաղթանակն է նշմարիտ առաքինութիւն:

2. Յիսուս քառասուն օր ու գիշեր ծոմ կը պահէ այսինքն մտածութեամբ միայն կ'զբաղի, վասնզի ունէր կատարելի մէկ գործ, աշխարհի իրկութեան մեծ գործը: Ո՞ր զգոստ մարդ գործի մը ձեռնարկելէ առաջ մտածութեան պէտք չունի: Մովսէս ու Մդիս եւս պահեցին, բայց հրաշքով (Նք 17. 28: Գ. Թագ. ԺԹ. 8):

3. Երբ Յիսուս կ'անօթենայ, յայնժամ Սատանայն կ'երեւի: Գիտէր թէ

զանի Սուրբ քաղաքը ու զանի տաճարի աշտարակին վրայ կը կայնեցնէ , *6 ու կ'ըսէ . « Թէ որ Աստուծոյ որդի ես , ինքզինքդ ասկէց վար ձգէ , որովհետեւ գրուած է Թէ իւր հրեշտակներուն պատուիրուած է քեզի համար , որ ձեռքի վրայ վերցնեն զքեզ , որ ոտքդ քարի չզարնես քնաւ » : *7 Յիսուս նորէն կ'ըսէ անոր . « Գրուած է որ քու տէր Աստուածը չփորձես » : *8 Նորէն Սատանան կ'առնու կը բերէ զանի շատ բարձր լեռ մը եւ ցոյց կուտայ անոր աշ-

Աստուծոյ որդին էր նա . — անտարակոյս , վասնզի Յիսուսի մկրտութեան հրաշափառ տեսարանն այլ եւս չէր թողուր ոեւէ կասկած , միայն Թէ որովհետեւ այդ տեսարանէն աւելի հրաշափառ ուրիշ մէկ տեսարանի մը ականատես ըլլալէ յետոյ՝ յաղթութիւն տարած էր , առած էր աստուածաշէն բերդը — Եղեմ դրախտը , քանդած էր մարդկային անմեղաբեան շէնքը , ուստի խրախուսեց ինքզինքը փորձել այս Նոր-Ազամը , բանի որ առիթն առձեռն ունէր . այսինքն զրգուել Յիսուսի կարիքը , բանի որ անթի էր , կամքը՝ բանի որ կարօտ էր , կիրքը՝ բանի որ զգայուն էր : ԵՍէ յաղթահարէր , ինչպէս խորտակած էր Հին-Ազամը , այլ եւս սրպիսի փառք ու խնդութիւն անձին , իսկ եՍէ չյաղթէր , կրնար սպասել ուրիշ դիպուկատիքներու (Ղուկ. Դ. 13) :

Այլ Յիսուսի էր փորձուիլ , բանի որ մեղք չունէր , — նա Թէպէտ էր Աստուած , այլ էր միանգամայն մարդ , եւ այս փորձութիւնը պիտի գային իբրեւ մարդու , որոց եւ պիտի յաղթէր իբրեւ մարդ : Նա եւս , ինչպէս ամէն մարդ , պիտի Թելազրուէր չարէն . ազդուիլ չարէն , այս է փորձութիւնը : Հաւանիլ փորձութեան ու յաղթուիլ , այս է մեղքը :

Սատանայն Յիսուսի կարիքը կը զրգուէ ճիշդ ժամանակին , զի Յիսուս ան անթեցած էր , ըսելով . « Այս քարերուն հրամայէ որ հաց ըլլան » : Ի՞նչ առիթ Յիսուսի ունայն հրաշք մը գործել տալու համար , եՍէ Յիսուս քարերը հաց ընել կարող էր , մի՞թէ չէր կարող իւր քաղցը բոլորովին զնայելու հրաշքն ընել . ի՞նչ չարահնար ճարտարութիւն : Ղուկաս կը գրէ . « Այդ քարին » (Դ. 3) . այսպիսի Թեճեւ տարբերութիւնք կ'սպասուին խրարմէ ազատ զրոյններէ :

է. Յիսուս Սուրբ-Գրքէն վկայութիւն մը բերելով կը կարկէ Փորձիչը (Բ. Սր. Ը. 3) , Ուրեմն Աստուածաշունչ-Գիրքն է գինարան , որով կարելի է մեզ գինիլ ընդդէմ փորձութեանց չարին : Աստուծոյ վստահող մարդն է որ կը ճարէ իւր հացը անտրտունչ , առանց ուստեք սպասելու ոեւէ անբնական օգնութիւն . Արարչական պատգամն որ ստեղծեց հացն ի պէտս մարդոյ , միշտ կարող է , երբ պակսի այն , ուրիշ կերպով եւս հայնայնել այդ պէտքը :

խարհի բոլոր Թագաւորութիւնները եւ անոնց փառքը ,
 *9 ու կ'ըսէ անոր . « Այս բոլոր բաները քեզի պիտի տամ ,
 Թէ որ իյնալով երկիրպագութիւն ընես ինձի » : *10 Այն
 ատեն կ'ըսէ անոր Յիսուս . « Ետիս գնա , Սատանայ , ու
 բովնտեւ գրուած է , քու տէր Աստուծոյդ երկիրպագու-
 Թիւն ընես ու զանի միայն պաշտես » : *11 Յետոյ Սատա-
 նան զանի թողուց եւ ահա հրեշտակներ մօտեցան ու զանի
 կը պաշտէին :

5. Ենորհալին կը գրէ . « Յես զհնգուԹիւն Տեառն մերոյ . զի յոր վայր
 կամք Փորձողին տխորժէին լինել , անոր հասանէր , եւ զայս առնէր . զի
 ըմբռնեացէ զՋարիմաստն ի խորագիտութեան իւրում » : Յիսուս կը հրա-
 մայուի Սատանայէն սուրբ քաղաքի այսինքն Երուսաղեմի տաճարին աշ-
 տարակէն , որոյ բարձրութիւնն , ըստ Յովսեպոսի , Յովսափատու ձորէն
 վեր մինչեւ աշտարակին ժայրն էր աւելի քան 700 ոտք , ինքզինքը վար
 նետել :

6. Զէնքը զոր Յիսուս Սուրբ-Գրքի զինարանէն առնլով գործածեց ընդ-
 դէմ չարին , այս անգամ Յիսուսի կիրքը գրգռելու համար , նոյն իսկ Չարն
 այդ զինարանէն կ'առնու փորձութեան զէնքը ըսելով . « Գրուած է որ հը-
 րեշտակներն իրենց Թեւերուն վրայ առնուն զքեզ , որպէս զի քարի չզար-
 նուիս (Սաղմ. Ղ. 11-12) :

7. Յիսուս նորէն Սուրբ-Գրքէն վկայութիւն բերելով (Բ. Օր. Զ. 16) ,
 կը յաղթէ Փորձողին . բայց ոչ Թէ Սուրբ-Գրքի այս ու այն մասն են իրա-
 բու հսկառակ , այլ մին զմիւսն կը մեկնէ : Ղուկաս այս երկրորդ փորձու-
 Թիւնն երրորդ կը դնէ (Բ. 9-13) : Այսպէս Սատանայ Յիսուսի կիրքը կը
 գրգռէ , այլ ի զուր :

8. Սատանայն գրչուելու համար Յիսուսի կամքը , բարձր լեռան մը վը-
 րայէն ցոյց կուտայ անոր աշխարհիս բոլոր Թագաւորութիւնները եւ անոնց
 փառքը : Ո՞րն է այդ լեռը . — յայտնի չէ :

9. Կը խոստանայ Սատանայ այդ ամէնը տալ Յիսուսի , եթէ իրեն եր-
 կրպագէ : Այս էր յանդղնագոյն փորձ , վասնզի էր ստոյ սուտ . Սատանայ
 չուներ իշխանութիւն տալու , վասնզի « Որդին էր ժառանգ » : Սատանայ
 իշխանութիւն էր ստացած ապականութեամբն մարդկային սրտերու ,
 որով կը կոչուէր երբեմն « Իշխան աշխարհիս այսորիկ » , այլ այս իշխա-
 նութենէն այլ եւս պիտի կապտուէր , քանի որ իւր դէմ հաս կը կենար
 անվկանդ վահանն Աստուծոյ , Մեսիանյն , որ կը պատասխանէ դարձեւ
 Սուրբ-Գրքէն վկայութիւն բերելով ,

10. Թէ մարդ պէտք է որ միայն Աստուծոյ երկրպագէ (Բ. Օր. Զ. 13) ,

*12 Եւ երբ լսեց Յիսուս թէ Յովհաննէս մասնուեցաւ , մեկնեցաւ զնաց Գալիլեա . *13 ու Նազարէթը թողլով եկաւ բնակեցաւ Զարուղոնի ու Նեփթաղեմի սահմաններուն մէջ ծովկըրը եւջ կափառնայուսի մէջ , *14 որ կատարուի խօսքը , որ ըսուեցաւ Եսայի մարգարէին ձեռքով . *15 Ով Զարուղոնի երկիր ու Նեփթաղեմի երկիր , ծովու ճամբայ , Յորդանանու անդին , հեթանոսներու Գալիլեա , *16 ժողովուրդ , որ կը նստէր խաւարի մէջ , մեծ լոյս տեսաւ . ու

Ուրեմն մարդ երկրպագած կ'ըլլայ Սատանայի . երբ կ'անսայ նորա թելադրութեանց : Այսպէս մարդն ունի կարիք , կամք ու կիրք : Կարիքը կ'ստիպէ որ մարդ մեղք գործէ , բարերն անգամ պահանջելով որ հոց ըլլան , մինչդեռ Աստուած տուած է մարդուս ոյժ , զոր գործածելով եւ ե՞՞ կրնայ կարիքը զոհացնել , այսինքն զգոստուածեամբ ապրելով : Կամքը կ'ստիպէ որ մարդ մեղք գործէ ամէն բան ունենալու համար , մինչդեռ Աստուած խելք տուած է , զոր գործածելով եւ ե՞՞ կրնայ կամքը զոհացնել , այսինքն արդարութեամբ ապրելով : Կիրքը կ'ստիպէ որ մարդ մեղք գործէ , մղելով զմարդն ծայրայեղութենէ ի ծայրայեղութիւն , մինչդեռ Աստուած մարդուս տուած է խիղճ , այդ կիրքը զսպելու համար : Մարդ իրաւունք չունի բնաւ ինքզինքը շտիջսխեղու կամ ուրիշները շտիջսխեղու համար գործածել իւր կիրքը : Ուրեմն զգոստուածեամբ , արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ ապրողն է որ անփորձ կը մնայ չարէն :

11. Ուր ուրեմն Սատանայ կը վե՛նտուի եւ նորա հրեշտակներ կուզան ի սպասաւորութիւն Յիսուսի : Այսպէս մարդ երբ փորձութեան կը յաղթէ եւ թոյլ չտար որ չարին թելադրութիւններն իւր սրտին ներգործեն , յայնժամ հրեշտակներ , ո՛վ երկնային բերկրութեանս , անբերեւեթաբար կ'սպասաւորեն , որպէս զրուած է . « Ամենը սպասաւորող հոգիներ են , որոնք սպասաւորութեան կը զրկուին անոնց համար , որք փրկութիւնը պիտի ժառանգեն » (Եբր. Ա. 14) : Յիսուսի անսպասուի մէջ փորձութիւնը կը յիշեն նաեւ (Մարկ. Ա. 12-14 : Զուկ. Գ. 1-14) :

12. Մկրտիչ Յովհաննէսի բռնատրկութենէն առաջ , որպէս Ենորհալի եւս կը գրէ , աւետարանիչն Յովհաննէս կը պատմէ թէ Յիսուս փորձութեան անսպասուէն կը դառնայ կուզայ ի Յորդանան , ուր Յովհաննէսէն կը վկայուի թէ ինքն է Գառն Աստուծոյ (Ա. 13-34) : Ուր նախ կը կոչէ Առաքեալներէն հինգը աշակերտութեան (Ա. 35-51) : Անտի կ'երթայ ի Կանա , ուր ջուրը զինիի փոխելով առաջին հրաշքը կը գործէ (Բ. 1-11) : Անտի եւս կ'երթայ ի Կափառնայում (Բ. 12) : Ապա յերուսաղէմ Զատիկածինի համար , եւ կը մտքէ տաճարը եւ շատերը կ'աշակերտէ (Բ. 13-25) :

անոնց որոնք աշխարհին ու մահուան շուքերուն մէջ կը նստէին, լոյս ծագեց) : *17 Այնուհետև Յիսուս սկսաւ քարոզել ու ըսել . « Ապաշխարեցէք, որովհետև մօտեցած է երկնքի թագաւորութիւնը » :

*18 Երբ Յիսուս կը պտրտէր Գալիլեացիներուն ծովին քովերը, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչուած Սիմոնը եւ անոր Անդրէաս եղբայրը, որոնք ծովը ուռկան ձգած էին, վասն զի ձկնորսներ էին, *19 ու կ'ըսէ անոնց.

Կը խօսի Նիկողիմոսի հետ գիշերայն (Գ. 1-23) : Եւ յետոյ կուգայ Հրէաստան ու կը մկրտէ, մինչ Յովհաննէս եւս կը մկրտէր յԱյնոն (Գ. 22-35) : Յիսուս այսպէս հազիւ սկսած էր իւր պաշտօնը, երբ կը լսէ Յովհաննէս մատնուեցաւ (Մատթ. ԺԴ. 1-12), չղրգոելու համար իւր Սըշնամիներուն կատաղութիւնը, որոնք արդէն սկսած էին նախանձիլ, վասն զի Յիսուս Յովհաննէս մկրտիչէն աւելի սիրելի եղած էր ժողովրդեան (Յովհ. Գ. 4-5), Սողոմ Հրէաստանը կը մեկնի ի Գալիլեա : Այս մեզ ո՛րպիսի դաս խոհեմութեան, որպէս կը գրէ Շարհալի . « Զի զմեզ ուսուցէ մի խրոտալով տալ զանձն ի փորձանս » :

13. Այս Տամբորդութեան մէջ երբ Յիսուս Սամարիայէն կ'անցնէր, կը խօսակցի Սամարացի կնկան մը հետ (Յովհ. Գ. 4-43) : Եւ հանդիպելով ի Կրիստոս կը բժշկէ լազնուականին որդին (Յովհ. Գ. 46-54) : Այս էր երկրորդ հրաշքը : Ապա կը հասնի ի Նազարէթ, ուր շաբաթ օրը կը բարոզէ եւ կ'ըստիպուի անտի եւս մեկնիլ եւ գալ ի Կափառնայում (Ղուկ. Գ. 16-33) : Եւ այլ եւս զրեթէ հոն կը հասատուուի, զոր Մատթէոս կը կոչէ « իւր քաղաքը » (Թ. 1 : Մարկ. Ա. 21-29) : Կափառնայում էր ծովեզերեայ քաղաք, որոյ բնիկներն ի տես Փրկչին թէեւ մինչեւ երկինք բարձրացան, այլ իրենց ան հաւատութեան համար դատապարտեցան ի զժոխս (Մատթ. ԺԱ. 20-25) : Այս քաղաքն էր առ եզերք Գալիլեայի ծովուն, Յորդանանէ իբր հինգ մղոն :

14. Զարուզոնի ու ՆեփՊաղիմայ՝ այս երկու ցեղերու երկիրն եւ Ասերի երկրին մէկ մասը կը կոչուէին Վերին-Գալիլեա, ուր շատ մը հեթանոսներ եւս կը բնակէին, որոց հետ որովհետև բնիկ Հրեայներն յարաբերութիւններ ունէին, ուստի կ'ըսուէր նաեւ « Գալիլեա հեթանոսաց » : Այս երկրին ժողովուրդն որ « Նստէր ի խաւարի եւ ի ստուերս մահու », լոյս տեսաւ, լոյս Արեգակունն արդարութեան, որպէս զուշակուած էր մարգարէէն (Յս. Թ. 1-2 : ԽԲ. 7) :

17. Յիսուս կ'սկսի հրապարակային քարոզութեան, աւետելով թէ երկրնքի Թագաւորութիւնը մօտ է . Մարկոս կը յաւելու, « Ու Աւետարանին հաւատացէք » (Ա. 15) : Յիսուս ի սկզբան չըսեր թէ ինքն է Մեսայն, որ-

« Եկէ՛ք իմ ետեւէս ու ղձեզ մարդիկներու որսորդներ պիտի ընեմ »: Եւ անոնք շուտով ձգելով գործիքները, գացին անոր ետեւէն: *21 Եւ անկէց առաջ երթալով տեսաւ ուրիշ երկու եղբայրներ, Զերեդեան Յակովբոսը եւ անոր Յովհաննէս եղբայրը նաև ու մէջ, իրենց Զերեդէոս հօր հետ մեկտեղ, երբ կը պատրաստէին իրենց ուռկանները. ու կանչեց զանոնք: *22 Անոնք շուտով նաև ու իրենց հայրը թողլով՝ գացին անոր ետեւէն:

պէս զի իւր ազգակիցք, որք բուռն տենչ ունէին ետկաւոր զօրեղ Թագաւորութիւն մը տեսնել Մեսիայով, չհուսարուին իւր շուրջ: Այսպէս հրատարակելով երկնաւոր Թագաւորութիւն, կը ջնջէ երկրաւորին յոյսը եւ զանոնք առ ինքն կը հրաւիրէ, որք հոգեւոր կենսաց ու երջանկութեան ունին անձուկ ու փափագ: Յովհաննէս Մկրտիչ եւս մօտ աւետած էր, այժմ Քրիստոս եւս, վասնզի Թագաւորն արգարեւ մօտ էր, Սէպէտ դեռ չէր փառաւորուած իւր Թագաւորութեան մէջ, զի դեռ յաղթանակաւ չէր յարութիւն առած: Այս Թագաւորութիւնը վայելելու համար Յիսուս ապաշխարութիւնը պայման կը դնէ. ուրեմն ապաշխարութիւնն է դուռն երկնից արքայութեան եւ Քրիստոս մօտ է եւ ի մեզ է, եթէ ապաշխարութեամբ սրբուած է մեր սիրտը:

18. Յիսուս երբ կը պարտէր Գալիլեացոց ծովուն քովեր, Ղուկաս կ'ըսէ Գեննեսարէթի ծովուն (Ե. 1), Գեննեսարէթ քաշտին անուամբ, ինչպէս եւ ծով Տիրեբեայ, մտասկայ Տիրեբոս քաղաքի անուամբ (Յովհ. 2. 1), զոր հիմնեց Զերովդէս-Աղրիպպաս եւ անուանեց Տիրեբոս ի պատիւ Տիրեր կայսեր Հռովմայ: Պետրոսն ու Անդրէասը՝ երկու եղբայրներ որք ձկնորսութեամբ կ'զբաղէին կը կոչէ աշակերտութեան. Շնորհալի կը դիտէ Սէ այս աշակերտներն արդէն Սէ եւ կոչուած էին (Յովհ. Ա. 40-41): Բ. 2. 11-12), այլ սերտիւ դեռ չէին յարած Յիսուսի, այսինքն ոչ յաճախ Յիսուսի հետ էին, եւ կ'երթային երբեմն Երբեմն ի գործ ձկնորսութեան:

19. Ըստ Ղուկասու (Ե. 2-10) ձուկերու հրաշալի որսէն յետոյ, Յիսուս նոցա կը հրամայէ իսպառ Թողուլ տուն ու գործ ու ըլլալ մարդերու որսորդ, այսինքն հոգիներ շահիլ:

20. Նորա հնազանդեցան, առանց պահանջներ ընելու եւ կամ վարանելու. այս եւս սրբախի դաս հնազանդութեան եւ սրբախի փոյժ ի գործ Աւետարանի:

21. Յիսուս կը տեսնէ Յակոբոսն ու Յովհաննէսը՝ երկու եղբայրներ, որք իրենց հօր հետ ուռկաններ կը կարկտէին, կը կոչէ աշակերտութեան: Սորա ի վերեւ յիշուած հրաշալի որսին արդէն ականատես եղած էին: Կը

*23 Եւ Յիսուս կը պտըտէր Գալիլեայի ամէն կողմը , կը սորվեցնէր անոնց բոլոր ժողովարաններուն մէջ , ու կը քարոզէր արքայութեան Աւետարանը , եւ կը բժշկէր ժողովրդեան մէջ եղած ամէն հիւանդութիւններն ու բոլոր արտերը : *24 Եւ անոր համբաւն ելաւ Ասորիներու բոլոր երկրին մէջ , ու անոր քով բերին ամէն հիւանդներ , որոնք տեսակ տեսակ ցաւերով ու տանջանքներով նեղուած էին , ու դիւահարներ ու լուսնոտներ ու անդամալոյծներ

կարծուի թէ Յովհաննէս եւս ի սկզբան Յիսուսի աշակերտն էր , եւ յետոյ Պետրոսի եւ Անդրէասի պէս հեռացած պահ մը (Յովհ. Ա. 37-43) : Այս նաւուռն մէջ , Մարկոս կը յաւելու թէ կային վարձկաններ (Ա. 20) , ուրեմն չէին սորս այնչափ աղքատ , այլ ունեւոր էին :

22. Ենորհալի կը գրէ . « Մոցայս եւս զարմանալի (հաւատք) էր , զի եւ հայրն մերձ էր , եւ ոչինչ գրեցին զաէր նորս , առ սէր կոչողին . . . այլ ըստ նմանութեան Եղիսէի գնացին զհետ Վարդապետին , քանզի նոյն հոգի էր , որ շարժէր զիւրաքանչիւրսն ի բարիս » :

23. Մարկոս կը պատմէ թէ Յիսուս իւր այս չորս աշակերտներուն հետ գնաց ի Կափառնայում , ուր շարսժ օր ժողովարանին մէջ քարոզեց (Ա. 21-23) : Հրէից զոները կը մատուցուէին միմիայն Երուսաղեմի մէջ , այլ Բաբելոնեան գերութենէն յետոյ ամեն քաղաք ու զիւր կային սինակոկաներ , — ժողովարան — ուր Հրեայք կը հաւարուէին ամէն շարսժ օր եւ Մովսիսի հնգամատենէն ու մարգարէից գրքերէն մասեր կը կարդային ու կը մեկնէին (Գործք. ԺԳ. 15 : ԺԵ. 21 : Ղուկ. Դ. 15-20) : Ժողովարանք շինուած էին զրեթէ ի ձեւ տաճարին : Նոյնպէս Մարկոս կը գրէ թէ Յիսուս Կափառնայումի մէջ բժշկեց դիւահար մը , եւ սպաս Սիմոնին զորանչը եւ ուրիշներ (Ա. 23-35) : Այս կարգաւ չեն պատմեր Մատթէոս (Ը. 14-17) եւ Ղուկաս (Դ. 31-41) : Յետոյ Մարկոս կը պատմէ թէ Յիսուս առաւօտուն կանուխ անապատ տեղ մը գնաց աղօթելու , եւ աշակերտք փնտռելէ յետոյ գտան զինքը (Ա. 35-39) : Այսպէս Յիսուս թէ քարոզելով արքայութեան Աւետարանը , եւ թէ հրաշք գործելով ,

24. Համբաւ կը հանէ որ կը տարածուի Ասորոց երկրին մէջ . այժմ Սուրիս , ընդարձակ նահանգ , որ է արեւելքէն ցմիրատ , արեւմուտքէն Միջերկրական ծով , Հիւսիսէն Տաւրոսեան լեռներ , հարուէն Արաբիս . ուրեմն Յիսուս ոչ թէ միայն Հրէից , այլ եւ հեթանոսաց մէջ հռչակ կը հանէ : եւ կը բերուէին տեսակ տեսակ հիւանդներ , դիւահարներ , — այս հիւանդութիւնը չէր տեսակ մը խելազարուածիւն , որպէս կը կարծուի , այլ իսկապէս դեւերէ չարչարանք ու տանջանք , եւ լուսնոտներ , — այս հիւան-

ու բժշկեց զանոնք : *25 Եւ անոր ետեւէն կ'երթային շատ ժողովուրդներ Գալիլեայէն ու Դեկապոլիսէն ու Երուսաղեմէն , ու Հրէաստանէն ու Յորդանանու անդիէն . եւ բժշկեց զանոնք :

ԳԼՈՒԹ Ե.

*1 Եւ ժողովուրդները տեսնելով լեռը ելաւ , ու երբ նըստաւ հոն , անոր աշակերտները անոր քով մօտեցան : 2 Եւ բանալով իր բերանը , անոնց կը սովորեցնէր ու կ'ըսէր . *3 Աւերանի հոգւով աղքատներու , որովհետեւ անոնց է երկնքի թագաւորութիւնը : *4 Երանի սգաւորներու . որովհետեւ անոնք պիտի մխիթարուին : *5 Երանի հեզերուն , որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը : *6 Երանի աննշ ուրոնք արդարութեան անօթի ու ծարաւ են , որովհետեւ անոնք պիտի կշտանան : 7 Երանի ողորմածներու , որով-

որութիւնն ալ այսպէս կը կոչուէր , վասնզի կը կարծուէր թէ լուսինն է պատհառ այս ախտին . որոյ նշանք կը ծանրանային լուսնի լրման ատեն , եւ անդամայոյժներ , զորս եւ բժշկեց :

25. Շատ ժողովուրդներ Յիսուսի ետեւէն կ'երթային , որք էին Գալիլեայէն , Դեկապոլիսէն , որ Յունարէն բառ է եւ կը նշանակէ տասն բաղաբ , վասնզի այդ գաւառին մէջ գաղթականներէ շինուած տասնի չափ քաղաքներ կային , Երուսաղեմէն , Հրէաստանէն ու Յորդանանու անդիի կողմէն :

1. Մատթէոս կարգաւ չպատմեր բորոտին բժշկութիւնը (Ը. 2-3) , իւր կոչումն յառաքելութիւն (Ք. 9) , Յիսուսի շատագովելն իւր աշակերտները շարքա՞ օրը հասկ ուտելնուն համար (ԺԲ. 1-8) , գօսացած ձեռքին բժշկութիւնը (ԺԲ. 9-13) եւ շատ մը ժողովրդեան Յիսուսի ետեւէն երթալը (ԺԲ. 15-21) : Մինչդեռ Մարկոս եւ Ղուկաս կարգաւ կը գրեն : Յետոյ Յիսուս լեռը կ'ելլէ աղսթելու եւ կ'ընտրէ , ըստ Ղուկասու , տասներկու առաքելները (Ղուկ. 2. 12-17) եւ կ'իջնէ լեռնէն տափարակ տեղ մը եւ խընուած ժողովրդեան ու աշակերտներուն կը խօսի այն նշանաւոր ճառն որ ԼԵՌԱՆ ՔԱՐՈՋ կը կոչուի : Այս լեռն է Նազարէթէն ի Տիբերիա , իբր եօթն մղոն հեռի Կափառնայումէ , Քուռն Համթին անուամբ , որոյ երկու ստրբրունն ի միջի կայ հարթ հովիտ , ուր նստաւ Յիսուս քարոզելու : Այս էր

հետեւ անոնք ողորմութիւն պիտի գտնեն : *8 Երանի անոնց , որոնք արտով սուրբ են , որովհետեւ անոնք Աստուած պիտի տեսնեն : *9 Երանի խաղաղութիւն ընողներուն , որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին : *10 Երանի անոնց , որոնք հալածուած են արդարութեան համար , որովհետեւ անոնց է երկնքի թագաւորութիւնը : *11 Երանի եւ ձեզի , երբ զձեզ նախատես ու հալածեն , ու ստութեամբ ըսեն ձեր վրայօք գէշ խօսք ինծի համար : 12 Յնծացէք ու ուրախացէք , վասնզի ձեզի շատ վարձք կան երկնքի մէջ , որովհետեւ այսպէս հալածեցին մարգարէները , որոնք ձեռնէ առաջ էին :

Հրէական եղանակ վարդապետութեան (Ղուկ. Դ. 20: Ե. 3: Յովհ. Ը. 2: Գործք. ԺԶ. 13): Թէպէտ երբեմն յոտին եւս կը քարոզուէր (Գործք. ԺԳ. 16) :

3. Կ'երանէ հոգևով սղբատները , այսինքն այն մարդիկ , որք աղքատ են չարութեան ոգիէ . միամիտ են ի հոււտտս եւ չեն հպարտ , ունայնամիտ բծախնդիր , աւեսելով թէ նոցա է երկնքի արքայութիւնը :

4. Կ'երանէ սգաւորները , այլ սնտրտունչ սգաւորները , որոց անմուռնչ հեծութիւնք կը բարձրունան առ Աստուած , որմէ կը լսուին , ուրեմն եւ պիտի մխթարուին :

5. Կ'երանէ հեզերը այն խոնարհ մարդիկը , որք ազնիւ ոգի ունին , բարեմոյն են եւ առ ամենեւին ընտանի , եւ միտնգամայն կը համբրեն այն բոլոր վշտերուն , զորս կը կրեն յանիրաւի (Ա. Պետ. ԺԱ. 29) . ոչ ապարէն ինքն իսկ Յիսուս էր խոնարհ ու հեզ (Մատթ. ԺԱ. 29) , որ չէր նախատեր , երբ կը նախատուէր (Ա. Պետ. Բ. 23) : Այս հեզութիւնը կը յանձնարարէր Պետրոս կնիկ մարդերու եւս իբր զարդ պատուական (Ա. Պետ. Դ. 3-7) : Ծնորհալի եւս կը գրէ . « Հեզն եւ խաղաղասարն ընդ ամենեւին ունելով սէր , ժառանգէ առանց խռովութեան զերկիր , իսկ խռովասարն եւ ի սեպհական հայրենեացն զրկի » : Ո՛րքան մարդիկ զրկուած են նոյն իսկ ամէն տեսակ բարիքէ իրենց ղէզ ու ցասկոտ , հպարտ ու վայրենի բնաւորութեանց երեսէն : Հեզութեամբ միայն , որ խոհեմութեան զուգակից է , երկիրս ժառանգել կարելի է իւր բոլոր բարեօք :

6. Կ'երանէ Յիսուս արդարութեան սաստիկ սենչ ու եռանդուն իղձ ունեցողները , նմոն անծոխներու ու ծարաւիներու , որք լիուլի պիտի զոհանան Աւետարանի արդարութեան հաւատալով , այսինքն թէ Աստուածային արդարութիւնն անտես պիտի չընէ զիրենք :

*13 Դուք էք աշխարհի աղը, բայց եթէ աղը անհամ-
նայ, ի՞նչով պիտի աղուի. այնուհետեւ բանի մը չ'ազդեր,
բայց եթէ դուրս ձգուիլ ու մարդիկներէն կոխկրտուիլ:
*14 Դուք էք աշխարհի լոյսը, չկրնար պահուրտիլ քաղաք
ճշ որ լեռան վրայ կը կենայ: 15 Եւ ճրագը չեն վառեր ու
ղներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, եւ լոյս
կուտայ ամենուն, որոնք տանը մէջ են: 16 Այնպէս ձեր
լոյսը թող լուսաւորէ մարդիկներուն առջեւ; որպէս զի
տեսնեն ձեր բարի գործերը ու փառաւորեն ձեր Հայրը,
որ երկինքն է:

*17 Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէ-

7. Կ'երանէ ոգորմածները, ո՞վ սուրբ բարբառ. մարդկութիւնն Յրք եւ
հւր ողորմութեան պէտք ունեցած չէ: Յանել ու քաղել, այս չէ մի՞թէ ար-
դար գործ ամէն մարդու:

8. Կ'երանէ սրտով սուրբերը. այսպէս անո խօսքերու վեմագոյնը
կ'արտասանէ Ռերանն աստուածային, թէ սուրբ սիրտն է հայելի, ուր
Աստուած կը ցոլայ:

9. Կ'երանէ խաղաղարարները եւ ոյն փառաւոր տնուն, որ մի միայն
իւր սեփականութիւնն էր, կը շնորհէ անոնց, անուանելով զանոնք ռդդի
Աստուծոյ. այս որպիսի՝ անգին շնորհ, թող որ ինքն էր առաջին խաղաղա-
րարն, որ արեամբ խաչին զԱստուած հաշտեցուց մարդկութեան հետ, եւ
խաղաղութիւն կտակեց իւր աշակերտներուն (Յովհ. ԺԴ. 27), մէկգմէկ
սիրելու պատուէրն ւսանդելով:

10. Կ'երանէ արդարութեան համար հալածուողները, եւ ինչ որ հոգևով
աղբատներուն՝ նոյնը եւ սոցա կը խոտանայ այսինքն երկնքի Թագաւոր-
ութիւնը: Վասնզի ինչպէս հոգևով աղբատներն չեն կրնար չար գործել,
այլ մինչեւ իսկ չարութեանց կը համբերեն. այսպէս թէ սոքա եւ թէ ար-
դարութեան համար հալածուողներն պիտի ժառանգեն Աստուծոյ Թագաւոր-
ութիւնը: Այս է արդար փոխարինութիւն, վասն զի չարին Թագաւորու-
թիւնն ուրացողին է երկնքի Թագաւորութիւնը:

11. Յետոյ Յիսուս ուղղակի իւր աշակերտներուն խօսելով կ'երանէ
զանոնք, մարգարէանալով թէ պիտի նոխատուին ու զրպարտուին, այլ
կը միխթարէ խոտանալով նոցա երկնային մեծագոյն վարձատրութիւն, եւ
կը շնշտէ թէ ինչպէս մարգարէներն հալածուեցան, այլ սակայն յետոյ փա-
ռաւորուեցան, իւր աշակերտք եւս նոյնպէս պիտի ըլլային: Ի՞նչ գեղե-
ցիկ խոստում է այս, մանաւանդ անոնց, որք Աւետարանի են պաշտօն-
ետայ եւ քարոզ:

ները քակելու . չեկայ քակելու այլ ամբողջացնելու : 18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , մինչեւ անցնին երկինք ու երկիր՝ օրէնքէն ու մարգարէութիւններէն կէտ մը , որ նշանագիր մըն է , չպիտի անցնի , մինչեւ որ ամէնն ըլլայ : *19 Ով որ այս պատիկ պատուէրներէն մէկը քակէ , ու աջնպէս սորվեցնէ մարդկներուն , պատիկ պիտի կանչուի երկնքի թագաւորութեանը մէջ . բայց ով որ ընէ ու սովորեցնէ , ան մեծ պիտի կանչուի երկնքի թագաւորութեան մէջ : 20 Բայց կ'ըսեմ ձեզի , թէ որ ձեր արդարութիւնը դպիրներուն ու Փարիսեցիներուն «Երբեք»-նէննէն աւելի չըլլայ , չպիտի մտնաք երկնքի արքայութեան մէջ :

Այս երանութիւններէն չորսը , որոնցմէ զատ վայերն որք չեն յիշուիր Մատթէոսէ , գրած է եւ Ղուկաս (Ձ. 20-27) :

13. Յիսուս ազի կը նմանցնէ իւր աշակարտները , վասնզի նորա Աւետարանի ազով պիտի համմէին աշխարհս , եւ այդ ազն ազդեցիկ պահելու համար ո՛րքան զգուշութիւն ու խնամք պէտք է . աշին համը կը կորուսի , եթէ մեր բարքն ու վարք յոռի ըլլան , անհամապատասխան աւետարանական քարոզութեան :

14. Յետոյ Յիսուս լոյս կ'անուանէ իրեններն ու ճրագ , եւ կը պատուիրէ նոցա , որ իրենց բարի գործերու լոյսն այնպէս սիրեն , մինչ զի մարդիկ ցնցին ի գովեստ փառացն Աստուծոյ :

17. Այլ որպէս զի չկարծուի թէ եկած է հինը բոլորովին աւրել ու շնչել , Յիսուս բացէ ի բաց կը խոստովանի թէ այն բարոյական մասերն որք թերի են հինին մէջ , եկած էր ընուլ : Օրէնք ու մարգարէք պիտի մնային , այլ սակայն ճշդուած ու ամբողջացած , այնպէս որ այնուհետեւ նշանագիր մը անգամ պիտի չաւրուի , այսինքն աստուածատուր բոլոր պատուէրներ պիտի կատարուին անփոփոխ :

Աստ կ'ընդհատուի Ենորհալիի մեկնութիւնը , զոր կը շարունակէ յետոյ Ծործորեցին :

19. Յիսուս կ'սպառնայ թէ այն պատուէրներէն մին ով որ չնչին համարի ու քարոզէ , փոքր պիտի կոչուի Աստուծոյ արքայութեան մէջ եւ կը խոստանայ մեծ կոչել , ով որ ճշգրտեամբ կը քարոզէ ու կը կատարէ : Եւ յետոյ կը զրուցէ իրեններուն թէ , եթէ դուք չունենաք դպիրներէն ու Փարիսեցիներէն բարձր բարոյական առաւելութիւններ , պիտի չմտնէք երկնքի թագաւորութեան մէջ :

21. Յիսուս կը յիշէ «Սպանութիւն մի ըներ» պատուէրը (Եւրթ. 13 : Բ. Օր. Ե. 17) . այլ դիտելով թէ սխալ չմեկնուի այդ պատուէր , եւ ցոյց

*21 Լսեցիք, որ ըստեցաւ առաջիններուն, թէ «Մի սպաններ . որովհետեւ ով որ սպաննէ, պարտական պիտի ըլլայ գատաստանի» : *22 Այլ ես ձեզի կ'ըսեմ, ով որ իր եղբոր տարապարտ բարկանայ, պարտաւոր պիտի ըլլայ դատաստանի, ու ով որ ըսէ եղբորը յիմար, պարտաւոր պիտի ըլլայ ատեանի, ու ով որ ըսէ իւր եղբորը տիմար, դժտոխքի կրակին պարտաւոր պիտի ըլլայ : *23 Եթէ նուէրդ սեղանին վրայ բերես ու հոն յիշես թէ եղբայրդ քու վրայօք քէն ունի, 24 նուէրդ սեղանին առջեւ ձգէ . գնա, առաջ եղբորդ հետ հաշտուէ ու յետոյ գալով նուէրդ ըրէ : *25 Առաջուընէ ոստիւիդ հետ միաբանէ, երբ անոր հետ ճամ-

տալու համար Թէ այդ մեզքն արմատէն ինչպէս կտրելի է կտրել, կը յաւելու .

22. «Իսկ ես ձեզի կ'ըսեմ . ով որ իւր եղբոր տարապարտ սրդողի, պարտական պիտի ըլլայ դատաստանի» : Կային յայնժամ, որպէս Թաւմուտ կ'աւանդէ, ըստ Բ. Օրինաց (ԺՁ. 18), դատարաններ, քաղաքներու եւ աւաններու մէջ, քսան եւ հինգ անդամներէ բաղկացած, որոց երկուքը միշտ պիտի ըլլային քահանայ . ըստ Յովսէպոսի, եօթն անդամէ . ուր ըսպանուծեամբ կամ ուրիշ ծանր յանցանք տմբաստանուած Հրեայներ կը դատուէին, որք Յոյլտուածիւն ալ ունէին այս դատարանաց դէմ բողոքել Սանեդրիոնին :

Քրիստոս տարապարտ բարկացողին համար կը խօսի, վասնզի կայ արդար բարկուծիւն, որ է մեղաց եւ անիրաւուծեան դէմ, որպէս եւ ունեցաւ Քրիստոս իսկ (Մարկ. Գ. 5) եւ զոր Պօղոս եւս կը յիշէ (Եփես. Գ. 26) . Իսկ ուրիշին յիմար ըսողն արժան կը տեսնէ դատապարտուծեան ատենի այսինքն Սանեդրիոնին, իսկ ուրիշին տիմար ըսողն՝ գեհներ : Եբբայեցերէն անունն է Կէշ Հիմնաճ այսինքն ձոր Ենովմայ (Յես. ԺԵ. 8 : ԺԼ. 16) : Է սա նեղ հովիտ, ուր կռապաշտ Հրեայք երբեմն կը զոհէին Մողթայ (Բ. Մնաց. ԻԸ. 3 : ԼԳ. 6 : Երեմ. Է. 31 : ԺԹ. 2-6) : Հոն էր այս գարշելի կուռքին պղնձի պատկերը . զլուին էր որձու, արքունի Թագով պսակուած, բազուկները տարածուած, որպէս Թէ գրկելու համար զոհելի տղայները : Պատկերին մէջ կը վառուէր կրակ, մինչեւ բոլորովին կարմրէր կուռքը եւ յայնժամ Թշուառ մանկիկները կը նետուէին Մողթայ ատարաշէկ Թեւերուն վրայ ու կ'այրուէին : Յովսիա փշրեց սոյն կուռքը եւ պղծեց տեղը, եւ ալ այնուհետեւ հոն կը նետուէին Երուսաղեմի ազտեղուծիւններն ու դիակները, ուր միշտ կրակ կը վառուէր օդին մաքրուծեանը համար : Հրեայք Գեհեան անուանեցին սոյն ձորը եւ կ'ըմբռնէին յաւիտենական պատիժին բուն

քու մէջ եւս . գուցէ ոտխոյ մատնէ զքեզ դատաւորին , դատաւորն ալ դահիճի ու բանտը ձգուիս : 26 Ճշմարիտ կ'ըսեմ քեզի . պիտի չելլես անկէց , մինչեւ վճարես վերջին նաքարակիտը : *27 Լսեցիք , որ ըսուեցաւ . « Ծնութիւն մի՛ ըներ » : 28 Բայց եւս կ'ըսեմ ձեզի . թէ ով որ կնիկ մարդու նայի անոր ցանկանալու համար , իսկոյն անոր հետ չնութիւն ըրաւ իր սրտին մէջ : *29 Եթէ քու աջ աչքդ զքեզ կը գայթակղեցնէ , հանէ զայն ու քննէ նետէ , վասն զի քեզի աղէկ է որ քու անդամներէդ մէկը կորսուի ու չէ թէ բոլոր մարմինդ դժոխքը ձգուի : 30 Եւ եթէ քու աջ ձեռքդ զքեզ կը գայթակղեցնէ , կտրէ զայն ու նետէ քննէ , որով-

տեղը : Այս մտօք Յիսուս կը գործածէ սոյն բառը , զոր մերիններն դժոխք եւս կը Թարգմանեն (Մատթ. ԺԱ, 23. Դուկ. Ժ. 15) :

23. Տէր Յիսուս ջախջախելու համար այն վարդապետութիւնը Թէ մարդ Աստուծոյ ընծայ տանելով կրնայ ստանալ մեղաց Թողութիւն , առանց զըզջալու կամ Թողութիւն խնդրելու անորէ , որոյ սիրտն է կտորած , կը պատուիրէ նախ հաշտուիլ եւ յետոյ նուիրել : Կրօնական ռեւէ գործ կամ պաշտօն կրնան յետոյ կատարուիլ , զի Աստուած կենդանի է միշտ , այլ ընկերդ կրնայ մեռնիլ եւ յայնժամ պարտական կը մնաս :

25. Որովհետեւ ոտխ ունիս անիրաւութեանդ կամ մէկ մեղքիդ երեսէն , ուստի եթէ չմիտարանիս անոր հետ , չհաշտուիս , երբ դեռ ճանապարհի մէջ ես , աշխարհիս մէջ ես , յայնժամ կը մատնուիս Աստուածային արդարութեան , որոյ սուրն է կտրուկ եւ բանտն է խաւարչտին : Վերջին դրամը վճարելն է բամբլ պատուհասի բաժակին ամենայնտին մրուրը : Իսկ Ծորձորեցին կը մեկնէ . « Կենցաղօգուտ խրատ . . . այս է , զոր ինչ պահանջէ ի բէն (ոտխն) , տուր , զի զայս արարեալ՝ երկու մեծագոյն օգուտս շահեսցիս , մի՛ զի անձինդ տէր լիցիս եւ ի վիշտս ոչ անկանիցիս , եւ երկրորդ՝ զի ի բէն լինի ուղղութիւնն եւ ոչ ի նորա բռնութենէն » :

27. Յիսուս կը յիշէ . « Ծնութիւն մի ըներ » , պատուէրը (Ելք Ի. 14) . բայց կը յարէ Թէ յայրատ ցանկութեամբ կնիկ մարդու նայիլն անգամ՝ է շնութիւն : Սրտի պոռնկութիւնն ալ սեղբ է , եւ չունի տարբերութիւն գործնականէն , մինչդեռ այսպէս չէր Փարիսեցիական մեկնութիւնը :

29. Կը յորդորէ Յիսուս այն բանն որ կը հրապարէ ի մեզս , պատուականագոյնն ըլլայ իսկ , աչք ու ձեռք եւայլն , աւելի աղէկ է կտրել նետել , հրաժարիլ , քան Թէ հոգեով ու մարմնով կորստեան մատնուիլ դժոխքին մէջ , ոչ գեհենին մէջ որ Երուսաղեմի մօտ էր , ուր մարդկային դիակներ չէին ձգուիր :

հետեւ աղէկ է որ քու անդամներէդ մէկը կորսուի, ու չէ թէ բոլոր մարմինդ դժոխքը ձգուի: *31 Ըսուեցաւ անշուշտ թէ «Ով որ իր կինը արձկէ, թող անոր արձակման թուղթը տայ»: 32 Բայց ես կ'ըսեմ ձեզի. թէ ով որ իր կինը կ'արձկէ առանց պոռնկութեան պատճառի, ան՝ անոր շնութիւն ընկուն պատճառ կ'ըլլայ. ու ով որ արձկուածը առնու, կը շնայ: *33 Նորէն լսեցիք որ ըսուեցաւ առաջիններուն. «Սուտ երգում մի՛ ըներ, բայց Տեան վճարես քու երգումներդ»: *34 Այլ ես կ'ըսեմ ձեզի. ամենեւին երգում չընել. ո՛չ երկնքի վրայ, որովհետեւ Աստուծոյ ակօռն է, 35 ու ո՛չ երկրի վրայ, որովհետեւ անոր ոտքերուն դրած

31. Կին արձկելու հրամանը տուած էր Մովսէս (Բ.Օր. ԻԴ. 1), բայց ոչ իբր պատուէր, այլ Սոյլտուութիւն մըն էր այն անոնց խտտարտուածեանն համար, որպէս Յիսուս ուրիշ անգամ յայտարարեց (Մատթ. ԺԹ. 8: Մարկ. Ժ. 5): Պոռնկութեամբ կինը կ'եղծանէ ամուսնութեան սրբութիւնը, իսկ առանց պոռնկութեան կինն արձկելով մեղք կը գործուի, վասնզի կինն ստիպուած է ուրիշ մը զտնել ամուսնանալով ըստ օրինի եւ կամ արձակ համարձակ պոռնկելով: Իսկ ով որ այդ արձակուածը առնու, կը շնայ, զի արձակումը չէ օրինաւոր, եւ կինն է տակաւին իրաւամբ կին իւր առաջին էրկան: Ահա այսպէս Քրիստոս կը սրբէ ամուսնական անկողինը: Իսկ ի դէպս պոռնկութեան հմարկ է արձկել. — Ծործորեցին կը գրէ. «Իսկ Սէ լինիցի վկայութեամբ, արձակել արժան է, ընդէր. — նախ զի ինքն զինքն ի սիրոյ առն բաժանեաց եւ զործով հոմանիս իւր զուգեաց, վասն որոյ եւ բանիւ եւս բաժանել ի դէպ է. զի մի որդիքն շնութեան զհայրենիս հարազատ որդոցն ժաւանգեացն»: Եւ երկրորդ՝ զի մի նախանձեալ առն, վրէժս առնէ ի կնոջէն եւ ի սիղիսէն»: Որքան պիտի օրհնուէր աշխարհս, եթէ մարդիկ անասին Աւետարանի սոյն պատուէրին սուրբ պահելով իրենց սիրտն ո եւ է պղծութենէ: Տես եւ (Մատթ. ԺԹ. 3—13):

33. Կը պատուիրէ Յիսուս չերդնուլ բնաւ. Մովսէս պատուիրած էր երդնուլ, սակայն յետոյ կատարելով խտտումը (Ղեւտ. ԺԹ. 12). բայց Հրեայք ձեքեցին այս պատուէրը, ուստի երբ Աստուծոյ անունով չընէին երգում, կրնային զայն դրժել. եւ երբ երգում ընէին ո եւ է մէկ բանի, երկնքի, երկրի, Երուսաղեմի եւ ուրիշի անունով, եւ յետոյ դրժէին, չէին համարեր զայն ստերդմնութիւն: Յիսուս իսպառ կ'արգելու երգումը, բայց անզոյշ ու սովորական երդնուլը, վասնզի մարդ ի հարկին կրնայ երդնուլ ուրիշը համոզելու համար վկայ կոչելով զԱստուած, այլ այս եւս ի ծանրագոյն դէպս: Երգումը ձեւ մըն է ո եւ է մէկ խոս-

տեղն է , եւ ոչ Երուսաղեմի վրայ , որովհետեւ մեծ թագաւորին քաղաքն է . 36 եւ ոչ գլխուդ վրայ երդում ընես , որովհետեւ չես կրնար մագ մը ճերմակ կամ սեւ ընել : 37 Այլ ձեր խօսքը թող ըլլայ այոն՝ այո , եւ ոչն՝ ոչ , որովհետեւ ոչէ աւելին չարէն է : *38 Լսեցիք որ ըսուեցաւ . «Աչքի տեղ աչք ու ականայի տեղ ականայ» : 39 Բայց ես կ'ըսեմ ձեզի . չարին հակառակ չկենայ . այլ թէ որ մէկն աջ երեսիդ ապտակ դարնէ , անոր միւսն ալ դարձուր : 40 Եւ ով որ ուզէ ինչէ հեռ դատ վարել ու չապիկդ առնուլ , ձգէ անոր քու բաճկոնդ ալ : 41 Եւ ով որ քեզի տարապարտակ քչէ մէկ մզոն ճանքայի համար , երկուք գնա անոր հետ : *42 Քենէ ուզողին տուր . ու ով որ ուզէ քինէ փոխ առ-

տում կատարելու համար (Եբր. 2. 13. 17) :

34. Երկինքն է աժող Աստուծոյ եւ երկիրս պատուանդան , փասն զի անտի կ'սկսի իւր փառք , աստ կը տարածուի և անդ կը մնայ յաւիտեանս . Մարդիկ սովոր էին յայնժամ յաճարս , ինչպէս հիմայ եւս , երդուել ի զլուխ , այլ Յիսուս կը պատուիրէ այոն՝ այո եւ ոչն՝ ոչ գրուցել . փասնզի ճշմարտութենէն դուրս՝ ուրիշը համոզելու համար խօսքի ո եւ է ձեւ , խաբէական է , չարէն է , ուրեմն չար է :

38-41. Յիսուս վրէժխնդրութեան օրէնքը (Եւր. ԻԱ. 24. Բ.Օր.ԺԹ.21) իսպառ կը բարբբէ : Նա աչքի տեղ աչք , ականայի տեղ ականայ . այս օրինակ ծանրագոյն պատիժները կ'ամօքէ , փոսն զի մարդոյ անհնար է չգժել , ուստի լաւ եւս է , որ մարդ զրկանք կրէ քան զրկանք ընէ ուրիշի : Զոհողութեան ծայրայեղութիւնն է որ աստ կը յիշատակուի . Յովհաննէս քարոզեց Թէ ով որ երկու հագուստ ունենայ , մէկը չունեցողին տայ : այլ աստ Յիսուս մեկ հասն անգամ ուրիշին տալ կը պատուիրէ , ոչ Թէ կարօտին , այլ չարին , որպէսզի կայծակներ Թափէ , խղճի խայժեր տայ չարին , որով գուցէ նա զգաստութեան գայ . փասնզի հրատեն անձնական մեծագոյն զոհողութեան օրինակներ զգաստութեան չեն բերեր հր մեծագոյն չարն ու մեղաւորը Զարին չհակառակելով , արդարութեան գործն՝ Աստուծոյ Թողուլ է . ոհ . այս ո՛րպիսի խրատ բարբրար :

Հաւատալ է այս աստուածային վրէժխնդրութեան , որ ազան կամ սզան կը պատուհասէ չարը , կը դատապարտէ հոգեով և մարմնով կոռեան , որպէս Քրիստոս բացարձակապէս քարոզեց (Ղուկ. ԺԸ. 7—8) : րեմն այս պատուէրներն՝ արդարեւ ի փորձ են մեր առաքինութեանց եւ ի՞նչ գայնս ի հանգէս հանելու : (Տես և Յովհ. ԺԸ. 22—23) :

նույլ, երեսդ մի գործներ 43 Լսեցիք անշուշտ, որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու քու թշնամիդ ատես» : *44 Բայց ես կ'ըսեմ ձեզի. ձեր թշնամիները սիրեցէք, ձեզ անիծողները օրհնեցէք, եւ ձեզ ատողներուն բարի ըրէք ու անոնց վրայ աղօթք ըրէք, որոնք ձեզ կը չարչրկեն ու կը հաղածեն, 45 որպէս զի որդիներ ըլլաք ձեր Հօր որ երկինքն է, որովհետեւ ան արեւը կը ծագեցնէ չարերուն ու բարիներուն վրայ ու անձրեւ կը բերէ արգարներուն ու մեղաւորներուն վրայ, 46 Եւ եթէ սիրէք զանոնք, որոնք ձեզ կը սիրեն, ի՞նչ վարձք կ'ունենաք. չէ՞ որ մաքաւորներն ալ նոյնը կ'ընեն, *47 Եւ եթէ միայն ձեր բարեկամներուն բարեւ տաք, ի՞նչ աւելի կ'ընէք. չէ՞ որ մաք-

42. Յետոյ Յիսուս ողորմութեան, այսինքն փոխ ուզողին տալ կը յորդորէ, եւ հերքելով Հրէական այն դաւանութիւնը սիրել ընկերը ու ատել Թշնամին,

44. Կը շեշտէ սիրել եւ Թշնամին, օրհնել անիծողները, բարի ընել եւ աղօթել ատելիներու համար, օրինակ տալով զկատուած որ իւր բարիքը ամենուն — մեղաւորներուն եւ արգարներուն հաւասարապէս կը պարգեւէ միշտ ք տալով երկնքէն արեւ ու անձրեւ ամենուն առհասարակ, անխտիր։ Հրեայք կ'ատէին ուրիշ ազգերը եւ ընկեր ըսելով կ'իմանային իրենց ազգակիցը (Ղուկ. Ժ. 30-37)։ Յիսուս այս խտիրն անս կը բառնայ, բոլոր բոյրեզործներն Աստուծոյ որդիներ հռչակելով։

47. Մաքաւորներն էին հարկահաններ. որովհետեւ յայնժամ Հրեայք հպատակ էին Հռովմէական տէրութեան, զոր սաստիկ կ'ատէին, ուստի ու է Հրեայ որ այդ տէրութեան հարկահաւարութեան գործն ստանձնէր, կը համարուէր ամբարիշտ. ուրեմն մաքաւոր բառը կը նշանակէր չարագոյն մեղաւոր ։

48. Լեռան քարոզի վեհմագոյն մասն է այս։ Երբք մարդկային բերան մը տրտասանած չէ Յիսուսի այս վերջին խօսքը ։ Ոչ մէկ զարու մէջ, նախ քան զՔրիստոս, ոչ մէկ իմաստուն մարդկային կատարելութեան չափ հռչակած է աստուածային կատարելութիւնը, այսինքն ստիպել մարդուն նմանիլ Աստուծոյ, հասնիլ Աստուծոյ, այսինքն այնքան գեր ի վեր առաքինի ըլլալ մինչեւ Աստուածանման ըլլալ։ Առաջին մարդն Աստուած ըլլալ փափաքեցաւ, այլ կործանեցաւ, վասնզի չար խորհեցաւ. այս անգամ Աստուած կը Թողու որ մարդ Աստուած ըլլալու ոչ Թէ միայն փափագի, բարին խորհելով ու գործելով, այլ եւ կը խոստանայ տալ այդ փառքը այսինքն աստուածացնել մարդը հաւատովն ի Յիսուս Քրիստոս։ Բարո

սաւորներն ու մեղաւորներն նոյնը կ'ընեն : *48 Ուրեմն
դուք կատարեալ եղիք , ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն
ալ կատարեալ է :

ՔԼՈՒԹ Զ.

*1 Զգոյշ եղիք չընել ձեր ողորմութիւնը մարդիկնե-
րու առջեւ , որպէս թէ անոնց ցոյց տալու համար . գուցէ
վարձք չընդունիք ձեր Հօրմէն , որ երկինքն է : *2 Այլ երբ
ողորմութիւն ընես , քու առջեւ փող մի՛ զարներ , ինչպէս
կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու ու հրապարակ-
ներու մէջ , որպէս զի փառաւորութիւն մարդիկնեէնն . ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզի , անոնց վարձքն այն է : 3 Բայց դուն
երբ ողորմութիւն ընես , ձախ ձեռքդ թող չզիտնայ , թէ
քնչ կ'ընէ քու աջդ , 4 որպէս զի քո Հայրդ որ դադտուկ
կը տեսնէ , քեղի յայտնապէս փոխարէնը տայ : *5 Եւ երբ

յակոնի այսքան բարձրութիւնն էր , անհուն ու անսահման բարձրութիւն ,
որով , ոչ թէ միայն հրաշքի զօրութեամբ , խաչին զրօշն ամէն ուրեք յաղթա-
կան ծածանեցաւ ու չարն ու մահն իսպառ վտարեցան քրիստոնեայ աշ-
խարհէն :

1. Յիսուս կը խրատէ իւր աշակերտներն որ ողորմութեան ու արդա-
րութեան գործերը չկատարեն ի ցոյց մարդկան , այլ գաղտնի , որպէսզի
փոխարէնը յայտնապէս առնուն Աստուծմէ :

2. Կը յորդորէ կեղծաւորներուն պէս ողորմութիւն չընել մեծաղորդ
համբու հանելով ժողովրդեան մէջ , զի այն է անոնց վարձքը : Ողորմու-
թեան գործն , որպէս ո եւ է բարեգործութիւն , այնքան գաղտնի ըլլալու
է , մինչ զի ձախը զիտնալու չէ թէ աշն քնչ կ'ընէ :

5. Աղօթելու ձեւն ալ Յիսուս կուտայ այսպէս . գաղտուկ աղօթել զոց
սենեկի մէջ այսինքն ամիտի մտօք . եւ կարճ աղօթել եւ չնմանիլ հեծանոս-
ներուն որք կը կարծեն թէ , եթէ շատ ուզեն , այնքան շահաւոր է իրենց ,
մինչդեռ Աստուած , դեռ իրմէ չխնդրուած , զիտէ թէ քնչ պէտք է տալ :

9. Եւ որպէս զի իւր աշակերտներն ունենան աղօթքի օրինակ , բոլո-
րովին տարբեր կեղծաւորներու երկարագոյն եւ հեծանոսներու բազմապս-
հանչ աղօթքէն , կ'աւանդէ Տէրունական աղօթքը , համառօտ , խորիմաստ

աղօթքի կենսա, կեղծաւորներուն պէս չըլլաւ, որ կը սիրեն ժողովարաններու ու հրապարակներու անկիւններուն մէջ աղօթքի կենալ, որպէս զի մարդիկներուն երեւնան. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. անոնց վարձքն այն է: ՅՔայց դուն երբ աղօթքի կենսա, քու սենեակը մտիբ, ու քու դռները գոցէ, եւ աղօթքի կեցիր Հօրդ գաղտուկէն, ու քու Հայրդ որ գաղտուկ կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում ընէ: Եւ երբ աղօթքի կենաք, հեթանոսներուն պէս շատախօս չըլլաք, որ կը կարծեն թէ իրենց շատ խօսելէն կը լսուին. Տուրեմն անոնց մի նմա-

եւ արդարամիտ աղօթքը, որոյ բովանդակութիւնն է եօթն խնդրուածք. որոց երեքն Աստուծոյ կը վերաբերին ու չորսը մեզ:

Հայր է Աստուած, վասն զի Նա ստեղծեց զմեզ, ստեղծեց ի պատկեր իւր. հայր է Նա, զի Քրիստոսով որդեգիր եմք Նա. ի հնումն Աստուած էր եւ Աստուած կը կոչուէր Իսրայելի մէջ, իսկ այժմ է Հայր եւ հաճեցաւ Հայր կոչուիլ մեզ՝ ըստ շնորհացն Քրիստոսի:

Նո է հայր մեր. այս մեր բառ մասնաւոր եւս ունի նշանակութիւն. հաւատացելոց բազմութիւնն՝ այն է քրիստոնէայ եկեղեցին կ'ակնարկէ, որոյ միաբան աղօթքն ա Հայր մեր ա կոչումովն առ Աստուած, կը շեշտուի մեր համարձակութիւնն առ Աստուած, հաւատով ի Քրիստոս՝ որոյ նշանաբան իսկ եմք, ինչպէս Նա սիրեց անուանել այսպէս. Թէ ճիշտք եղբարք իմ էք:

Նա՛՛ այսինքն Աստուած յերկինս է, եւ ոչ Թէ երկրիս մէջ կամ երկրէս է, ինչպէս էին հեթանոսաց աստուածներէն շատերը կամ ցորդոն իսկ. Նա մենէ վեր է եւ չէ մեզ հաւասար եւ մեզ նման երկրակենցաղ: Էութեամբն Թէեւ անպարագրելի եւ ամէն ուրեք, այլ սակայն Նա ունի երկնային օճեւան, ու իւր անճառելի փառօք կ'երեւի հրեշտակաց ու սրբոց:

Աստուած սուրբ է, եւ սուրբ է անուն Նորա, եւ մեր փառաբան այս աղօթից մէջ որ Նորա անուն սուրբ ըլլայ, ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր անձին սրբութեամբ՝ ըստ որում կը հաւատամք իրեն, ցոյց տալ Նորա անուան սրբութիւնն հեթանոսաց, որոց Աստուածք պիղծ էին, եւ զարշիլի, որոց (հեթանոսաց) եւ կենցաղն էր անսուրբ եւ պիղծ, նման իրենց պաշտած աստուածոց: Պաշտան քրիստոնէին առ Աստուած՝ սրբութիւնն է անձին, ըստ որում իւր արարիչն ու հայր Աստուած՝ է սուրբ:

10. Այն, քրիստոնէին փառաբան ու իղձն է սպասել Աստուծոյ Թագաւորութեան, զի այդ Թագաւորութեան շնորհիւ կարելի է միայն զերծ մնալ աշխարհիս այլ եւ այլ փորձութիւններէ, որոց անհնար է դիմադրել առանց հաւատոյ ի Քրիստոս: Այս խնդրուած կարելի չէ մատուցանել, եթէ որ-

նիք, վասնդի դուք դեռ չիմնդրած՝ ձեր Հայրը գիտէ թէ ինչ պէտք է ձեզի: *9 Եւ ուրեմն այսպէս աղօթքի կեցէք. ով մեր Հայր, որ երկինքն էս, քու անունդ սուրբ ըլլայ: *10 Քու արքայութիւնդ թող գայ, քու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկինքի մէջ, աշխարհիս վրայ ալ: *11 Մեր ամէն օրուան հացը մեզի այսօր տուր: *12 Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեզի պարտականներուն: *13 Եւ զմեզ մի տանիր փորձութեան, այլ զմեզ ազատէ չարէն: որովհետեւ միշտ քու կողմն արքայութիւն ու զօրութիւն ու փառք. ամէն:

նուիրած չլինի իւր անձն Աստուծոյ: Զի արքայութիւնն Աստուծոյ ի մեզ է յայնժամ, յորժամ հաւատք կենդանի են ի մեզ, հաւատք ի Քրիստոս Յիսուս:

Քրիստոնեայն զայս խոստովանելով կը յայտնէ իւր հնազանդութեան չափն առ Աստուած: Մտադր իբր արարած գիտնալու է միշտ իւր տկարութիւն բաղդատմամբ իւր Արարչին անեղ զօրութեան, ուստի եւ պատրաստ ցոյց տալու է ինքզինքն ամէն ատեն կատարելու համար նորա կամքը, որ չէ զժուարին եւ անտանելի, ե՞՞՞՞ սէրն ի մեզ առ Աստուած՝ անսահման է: Աստուծոյ այս կամքը միշտ կը կատարուի երկնից մէջ, եւ կը բաղձամբ որ երկրիս վրայ եւս կատարուի, որպէս զի փոխանակ ատելութեանց եւ զժտութեանց եւ մանաւանդ մեղաց, սէրն ու բարութիւն եւ սրբութիւն եւեթ տիրեն ամէն ուրեք եւ ամէն ատեն:

11. Ե՞՞՞՞ միայն հոգեւոր էակներ լինէինք նման հրեշտակաց, մեր սարուտին համար այս աղաչանքին պէտք չկար. այլ որովհետեւ եմք եւ մարմնաւոր, ուստի եւ կարօտ պարենի, մանաւանդ հացի, հետեւաբար յիշելով իւր խնամածութիւնն առ ի պէտս մեր կենաց, կը հայցեմք զայն տալ մեզ ԶՍՓՈՎ, այսինքն հանապազոտ, ամէն օրուան միայն մեր պէտքը, եւ ամենակատեւորը, եւ ոչ թէ հեծանոսաց փոփոքածին նման այլ եւ այլ եւ աւելորդ պէտքեր, զոր օրինակ անբաւ հարստութիւն եւ մեքեր պաշտօնաց:

12. Այսպէս կը խոստովանիմք թէ մեզուոր եմք: Այս խոստովանութիւնն արդարեւ հարկաւոր է, վասն զի անհնար է մարդոյ կարծել թէ ինքն է սուրբ որպէս եւ Աստուած: Նոյնպէս, այսպէս կարծելն է յաւակնութիւն եւ սպաստամբութիւն Աստուծոյ դէմ: Նաեւ ներելն մեր պարտապաններուն, փաստ մը կարծելու չէ, որ Աստուած եւս մեզ ներէ, այլ թէ մեք ինչ չափով որ ներեմք ուրիշներուն, հաւատալու եմք թէ Աստուած եւս նոյն չափով կը ներէ մեզ: Ուրեմն վա՛յ նոցա որք ունին աններող ոգի:

*14 Որովհետև թէ որ ներէք մարդիկներուն անոնց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի պիտի ներէ: 15 Բայց թէ որ չը ներէք մարդիկներուն անոնց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի ներէ ձեր յանցանքները:

*16 Եւ երբ ծոմ պահէք, կեղծաւորներուն պէս տրտում մի՛ ըլլաք, որոնք իրենց երեսները կ'ապականեն, որ մարդիկներուն երեսնան թէ ծոմ կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. այն է անոնց վարձքը: 17 Բայց դուն երբ ծոմ պահես, քու գլուխը օծէ ու քու երեսը լուա, 18 որ մարդիկներուն չերեւնաս ծոմ պահողի պէս, այլ դադատուկ

այդպիսիք ի՛նչպէս ուրեմն կը համարձակին արտասանել սոյն աղօթքն, ո՛րպիսի անամօռութեամբ: Մտրդ եմէ չներէ ուրիշին, ինչպէս կը կարծէ Թէ Աստուած իրեն կը ներէ, մինչ իւր մեղքերէն մեծն է աններող ոգին:

13. Այս շնչանակեր Թէ Աստուած զմարդիկ կը մատնէ փորձութեանց եւ կամ մեղաց, ոչ այսպէս (Յակ. Ա. 13): Այլ որովհետեւ մարդս դիւրամէտ է ի մեղս եւ փորձութիւնք անպակաս են աշխարհիս մէջ, ուստի կ'աղօթէ, այսինքն ճանչնալով իւր տկարութիւնն՝ պարտական կ'զգայ աղօթելու, որպէս զի Աստուծոյ նախախնամական կամօքն ազատ մնայ փորձութենէ եւ զերծ չարին վտանգներէն: Տէր Յիսուս ուրիշ անգամներ եւս կրկնած է եւ պատուիրած իւր աշակերտաց եւ ունկնդիր ժողովրդեան որ միշտ աղօթեն, որպէս զի ոչ միայն փորձութեանց եւ մեղաց մատնուելէ զերծ մնան, այլ եւ հանապազ արժանաւորին շնորհացն ու պարգեւացն Աստուծոյ:

Մարդիկ որ միշտ կը փափաքին ունենալ անդորր եւ երջանկաւէտ կեանք մը, լինել զօրաւոր եւ փառաւոր մարմնով ու հոգեով, այլ սակայն գիտնալու են եւ դաւանելու Թէ այդ վիճակին ամբողջապէս տէրն ու վայելողն է միայն Աստուած: Մարդոց ունեցածն ու ընդունածն ոչ ամբողջական է եւ ոչ տեւական եւ Թէ զոր ունին եւ կամ պիտի ունենան, շնորհք եւեմ է ըստ գծութեան եւ ըստ արդարութեանն Աստուծոյ:

14. Որովհետեւ կարելի չէ չգծել եւ մարդն է դիւրամէտ ի մեղս, ուստի մարդ իւր մեղքին ժողութիւնն Աստուծով ստանալու համար, պէտք է որ ներող ըլլայ ուրիշին մեղաց: Այս է քառաքեան վարդապետութիւնը, զոր Քրիստոս այս անգամ վերստին կը շեշտէ:

16. Յիսուս նորէն կը յորդորէ կրօնի ունէ ծէսերու ու արարողութեանց մէջ չգործածել ունէ սնախառ ձեւեր, կեղծաւորներու նման ցոյց չտալ Թէ ծոմ կը պահեն: Հրեայք ունէին ծոմապահութեան օրեր, քառութեան տօնին համար (Լեւտ. ԺԶ. 29): Նաեւ ուրիշ չորս ծոմեր, տաճարի շինու-

քու Հօրդ . ու քու Հայրը որ կը տեսնէ գաղտուկէն , քեզի պիտի յայտնապէս հատուցանէ :

*19 Ձեզի գանձեր մի դիզէք երկրիս մէջ , ուր ցեցն ու ժանկը կ'ապականին , եւ ուր գողերը ական կը բանան ու կը գողնան : 20 Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկնքի մէջ , ուր ոչ ցեցն ու ժանկ կ'ապականին , ուր ոչ գողեր ական կը բանան ու կը գողնան : 21 Որովհետեւ ուր ձեր գանձերը կան , հոն պիտի ըլլան ձեր սիրտերն ալ :

*22 Մարմինին ճրագն աչքն է : Թէ որ քու աչքդ առողջ է , բոլոր մարմինդ լուսաւոր պիտի ըլլայ : 23 Բայց

Սեան համար հինգերորդ , Երուսաղեմի առաջին յարձակման համար տասներորդ , որոյ եւ առմանն համար չորրորդ եւ Գողղիայի մահուան համար եօթներորդ ամիսներուն մէջ (Ձաք. Ը. 19) : Նսեւ Փարիսեցիք շարժու մէջ երկու օր ծով ունէին , հինգշաբթի՝ Մովսիս Սինա ելնելուն եւ երկուշաբթի՝ իննելուն ի յիշատակ : Ջրով երես լուանալ ու իւղով զլուխ օծելն՝ էին նշանակ զուարթութեան : Քրիստոնէութիւնը չխորշեցաւ հինէն առնուլ օգտակար ծէսեր , որպէս է ծովը , որոյ կցեցաւ պահըը այսինքն բանջարեղէն ուտել իբր ծարաւ ու անօթի արդարութեան եւ միանգամայն ճնշեղ մարմինն առ սէր հոգեւորին : Ոսկեբերան կը յաւելու . « Զի եթէ կեզաւորութեանն ղեկնութիւն զգոյն երեսացն եղծանիցէ , ղինչ պատասխանի կարիցեն տալ , որք սնգուրովն ու ծարրովն զգոյն երեսացն տպականն կանայք , ի կորուստ յայրատ երիտասարդաց , որք ինքեանք անձանց եւ եթ մեղանչեն , եւ կանայք եւ անձանց եւ տեսողաց » : Այս եւս կիներու ազգու խրատ մը չէ :

19. Մարդկային սիրտն է գանձարան , վասն զի հոն կայ աստուածապարգեւ միակ մէկ գանձ , հոգին , որ կը սեւեռի յերկին , Աստուծոյ հետ կը կապուի , եթէ հոգեզուարթ զործեր , այսինքն նա մանաւանդ ոչորմութիւն ու սէր , յաճութիւն մենէ : Մարդ թող ունենայ գանձեր , հարստութիւն ու ճոխութիւն , այլ միայն թէ այդ գանձերուն բեւեռելու չէ իւր սիրտը , որպէս զի օր մը փորձութիւնը , մանաւանդ մահը , որ զող ու ցեց է , երբ գայ , չյափշտակէ բուն գանձը , հոգին :

22. Եթէ աչքն առողջ է , բոլոր մարմինը լուսաւոր է . բայց եթէ չէ , թէեւ լուսոյ մէջ ըլլայ մարդ , ինչ օգուտ . արդարութեան Արեւուն ճառագայթները որբան եւ զմարդ լուսաւորեն , այլ բարոյական կուրութիւնն է չարագոյն կուրութիւն , վասն զի « Խորհուրդ մարմնոյ՝ մահ է » (Հռովմ. Ը. 6) : Ով որ չարութեան մէջ է , խաւարի մէջ է : Եւ ով որ մութի մէջ է , հոգևով ու մարմնով կորսուելու վտանգին մէջ է :

եթէ քու աչքդ դէչ է, բոլոր մարմինդ մթին պիտի ըլլայ: Ուրեմն թէ որ քու մէջ եղած լոյսը մթին է, ալ այն մութն ո՛րչափ է: *24 Մարդ չկրնար երկու տէրերու ծառայել, կամ մէկը պիտի ատէ ու միւսը սիրէ, կամ մէկը պիտի պատուէ ու միւսը արհամարհէ. չէք կրնար Աստուծոյ ու մամոնայի ծառայել: *25 Ատոր համար կ'ըսեմ ձեզի. ձեր ոգիներուն համար հոգ մի ընէք թէ ի՞նչ պիտի ուտէք կամ ի՞նչ պիտի խմէք, ու ոչ ձեր մարմիններուն համար, թէ ի՞նչ պիտի հագնիք. չէ՞ որ ոգին կերակուրէն աւելի է ու մարմինն ալ հազուստէ: *26 Նայեցէք երկնքի

24. Անհնարին է որ մարդ հաւասար սէր ունենայ երկուքի: Ով որ Աստուծոյ կը ծառայէ, ուրիշի մը ծառայելու չէ, որ մենէ կ'ուզէ նոյն ծառայութիւնը: Մամոնայի, որ Քաղղէարէն բառ է եւ կը նշանակէ հարըստութիւն, մարդ հպատակելու չէ երբէք: Աստուծոյ ծառայութիւնն է յոյժ նախանձար, քան թէ ուրիշներունը, մանաւանդ որ դարովիին է, մամոնայինը: Ոսկերբեան գեղեցիկ կը մեկնէ. « Աբրահամ կամ Յոր զի արդարացան. — եւ դու զվեծատունն ինչ աղարարիցես, այլ զծառայեցեալն ընչիցն. սպա թէ ոչ եւ Յոր մեծատուն էր, եւ չծառայեաց մամոնայի, այլ ունէր բազում ինչս եւ տիրէր. տէր ընչիցն էր, եւ ծառայ Աստուծոյ, եւ իբրեւ զայլոյ մատակարար կայր ի վերայ ընչիցն եւ ոչ միայն զայլոցն չյախշտակէր, այլ եւ զիւրն եւս այլոց կարօտելոց բաշխէր. եւ եւս մեծանայր, զի չէր ինչ ուրախ ընդ անցաւորսս: Քանզի եւ ասէր իսկ, եթէ « Ուրախ ինչ եղէ երբէք ընդ մեծութիւնն, որ եկն ինձ »: Նսեւ յայնժամ չտրտմեցաւ, յորժամ բարձաւ ի նմանէ մեծութիւնն: Այլ ոչ այնպիսիք ոք իցեն արդի մեծատունքս »:

25. Քրիստոս որ մեղքը արմատէն խլելու ու նետելու համար մեղք գործելու խոտհուշդն անգամ գոթժնական մեղքին հաւասար մեղք նշանակեց, այս անգամ ապրուստի ու հոգուստի համար հոգ ընելն ընդդէմ կը նշանակէ Աստուածային նախախնամութեան, զոր գեղեցիկ կը մեկնէ Ծործորեցին. « Ոչ ի մշակութենէ գործոց հրաժարեցուցանէ, այլ զհոգն յանձանց մերժէ, զի որ զկարիք բնութեանն արար, նսեւ զպակասութիւնն լնու. . . զի բո հրգալովդ առանց վերին խնամոցն՝ զի՞նչ կարիցես առնել »: Նոյնպէս Ոսկերբեան կը զրէ. « Զի որ մեծն ինչ ատ, զիտորն զիւրոյ ոչ տայցէ. որ զկերակրելի մարմինն ստեղծ, զիւրոյ իցէ, զի զկերակուրան ոչ շնորհիցէ »: Աստուած մեզ առաւելն է տուած, հոգին ու մարմինը, ուրեմն չէ յիմարութիւն նուազագունին համար հոգալը: « Ոգի առաւել է քան զմարմին » . ի՞նչ գեղեցիկ խօսք. եթէ մեր ոգին լուսաւոր չըլլայ, ո՞չ ա-

Թռչուններուն, որոնք չեն ցաներ ու չեն քաղեր, ու չեն ժողովեր ամբարներու մէջ, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: 25^o որ դուք անոնցմէ աւելի էք: *27 Բայց հիմա ո՞վ ձենէ ինքզինքը հոգալուն համար կրնայ իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել: 28 Եւ հագուստի համար ի՞նչու հոգ կ'ընէք. նայեցէք շուշանին, ի՞նչպէս կը մեծնայ, չ'աշխատիր ու չ'սիրութեր: 29 Կ'ըսեմ ձեզի. որ Սողոմոն ալ իր բոլոր փառքերովը անոնցմէ մէկուն պէս չ'հագուեցաւ: 30 Բայց թէ որ գետնի խոտն այսօր կայ ու վաղը փուռը պիտի ձգուի, Աստուած այնպէս կը

պաքէն կը վտանգի մեր մարմինը, եւ վտանգուած մարմնայ մը, հիւանդ կամ վէրբոտ, ինչ օգուտ ունի հագուստը: Ո՞ր ցաւագար մարդուն նշանակութիւն ունին հարստութիւն ու փառք, կամ ո եւ է վայելք:

26. Մեր ապրուստին համար Թռչունները եւ հագուստին համար շուշանները, եւ նոյն իսկ Սողոմոնը, որ Թագաւորներու երջանիկը կարծուեցաւ, ցոյց տալէ յետոյ, որպէս զի ալ աւելի շեշտէ իւր այս վարդապետութիւնը, կը յաւելու Յիսուս.

27. « Զենէ ո՞վ իր հոգ ընելովը կրնայ իւր հասակին վրայ կանգուն մը աւելցնել »: Ուրեմն տարապարտ է հոգածութիւնն այն բաներուն համար, որք կամ աւելորդ են մեզ եւ կամ անհնար:

31. Ուտելու, խմելու ու հագնելու համար հոգ չ'ընել վերստին կը յորդորէ, նախ՝ չ'ամանելու համար հեծանոսներուն, որոց մտածութիւնն ու փոյժ այդպիսի բաներու համար են միշտ, երկրորդ՝ Թէ Աստուած զիտէ մեր իւրաբանչիւրին ո եւ է պէտքը: Հոգին կերակրել կենաց հացով ու մարմինը կազդուրել անմահութեան բաժակով, հագուել ու զարգարուիլ Աստուծոյ շնորհօք, այս է իմաստ տոյն վարդապետութեանն Յիսուսի, որ անմիջապէս կը յարէ.

33. « Բայց նախ Աստուծոյ Թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը խնդրեցէք, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի »: Յորժամ մարդ ինքզինքը կը դնէ Աստուծոյ Թագաւորութեան մէջ ու անոր արդարութիւնը կ'ունենայ, այսինքն բարի գործեր, յայնժամ ապրուստ ու հագուստ եւ ամէն վայելք լիազոյնս կ'ունենայ, վասն զի Աստուած երբէք խոտան չ'համարիր մեր բոլոր հաճոյքն ու վայելք, հարստութիւնն ու ճոխութիւն, եթէ անմեղութեամբ են:

34. Հոգն անպակաս է, ամէն օրուանը կայ. իսկ « Վաղուան օրն իւր համար Թող հոգայ », խօսքի ձեւ է, այսինքն վաղուան ձգելու է վաղուանը: Ուրեմն որքան որ հոգ ընէ մարդ վաղուան համար հոգ պիտի կ'ըլլայ

հազուեցնէ , որչափ աւելի զձեզ , թերահաւատներ : *31 Այսուհետեւ հոգ մի ընէք ու ըսէք , թէ ի՞նչ պիտի ուտենք , կամ ի՞նչ պիտի խմենք կամ հագնինք , 32 որովհետեւ այդ ամէնը հեթանոսները կը խնդրեն , վասնզի ձեր երկնաւոր Հայրը գիտէ , թէ այդ ամէնը ձեզի պէտք է : *33 Առաջ Աստուծոյ թագաւորութիւնը ու անոր արդարութիւնը խնդրեցէք , ու այդ ամէնը ձեզի պիտի աւելնայ : *34 Այսուհետեւ հոգ մի՛ ընէք վաղուան համար , որովհետեւ վաղուանը թող իր համար հոգ ընէ . օրուանը հերիք է իւր չարը :

Ք Լ Ա Ի Ե Է .

*1 Մի դատէք , որ չդատուիք . *2 որովհետեւ ինչ դատաստանով դատէք , պիտի դատուիք , ու ինչ չափով որ չափէք , պիտի չափուի ձեզի : 3 ի՞նչու կը տեսնես քու

այսօրուանին վրայ . եւ այս է բեռ բեռի վրայ դիզել ու ընկնիլ : Ոսկերբւան գեղեցիկ կը մեկնէ . « Այն իսկ չիցէ շատ բեզ , զի ի բիրտն երեսաց քոց հրամայեցար ուտել զհաց քո . եւ այլ եւս տառապանս ի վերայ տառապանանցն ի հոգոց յաւելուցուս բեզ . առեր զօրն , զի նմա եւ եթ հոգայցես , եւ արդ ընդէր եւ զմիւսոյ աւուրն զվիշտն նմա յաւելուցուս . չիցեն նմա շատ իւրոց հոգոցն բեռինք , ընդէր այլ եւս մեծ բեռինս դնիցես ի վերայ » : Ծործորեցին եւս կը գրէ . « Զի թէ այսօր վասն վաղուին հոգաս եւ վաղիւն վասն միւսոյ աւուրն՝ այս յանհունս տանչանս զբեզ մատնէ » : Հոգ ընելէն . մանաւանդ տարապայման հոգ ընելէն յաճախ մարդ կ'ենթարկուի յուսահատութեան , որմէ աւելի կարելի է կարծել թէ կամ ծանրագոյն մեղք :

1. Ոչ թէ Տէր Յիսուս իշխանութիւնն ու դատաւորութիւնը չճանչեր , այլ կը ճանչէ պաշտօնականը (Յովհ. Ե. 24) : Դատելը , մանաւանդ յանիրաւի , է ունենալ անգում ու խիստ ոգի : Եւ այս ոգին է միշտ գատապարտելի մանաւանդ Աստուծմէ : Ոչ թէ միայն վայրապար գատաստանն է մեղադրելի , այլեւ ուսանց իրաւախոհութեան դատաստանի դիմելն է անվայել բրիտանէութեան , որպէս կը գրէ Պօղոս (Ա. Կորնթ. Զ. 1-8) :

2. Անկեղծ սէրը չթոյլատրեր որ մարդ ուրիշը դատէ . ո՞վ չունի իւր աչքին մէջ շիւղ , եւ ինչհաւ ուրիշին աչքին մէջ գերան տեսնէ : Ո՞վ է այն

եղբոր աչքի մէջի շիւղը , ու քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ . 4 կամ ինչպէս կ'ըսես քու եղբոր , թող տուր , հանեմ քու աչքիդ այդ շիւղը , ու ահա քու աչքի մէջ գերան կայ : 5 Կեղծաւոր , հանէ՛ առաջ քու աչքէդ այդ գերանը ու յետոյ նայէ հանել քու եղբոր աչքէն այն շիւղը : 6 Եռուներուն մի՛ տաք սրբութիւնը , ու ձեր մարգարիտը խողբերուն առջև մի՛ ձգէք , որպէս զի իրենց ոտներուն տակ չկոխկռտնն զանոնք ու դառնան , զձեզ երգիծանեն : 7 Ուզեցէք ու ձեզի պիտի տրուի . փնտռեցէք ու պիտի գտնէք , զարկէք ու պիտի բացուի ձեզի : 8 Որովհետեւ ով որ ուզէ , կ'առնու . ու ով որ կը փնտռէ , կը գտնէ . ու ով որ կը զարնէ , պիտի բացուի անոր : 9 Ձենէ ո՞ր մարդն է , որմէն իր որդին հայ ուզէ , միթէ քա՞ր պիտի տայ անոր . 10 ու կամ ձուկ ու՛զէ , միթէ օ՞ճ պիտի տայ

մարդ որ չունենայ Թերութիւն , եւ ուրիշին Թերութիւնը խժժելով դատափետէ զնա չարաչար : Ուրեմն նոյն իսկ չարաոյն է այն դատաւոր , որ մեղօք զոր ունի , կը դատէ ուրիշը որ իրեն չափ , կամ զուցէ իրմէ պակաս , մեղք ունի , եւ առաւել վա՛յ , յորժամ անմեղը կը դատէ :

6 . Զտալ սրբութիւնը պիղծ ու չար մարդերու , այսինքն խոզաբարոյ եւ շնատիրտ անձերու , որք կը ծեքեն ճշմարտութիւնը սիրելով զգայակաւնը միայն : Այնպիսինբու՛ որոց որովայնն է Աստուած իւրեանց եւ փառք ամօԹն իւրեանց , Աւետարանի մարգարիտը չտալն է բարի : Այս է քարոզութիւնն , որ է Թօթափելով ոտներու փոշիները մեկնել այսպիսիններէ (Մատթ. Ժ. 14-16) :

7 . Յետոյ Յիսուս կը բանայ երկնքի սոյրմուծեան դռները , յայտարարելով թէ անհնար է որ մարդ Աստուծոյ այոյչէ ու խնդրէ ու չլտուի , օրինակ բերելով թէ ձենէ ով իւր զուկին՝ հացին տեղ քար ու ձուկին տեղ օձ կուտայ : Եւ ի՛նչ ճշմարիտ վարդապետութիւն , մարդիկ որ չար են , այսինքն չեն Աստուծոյ պէս բարի , իրենց զուակներուն համար երբ բարի կ'ուզեն . կարելի է կարծել թէ Աստուած որ ամենեւին բարի է , չար ուզէ իւր արարածներուն , մանաւանդ մարդիկներուն համար , որք իրմէն բարի բան կ'ուզեն (Ղուկ. ԺԱ. 13) , սակայն մարդ խնդրելու է Աստուծոյ կամացն համեմատ (Ա. Յովհ. Ե. 11) , եւ Թոխտոնձելով (Յովհ. ԺԴ. 13 : ԺԶ. 23-25) , եւ ամենեւին չարաչար չխնդրելով (Յակ. Դ. 3) :

12 . Այս է ոսկեղէն կանոն . մարդկային բովանդակ բարոյական կենցաղն է յայսմ հաստատուած : Երբէք կարելի չէ այս կանոնէն դուրս գտնել ու եւ է բարոյական կեանք : Արդարութեամբ ապրիլն այս կանոնօն է եւ

անոր : 11 Ուրեմն դուք որ չարեր էք , գիտէք ազէկ պարգեւներ տալ ձեր զաւակներուն , որչափ աւելի ձեր Հայրը , որ երկիրն է , բարիքներ պիտի տայ անոնց , որոնք զայնս կը խնդրեն :

*12 Ամէն բան զոր կ'ուզէք , որ մարդիկները ձեզի ընեն , անանկ ալ դուք անոնց ըրէք . որովհետեւ օրէնքն ու մարգարէներն այս է :

*13 Նեղ դռնէն մտէք . որովհետեւ լայն է դուռը ու արձակ ճանապարհն որ կորստեան կը տանի , ու շատեր կան որ անկէ կը մտնեն . 14 որովհետեւ նեղկուկ է դուռը ու նեղ ճանապարհը որ դէպ ի կեանք կը տանի , ու քեչեր կան , որ զայն կը գտնեն :

*15 Զգուշացիք սուտ մարգարէներէն , որոնք ոչխարներու հագուստով ձեզի կուղան , ու ներսէն յափշտակող

եթ , ինքզինքի ինչ որ կ'ուզես , զայն ընել ուրիշին , այս է օրէնք ու բոլոր մարգարէութեանց պատուէրներուն բովանդակութիւնը :

13. Նեղ դռնէն մտնելն է առաքինութեամբ վշտակիլ կամ նեղուիլ , վասն զի բարեգործութեանց մէջ որքան մարդ կրէ ցաւեր , այնքան դիւրին կը գտնէ ճանապարհն որ ի կեանս կը տանի : Աւագ , այսպիսիներն են շատ քիչ :

15. Ծործորեցին կը գրէ . « Նոյս ընդ շունս եւ ընդ խոզս ոչ ասաց հարդիլ . իսկ այժմ այլ իմն զաւողաց նշանակ տայ չնոր քան զառաջինն , զի նորս յայտնիք էին եւ սորս ի ծածուկ : Ի նոցանէ հեռանալ հրամայեաց , եւ զսաս մեծաւ զգուշութեամբ բնեւ : Բայց հոյք են որ զսուտ մարգարէս կոչէ , զի զհերձուածողացն ոչ տտէ , զի ի հերձուածողսն բազում անգամ գտանին վարք պարկեշտք , իսկ առ սոսս ոչ բնաւ , որպէս ասէ Թէ ի գործոյ նոցա ծանիջիք զնոսս : Ինձ Թուի զսուտ առաքեալսն ասէ , զորս Պօղոս մշակ նենգաւոր կոչէ , զի որպէս մշակք նենգաւրք տանուտէրսնց զայգիսն սպականն , այսպէս եւ սորս օրհնեօք կիրպարանաւրք՝ զհօտսն փողտեն » : Բարէ , զի ժամանակ քրիստոնէական սուրբ կրօնը չունեցաւ անմեղութեան այսինքն ողորմածութեան , ազօմասիրութեան , խստամբերութեան ու այլեւայլ առաքինական զարդերով իբր պանծուցուած պաշտօնեայներ , որք Թէեւ արտաքուստ գառներ էին , ձեւացած , այլ իսկապէս , էին գայլեր :

16. Յիսուս կը յորդորէ պտուղէն ճանչել , այսինքն ամէն մարդ իւր գործէն ճանչել . բայց այս մի՞թէ կարելի է ամէն տտեն . միայն Թէ բան մը կայ , եւ է ճշմարիտ , այսինքն երբ մենք անկարող ըլլանք ճանչելու , Աստ-

գայլեր են : *16 Անոնց պտուղէն . ճանչցէք զանոնք . միթէ փուշերէ իազող կը քաղուի՞ կամ տատասկէ թուզ : 17 Այսպէս ամէն աղէկ ծառ աղէկ պտուղ կը բերէ . 18 չըկրնար աղէկ ծառը գէշ պտուղ բերել ու գէշ ծառն աղէկ պտուղ բերել : 19 Ամէն ծառ որ աղէկ պտուղ չբերեր , կը կտրուի ու կրակը կը ձգուի : 20 Ուրեմն անոնց պտուղէն զանոնք ճանչցէք :

*21 Ոչ թէ ով որ ինծի տէր , տէր ըսէ , պիտի մտնէ երկնքի արքայութեան մէջ . հապա ով որ կը կատարէ իմ Հօրս կամքը , որ երկինքն է :

22 Շատերը պիտի ըսին ինծի այն օրը . «Ով տէր , տէ՛ր , չէ՞ քու անունով մարգարէութիւններ ըրինք , հրաշներ գործեցինք » : 23 Եւ այն ատեն պիտի ըսեմ անոնց , թէ

ուսած կը ճանչէ ու կը պատուհասէ . այս է կտրուիլն ու կրակը ձգուիլը : Ուրեմն ուրիշը ճանչելու հետամտութիւնն է միշտ զովելի , որպէս զի չխաբուինք : Ոսկեբերան կը յաւելու . « Եւ զի մի տսիցես , եթէ անհնարին է ճանաչել զայնպիսին , դարձեալ իմն ի մարդկան օրինակաց բերեալ աւսէ . « Ոչ որ քապէ ի փշոց իազող եւ ոչ ի տատասկէ թուզ » : Ազան կամ անազան դիւրին է ճանչել կեղծն ու սուտն , եթէ մեր հետամտութիւնն է ըստ առաջնորդութեանն Աստուծոյ :

24. Յիսուս ի վերջոյ իւր դատաւորութիւնն ի յայտ կը հանէ : Մինչեւ ցոյժմ իրր վարդապետ խօսեցու , իսկ այժմ իւր մեհախոյսկան փառքն ի վեր կը հանէ շեշտելով թէ պիտի դատապարտէ այն ամէն անձերն , որք մինչեւ անգամ թէեւ իւր անունովն են սպրտած ու հրաշքներ իսկ գործած , այլ տակայն չեն կատարած իւր Հօր կամքը . ահռելի է այս սաստ . եւ Լեռան-քարոզի այս վերջաւորութիւնն է կարի սզղեցիկ : Եթէ չկայ սէր , մարգարէութիւններ ընել ու դեւեր հանել եւ հրաշքներ գործել ոչինչ են (Ա. Կորնթ. ԺԳ. 1-4) , զի Աստուած չար մարդերու եւս կուտայ այդպիսի ձիրքեր : մարգարէանալ Բաղասամի (Թիւք ԽԽ) եւ Կայիափայի (Յովհ. ԺԱ. 31) եւ հրաշագործել Եգիպտոսի կախարդներուն (Ելք Է. 10 : Ը. 7) :

25. Յիսուս կը կնքէ իւր այս Լեռան-քարոզը , նմանցնելով իւր խօսքերուն ունկնդիրն ու կատարողը իմաստուն մարդու որ իւր տունը կը շինէ վէմի վրայ , որ չկործանիր , չխախտիր իւր հուսար , որքան յաճախեն հովերն ու անձրեւներ այսինքն , այլեւայլ փորձութիւններ . մինչդեռ յիմարին տունը շուտով կը փլի ու կը քանդուի , քանի որ աւազի , այսինքն հաստատուն հուսարքի վրայ չէ կառուցուած :

28. Աի ի բերան եզուս ժողովուրդն երբ լսեց Յիսուսի այս վսեմ քարո-

քնաւ զձեզ չէի գիտեր . մէկդի կէցէ՛ք ինէ ամէնքդ , որ անօրէնութիւն կը գործէիք :

*24 Ով որ լսէ այս իմ խօսքերս ու զանոնք կատարէ , պիտի նմանի իմաստուն մարդու , որ իր տունը շինեց վէմի վրայ : 25 Անձրեւներն իջան ու գետեր վազեցին , հովեր փչեցին ու այն տանը զարկին , ու չփլաւ , որովհետեւ վէմի վրայ հաստատուած էր : 26 Եւ ով որ լսէ իմ այս խօսքերս ու չը կատարէ զանոնք , պիտի նմանի տիմար մարդու , որ շինեց իր տունը աւաղի վրայ : 27 Անձրեւներն իջան , գետեր ելան , հովեր փչեցին , ու այն տանը զարկին , ու ինկաւ , ու անոր փլչիլն էր խիստ մեծ » :

*28 Եւ եղաւ , երբ Յիսուս այս ամէն խօսքերը լինցուց , ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ , 29 որովհետեւ իշխանութեամբ կը սորվեցնէր ու չէ թէ անոնց դպիրներուն պէս :

ՔԼԱՌԾ Ը.

*1 Բայց երբ այն լուռէն իջաւ , շատ ժողովուրդներ անոր ետեւէն գաղին : *2 Եւ ահա բորոտ մը մօտենալով երկրպագութիւն կ'ընէր անոր , ու կ'ըսէր . « Տէր , թէ որ ուզես , զիս կրնաս սրբել : » *3 Յիսուս իւր ձեռքը երկնցուց

զուժիւնը , վասն զի նա զպիրներուն պէս չէր խօսեր ուսանողներէ կամ ուրիշներէ յեղյեղուած աւելորդարանութիւններ , այլ յինքնին , միշտ շեշտելով « Կ'ըսեմ ձեզի » : Լեռան այս քարոզն է վեմագոյն մասն քրիստոնէական վարդապետութեան , զոր Ղուկաս համառօտ կը գրէ , ի բաց կը զնէ Մովսիսական օրէնքի եւ Փարիսեցիական վարդապետութեանց մասերն , իբր անպէտ հեթանոսաց , որոց կը գրէր իւր Աւետարանը (Ձ. 20-49) :

1. Ոչ թէ միայն ունկնդիրներն , այլեւ ուրիշ շատեր Յիսուսի ետեւէն կ'երթային , միայն թէ բորոտին բժշկութիւնն եղաւ Լեռան քարոզէն առաջ (Ղուկ. Ե. 12-16 : Մարկ. Ա. 10—15) : Այլ որովհետեւ Մատթէոս Յիսուսի Լերան-քարոզի յիշատակութեանն էր աւելի ուշադիր , ուստի նորա մասնաւոր նշանադրութիւնները յետոյ կ'սկսի . Բորոտութիւնն էր զարշիլի սխտ (Ղեւա. ԺԳ. ԺԳ) : Բորոտը կը մերժուէր ժողովրդեան մէջէն , զի սխտն էր փոխանցիկ : Մեղօք տպականուած մարդիկ եւս երկնքէն կը մերժուին , իբր

ու անոր դպաւ ու կ'ըսէ) . « Կ'ուզեմ . սրբուէ » : Եւ շուտով մը բորոտութիւնն անորմէ սրբուեցաւ : *4 Եւ անոր Յիսուս կ'ըսէ . « Զգուշացիր , մէկու մը չ'ըսես . այլ գնա՛ , ինքզինքդ ցոյց տուր քահանային ու ըրէ այն նուէրը , զոր Մովսէս պատուիրեց անոնց վկայութեանը համար :

*5 Եւ մտնելով Կափառնայում , հարիւրապետ մը անոր մօտեցաւ , կ'աղաչէր անոր , թ ու կ'ըսէր . « Տէր , իմ տղան (ծառայ) տան մէջ անդամալոյծ պառկած կը կենայ , չարաչար տանջուելով » : 7 Յիսուս անոր կ'ըսէ . « Ես պիտի գամ ու բժշկեմ զանի » : 8 Հարիւրապետը պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Տէր , ես արժանի չեմ , որ դուն մտնես

բորոտներ (Յայտ . ԻԱ . 27) : Այս բորոտ « Ի ծուեր » ըստ Մարկոսի (Ա . 40) եւ ըստ Դուկասու « Անկեալ ի վերայ երեսաց » (Ե . 12) իւր ախտին բժշկութիւնը կը խնդրէր ըսելով ,

2 . « Տէր , եթէ ուզես , կրնաս զիս սրբել » :

3 . Բորոտը ոչ թէ գիտէր թէ Յիսուս է Աստուած , վասն զի Յիսուսի աշակերտներն անգամ շատ ուշ գիտցան զայս , այլ հուսատալով թէ նա է հրաշագործ , Աստուծմէ զրկուած , ուստի ոչ թէ « Կատող ես , ըսաւ , այլ եթէ ուզես , կրնաս զիս սրբել » : Եւ Յիսուս զանի կը բժշկէ իսկոյն դպչեցնելով . մինչդեռ ուրիշ անգամ խօսքով ու հրամանով բժշկեց ուրիշները , այսինքն չէր գործածեր ո եւ է ձեւ բժշկական , Թող որ ցոյց տալ էր միանգամայն թէ ինքն ո եւ է ախտէ չպլշկուիր :

4 . Յիսուս բորոտին կը պատուիրէ չհամբաւել իւր այս հրաշագործութիւն , այլ նա կը հռչակէ (Մարկ . Ա . 45) , որով Յիսուս ստիպուեցաւ անապատ տեղեր քաշուիլ , թէեւ ժողովուրդը կուգար , կը գտնէր զինքը : Յիսուս կասկած չտալու համար թէ ծիսական օրէնքը քակելու հետամուտ է , կը պատուիրէ բորոտին տանիլ օրինական ընծայն առ քահանայն (Դեւտ . ԺԳ . 4) , որպէս զի ընդունուէր միւսանգամ ընկերութեան մէջ , առնելով նորա վկայութիւնը թէ բժշկուած է եւ միանգամայն քահանայք գիտնային թէ Յիսուս է Մեսիայն եւ վկայէին ժողովրդեան :

5 . Յիսուս կը բժշկէ հարիւրապետին ծառայն : Սա էր սպայ Հռովմէական բանակէն , սիրող Հրեայները (Դուկ . Է . 3-6) : Դուկաս կը պատմէ թէ հարիւրապետը նախ Հրեայներէն ծերեր ու յետոյ բարեկամներ զրկեց : Կերեւի թէ պատգամաւորներ զրկելէն յետոյ հարիւրապետն անձամբ գնաց : Այսպիսի թեմեւ անմիաբանութիւններ յաճախ են առ ո եւ է մատենագիրս , նոյն իսկ Սուրբ-Գրքին մէջ , ուր յիշուած կայ թէ Պիղատոս ձեռնց Յիսուսը , մինչդեռ ձեռնել տուաւ (Յովհ . ԺԹ . 1) :

իմ յարկիս տակ, այլ ըսէ՛ խօսքով ու թող բժշկուի իմ տղան: 9 Որովհետեւ ես իշխանութեան տակ մարդ մըն եմ: ու իմ էջնանս-Իեանս տակ զինուորներ ունիմ. ասոր ըսեմ, գնա, ու կ'երթայ, եւ ուրիշին, թէ եկուր ու կուգայ, եւ ծառայիս թէ ըրէ՛ այս բանը, ու կ'ընէ»: *10 Յիսուս երբ լսեց, զարմացաւ, ու կ'ըսէ անոնց որոնք իր ետեւէն կ'երթային. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Իսրայելի մէջ այսպիսի հաւատք ամենեւին չգտայ: *11 Բայց կ'ըսեմ ձեզի թէ շատեր արեւելքէն ու արեւմուտքէն պիտի գան ու նստին Աբրահամի ու Սահակի ու Յակոբի հետ երկնքի արքայութեան մէջ: 12 Եւ արքայութեան որդիները պիտի ելլեն դրսի խաւարը. հոն լալ ու ակռաներու կրճտիլ պիտի ըլլայ»: 13 Եւ Յիսուս կ'ըսէ հարիւրապետին. «Գնա ու

10. Յիսուս կը գովէ հարիւրապետին հաւատքը, զարմանալով, վասն զի իւր ազգայիններն այսպիսի հաւատք դեռ չէին ցոյց տուած: Հեծանոս մը կը հաւատար թէ Յիսուս է ամենագոր եւ հիւանդութիւնք եւ բոլոր գերբնական բաներ առ ոչինչ էին Յիսուսի համար:

Իսրայել կոչուեցաւ Յակոբ, երբ կռուեցաւ հրեշտակին հետ (Իմնդ. ՀԲ. 28-29): Այն տասն ցեղեր, որք բաժնուեցան Դաւթի տունէն, Իսրայէլեան կոչուեցան. Բաբելոնեան գերութենէն յետոյ այս ազգը Հրեայ կամ Իսրայելացի կոչելը սովորական եղաւ:

11. Յիսուս կը ջախջախէ Հրէական հպարտութիւնը եւ անա յայտնապէս կը գրուցէ թէ աշխարհի ամէն կողմերէն շատեր պիտի գան նստիլ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ, ու Թագաւորութեան քարն ժառանգներն այսինքն Հրէայներն արտաքս պիտի ձգուին, մութին մէջ. այս էր դատապարտութիւն Հրէական անհաւատ ազգին: Այլ մեզ ո՛րպիսի աւետիս մխիթարութեան:

12. Յիսուս կը բժշկէ Սիմոն-Պետրոսի զոքանջը շերմէն, ուրեմն Պետրոս ամուսնացած էր, այլ Սողոմ էր կինը, որպէս Յիսուս հրամայած էր թէ (Ղուկ. ԺԸ. 29), «Ով՛ որ ձգեց իւր կի՛նն ու տունը կամ որդիներն Աստուծոյ արքայութեանն համար, նա աւելին պիտի ժառանգէ»: Ազանդաւորութիւն է կարծել թէ Առաքեալը իրենց կիներն իբր քոյր պահեցին, քաշքշելով Պոզոսի սա խօսքը (Ա Կորնթ. 1-7): Մինչդեռ այդ կիներ, աշխարհս ուրացած էին Առաքեալներուն նման: Քրիստոնէական հաւատքին համար, ոչ թէ միայն էրիկ, այլեւ կնիկ մարդիկ ներքինիացած էին յայնժամ «Վասն արքայութեանն Աստուծոյ», որոց մէջ պաշտօնեայններ ալ կային (Հռովմ. ԺԶ. 1):

ինչպէս որ զուն հաւատացիր, պիտի ըլլայ քեզի»: Եւ այն օրը անոր տղան առողջացաւ:

*14 Եւ Յիսուս Պետրոսին տունը գալով տեսաւ, որ անոր զոքանչը պառկած՝ ջերմէն կը տափնապէր: 15 Անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը զանի թողուց. ոտքի ելաւ ու անոնց կը ծառայէր:

*16 Երբ իրիկուն եղաւ, շատ դիւահարներ անոր քով բերին ու խօսքով դեւերը հանեց, ու բոլոր հիւանդները բժշկեց. *17 Որ կատարուի այն խօսքը, որ ըսուեցաւ Եսայի մարգարէին ձեռքով. « Այն մեր հիւանդութիւնները վերցուց ու մեր ցաւերը կրեց »:

*18 Յիսուս շատ ժողովուրդներ իր բոլորտիքը տեսնելով հրամայեց որ անդիի կողմը երթան: *19 Եւ գպիր

Պետրոսի զօրանչին բժշկութիւնը կը յիշեն Մարկոս (Ա. 21) եւ Դուկաս (Դ. 31): Եւ ելաւ Կաթառնայումի մէջ, թէեւ Պետրոս ու Անդրէաս Բեթսայիդայէն էին (Յովհ. Ա. 44): Այս կինն անշուշտ այն կիներէն էր, որք Յիսուսը կը պաշտէին « Յընչից իւրեանց » (Դուկ. 2-3):

16. Երբ իրիկուն եղաւ, ուրեմն շաբաթն անցած էր (Ղեւտ. ԻԳ. 32), զի չէր օրէն բեռ կրել եւ ոչ իսկ հիւանդ վերցունել (Յովհ. Ե. 10-16):

17. Կարեկցեցաւ Յիսուս եւ այնքան խորին էր այս կարեկցութիւն որ յանձն առաւ հիւանդ մարդկութեան բոլոր ցաւերը ու մահ անգամ կրել, որպէս գուշակուած էր մարգարէէն (Ես. ԵԳ. 4):

18. Ծործորեցին կը գրէ. « Քանզի հարեալք էին ի սէր վարդապետութեան նորա, միանգամայն եւ հրճուեալք ի հրաշա բժշկութեան նորա, եւ ի տես աստուածային գեղոյ նորա, իբրեւ զի գեղեցիկ էր քան զամենայն որդիս մարդկան »: Դարերէ ի վեր աւանդութիւն կայ թէ Յիսուս մարդիկներուն ամենէն գեղեցիկն էր. վկայ Դաստառակի աւանդութիւնը:

19. Այս դպիրն էր անշուշտ վարակուած ազահութեամբ եւ փառասիրութեամբ, փասն կը կարծէր ճոխութիւն ստանալ այն Թագաւորութեան մէջ, զոր Մեսիայն պիտի ունենար աշխարհիս մէջ եւ գտնել փառք այսինքն բռնել բարձր դիրք, քանի որ Յիսուսի աշակերտներն էին տգէտ, բայց Յիսուս չրելու համար դպիրն այդ խորհուրդը, կ'ըսէ:

20. « Աղուէսներն որչեր ունին, ու երկնքի Թռչունները բոյներ, բայց մարդոյ Որդին տեղ մը չունի, ուր զնէ զլուխը », այսինքն անմասն է երկրաւորէն: Յիսուս ինքզինքը յաճախ « Որդի մարդոյ » կոչած է, ինչպէս կը կոչէր նաեւ ինքզինքը « Որդի Աստուծոյ », որպէս նախաձայնուած էր արդէն (Սաղմ. 2Թ. 18: Դսն. Է. 13-14: Սաղմ. Բ. 7: Իմաստ. Բ. 12-24):

մը մօտենալով կ'ըսէ անոր . «Տէր , ես ալ քու ետեւէդ գամ , ուր որ երթաս » *20 Յիսուս անոր կ'ըսէ . «Աղուէսներուն որջեր եւ երկնքի թռչուններուն բոյներ կան , բայց Որդի մարդոյ չունի Գեղ ճշ , ուր զնէ իր գլուխը » : *21 Եւ անոր աշակերտներէն մէկը կ'ըսէ անոր . «Տէր ինձի հրաման տուր , որ երթամ առաջ իմ հայրը թաղեմ » : *22 Յիսուս անոր կ'ըսէ . « Իմ ետեւէս եկուր ու թող տուր մեռելներուն , որ թաղեն իրենց մեռելները » :

*23 Եւ երբ նաւը մտաւ , անոր աշակերտներն անոր ետեւէն գացին : 24 Եւ սհա ծովին մէջ մեծ ալէկոծութիւն եղաւ , անանկ որ նաւը կը ծածկուէր ալիքներէն , ու ինքք կը քնանար , 25 Եւ աշակերտները մօտենալով զանի ար-

21. Յիսուս նոր կոչած էր այս աշակերտը (Ղուկ. Թ. 59) : Ծործորեցին գեղեցիկ կը գրէ . « Զնա (դպիրը) զի ախտիւ գայր , բժշկեաց , իսկ սա զի պարզամիտ ոք էր , առ ինքն ժողովեաց » :

22. « Ոչ ե՞ծէ արմամարհէ զպատիւ ծնողացն Ա'յն , որ օրէնս եդ եւ ինքն ելից գործով , այլ զի ցուցցէ Թէ չիբ ինչ կարեւոր քան զերկնաւորն » (Ծործորեցի) : Ռ'րչափ շատեր կան , որք կ'սպասեն , որ մեռնի իրենց հայրն ու մայրն եւ վայելին ժառանգութիւն , առանց փոյթ ընելու ի վայելս երկնաւոր ժառանգութեանց : Այդպիսիներու , որք հոգեւորապէս մեռած են , Թոյլ տալու է Թաղել իրենց պէս մեռածները : Մեր առաջին պարաքն է երկնային ժառանգութեան հետամտիլ (Ղուկ. Թ. 57-62) :

23. Նաւը կը մտնէ Յիսուս . անտի ցերեկն արդէն քարոզած էր ժողովրդեան (Մարկ. Դ. 1) , իւր աշակերտներն ալ ի միասին : Ծովը ալէկոծած է , ու ինք կը քնանայ , ուրեմն խոնջած էր . խոր քուն , վասն զի չլսեր փոթորկին մռնչիւններն ու աշակերտներուն աղմուկը , որք ուր ուրեմն կ'արձնցնեն զինքը , որ ճար մը ընէ վտանգին . ուրեմն նորա չէին առանց հաւատոյ , այլ զեռ ճկատ էին ի հաւատս , ուստի Յիսուսէն կը կըշտամբուին իրր Թերահաւատներ : Յիսուս կը սաստէ հովերուն ու ծովին , որք եւ իսկոյն կը հանդարտին (Մարկ. Դ. 35-40; Ղուկ. Ը. 22-26) : Մեր բոլոր ձառընտիրներն ու Շարակիւններ Եկեղեցին նաւու , կամ Նոյեան տապանի նմանցուցած են : Աշխարհս է ծով , ծով մեղաց , ուր ալէկոծութիւնք անընդհատ են , այսինքն փորձութիւններ . այլ սակայն Եկեղեցին կը դիմէ միշտ անվտանգ ի նաւահանգիստն երկնից , նաւապետութեամբ Քրիստոսի : Կան այնպիսիներ , որք փորձութեանց մէջ կը զանգատին , կարծելով Թէ նաւն է ի վտանգի , մինչդեռ իրենք են վտանգուած , այսինքն տկարացած ի հաւատս :

Թնցուցին ու կ'ըսեն . « Տէր , ազատէ զմեզ , որովհետեւ
 «հ» կը կորսուինք » : 26 Եւ կ'ըսէ անոնց . « Ի՞նչու վախ-
 կոտ էք , թերահաւատներ » : Այն ատեն ելաւ ու հովերուն
 ու ծովին սաստեց , ու եղաւ մեծ խաղաղութիւն : 27 Եւ
 մարդիկը զարմացան ու կ'ըսէին . « Ի՞նչպիսի մէկն է աս ,
 որ հովերն ու ծովը կը հնազանդին ասոր » :

*28 Եւ երբ միւս կողմը՝ Գերգեսացիներուն երկիրը ան-
 ցաւ , երկու դիւահարներ անոր պատահեցան գերեզման-
 ներէն ելած , խիստ կատաղի , անանկ որ կարելի չէր
 մէկու մը այն ճամբայէն անցնիլ : *29 Եւ ահա պոռացին ու
 կ'ըսէին . « Մեղի ու քեզի ի՞նչ կայ , Յիսուս , Որդի Աս-
 տուծոյ , ժամանակէն առաջ զմեզ տանջելո՞ւ եկար » :

28. Յիսուս կուգայ Գերգեսացոց երկիրը . Ղուկաս կը գրէ «Գաղարա-
 ցոց» (Ը. 26-30) , նոյնպէս Մարկոս (Ե. 1-21) : Գաղարա էր մայրաքա-
 ղաք Յորդանանու արեւելեան կողմին , իսկ Գերգեսա , այժմ Քէրզա , էր
 փոքրիկ քաղաք նոյն գաւառին մէջ : Մարկոս ու Ղուկաս միայն մեկ դիւա-
 հար կը գրեն , այսինքն նա , որ բժշկուելէն յետոյ փափայեցաւ Յիսուսի
 յարիլ , որպէս կը նշանակեն նորա : Խնդիր չէ գիտնալ Թէ դեւերն ունին
 գոյուծիւն , այլ խնդիր է Թէ դեւերն ի մարդիկ կը մտնեն : Սուրբ Գիրք կը
 խոստովանին Թէ կայ այսօրինակ մէկ հիւանդուծիւն , եւ այս չէ թուն խե-
 լագարուծիւնը , վասն զի խելագարք չունին խելամտուծիւն , մինչդեռ դի-
 ւահարք ունէին (Մարկ. Ա. 24 : Մատթ. Ը. 29 : Ղուկ. Դ. 31) : Յայսօր
 իսկ չկան հեծանոս երկիրներ , որք մշտնջենաւոր երկիւղ ունին չար ո-
 գիներէ : Եւ նաեւ հր երկրի մէջ չկան թառոյշապէս դիւահարներ : Յիսուս
 ցոյց տալու համար Թէ ինչպէս կ'իշխէ ծովին ու հովին , բժիշկ է հիւան-
 դուծեանց ու տէր մահուան , նոյնպէս դեւին , որ կը տիրէ մարդուն . կա-
 բող է յաղթել , զի ինքն անորմէ զօրաւորագոյն է (Ղուկ. ԺԱ. 21-22) :

Այս դիւահարներ տարուած ու զրուած էին գերեզմաննոցներու մէջ ,
 քնակուծենէ հեռի եւ Թէ « Որպէս մեռեալ մարմինք ի գերեզմանի դնին ,
 այսպէս եւ հոգիք նոցա՝ մեռեալք էին մեղօք , վասն այնորիկ եւ մարմինք
 նոցա գերեզմանք եղեն դիւաց » (Մործորեցի) :

29. Դեւք կը խոստովանին Թէ Յիսուս է Որդի Աստուծոյ , միայն Թէ
 տարածամ տանջուելնուն դէմ կը բողոքեն , զի որպէս Մործորեցի կը դիտէ ,
 նոցա թուն տանջանոց ժամանակն է վերապահուած վերջին մեծ օրուան ,
 դատաստանին (Յուդա Ա. 6) : Դեւերը կը բողոքեն ըսելով . « Դուն , Յի-
 սուս , մենէ քնչ կ'ուզես » , քանի որ արդէն իսկ Աստուածուծեանդ երե-
 սէն ընկած ու դատապարտուած եմք » :

30 Եւ անոնցմէ շատ հեռուն արածուող խոզերու երամակ մը կար : *31 Եւ դեւերը կ'աղաղակէին անոր ու կ'ըսէին . «Թէ որ զմեզ կը հանես ասկէջ , հրաման տուր որ երթանք խոզերուն երամակը » : *32 Եւ կ'ըսէ անոնց . « Գացէք » : Եւ անոնք ելլելով գացին խոզերու երամակը եւ բոլոր երամակը բարձրէն վազեց ծովը ու մեռան ջուրերուն մէջ : 33 Եւ խոզարածները փախան , ու քաղաք գալով ամէնը պատմեցին , ու դիւահարներուն պատահածն ալ : 34 Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսի դէմը ելաւ . երբ զանի տեսան , աղաչեցին որ անոնց սահմաններէն երթայ :

31. Այլ դեւերն էր կ'աղաչէին մտնել խոզուն մէջ . — վասն զի , չարիք ընելուն մէջ է նոցա հաճոյքն ու զուարթութիւն :

32. — Այլ Յիսուսի էր Թողուլ . — Նա որ Թոյլ տուած էր դեւերուն մտնել ի մարդիկ , կրնար Թոյլ տալ որ մտնեն յանասունս . նաեւ Աստուած կը պատժէ շատ անգամ մարդիկը , զրկելով ստացուածքէ , եւ այս եւս շատ կերպերով , մրկով , ժանտախտով , ժածով եւ այլն , ուրեմն դեւերու ձեռամբ եւս : Իսկ Ծործորեցի կը գրէ . « Զի այնու բնակիչք աշխարհին ուսանիցին զգորութիւնն Արարչին , զի ուր յայտնի էր անուն նորա , ոչինչ կարի ցուցանէր նշանս , իսկ որք ոչն զիտէին եւ տակաւին յանմտութեան կային , անդ լուսաւորագոյնս փայլէր » : Կայ ուրիշ մէկ մեկնութիւն եւս . Օրէնքն արգիլած էր խոզ պահելն ու ուտելը . խոզարածներն էին Հրեայ անշուշտ , ուստի այդ պատիժն էր արդար պատիժ նոցա օրինազանցութեան :

33. Գերգեսացիք կարծեցին Թէ Յիսուս հոն մնալով զուցէ զիրենք զրկէ իրենց ստացուածքներէն ի պատիժ իրենց մեղաց . ո՛վ կուրութիւն մարդկային մտաց : Իսկ կը յաւելու Ծործորեցի , Թէ նոքա « վասն երկիրաժողութեան ունին աղաչել զնալ ի սահմանսց նոցա , ոչ արժանի համարելով գանձին շնորհացն այնոցիկ , որպէս Պետրոս ասէր . « ի բաց գնա յինէն , Տէր զի մեղաւոր եմ ես » (Ղուկ. Ե. 8) :

ՔԼՈՒԽ Բ.

^{*1} Եւ նաւը մտնելով անդիի կողմը անցաւ ու եկաւ իր քաղաքը : ² Եւ ահա անոր քով բերին անդամալոյծ մը, որ մահիծին մէջ կը դրուէր, ու Յիսուս տեսնելով անոնց հաւատքը, կ'ըսէ անդամալոյծին. «Քեզի ներուած թող ըլլան քու մեղքերը» : ^{*3} Եւ ահա դպիրներէն քանիններ կ'ըսեն մտքովին. «Հայհոյութիւն կ'ընէ ատիկա» : ^{*4} Եւ Յիսուս գիտնալով անոնց խորհուրդները կ'ըսէ, անոնց. «Ի՞նչու չար բաներ կը մտածէք ձեր սրտերուն մէջ. ⁵ Ո՞րը դիւրին է. ըսել, քու մեղքերը քեզի թողուած ըլլան, թէ ըսել, ելիր ու պտըտէ : ⁶ Այլ որպէս զի գիտնաք թէ աշխարհիս վրայ Որդի մարդոյ մեղքերու թողութիւն տալու իշխանութիւն ունի» . այն ատեն կ'ըսէ անդամալոյծին : «Ելիր. առ քու մահիծը ու քու տունը գնա» : ⁷ Եւ ելլելով գնաց իւր տունը : ^{*8} Ժողովուրդներն երբ տեսան, զարմացան, եւ մարդիկներուն այնպիսի իշխանութիւն տուող Աստուածը կը փառաւորէին :

^{*9} Եւ Յիսուս անկէց անցնելով մարդ մը տեսաւ, որ կը

1. Յիսուս կը մեկնի անտի, նաւ մտնելով, վասն զի նա չբռնադատեր զմարդիկ, որ ընդունին իւր պարգեւները (Ղուկ. Ժ. 10-11), եւ ի Կափառնայում կուգայ, ուր բժշկեց անդամալոյծը, նախ Թողութիւն տալով նորա մեղաց, ուստի գայթակղեցան դպիրներէն քանիններ, իրարու փսփաւելով :

3. « Կը հայհոյէ դա » :

4. Այլ Յիսուս որովհետեւ մարդկային հոգին բժշկելու եկած էր, քան թէ մարմինը, գիտնալով թէ ախտերն աւելի մոլուծեանց ու մեղաց ծնունդ էին, ուստի բացէ ի բաց, անդէն իսկ, կը յայտնէ իւր Մեսիայական փառքը, իշխանութիւնը զոր ունէր մեղաց Թողութեան համար : Աստուած միայն կը Թողու մեղքը (Յս. ԽԳ. 25 : ԽԳ. 22), եւ կը բժշկէ զմեզ, եթէ տեսնէ մեր հաւատքը :

8. Ի տես այս հրաշքին, ժողովուրդն ու անդամալոյծը (Ղուկ. Ե. 25) փառաւորեցին զԱստուած (Մար. Ե. 17-26) :

9. Յիսուս Մատթէոսը, որ եւ Ղեւի, կը կոչէ յաշակերտութիւն (Մար. Բ. 13 : Ղուկ. Ե. 27-28), որոյ տան մէջ,

նստէր մաքսաւորութեան մէջ Մատթէոս անունով, ու կ'ըսէ անոր. « Իմ ետեւէս եկուր »: Եւ ելլելով գնաց անոր ետեւէն: *10 Եւ եղաւ որ ան երբ տան մէջ սեղան նստած էր ու ահա շատ մաքսաւորներ ու մեղաւորներ եկած ու նստած էին Յիսուսի եւ անոր աշակերտներուն հետ: *11 Փարիսեցիները երբ տեսան, անոր աշակերտներուն կ'ըսեն. « Զեր վարդապետն ի՞նչու մաքսաւորներու ու մեղաւորներու հետ կ'ուտէ »: *12 Իսկ Յիսուս երբ լսեց, կ'ըսէ անոնց. « Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն: *13 Գացէք սովբեցէք ի՞նչ է. « Ողորմութիւնը կ'ուզեմ, ու չէ թէ զո՞ր. վասնզի չեկայ արդարները կանչելու, հապա մեղաւորները »:

*14 Ա. յն ատեն անոր մօտեցան Յովհաննէսի աշակերտները ու կ'ըսեն. « Ի՞նչու մենք ու Փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք եւ քու աշակերտներ չեն պահեր »: *15 Յիսուս անոնց կ'ըսէ. « Միթէ կարելի՞ է որ հարսնիքի տղաքը սուգ ընեն, քանի որ փեսայն իրենց հետ է. բայց պիտի գան օրեր, երբ անոնցմէ փեսան վերցուի, այն ատեն պիտի պահեն: *16 Մէկը նոր լաթի կտոր չձգեր հին հագուստի վրայ, վասն զի այն հագուստին ամբողջութիւնը կը փեխըռտէ ու կ'առնու, կ'ելլէ, եւ պատռուածքը ալ աւելի

10. Սեղանակից կը լինի մաքսաւորներու ու մեղաւորներու ի գայժակզուծիւն Փարիսեցոց:

11. Որք կը մեղադրեն Յիսուսը, վասն զի ըստ Թալմուտի՝ ոչ մէկ բաբունի կամ վարդապետ կրնար սեղան նստիլ ժողովրդեան ստորին մարդերուն հետ:

12. Յիսուս կ'արտասանէ առածածեւ սա խօսքը. « Առողջ մարդիկ պէտք չունին բժշկի, այլ հիւանդներն ունին » . այսինքն հոգեով հիւանդներն եւ մեղաւորները բժշկելի է գործ առաքինութեան ու աստուածային: Այլ սակայն, պէտք չէ կարծել թէ կան հոգեով առողջներ. — ամենեւին: Ծործորեցի կը յաւելու. « Իսկ այն թէ « Ոչ եկի կոչել զարդարս », ոչ թէ նոքա արդարք էին, այլ հեզնէ զնոսա, ըստ այնմ թէ « Ահա Աղամ եղեւ իբրեւ զմի խմէնց » (Ծննդ. Գ. 22):

13. Երբայական ոճ է այս. կը նշանակէ թէ Աստուած ողորմութիւնը կը նախընտրէ զոհէն (Ովսէ 2. 6: Միք, 2. 6-8): Աւելի կը սիրէ զԹուծեան ու ողորմութեան գործեր քան թէ զոհերու պահպանութեան, որոց յանջախն յայնժամ Փարիսեցիք կարեւորութիւն կուտային:

գէշ կ'ըլլայ : 17 Եւ նոր գինին հին տիկերու մէջ չեն դնել , եթէ ոչ տիկերը կը պատռին , եւ գինին կը թափուի ու տիկերն ալ կը կորսուին . հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն , ու երկուքն ալ կը պահուին » :

*18 Երբ ան անոնց հետ ղայա կը խօսէր , ահա իշխան մը մօտենալով անոր երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր . « Աղջիկա ալ հիմա մեռաւ , բայց գալով անոր վրայ քու ձեռքը դնես , պիտի ապրի » : 19 Յիսուս ելաւ եւ իւր աշակերտներուն հետ մէկտեղ անոր ետեւէն գնաց :

*20 Եւ ահա տասն երկու տարուան տեռատես կին մը մօտենալով ետեւէն՝ անոր հագուստի ծայրին դպաւ , 21 վասն զի կ'ըսէր իւր մտքին մէջ . « Թէ որ միայն անոր հագուստներուն դպչիմ , կ'ազատիմ » : 22 Բայց Յիսուս երբ ետին դարձաւ ու տեսաւ զանի , կ'ըսէ . « Քաջայերուէ , աղջիկ , քու հաւատքը զքեզ առողջացուց » : Եւ այն կինը նոյն ժամուն փրկուեցաւ :

*23 Երբ Յիսուս իշխանին տունը եկաւ , ու տեսաւ փողահարները ու շատ բազմութիւն , *24 կ'ըսէ անոնց . « Մէկդի գացէք , որովհետեւ չէ թէ այդ աղջիկը մեռած է , հապա կը քնանայ » : *25 Եւ կը ծաղրէին զանի . ու երբ

14. Յովհաննէսի աշակերտներն ու Փարիսեցիներն կը պահէին ստէպ , ուստի կը գայժակդին , տեսնելով որ Յիսուսի աշակերտները չեն պահեր (Մարկ. Բ. 18-23 : Դուկ. Ե. 33-39) :

15. Յիսուս կը յայտնէ Թէ աշխարհս այժմ հարսնիքի մէջ է գալստեամբ երկնուոր փեսային , ուստի սգալու ու պահելու պէտք չկայ . Թող որ ինքն արդէն արգիլած էր ի ցոյցս մարդկան ո եւ է ծէս կատարել , նոյն իսկ պահելը տրտում ու տխուր ձեւանալով (Մատթ. Զ. 16) :

16. Նորն հին լաժը բաշելով կը պատռէ զայն : Արդէն հինն էր մաշած (Երբ. Ը. 13) , Հին տնտեսութիւնը կարելի չէր նորին հետ կարկտել : Թէ նոր գինին չորուիր հին տիկերու մէջ , այս վարդապետութիւն , բարձ , այնպէս մեկնողներ եղան , Թէ հին տնտեսութենէ ամենեւին բան մը օրինակելու չէ , պահելու չէ , մինչդեռ Յիսուս եկած էր ոչ Թէ « Լուծանել զօրէնս կամ զՄարգարէս , այլ լնուլ » (Մատթ. Ե. 17) :

18. Իշխան էր Յայրոս (Մարկ. Ե. 22-43 : Դուկ. Ը. 41-56) , որ կը հաւատայ Թէ Յիսուս միայն իւր ձեռքը դնելով կրնար իւր աղջկան տալ կենդանութիւն , ուստի Յիսուս իրեններովը կ'երթայ , ի վարձ հաւատոյն Յայրոսի :

բազմութիւնը դուրս ելաւ , մտաւ , անոր ձեռքէն բռնեց ու աղջիկը ոտքի ելաւ : 26 Ու այս համբաւը այն բոլոր երկրին մէջ ելաւ :

*27 Եւ երբ Յիսուս անկէց կ'անցնէր , երկու կոյրեր անոր ետեւէն ինկան , կը պոռային ու կ'ըսէին . « Մեզի ողորմէ , Դաւթի որդի » : 28 Եւ երբ տունը եկաւ , կոյրերն անոր մօտեցան . « Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել » . կ'ըսեն անոր . « Այո՛ , Տէր » : 29 Այն ատեն անոնց աչքերուն դպաւ ու կ'ըսէ . « Զեր հաւատքին համեմատ թող ըլլայ ձեզի » : 30 Եւ անոնց աչքերը բացուեցան . ու Յիսուս անոնց սաստեց ու կ'ըսէ , « Զգոյշ կեցէք . մէկը թող չզիտնայ » : 31 Եւ անոնք ելլելով այն բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին :

*32 Եւ անոնց գուրս ելլելու ատեն դիւահար համր մարդ մը անոր բերին : 33 Եւ դեւը ելլելու ատեն համրը խօսեցաւ . ու փողովորդները զարմացան ու կ'ըսեն թէ « Ու բնաւ Իսրայելի մէջ ասանկ բան չերեւցաւ » : 34 Բայց Փարիսեցիները կ'ըսեն թէ « Դեւերու իշխանովը ստիկա դեւեր կը հանէ » :

*35 Եւ Յիսուս կը պտրտէր բոլոր քաղաքներն ու գե-

20. Նման Յայրոսի այս կինն ալ կը հաւատայ թէ, եթէ գոնէ հագուստներուն դպչի , կը բժշկուի : Յիսուս կ'զգայ ու կը գուշակէ զայս ու կը գովէ կնոջ հաւատքը : Ով որ տեւատեսութեան ախտն ունենար , պիղծ էր ըստ Օրինաց (Ղեւտ. ԺԵ. 19-24) , եւ անբժշկելի կը կարծուէր այս ախտ :

23. Փողահարներ եկած էին կոծ ընելու համար մեռելին վրայ ըստ հին սովորութեան (Բ. Մնաց. ԼԵ. 25) :

24. Կը ծաղրէին Յիսուսը , վասն զի ստուգած ու քննած էին թէ աղջիկն է մեռած , եւ Յիսուս կը կարծէ թէ կը քնանայ , կամ մարած ու նուաղած է :

25. Իսկոյն կը համբաւուի այս մեծ հրաշքը , վասն զի մեռելի կենդանութիւն տալն էր մեծագոյն հրաշք եւ ի հնումն Եղիա ու Եղիսէ միայն ըրած էին (Գ. Թագ. ԺԷ. 17-24 : Դ. Թագ. Դ. 8-38) :

27. Կը բժշկէ Յիսուս այս երկու կոյրերն , անոնց հաւատքին խոստովանութիւնը քանիչ բերանոյ առնել յետոյ : Այս է դաս մեզ միշտ հաւատոյ դաւանութեամբ դիմել առ Տէր , որ թէեւ խստիկը պատուիրէ կոյրերուն չհռչակել իւր այս հրաշքը , այլ նոքա կը համբաւեն , զուցէ առ սաստիկ երախտագիտութեան , թէեւ անհնազանդութիւն էր այս :

դերը, կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, ու արքայութեան աւետարանը կը քարոզէր, ու ժողովրդեան մէջ ելած բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները կը բժշկէր: 36 Եւ տեսնելով ժողովուրդները զթաց անոնց վրայ, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս յոգնած ու ցրուած էին: 37 Ա.յն ատեն կ'ըսէ իւր աշակերտներուն. « Հունձերը շատ են, ու մշակները քիչ: »³⁸ Ուրեմն հունձերուն Տիրոջ աղաչեցէք, որ իւր հունձերուն համար մշակներ հանէ: »:

ՊԼՈՒԽ Ժ.

^{*1} Եւ իր տասն երկու աշակերտները իր քով կանչելով պիղծ ոգիներու վրայ իշխանութիւն տուաւ անոնց, որ հանեն զանոնք, ու բժշկեն ամեն . ցաւերը ու բոլոր հիւանդութիւնները: ^{*2} Եւ տասն երկու առաքեալներուն

32. Յետոյ Յիսուս կը բժշկէ համր դիւահար մը, կը զարմանայ ժողովուրդը, բայց կ'ըսարին Փարիսեցիք, բարուրելով թէ Սատանայի զօրութեամբ կը հանէ դեւեր. անբնական չէր այս չարախօսութիւն, քանի որ չէին հաւատար Յիսուսի Մեսիայութեան:

35. Յիսուս ամէն տեղ կը քարոզէ արքայութեան Աւետարանը, կը բժշկէ ախտեր ու հիւանդութիւններ, եւ կը շարժայ ժողովրդեան վրայ, որք հովիւ չունեցող ոչխարներու պէս խոնջած ու ցանուցիր էին: Խոնջած արդարեւ Փարիսեցիական ծէսերու բռններու տակ հեծելով. ցանուցիր էին, զի չունէին առաքինի տէրեր, որք փոյթ ընէին զէ՞ ըստ հոգւոյ փրկութեան նոցա:

38. Հունձըը շատ էր, եւ Էրբ շատ չէ. չկան մի՞թէ շատեր, որք Աւետարանի լսել պատրաստ են: Ուրեմն մարդ աղօթելու է ոչ միայն իւր անձին, այլ ուրիշներու փրկութեանն համար եւս աղօթելու է Աստուծոյ, որ հունձքին տէրն է, դրկել մշակներ: Երանի՜ ժողովրդեան, որ Աստուծմէ ընտրուած ու ներշնչուած ունի մշակներ, Աւետարանի պաշտօնեայներ:

1. Ծործորեցին կը զրէ. « Ի դէպ ժամանակի կոչեաց յառաքելութիւն, զի ոչ ի սկզբանն առաքեաց, այլ յորժամ յաճախ շրջեցան ընդ նմա եւ առին զչափ եւ զհանդէս զօրութեան նորա. զի նախ յաշակերտութիւն կոչեաց, եւ այժմ յառաքելութիւն, որոց տայ իշխանութիւն ի վերայ դիւա

անուշներն ասոնք էին . Առաջին՝ Պետրոս ըստւած Սիմոնը ու անոր եղբայր Անդրէասը , *3 Զերեզեան Յակոբոսը ու անոր եղբայր Յովհաննէսը , Փիլիպպոսն ու Բարթուղիմէոսը , Թոմասն ու մաքսաւոր Մատթէոսը , Ալփեան Յակոբոսն ու Ղէբէոնն որ ըսուեցաւ Թադէոս , *4 Կանանացի Սիմէոնն ու Իսկարիովոացի Յուզան , որ եւ զանի մատնեց : *5 Զանոնք՝ տասներկուքը զրկեց Յիսուս , անոնց պատուիրեց ու կ'ըսէ . « Հեթանոսներուն ճամբան մի՛ երթաք , ու Սամարացիներուն քաղաքը մի՛ մտնաք . *6 հապա աւելի Իսրայելի տան կորսուած ոչխարներուն

եւ արտից » : Աւետարանի պաշտօնէութեան ընտրութիւնն է յետ մանրաքնին փորձերու , որպէս Առաքելք եւ հայրապետ կանոնադրած են : Արժանաւորութիւնն ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ է միակ պայման , եւ շնորհքն է երկնքէն , Աստուծմէ : Տասներկու Առաքելոց ընտրութիւնը գրած են եւ Մարկոս (Չ. 7-13) ու Ղուկաս (Թ. 1-6) :

Զ. Պետրոս է բառ Յունարէն , Կեփաս Ասորերէն եւ կը նշանակեն վիճ , կը կոչուէր նաեւ Սիմոն (Մատթ. ԺԶ. 17) եւ Շմաւոն (Գործք. ԺԵ. 14) : Բեթսայիդացի էր , որդի Յովնանու , արհեստով ձկնորս : Կը բնակէր ի Կափառնայում (Մատթ. Ը. 14 : Ղուկ. Դ. 38) : Առաջին անգամ Յիսուսի աշակերտեցաւ Անդրէասի հետ (Յովհ. Ա. 42) եւ անուանեցաւ Յիսուսէն վէմ , որ գիտէր կանուխէն հաստատուի հաւատով մը Պետրոսի նշանաւոր դաւանութիւնն այսինքն Թէ Յիսուս է , Քրիստոսը , Որդի Աստուծոյ (Մատթ. ԺԶ. 16) , Թէեւ յողորդ էր նա , մինչ զի Յիսուսէն յանդիմանուեցաւ (Մատթ. ԺԶ. 22) , զոր եւ ուրացաւ եւ յետոյ զղչացաւ (Մատթ. ԻԶ. 65-75 : Մարկ. ԺԴ. 54-72 : Ղուկ. ԻԲ. 54-62 : Յովհ. ԺԸ. 25-28) : Պէնտէկոստէի օրը առաջին անգամ Պետրոս քարոզեց , տաճարին դրան բով կաղը բժշկեց Յովհաննէսի հետ եւ որոյ հետ բանտարկուեցաւ . պատուհասեց Անանիան իւր Սափիրա կնկան հետ , որք ստած էին Հոգւոյն սրբոյ , խայտառակեց Սիմոն մոզը , որ արժամով Սուրբ-Հոգին զնելու կը յանդգնէր , բժշկեց Ենէոսը ի Լիււղղա եւ ի Յոպպէ յարուածին տուաւ Այծեմնիկի , աւետարանեց հեթանոս հարիւրապետ Կուռնէլիոսի , Հերովդէս Ագրիպպասէն բանտարկեցաւ : Մասնակեցեալ Երուսաղեմայ ժողովներուն (Գործք. Բ. 14 : Գ. 1-12 : Դ. 1-12 : Ե. 1-12 : Ը. 9-26 : Թ. 32-43 : Ժ. 1-48 : ԺԲ. 3-19 : ԺԵ. 7-11) : Կը թուի Թէ քարոզած է նաեւ ի Կորնթոս եւ ի Բաբելոն (Ա. Կորնթ. Ա. 12 : Գ. 22 : Ա. Պետ. Ե. 13) : Կ'աւանդուի Թէ քարոզած է ի Պոնտոս եւ ի Կապադովկիա . այլ Թէ ի Հռովմ նահատակուած է , կարելի չէ ճշդել : Ծանծաղամտութիւն է կար-

գացէք : *7 Եւ երբ երթաք , քարոզեցէք ու ըսէք թէ մօտեցած է երկնքի թագաւորութիւնը : *8 Հիւանդները բժշկեցէք , բորոտները սրբեցէք , դուբերը հանեցէք , ձրի առիք ու ձրի տուէք : *9 Մի ստանաք ոսկի ու ոչ արծաթ , ու ոչ ձեր գօտիներուն մէջ պղինձ : 10 Ոչ ճամբու համար պարկ ու ոչ երկու հագուսաներ , ոչ կօշիկներ , ոչ գաւազան . որովհետեւ մշակն իր կերակուրին արժանի է : *11 Որ քաղաքը մտնէք կամ գիւղը , հարցուցէք թէ ո՞վ կայ անոր մէջ արժանաւորը , ու հոն եղիք , մինչեւ որ անկէց ելլէք : 12 Եւ երբ մտնէք այն տունը , բարեւ տուէք

ձեւ Թէ Պետրոս էր զուրի Առաքելոց : Այսպիսի վարդապետութիւն հակառակ է զլիտվին Քրիստոսի քարոզած սիրոյն ու խոնարհութեան (Մատթ. ԺԷ. 1-6 : Յովհ. ԺԵ. 1-5) եւ եղբայրական հաւասարութեան (Մատթ. ԻԳ. 8) , մանաւանդ երբ Առաքելաբ կը վիճէին Թէ ո՞վ իրենց մէջ մեծ պիտի ըլլայ , Յիսուս ըսաւ . « Ձեր մէջ մեծ չկայ . զուք իրարու եղբայր էք » (Ղուկ. ԻԲ. 24-20) : Բոլոր հին հայրապետներ պնդած են Թէ Պետրոս ձեր ըլլալուն համար առաքելական կարգին մէջ առաջին զրուած է . առաջին ի մէջ հաւասարներու : Տես եւ (Մատթ. ԺԶ. 16-24) : Պետրոս ունի երկու Կաթուղիկեայ Թուղթեր :

Անդրէաս էր եղբայր Պետրոսի , առաջին աշակերտ Յիսուսի (Յովհ. Ա. 40) : Աշակերտած էր նախ մկրտիչ Յովհաննէսի : Սա քարոզեց Աւետարանը ի Նիկիա եւ ի Նիկովիդիա , ի Թրակիա եւ նահատակեցաւ յԱքայիա Պաղարսա քաղաքի մէջ խոտորնակ խաչի վրայ X , որ ցարդ կ'ըսուի « Խաչ Անդրէի » :

3. Յակոբոս եւ Յովհաննէս եղբայր էին , որդիք Զեբեդեայ եւ Սողոմէի , Բեթսայիդացի , արհեստով ձկնորս : Սոցա մայրն էր որ խնդրեց Յիսուսէն որ իւր որդիք նստին յաշմէ եւ ի ձախմէ նորա արքայութեան մէջ (Մատթ. Ի. 20-23) : Պետրոսի հետ ակնանտես եղան Քրիստոսի այլակերպութեան (Մատթ. ԺԷ. 1-2) : Յիսուսէն խնդրեցին որ երկնքէն կրակ իջեցնէ ու այրէ անտապնչական գիւղը (Ղուկ. Թ. 54) , Սոքա կոչուեցան Բաներեգէս , այսինքն Որդիք որոտման (Մարկ. Գ. 17) , իրենց եռանդուն բնաւորութեան համար : Պետրոսի հետ ի Գեթսեմանի ուրոյն ակնանտես եղան Յիսուսի տաղնապներուն (Մատթ. ԻԶ. 37) : Նահատակեցաւ յԵրուսաղէմ Հերովդէսի ձեռամբ 44 ին (Փորձք. ԺԲ. 1-2) , եւ եղաւ առաջին մարտիրոս Առաքելոց մէջ : Կ'աւանդուի Թէ ի Սպանիա քարոզած է , եւ անտի յետոյ վերադարձած յԵրուսաղէմ : Իսկ Յովհաննէս նախ աշակերտեցաւ մկրտիչ Յովհաննէսի եւ յետոյ Յիսուսի , սէրն առ Տէր խորին էր , մինչ զի ներկայ էր

անոր ու ըսէք անոր . « Այս տանը բարեւ » : 13 Թէ որ այն տունը արժանի է , Թող ձեր բարեւն անոր վրայ ըլլայ , բայց Թէ արժանի չէ , ձեր բարեւը ձեզի Թող դառնայ : *14 Եւ ով որ զձեզ չընդունի ու ձեր խօսքերուն մտիկ չընէ , երբ կլլէք այն տունէն կամ այն քաղաքէն , ձեր ոտներուն փոշին Թոթուեցէք : *15 Ճշմարիտ կըսեմ ձեզի . դատաստանին օրը Սողոմացիներուն ու Գոմորացիներուն երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ քան Թէ այն քաղաքին : *16 Ահա ես զձեզ ոչխարներու պէս գայլերու մէջ կը դրկեմ . այսուհետեւ օձերու պէս խորագէտ եղիք , ու աղաւններու պէս միամիտ : *17 Չգոյշ եղիք մարդիկներէ ,

նորա խաչելութեան եւ կը սիրուէր Յիսուսէն , եւ ի մէջ Առաքելոց մանկագոյնն էր : Քարոզեց ի Փորք-Ասիա , մանաւանդ յԵփեսոս . 95-ին արտորուեցաւ ի կղզին Պատմոս , յետոյ վերադարձաւ յԵփեսոս : Այս էր իւր յաճախագոյն խօսք . « Զաւակներս , մէկզմէկ սիրեցէք » : Մեռաւ խոր ծերութեան մէջ 93 տարեկան , ըստ Եպիփանոս : Յովհաննէս ունի երեք Կաթողիկեայ Թուղթեր եւ Յայտնութեան գիրքը :

Փիլիպպոս էր Բեդայալիոացի , նախ աշակերտած էր մկրտիչ Յովհաննէսի , քարոզեց ի Փաիւզիա եւ նահատակեցաւ ի Հերապոլիս , Ասորոց երկրին մէջ : Իսկ Բարձրոյմնոսի , այսինքն որդի Թողմայի , բուն անունն էր Նաթանայէլ (Յովհ. Ա. 45) . քարոզեց Հայոց , եւ մորթէզբժ նահատակեցաւ , որոյ գերեզմանն է Վանայ նահանգին մէջ ի Պաշ-գալէ : Թովմաս , Յունարէն Դիդիմոս այսինքն երկուորեակ , Գալիլեացի էր , շերմ աշակերտ , եւ ոչ դիւրահաւան , որ առանց ապացուցի չհաւատաց Քրիստոսի յարութեան (Յովհ. Ի. 19-29) : Քարոզեց Պարսից եւ Հնդկաց : Աշտէխոց նահատակեցաւ հոն : Կայ Հնդկաստանի մէջ , ինզոս գետի կղզիներէն մէկուն մէջ քրիստոնեայ ժողովուրդ մը , Թովմասեան ըսուած : Մատթէոս , մաքաւար ու աւետարանագիր , որ եւ Ղեւի , որդի Ալփեայ (Մարկ. Բ. 14) , Գալիլեացի էր : Սա ինքզինքը « Մաքաւար անուանէ , առ ի խրատ մեզ , զի յորժամ ի պատիւ կոչիցիմք , զչափ անձանց մերոց զիտասցուք եւ զառաջին վարսն մի մոռասցուք » (Մործորեցի) : Սա հրակէզ նահատակեցաւ ի Չիլուին : Յակոբոս , որդի Ալփեոսի կամ կղէովպայ (Մարկ. Գ. 18 : Ղուկ. Զ. 15) : Կրտսեր կոչուեցաւ որոշուելու համար Չեբեդեան Յակոբոսէն , սորա մօր անունն էր Մարիամ (Մարկ. ԺԵ. 40) : Սա չարաչար տանջանօք նահատակեցաւ ի բարբարոսս : Սորա եղբայրն էր Թադէոս , որ եւ Ղեբէոս , կամ Յուդա (Ղուկ. Զ. 16) որ քարոզեց Հայոց ու Ասորոց , զլխատեցաւ յԱրտագ , սրբուհի Սանդուխտ կուսէն յետոյ : Մինչ

որովհետեւ զձեզ պիտի մատնեն ատեաններու, ու իրենց ժողովարաններուն մէջ զձեզ պիտի տանջեն: 18 Ու դատաւորներու ու թագաւորներու առջեւ ինծի համար զձեզ պիտի տանին, անոնց ու Հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար: 19 Բայց երբ զձեզ մատնեն, հոգ մի ընէք թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պիտի խօսիք, վասն զի այն ժամուն մէջ պիտի տրուի ձեզի, 20 որովհետեւ դուք չէք որ պիտի խօսիք, այլ ձեր Հօր Հոգին, որ պիտի խօսի ձեր մէջ: 21 Եղբայր եղբայրը պիտի մատնէ մահուան, ու հայրը՝ որդին, ու որդիներ հայրերնուն վրայ պիտի ելլեն

ցարդ կայ իւր գերեզմանն ի Մակու ու վանք՝, ուր յոսցաւ մեր լոյս հաւատքին լոյս արեւը, Գրիգոր Լուսաւորիչ: Թաղէոս եւս ունի մէկ Կաթուղիկեայ Ծուղթ:

4. Միմոն, Կանանացին Երրայեցերէն է եւ կը նշանակէ Նախանձայոյց-գուցէ էր Նախանձաւոր կոչուած աղանդէն, կամ, որ ճիշդն է, նախանձայոյց բնաւորութեանն համար ի Քրիստոս, յԱսորեստան քարոզել յետոյ նահատակեցաւ սա ի Պարթեւս: Իսկ Յուդա էր Կարիովդէ քաղաքէն, որդի Միմոնի (Յովհ. 2. 72): Կը վայելէր Յիսուսի ու անոր աշակերտներուն վստահութիւնը, ուստի էր գանձապահ (Յովհ. ԺԲ- 6): Մատնեց Յիսուսը երեսուն արծաթի համար, իրր 3 ոսկի Անգլիական, այլ խղճահարելով խեղդամահ եղաւ (Մատթ. ԻԷ. 3-10: Գործք. Ա. 18):

5. Յիսուս այս տասներկուքը կը դրկէ երկու երկու (Մարկ. 2. 7), եւ որովհետեւ ղեռ չէր հասած Հեթանոսներու եւ Սամարացիներու Աւետարանը քարոզելու ժամանակը, ուստի կը պատուիրէ չերթալ անոնց, առ այժմ: Հրեայք բոլոր ազգերը Հեթանոս կ'անուանէին, կուպաշտ: Իսկ Սամարիտ էր քաղաք ի մէջ Հրէաստանի ու Գալիլեայի, եւ Սամարացիք էին սերունդ այն գաղթականութեան, զոր Սաղմանասար բերաւ, բնիկները գերի տանելէ յետոյ (Դ. Թագ. ԺԷ. 24): Երբ Հրեայք դարձան գերութեան, նորա, որոց կրօնն էր խառնուրդ հրէութեան ու հեթանոսութեան (Դ. Թագ. ԺԷ. 24-41) ուզեցին տաճարին շինութեան մասնակցիլ, այլ մերժուելուն համար (Բ. Եզր. Դ.) եղան այնուհետեւ ոխերիմ Սշնամի Հրէից: Յետոյ գրեթէ 409 ին, նախ քան զՔրիստոս, Դարեհ-Նոթոսի հրամանով Գարեգի լեռան վրայ շինեցին տաճար, զոր կործանեցին Հրեայք Յովհաննէս Հիւրկանոսի իշխանութեան ատեն, յ129ին, նախ քան զՔրիստոս: Եւ Քէեւ կ'ատէին Սամարացիները ու կը նզովէին, այլ սակայն չէին համարեր զանոնք հեթանոս, այլ հերետիկոս, եւ անոնց հետ կերակուր ուտելն էր ուտել խոզի միս: Այսքան խոր ատելութիւն կար իրարու մէջ (Յովհ.

ու զանոնք պիտի սպաննեն : *22 Եւ ամենուն ատելի պիտի ըլլաք իմ անուանս համար . բայց ով որ մինչեւ վերջը համբերէ , ան պիտի ապրի : *23 Եւ երբ զձեզ հալածեն այս քաղաքի մէջ , ուրիշը փախէք . ու թէ որ անկէջ ալ զձեզ հալածեն , միւսը փախէք . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . պիտի չհասցնէք Իսրայելի քաղաքները , մինչեւ որ Որդի մարդոյ գայ :

*24 Աշակերտ մը աւելի չէ իր վարդապետէն ու ծառան իր տէրէն : *25 Բաւական է աշակերտին թէ որ ըլլայ իր վարդապետին պէս , ու ծառայն իրտէրին պէս .

Դ . 9 : Դուկ . Թ . 52-53) : Սամարացիք Մովսէսի միայն հինգ զրբերը կ'ընդունէին եւ կը հաւատային Թէ պիտի գայ Մեսիայն (Յովհ . Դ . 25) : Յիսուս դաս տալու համար Թէ մարդ նախ իւր ըստ մտրմնոյ մօտիկին , ազգին ընելու է բարի , տալու է Աւետարանի բարին , յետոյ ուրիշներուն . կ'ըսէ .

6. «Այլ աւելի Իսրայելի տան կարսուած ոչխարներուն գացէք» : Նախընտրել մերձաւորն ու ապա հեռաւորն , այս է առաւելին նշանակութիւնը : Կորսուածներն էին այն Հրեայք , որք հեռացած էին Աստուծմէ :

7. Յիսուս իրեն պէս ընել , այսինքն Աստուծոյ արքայութիւնը մօտեցած քարոզել կը պատուիրէ , եւ իրեններուն

8. Շնորհելէ յետոյ՝ հրաշագործելու զօրութիւնը կը պատուիրէ ձրի գայն գործածել , վասն զի ձրի առած էին գայն : Երբէք հոգեւորին համար բան մը չ'ակնկալել կամ մտնաւանդ չպահանջել , որպէս կ'ընէր Հրէական պաշտօնէութիւնը :

9. Ազահուժեան տխտը ջնջելու համար բոլորովին , կը պատուիրէ ոսկի ու արծաթ ու բան մը չ'ունենալ հագուստէ գատ : Վասն զի երբ պէտք ունենային , պիտի գտնէին գայն Աստուծամէ եւ նոյն իսկ անոնցմէ , որոց պիտի աւետարանէին , վասն զի մշակն , ըստ առածին , արժանի է իւր կերակուրին : Այլ այս պատուէր չէր բնաւ արգելք , որ Առաքեալք մուրիկներու պէս ապրէին , այլ իրարու հետ պիտի հաղորդակցէին ու իրարմէ , պիտի գար. ժամանակ , պիտի օգտուէին , իրարու օգնելով , մանաւանդ վտանգի օրը (Դուկ . ԻԲ . 35-36) : Վասն զի անհնար էր որ այս պաշտօնէութիւն , զէ՞ յետոյ , չունենար տնտեսութիւն (Գործք . Բ . 42-47) :

11. Արժանաւորին տալ բարեւ , ոչ Թէ անզգամներու , որպէս արդէն պատուիրած էր (Մատթ . Է . 2) : Կենալ , ոչ Թէ դեզբիւլ , որպէս զի կարծիք չտան , Թէ զժգոհ մարդիկ են ու բազդախնդիր , կենալ ու հոն տարածել հաւատքը , որ զիւղէն ու քաղաքէն չեն մերժուիր : Այլ սակայն յայնժամ ելլել անտի , չլինելու համար. ծոյլ , երբ Աւետարանի քարոզութեան

Թէ որ տանուտէրը Բէեղզերուդ կանչեցին, ո՛րչափ աւելի անոր ընտանիքը: *26 Այսուհետեւ անոնցմէ մի վախնաք. որովհետեւ չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի ու գազադտուկ՝ որ չգիտցուի: 27 Ինչ որ ձեզի մուժի մէջ կ'ըսեմ, լոյսի մէջ ըսէք. եւ ինչ որ ականջէ կը լսէք, տանիքնեքու վրայ քարոզեցէք:

*28 Եւ անոնցմէ մի՛ վախնաք, որոնք մարմինը կ'ըսպաննեն ու հոգին չեն կրնար սպաննել. բայց դուք աւելի անորմէ վախցէք, որ կրնայ հոգին ու մարմինը դժոխքին մէջ կորսնցունել: *29 Չէ՞ որ երկու ճնճղուկներ մէկ

այլուր պէտք կայ: Այս ո՛րպիսի զեղեցիկ դաս պաշտօնէութեանն Աւետարանի:

14. Հրեայք սովոր էին, եթէ հեթանոսներու երկրէ մը գային, կը մաքրէին իրենց ոտնամանները, փոշիները կը թոթուէին, որպէս զի պլշկուած չըլլան անոնց մեղօք, այսպէս Առաքեալք ընելով, պիտի ցոյց տային թէ մեծ էր մեղքը նոցա. որք զիրենք չընդունեցին:

15. Սորոմ ու Գոմոր քաղաքաց բնիկներուն մեղքն էր մեծ. ուստի անեղ եղաւ նոցա պատիժը (Ծննդ. ԺԹ. 24-30), որոց եւ կատարեալ պատուհասը պահուած է դատաստանի օրուան. այլ սակայն Իսրայելի այն քաղաքներն, որք Աստուծոյ զանազան շնորհները վայելեցին ու առին Մեսիայի գալըտեան աւետիսը, ու զայն մերժեցին, խաճագոյն պիտի կրեն պատիժ:

16. Թէ Աւետարանի քարոզութեան համար ո՛րքան պէտք է խորագիտութիւն, գայլակերպ մարդիկներէ զգուշանալու համար, ու աղանակերպ վարք ունենալով, ո՛րքան միամտութիւն պէտք է առ սէր փրկութեան ուրիշներու: Այսպէս իմաստութեամբ իբր օձ, միամտութեամբ իբր աղանի ըլլալով, շահիլ մարդկութիւնն ու փրկել ի Քրիստոս, այս է այս պատուէրին իմաստ, զոր Մործորեցի այսպէս կը մեկնէ. «Զի մի վասն ոչխար ասելոյն՝ անմտութեամբ շրջեցան, այլ բազում իմաստութեամբ հմուտք լինիցին առ ի հաւանեցուցանել զլսողսն. . . եւ իբր գաղանի միամիտ՝ ոչ զրժողացն վկասէ ձանձրանալ եւ ի բարեգործութեանցն խոյս տալ, այլ միամտութեամբ սպասաւորել:

17. Զգուշութիւն կը պատուիրէ չմատնուելու համար յանպէտս վտանգներու, եւ հալածանքը կը յիշէ, զոր պիտի կրէին իրեններն իրեն համար կը շեշտէ թէ Սուրբ-Հոգին իրենց մէջ ու իրենց հետ պիտի ըլլայ միշտ, եւ նոյն իսկ Հրեայք ու Հեթանոսք պիտի վկայէին իրեններուն նահատակութիւնն իւր անուանը համար: Այսպէս այժմէն Յիսուս կը գօտէպնդէ իրեններն աներկիւղ ու անվհատ շարունակելու համար փրկութեան գործը:

դանկի կը ծախուին, եւ անոնցմէ մէկը գետին չընկնիր առանց ձեր Հօրը: 30 Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած է: 31 Եւ ուրեմն մի՛ վախնաք, որովհետեւ շատ ճնճողակներէ աւելի լաւ էք: *32 Ով որ մարդիկներուն առջեւ զիս կը դաւանի, ես ալ անոր վրայով պիտի դաւանիմ իմ Հօր առջեւ, որ երկինքն է: 33 Եւ ով որ զիս ուրանայ մարդիկներու առջեւ, ես ալ զանի պիտի ուրանամ իմ Հօր առջեւ, որ երկինքն է:

*34 Մի կարծէք թէ եկայ աշխարհի վրայ խաղաղութիւն ձգելու, հապա սուր: 35 Որովհետեւ եկայ մարդն իր հօրմէն զատելու ու աղջիկն իր մօրմէն, ու հարան՝

Չ4. Անհնարին էր Աւետարանի տարածուիլն՝ առանց հակառակութեան ու զոհողութեան: «Միիծարութիւն տայ այսու թէ այնքան բորբոքելոց է քարոզութեանն զօրութիւն, մինչ զի զքնութիւնն արհամարհել եւ զազգատոհմն ուրանալ հասանիցէ, եւ զքսնն պատուական համարել» (Մործորեցի):

22. Նա պիտի ուրէր, ով որ անսահման հալածանաց մէջ ունենար անվերջ համբերութիւն. միիծարութիւն եւ այս նոցա, որք ի տառապանս կը հեծեն վասն արդարութեան:

23. Յանպէտս ո եւ է զոհողութիւն չընել, այս է այս պատուէրին իմաստը. վասն զի խուսափելով վտանգէ մը, որում զիմագրուելն ու կամ յանձնուիլն է անօգուտ, աւելի օգտակար է այլուր երթալ ու քարոզել, մինչեւ որ գայ Որդի Մարդոյ, այսինքն Աստուածային տնօրինութիւնն, որ պիտի ընէր Աւետարանի քարոզութեան լրութիւնը:

24. Ինչ որ վարդապետ Յիսուսի պատահեցաւ, նոյնը իրեններուն պիտի ըլլար. այս է իմաստ այս խօսքի. (Յովհ. ԺԳ. 16):

25. Բէկզգեպուզ էր Փղշտացի կուռքերէն մին, այսինքն Ճանճիկ Աստուած, որոյ վերջին նշանագիրը Հրեայք փոխեցին ի նախատինս կուռքին, նշանակել տալու համար «Աստուած աղբերու»:

26. Կը յորդորէ Յիսուս չվախնալ, այլ ըսել յայտնի ու համարձակ, ինչ որ իրենք իրմէն լսած էին առանձինն:

28. Եւ ցոյց տալու համար թէ որքան հոգեւորն է շահուէտ, կը յորդորէ մահու շափ չվախնալ, այլ սակայն վախնալ մոլորութենէ, վասն զի հոգեով ու մարմնով կորուստ կայ յայնժամ:

29. Փորձութիւնն ու պատիժը յիշելէ յետոյ Յիսուս Աստուածային անսահման հոգածութեան ապացոյցը կուտայ, ըսելով աշակերտներուն. «Ձեր գլխուն մազն անգամ համրուած է ձեր Հօրմէն»: Երբէք Յիսուս մեր Հայրը չէ արտասանած, այլ մեր կամ իմ Հայրս, քանզի ինքն էր յաւիտենական

իր կեսուրէն : *36 Եւ մարդու ճշ թշնամիներն իւր ընտանիքը դէպէ ըլլայ :

*37 Ով որ իւր հայրը կամ մայրը ինէ աւելի կը սիրէ , ինծի արժանի չէ : *38 Եւ ով որ իր խաչը շառնուր ու իմ ետեւէս չդար , ինծի արժանի չէ : 39 Ով որ իր անձը կը կը գտնէ , պիտի կորսնցնէ զանի . եւ ով որ իր անձը ինծի համար կորսնցուց , պիտի գտնէ զանի : *40 Ով որ զձեզ ընդունի , զիս կ'ընդունի . եւ ով որ զիս կ'ընդունի , զիս զրկողը կ'ընդունի : *41 Ով որ մարգարէն կ'ընդունի մարգարէի անունով , մարգարէի վարձք պիտի քանու . եւ ով

միածին Որդին , եւ մեք ողբեգիր միայն եմք Հայր Աստուծոյ , հաւատով ի Քրիստոս :

32. Յիսուս իւր Աստուածութեան համար հաւատոյ սոյն գերակշիռ հանգանակը կ'արտասանէ . «Ով որ զիս դուանի , ես ալ իմ երկնաւոր Հօրս առջեւ պիտի դուանիմ զանի . եւ ով որ զիս ուրանայ , ես ալ զայն պիտի ուրանամ երկնաւոր Հօրս առջեւ » :

33. Երկպառակութիւն ու ճշնամութիւն պիտի տիրէր , ուր Աւետարանը պիտի սկսէր քարոզուիլ , մինչեւ որ աշխարհն ըլլայ Մի հոտ եւ մի հովիւ » (Յովհ. Ժ. 16) :

36. Թշնամութեան մը որ մարդ իւր ընտանիներէն կը կրէ , դառնագոյն է : Այսպէս եւ եղաւ Քրիստոնեայներուն :

37. Չկայ բան մը որ զՔրիստոս յետադասէ , եւ զմարդ հրաժարեցնէ Աւետարանի աշակերտութենէ : Աւազին սէրն միշտ առ Աստուած ըլլալու է :

38. Խաչը առնուլ կը նշանակէ վիշտ կրել , ինչպէս որ խաչաչարչար մեռնիլն էր , անուելի մահ : Այսպէս չկայ փրկութեան հնար , եթէ մարդ իւր խաչը շառնու ու Յիսուսի ետեւէն չերթայ , ու չզոհէ ամէն բան մինչեւ իսկ ինքզինքը , եւ ընդունած չըլլար Քրիստոսը ու զանի զրկող Աստուածը : Յետոյ Յիսուս կը յաւելու .

40. «Ով որ զձեզ կ'ընդունի , զիս կ'ընդունի » : Ուրեմն որքան յարգելի է պաշտօնէութիւնն Աւետարանի :

41. Ով որ կ'ընդունի մարգարէ մը կամ արգար մը , պիտի վարձատրուի , վասն զի անով ցոյց կուտայ Թէ ինքն ալ ունի մարգարէի կամ արգարի բնուորութիւն ու արժանաւորութիւն : Ուրեմն ով որ Աւետարանի պաշտօնեայ մը կ'ընդունի իւր տան մէջ ու անոր խօսքն իր սրտին մէջ , նա արժանի է աստուածային վարձատրութեան :

42. Ո՞վ են այս պատիկները . — տգէտ ու տկար , աղքատ ու անարգ

որ արդարը կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք պիտի առնու: *42 Եւ ով որ այս պատկերներէն մէկուն միայն գաւաթ մը պազ ջուր խմցունէ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. իր վարձքը պիտի չկորսնցունէ »:

Ք Լ Ա Ի Ե Ժ Ա.

¹ Եւ եղաւ, երբ Յիսուս իր տասներկու աշակերտներուն պատուէր տալը լմացուց, անկէջ քարոզելու սուրվեցնել գնաց անոնց քաղաքներուն մէջ:

*2 Իսկ Յովհաննէս երբ բանտին մէջ լսեց Քրիստոսի գործերը, իւր աշակերտներուն ձեռքով Լ-ը ղրկեց, *3 ու կ'ըսէ անոր. « Դո՞ւն ես ան որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասե՞ք »: *4 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ ա-

մարդիկ գուցէ, այլ որովհետեւ են աշակերտ ու բարոզ Բանին, նոցա տրուած գաւաթ մը պազ ջուրն անգամ, քանի որ Աստուծոյ անունով է, պիտի չմնայ անվարձ: Ո՞վ երանաւէտ միսիծարուծեանս Թէ Աւետարանի պաշտօնէից եւ Թէ նոցա նպաստող եւ նոցա գործը ղիւրացնող ամէն բարեպաշտներու:

2. Ծործորեցին կը գրէ. « Զնախանձ աշակերտացն Յովհաննէս յայտ առնէ Աւետարանիչս եւ ոչ Թէ Յովհաննէս երկմտեաց վասն նորա, զի յառաջ քան զնշանն զիտէր զնա եւ անդատին հոգևոյն յորովայնէ ծանեաւ զնա »: Յովհաննէսի հուատքը խախտած չէր, այլ որովհետեւ բանտին մէջ կը տառապէր, Մաքերոս բերդին մէջ ըստ Յովսէպոսի, Մեռեալ ծովին մօտ, եւ կ'ըզձար որ Յիսուս յայտնուի իբր Մեսիա զինքն ու Իսրայելը փրկելու համար անօրէններէ մանաւանդ շնացող Հերովդէսէն, եւ Թէ իւր աշակերտներն, որք ղեռ կը կարծէին Թէ ինքն է Մեսիայն, համոզելու համար Թէ Յիսուսն է, եւ նմա այլ եւս աշակերտելու են, ուստի կը ղրկէ պատգամաւորներ (Ղուկ. Է. 18 25):

3. Այս չէր նշան Թէ Յովհաննէսի հուատքը խախտած էր, այլ թռնադասեջ Յիսուսը, որ այլ եւս խոստովանի հրապարակաւ ու հաստատէ Մեսիայական Սագաւորութիւնը, զոր գուշակած էին Նահապետք ու Մարգարէք (Ծննդ. ԽԹ. 10: Ես. Թ. 6-8: Դան. Թ. 24-27):

4. Յիսուս ուղղակի չպատասխաներ, այլ ցոյց տալու համար Թէ Յովհաննէս ղեռ անդրդուելի է իւր հաւատքին մէջ, իւր գործերը կը յիշէ:

նոնց , Վրացէք , պատմեցէք Յովհաննէսին , ինչ որ լսեցիք ու տեսաք : *5 Կոյրերը կը տեսնեն , կաղերը կը քալին , բորոտները կը սրբուին , եւ խուլերը կը լսեն , եւ մեռելները յարութիւն ու աղքատները աւետիս կ'առնուն : *6 Եւ երանի անոր , որ իմ վրայով չ'գայթակղիր :

*7 Եւ երբ անոնք գացին , Յիսուս Յովհաննէսին վրայօք սկսաւ ժողովուրդներուն ըսել . «Անապատին մէջ ի՞նչ տեսնելու ելաք . հովէն շարժուած եղէ՞ք մը : *8 Հապա ի՞նչ տեսնելու ելաք . փափուկ հագուստներով զարդարուած մա՞րդ մը . ահա որոնք փափուկ լաթեր հագած են , թագաւորներու տուներու մէջ են : *9 Հապա ի՞նչ տեսնելու ելաք . մարգարէ՞ . այո՛ , կ'ըսեմ ձեզի . մարգարէէ ա՛յ աւելի մարգարէ : *10 Որովհետեւ ան է որուն համար գրուած է . «Ահա ես պիտի ղրկեմ իմ հրեշտակս քու երեսիդ առջեւէն , որ քու առջեւ քու ճամբաները պիտի պատրաստէ» :

*11 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի . կնիկներէն ծնուածներուն

գործեր , որք էին զօրուոր ու անժխտելի փաստ իւր Մեսիայութեան , մինչդեռ Յովհաննէս հաստ մը անգամ չունէր , զի ինքն էր ճրագ , մինչ միւսն էր լոյս արեւ , որ ըստ մարգարէութեանց աղքատներուն միանգամայն միխթարութիւն էր քարոզութեամբ Աւետարանի (Ծա. ԿԱ. 1) :

6. Մեղմիկ յանդիմանութիւն մըն էր այս , գուցէ Յովհաննէսին համար եւս , որ Յիսուսը կը բռնադատէր սպաժաման , զոր եւ երբեմն Յիսուսի մայրն ալ ըրաւ ու մեղմօրէն յանդիմանուեցաւ (Յովհ. Բ. 4) : Եւ այժմ իսկ քանինքր կան այս յանդիմանութեան արժանաւոր , որք կը զայթակղին , Թէ խնչու Յիսուս աստ արագ չհաստատեր իւր Թագաւորութիւնը :

7. Կարծել չտալու համար Թէ Յովհաննէսի հաւատքն է խախտած . Յիսուս « ի՞նչ կը կարծէիք Յովհաննէսը » , կը գոչէ . «Այսինքն ԹեՍեւ որ եւ վաղահասակ , որ երբեմն զայս ասեն եւ երբեմն զայն , եւ ոչ երբէք կան ի հաստատութեան . եւ ոչ երբէք նա երկնչէր ի նեղութեանց : Կամ Թէ որպէս եղէզն ի տղմուտ վայրս ծնանի , նոյնպէս եւ նա մեղաց եւ անօրէնութեանց էր ծնունդ , զի զսուտս բարբառէր » (Մործորեցի) :

8. Յովհաննէս ինչպէս յեղյեղուկ մարդ չէր , որ եղէզնի պէս ամէն հովէ շարժուէր , նոյնպէս չէր Թուլամորթ ու մեղկ , որ արդի կրած Թշուառութենէն , բանտարկութեան նեղութիւններէն յուսահատելով՝ Յիսուսի դիմած ըլլար , Այլ էր նա

9. Մեծագոյն մարգարէ , վասն զի եղած էր հրեշտակ Աստուծոյ , այսինքն կարապետն Մեսիայի եւ փրկութեան աւետատու մարգարէն , ուստի

մէջ Յովհաննէս մկրտիչէն աւելի մեծ ելած չէ, բայց երկնքի արքայութեան մէջ ամենէն պզտիկը անորմէ մեծ է: *12 Բայց մկրտիչ Յովհաննէսի օրերէն մինչեւ հիմայ երկնքի թագաւորութիւնը կը բռնադատուի, եւ զօրաւորները զայն կը յափշտակեն: *13 Արովհետեւ բոլոր օրէնք ու մարգարէներ մինչեւ Յովհաննէս մարգարէացան: *14 Եւ թէ որ կ'ուզէք ընդունիլ, ան է Եղիան, որ պիտի գար: *15 Ով որ լսելու ականջ ունի, թող լսէ: *16 Այս ազգը ընդունանք. նման է այն տղաներուն, որոնք հրապարակներու մէջ կը նստին, 17 Եւ կ'ըսեն. «Ձեզի փողեր զարկինք ու չ'խաղացիք, ողբացինք ու կոծ չըրիք»:

18 Յովհաննէս եկաւ չէր ուտեր ու չէր խմեր ու կ'ըսեն, «Անոր ներսը դեւ կայ»: *19 Որզի Մարգոյ եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, եւ կ'ըսեն. «Ահա մարդ մը ուտող ու խմող, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ. եւ իմաստութիւնը իրենց զաւակներէն արդարացաւ»:

Յիսուս կը խոստովանի անդէն. Թէ չէ ծնուած անոր պէս եւ անորմէ մեծ մէկը. «Ընդէր գայժակղիք ի հարցուած նորա, զի ոչ վասն իւր, այլ վասն աշակերտացն էր» (Մործսրեցի):

11. Բոլոր ձառընտիրք միաձայն կը մեկնեն Թէ, մարդ որքան որ գերագոյն ունենայ սրբութիւն ու արդարութիւն, քանի որ աշխարհիս մէջ է եւ ենթակայ մեղաց վտանգին, նա երկնքի արքայութեան մէջ եղող ամենէն փոքրին հաւասարը չէ: Եւ Թէ Քրիստոսի աշակերտներուն փոքրագոյնն է մեծ բան զՅովհաննէս մկրտիչ, վասն զի նա էր բարեկամ փեսային եւ փեսաւէր, իսկ Եկեղեցին է հարսն անարատ՝ երկնաւոր Փեսային: Այսքան մեծ ու յարգի կը նշանակէր Յիսուս նոր տնտեսութիւնը հինէն:

12. Այլ եւս պէտք չկայ սպասելու, կարծելով Թէ երկնքի Թագաւորութիւնը մօտ է. զայն ուժեղներ կը յափշտակեն ու կը մտնեն աստուածաշէն բերդին մէջ, այսինքն նորա որք կենդանի ու եռանդուն հաւատք ունին, զայն կը վայելին:

13. Ողջոյն Հին-Կտակարանն որ մարգարէութիւն էր, այժմ լրացած է: Մարգարէութիւնք կը դադարին այլ եւս, վասն զի հիմա եկած է նա. գորմէ կ'ըլլային մարգարէութիւնք:

14. Հրեայք կը կարծէին Թէ նախ Եղիա անձամբ պիտի գայ միւս աշխարհէն (Մարկ. Թ. 11), այս կարծիքը ջրելու համար նոյն իսկ Յովհաննէս ըսաւ երբեմն. «Ես չեմ Եղիան»: Յիսուս կ'ըսէ այժմ. «Եսա է Եղիան, որ պիտի գար», այսինքն հոգևով եւ զօրութեամբ Եղիայի (Ղուկ. Ա. 17):

*20 Այն ատեն սկսաւ նախատիլ այն քաղաքները , որոց մէջ անոր շատ հրաշները գործուած էին ու չ'ապաշխարեցին : 21 «Վա՛յ քեզի , Քորազին . վա՛յ քեզի , Բեդսայիդա , վասն զի թէ որ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշները որ ձեր մէջ եզան , շատ կանուխէն քուրձով ու մոխիրով անշուշտ ապաշխարած պիտի ըլլալին : 22 Բայց կ'ըսեմ ձեզի . դատաստանին օրը Տիւրոսի ու Սիդոնի երկրին՝ ալ աւելի զիւրին պիտի ըլլայ , քան թէ ձեզի : 23 Եւ դուն , Կափառնայում , մինչեւ երկինք մի բարձրանար . հապա մինչեւ դժոխքը պիտի իջնես , զի թէ որ Սոգոմի մէջ ըլլային այն հրաշները , որ քու մէջ եզան , անշուշտ մինչեւ այսօր պիտի մնային : 24 Բայց կ'ըսեմ ձեզի , թէ Սոգոմացիներուն երկրին՝ ալ աւելի զիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ քեզի :

15. Խօսքի այս ձեւով Յիսուս ստէպ կը հաստատէ ճշմարտութիւնը , այսինքն առանց բռնադատութեան , եւ յետոյ

16. Կը հեզնէ իւր ազգը , զայն նմանցնելով ստահակ տղայներու , որք չեն կարաւեր , երբ զուարթ երգեր լսեն , եւ չեն արտասուեր , երբ ողբեր լսեն . այսպէս Իսրայէլ Յովհաննէսը կը պատարակէր խտտամբեր վարքին համար , իսկ Յիսուսը կը նախատէր հակառակը ունենալուն համար , Յովհաննէսը զիւսմար ու Յիսուսը ցոփ հուշակելով , որ սուտ էին :

19. Այլ սակայն իմաստութիւնը շուտով արդարացաւ , վասն զի եզան այնպիսիներ , նոյն իսկ այդ ազգին մէջէն , զորս Աստուած իմաստուն ըրաւ վկայելու համար թէ Յովհաննէսին գործն էր գործ արդարութեան , բերելով զմարդիկ յապաշխարութիւն եւ Յիսուսին է նմանապէս գործ արդարութեան , բերելով զմարդիկ ի ճշմարիտ հաւատս :

20. Յիսուս կը նախատէ այն քաղաքները , վայելով , ուր հրաշներ էր գործած , Քորազինը որ հեռի էր Կափառնայումէն իբր երկու մղոն , Բեդսայիդան , Գեննէսարէթ ծովուն քով ի Գալիլեա , եւ Կափառնայումը , Տիւրոսն ու Սիդոնը յիշելով , որք դատաստանի օրն աւելի բիշ պիտի պատուհասուին , որքան այդ քաղաքները շատ աւելի : Տիւրոսն էր ամուր քաղաք ի Փիւնիկէ , զոր ի զուր Սաղմանասար հինգ տարի պաշարեց եւ Նաբուգոդոնոսոր զրեթէ տասներեք տարի : Աղէքսանդր յետ եօթնամսեայ պաշարման կործանեց զայն : Իսկ Սիդոն էր հին քաղաք , ծովեզերեայ , հեռի Պէրուէէ իբր քսան մղոն , այժմ Սայտա : Նուանեցաւ Բարբլացիներէն , Եգիպտացիներէն եւ Հռովմայեցիներէն : Կանուխ ի Փիւնիկէ քարոզեցաւ Աւետարանը (Գործք. ԺԱ. 19) :

*25 Այն ժամանակ պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ. «Քեանէ շնորհակալ եմ, ով Հայր՝ երկնքի ու երկրի Տէր, որ զայս իմաստուններէ ու գիտուններէ ծածկեցիր, ու յայտնեցիր տղաններու: 26 Այո ով Հայր, որովհետեւ այսպէս քու առջեւ հաճոյ եղաւ: *27 Ամէն բան իմ Հօրմէս ինձի տրուեցաւ. եւ մէկը չ'ճանչեր Որդին, բայց եթէ Հայրը. եւ մէկը Հայրը չճանչեր, բայց եթէ Որդին. եւ Որդին որուն ուզէ յայտնել: *28 Եկէք իմ քով, ով բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես զձեզ հանգստացնեմ: 29 Իմ լուծը ձեր վրայ առէք ու ինէ սորվեցէք, որ հեզ եմ ու սրտով խոնարհ: 30 Որովհետեւ իմ լուծը քաղցր է եւ իմ բեռը՝ թեթեւ:»:

25. Երբ եօթանասուն երկու աշակերտները կը գտնան ու Յիսուսի կը պատմեն, ինչ որ ըրած են, Յիսուս Սուրբ-Հոգևով կը խայտայ, որպէս կը գրէ Ղուկաս (Ժ. 17-23) . կը խայտայ, վասն զի իւր նուիրական նպատակն ու գործը կը տեսնէ յաշողպէս սկսուած, Աւետարանի լուսոյ նշոյլներն անդէն, արդէն իսկ ճառագայթուած: Այսպէս մեր սիրտերն եւս ո՛րքան կը խայտան, երբ մեր աւաքիի բարուցն ու վարուց, մեր խօսքերուն ու գործերուն երեսէն շատեր կը հաստատուին ի հաւատս: Յիսուս ոչ թէ միայն կը խայտայ իւր Սուրբ-Հոգևով, այլ եւ կը գոհանայ, որ աստուածային գաղտնիքը կը մտնէր ու կը ներգործէր խոնարհ ու տգէտ, աղքատ ու աննշան մարդերու, այլ ոչ իմաստուն ու գիտուն կարծուածներու, որք էին դպիրներ ու Փարիսեցիներ: Այս է միշտ անհասանալի կամքն Աստուծոյ, որ գիտէ ընտրել այս կամ այն ազգն ու դարը եւ կամ անձը տալու համար իւր շնորհը:

27. Կը հաստատէ իւր աստուածութիւնը, քանի որ Հօրմէն իրեն տըրուած էր ամէն բան, զոր ճանչել Որդևով միայն կարելի է, եւ այն եւս այնքան որքան՝ Որդին ուզէ յայտնել:

28. Կը մխիթարէ վշտաբեկ մարդկութիւնը, յորդորելով որ առնու իւր լուծը, Թե՞Թեւ ու քաղցր: Մեղքը տիրած էր մարդուն ու ընկճած. այս է ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ բեռնաւորութիւնն ու խոնջէք: Այժմ Յիսուս հանգիստ տալ կը խոստանայ մեր հոգւոյն ու մարմնոյն, պատուիրելով իրեն պէս հեզ ու խոնարհ սիրտ ունենալ, այսինքն բանալ մեր սրտերը, որպէս զի Աստուծոյ շնորհաց հունտերն՝ որք հոն կան, Աւետարանի սուրբ չրով ուղղուելով, բողբոջին ու ծաղկին եւ պտղաբերեն:

ՊԼՈՒԹ ԺԲ.

*1 Այն ատեն Յիսուս գնաց շարաթ օրը անոնց արտերուն մէջէն, եւ անոր աշակերտները անօթեցան ուսկսան հասկ փրցնել եւ ուտել: *2 Փարիսեցիները երբ տեսան, կ'ըսեն անոր. «Ահա քու աշակերտներդ կ'ընեն այն բանը զոր շարաթ օրը պէտք չէ ընել»: *3 Եւ ան կ'ըսէ անոնց. «Կարդացած չէք, ինչ որ Դաւիթ ըրաւ, երբ անօթեցաւ, եւ որոնք անոր հետ էին, ըէն: 4 Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը ու կերաւ Առաջաւորութեան հացը, զոր ուտել անոր օրէնք չ'կար, եւ ոչ անոնց ալ՝ որոնք անոր հետ էին, բայց միայն քահանաներուն: *5 Կամ թէ Օրէն-

4. Յիսուս արտերու մօտէն կ'անցնի. իւր աշակերտներն որ անօթեցած էին, կ'սկսին ցորենի հասկեր փրցնել եւ ընդ փն շփելով ուտել: Այս կը նշանակէ թէ Յիսուսի աշակերտք այնքան ազքատ էին, որ կարօտ կը մնան մինչեւ իսկ ցորենի հասկերու: Յիսուս արտերու մօտէն կ'անցնի, անշուշտ ի նշանակ փրկութեան այն հոգւոց, որք ընդունելով Աւետարանի փրկարար վարդապետութիւնը, նման ատոր հասկերու, պիտի ծաղկէին իւր արքայութեան մէջ: Այս մտք միթէ չէր ըսած երբեմն իւր աշակերտներուն. «Տեսէք զարտորայան, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» եւ թէ «Հունձք բազում են»: Հունձն, այն մարդկութիւնն էր, որ պիտի ընդունէր Աւետարանը, եւ աշակերտք այժմէն իսկ աստուածային խորհրդաւոր իմն տնօրինութեամբ սկսան հասկ կորզել, այսինքն կորզել զմարդիկ յաշխարհէն մեղաց:

2. Փարիսեցիք, որք ամէն մանր-մունր բաներու մէջ խժժող էին, կը գայժակդին: Կը գայժակդին ոչ թէ աշակերտներու այս գործը գողութիւն նկատելով, զի Օրէնքը ներած էր, «Մի մանգաղ յոճ արկանել, այլ միայն հասկ կորզել», այլ թէ շարժու պղծութիւն համարելով, եւ թէ օրէն էր յետ արմտեաց օրհնութեան ի բրահանայից, ժողովրդեան մօտիլ ի հունձս, եւ տակաւին այս օրհնութիւնը կատարուած չէր, ուստի ալ ւաւելի գայժակդական կը կարծէին աշակերտաց այս գործը:

3. Սակայն Յիսուս ցոյց տալու համար թէ իւր աշակերտաց այս գործն այնքան մեղադրանաց արժանի բան մը չէ, կը պատասխանէ. «Դուք կարդացած չէք, ինչ որ Դաւիթ ըրաւ, երբ անօթեցաւ, եւ նորա որք իւր հետ էին: Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը եւ Առաջաւորութեան հացը կերաւ,

քին մէջ կարդացած չէք, որ քահանաները շարաթը կը պղծեն ու անմեղ են : *6 Բայց կ'ըսեմ ձեզի, թէ տաճարէն աւելի մեծը կայ հոս : *7 Եւ թէ որ գիտնայիք, ի՞նչ է «Ողորմութիւնը կ'ուզեմ ու չէ թէ զոհը» . ուրեմն դուք չէիք դատապարտեր անպարտները : *8 Վասն զի Որդի մարդոյ Տէրն է շարաթին :

*9 Եւ Յիսուս անկէց երթալով եկաւ անոնց ժողովարանը : *10 Եւ հոն կար մարդ մը որուն ձեռքը գօսացած էր . հարցուցին անոր ու կ'ըսեն թէ «Շարաթ օրը բժշկել պէտք է» . որպէսզի անոր վրայօք շարախօսութիւն ընեն : *11 Եւ ան կ'ըսէ անոնց . «Ձեռնէ որ մարդն է որ մէկ ոչխար ունենայ, եւ այն իյնայ շարաթ օրը փոսի մէջ, միթէ չը

որուն ներքի չէր, եւ ոչ նոցա, որք իւր հետն էին, այլ միայն քահանայից» : Դաւթի անունը Հրէից մէջ մեծ էր, ուստի Յիսուս Դաւթի եւ նորա ընկերաց օրինազանցութեան մէկ գործը կը յիշէ : Դաւիթ թէեւ մարգարէ էր, այլ ոչ քահանայ, բայց որպէս զի Փարիսեցիք յիշատակելով Դաւթի ՕՄՈՒՄԸ, ի Թագաւորութիւն, չպատճառարանեն, Յիսուս կը յիշատակէ նորա ընկերներն եւս, որք ոչ մարգարէ էին եւ ոչ ունէին Թագաւորական օժուան շնորհաց, ուստի երբ Դաւթի նման ի կրօնս անուանի նախանձույտյզ մը՝ բնական հարկին առջեւ խոնարհելով կը պղծէ օրէնքը, ուրեմն իւր աշակերտք եւս մեղադրելի չէին, զի մղուած էին յայն գործ բնական պիտէ ստիպուած :

5. Ապա Տէր Յիսուս ուրիշ օրինակ մը եւս կը բերէ . «Ձէք կարդացած Օրէնքին մէջ, թէ շարաթ օրերը քահանայք տաճարին մէջ կը պղծեն շարաթը, եւ անմեղ են» : Ո՛վ մեծի իմաստութեան Տեսուն : Նա ինքն Յիսուս քահանայները մատնանիշ ի ցոյց կը հանէ, որք շարաթ օրերը Թլփատութիւն կը կատարէին, փայտ կը կտրտէին, խարոյկ կը վառէին, կը զոհագործէին, զոհին ճարպն ու արիւնը ի սեղան կը հանէին եւայլն, արդ սոքա անբամբաս կը մնան, էր ուրեմն բամբասուին Յիսուսի աշակերտք : Ուրեմն Փարիսեցւոց գայթակղութիւնը կեղծ էր, արդիւնք էր այն ատելութեան զոր ունէին առ Յիսուս, եւ Փարիսեցիք այս մեղադրանքն ըրին Յիսուսի փայլուն պատիւը միամիտ ժողովրդեան առջեւ նսեմելու համար : Այլ սակայն Յիսուս առիթէն օգուտ քողելով, աւելի ծանր խօսք մը կ'արտասանէ, ծանր Փարիսեցի ոսկանջներու .

6. «Բայց կ'ըսեմ ձեզի, թէ տաճարէն աւելի մեծը կայ հոս», այսինքն քահանայութեան եւ տաճարին Տէրը կայ հոս . — ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ո՛Ն օրինակը :

բռններ ու զայն չը հաններ : ¹² Ուրեմն մարդն ո՛րքան աւելի է ոչխարէն . ուստի պէտք է շարաթ օրը բարիք ընել : ¹³ Այն ատեն կ'ըսէ մարդուն . « Գու ձեռքդ երկնցուր » . եւ ան երկնցուց ու միւսին պէս առողջ եղաւ : ¹⁴ Իսկ Փարիսեցիները դուրս ելլելով անոր վրայօք խորհուրդ ըրին թէ ի՞նչպէս զանի կորսնցունեն :

¹⁵ Եւ Յիսուս երբ գիտցաւ , անկէց հեռացաւ . եւ շատ ժողովուրդներ անոր ետեւէն գացին , ու ամենքը բժշկեց : ¹⁶ Եւ անոնց խտիւ պատուիրեց որ մէկու մը զինքը չ'յայտնեն . ¹⁷ որպէս զի կատարուի . ինչ որ ըսուեցաւ Եսայի մարգարէին ձեռքով . ¹⁸ « Ահա իմ Մանուկս զոր ընտրեցի ու իմ սիրելիս որուն իմ անձս հաւնեցաւ , անոր վրայ պիտի դնեմ իմ Հոգիս ու Հեթանոսներուն պիտի

7. Յիսուս անմիջապէս Սուրբ-Գրքէն վկայութիւն մը եւս յիշելով կը կարկէ բոլորովին Փարիսեցի բերանները . « Եթէ զիտէիք , զինչ է . « Ձողորմութիւն կամիմ եւ ոչ զգոհ » . Եւ ոչ զատուարտէիք դուք զապարտան » : Քահանայք անմեղ կը համարուին , որք շաբաթը կը պղծեն տոնարին մէջ , զոհի գործը նախընտրելով , մինչդեռ բերանն Աստուծոյ խօսած էր թէ ողորմութիւնն պատարագէ աւելի մեծագոյն է . ողորմութիւնն Աստուծոյ հաճելի է զոհէ աւելի : Յիսուսի աշակերտք մարդկային ընդհանուր ժողովրդոց ողորմութեան գործին համար Յիսուսի ետեւէն գացած էին , անօթի կը պտըտէին Յիսուսի հետ , եւ այն եւս անտրտունչ , որպէս զի օր մը անօթի մարդկութիւնը կշտացնեն Աւետարանի հոգեպարար հասցով :

8. Ի վերջոյ Յիսուս յապշութիւն Փարիսեցուց եւ ի կորսնս՝ իւր աստուածային փառքը , Մեսիայական այս գերագոյն շնորհն հրապարակաւ ի հանդէս հանելով , համարձակօրէն կը կնքէ իւր խօսքը . « Զի տէր է շաբաթու Որդի մարդոյ » :

Աշակերտներուն շաբաթ օրը հասկ կորզելը կը գրեն Մարկոս (Բ. 23-28) եւ Ղուկաս (Զ. 1-5) :

9. Միւս այսինքն յաղորդ շաբաթ օրը ըստ Ղուկասու (Զ. 6-11) ,

10. Նորէն Յիսուսը կը փորձուի թէ կը պահէ արդեօք շաբաթը բժշկութիւն չընելով . այլ Յիսուս կշտամբելու համար թէ սոցա գործերն երբէք համապատասխան չեն իրենց խօսքերուն , մինչ զի առ սէր շահու միշտ օրինազանց են , եւ շաբաթ օրուան մէջ բարի բան մը ըրած կը համարին , ողորմելով անասուններուն , քան թէ մարդու , ուստի ցոյց տալու համար թէ մարդն անասունէ ո՛րքան յարգի է , եւ մարդուն ողորմին ո՛րքան աստուածահաճոյ քան անասունին , կ'ըսէ .

պատմէ : 19 Պիտի չհակառակի ու պիտի չ'աղաղակէ ու անոր ձայնը մէկը պիտի չլսէ հրապարակներու մէջ : 20 Չախջախուած եղէգը պիտի չփչրէ , եւ պլպլած պատրոյկը պիտի չմարէ , մինչեւ յաղթութեամբ դատաստանը ի գլուխ հանէ . 21 եւ Հեթանոսներէն անոր անուան պիտի յուսան :

*22 Այն ատեն անոր քով կոյր ու համր դիւանար մը բերուեցաւ , ու բժշկեց զանի , այնպէս որ համրն ու կոյրը խօսի ու տեսնէ : 23 Բոլոր ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին . « Արդեօք աս է Դաւթի որդի Քրիստոսը » :

*24 Բայց Փարիսեցիներն երբ լսեցին կ'ըսեն . « Ատիկայ ուրիշ բաներով դեւերը չհաներ , բայց եթէ դեւերու իշխան Բէեղզբեուղով » : 25 Յիսուս երբ գիտցաւ անոնց խորհուրդները կ'ըսէ անոնց . « Իր մէջ բաժնուած ամեն թագաւորութիւն կը կործանի . եւ իր մէջ բաժնուած ամեն քա-

13. « Երկնցուր ձեռքդ » . եւ կը բժշկէ զօսացած ձեռքը յամօժ եւ ի կորանս Փարիսեցիներու եւ ի զրգիւ Քննամուծեան նոցա , ուստի

15. Յիսուս կը խուսափէ վտանգէ , զի դեռ հասած չէր ժամանակը , կ'երթայ այլուր , ծովեզրը (Մարկ. Գ. 4-12) , ուր շատեր կը բժշկէ , պատուիրելով որ չհռչակեն զինքը . « Ոչ միայն առանց շահուց զբարիս՝ նոցա առօէր , այլ եւ զանձին զովուծիւն ի բաց մերժէր » (Մործորեցի) :

18. Արդէն գուշակուած էր մարգարէէն (Ես. ԽԲ. 4-4) , թէ նա լռիկ մնչիկ պիտի գործէր , այնքան մեղմով , որ շախչախուած եղէգը չփչրուի , այսինքն մեղաւորին դիւրարեկ սիրտը . եւ պլպլած պատրոյցը չմարի , այլ աւելի լուսաւորուի . եւ ինքն Յիսուս , որ ծառայ եղած էր , ոչ թէ միայն Հրէից , այլ եւ Հեթանոսաց փրկուծեանն համար մարդանալով , մեղաց մարմինը առնելով , պիտի ընէր յաղթութիւնը , մանաւանդ դատաստանի օրը (Ես. ԽԲ. 12-21) : Մործորեցի կը գրէ . « Եղէզն խորտակեալ՝ ժողովուրդ Հրէից էր , զոր ոչ երեկ , այլ ողջացոյց . իսկ պատրոյցն՝ օրէնքն էր ի յանց եկեալ , զոր ոչ շիջոյց , այլ ելից եւ կատարեաց » :

22. Ինչ որ ցարդ կը պատմէ Մատթէոս , եղած են , որպէս կը թուի , Հեռան-բարոզէն առաջ , Հարիւրապետի ծառայէն զատ , որ եղաւ յետոյ , եւ այս հրաշքը , զոր ընելով Յիսուս ժողովուրդն ի հաւատս զրգոեց թէ ինքն է Դաւթի որդին՝ Քրիստոսը :

24. Փարիսեցիք կ'զարին նորէն եւ կը պնդեն թէ Յիսուս դեւերը կը հանէ զօրուծեամբ Բէեղզբեուղի , այլ Յիսուս ըմբերանելու համար զանոնք , որոց աշակերտներն՝ որք կը կոչուէին Երդմնեցուցիչ , իբր թէ դեւեր կը հանէին զօրուծեամբն Աստուծոյ , եւ թող որ պիտի հանէին արդարեւ

դաք կամ տուն, պիտի չկենայ: *26 Եւ թէ որ սատանայ սատանան կը հանէ, իր մէջ բաժնուեցաւ. ուրեմն ի՞նչպէս անոր թագաւորութիւնը պիտի կենայ: 27 Եւ թէ որ ես Բէեղզեբուղով կը հանեմ դեւերը, ձեր որդիներն ի՞նչով պիտի հանեն. անոր համար անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները: *28 Բայց եթէ ես Աստուծոյ Հոգւով կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեր վրայ հասած է: *29 Կամ ի՞նչպէս մէկը կրնայ մտնել զօրաւորի մը տունը ու անոր կարասիները յափշտակել, թէ որ առաջ չկապէ զօրաւորը. եւ յետոյ անոր տունը կը յափշտակէ: *30 Ով որ ինծի հետ չէ, ինծի հակառակ է. եւ ով որ ինծի հետ չժողվիր, կը ցրուէ: *31 Ատոր համար կ'ըսեմ ձեզի. բոլոր մեղքեր ու հայհոյութիւններ մարդիկնե՛րուն պիտի ներուին. բայց Հոգւոյն դէմ հայհոյութիւնը պիտի

(Գործք. ԺԹ. 43), կը զրուցէ. « Թէ որ ես Սատանայով Սատանայն կը հանեմ, ձեր զուակներն ինչով պիտի հանեն », այսինքն կը պնդէին թէ իրենք ու իրենց աշակերտներ կրնային դեւեր հանել, այլ այժմ կ'ամաչէին ըսել թէ Սատանայի օգնութեամբ կը հանեն: Աստուած թոյլ տուած է որ սուտ մարդիկ իւր անունով հրաշագործեն (Ելք. Է. 22: Ը. 7: Բ. Օր. ԺԳ. 1-5: Մատթ. ԻԴ. 24): Եւ կային այնպիսիներ եւս, մարգարէներու որդիներ, որք զիտակ էին մինչեւ իսկ աստուածային զողոնեաց (Դ. Թագ. Բ. 3):

26. Չարը միշտ չար կը գործէ, ուստի Սատանայ որ բնութեամբ չար է, բարի բան չիրնար ընել: Նա միշտ միաբան է. բարւոյն թագաւորութեան դէմ բռնուած չէ իւր մէջ:

28. Նա դեւեր հանելով Հոգւովն Աստուծոյ, կը հաստատէր թէ երկնքի թագաւորութիւնը հասած է:

29. Զօրաւոր եղած էր Սատանայն տիրելով աշխարհիս, այսինքն ըրած էր մարդութիւնը իրեն ստացուած, այս էր դիւահարութիւնը: Բայց Քրիստոս հօգորագոյն ըլլալով կապեց այդ հօրը (Ղուկ. ԺԱ. 22):

30. Աշխարհիս մէջ երկու կուսակցութիւններ կան, մին Յիսուսի կողմն է եւ միւր ոչ. չէզոքութիւն չկայ: Ով որ բարւոյն համար չգործեր, չարին համար կը գործէ: Ծործորեցին կը գրէ. « Որ ոչ միւսնայ ընդ իս հաւատովք, նա ինքն Սատանայ է. եւ որ ոչ ժողովէ ընդ իս գործովք, ցրուէ նա ընդ դեւս քանձն իւր, բանգի կոչի եւ Սատանայ Դիւապօլուս, որ է ցրուեալ »:

31. Կանուխէն մարգարէութիւն կար, «վա՛յ նոցա, որք չարին բարի

հներուի : *32 Եւ ով որ Որդւոյ Մարգոյ վրայօք խօսք ըսէ ,
անոր պիտի ներուի , բայց ով որ Սուրբ Հոգւոյն վրայօք
ըսէ , անոր պիտի հներուի , ոչ այս աշխարհիս մէջ ու ոչ չալ
հանդերձեալին մէջ : *33 Կամ ծառը բարի ըրէք ու անոր
պտուղը բարի , եւ կամ ծառը չար ըրէք ու անոր պտուղը
չար . որովհետեւ ծառը պտուղէն կը ճանչցուի : *34 Իժե-
րու ծնունդներ , ի՞նչպէս կրնաք բարի բաներ խօսիլ դուք
որ չար էք . որովհետեւ սրտի աւելորդէն բերանը կը խօսի :
35 Բարի մարդը իր սրտի բարի գանձերէն կը հանէ բարի
բաները , եւ չար մարդը իր սրտի չար գանձերէն կը հանէ
չար բաները : *36 Բայց կ'ըսեմ ձեզի . ամեն դատարկ խօս-
քի համար զոր կը խօսին մարդիկ , դատաստանի օրը հա-
շիւ պիտի տան : *37 Որովհետեւ քու խօսքերէն պիտի ար-
դարանաս ու քու խօսքերէն պիտի դատապարտուիս :

կ'ըսեն ու բարւոյն չար (Եւ. Ե. 20) : Զարագոյն մեզ է մարդո- մը , այն
բանը չար ըսել , զոր գիտէ թէ բարի է : Ստատանային տալ բարեգործու-
թեան հանգամանք , կը նշունակէր հայհոյել Սուրբ-Հոգւոյն : Այս մեղքը կը
գործէին Փարիսեցիք , զոր Ծործորեցի գեղեցիկ կը մեկնէ , գրելով . « Որ
սա շնորհաբաշխն եւ երախտագործն ապաշնորհ լինիցի եւ հայհոյէ եւս ,
անհնարին յանցանք են , մի թողցի նմա . զայս իմն արարածոյ սա Արա-
րիչ » :

32. Եւ Յիսուս վերստին կը խոնարհի իւր անձին դէմ մեղքն սա ոչինչ
համարելով , բայց աններելի Սուրբ-Հոգւոյն դէմ եղած մեղքը : Ուրեմն
կան մեղքեր , որք կը ներուին հանդերձեալին մէջ , որոց տէրեր ե՞ն ունին
ձգած բարեգործական յիշատակներ աշխարհիս մէջ , կամ բարեգործ գա-
ւակներ :

33. Ծառը որ մարդն ինքն իսկ է եւ է շնորհք Աստուծոյ , բարի ընել .
եւ բարի պտուղ տալն՝ է մեր իմաստութիւնը գործածել ի բարին , եւ ոչ
թէ ի չարն :

34. Յիսուս կը սաստէ նոցա , որոնք իմերու թոյն ունէին իրենց սրտե-
րուն մէջ եւ թոյն , չար կը Յափէին իրենց բերնէն , վասն զի սիրտն է
գանձարան , որոյ դռնէն ալսինքն բերնէն կ'ելլէ չար կամ բարի :

36. Եւ մարդ ոչ թէ չար խօսքի մը համար հաշիւ պիտի տայ , այլ եւ
դատարկ խօսքի մը համար , գատաստանի օրը , վասն զի այս ալ չէ բարի
գանձէ , այլ չարէ :

37. Ո եւ է վերջին դատապարտութիւն պիտի ըլլար բերանացի խոս-
տովանութենէ յետոյ , այս էր զլիաւոր կանոն արդարութեան : Ծործորեցի

*38 Այն ատեն անոր պատասխան տուին դպիրներէն ու Փարիսեցիներէն շատեր, ու կ'ըսեն. « Վարդապետ, քենէ նշան մը տեսնել կ'ուզեմք »: Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. *39 « Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ, եւ նշան պիտի չտրուի անոր, բայց եթէ Յովնան մարգարէին նշանը: *40 Վասն զի ինչպէս որ Յովնան երեք օր ու երեք գիշեր խոշոր ձուկի մը փորին մէջ էր, նոյնպէս ալ Որդի մարդոյ երեք օր ու երեք գիշեր երկրի սրտին մէջ պէտք էլլայ: *41 Նինուէի մարդիկ դատաստանի օրը այս ազգին դէմ պիտի ելլեն, ու պիտի դատապարտեն զասի, որովհետեւ Յովնանի քարոզութեամբ զղջացան. եւ հիմայ ահա Յովնանէն մեծը կայ հոս: *42 Հարաւի թագունին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ զասի, որովհետեւ աշխարհի ծայրերէն Սողոմոնի խմաստութիւնը լսելու եկաւ. եւ ահա Սողոմոնէն մեծը կայ հոս: »

կը գրէ. « Զիրուունս ատենին այնորիկ ուսուցանէ մեղմով, զի Թէպետ բազում սուտ վկայք զբէն վկայեն, ասէ, ոչինչ վնասեն քեզ, այլ որովք դու տայցես վճիռ, դատաւորն զայն վճռէ, ըստ այնմ որպէս լսեմն, դատեմ. եւ Թէ ի բերանոյ բումմէ դատեցայց զքեզ »:

38. Դպիրներէն ու Փարիսեցիներէն շատեր երկնքէն հրաշք կը պահանջեն Յիսուսէն (Ղուկ. ԺԱ. 15): Երրժորեցին կը գրէ. « Կամ տալ հաց որպէս յանապատին, կամ արգելուլ զարեգակն եւ զլուսին, որպէս զՅեսուսայն եւ զԵզեկիոյին, եւ կամ կարկտիւ եւ խաւարաւ տանջել զայլազգիս, որպէս Մովսէս զՆօգիպտոսցիս, կամ որտուոմն լինել, որպէս Սամուէլին, եւ այլ տոյնպիսիս՝ որ պատմի ի գիրս »: Մինչդեռ Յիսուս աւելին ըրած էր ու կ'ընէր (Ղուկ. ԺԱ. 24-36):

39. Կ'անուանէ իւր ազգը չար ու շնացող. որպէս ի հնունս իսրայէլ իւր Տէր Աստուածը Պողոպ ու կուռքեր պաշտելով իւր սիրտը տուաւ աստուածներու կամ չարութեան ու մոլութեանց եւ նմանեցաւ շնացողի (Ես. ԾԷ. 3: Երեմ. Գ. 1-6: Եզեկ. ԺԶ. 15-50: Ովսէ Գ. 1), այս անգամ Տէր Յիսուս նոյնը կը շեշտէ:

40. Այս մեծագոյն նշանը պիտի տար Յիսուս, միայն Թէ չեղաւ ճիշդ երեք օր ու զիշեր աշխարհիս սրտին մէջ, այլ երեք զիշեր եւ երեք ցերեկներ. մէկն ամբողջ, միւս երկուքներն իրենց մասերովը, զի ըստ Սուրբ-Գրոց եւ մինչեւ իսկ ըստ Թալմուտի՝ օրուան մասն ալ օր մըն է (Եննդ. ԽԲ. 17-19: Բ. Մնաց. Ժ. 5-12: Եսծեր Է. 2): Յովնան էր մարգարէ,

*43 Բայց երբ պիղծ ոգին մարդէ ելլէ , անջրդի տեղեր կը պտրտի . հանգիստ կը փնտռէ ու չգտնելու 44 Այն ատենն կ'ըսէ . « Իմ տունս դառնամ , ուսկէց ելայ » . եւ գալով՝ զայն կը գտնէ պարապ , մաքրուած ու շտկուած : 45 Այն ատեն կ'երթայ ու իր հետ կ'առնու ուրիշ եօթը ոգիներ իրմէն աւելի չար , ու մտնելով հոն կը բնակի . եւ այն մարդուն վերջինը առջինէն աւելի գէշ կ'ըլլայ : Այս չար ազգին ալ այնպէս պիտի ըլլայ » :

*46 Երբ ան ժողովուրդներուն հետ կը խօսէր , ահա անոր մայրը ու անոր եղբայրները դուրսը կը կենային ; եւ անոր հետ խօսիլ կ'ուզէին : 47 Եւ մէկը կ'ըսէ անոր . « Ահա քու մայրն ու քու եղբայրները դուրսը կը կենան ու քեզի հետ խօսիլ կ'ուզեն » : Ան պատասխան տուաւ անոր՝ որ

825 ին նախ քան զՔրիստոս . հրաման առաւ երթալ ի Նինուէ քարոզու-
թեան , այլ անհնազանդ եղաւ . ծովը նետել տուաւ ինքզինքը , ուր խոշոր
ձուկի մը փորին մէջ մնաց երեք օր ու երեք գիշեր , օրինակ Յիսուսի ե-
րեք օր ու գիշեր գերեզմանի մէջ մնալուն . յետոյ ձուկը փսիսեց Յովնանը
ի ցամաք , որ զնաց ի Նինուէ եւ քարոզեց (Յովն. Ա.—Գ.) :

41. Նինուէ դէմ դիմաց է Մուսուլի եւ հիմնեցաւ Ասուրէ (Ծննդ. Ժ.
11) . աւերակներն որ կան ցարդ , վկայ են , թէ որպիսի փառաւոր քաղաք
էր ի հնումն . թէեւ ապաշխարեց , լսելով Յովնանի քարոզութեան , այլ
կործանեցաւ իբր 200 տարիէն յետոյ , նախ քան զՔրիստոս 633 ին :

42. Հարաւի Թագուհին այսինքն Սաբայի , յԱրարիս (Գ. Թագ. Ժ.
1-13) , լսելով Սողոմոնի իմաստութիւնը , ի հեռատանէ եկաւ , ուրեմն
Թէ սա եւ թէ Նինուէացիք պիտի դատէին այս ազգը , որ թէեւ վարդապետ
կը կոչէր Յիսուսը , կեղծաւորաբար , վասն զի չէր հաւատար , այլ անեղ
դատաստանի օրը անեղազոյնս պիտի պատժուէր , քանի որ Յովնանէն ու
Սողոմոնէն մեծը տեսած էր ու չէր ապաշխարած :

43. Երբ մարդ ո եւ է փորձութենէ կ'ազատի , կամ բարոյական փոփո-
խութիւն մը կը կրէ , չարագոյն կ'ըլլայ իւր վիճակ , եթէ անզոյշ մնայ .
վասն զի անգամ մը համն առնու , որմէ յետոյ բարշի , այլ ապա Թոյլ տայ
նոյն մոլութեան , որ յինքն մտնէ , ներգործէ իրեն , յայնժամ նոյն մոլու-
թեան ետեւէն կը յազորոն իրարու ուրիշներ , կամ մոլութիւնք համա-
խուսք կը հասնին . այս է չարագոյն վիճակը : Դատարկանալ զեւերէ բա-
ւական չէ , այլ պէտք է լցուիլ Հոգւով-Սրբով . զեւերու անբնակ ու ամայի
տեղեր քաշուիլն է աւժամեայ պատիժ , վասն զի կ'արգիլուին չարիք ը-
նելէ , եւ այս է անհնազատութիւն նոցա : Չարերու համար ալ այսպէս չէ :

ըսաւ իրեն , ու կ'ըսէ . « Ո՞վ է իմ մայր , կամ ո՞րոնք են իմ եղբայրները » : 49 Եւ իւր ձեռքը երկնցնելով աշակերտներուն , կ'ըսէ . « Ահա իմ մայրս ու իմ եղբայրներս » : *50 Որովհետեւ ով որ կը կատարէ իմ Հօրս կամքը , որ երկինքն է , ան է իմ եղբայր եւ քոյր ու մայր » :

ՔԼԱՌԻԹ ՓՊ.

*1 Այն օրը Յիսուս տունէն ելլելով ծովեզերքը նըստաւ : *2 Եւ անոր քով շատ ժողովուրդներ հաւաքուեցան , այնպէս որ նաւը մտաւ ու նստաւ . եւ բոլոր ժողովուրդը ծովեզերքը կը կենար : *3 Եւ առակներով շատ բաներ խօսեցաւ անոնց ու կ'ըսէր : *4 « Ահա հուշտ ցանողը սերմանելու ելաւ . եւ ցանելու ատեն ճամբուն քով ընկնող եղաւ , եւ երկինքի թռչունը գալով զայն կերաւ : 5 Եւ ու-

46. Մայրն ու իւր եղբայրներ կարծելով թէ Յիսուս զբաղելով նորօրինակ մէկ գործով (Մարկ. Գ. 31-35 : Ղուկ. Ը. 19-24) գուցէ անձին վըտանգէ , եւ մինչեւ իսկ կարծեցին թէ մոլեգնած է (Մարկ. Գ. 21), կը բաղձան տանիլ ի տուն : Այլ Յիսուս ցոյց տալու թէ ոչ իսկ մայր կամ ո եւ է ազգական նախամեծար չեն , և չեն կրնար արգելք ըլլալ իւր սուրբ նպատակին , ուստի կը հասկըցունէ թէ ժայրագոյն զոհողութեամբք եւ եթ կարելի է փրկուիլ ու փրկել ուրիշները : Իսկ թէ հըբ են Յիսուսի եղբայրներն . տես ի մեկնութիւնն (Մատթ. թՊ. 55) :

50. Ո՞վ զեզեցիկ խրատ ամէնուս ու ապահով խոստում . վասն զի ով որ որբան կը կատարէ Աստուածային պատուէրները , այնքան կը մօտենայ Աստուծոյ , այսինքն Քրիստոսի կը լինի եղբայր ու քոյր եւ մայր , այլ ոչ երբէք հայր :

1. Կ'երևի թէ Յիսուս իրեններուն հետ զնաց ի տուն :

2. Յետոյ այն օրը նստաւ ծովեզրը , ուր շատ ժողովուրդ հաւաքուած տեսնելով , նստաւ ի նաւ . « Զի մի զոք ի թիկանց ճողոցու , այլ զամենսեան ի դիմի կացուցէ , և առանց խափանածուի զվարդապետութիւնն ամենեցուն պատմեցէ » (Մործորեցի) :

3. Առակն է խօսքի ձև մը , որ կ'առնուի մարդկային կենաց գործերէն կամ բնութենէն , իբր օրինակ կամ նմանութիւն : Բովանդակ մարդկութիւնը

րիչն ընկաւ ապառափի վրայ, ուր շատ հող չկար. եւ չուտով բուսաւ հողը հիւթեղ չըլլալուն համար. 6 արեւը ծագելուն պէս խաչեցաւ, եւ որովհետեւ արմատներ չկային, չորցաւ: 7 Եւ ուրիշն ընկաւ փուշերու մէջ, եւ փուշերն ելան ու խղզեցին զայն: 8 Եւ ուրիշն ընկաւ աղէկ հողի մէջ ու պտուղ կուտար, որը հարիւր եւ որը վաթսուն եւ որը երեսուն: 9 Ով որ լսելու ականջ ունի, թող լսէ»:

*10 Եւ աշակերտները մօտենալով կ'ըսեն անոր. « Ի՞նչու առակներով անոնց հետ կը խօսիս»: *11 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. « Որովհետեւ ձեզի տրուած է գիտնալ երկնքի թագաւորութեան խորհուրդները, եւ անոնց տրուած չէ, 12 Որովհետեւ ով որ ունի, անոր պիտի տրուի ու պիտի աւելնայ. եւ ով որ չունի, ունեցածն ալ անորմէ պիտի առնուի»: *13 Անոր համար առակներով կը խօսիմ անոնց հետ, վասն զի կը տեսնեն ու չեն տես-

սրեց առակները, վասնզի ճշմարտութիւնն այս ձևին տակ յայտնել ու ժողովրդեան սրտին մէջ տպաւորել, թէ դիւրին է և թէ անործելի: Մարգարէներն առակեցին, որպէս և այժմ Յիսուս, այլ Յիսուսի բոլոր առակներն էին պարզ ու որոշ, զի ունէին նպատակ հոգեւոր ու յաւիտենական ճշմարտութիւններ ընդ բոլոր իմն աւանդել մարդկութեան: Առակ մը մեկնելու համար հարկ չկայ մանր մունր բառերու մեկնութիւն տալ, այլ նկատելու է նպատակը միայն. միւսներն են զարդ: Իսկ թէ քննէ առակին նպատակը շատ անգամ կը բացատրուի առակին սկիզբը (Ղուկ. ԺԼ. 9: ԺԹ. 41), կամ վերջը (Մատթ. ԻԵ. 13: Ղուկ. ԺԶ. 9-13), երբեմն թէ սկիզբը և թէ վերջը (Մատթ. ԺԼ. 23. 35: Ի. 4. 16: Ղուկ. ԺԲ. 15. 21): Եւ այս բացատրութիւնը նոյն իսկ առակողը՝ Յիսուս կուտայ (Մատթ. ԻԲ. 14), եւ երբեմն նոյն իսկ առակն ի զիր առնօղն՝ Աւետարանիչը (Ղուկ. ԺԸ. 4): Եթէ յայտնուած չէ առակին իմաստը, հարկ է դիտել թէ քննէ բան առիթ տուած է առակին, կամ թէ քննէ պարագայի տակ զրուցուած է, այս կերպով կարելի է մեկնել Անստակին ու Անպտուղ Թգնիխին առակները (Ղուկ. ԺԵ. 44-37: ԺԳ. 6-9 և այլն): Նատ քիչ անգամ կը պատահի նաև, որ առակին մեկնութեանն համար հարկ կ'ըլլայ դիմել այլուր. զոր օրինակ Ղուկասու ԺԵ. 3-10 առակները բաղդասելու է Մատթէոսի առակներուն հետ ԺԸ. 10-14:

4. Սերմանոցն է ինքն Աստուած, արտը կամ ազարակն է աշխարհս և մարդիկ են բոյս, ցանուած դէս ու դէն: Այս բոյսը յայնժամ կը ծին ու կ'ուռճանան, եթէ ունին պարարտ ու յուսով հող, եւ կ'ոռոգուին Աւե-

ներ, կը լսեն ու չին լսեր ու չեն ըմբռներ: *14 Եւ Եսայի մարգարէութիւնն անոնց վրայ կը կատարուի, որ կ'ըսէ. «Լսելով պիտի լսէք ու պիտի չիմանաք, եւ տեսնելով պիտի տեսնէք ու պիտի չտեսնէք»: *15 Որովհետեւ այս ժողովրդեան սիրտը թանձրացաւ, եւ իրենց ականջներով ծանր լսեցին, եւ իրենց աչքերը խփեցին, որպէսզի քնաւ աչքով չտեսնեն ու ականջներով չսեն եւ սրտով չիմանան ու դառնան, եւ զանոնք բժշկեմ»: *16 Բայց եւրանի է ձեր աչքերուն, որ կը տեսնեն, եւ ձեր ականջներուն, որ կը լսեն: 17 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ շատ մարգարէներ ու արդարներ փափաքեցան տեսնել, զոր կը տեսնէք, եւ լսել, զոր կը լսէք, եւ չլսեցին:

*18 Եւ հիմայ լսեցէք դուք հռչակ ցանողին առակը: 19 Այն ամենէն՝ ով որ կը լսէ արքայութեան խօսքը ու չըմբռներ, կուգայ չարը եւ անոր սրտին մէջ ցանուածը

տարանի շրոմէ ականակիտ: Քրիստոս, որպէս կը գրէ Ծործորեցի. «Քանզի մեր չկարէսք մտանել առ նա վասն մեղաց պարսպին, ինքն իւրովի ելեալ եկն առ մեզ»: Ինքն իւր սգարակն ակօսելու ու ջրելու համար շնորհեց իւր Աւետարանը, ուստի ինքն իսկ կը մեկնէ յետոյ այս առակն այսպէս, «Քէ կան արքայութեան խօսքը լսողներ, աւետիսն առնողներ, այլ զի անհոգաբար կը լսեն կամ հարեւանցի, և կամ զբաղուած միտք ունին, բազմահոգ են, ուստի չեն օգտուիր, անպտուղ կը մնան. իսկ որք կը լսեն ու կ'ընդունին ի սրտէ, նորս կ'օգտուին Ի-կ-ողի», այսինքն առեւլագոյն շնորհօք պիտի փառաւորին: Բոլոր մեր ճառընախրք կը յաւելուն միանգամայն «Քէ շնչաւոր մարմինը պիտի յառնէ իբր մարմին հոգեւոր, որպէս և կը գրէ Պօղոս (Ա. Կորնթ. ԺԵ. 1-58): Արդարներն արեւու պէս պիտի փայլին, իրարմէ նուազ կամ աւելի, այլ միշտ անճառ փառօք:

10. Աշակերտներն, որոց հետ ուրիշներն ևս, երբ առանձին էր, որպէս կը գրէ Մարկոս (Դ. 10), կը հարցընեն «Քէ քնչու առակներով կը խօսի, այսինքն ո՛չ բացայայտ, որպիսի էր Լեւան-քարոզը:

11. Յիսուսի պատասխանն է կարճ. արքայութեան խորհուրդները պիտի աւանդէր Յիսուս միայն իրեններուն. «Ձի սորս ազատ էին ի չարեաց և նորս չարիօք յովասեալ. իսկ յանձն չարարուեստ իմաստութիւն ոչ մը տանէ. սաէ Սողոմոն» (Ծործորեցի): Խորհուրդն է որոշ չյայտնուած բան մը, ոչ խելքի դէմ, այլ խելքէ վեր, որպիսի են Երրորդութեան, նախասահմանութեան, փրկութեան, հոգւոյ և մարմնոյ յարութեան վարդապետութիւնները և այլն: Արքայութեան խորհուրդները մարդ չկրնար արագ

կը յափշտակէ . ան է որ ճամբուն քով ցանուեցաւ : 20 Եւ ով որ ապառաժին վրայ ցանուեցաւ , ան է , որ երբ կը լսէ խօսքը եւ չուտով ուրախութեամբ կ'ընդունի զայն : 21 Բայց որովհետեւ իր մէջը արմատներ չունի , այլ առ ժամանակեայ է , խօսքին համար նեղութիւն ու հալածանք ըլլալուն պէս՝ իսկոյն կը գայթակղի : 22 Իսկ ով որ փուշերուն մէջ ցանուեցաւ , ան է , որ երբ կը լսէ խօսքը եւ աշխարհիս հողերն ու հարստութեան խարէութիւնները կը խղզին խօսքը եւ կ'ըլլայ անպտուղ : 23 Բայց ով որ աղէկ հողի մէջ ցանուեցաւ , ան է , որ երբ կը լսէ խօսքը ու կ'ըմբռնէ , կուտայ պտուղը , որը հարիւր եւ որը վաթսուն եւ որը երեսուն » :

*24 Ուրիշ մէկ առակ ալ խօսեցաւ անոնց ու կ'ըսէ . « Երկնքի արքայութիւնը նմանեցաւ մարդու մը , որ իր ագարակին մէջ աղէկ հունտ կը ցանէ : *25 Եւ երբ մարդիկ կը քնանային , անոր թշնամին եկաւ եւ ցորենին մէջ

ընդունիլ , պատրաստութեան պէտք ունի , ուստի Յիսուս նախ իրենները պատրաստելով պիտի աւանդէր զայնս իրեններուն , և յետոյ իրեններուն միջոցաւ համօրէն մարդկութեան :

13. Յիսուս առակօք կը խօսէր ժողովրդեան , վասնզի արժանաւորին , այսինքն բարի պտուղ ունեցողին պիտի տար իւր շնորհքը , իսկ չունեցողին՝ ոչ . գեղեցիկ կը մեկնեն մեր ճառընտիրք նոյնպէս Ծործորեցի . « Զի ոյր գուցէ պտուղ բարեաց , տացի նմա լսել զառակաւոր իմաստս՝ հոգով , եւ ոյր ոչ գուցէ , և զլսելն ևս բարձից ի նմանէ » :

14. Եւ երբ չեն եղած մարդիկ , որք կամաւ կը փակեն իրենց օտար չտեսնելու համար լոյս արևը , և կը խնուն իրենց ակունջները չլսելու համար ճշմարտութեան ձայնը :

15. Կանուխէն արգէն մարգարէութիւն կար , Մեսիայի ձայնն ոչ զիրաւ լսելի պիտի լինէր : Մեղօք կարծրացած սրտեր ընդ փոյժ պիտի չյօժարէին կակղիլ այսինքն զղջալ ու փրկուիլ (Մտ. 2. 9-10) :

16. Յիսուս կ'երանէ իւր աշակերտները , վասնզի զնա , զոր մարգարէք եւ արդարք ցանկացան տեսնել , կը տեսնէին , կը լսէին անորմէ , և կը հաւատային Թէ պիտի վայելեն այժմեանէն ալ աւելի երանաւէտ բերկրութիւն մը (Ա. Պետ. Ա. 10-12 : Եբր. ԺԱ. 13. 39) :

18. Ուրեմն սերմանացանն է Քրիստոս , որոյ մեր սրտին մէջ ցանածը չպտղաբերիր , եթէ ընկճուի՞նք չարէն կամ փորձութենէն և կամ աշխարհային հոգերէ : Բարի պտուղ տալ , այսինքն բարեկործ ըլլալ , քիչ կամ շատ

որոմ ցանեց ու գնաց : *26 Եւ երբ խոտը բուսաւ եւ պրտուղ բերաւ , յետոյ որոմն ալ երեւցաւ : 27 Այն տանուտէրին ծառաները կ'ըսեն անոր . « Տէր , չէ՞ քու ագարակին մէջ աղէկ հունտ ցանեցիր , ուրիմն որոմը ուսկէ՞ց ունի » : *28 Եւ ան կ'ըսէ անոնց . « Թշնամի մարդ ըրաւ զայն » . ծառաներն անոր կ'ըսեն . « Կ'ուզե՞ս որ երթանք եւ զայն մէկդի քաղենք » : 29 Եւ ան կ'ըսէ անոնց . « Ոչ , կարելի է որ երբ քաղէք որոմը , ցորենն ալ անոր հետ փրցընէք : 30 Թող տուէք որ երկուքն ալ ի միասին մինչեւ հունձքի ատեն ամին , եւ հունձքի ժամանակ պիտի ըսեմ քաղողներուն . « Առաջ այդ որոմը քաղեցէք եւ զայն խուրձ խուրձ կապեցէք այրելու համար , եւ ցորենը ժողվեցէք իմ շտեմարաններուս մէջ » :

*31 Ուրիշ մէկ առակ ալ խօսեցաւ անոնց ու կ'ըսէ . « Երկնքի Թագաւորութիւնը մանանեխի հատի նման է , զոր մարդ մը առնլով ցանեց իր ագարակին մէջ , 32 որ

չափով , որքան կարելի է , այս է իմաստ այս առակի , զոր և կը գրեն Մարկոս (ԺԳ. 1-23) և Ղուկաս (Ը. 4-18) :

24. Յիսուս ուրիշ առակ մը , գրեթէ նման ամին , կը յաւելու , զոր և յետոյ ըստ խնդրանաց աշակերտացն կը մեկնէ : Որոմը այնպէս կը նմանի ցորենի , որ չորոշուիր . մինչև որ ցորենն ամի , և կը կոչուի « Սուտ կամ վայրի ցորեն » :

25. Չարուծիւնք ընդհանրապէս ի մօտն , գիշերոյ մէջ կը գործուին : Արտի մէջ որոմ ցանելն է թշնամական զործ :

26. Չարին հունտը՝ ի մեղս հսկամէտ մարդկային սրտին մէջ միշտ կը գտնէ բնական հող :

28. Անճոճ է այն եռանդն , երբ դարմանն է վտանգաւոր : Օրինակն է ճիշդ , զի որոմին արմատներ այնպէս կը պատտառին ցորենին , մինչ զի երբ խլուին որոմներ , եթէ ցորենք են տհաս եւ չեն ատոր ի հսակի , ի միասին կը խլուին :

31. Այս երկու առակներով Յիսուս կը զուշակէր թէ իւր Թագաւորութիւն պիտի հանդիպէր այլ և այլ դժուարութիւններու , այլ այս անգամ ուրիշ մէկ առակով կը հաստատէ թէ ամէն արգելք պիտի փնսնային և իւր Թագաւորութիւն պիտի յաղթանակէր ու տարածուէր , և լոյսն Աւետարանի պիտի ոլողէր աշխարհս . այս է մեկնութիւնն առակին մանանեխի , որ թէև հունտերուն մէջ շատ փորր է , այլ բուսնելէն յետոյ ծառի պէս կը բարձրանայ : Բոլոր ճառընտիրք , նոյն իսկ Ծործորեցին միաձայն կը խոս-

բոլոր հուսերէն պզտիկ է, եւ երբ աճի, բոլոր բոյսերէն մեծ է, եւ կ'ըլլայ ծառ, այնպէս որ երկնքի թռչունները կուգան եւ անոր ճիւղերուն վրայ կը հանգչին»:

*33 Ուրիշ մէկ առակ ալ անոնց զուրցեց. «Երկնքի թագաւորութիւնը նման է խմորի, զոր կին մը առնլով երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ բոլորն ալ խմորեցաւ»:

*34 Այս ամենը Յիսուս առակներով խօսեցաւ ժողովուրդներուն, եւ առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, *35 Որպէս զի մարգարէէն ըսուածը կատարուի. «Առակներով իմ բերանս պիտի բանամ. աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները պիտի պարզեմ»:

*36 Այն ատեն Յիսուս թողլով ժողովուրդները՝ տուն եկաւ. անոր աշակերտները անոր քով մօտեցան ու կ'ըսեն. «Ագարակի որոմներուն առակը մեզի մեկնէ»։ 37 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Աղէկ հուսա ցանողն է

տոբանին Թէ Մանկիկն որ ծնաւ մտերի մը մէջ, ըստ այսմ առակի մանանիսի, պիտի աճէր, զարգանար ու տարածուէր եւ պիտի իւր վրայ կրէր բոլոր Թռչունները, այն է հեծանոս մարդկութիւնը:

33. Յիսուս այս անգամ երկնքի Թագաւորութիւնը խմորի կը նմանընէ, զոր Ծործորեցի զեղեցիկ կը մեկնէ. «Զոր օրինակ հուր վառեալ զբազում անտառս բորբոքէ, նոյնպէս եւ նորս (Առաքեալք) խմորեալք ի Տեսունէ զբազում աշխարհս, առ ի յամօժ մեզ, զի այսբան վարդապետք այժմ գմնացեալն ի նոցանէ ոչ կարեմք դարձուցանել: Եւ զու մի ինչ զարմասցիս Թէ զարբայութիւնն երկնից մանանխոյ ի խմորոյ բաղդատէ, քանզի ընդ պիսմարս եւ ընդ տգէտս խօսէր, քանզի այսչափ անտեղեակք էին, զի մեկնութեան կարօտանային, բայց այնու առաւել յորդորէին»: Իսկ երեք գրիւը կամ մէկ արդուն՝ հայս Թրելու սովորական չափն է. այսմ ևս մեկնութիւն տալն է անտեղի:

34. Յիսուս առակներով կը խօսէր, բայց ոչ միշտ, այլ երբեմն երբեմն, ըստ պատեհին:

35. Աւետարանագիրը կը յիշէ այն մարգարէութիւնը Թէ Քրիստոս առակներով պիտի խօսէր ի յայտնութիւն խորածածուկ ճշմարտութեանց (Սաղմ. ՀԸ. 2):

26. Յետոյ Յիսուս, որպէս յիշուեցաւ արդէն, կը մեկնէ Որոմներու առակը եւ վերջին դատաստանի օրը նկարագրելէ յետոյ երկնքի Թագաւորութիւնը ծածկուած գանձի ու պատուական մարգարտի կը նմանընէ, զորս ստանալ հվ չցանկար:

Որդի մարդոյ : 38 Եւ ազարակը՝ աշխարհս է . աղէկ հունտը անոնք են , որոնք արքայութեան զաւակներն են , իսկ որումը՝ չարին որդիներն են : 39 Եւ թշնամին՝ որ զայն ցանեց , Սատանան է , եւ հունձքը՝ աշխարհիս վերջն է եւ հնձողները՝ հրեշտակներն են : 40 Ինչպէս որ որումը կը հաւաքուի եւ կրակին մէջ կ'այրուի , այնպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը : 41 Որդի մարդոյ իւր հրեշտակները պիտի զրկէ , եւ անոր արքայութենէն պիտի ժողվեն բոլոր գայթակղութիւնները , եւ զանոնք որոնք անօրէնութիւն կը գործեն : 42 Եւ զանոնք պիտի նետեն կրակի հնոցին մէջ , հոն պիտի ըլլայ լալ եւ ակռաներու կրճրտել : 43 Այն ատեն արդարները արեւու պէս պիտի փայլին երկնքի արքայութեան մէջ : Ով որ լսելու ականջներ ունի , թող լսէ :

44 Երկնքի թագաւորութիւնը դարձեալ նման է ազարակի մէջ ծածկուած գանձի , զոր մարդ մը գտնելով պա-

47. Իսկ Ուռկանի առակովս դարձեալ վերջին դատաստանի օրը կը յիշտակէ :

52. Յիսուս այս եօթն առակներէն յետոյ , երբ կը լսէ թէ աշակերտք հասու եղած են այն ճշմարտութեանց , զորս խօսեցաւ , կը պատուիրէ զայնս իբրև գանձ չլպհել , այլ գործածել ուրիշներու համար , որպէսզի եղած ըլլան , ճշմարտապէս , որպէս տանուտէր աշխարհի եւ միանգամայն դպիր երկնքի Թագաւորութեան :

53. Յիսուս անտի կը մեկնի և կուգայ իւր գաւառը . «Քանզի լոեաց Աւետարանիչս զանուն տեղոյն . արդ կամ զամենայն Հրէաստան յորում անպատուեցաւ , գաւառ իւր անուանէ , կամ զնազարէթ տսէ» (Ծործորեցի) :

54. Յիսուս անոնց ժողովարանին մէջ կը քարոզէ (Ղուկ. Դ. 23) մինչ զի ժողովուրդը կ'սքանչանայ ըսելով .

55. « Հիւսին որդին չ'է սա » . նորանչան էր այս երեւոյթ , վասն զի երեսուն տարիէ ի վեր կը ճանչէին Յիսուսը իբր սոսկ մարդ , տգէտ . իսկ այժմ իմաստուն և որ մեծագոյնն էր , յանկարծ հրաշագործ մարգարէ , որ զինքը կը հրատարակէր միանգամայն Մեսիա՛յ :

Թէև Ենորհալի կը կարծէ թէ Յակոբոս և Յովսէս , Սիմոն եւ Յուդա էին Յովսէփայ նախորդ կնիկէն ծնուած որդիներ , նախ քան զՄարիամ , այլ հաւանական ևս է , որպէս կը մեկնեն ուրիշներ , թէ սորս էին Մարիամայ բեռորդիներ , որոց մայրը յանուանէ կը յիշեն Յովհաննէս (ԺԹ. 25)

հեց, եւ ուրախութենէն կ'երթայ, կը ծախէ ամեն բանը՝ զոր ունի, եւ այն ագարակը ծախու կ'անու:

*45 Երկնքի թագաւորութիւնը նորէն նման է վաճառական մարդու մը, որ աղուոր մարգարիտներ կը վրնտրուէ: 46 Եւ պատուական մարգարիտ մը գտնելով գնաց, ծախեց ամենը, ինչ որ ունէր, եւ այն մարգարիտը գնեց:

*47 Երկնքի թագաւորութիւնը վերստին նման է ծովու մէջ ձգուած ուռկանի, որ ամեն տեսակէն կը ժողվէ. 48 որ երբ լցուեցաւ, ցամաքը հանեցին, եւ նստելով աղէկները ժողվեցին ամաններու մէջ եւ անպիտանը մէկդի նետեցին: 49 Այնպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն եւ շարերը արդարներուն մէջէն պիտի զատեն, 50 Եւ զսնոնք պիտի նետեն կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներու կրճըտելը):

*51 Թխուս կ'ըսէ անոնց. «Այս ամենը իմացա՞ք». կ'ըսեն անոր. «Այո, Տէր»: 52 Եւ ան կ'ըսէ անոնց. «Ասոր

Մատթէոս (ԻԷ. 56) եւ Մարկոս (ԻԶ. 47): Ուրեմն սորա էին Յիսուսի ազգական եւ կ'անուանուէին ըստ Հրէական սովորութեան «եղբարք Տեառն» (Ղեւտ. Ժ. 4-10: Եննդ. ԺԱ. 31: ԺԲ. 5: ԺԳ. 8-11: ԺԴ. 12-16: ԻԷ. 29-37: ԻԹ. 10. 12. 15. Ես. ԽԹ. 7) եւայլն:

Նոյնպէս շատեր Յակոբոսն ու Յուդայ՝ միևնոյն այն անձերը կը կարծեն, որք կը յիշուին աւտրելական դասակարգին մէջ, մինչ Յովհաննէս կը գրէ Սէ «Եւ իւր եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա» (Է. 2-6), Եւ Սէ սորա ուրոյն կը յիշուին յետոյ (Գործք. Ա. 13-14: և Ա. Կորնթ. Թ. 5): Ուրեմն սորա նախ հաւատացած եւ մտած են 12 աշակերտաց Յուդայ մէջ. իսկ սոցա միւս եղբայրներն ոչ սոցա հետ, այլ յետոյ, և մտած են 72 աշակերտաց մէջ: Յակոբոս ունի Կաթողիկեայ մէկ թուղթ, նոյնպէս եւ Յուդայ: Յակոբոս եղած է առաջին եպիսկոպոս Երուսաղեմի և անդ նահատակուած: Ունէր մեծ յարգ, վասն զի Յիսուս յատկապէս յետ յարութեան իւրոյ առանձինն սմա երեցած էր (Ա. Կորնթ. ԺԷ. 7). նա էր միշտ գահերէց առաքելական ժողովներուն մէջ (Գործք. ԺԵ. 13: ԻԱ. 18), ոչ Սէ Պետրոս, որպէս կը քարոզէ Հռովմայ եկեղեցին: Եթէ կարծուի իսկ, Սէ էր սա 72 էն, այլ միշտ կը կոչուէր առաքեալ (Գաղ. Ա. 19), ինչպէս կը կոչուէին Պօղոս և Բաւնաբաս ևս (Գործք. ԺԴ. 13): Յովսէպոս՝ հրեայ նշանաւոր պատմագիր զսա «Արդար» կ'անուանէ:

Իսկ միւս Յուդա-Թագէոս եղբայր Թովմայի, քարոզեց ի Միջագետս և յԵդեսիա, ուր Արգար Թագաւորը բռնկելէ յետոյ գնաց ի Հնդկա եւ ի վե-

համար երկնքի թագաւորութեան աշակերտ եղող ամեն ջգպիր նման է տանուտէր մարդու մը, որ իր գանձէն կը հանէ նորն ու հինը» :

*53 Եւ եղաւ, երբ Յիսուս այս առակները լմնցուց, անկէց մեկնեցաւ : *54 Եւ իր գաւառը գալով անոնց ժողովարանին մէջ անոնց կը սորվեցնէր, այնպէս որ անոնք կը զարմանային ու կ'ըսէին. «Սա ո՛ւսկէց ունի այս իմաստութիւնը եւ հրաշքները : *55 Սա չէ՞ հիւսին որդին. ասոր մայրը չկո՞չուիր Մարիամ եւ ասոր եղբայրները՝ Յակոբոս ու Յովսէս եւ Սիմօն ու Յուդայ : 56 Եւ ասոր քոյրերը ամենը մեր քով են . ուրի՛մն ո՛ւսկէց է ասոր այս ամենը» : *37 Եւ անոր վրայով կը գայթակղէին . եւ Յիսուս կ'ըսէ անոնց . «Մարգարէ մը անպատիւ չէ, բայց եթէ իր գաւառին ու իր տանը մէջ» : *58 Եւ անոնց անհաւատութեանը համար հոն շատ հրաշքներ չըրաւ :

րադարձին սիրալի հանդիպում մը ունեցաւ Բարձուղիմէոս առաքելոյն ի բլուրն Արտաշատու : Նահատակեցաւ սպա և թաղուեցաւ յՈրմի : Ուրեմն Հայք երեք ունեցած են առաքեալ : Յուդայ-Թաղէոս կամ Ղեւի, Բարձուղիմէոս-Նսթանայէլ 12 էն և այս Յուդայ-Թաղէոսը 72 էն : Բոլոր հին ճառընտիրներն ու առաքելական Կանոնք և նոյն իսկ Հերոնիմոս, նշանաւոր մատենագիր ի Դ. դարու, Թող մեր եկեղեցւոյ յիշատակութիւնն, որ միշտ Թաղէոսը կը նախադասէ Բարձուղիմէոսէն, կը հաստատեն թէ այլ է Յուդայ-Թաղէոսը որ Սանդուխտ կուսէն յետոյ նահատակեցաւ, և այլ է Յուդայ որ բժշկեց Աբգարը : Շիոթութիւնն է Խորենացիի ձեռամբ եղած, որ Եւսեբէոսէն ընթեռնելով թէ Յուդայ-Թաղէոս Աբգարն է բժշկած, կարծեր է թէ նոյն իսկ սոյն առաքեալն է Սանդուխտէն յետոյ նահատակուող Յուդայ-Թաղէոսը : Տես և ի մեկնութիւնն (Մատթ. Ժ. 3) :

57. Հրեայք կը զայժակդին տեսնելով Յիսուսի ընտանեկան անշուք վիճակը . բարձ, ցարդ չկան մի՞թէ ույնպիսիներ որք ճշմարտութիւնը կը մերժեն լսել, խժժեղով զայն քարոզդին ընտանեկան կամ ազգի դիրքը : Եւ Յիսուս յիշելէ յետոյ այն նշանաւոր առածը թէ մարգարէ մը չյարգուիր իւր տանն ու գաւառին մէջ,

58. Զգործեր հոն շատ հրաշքներ, նոցա անհաւատութեանը համար :

ՓԼՈՒԽ ԺԳ.

*1 Այն աստիճանի Հերովդէս չորրորդապետ լսեց Յիսուսի համբաւը: *2 Եւ իր ծառաներուն կ'ըսէ. «Ան է Յովհաննէս մկրտիչը. ան յարութիւն առաւ մեռելներէն եւ անոր համար իրաչքներ կ'ըլլան անով»:

3 Որովհետեւ Հերովդէս բռնեց Յովհաննէսը, կապեց զանի եւ զբաւ բանտի մէջ, իւր Փիլիպպոս եղբոր Հերովդիա կնկանը համար: *4 Որովհետեւ Յովհաննէս կ'ըսէր անոր. «Քեզի օրինաւոր չէ զանի կնիչ ունենալ»: *5 Եւ զանի սպաննել կ'ուզէր, բայց ժողովրդէն կը վախնար, վասն զի մարգարէի պէս զանի կ'ընդունէին: *6 Եւ երբ Հերովդէսին ծննդեան օրը եղաւ, Հերովդիայի աղջիկը

1. Երկրի մը չորրորդ մասին իշխան մը չորրորդապետ կ'անուանուէր: Այս Հերովդէս կը կոչուէր նաեւ Անտիպաս եւ որդի էր մեծին Հերովդէսի, որ ըրաւ Բեթլեհեմեան շարղը (Մատթ. Բ. 16-19): Վարեց Գալիլէի եւ Բերէայի չորրորդապետութիւնը գրեթէ քառասուն տարի: Էր սա անգուժ եւ խորամանկ (Ղուկ. Գ. 19: ԺԳ. 31-33): Ամուսնացաւ Արաբիոյ Արետա Սագաւորի աղջկան հետ, զոր լքանեց, երբ տեսաւ իւր Փիլիպպոս խորժ եղբոր Հերովդիա կինը եւ սիրահարեցաւ: Իսկ այս Փիլիպպոս չէր նա, զոր կը յիշէ (Ղուկ. Գ. 1). զի ուրիշ խորժ եղբայր էր նա: Ուրեմն երկու էին Հերովդէսեան Փիլիպպոսը, ոչ համամայր: Արետաս ի վրէժ իւր աղջկան անպատուութեան պատերազմեցաւ եւ չարաչար յաղծեց Հերովդէսի, զոր Հրեայր, որպէս Յովսէպոս կը յիշատակէ, համարեցան իբր երկնային պատիժ ի վրէժ անմեղ մահուան Յովհաննէս մկրտչի: Դառնագին եղաւ այս Հերովդէսի կենաց վախճանը: Երբ Ազրիպպոս, այն երկիրները, զոր ունէին Փիլիպպոս եւ Լիւսանիաս, (Ղուկ. Գ. 1), Հռովմէն ստացաւ, ինչպէս նաեւ Սագաւոր տիտոսը, զոր Հերովդէս չունէր, այլ միայն իւր հպատակներէն կ'անուանուէր Սագաւոր (Մարկ. 2. 14-22: Մատթ. ԺԳ. 9): Խորհրդով Հերովդիայի, որ էր կին անհնարին փառասէր, սա գնաց ի Հռովմ, որպէս զի ինքն ալ ստանայ զայն պատիւ, այլ Ազրիպպոս կանխեց յղելով ամբաստաններ, որով Հերովդէս զրկուեցաւ ամէն պատուէ, արքունիկ չեղաւ նախ ի Գաղիա եւ ապա ի Սպանիա, ուր մեռաւ խեղճօրէն:

2. Ժողովրդեան մէջ այս կարծիք կար թէ Յիսուս հին մարգարէներէն մէկն ըլլալու է (Ղուկ. Թ. 7 8), կամ նոյն իսկ Յովհաննէսը, այլ Հերով-

խաղաց հանդէսին մէջ, եւ Հերովդէսին հաճելի եղաւ :
 7 Ուստի երգումով խոստացաւ տալ անոր, ինչ որ ուզէ :

8 Եւ ան առաջուց խրատուելով իր մօրմէն, « Ինծի տուր, կ'ըսէ, այս ամանին վրայ Յովհաննէս մկրտչի գլուխը » :
 *9 Եւ թագաւորը տրամեցաւ, բայց երզմանն ու հանդիսականներուն համար հրամայեց, որ տրուի անոր :
 10 Եւ Տարտ դրկեց, Յովհաննէսը բանտին մէջ գլխատեց :
 11 Եւ անոր գլուխն ամանով բերուեցաւ եւ տրուեցաւ այն աղջկան, որ տարաւ իր մօրը :
 *12 Եւ անոր աշակերտները մօտենալով մարմինը վերուցին ու թաղեցին, եւ գալով Յիսուսի պատմեցին :

*13 Եւ երբ Յիսուս լսեց, անկէց նաւով անապատ տեղ

դէս կը շեշտէ թէ Յովհաննէսն է, գուցէ առ անի, կարծելով թէ Յովհաննէս որ ի կենդանութեան հրաշք չգործեց (Յովհ. Ժ. 41), այս անգամ կենդանացած եւ նոր զօրութեամբ եկած ըլլայ, եւ չարաչար պատժէ զինքը :

4. Այս Հերովդէս, ինչպէս եւ իւր հայրն ընդունած էին հրէութիւնը շահելու համար ժողովուրդը, ուրեմն աւ երեսս, ուստի Յովհաննէս կը կշտամբէ Հերովդէսն ըստ օրինի (Ղեւտ. ԺԸ. 16 : Ի. 21) : Նախ Հերովդիսայի ամուսինն էր դեռ ողջ - երկրորդ եթէ մեռած ալ ըլլար, նորէն կարելի չէր, քանի որ Հերովդիս ունէր աղջիկ զաւակ, չէր անորդի այրի :

5. Հերովդէս կը վախնար ոչ թէ միայն ժողովրդէն որ Յովհաննէսը կը սիրէր, այլ նոյն իսկ Յովհաննէսէն եւ յաճախ կը լսէր նորա խրատներուն (Մարկ. 2. 19-20) - բայց ոչ լկտին Հերովդիս, որ չունէր վախ ոչ Աստուծոյ, ոչ Յովհաննէսէն եւ ոչ ժողովրդէն : Ծործորեցին կը յաւելլու թէ Հերովդէս չէր վախնար թէ յաւատարմոյ, որ վրէժխնդիր էր արեան արդարաց, այլ ի ժողովրդեանէն. քանզի այնպիսի են զեղծագործքն, միշտ ականառութեամբ վարիլ եւ զերեսս մարդկան զերագոյն դնել երեսացն Աստուծոյ : Այսպէս մտածեցին նաեւ Հրեայք Յիսուսի համար եւս (Մատթ. ԻԶ. 4 : Մարկ. ԺԴ. 1 : Ղուկ. ԻԲ. 2) :

6. Հռովմէական սովորութիւն էր Ծննդեան տօն կատարելը եւ ոչ Հրէական : Հերովդիսայի այս աղջիկը, Սողոմէ, յետոյ ամուսնացաւ չորրորդապետ Փիլիպպոսի հետ (Ղուկ. Գ. 1) : Աւանդութիւն կայ թէ Սողոմէ երբ կը կարաւէր սառի վրայ, կը սահի եւ կ'ունենայ չարաղէտ մահ :

8. Անշուշտ կարաւէն յետոյ, որպէս Մարկոս կը պատմէ (2. 23) : Այսպէս այս աղջիկ կարաւելովն ու այս ոճիրն առաջարկելով ցուցուց թէ էր անամօթ եւ անգրւթ :

9. Առ երեսս էր այս տրամուծիւն, զի եթէ անկեղծ ըլլար, չէր լսեր

մը գնաց առանձին . ժողովուրդները երբ լսեցին իրենց քաղաքներէն ոտքով անոր ետեւէն գացին : *14 Եւ երբ դուրս ելաւ , շատ ժողովուրդ տեսաւ , անոնց զթաց եւ անոնց հիւանդները բժշկեց : *15 Երբ իրիկուան ատեն եղաւ , աշակերտներն անոր քով մօտեցան ու կ'ըսեն . «Այս տեղը անապատ է եւ օրը իրկուն եղած է , արձակէ այդ ժողովուրդները , որ գիշերը երթան , եւ իրենց կերակուր գնեն» : *16 Եւ Յիսուս կ'ըսէ . «Անոնց երթալուն պէտք չ'կայ . դուք ատոնց տուէք ուտելիք» : Եւ անոնք կ'ըսեն անոր . «Հոս բան մը չունինք , բայց եթէ հինգ հաց ու երկու ձուկեր» :

18 Եւ կ'ըսէ անոնց . «Հոս բերէք զայն» : *19 Եւ հրա-

կաբաւ լկտիին . «Պարտ էր ի կարեւոր չարեացն երկնչել եւ ոչ վասն սուտ երգմանցն որ առ բազմականն . յարիւն սրդար ձեռնամուխ լինել եւ անօրէն սպանուծեանն այնչտի վկայն բազմուծեան կուտել» (Մործորեցի) :

12. Այսպէս մարդ իւր տրամուծիւնը հազորդելով Աստուծոյ , կ'առնու միւթարուծիւն :

13. Յիսուս լսելէ յետոյ Յովհաննէսի մահուան բօժը եւ խոնջ տեսնելով իւր աշակերտները , որք առարելուծենէ նոր դարձած էին (Մարկ- 2. 30-31) , նաւ նստելով կ'երթայ անապատ տեղ մը առանձնամայլու համար : Այսպէս մարդ երբ ունենայ վիշտ մը կամ լսէ գոյժ մը , պէտք կ'ունենայ առանձնուծեան , բայց , որպէս կը գրէ Մործորեցի , ժողովուրդը «Վասն զի բեւեռեալ էին ի սէր նորա , ընդ նմա երթային հետիոտս , ուստի եւ ոչ ի մահուանէն Յովհաննու երկիւղս կրեցին . քանզի այնպիսի է զուծն եւ սէրն , զի ամենայնի յաղթէ եւ զամենայն դանդաղանս ի բաց փարատէ , վասն որոյ եւ զհատուցումն անդէն առնուին» , զի Յիսուս

14. Բժշկեց նոցա հիւանդները , քարոզելով միանգամայն Աստուծոյ Թագաւորութիւնը (Ղուկ. Թ. 11) :

15. «Կամք Տեսան էր կերակրել զնոսս . որպէս զհոգիս նոցա բանիւ , այսպէս եւ զմարմինսն հացիւ . բայց ոչ անձամբ ինչ առնէ , այլ անսայ աղաչելոյ , զի մի կարծիցեն թէ ընդ առաջ երթայցէ սրանչելեացն , այլ յորժամ կոչիցի » (Մործորեցի) :

16. Ո՛վ անտանձան զուծ Յիսուսի , որ ժողովրդեան հաց գտնել ու տալ կը հրամայէ . «Զի յետ բժշկուծեանն կերակուր պիտոյ էր , զի մի լուծցին ի ճանապարհին » (Մործորեցի) , այսինքն չըլլան ուժամափ :

19. Յիսուս կ'օրհնէ հինգ հացն ու երկու ձուկը եւ հինգ հազարի չափ

մայեց որ նստեցընեն ժողովուրդն: Իրը խոտի վրայ . եւ հինգ հազն ու երկու ձուկերը առնլով դէպի երկինք նայեցաւ, օրհնեց ու կտրեց եւ հացերը աշակերտներուն տուաւ, աշակերտներն ալ ժողովուրդներուն: 20 Ամէնքն կերան ու կշտացան եւ կտորուանքներուն փսորները՝ տասն երկու կողովով լեցուն վերուցին: 21 Եւ ուտողներն էին հինգ հազարի չափ մարդիկ, թող կիներն ու տղաները:

*22 Եւ ստիպեց աշակերտները շուտով նաւ մանլլ եւ իրմէն առաջ անդիի կողմը անցնիլ, մինչեւ որ ինք ժողովուրդները արձրկէ: *23 Եւ երբ ժողովուրդները արձրկեց, լեռն ելաւ առանձին աղօթքի կենալու համար. եւ երբ իրկուն եղաւ, հոն էր մինակ: *24 Եւ նաւը ցամաքէն զատուած էր շատ հեռաւորութեամբ եւ այլէկոծութեան մէջ

մարդիկ, թող կիներն ու տղայները, ոչ թէ միայն կը կշտանան, այլ եւ տասներկու կողմներու մէջ աւելորդ կտորները կը ժողովն ու կը լնուն: Այսպէս եթէ ունենանք խորին հաւատք առ Տէր, մեր դատարկ կողմներն անգամ կը լցուին, այսինքն ոչ թէ միայն Աստուծոյ բարութիւնը անձամբ կը վայելենք, այլ եւ մեր տուններն անհուն բարեօք կը բարգաւաճին: Այս հրաշքն է որ բոլոր Աւետարանագիրներէն կը պատմուի իրարմէ քիչ ու շատ մանրամասնութեամբ (Մարկ. 2. 30-44: Դուկ. Թ. 10-17: Յովհ. 2. 1-14):

22. Այս հրաշք մեծապէս ազդեց ժողովրդեան, մինչ զի իսկ եւ իսկ Յիսուսը յափշտակելով ու զեցին տանիլ յԵրուսաղէմ եւ Թագաւոր հրատարակել (Յովհ. 2. 15). գուցէ աշակերտք եւս համամիտ էին, ուստի Յիսուս նախ աշակերտներուն կը հրամայէ մեկնիլ եւ յետոյ առանձին մնալով կ'արձկէ ժողովուրդը, զապելով նոցա այս աշխարհասէր եռանդը: Անօթի հր ժողովուրդ չդիմեր հոն, ուր հաց կայ, եւ չփարիք նմա, որ հաց կուտայ:

23. Մատանայէն փորձուեցաւ Յիսուս եւ յաղթեց, այս անգամ կը փորձուի ժողովրդէն, ուստի կ'աղօթէ: Այսպէս ամէն մարդ փորձուեցնէ ոչ միայն փոխելու պարտաւոր է, այլ եւ աղօթելու՝ որ չզան փորձութիւնք. եւ եթէ գան իսկ, յաղթէ անոնց: Յիսուս ոչ թէ ուրիշներէ Թագաւոր պիտի հռչակուէր, այլ ինքն անձամբ պիտի հրատարակէր իւր Թագաւորութիւն խաչին վրայէն:

24. Այս այն նաւն էր, զոր առաքեալք Յիսուսն առնելու համար կը վարէին:

25. Պահն էր ըստ Հռովմէացւոց սովորութեան երեք ժամ, ուրեմն զիշերն ու ցերեկ զատ զատ կը բաժնուէին չորսական պահի: Հրեայք ի հնունս

էր, որովհետեւ հովը դէմ էր: *35 Եւ գիշերուան չորրորդ պահուն Յիսուս անոնց քով եկաւ ծովին վրայէն քալելով: *26 Երբ աշակերտները տեսան զանի, որ ծովին վրայ կը քալէր, խռովեցան եւ կ'ըսեն թէ «Աչքի երեւոյթ մըն է» եւ իրենց վախէն պոռացին: Եւ Յիսուս իսկոյն անոնց հետ խօսեցաւ ու կ'ըսէ. 28 «Քաջալերուեցէք. ես եմ. մի վախնաք»: Պատասխան տուաւ անոր Պետրոս ու կ'ըսէ. «Ով Տէր, թէ որ դուն ես, հրաման տուր ինձի, որ քովդ գամ այս ջուրերուն վրայէն»: 29 Եւ ան կ'ըսէ. «Եկուր»: Եւ Պետրոս նաւէն իջնալով ջուրերուն վրայէն գնաց եւ Յիսուսի քով եկաւ: 30 Եւ հովը սաստիկ տեսնելով վախցաւ. եւ երբ սկսաւ ընկղմիլ աղաղակեց ու ըսաւ. «Ով Տէր, զիս աղատէ»: *31 Եւ Յիսուս իր ձեռքը երկարեց, զանի բռնեց ու կ'ըսէ. «Թերեհաւատ, ինչո՞ւ տարակուսեցար»: 32 Եւ երբ նաւը ելան, հովը զապրեցաւ: 33 Եւ նաւին մէջ եղողները մօտեցան, անոր երկրպագու-

կը բռնէին երեք պահի: Յիսուս գիշերոյ չորրորդ պահուն այսինքն տուաւ տեսան դէմ կը տեսնէ իրեններուն տագնապը (Մարկ. Զ. 48), եւ կ'երթայ օգնութեան ծովուն վրայէն քալելով:

26. Աշակերտք կը խռովին երեւոյթ մը կարծելով, այլ Յիսուս գիրենք կը հանդարտեցընէ:

28. Պետրոս կը խրախուսուի եւ կը խնդրէ որ ինքն ալ ծովուն վրայէն քալէ. կը հրամայուի, այլ քիչ մը յետոյ կը սարսափի: Այսպէս Պետրոս որ «Մեծին յաղթեաց, զի գնաց ի վերայ ծովուն, իսկ ի հողմոյն երկեաւ. քանզի այնպիսի է մարդկային ընուծիւնս, բազում անգամ ի մեծամեծս առաքինանայ, եւ ի փոքունս զեղծանի, որպէս . . . Դաւիթ ի Բերաւբէէ. եւ սա մինչ սաստկացեալ էր ալիքն, էջ, եւ ընդդէմ հողմոյն չկարաց զօրել եւ այն զի մօտ էր Քրիստոս. յորմէ ուսանիմք թէ չէ ինչ օգուտ մօտ լինել Քրիստոսի, եթէ հուստով չիցէ որ մօտ» (Ծործորեցի): Այսպէս մեր աչք երբ կը յառին ի Քրիստոս, կը յաղթենք վտանդին, բայց երբ կը նային վտանգին երկմտելով, կը յաղթուինք:

31. Յիսուս Պետրոսի Թերեհաւատութիւնը յանդիմանելէ յետոյ նորոս հետ նաւը կ'իւլէ, ուր առաքեալը կ'երկրպագին նմա, դուստնելով Թէ է Որդի Աստուծոյ, վասն զի տեսան որ հացեր շտացան, հովեր հանդարտեցան եւ ծով խաղաղացաւ: Այս հրաշք կը պատմեն նաեւ Մարկոս (Զ. 45-56) եւ Յովհաննէս (Զ. 15-21): Սմին նման եւ հրաշք գործուեցաւ եւ երբեմն (Մատթ. Ը. 22-28):

Թիւն ըրին ու կ'ըսեն . « Իրաւ որ Աստուծոյ որդի ես գունն » :

*35 Եւ անցնելով ցամաք եկան , ի Գիննեսարէթ : Եւ երբ այն տեղի մարդիկը ճանչցան զանի , ճարտ զրկեցին բոլոր գաւառին մէջ եւ անոր քով բերին բոլոր հիւանդները : 36 Եւ անոր կ'աղաչէին , որ գոնէ միայն անոր հազուադէպ ծայրերուն դպչին . եւ անոնք որոնք մէկ անգամ դպչեցան , փրկուեցան :

ՊԼՈՒԾ ԺԵ .

*1 Այն ատեն Յիսուսի մօտեցան Փարիսեցիներ եւ զպիրներ , որոնք Երուսաղեմէն էին , եւ կ'ըսեն . *2 « Ինչո՞ւ քու աշակերտներդ ծերերուն աւանդութիւնը զանց կ'ընեն . որովհետեւ չեն լուար ձեռքերնին , երբ հաց կ'ու-

34. Կը հասնին ի Գեննեսարէթ, որ էր դաշտ Գալիլեայի ծովուն հիւսիսային արեւմտեան կողմը երկայն իրր չորս մղոն եւ լայն զրեթէ երկուք ու կէս մղոն : Այս դաշտին ծայրն էր Կափառնայում քաղաքը, ուր Յիսուս յայնժամ սքանչելի քարոզութիւն մը ըրաւ (Յովհ. 2. 22-72) :

35. Ժողովուրդը կ'աղաչէր որ Յիսուսի հազուապէս երևումը ծայրին դպչի . ուրեմն ոչ թէ հազուապէս էր հրաշագործող , այլ նորա կամքը միայն :

1. Յիսուսի համբաւն այնքան կը տարածուի, որ Երուսաղեմէն Փարիսեցիներ ու զպիրներ կը վառվառ գալ ի Կափառնայում, որք եւ իսկոյն կը գայժակղին, տեսնելով որ Յիսուսի աշակերտներն անլուայ ձեռք հաց կուտեն, հակառակ աւանդութեան :

2. Աւանդութիւններն էին անգիր հրահանգներ, զի Հրեայք կը հաւատային թէ գրուած օրէնքներէն զտտ Աստուած մարգարէից աւանդած է շատ մը ծէսեր կամ սովորոյթներ, որք բերանացի ազգէ ազգ մնացած են : Այս աւանդութիւնք ի զիր առնուեցան իբր Քրիստոսէ երկու դար յետոյ, եւ կոչուեցան «Միշնա» այսինքն «Երկրորդ օրէնք», որոց կցեցան յետոյ մեկնութիւններ եւս , որք կը կոչուէին «Կէմարա» : Ամբողջին այսօր կ'ըսուի «Թալմուտ» : Հրեայք այս աւանդութեանց այնքան սերտիւ յարեցան, որ շատ անգամ նախամեծար համարեցան մեռնիլ, քան թէ հակառակ Թալմուտի աւանդութեան, մօրուք կտրել, ստփրել կամ ածիլուել, անլուայ ձեռք հաց ուտել եւ այլն :

տեն» : *3 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . «Հապա դուք ինչու Աստուծոյ պատուէրը զանց կ'ընէք ձեր աւանդութեան համար : Զի Աստուած ըսաւ . «Քու հայրդ ու մայրդ պատուէ» . *5 եւ «Ով որ կը բամբասէ իւր հայրը կամ մայրը , մահով թող մեռնի» : 6 եւ դուք կ'ըսէք . «Ով որ ըսէ իր հօրը կամ իր մօրը թէ նուէր է ինչ որ ինչ պիտի շահիս , եւ չպատուէ իր հայրը եւ իր մայրը . եւ Աստուծոյ խօսքը կը թիւրէք ձեր աւանդութեան համար : 7 Կեղծաւորներ , Եսայի աղէկ մարգարէացաւ ձեր վրայ ու կ'ըսէ . *8 «Այս ժողովուրդ զիս չըթուենքներովը կը պատուէ , եւ իրենց սիրտը ինչ հեռացած ու զատուած է : 9 Պարապ տեղը զիս կը պաշտեն . եւ մարդիկնիրէ պատուիրուած վարդապետութիւններ կը սորվեցնեն» :

Եւ ժողովուրդները իր քով կանչելով կ'ըսէ անոնց . «Լսեցէք ու իմացէք . *11 Ինչ որ բերնէն կը մտնէ , չպրդծեր մարդը , այլ ինչ որ բերնէն կ'ելնէ , այն կը պղծէ մարդը» :

*12 Այն ատեն մօտենալով անոր աշակերտները կ'ըսեն անոր . «Գիտես , որ Փարիսեցիները երբ լսեցին այն խօսքը , գայթակղեցան» : 13 Ան պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . «Ամեն տունկ զոր իմ երկնաւոր Հայրս չտըն-

3. Յիսուս նոցա անտի գայթակղութիւնը կշտամբելու համար կը գրուցէ նոցա թէ մինչդեռ Օրէնքը բացարձակապէս վճռած է պատուել հայր ու մայր , զորս բամբաստողն անգամ , արժանի դատած է մահու , կը թիւրէք դուք աստուածային այս գրաւոր պատուէրը , աւարկելով թէ հօր ու մօր տալու պատիւը , խնամքն ու հոգածութիւնը , դրոմ կամ ստացուած , քանի որ Աստուծոյ ընծայ եղած է , տալու չէ : Վասն զի այս ռարբիներն կը վարդապետէին թէ մարդ կրնայ ուխտել , ոչ թէ միայն , բառ մը ինքնին չվայելելէ , այլեւ արգելուլ գտնձն գայն ուրիշին տալէ եւս , այս էր «Կորթանը» , այսինքն նուէր կամ պատարագ Աստուծոյ , Այս ուխտին տէրն , եթէ ուզէր , կրնար նաեւ գայն , զոր Կորթան ըրած էր , զորժածել իրեն համար , այլ ոչ ուրիշին տալ , ուստի Յիսուս իրաւամբ «Կեղծաւոր» մակդիրը տուաւ նոցա ըսելով . «Այսպէս ձեր աւանդութեան հետեւելով բուն իսկ աստուածային պատուէրը կը խոտէք» :

8. Յետոյ Յիսուս կը յիշէ Եսայեայ մէկ մարգարէութիւնը (ԻԹ. 13) , որոյ իմաստն է թէ Աստուած մարդոյ սրտին կը նայի , ոչ թէ սոսկ ձեւերու . եւ թէ վարդապետութիւն մը որ չէ աստուածատուր , չէ նախամեծար :

կեց , պիտի խլուի : *14 Թող տուէք զանոնք . կոյրեր են , կոյրերու առաջնորդներ . կոյր կոյրի երբ կ'առաջնորդէ , կը սխալի . եւ երկուքն ալ փոսը կ'ընկնին » : *15 Պատասխան տուաւ անոր Պետրոս ու կ'ըսէ . « Մեկնէ մեզի այս առակը » : 16 Կ'ըսէ Յիսուս . « Դեռ դուք անմիտ էք . 17 Եւ չէ՞ք իմանար թէ ամեն բան որ բերնէն կը մտնէ , փորը կ'երթայ : 18 Իսկ ինչ որ բերնէն կ'ելլէ , սրտէն կուգայ , եւ այն կը պղծէ մարդը : 19 Որովհետեւ սրտէ կ'ելլեն չար խորհուրդներ , սպանութիւններ , շնութիւններ , պոռնկութիւններ , գողութիւններ , սուտ վկայութիւններ , հայրոյութիւններ : 20 Այս ամենն է , որ կը պղծէ մարդը , սակայն չլուացուած ձեռք ուտելը չպղծեր մարդը » :

*21 Եւ Յիսուս անկէց ելլելով գնաց Տիւրոսի եւ Սիդոնի կողմերը : *22 Եւ ահա Քանանացի մէկ կին անոնց սահմաններէն գալով , կ'աղաղակէր ու կ'ըսէր . « Ինծի ուղորմէ , Ով Տէր , Դաւթի որդի . իմ աղջիկս չարաչար կը դիւահարի » : *23 Եւ ան պատասխան չտուաւ անոր , եւ անոր աշակերտները մօտենալով կ'աղաչէին անոր ու կ'ը-

11. Յիսուս լու ի լու ժողովրդեան կը քարոզէ Թէ մարդոյ սրտէն ելածն է զմարդ պղծողը , այսինքն ամէն չար խորհուրդներ , որոցմէ յառաջ կուգան սպանութիւններ , շնութիւններ , պոռնկութիւններ , գողութիւններ , սուտ վկայութիւններ , հայրոյութիւններ եւ այլն :

12. Աշակերտք երբ կը յայտնեն Թէ Փարիսեցիք գայթակցեցան , Յիսուս կը պատասխանէ . « Ան բոյսը որ իմ Հայրս տնկած չէ , պիտի խլուի » : Այսպէս ոչ որ կ'աշակերտի Աստուծոյ արքայութեան , եթէ ոչ շնորհօք Աստուծոյ :

14. Յիսուս չէր վիճեր , այլ կ'աւանդէր իւր խօսքն այնպիսիներու , որք պատրաստ էին ի լուր ճշմարտութեան : Ամէն ատեն ամէն մարդիկ որ կ'ապաւինին տղէտ առաջնորդներու , ոչ Թէ միայն կը մեղադրուին , այլ եւ կը պատժուին զլորելով ի վիհն կորստեան :

15. Թէ սրտէ ելածէն մարդ կը պղծուի , ոչ Թէ բերանը մտածէն , Պետրոս առակ կը կարծէ , ուստի Յիսուսէն գոգ կը կշտամբուի , չիմանալուն համար այսքան պարզ մէկ ճշմարտութիւնը : Աւանդութիւններու այս պարսաւը Մարկոս եւս կը գրէ (է . 1—23) :

21. Յիսուս Կափառնայումէ մեկնելով կուգայ Տիւրոսի ու Սիդոնի կողմերը . « Ի կողմանս յայտսիկ գնալով՝ դուռն բանայ հեծանոսաց հաւատոյ , զի ոչ եթէ Հրէից միայն իցէ Աստուած , այլ եւ հեծանոսաց » (Մործորեցի) :

սէին, «Արձակէ զանի, վասնզի մեր ետեւէն կը պոռայ» :
 *24 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Չզրկուեցայ ուրիշի,
 եթէ ոչ Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն» : *25 Եւ
 ան մօտենալով կ'երկրպագէր անոր եւ կ'ըսէր. «Ով Տէր,
 օգնէ ինձի» *26 Պատասխան տուաւ անոր ու կ'ըսէ. «Ա-
 դէկ չէ տղաներու հացը առնուլ եւ շուներուն նետել» :
 *27 Եւ ան կ'ըսէ. «Այո, ով Տէր, որովհետեւ շուներն ալ
 իրենց Տիրոջ սեղանէն ընկած փտորներէն կը կերակրուին» :
 28 Այն ատեն պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ, «Ով
 կնիկ, քու հաւատքդ մեծ է. քեզի թող ըլլայ, ինչպէս որ
 կ'ըզգես» . եւ անոր աղջիկը նոյն ժամուն բժշկուեցաւ :
 *29 Եւ Յիսուս անկէջ երթալով, եկաւ Գալիլեացիներ-
 րուն ծովեզրը, եւ լեռը ելլելով հոն կը նստէր : 30 Անոր
 քովը մօտեցան շատ ժողովուրդներ, որոնք իրենց հետ
 ունէին կաղեր, կոյրեր, համբեր, հաշմանդամներ եւ ու-
 ըրիչ շատեր եւ զանոնք բժշկեց : 31 Այնպէս որ ժողո-
 վուրդները կը բժշկուէին, կոյրերը կը տեսնէին եւ Իսրա-
 յելի Աստուածը կը փառաւորէին : *32 Եւ Յիսուս աշա-
 կերտները իր քով կանչելով կ'ըսէ. «Կը գթամ այդ ժո-

22. Այս կինն էր Փիւնիկ Ասորի (Մարկ. Է. 24—30) եւ հեծանոս: Փիւ-
 նիկէ էր մասն Գանանու, ուր կային յայնժամ շատ Հրեայներ: Յիսուսի
 հրաշագործ զօրութիւնն ի հեծանոսս իսկ հռչակուած էր, եւ այս կին ու-
 րեմն հաւատով կը խոստովանէր Թէ Յիսուս է որդի Դաւթի, Մեսիայ, եւ կը
 խնդրէր որ իւր այսահար աղջիկը բժշկուի :

23. Յիսուս ի սկզբան չուզեր այս կնոջ լսել, մինչ զի աշակերտք կը
 ստիպուին իրենք եւս աղաչել. այսպէս մտրդ երբ Թախանձագին կը դիմէ
 Աստուծոյ, կ'ունենայ միշտ միջնորդներ, բարեխօսներ Թէ յերկրի եւ Թէ
 յերկինս :

24. Յիսուս իւր անասման ազգասիրութեան օրինակն է որ կուտայ,
 այլ ապերախտ հրէութիւնն երբեք չուզեց տեսնել նորա այս ձիրքը :

25. Կինն անյուսահատ կ'երկրպագէր ու կ'աղաչէր:

26. «Հող» զվարդապետութիւնն եւ զբժշկութիւնն կոչեաց, եւ ման-
 կունս զԻսրայէլ, ըստ այնմ տղայ էր Իսրայէլ, եւ ես սիրեցի զնս. որք քան
 զշունս կատաղիք եղեն յետոյ, իսկ շունս զհեծանոսս, յաղագս... կուռան
 մոլելոյ զօրէն շանց, ըստ այնմ շնայր ընդ քարի եւ փայտի» (Մործօրեցի) :

37. Գեղեցիկ է պատասխանն այս կնոջ, եւ Յիսուս հիանալով կը զոչէ.
 «Ով կին, հաւատքդ մեծ է» : Կինը կը մտիժարուի Այսպէս ո՛ր եւ է մտրդ

դողդղեան վրայ, որովհետեւ երեք օր է որ իմ քույս են, եւ բան մը չունին ուտելու, եւ զանոնք անօթի արձրկել չեմ ուզեր, կարելի է որ ճամբան մարմրին»։ 33 Աշակերտներն անոր կ'ըսեն, «Ուրեմն այս անապատին մէջ մեզի ուսկից ըլլայ այնչափ հաց, որ այսչափ ժողովուրդ կշտանայ»։ 34 Եւ Յիսուս անոնց կ'ըսէ. «Քանի հաց ունիք». եւ անոնք կ'ըսեն, «Եօթը հաց ու քանի մը մանր ձուկեր»։ 35 Եւ հրամայեց որ ժողովուրդը նստի գետնի վրայ։ 36 Եւ եօթը հացերը ու ձուկերը առնլով գոհացաւ եւ կտրեց եւ տուաւ աշակերտներուն. անոնք ալ ժողովուրդին։ 37 Կերան ամենքն ու կշտացան, եւ կտորներուն փտորները եօթն զամբիւղ լեցուն վերուցին։

38 Եւ որոնք որ կերան գրեթէ չորս հազար մարդ էին կնիկներէն ու տղաներէն զատ։

*39 Երբ ժողովուրդները արձրկեց, նաւը մտաւ եւ Մակդաղայի սահմանները եկաւ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

*1 Եւ Փարիսեցիներն ու Սադուկեցիները մօտենալով, փորձելով կ'ուզէին անորմէ, երկնքէն նշան ցոյց տալ

երբ անհուն հաւատով կը դիմէ առ Աստուած, անհնար է որ չլսուի Աստուծմէ։

29. Յիսուս կը վերադառնայ ի Գալիլեա, եւ լեռը կը քաշուի, հոն կուգայ ժողովուրդը եւ հոն Յիսուս կը բժշկէ կոյրեր, կաղեր, համբեր եւ անդամալոյծներ, մինչ զի բոլոր ժողովուրդը կը փառաւորէ Իսրայելի Աստուածը, (Մարկ. է. 34 - 37)։

32. Յիսուս այս անգամ եւս կը կերակրէ ժողովուրդը որ էին Թուով չորս հազար. եօթը բլիթներն ու քանի մը մանր ձուկերն օրհնելով կուտայ ժողովրդեան։ «Այլ է այս նշան, Թող զառաջինն, քանզի յառաջագոյն յաղագս հինգ հազարացն աշակերտքն աղաչէին զնա, իսկ այժմ յաղագս չորից հազարացն յինքենէ առնէ առանց ուրուք աղաչելոյ» (Ծործորեցի)։ Բոլոր ձառընտիրք միաձայն կը վկայեն Թէ Յիսուս երկիցս հրաշտործեց հաց տալով ժողովրդեան (Մարկ. Ը. 1—10)։

39. Մագդաղէի էր զուտաւ, հեռի իբր երեք մղոն ի հիւսիսոյ Տիբերական ծովուն, ուր ծնուած էր Մարիամ Մագդաղենացի։

4. Առաջին անգամ Փարիսեցիներն ու Գալիլեները Յիսուսէն նշան խնդ-

անոնց : 2 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . 3 «Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ , *4 Եւ նշան պիտի չտրուի անոր , բայց եթէ Յովնան մարգարէին նշանը» . եւ թողուց զանոնք ու գնաց :

5 Եւ աշակերտներն անդիի կողմը գացին , եւ հաց առնուլ մոռցան : *6 Եւ Յիսուս կ'ըսէ անոնց . «Նայեցէք ու զգուշացէք Սաղուկեցիներուն ու Փարիսեցիներուն խմորէն» : *7 Անոնք իրարու հետ կը խորհէին թէ «Հաց չառինք հեղեղի» : 8 Յիսուս գիտցաւ , ու կ'ըսէ . «Ո՛վ թերեհաւատներ , ի՞նչու ձեր մտքին մէջ կը խորհիք թէ հաց չունիք : 9 Դեռ չէ՞ք իմանար եւ չէ՞ք յիշեր հինգ հացը հինգ հազարներունը , եւ քանի՞ սակառ վերուցիք : 10 Ո՛չ ալ եօթը հացը չորս հազարներունը , եւ քանի՞ զամբիւղներ վերուցիք : 11 Ուրեմն ի՞նչպէս չիմանաք թէ հացի հա-

րեցին (ԺԲ. 38) . այս անգամ Սաղուկեցւոց հետ միանալով նորէն նշան կը խնդրեն , բայց երկնքէն ցոյց տալ : Որովհետեւ Յիսուսի հրաշագործութիւններուն շատերն արդէն հին-կտակարանէն լսած էին , եւ Հրեայք կը հաւատային թէ դեւերու ձեռամբ եւս հրաշքներ կը գործուին աշխարհիս մէջ , Եւ միանգամայն կը հաւատային թէ ճշմարիտն Աստուած միայն կրնայ նշան տալ երկնիէն . մանաւանդ թէ ըստ մարգարէութեան Դանիէլի Որդի մարդոյ երկնքի ու երկրի մէջ լիազօր պիտի ունենար իշխանութիւն (Է. 13-16) ; ուստի կը փորձեն Յիսուսը , որ երկնքէն տայ նշան , եթէ է Մեսիայն : Յիսուս գիտնալով , զի եթէ ինչ որ ընէր , ոեւէ նորանշան գործ էր հրաշք , նոցա անհուատ սրտին պիտի չազդէր , այլ դարձեալ սղւտ ու փուտ բարոյրներ պիտի հնարէին ու համբաւէին , եւ արդէն իսկ նշանն եղած էր յայնժամ , վտանգի Յուդայի գաւազանը շտխջխտած էր (Ծննդ. ԽԹ. 10) , Դանիէլի եօթանասուն եօթներորդ Գէլք վերջացած էին , Եղիս եկած էր յանձին Յովհաննէս մկրտչի , (Մաղ. Դ. 5-6) , եւ զուշակուած նշանները (Ծն. ԿԱ. 1) Յիսուս կը կատարէր արդէն , ուստի իրաւամբ «Չար ու շնացող» կոչեց այն ազգն , որ այսբան նշաններէ յետոյ , տակաւին նշան կը փնտռէր , եւ այն եւս՝ ոչ թէ հաւատալով , այլ փորձելով :

*4. Որովհետեւ Հրեայք սովոր էին նշան խնդրել (Յովհ. Բ. 18. 2. 30: Ա. Կորնթ. Ա. 22) , Յիսուս Յովնան մարգարէն վերստին յիշելէ յետոյ կը մեկնի անտի և կը հասնի ի Բեթսայիդա (Մարկ. Ը. 11-13. 22) :

6. Աշակերտք կարծեցին թէ Յիսուս կը պատուիրէր հաց չը գնել Փարիսեցիներէն , իբր թէ նոցա հոցին խմորը պիղծ ըլլար , մինչդեռ նա արդէն ըսած էր թէ բերանէն մտածը չպղծեր զմարդ :

մար չըսի ձեզի, Փարիսեցիներուն ու Սադուկեցիներուն խմորէն զգուշանալ: 12 Այն ատեն հասկըցան, թէ չըսաւ զգուշանալ խմորէն, այլ Փարիսեցիներուն ու Սադուկեցիներուն ազանդէն:

*13 Եւ Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը երթալով կը հարցընէր աշակերտներուն ու կ'ըսէր. «Մարդիկ զո՞վ կ'ըսեն իմ վրայօք, թէ է Որդի մարդոյ: *14 Եւ անոնք կ'ըսեն. «Մէկը Յովհաննէս մկրտիչը, եւ ուրիշներ Եղիան, եւ կէսերն Երիմեան, կամ մարգարէներէն մէկը»: 15 Յիսուս կ'ըսէ անոնց. «Բայց զուք զո՞վ զիս կ'ըսէք թէ ըլլամ»: *16 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր ու կ'ըսէ. «Դուն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ որդին»: *17 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ անոր. «Ո՞վ Յովհաննի որդի՝ Սիմոն, երանի՛ քեզի. որովհետեւ մարմին ու

7. Աշակերտք տուանց յիշելու նախ 5000 եւ յետոյ 4000 ժողովուրդ կերակրելը՝ կը խորհին թէ հաց առած չեն և միայն մէկ նկանակ ունին (Մարկ. Ը. 14). ուստի իբր Թերեհուստներ կը յանդիմանուին, վասնզի Յիսուս նոցա ազանդին համար ըսած էր, մանաւանդ ուրիշ ժամանակ յայտնի ըսաւ թէ Փարիսեցիներուն խմորն էր կեղծաւորութիւն, այսինքն այս ախտով վարակուած էին նոքա (Ղուկ. ԺԲ. 4):

13. Այժմ Պանիաս, Բեթսայիդայի մօտ. այս քաղաքը նորոգեց Փիլիպպոս չորրորդագետ եւ կոչեց Կեսարիա ի պատիւ Տիբեր կայսեր, որ յետոյ կոչուեցաւ Փիլիպպոսի Կեսարիա, որոշելու համար միւս Կեսարիայէն (Գործք. Ժ. 4) որ էր Յոպպէի մօտ, առ եզերք Միջերկրական ծովուն:

14. Ժողովրդեան կարծիքն էր զոր յայտնեցին Առաքեալը: «Ընդէ՞ր ինքն ոչ զանձնէ վկայէ թէ ո՞ր էր իցէ, այլ ի նոսա հարցանէ. զի կամի ոչ զինքն վասն իւր վկայել բանիւ՝ այլ ի ձեռն գործոցն ի նոցա վկայութեանց հաւատարիմ լինել, եւ սպա ի հաստատութիւն նոցա բանիցն զինքն ծանուցանել» (Ծործորեցի):

16. Պետրոս կը փութայ տալ այն վկայութիւնն, զոր երբեմն երբեմն Առաքեալք տուած էին արդէն (Յովհ. Ա. 49, Մատթ. ԺԴ. 33), Կենդանի է Աստուած, վասն զի նա է ոգի խոհուն եւ անհուն զօրութեան տէր՝ անձնաւոր էութիւն, ոչ թէ կուռքերուն պէս անշունչ եւ անոգի: Պետրոս դաւանելով թէ Յիսուս էր Քրիստոս, այսինքն Օծեալը, դաւանեցաւ նորա մարդկութիւնը, վասնզի Մեսիայն, պիտի սերէր Յուդայէն ու Դաւթէն եւ պիտի ըլլայ որդի Դաւթի, նոյնպէս Պետրոս դաւանելով թէ Յիսուս էր որդի Աստուծոյ, դաւանեցաւ նորա աստուածութիւնը:

արիւն չյայտնեց քեզի, այլ իմ Հայրս, որ երկինքն է :
 *18 Եւ ես քեզի կ'ըսեմ. որ դուն ես վէմ, եւ այդ վէմին
 վրայ պիտի շինեմ իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները
 պիտի չյաղթեն անոր : 19 Եւ քեզի պիտի տամ երկնքի
 արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրիս
 մէջ, կապուած թող ըլլայ երկնքի մէջ, եւ ինչ որ արձըկես
 աշխարհիս մէջ, արձըկուած թող ըլլայ երկնքի մէջ » :
 *20 Այն ատեն աշակերտներուն սաստեց որ մէկու մը չըսեն
 թէ ան է Քրիստոսը :

21 Այնուհետեւ Յիսուս սկսաւ յայտնել թէ պէտք է
 իրեն երթալ Երուսաղէմ, եւ շատ չարչարանքներով չար-
 չարուիլ եւ քահանայապետներէն ու դպիրներէն եւ ժո-
 զովրդեան ծերերէն անարգուիլ, եւ սպաննուիլ եւ երրորդ
 օրը յարութիւն առնուլ : *22 Եւ Պետրոս զանի առանձինն

17. Յիսուս Պետրոսի հօր անունը կը յիշէ, որպէսզի ցոյց տայ թէ
 ճՈրպէս դու Յօնանու որդի ես, ի նորին բնութենէ ծնեալ, նոյնպէս և ես
 իմոյ հօրն ծնունդ եմ, ի նորին բնութենէ յառաջ եկեալս, (Մործորեցի) :
 Պետրոս կ'երանուի իւր այս դաւանութեան համար, այլ այս երանութիւնն
 ամէնուն համար է, որք զնոյն դաւանութիւն ունին ամէն ատեն ու ամէն
 տեղ. այլ սակայն այս դաւանութիւնն ոչ ոք կրնայ ունենալ առանց աս-
 տուածային շնորհաց մարմին ու արիւն այսինքն մարդկային միտքն ու
 սիրտ չեն ինքնին ընդունակ այս գերագոյն ճշմարտութեան, թէ Յիսուս է
 որդի Աստուծոյ, մինչեւ որ աստուածային շնորհօք չօժտուին, չսրբուին
 ու չմարբուին :

18. Պետրոս կը թարգմանուի վէմ. նա արդարեւ իւր այս դաւանու-
 թեամբ եղաւ վէմ հաւատոյ, ինչպէս էին եւ միւս Առաքեալք (Եփես. Բ-
 20: Յայտ. ԻԱ. 14), Նոյն ինքն Պետրոս կը խոստովանի թէ նոքա՝ որք
 ունին ճշմարիտ հաւատք ի Քրիստոս, են կենդանի քարեր հաստատուած ի
 վերայ վիմին անկեան՝ Յիսուսի Քրիստոսի (Ա. Պետ. 4-10) : Զէր Պետրոս
 բուն վէմը, զի եթէ ըլլար, անմիջապէս քիչ մը յետոյ չէր կոչուեր Յիսու-
 սէն աստանայ եւ երբեմն չէր ըլլար ուրացող (ԻԶ. 69-75) : Տխմարութիւն
 է կարծել թէ Քրիստոսի հաստատած եկեղեցին հիմնուած ըլլայ Պետ-
 րոսի վրայ եւ թէ կապելու եւ արձակելու իշխանութիւնը Քրիստոս միայն
 Պետրոսի տուած ըլլայ, մինչդեռ քիչ մը յետոյ նոյն ինքն Տէր Յիսուս
 միւս առաքեալներուն ալ կուտայ (Մատթ. ԺԷ. 18), իսկ յարութենէ
 յետոյ դարձեալ միեւնոյն իշխանութիւնը ամենուն հաւասար կուտայ
 (Յովտ. Ի. 22-24) : Պետրոս այս խօսքը կը լսէ Յիսուսէն, վստն գի ինքն

մէկդի առնելով սկաւ վիճիլ անոր հետ, եւ ըսել. «Քաւ լիցի քեզի, Տէր, այդ բանը թող չըլլայ»: ²³ Եւ ան Պետրոսին դառնալով կ'ըսէ. «Ետիս գնա, Սատանայ. դուն ինձի գայթակղութիւնն ես, վասնզի Աստուծոյ բաները չես մտածեր, այլ մարդերունը»:

^{*24} Այն ատեն Յիսուս կ'ըսէ իւր աշակերտներուն. «Ով որ կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող ուրանայ իր անձը. եւ թող իւր խաչը առնու եւ իմ ետեւէս թող գայ: ²⁵ Որովհետեւ ով որ կ'ուզէ իւր անձը ապրեցընել, զայն պիտի կորսնցընէ, եւ ով որ ինձի համար իր անձը կորսնցընէ, զայն պիտի գտնէ»: ^{*26} Ի՞նչ պիտի շահի մարդ, թէորք բոլոր աշխարհս վաստըկի եւ իր անձը տուժէ; կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ: ^{*27} Որովհետեւ Որդի մարդոյ իր Հօր փառքովն ու իր հրեշ-

եղաւ ի դիմաց միւսներուն դուանող: Եթէ էր նա բուն վէմը, պիտի չըփշրուէր, ղե՛ք դժողքի դռներուն, սատանայի բոլոր զօրութեանց չգարնուած, եւ արքայութեան բռնալիները թոյլ չէր տար որ յափշտակուին իրմէն, ուրանալով զՔրիստոս, Կայիափայ քահանայապետին տան մէջ:

20. Աշակերտք կը բաղձային որ Յիսուս այլ եւս յայտնուի իբր Մեսիայ, այլ կը սաստէ նոցա, թէ եկած չէր յաշխարհ անտի փառաց համար, և ընդ հակառակն անարգանօք պիտի մեռնէր, այլ սակայն երբորդ օրը յարութիւն պիտի առնուր:

22. Պետրոս կ'երեւի թէ հպարտացած այն խոստմամբ թէ եկեղեցին իւր վրայ պիտի շինուի, եւ պիտի ունենար երկնքի արքայութեան բանալիները, եւ կամ առ անհուն սիրոյն՝ կը մղուի մինչեւ իսկ յանդիմանել իւր վարդապետը, այսինքն պնդողինս թախանձել որ Յիսուս չկրէ ոչ չորչարանք եւ ոչ մահ: Այլ չարաչար կը կշտամբուի, լսելով սա ծանր խօսքը լերթ, յետս իմ, սատանայ: Այսպէս նա որ եղաւ քիչ մը առաջ վէմ հաւատոյ, այժմ կ'ըլլայ վէմ գայթակղութեան, կարծելով Քրիստոսէն աւելի բան գիտնալ: Մարդիկ ընդհանրապէս աշխարհայինը կը խորհին, մինչդեռ երկնայինը խորհելով եւ զայն ստանալու հետապնդելով աւելին կը շահին:

24. Յետոյ Յիսուս բացէ ի բաց կը յայտարարէ թէ իւր աւետարանին հետեւողք պէտք չէ որ ականկալեն աշխարհային բարիք, այլ ուխտելու են իսպառ ուրացումն անձին եւ աշխարհիս. ուրեմն չորչարուիլ իրեն պէս այսինքն կրել իւրաքանչիւր որ իր խաչը, այս է փրկութեան միակ ճանապարհը, վասն զի կը յաւելու:

26. «Ի՞նչ կը շահի մարդ, եթէ բոլոր աշխարհս վաստըկի եւ իւր անձը կորսնցընէ, կամ իւր անձին համար ինչ ազատչէք պիտի տայ»:

տակներովը պիտի գայ, եւ այն ատեն եւ ամէն մէկուն իր զործերուն համեմատ պիտի հատուցում ընէ: 28 Ճըշմարիտ կ'ըսեմ ձեզի. թէ ասոնցմէ, որոնք հոս են, պիտի ըլլան քանի մը հատեր, որոնք մահուան համը պիտի չառնուն, մինչեւ որ տեսնեն Որդին մարդոյ իր արքայութեամբն եղած):

ՔԼԱՌԹ ԺԷ.

*1 Եւ Յիսուս վեց օրէն ետքը կ'առնու իր հետ Պետրոսն ու Յակոբոսը եւ անոր Յովհաննէս եղբայրը, եւ զա-

27. Յետոյ Քրիստոս իւր աստուածային փառքն իրեններուն աւետելու համար կը յայտնէ թէ պիտի գայ վերստին փառօք ի դատաստան, և թէ իրեններէն մէկ բունիներն, որք էին յայնժամ ունկնդիր, կենդանի աչօք իւր այս Թագաւորութիւնը պիտի տեսնեն, այսինքն Երուսաղեմի կործանմամբ հին տնտեսութեան վախճանը և նոր տնտեսութեան սկզբնաւորութիւնը: Այս դէպքն եղաւ զրեթէ քառասուն տարի յետոյ, և Յովհաննէս աւետարանիչ, եւ ուրիշ քանի մը աշակերտներ ևս, անշուշտ մահուան համը չէին առած յայնժամ.

1. Մատթէոս և Մարկոս վեց, իսկ Ղուկաս ուժ օրէն կը գրեն. ապաքէն Ղուկաս Պետրոսեան դաւանութեան և լեռնէն իջնելու օրերն ալ ի միասին կը հաշուէ: Բայց թէ քնչու միայն Պետրոսն ու Յակոբոս և Յովհաննէսն առաւ հետը եւ ոչ միւսները. — կ'երեւի թէ այս երեքն այն աստուածային փառաց յայտնութեան լուսազոյն պատրաստուած էին, ուրիշ անգամ եւս այս երեքն առաւ հետը, նախ ի յարութեան Յայրոսի աղջկան (Մարկ. Ե. 37) և յետոյ ի Գեթսեմանի (Մատթ ԻԶ. 37): Երբքին վկայութիւնը բաւ էր յետ յարութեան Տեառն: Նաեւ յայտնի է թէ Յիսուս կ'զգուշացնէր իրենները չհամբաւել թէ է Մեսիայն. եթէ միւսներն եւս ներկայ լինէին, միշտ Թախանձագին պիտի աղաչուէր ամենէն, որ այդ փառքը ցոյց տայ բովանդակ Իսրայելի, մինչդեռ Յիսուսի նպատակն էր մեռնիլ ի փրկութիւն աշխարհի եւ ապա այդ փառքէն աւելի մեծազոյն փառօք իւր աշակերտներուն յաճախ երեւելով պիտի սրտապնդէր զնոսա, որ ալ աներկիւղ քարոզեն Աւետարանը:

Ո՞ր լեռը յայտնի չէ, միայն թէ ընդհանուր աւանդութիւն կայ թէ Թափորն էր, Թող որ կարծողներ կան թէ Հերմոնն եղած ըլլայ այն:

ննք բարձր լեռ մը կը հանէ առանձին : *2 Եւ անոնց առ-
ջին այլակերպեցաւ , եւ անոր երեսներն արեւու պէս
փայլեցան , եւ անոր հագուստները լոյսի պէս ճերմակ
եղան : *3 Եւ ահա անոնց երեւցան Մովսէսն ու Եղիան ,
որոնք կը խօսէին անոր հետ : *4 Պատասխան տուաւ Պետ-
րոս ու կ'ըսէ Յիսուսին . « Ով Տէր , աղէկ է որ մենք հոս
մնանք . Թէ որ կ'ուզես , երեք վրան շինենք , մէկը քեզի
եւ մէկը Մովսէսին եւ մէկը Եղիային » : *5 Եւ ան դեռ կը
խօսէր , ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի ե-
ղաւ . ձայն եղաւ ամպէն եւ կ'ըսէ : « Ատ է իմ սիրելի
որդիս , որուն հաւնեցայ , ատոր մտիկ ըրէք » : *6 Աշա-
կերտներն երբ լսեցին , իրենց երեսներուն վրայ ընկան
եւ խիստ վախցան : 7 Եւ Յիսուս մօտենալով անոնց դպաւ
ու կ'ըսէ . « Ոտքի ելէք եւ մի վախնաք » : 8 Իրենց աչքերը
վերուցին եւ մէկը չտեսան , բայց միայն Յիսուսը :

2. Յիսուս յանկարծ կ'այլակերպուի . արեւու պէս կը փայլին երեսներն
ու հանդերձները կը ցրան լուսով . (Բ . Պետ . Ա . 16 ; Մարկ . Թ . 1 . 12 ;
Ղուկ . Թ . 28-36) : Ոչ այնպէս որպէս լուսաւորեցաւ Մովսէս (Ելք ԼԴ . 29-
30) , և ոչ Ստեփաննոս (Գործք . 2 . 15) : Յիսուս երկրաւորի ունեցաւ
կերպարան , մինչ էր ի մէջ մարդկան , այժմ երկնաւորի կ'առնու կերպա-
րան , զի այժմ երկնաւորաց հետ պիտի տեսակցէր :

3. Երկու մեծ մարգարէները , Մովսէս և Եղիա կ'երեւին . « Քննելի է և
այն Թէ ուստի ճանաչեցին առաքեալքն զմարգարէսն . . . ինձ Թուի Թէ
յարուժեան էր օրինակ իրն , և ի յարուժեանն հանդերձեալ եմք ճանաչել
զմիմեանս , որպէս մեծատունն զԱբրահամ , զայր մի՝ որ ի վաղնչուց իսկ
մեռեալ էր , (Երոժորեցի) : Թէ և կայ կարծիք , Թէ տաճարին մէջ կային
այս մարգարէներուն պատկերները և կամ Թէ Յիսուս յանուանէ խօսելով ,
Առաքեալք իմացան Թէ նորս էին Մովսէս և Եղիա : Որոց մին՝ Եղիա յեր-
կինս պիտի տանէր մարդկային ազգի փրկութեան աւետիսը և միւսը՝ Մով-
սէս ի դժոխս , վասն զի սոքա Յիսուսի մահուան վրայոք խօսեցան (Ղուկ .
Թ . 31) , աղաչելով որ զոհուի նա իբր զառն Աստուծոյ և իւր արեամբ
սրբուի մեղապարտ մարդկութիւնը և փրկուի իսպառ :

4. Պետրոս ինչամտի եղած չէր զիտեք Թէ ինչ խօսէր . այն երկնաւոր
հիւրերու և նոյն իսկ տէր Յիսուսի երեք խրճիթ շինելու տխմար աղա-
չանքը կ'ընէր , իբր Թէ նորս կարօտ եղած ըլլային կամ պէտք ունեցած
ըլլային :

*9 Եւ երբ ան լեռնէն կ'իջնէին, Յիսուս անոնց պատուիրեց ու կ'ըսէ. «Մէկու մը մի ըսէք այդ տեսիլքը, մինչեւ Որդի մարդոյ մեռելներէն յարութիւն աննու» :
 *10 Աշակերտներն անոր հարցուցին ու կ'ըսեն. «Ի պիտի ներն ի՞նչու կ'ըսեն, թէ Նդիան առաջ պէտք է որ գայ» :
 11 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ անոնց. «Նդիան կուգայ եւ ամէն բան պիտի հաստատէ. 12 Բայց կ'ըսեմ ձեզի, թէ Նդիան եկած ալ է, եւ զանի չճանչցան, հապա անոր ըրին, ինչ որ ուզեցին. նոյնպէս եւ Որդի մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի» :
 13 Այն ատեն աշակերտներն իմացան թէ Յովհաննէս մկրտչի համար ըսաւ անոնց :
 *14 Եւ երբ եկան ժողովրդին քով, մարդ մը մօտեցաւ, ծնրադրելով կ'ըսէր «Ով Տէր, իմ զաւակիս գթա՛, որովհետեւ կը դիւահարի եւ չարաչար կը տանջուի. շատ անգամ կրակի մէջ կ'ընկնի եւ երբեմն ջուրի մէջ : 15 Եւ

5. Լուսաւոր ամպն էր նշանակ Աստուծոյ մօտաւորութեանն, որպէս երբեմն յանապատին (Ելք ԺԳ. 21-22), և ի տաճարին Սողոմոնի (Գ. Թագ. Ը. 10-11) : Այս անգամ ևս Հայր Աստուած կը վկայէ Թէ «Դա է որդի իմ սիրելի», Շատ զեղեցիկ կը գրէ Ծործորեցին. «Մի հակառակիր, ով Պետրէ ընդդէմ աշխարհի փրկութեան, եւ մի ներհակ լինիր մահկանացու ազգիդ մարդկան կենդանութեան, բանզի ոչ դա առաւել քո իցէ որդի, բան Թէ իմ, զի իմոյ ծոցոյս է ծնունդ եւ հայրական սրտիս է բղխումն. և մի զիս նուստտ բան զկրթահամ և առանց զՅոյ ցուցանելի, զի աւանիկ նա ի միածինն իւր և ի միամօր սիրելին և յաւ իտեան ծնունդ ոչ խնայեաց վասն իմ, արդ մի յետնեցայց ի սիրոյ նորա, որ յառաջեաց, պարտական արար զիս. այդ ոչ է մտերմութիւն իմ, այլ Թշնամութիւն» :

6. Մարդիկ կը վախնան Աստուծոյ երեսէն, Քրիստոս է որ կը փարստէ այդ երկիւղը :

9. Այս տեսիլն եղաւ ի գիշերի և ի վաղիւն երբ կ'իջնէին լեռնէն (Ղուկ. Թ. 35), կը պատուիրէ Յիսուս մէկու մը բան մը չգրուցել, որպէս զիչ արծարծուի փափաք յաշակերտս, իսկոյն Սաղուսոր հուշակելու համար զՅիսուս, որով ալ աւելի զրգուռին նորա Թշնամիք :

10. Մինչ Յիսուսի կը հարցընէին Թէ նախ Նդիա գալու էր, ինչ որ արդէն ըսած էր (Մատթ. ԺԱ. 14), կը կրկնէ այժմ, Թէ Յովհաննէս մկրտչիչ էր Նդիա, և ինչպէք զնա ատեցին ու մեռուցին, նոյնպէս ինքն ալ պիտի չարչարուէր ու մեռնէր :

զանի բերի քու աշակերտներուն , եւ չկրցին բժշկել : 16 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ . « Ով անհաւատ ու ծուռ ազգ , մինչեւ երբ քեզի հետ ըլլամ . մինչեւ երբ ձեզի համբերեմ . բեր զանի ինձի » : 17 Եւ Յիսուս անոր սատեց , եւ անորմէ դելը ելաւ եւ տղան բժշկուեցաւ նոյն ժամէն : 18 Այն ատեն աշակերտներն առանձինն մօտեցան ու կ'ըսեն Յիսուսի . « Մենք ինչու չ'կրցինք զանի հանել » : 19 Եւ ան կ'ըսէ անոնց . « Չեր թերահաւատութեանը համար . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ որ մանանելի հատին չափ հաւատք ունենաք , ըսէք աս լեռանը . « Ասկէց հոն փոխադրուէ » . եւ պիտի փոխադրուի . եւ բան մը անկարելի պիտի չ'ըլլայ ձեզի » : 20 Բայց այս տեսակը չ'ելլեր , եթէ ոչ աղօթքով ու պահքով :

*21 Եւ երբ անոնք Գալիլեայի մէջ կը պտըտէին , կ'ըսէ անոնց Յիսուս . « Որդի մարդոյ պիտի մատնուի մարդիկ-

13. « Թէպէտ ի լերինն զիսուսն Տեսուն աշակերտքն տեսին . սակայն զչարչարանս լսելով վշտանային , վասն որոյ ի սքանչելիս գայ , զի մխիթարեսցին » (Մործորեցի) : Յիսուս կը բժշկէ զիւսհարը , բայց թէ էր իւր աշակերտներն , որք առած էին իշխանութիւն բժշկութիւններ ընելու , այժմ չկրցին . կ'երեւի թէ զիւսհարին հայրն էր թերահաւատ , ուստի իրաւամբ կը կշտամբէ Յիսուս , գոչելով . « Ով ազգ անհաւատ եւ թիւր » :

19. Յետոյ առանձինն իւր աշակերտներն ալ կը յանդիմանէ , որք , կ'երեւի թէ տկարացած էին ի հաւատս , այսինքն չէին իրենց հաւատքը զօրացուցած աղօթքով ու պահքով , վասն զի ռեւէ հրաշագործութիւն կարելի չէ առանց աղօթից , պահոց եւ ճգնութեանց : Լեռն է օրինակ . հաւատոյ գործերն են ողորմութեան եւ ոչ զարմանաց , ուստի հարկ չկայ լեռան մը փոխադրութեան այլուր , որ է առօրեայ հրաշք :

21. Յիսուս վերստին կը ծանուցանէ իւր մահն , եւ աշակերտք խիստ կը տրտմին , թէ ինչու այսքան հրաշագործ ու բարերար մէկ վարդապետ տարապարտ մեռնի . չէին ըմբռնէր յարութեան խօսքը , վասնզի որպէս Ղուկաս կը զրէ , ծածկուած էր անոնցմէ (Թ. 45) :

23. Այս տուրքը չէր քաղաքային , այլ կրօնական . բոլոր Հրեայք , քսան տարեկանէ վեր , պարտական էին տալ երկդրամանը այսինքն կէս սիկղ , իբր 6 դահեկան , ի նպաստ տաճարին , որպէս հրամայուած էր ի ճեռն Մովսիսի (Ելք Լ. 12-16) : Պետրոս առանց Յիսուսի հարցընելու՝ « Այ՛ո , կը պատասխանէ , մինչդեռ ինքն էր դուանած թէ նա է որդի Աստուծոյ , ուրեմն ազատ էր նա այդ տուրքէն ,

ներուն ձեռքը : 22 Եւ զանի պիտի սպաննեն , եւ երրորդ օրուան մէջ յարութիւն պիտի առնու : եւ շատ տրամեցան :

23 Երբ անոնք Կափառնայում եկան , երկզրամեանը պահանջողները Պետրոսին մօտեցան ու կ'ըսեն : « Զեր վարդապետը երկզրամեանը չտար » . եւ կ'ըսէ . « Այո » : *24 Եւ երբ տունը մտաւ Յիսուս անորմէ առաջ կը զուրցէ . « Սիմօն , աշխարհիս թագաւորները ո՞րմէ կ'առնուն հարկը կամ տուրքը . իրենց զաւակներէն թէ օտարներէն » : 25 Եւ երբ ըսաւ թէ « Օտարներէն » . կ'ըսէ անոր Յիսուս : « Ուրեմն զաւակներն ազատ են : *26 Բայց որպէս զի չգայթակղեցնենք զանոնք , գնա ծովը եւ կարթ ձգէ , եւ առաջին ձուկը որ կ'ելլէ , առ . եւ անոր բերանը բաց , եւ պիտի գտնես սատեր , եւ զայն առնելով անոնց պիտի տաս ինծի ու քեզի համար » :

24. Յիսուս որ ամենագէտ էր , Պետրոսէ առաջ իբր յանգէտ՝ կը հարցընէ , « Թագաւորներն իրենց տուրքերն հրոցմէ կ'առնուն » : Պետրոս սովորական պատասխանը կուտայ , « Օտարներէն » , այսինքն իրենց հպատակներէն : Յիսուս իսկոյն կը խոստովանի թէ կայ առանձնաշնորհեալ դասակարգ մը , որ ազատ է տուրքէ , այսինքն Թագաւորաց որդիները , տիրող ցեղը :

26. Յիսուս որովհետեւ գայթակղութիւն տալ չէր ուզեր և օրինակ ըլլալու համար մեզ , զոհել մեր դրամը քան թէ մեր ազդեցութիւնը , կը հրամայէ Պետրոսի ի ծով ձգել կարծ և ձկան մը բերնի մէջէն առնուլ սատեր , ճիշդ երկու մարդու համար որոշուած տուրքի դրամ , և զայն տալով վճարել տուրքը : Յիսուս երբէք չըսեր թեպէ համար , որպէս երբեմն ըսաւ . « Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր և Աստուածն իմ և Աստուած ձեր (Յովհ. Ի. 17) . նա չէր երբէք հաւասարեցներ զինքը մարդոց , այլ Աստուծոյ , ուստի Պետրոսին կ'ըսէ . « Վճարէ տուրքը ինծի ու քեզի համար » . չըսեր « Մեզի » համար : Այսպէս տէր Յիսուս տուրք վճարելով օրինակ կ'ըլլայ մեզ , մեր տուրքերը վճարելու առ այն ամենայն իշխանութիւնս , որոց պահպանութիւնն է բարերար մեզ . զի ամենայն իշխանութիւնք ի վերուստ են և ի բարիս մեր : Ուրեմն Յիսուս օրինազանց ըլլալ չուզեց , թէ եւ ինքն էր քահանայ և Թագաւոր օծեալ Տեառն :

ՔԼՈՒԹ ԺԸ.

^{*1} Այն օրը Յիսուսի մօտեցան աշակերտներն ու կ'ըսեն. «Մենք ո՞վ մեծ պիտի ըլլայ երկնքի արքայութեան մէջ».
^{*2} Եւ Յիսուս տղայ մը իրեն կանչեց, զանի անոնց մէջ կայնեցուց, ^{*3} Եւ կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ չդառնաք ու չ'ըլլաք տղաներու պէս երկնքի արքայութիւնը պիտի չ'ամսնէք».
⁴ Ուրեմն ով որ իր անձը կը խոնարհեցնէ այս տղային պէս, ան է մեծը երկնքի արքայութեան մէջը».
^{*5} Եւ ով որ իմ անունովս այսպիսի տղայ մը կ'ընդունի, զիս կ'ընդունի».
^{*6} Եւ ով որ ինձի հաւատացող այս պզտիկներէն մէկը կը գայթակղեցընէ, աղէկ է անոր, որ անոր վզէն իշու ջաղացքի քար մը կախուի եւ ծոփու անդունդին մէջ ընկողմի».
^{*7} Վայ աշխարհի գայթակղութեանց երեւէն. հարկ է

1. Պետրոսի տրուած խոստումը և սրբա, Յակոբոսի և Յովհաննէսի առանձին շնորհքը որ ի լերինն այլակերպութեան, զուցէ եղան պատճառ սոցա մեծամտութեան և միւսներուն եւս նախանձու, որով սա անպատեհ վէճը ժողովուրդէ, ինչպէս Ղուկաս կը գրէ. ով է իրենց մէջ մեծը (Թ. 46-49) եւ կամ երկնքի արքայութեան մէջ ո՞վ է մեծ: Մարկոս կը գրէ, թէ այս վէճն եղաւ ճամբան, եւ աշակերտք ի սկզբան լռեցին (Թ. 32-49), այլ Յիսուս գիտէր, ուստի հարցուց նոցա թէ ինչ կը վիճէին: Չարմանք մինչ Յիսուս կը խորհէր զանձն խոնարհեցընել մինչև իսկ ի մահ, նոքա կը խորհէին թէ իւրաքանչիւրն ի՛նչ պատուոյ ու փառաց պիտի հասնէր:

2. Ըստ Մարկոսի Յիսուս տղայ մը զիրկն առաւ (Թ. 35):

3. Եւ կը պատուիրէ նոցա լինել խոնարհամիտ իբրեւ զմանուկ. տղու մը հնչն է առաջին կամ յետին լինել: Այսպէս Յիսուս իւր արքայութեան փառքը նոցա միայն կը խոստանայ, որք իսպառ կը հրաժարին հպարտութենէ, անձնասիրութենէ և փառասիրութենէ:

5. Ուրեմն Յիսուսի հաւատացեալը ոչ թէ տղայի պէս խոնարհ լինելու են, եւ անմեղ, այլ եւ տղայներու անգամ, որոցմէ բնաւ ո և է ականալուութիւն չսպասուիր, մատուցանելու են ծառայութիւն: Նա որ ընկերութեան մէջ այսօրինակ կը վարուի, տկարագոյններու անգամ կը խոնարհի, ինքեան հաւասար զանոնք ընդունելով, ստուգիւ նա է մեծ թէ յերկրի աստ եւ թէ յերկինս:

6. Յետոյ Յիսուս ահաւոր կ'արտասանէ մէկ խօսք. ով որ մեղք գործէ.

որ գան գայթակղութիւններ, բայց վայ այն մարդուն, որուն ձեռքով գայթակղութիւն կուգայ: *8 Թէ որ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանի եւ քննէ նետէ. աղէկ է քեզի միաձեռանի կամ կաղ մանել կեանքը, քան թէ երկու ձեռք ու երկու ոտք ունենալ եւ ընկնիլ յաւիտենական կրակին մէջ: 9 Եւ թէ որ քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանի եւ քննէ նետէ. աղէկ է քեզի միականի մտնել կեանքը, քան թէ երկու աչք ունենալ եւ ընկնիլ կրակի գեհնին մէջ:

*10 Զգուշացէք, մի անարգէք այս պզտիկներէն մէկը. կ'ըսեմ ձեզի որ անոնց հրեշտակներն երկնքի մէջ միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը, որ երկինքն է: *11 Որովհետեւ Որդի մարդոյ եկաւ կորսուածը ապրեցնելու: 12 Ի՞նչ պէս կ'երեւի ձեզի, թէ որ մարդու մը հարիւր ոչխար ըլլայ եւ սնունդմէ մէկը մոլորի, իննսունինն ոչխարը լեռներուն մէջ կը ձգէ եւ կերթայ կը փնտռէ մոլորածը:

կամ ուրիշներու մեղք գործել տայ և կամ պատճառ ըլլայ ուրիշներու մեղք գործելուն, լու է՝ որ նորս վզէն շաղպքի բար մը կախուի եւ ձուրի ի ծով: Ընկերութեան մէջ այսպիսի մարդերու կեանքն ոչ Թէ միայն է անօգուտ, այլեւ է վնասակար, ուստի արժանի աստուածային արդարադատ խտտագոյն պատուհասի:

7. Աշխարհս գայթակղութեանց երեսէն եղած է միշտ ցաւոց և հեծութեանց աշխարհի, արժանի վայոյ. այլ բան ի՞նչ վայն է այն մարդուն, որոյ երեսէն կուգան գայթակղութիւնն, Թէ եւ գայթակղութիւնք առիթ են աւարիւններու ի հանդէս գալուն, որոց շնորհիւ կը մեղմանայ աղէտը, կը քաղցրանայ սրտերու դառնութիւնն և միսթարութիւնն ոչ նուազ ամէն ուրեք ամենուն կը հասնի եւ յաւիտենական փառաց պատկին արժանաւորք ալ աւելի կը բազմանան, և իրաւամբ կը վայեցին զայն, ուրեմն հարկ է գալ գայթակղութեանց, Թող ըլլան աշխարհիս մէջ գայթակղութիւնք, որպէս զի եւ ըլլան նոցա դէմ քաշամարտիկ զինուորներ:

8. Յիսուս աստ կը կրկնէ այն խօսքն որ ըսաւ լեռան Քարոզին մէջ: Անդ գուցէ միայն շնութեան մեղաց համար (Մատթ. Ե. 29-30), իսկ աստ ամէն տեսակ մեղաց համար:

10. Որպէսզի բոլորովին շնչէ Յիսուս գայթակղութիւն տալու ոնէ առիթ, կը քարոզէ Թէ զգուշանալ պէտք է չարհամարհել ամենէն տկարն իսկ, վասն զի Աստուած Թոյլ տուած է որ այդ տկարներն անգամ հրեշտակներէ պահպանուին: Նոցա անմուռնչ հեծութիւնն իսկ բաւական է զրգուր Աս-

13 Եւ թէ որ զանի գտնալու ըլլայ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ անոր վրայ աւելի ուրախ կ'ըլլայ քան թէ իննսուն եւ իննսերուն վրայ, որոնք մոլորած չեն։ Այսպէս իմ Հայրս որ երկինքն է, կամք չ'ունի, որ այս պզտիկներէն մէկը կորսուի։

*15 Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա, զանի յանդիմանէ, երբ դու եւ ան մինակ ըլլաք. թէ որ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ։ *16 Բայց թէ որ քեզի մտիկ չ'ընէ, առ քեզի հետ ուրիշ մէկն ալ եւ երկուք, որովհետեւ երկու կամ երեք վկաներու բերնէն պիտի հաստատուի ամեն բան, *17 Հապա թէ որ անոնց ալ մտիկ չ'ընէ, եկեղեցիին մէջ ըսէ. բայց եթէ եկեղեցիին ալ մտիկ չ'ընէ, քեզի թող ըլլայ ընդ հեթանոս ու մաքսաւոր։

*18 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի ինչ որ երկրիս վրայ կատէք, կապուած թող ըլլայ երկնքի մէջ, եւ ինչ որ ար-

տուծոյ բարկութիւնը։ Ամէն մարդ ունի իւր պահապան հրեշտակը (Մաղձ. ԼԳ. 7. ՂԱ. 11. Գործք. ԺԲ. 15. Եբր. Ա. 13-14)։ Հրեշտակը կը տրտմին եթէ մարդիկ չար գործեն, իսկ կ'ուրախանան, եթէ մարդիկ բարի գործեն (Ղուկ. ԺԵ. 10)։

11. Եթէ հրեշտակներն ունին մարդոց համար գուրգուրանք, մեծագոյն ունեցաւ Աստուծոյ որդին, որ անձամբ եկաւ կորսուած մարդը գտնելու յուրախութիւն նոյն իսկ Հայր Աստուծոյ այս է իմաստ հարիւր ոչխարի առակին (Ղուկ. ԺԵ. 1-32)։

15. Մինչեւ ցարդ աշակերտները յորդորեց որ ուրիշներուն գայժակզուծիւն չտան, այժմ ցոյց կուտայ Թէ Բնչ ընել պէտք է, որք կը մեղանչեն նոցա։ Զմարդիկ իրարու եղբայր կ'անուանէ Յիսուս, եւ կը պատուիրէ առանձին կոչել եւ յանդիմանել մեղաւորը, այսինքն սիրող եւ քաղցրութեամբ յանդիմանել, յայտնել նորա մեղքը (Պաղ. Զ. 1), վասն զի եթէ յաճկաք ուրիշներու մօտ ըլլայ այս բանը, յայնժամ նորա անձնասիրութիւնը կը գրգռուի, եւ ճնա եւս քան զեւս ի յանդիմանութիւն կրօնեցի, եւ ճչ գայցէ յուղղութիւնս (Ծործորեցի)։ Ինչ զեղեցիկ ու փրկարար խրատ արդիւնաւոր դաս հաշտութեան եւ խաղաղութեան։

16. Իսկ եթէ չ'անայ, յայնժամ պարտինք առնուլ ի միասին այնպիսիներ, որոցմէ կը պատկառի նա եւ կ'անայ դիւրաւ։ Եթէ դարձեալ չ'անայ, զէ՞ նորա վկայ կը լինին նորա եպիսկոպոսի յամառութեանն ի մեղք (Բ. Օր. ԺԹ. 15)։

ձրկէք երկրիս վրայ, արձրկուած թող ըլլայ երկնքի մէջ: *19 Նորէն կ'ըսեմ ձեզի, թէ որ ձենէ երկու հոգի աշխարհիս վրայ միաբանին ամեն բաներու համար, ինչ որ ուզեն իմ Հօրմէս որ երկինքն է, պիտի ըլլայ անոնց):

*21 Այն ատեն Պետրոս անոր մօտեցաւ ու կ'ըսէ. «Ով Տէր քանի անգամ թէ որ իմ եղբայրս ինձ դէմ մեղանչէ եւ անոր ներեմ. մինչեւ եօթը անգամ»: *22 Յիսուս կ'ըսէ անոր. «Ոչ կ'ըսեմ քեզի թէ մինչեւ եօթն անգամ, հապա մինչեւ եօթանասուն անգամ եօթը»: *23 Ասոր համար երկնքի արքայութիւնը նմանեցաւ թագաւոր մարդու մը, որ իր ծառաներէն հաշիւ առնուլ ուզեց: *24 Եւ երբ սկսաւ առնուլ, տասը հազար քանքարի պարտական մը բերուեցաւ անոր: *25 Երբ վճարելու բան չ'ունէր, անոր տէրը հրամայեց որ ան ծախու հանուի եւ անոր կնիկը եւ անոր զաւակները եւ ամենը ինչ որ ունէր, եւ պարտք վճարուի: *26 Իսկ ծառան անոր առջեւ ընկնելով կ'երկրպա-

17. Իսկ նորէն յամառի նա, պարտինք, դիմել եկեղեցիին այսինքն շատերու մօտ յանդիմանել, «Որպէսզի ի բազմոցն երեսոց պատկառեցիք» (Ծործորեցի): Այս է վերջին պարտք խոհեմութեան. զոր ի գործ դնելու է ամենայն երկայնամտութեամբ եւ զժուժեամբ, եւ մինչեւ իսկ աղօթիւք առ Աստուած. իսկ եթէ նա իսպառ մնայ անուղղայ, և ի զգուստութիւն բերելն ըլլայ անհնար, յայնժամ թէ և նա է մեզ իբրև մարտաւոր և հեծանոս, և ոչ եղբայր քրիստոնեայ, այլ սակայն է արժանի միանգամայն մեր արգահատանացն ու բարեաց, և աղօթից, որպէս զի չունայնանայ Քրիստոսի Լեռան քարոզի սա խօսքը. «Միրեցէք զձշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց» (Մատթ. Ե. 44-48; Դուկ. Զ. 27-37):

18. «Զայս Պետրոսի ասաց նախ, և աստ երկրորդէ, զի մի նմա միայն, այլև ամենեցուն իշխանութիւնս այս տուեալ է, և որք յաշորդ նոցա կարգեալ են յեկեղեցի» (Ծործորեցի): Երբ հաւատացեալք այսպէս գործեն, հոգևոր իշխանութեանց վճիռք պիտի հաստատուին թէ երկրի և թէ յերկինս վասն զի Քրիստոս բոլոր Առաքեալներուն հաւասարապէս տրուաւ արձակելու և կապելու իշխանութիւնը:

19. Ոչ թէ զայս Աստուծմէ պահանջելու ենք միաբանութեամբ, այլ յանուն Քրիստոսի խնդրելու ենք, բայց սա հաւատով, թէ կը շնորհուի մեզ, եթէ մեր խնդրուածն է համաձայն աստուածային կամաց: Թէ մեր առանձնական և թէ մեր միաբանական աղօթից մէջ այս պէտք է մեզ կա-

գէր ու կ'ըսէր: «Ո՛վ Տէր, ժամանակ տուր ինձի եւ ամենը քեզի վճարեմ»: 27 Տէրն այն ծառային զթալով արձրկեց զանի եւ պարտքը չնորհեց անոր:

28 Եւ այն ծառան ելլելով իր ծառայակիցներէն մէկը գտաւ, որ անոր հարիւր դահեկան պարտք ունէր, եւ զանի բռնելով կը չարչրկէր ու կ'ըսէր, «վճարէ ինձի ունեցած պարտքդ»: 29 Բայց ծառայակիցն անոր ոտքն ընկնելով, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր. «Ժամանակ տուր ինձի, եւ ամբողջը վճարեմ քեզի»: 30 Եւ ան չէր ուզեր, այլ գնաց, զանի բանտը ձգեց մինչեւ որ վճարէ պարտքը: 31 Անոր ծառայակիցները երբ տեսան ինչ որ եղաւ, շատ տրտմեցան, եւ գալով իրենց տիրոջ յայտնեցին ամենը ինչ որ եղաւ: 32 Իր տէրն այն ատեն կանչեց զանի ու կ'ըսէ. «Ո՛վ չար ծառայ, ես բոլոր պարտքդ քեզի չնորհեցի, վասն զի ինձի աղաչեցիր: 33 Ուրեմն պէտք չէ՞ր քեզի ալ քու ծառայակցիդ ողորմիլ, ինչպէս

նոն հաւատոյ: Նոեւ պարտինք հաւատալ Թէ Տէրն է մեզ հետ միշտ, մեր մօտ և մեր մէջ իսկ:

21. Պետրոս կը յուսայ ներողութեան սահման մը լսել, ուստի խորհրդրդաւոր եօթը Թիւն ի մէջ կը բերէ: Իսկ Յիսուս կը վճռէ Թէ ներողութիւնը չափ ու սահման չունի. ներել այնչափ ոնգամ, որչափ անգամ ապաշխարողին անկեղծ ձայնը կը լսուի, ներել ոչ Թէ մինչև եօթանասան ութամ եօթը, այսինքն ոչ ճշդիւ 490 անգամ, այլ առանց սահմանի: Քրիստոնէութեան քառ ոգին այս է: Եւ զայս հաստատելու համար Քրիստոս առակ մը կը գրուցէ, որով կը հաստատէ Թէ աններողը Հայր Աստուծմէ պիտի պատժուին չարաչար:

24. Տասն հազար տաղանդն է իբր 4,000,000 ոսկի. տհազին քանակութիւն մեղաց:

25. Կին ու գաւակներ ծախու հանել պարտքի համար հեծանոտական էր սովորութիւն, և կար չափով մը Հրէից մէջ ևս (Ելք ԻԲ. 3. Ղեւտ. ԻԵ. 39): Այլ սակայն Աստուած այսպէս չվարուիր մեղաւորի մը հետ:

26. Պարտականն երկիւղէն կ'աղաչէր, այլ տէրն «Ելէ՛ն» կը շնորհէ, Թողութիւն ա՛ք՝ զպարտքին. այլ սա փոխանակ իրատուելու այս մեծագոյն շնորհաց օրինակէն, անողորմ կը գտնուի իւր մէկ պարտապանին, կը խոշտանգէ զնա հարիւր դահեկանի, գրեթէ Օսմ. չորս ոսկւոյ համար: Տէրը նորա ծառայակիցներէն որք կարի տրտմած էին, երբ կը լսէ զայս, չարաչար յայնժամ կը պատուհասէ այն աններող և անգուժ ծառայն. ո՛հ,

որ ես քեզի ողորմեցայ» : 34 Եւ անոր տէրը բարկանալով զանի դահիճներուն յանձնեց , մինչեւ որ բոլոր պարտքը վճարէ : 35 Նոյնպէս ալ իմ Հայրս որ երկինքն է , պիտի ընէ ձեզի , թէ որ իւրաքանչիւրդ ի սրտէ չներէ իւր եղբորը՝ անոնց յանցանքները» :

Գ Լ Ա Ի Ե Ժ Թ .

*1 Եւ եղաւ երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը , Գալիլեայէն ելաւ եւ եկաւ Հրէաստանի սահմանները Յորդանանու անդիի կողմը : 2 Եւ անոր հետեւէն շատ ժողովուրդներ գացին , եւ զանոնք հոն բժշկեց :

3 Եւ Փարիսեցիներն անոր մօտենալով կը փորձէին

աշխարհս շատ մը այսպիսի օրինակներով լի է . Էրբ եւ հըր մարդիկ ի մեզս չեն հակամէտ , ուրեմն և միշտ մեղաւոր , այլ սակայն կը վայելեն զարձեալ Աստուծոյ օրհնութիւնն ու շնորհքը , արժանաւորելով Աստուածային ներողութեան . իրենց դէմ եղած մեղքերուն համեմատութեամբ , որքան մեծ ու փոքր ըլլան , ներելու են , ի սրտէ , ոչ թէ բանիւ բերանոյ , որպէս զի սիրոյ թագաւորութեան բարիքն ամեն ուրեք գտնեն ու միշտ վայելեն :

3. Քրիստոս ամուսնութիւնը սուրբ քարոզելով՝ ամուսնական միաւորութիւնն անբաժանելի վճռած է , ահա աստուածային խօսքը . «Զոր Աստուած զուգեաց , մարդ մի մեկնեացէ» :

6. Քրիստոնէութիւնը ամուսնութեան սրբութիւնն ամբապնդելու համար մէկ էրիկ մարդու և մէկ կնիկ մարդու մէջ՝ եղած միաւորութիւնը միայն կը դաւանի սուրբ ամուսնութիւն , ահա աստուածային խօսքը . «Եղիցին երկոքեանն ի մարմին մի» : Այս սկզբնական միաւորութիւնը խզող ո և է միաւորութիւն՝ պռռնկութիւն է ըստ քրիստոնէական կրօնի :

10. Յանուն ամուսնութեան այսքան բարձր , բայց միանգամայն խիստ բարոյականի մը քարոզութենէն սարսափեցան Հրեայք եւ մինչև իսկ առաքեալք այդ սարսափահար ունկնդիր Հրեայներէն աւելի զրգուելով՝ համարձակեցան առ Տէր Յիսուս զսոյն յեղ յեղել . «Եթէ էրիկ ու կնկան մէջ այդքան խիստ բարոյականի մը պահպանութեան պէտք կայ , ուրեմն աւելի աղէկ է չկարգուիլ , չամուսնանալը» :

զանի ու կ'ըսէին, թէ «Արժան է մէկու մը իւր կինը ար-
 ձրկել ամէն պատճառի համար»: 4 Պատասխան տուաւ
 անոնց ու կ'ըսէ. «Ի՞նչ կարգացած չէ՞ք թէ ան որ սիկզ-
 քէն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց զանոնք, ու կ'ըսէ.
 5 «Ասոր համար էրիկն հայրն ու մայրը պիտի ձգէ եւ իր
 կնկան ետեւէն պիտի երթայ. եւ երկուքը մէկ մարմին
 պիտի ըլլան»: 6 Հապա ուրեմն երկուք չեն, այլ մէկ
 մարմին. ուրեմն ան որ Աստուած միաւորեց, մարդ պիտի
 չգատէ»: 7 Կ'ըսեն անոր. «Բայց Մովսէս ինչու մեզի պատ-
 ուիրեց զատուելու թուղթ ապ եւ արձրկել»: 8 Կ'ըսէ

11 Քրիստոս ցոյց տուաւ համար թէ Աստուծոյ արքայութեան համար կ-
 ամար ամուրիութեամբ զինուորութիւնը դիւրին բան չէ, կը պատասխանէ.
 «Ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է»: Անս
 խոսք մը որ հիմնապէս ցոյց կուտայ թէ որքան դժուարին է կուսութեամբ
 զինուորութիւնն յանուն Աստուծոյ: Ուրեմն անոնք որք յանձն կ'առնուն
 կրել այս ծանր լուծը. պարտին հանապաղ աղօթել Աստուծոյ, որպէս զի
 փորձութիւնք և մոլեգին ցանկութիւնք զալով իրենց չՍէլադրեն զմեզ
 կուսութեան ուխտը, տեղի տալով միանգամայն շատ մը զայնակողութեանց:

Մշտնջենական ամուրիութեամբ Աստուծոյ ծառայելու ուխտէն զատ՝
 Կար ի հնուէն ամուսնութեամբ ապրելէ յետոյ, այր ու կին իրարմէ առ-
 ժամեայ բաժանմամբ Աստուծոյ ծառայելու ուխտն. և առ այս կը զրէր
 Պօղոս (Ա. Կորնթ. է. 3-9):

Հակառակ Հրէից յարուցած ընդդիմութեան թէ Մովսէս և նահապետք
 և թէ համայն նախնիք Ապահարզանի որինօք այսինքն ամուսնական օրինաց
 ընդարձակ նշանակութեամբ վարուեցան. Յիսուս ցոյց տուաւ յետոյ թէ Մովսէս
 էրիկ ու կնկան իրարմէ բաժանման օրէնքը դրաւ առ խտտարարութեան
 իւր ազգին, այսինքն Բայբաթի մըն էր այն, գարձեալ պնդեց թէ սեւ
 պատրուակի տակ ամուսնական կապի խզումն ապօրէն է. հուշատարակէս
 շնացող են թէ այր և թէ կին որք զիրար կը Սողուն և կը միանան ուրիշ-
 ներու հետ: Յիսուսի այս վարդապետութիւնն այնքան խոր ազդեցութիւն
 ըրաւ առաքելոց մտքին վրայ, որ առաքելաք, ինչպէս շատ մը վաւերա-
 կան վկայութիւններ կը հաստատեն, կուսութիւնն աւելի զերազոյն առա-
 նութիւն համարեցան բան ամուսնութիւնը, մինչդեռ առ Հրեայս, կու-
 սութիւնն ամուսնեան պէս ամօժալի բան մըն էր: Պօղոս կուսութիւնը
 տուտելով հանդերձ, եւ պոռնկութիւնը խոտելի եւ զգուցի ցոյց տուէ
 տոյ՝ բացարձակապէս բարոզեց թէ «Պռնիկք չպիտի ծառանդին երբք
 ստուծոյ արքայութիւնը»: Ապա եւ յարեց. «Լուս է ամուսնանալ,
 սն զբեռնուլ»: Մարմնոյ սրբութիւնն ալ հոգւոյ սրբութեան հաւասար է:

անոնց . « Մովսէս ձեր խստաարտութեան համար հրամայեց ձեզի արձրկել ձեր կիները , բայց սկիզբէն այնպէս չեղաւ : 9 Սակայն կ'ըսեմ ձեզի , թէ ով որ առանց պոռնկութեան իր կինը արձրկէ , եւ ուրիշն առնու , կը շնայ . եւ ով որ արձրկուածն առնու , կը շնայ » : *10 Իր աշակերտներն անոր կ'ըսեն : « Թէ որ այդպիսի բան կայ էրիկ ու կնկան մէջ , շամուսնամալն աղէկ է » : *11 Եւ ան կ'ըսէ անոնց . « Ամէնքն բաւական չեն այդ բանին , այլ որոնց որ տրուած է : *12 Որովհետեւ ներքինիներ կան , որոնք իրենց մօրը որովայնէն այնպէս ծնան . եւ ներքինիներ կան , ո-

Գօրս կը գրէ . « Ո՞չ զիտէր , եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի , արդ՝ առեալ զանդամս Քրիստոսի , առնիցեմք անդամս պոռնկի . բաւլիցի . . . Եթէ ոչ զիտէր , զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն՝ որ է ի ձեզ , զոր ունիցիքն յԱստուծոյ , եւ չէք անձանց տէր . բանզի զնոց զնեցայք . փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր եւ յոգիսս » :

Առաքեալը պոռնկութիւնը իսպառ ջնջելու համար քրիստոնէական ուշխարհէն , առն եւ կնոջ պարտուց եւ իրուանց սահմանները գծել յետոյ (Ա . Տիմ . Բ . 9-15 ; Ա . Պետ Գ . 1-8) , ի մասին ամուսնական իսպառ բաժանելութեան կը գրէ . « Այլ կանամբացն պատուիրեմ , ոչ ես՝ այլ Տէր . կնոջ յառնէ մի մեկնել . ապա թէ մեկնեացի , անայր մնացէ , կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեացի . եւ առն՝ զկին իւր մի ճողուլ » : Առաքեալը ցոյց տալու համար թէ քրիստոնէութիւնն ինչպէս կ'ըմբռնէ ամուսնութիւնն , մինչեւ անգամ խառն այսինքն քրիստոնէի եւ հեծածոսի մէջ եղած ամուսնութիւնն իսկ կ'ընդունի , հարկաւ մէկ էրիկ մարդու մէկ կնկան հետ միաւորութեան պայմանին տակ . « Բայց այլոց ես պատուիրեմ , ոչ եթէ Տէր . եթէ որ եղբայր՝ կին ունիցի անհաւատ , եւ նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա , մի՛ ճողցէ զնա » (Ա . Կորնթ . Է . 12-16) :

Այսպէս Քրիստոսի եւ առաքելոց բարոզած ամուսնական խորհրդոյ սրբութիւնն բարձրագոյն բարոյականի մը վրայ հիմնուած էր : Այս հիման վրայ պիտի հաստատուէին ընտանեկան քրիստոնեայ բոլոր յարկեր : Քրիստոնէութիւնը պատասխան չունէր այնպիսեաց , որոց սաչեւ նշանակութիւն չունէր ամուսնութիւնը . մի հաւատ ի Քրիստոս Յիսուս եւ մի կապ ամուսնութեան յօրինակ եւ ի նշան անբալկանի միութեան Քրիստոսի ընդ հարսին եկեղեցւոյ , այս էր քրիստոնէութեան դաւանութիւնն որմէն ուրիշ : Հալածանաց դարերուն մէջ դուռ ուրիշ եւ զուցէ ոչ իսկ երբեք , քրիստոնեայ յը կրնար մտքէն անցընել , թէ մարմնոյ օրէնքը կը տիրէ իւր

րոնք մարդիկներէ եղան ներքինի . եւ ներքինիներ կան որոնք իրենց անձերը ներքինի ըրին երկնքի թագաւորութեան համար . ով որ կարող է տանիլ , թող տանի » :

*13 Այն ատեն անոր բերուեցան մանուկներ , որ անոնց վրայ ձեռք դնէ եւ ազօթք ընէ . եւ անոր աշակերտներն անոնց կը սաստէին : 14 Կ'ըսէ Յիսուս . « Թող տուէք այդ մանուկներուն եւ ինծի գալէ ատոնք մի արգիլէք , որովհետեւ երկնքի թագաւորութիւնն այդպիսիներու է » : 15 Եւ անոնց վրայ ձեռք դնելով անկէց գնաց :

*16 Եւ ահա մէկը մօտենալով անոր՝ կ'ըսէ . « Ո՛վ բարի

վրայ : Աշխարհային այլ եւ այլ ցանկութիւնք եւ մոլութիւնք , ի մի բան ՄԵՂՔը՝ ինչ նշանակութիւն կրնային ունենալ այն քրիստոնէից առջեւ , որք իբրեւ ոչխարս գրոհ տուեալ կը դիմէին յԱյն երկնաւոր :

Բայց է՛ր Մատթէոս կը յիշատակէ Առանց բանի պոռնկութեանն խօսքը . մինչդեռ Մարկոս (Ժ. 2 12) ոչ , մանաւանդ Պօղոս բացէ ի բաց կ'արգիլէ ո եւ է պատրուակի տակ էրիկ ու կնկան իրարմէ բաժնուելով կրկին ամուսնութիւնը : Մատթէոս կը գրէ իւր Աւետարանը Հրեայ ազգին համար , որոց մէջ , մանաւանդ հեծանոսներու մէջ , կար յայնժամ տեսակ մը անպսակ ամուսնութիւն : Յոյն բնագիրն թորւե՛ա կը թարգմանուի պոռնկութիւն , այսինքն ապօրինի զուգաւորութիւն : Յոյն հեղինակներէն եւ ոչ մէկը այս բառը ուրիշ նշանակութեամբ գործածած է , իսկ օրինաւոր ալիուսիներու մէջ պատահած անհաւատարմութեան համար միշտ՝ գործածած են *μοιχεΐα* բառը , որ կը թարգմանուի շնութիւն : Յունական այս բառերուն նշանակութիւնն այնքան որոշ է , որ անհնար է մին միւսին տեղ փոխել : Արդ՝ որովհետեւ այս օրինակ անպսակ ամուսնութիւններ ինքնին իսկ ապօրէն էին եւ գայթակղական , ուստի Յիսուս ի դէպս պոռնկութեան կը թոյլատրէ այդ տեսակ զուգաւորութեանց խզումը , նման Մովսէսի այն օրինաց , որ կը թոյլատրէ ամուսնութիւնը լուծանել , երբ այրն իւր հարսին վրայ չգտնէ կուտութիւն : Ուրեմն Մատթէոսի այս գրածէն չհետեւիր Յէ՛ Քրիստոս թոյլ կուտայ օրինաւոր ամուսնութիւնը լուծանել՝ ե՞՞մէ շնութեան դէպք պատահի , այլ անպսակ կենսակցութիւնը լուծանել :

Որովհետեւ Քրիստոսով սուրբ աշխարհ մը պիտի կազմակերպուէր եւ զայն սուրբ պահել պէտք էր , ուստի առաքեալք և հայրապետք բարոզեցին Յէ կենսակցութեան ո եւ է մէկ կերպ , ըլլայ իսկ մէկ մարդու և մէկ կնոջ մէջ , որ օրինական չէ , այսինքն կնքուած չէ Քրիստոսով , է պոռնկութիւն : Հայոց եկեղեցին այն կապը , զոր Աստուած կապած է , չընդունիր որ խզուի ո և է մարդկային գործողութեամբ : Կ'ընդունի առժամանակեայ բա-

վարդապետ, ի՞նչ բարի բան ընեմ, որ ընդունիմ յաւիտենական կեանքը: *17 Եւ ան կ'ըսէ անոր. « Ի՞նչու ինձի բարւոյն վրայօք կը հարցընես, մէկ է բարին. թէ որ կ'ուզես յաւիտենական կեանքը մտնել, պատուիրանները պահէ: *18 կ'ըսէ անոր. « Որո՞նք». կ'ըսէ անոր Յիսուս. « Մի սպանները, եւ մի շնար, եւ մի գողանար, եւ մի սուտ վկայեր, 19 Քու հայրդ եւ մայրդ պատուէ, եւ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս »: *20 Պատանին անոր կ'ըսէ. « Այդ ամենը տղայութենէս ի վեր պահեցի. ուրեմն ի՞նչ բանով պակաս եմ »: 21 Յիսուս անոր կ'ըսէ. « Թէ որ կ'ուզես կա-

ժանու՞ր, որ օգտակար է մեզուօրը սպաշխարութեան եւ դարձի բերելու համար: Մեր հայրապետներն ամուսնալուծութեան մէջ աւելի չորիք նախատեսած են քան թէ բարիք, ուստի իմաստութեամբ եւ խոհեմութեամբ այնպիսի կանոններ դրած են, որք բաւ են ամուսնութիւնն անխախտ պահելու և երջանիկ ընելու պսակակիցներուն կենցաղը: (Ա. Կորնթ. է. 36):

12. Երբ տեսակ ներքինիութիւն կը թուէ Յիսուս. մին ի ծնէ, երկրորդն ակամայ, մարդկային գործուածեամբ եղած, իսկ երրորդը՝ կամուտը: Վերջինը շատ վէճերու առարկայ եղաւ: Որոգիէն բառ առ բառ մեկնելով անճիտեց զինքը եւ դատապարտեցաւ: Ուրիշներն այսպէս չըմբռնելով հրաժարեցան ընդ կնոջ կենսակցութենէ, միշտ երկուստեք հաւանութեամբ, որպիսի էին Գրիգոր Լուսաւորիչ եւ յաշորդը նորս: Իսկ նոքա որք կանուխէն, առանց ամուսնութեան, ուխտած էին ներքինի ըլլալու եւ ցմահ այնպէս մնալին, եղան ճշմարտապէս ներքինի Վասն արքայութեան երկնից: նման Եղիայի եւ մկրտիչ Յովնաննէսի:

13. Տղայներ կը բերուին առ Յիսուս, որ օրհնէ: Այսպէս ծնողք պարտք ունին իրենց զաւակներն առ Աստուած բերել, իրենց հետ աղօթակից ընել եւ նոցա համար Աստուծոյ օրհնութիւնը հայցել: Այլ աշակերտք կարծելով թէ տղայք ձանձրութիւն էին Յիսուսի, թոյլ չեն տար եւ մինչեւ իսկ կը յանդիմանեն նոցա ծնողքը: Իսկ Յիսուսի զուժն որ ունէր առ տկարագոյնս, եւ մանաւանդ աշակերտներուն կարծիքը փոխելու համար թէ պարտ չէ երբեք խորշիլ ամուսնութենէ, որոյ ծնունդք արքայութեան են ժառանգ, իրենները, որք յանդիմանող եղած էին, յանդիմանելէ յետոյ՝ կը հրամայէ որ տղայք բերուին. եւ իսկոյն կը խոստովանի թէ Աստուծոյ Քաջաւորութիւնն այդպիսիներունն է, եւ զորս օրհնելէ յետոյ կը մեկնի անտի, Ուրեմն տղայք ունին արքայութեան մէջ մասն, ո՛չ զի սուրբ ծնած են, այլ մկրտութեամբ սուրբ աւագանի՝ որդեգրուած ըլլալով Աստուծոյ՝ արքայութեան են այլեւս որդիք. ուրեմն աղանդն, որ կը մերժէ մանուկներու մկրտութիւնը, խոտելի է (Ժ. 13-16: Ղուկ. ԺԸ. 15-17):

տարեալ ըլլալ, գնա. ծախէ ստացուածներդ եւ տուր աղքատներուն. եւ երկնքի մէջ գանձեր պիտի ունենաս, եւ իմ ետեւէս եկուր» : Պատանին երբ լսեց այն խօսքը, տրտմած գնաց, զի շատ ստացուածներ ունէր :

*23 Յիսուս կ'ըսէ աշակերտներուն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ հարուստը դժուար պիտի մտնէ երկնքի թագաւորութիւնը : 24 Նորէն կ'ըսեմ ձեզի. զիւրին է ուղտին՝ ասեղին ծակէն մտնել քան թէ հարուստին Աստուծոյ արքայութիւնը մտնել» : 25 Աշակերտներն երբ լսեցին շատ զարմացան ու կ'ըսեն. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ» :

16. Պատանի էր սա եւ հարուստ իշխան, որպէս կը զրէ Ղուկաս (ԺԸ. 18-30) եւ Մարկոս (Ժ. 17-31) : Սա Յորժամ ետես մանկանց զարքայութիւն խոստացեալ, շարժեցաւ ի խնդիրս յայս, կարծելով թէ տխեղձ մանկունքն այնպիսի փառաց հասին, քանի առուել նորա, որք իբր զինքն օրինապահք իցեն» (Ծործորեցի) : Սա նախ թէ եւ կը խոստովանի թէ Յիսուս է վարդապետ բարի, այլ յետոյ աշակերտութենէ կը խորշի, երբ կը լսէ թէ Յոյուլ պէտք է ամէն բան եւ տոնուլ խաչը :

17. Կ'ուզէ այս անձին կարծիքը թէ մարդ չէ բարի, այլ Աստուած միայն. նա զայս Յիսուսէն կը լսէ, որովհետեւ զիմած էր Յիսուսի իբր սոսկ մարդու, որմէ կը լսէ միանգամայն թէ ընդունելու համար յաւիտենական կեանքը, պէտք է պահել պատուիրանները : Եւ Յիսուս Տաւանաբանեայի քանի մը պատուէրները յիշատակելէ յետոյ՝ իբր լրումն օրինաց սա խօսքը կ'արտատանէ. «Ընկերդ սիրես անձիդ պէս» :

20. Պատանին կը ստէ, վասն զի անհնարին ունէր բարս արծաթսիրութեան, եւ զիտէր Յիսուս թէ եթէ նա զործադրած ըլլար ճշդիւ ընկերսիրութեան օրէնքը, չէր ունենար այնքան հարստութիւն, ուստի ի կորսանս նորա հպարտութեան, որ ժպրեցաւ ըսել. «Օրինապահ եղած եմ ի մանկութենէ իմմէ», կը հրամայէ ունեցածը ծախել ու տալ աղքատաց, որպէս զի յերկինս ունենայ գանձ : Պատանին զայս երբ լսեց, տրտմած մեկնեցաւ : Ետտեր կան այնպիսիներ, որք կը տրտմին, երբ կ'զգան թէ անմասն են հոգեւոր ժառանգութենէ :

23. Յիսուս կրկին ու կրկին կը պնդէ թէ զիւրին է ուղտին մտնել ասեղին ծակէն քան թէ հարուստին Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել, որով աշակերտք կը զարմանան թէ ուրեմն քնչպէս կարելի է փրկուիլ :

26. Յիսուս կը յաւելու թէ մարդերու կողմէն անհնարինը, հնարաւոր է Աստուծոյ կողմէն : Յիսուս վարդապետած չէ երբէք հարստութիւն չունենալ, այլ ստացուածն իբրեւ Աստուած պաշտողներու համար

*26 Յիսուս անոնց նայեցաւ ու կ'ըսէ . « Մարդիկներու կողմէն այդ բանն անհնարին է , բայց Աստուծոյ կողմէն ամեն բան կարելի է » :

*27 Այն ատեն Պետրոս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոր . « Ահա մենք ամեն բան թողուցինք եւ քու ետեւէդ եկանք , ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեզի » : *28 Յիսուս կ'ըսէ անոնց . « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ դուք որ իմ ետեւէս եկաք , կրկին դալատեան ատեն՝ երբ Որդի մարդոյ իր փառաց աթոռը նստի , դուք ալ պիտի նստիք տասն երկու աթոռներու վրայ , Իսրայելի տասն երկու ցեղերը դատե-

Յիսուս այսքան ծանրագոյն ու խստիւ խօսեցաւ : Արդարութեամբ վստաւորուածն է աստուածային օրհնութեան պարգեւ , որմէ բաժին հասնելն աղքատին , այսինքն Աստուծոյնը Աստուծոյ տալ , որ է բարութիւն եւ ողորմութիւն ընել , Քրիստոսի ետեւէն երթալ է : Յիսուս չըսէր թէ մեծատունք անմասն են արքայութեան , այլ զժուար պիտի ժառանգեն զայն : Ծայրագոյն զոհողութիւնը նորա պարտին ընել , որք Քրիստոսէն ընտրուած են ի պաշտօն յողիններու փրկութեան , եւ այս եւս շատ քիչեր կրնան ընել , վասն զի որքան որ կոչուողներն ամէն ատեն եւ ամէն ազգի մէջ շատեր եղած են , այլ ընտիրներն են շատ քիչ , այսինքն Թուով շատ քիչեր կրնան երկնաւոր բուն կեանքը վարել երկրիս մէջ Աւետարանի այս տողերու ոգւոյն համաձայն , եւ այս եւս յետ տընութեանց եւ աղօթից , միմիայն Հոգւոյն Սրբոյ շնորհօք :

27. Որովհետեւ մեծափարձամ այս մարդուն յերկինս գտնձ խոստացաւ Յիսուս , եթէ նա Թողուր ամէն բան : Ուստի Պետրոս կը խրախուսուի հարցընել թէ իրենց՝ որ Թողուցին ամէն բան , թէեւ իբր աղքատ մարդիկ զոյգն ինչ , ինչ պիտի ըլլայ :

28. Յիսուս կը յայտնէ վերջապէս իւր յաւիտենական Թագաւորութեան փառքն ու պատիւը զոր պիտի տար իւր տասներկու աշակերտներուն . այն է նստիլ յերկրտասան աթոռ եւ դատել Իսրայելի երկրտասան ցեղերը . միայն թէ Յուդայի աթոռը պիտի տրուէր ուրիշի : Այլ սակայն կարծելու չէ բնաւ թէ Աւարեալք դատաստանի վերջին օրը դատաւորի պաշտօն պիտի վարեն , զի միակ դատաւորն է Տէրն ինքն իսկ , այլ պիտի ունենան մեծագոյն փառք . ուրեմն անդ եւս չկայ զխաւարութիւն կամ առաջնութիւն ոչ Պետրոսի եւ ոչ ուրիշի : Նոյնպէս Իսրայելի այս ցեղերն են , նոր Իսրայելեան ժողովուրդները , որք պիտի տեսնեն Աստուծոյ ահաւոր փառքը մեծաւ ցնծութեամբ եւ անպատում բերկրութեամբ եւ յաւիտենական եր-

լու համար : 29 Եւ ով որ տուն կամ եղբայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ կին կամ զաւակներ կամ ազարակներ թողուց իմ անուանս համար , հարիւրապատիկը պիտի առնու , եւ յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ : *30 Շատ առաջիններ յետին պիտի ըլլան , եւ յետիններ՝ առաջին :

Ք Ա Ո Ւ Թ Ի .

*1 Վասն զի երկնքի արքայութիւնը նման է տանուտէր մարդու մը , որ առաւօտուն ելաւ իր այգիին համար մշակներ վարձելու : 2 Եւ օրը մշակներուն զահեկան մը տալ որոշեց , եւ զանոնք իր այգին դրկեց : *3 Եւ ժամը երեքին ատեն ելլելով տեսաւ ուրիշներ , որոնք հրապարակներու մէջ պարապ կը կենային եւ կ'ըսէ անոնց . « 4 Դուք ալ իմ այգիս գացէք եւ ինչ որ արժան է , պիտի տամ ձեզի » : *5 Եւ անոնք գացին . եւ ժամը վեցին եւ իննին ատենները ելլելով՝ այնպէս ըրաւ : 6 Եւ ժամը տասնու մէկին ելլելով գտաւ ուրիշներ , որ պարապ կը կենային ու կ'ըսէ անոնց . « 1^o նշու հոս ցերեկ օրը պարապ կը կենաք » : *7 Անոր կ'ըսեն : « Որովհետեւ մէկը զմեզ վարձքով

չանկուծեամբ , այս է « Հարիւրապատիկը առնու » խօսքին իմաստը , ոչ թէ հարիւրապատիկ արտ , զաւակ , կին եւ այլն :

30. Այժմէն Յիսուս կը մարգարէանայ թէ Հրեայք որ յայնժամ էին առաջին , պիտի ըլլան յետին . եւ հեծանոսք , որք էին յետին , պիտի ըլլան առաջին , որպէս մատնիչն Յուդայ եղաւ յետին եւ հալածիչ Պօղոսն եղաւ առաջին :

1. Յիսուս երկնքի արքայութիւնն այս առակու կը նմանցընէ տանուտէր մարդու մը որ առաւօտուն կանուխ մշակներ կը վարձէ իւր այգիին համար :

3. Յետոյ ժամը երեքին ուրիշներ եւս կը վարձէ որ պարապ կեցեր էին : Մարդ որքան ժրագոյն ըլլայ , այլ եթէ բան մը չ'ընէ յանուն Աստուծոյ , գործ բարուծեան , պարապորդ է նա հոգևորապէս :

5. Ժամը վեցին եւ իննին ուրիշներ ևս կը դրկէ յայգին , և ժամը տասնու մէկին տեսաւ ուրիշներ եւ հարցուց թէ ինչու դատարկ կան :

չբռնեց» . կ'ըսէ անոնց . «Դուք ալ այդին գացէք , եւ ինչ որ արժան է , պիտի առնուք» : *8 Եւ երբ իրիկուն եղաւ , այգիին տէրը կ'ըսէ իր սնտեսին . «Մշակները կանչէ եւ անոնց վարձքը տուր , ետքիններէն սկսելով մինչեւ առաջինները» : *9 Երբ եկան որոնք ժամը տասն եւ մէկին Գացեալ էին . մէկ մէկ դահեկան առին : 10 Եւ առաջինները գալով կը կարծէին թէ աւելի պիտի առնուն եւ առին անոնք ալ մէկ մէկ դահեկան : *11 Երբ առին , տանուտէրէն սրտունջ կ'ընէին ու կ'ըսէին թէ 12 «Այդ ետքինները մէկ ժամ գործեցին եւ զանոնք մեզի հաւասար ըրիր . օրուան ծանրութիւնը եւ տաքութիւնը կրեցինք» : *13 Ան անոնցմէ մէկուն պատասխան տուաւ ու կ'ըսէ . «Ընկեր , զքեզ չեմ զրկեր . ինծի հետ մէկ դահեկանի սակարկութիւն չըրիր . 14 Առ քուկդ ու գնա . որովհետեւ կ'ուզեմ այս ետքիններուն տալ , ինչպէս որ եւ քեզի» : *15 Միթէ ես իշ-

7. Նորա կը պատասխանեն թէ չվարձուցան , ուրեմն պղերզուծեամբ պարտապ չէին , և իբր զրկուեցան , իսկոյն գացին . օրինակ էր այս այն ամէն հեծանոսաց , որք հետզհետէ պիտի մտնէին յայգի Տեսան . որ այս աւակով «Յայտ առնէ թէ յորում ժամու և դառնայ որ , ընդունելի է Աստուծոյ» (Մործորեցի) : Բայց այս չէ երբէք քաջալերուծիւն թողուլ մեր սպաշխարութիւններն ու բարեգործութիւնները մեր վերջին օրերուն , վասնզի ո՞վ զիտէ թէ ինքն իրքան ժամանակ պիտի ապրի , և յայնժամ գուցէ իւր վրայ կատարուի սո խօսքը . «Որ յուսով մեզանչէ , անյոյս կորնչի» :

8. Երբ երեկայ եղաւ , տնտեսին հրամայեց տանուտէրը , որ իւրաքանչիւրին հաւասար տայ վարձք : Այսպէս Հայր Աստուած մարդկային փրկութեան բոլոր տնտեսութիւնը յանձնած է Քրիստոսի : Բայց ընդէր ի յետնոցն սկսեալ . զի առաջինքն յուսացեալ էին վարձուց իւրեանց , արդ՝ զի մի թուեցի վերջնոցն թէ պակաս առնուցուն , նախ զնոցայն ետ : (Մործորեցի) :

9. Վերջինք հաւասար առին , վասնզի տանուտէրն էր բարերար . գիտցաւ , վասնզի նորա անգործ եղած էին առանց յանցանաց :

11. Տրտնջուցին միւսները , վասնզի մոխացան . այսպէս կան շատեր , որ իրենց անձին համար աւելին չեն խնդրեր , այլ կ'ըզման տեսնել ուրիշներունը՝ պակաս . այս է չարասէր բնութիւն :

13. Տանուտէրն զինքը կ'արդարացընէ թէ զրկանք ըրած չէր . ողորմութիւն կամ շնորհք մտրդ պէտք է որ ընէ ըստ Գոթ , ոչ թէ ուրիշներէ բռնադատուելով : Աչք կը յայտնեն մարդոյ ներքինները , այսինքն երբ

խանութիւնն չ'ունիմ իմիններուս ընել ինչ որ ուզեմ. կամ թէ քու աչքդ չար է, որովհետեւ ես առատ եմ: 16 Այսպէս յտիններն առաջին պիտի ըլլան եւ առաջիններն յետիններ. որովհետեւ կանչուածները շատ են եւ ընտրուածները քիչ են»:

*17 Երբ Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր, աշակերտներն առանձին առաւ, եւ ճամբան կ'ըսէ անոնց. «18 Ահա Երուսաղէմ կ'ելլենք, եւ Որդի մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն եւ դպիրներուն, եւ զանի մահուան պիտի դատապարտեն. 19 Եւ պիտի մատնեն զանի հեթանոսներուն ծաղրելու եւ ծեծելու եւ խաչ հանելու համար. եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնու»:

*20 Այն ատեն Զեբեդիոսի որդիներուն մայրը իւր զաւակներովը մէկտեղ անոր մօտեցաւ, երկրպագութիւն կ'ընէր եւ անորմէ բան մը կը խնդրէր: 21 Եւ ան կ'ըսէ

կը յայտնեն նախանձ ու ատելութիւն, են չար աչք. իսկ երբ կը յայտնեն ուրախութիւն և սէր, են յայնժամ բարի աչք:

15. Այս առակին բովանդակ իմաստն այս է. չքննադատել ստուածային կարգադրութիւնները, զի այսօրուան յետինը կրնայ վաղիւ առաջին լինել և առաջինն՝ յետին: Հաւասարութիւնը փոռաց մէջ չէ, այլ շնորհաց մէջ, վասնզի նորա որք առաւելագոյն փայլեցան ի հաւատս, նորա առաւելագոյն պիտի փայլին երկնքի մէջ (Ղուկ. ԺԹ. 12-27, Ա. Կորնթ. Գ. 12-15, Դան. ԺԲ. 3):

17. Յիսուս այս երրորդ անգամ կը յիշէ թէ պիտի չարչարուի ու մեռնի և այս անգամ շատ մանրամասնօրէն կը պատմէ, և կը յուշելու թէ հեթանոսք ևս (Պիղատոս և Հռովմայեցի զինուորք) պիտի մասնակցին իւր ազգին անօրէնութեանը:

20. Զեբեդիոսի որդիներուն մայրը՝ Սողոմէ երկրպագելով Յիսուսէն կը խնդրէ, որ իւր երկու զաւակները նստին նորա աջ ու ձախ կողմերը նորա Թագաւորութեանը մէջ: Այսպէս մինչ Յիսուս իւր չարչարանքն ու մահը կը խօսէր, առաքելալք փառաց հետամուտ կը լինին: Այս կիին անշուշտ իւր զաւակներէն դրողած ըրաւ այս աղերս, վասն զի սքբա եւ միւս առաքելալք կը կարծէին թէ Յիսուսի Թագաւորութիւնն առժամայն յմրուսաղէմ պիտի հռչակուէր (Ղուկ. ԺԹ. 41):

22. Յիսուս կը յայտարարէ թէ իրեն աշակերտողք ոչ աշխարհային փառաց ու նօրութեան, այլ տքնութեանց ու չարչարանաց ականուելի պարտին, այսինքն ըմպել դառնութեան բաժակը և մկրտիլ արեամբ:

անոր, « Ի՞նչ կ'ուզես » . կ'ըսէ անոր . « Ըսէ որ այս իմ երկու զաւակներս նստին , մէկը քու աջ եւ միւսը ձախ կողմէ քու թագաւորութեանդ մէջ » : *22 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ . « Չէք գիտեր ինչ կուզէք . կըրնա՞ք խմել այն գաւաթը , զոր ես պիտի խմեմ , կամ այն մկրտութեամբ մկրտուիլ , որով ես պիտի մկրտուիմ » . կ'ըսեն անոր . « Կարող ենք » : *23 Յիսուս կ'ըսէ անոնց . « Իմ գաւաթս պիտի խմէք եւ այն մկրտութեամբ՝ որով ես պիտի մկրտուիմ , պիտի մկրտուիք , բայց իմ աջ ու ձախ կողմս նստեցընելն՝ ինձի տրուած չէ , հապա անոնց որոնց տրուած է իմ Հօրմէս » : *24 Եւ տասները լսելով , այն երկու եղբայրներուն վրայ բարկացան : 25 Յիսուս զանոնք իրեն կանչեց ու կ'ըսէ . « Գիտէք որ ազգերու իշխանները կը տիրեն անոնց , եւ մեծամեծները կ'իշխանն անոնց : 26 Բայց ձեր մէջ այնպէս պիտի չ'ըլլայ . այլ ով

23. Յիսուս երբ Յակոբոսէն և Յովհաննէսէն այս կը լսէ , յայնժամ իբր մարդ խօսելով , թէ այս բարձր պատիւն ո՞ւմ տալու է , և ինչպէս յետոյ ուրիշ ատեն , թէ դատաստանի օրն Յրբ է , (Մարկ. ԺԳ . 32) , Հայր Աստուծոյ կամքին կը թողու պատիւ տալն ու դատաստանի օրն որոշելը :

24. Միւս տասն աշակերտները կը բարկանան , առ նախանձու անշուշտ , ուստի Յիսուս փառասիրութեան արմատը բոլորովին խլելու համար նոցա սրտէն կը յայտարարէ թէ իւր հետեւողք երբեք լինելու չեն փառասէր , այլ ծառայ իրարու : Յիսուս չըսեր սակայն թէ իշխողներ չ'ըլլան , այլ այդ իշխողներն իրենց իշխանութիւնն այնպէս զործածելու են , որ ըլլայ բարեբար ծառայութիւն մարդկութեան :

28. « Զի մի ասիցեն թէ դժուարին է իրդ , զանձն օրինակ դնէ . զի ես ասէ , եւս մեծամեծս արարի , որ Թագաւորս եմ վերին զօրացն՝ յանձն առի մարդ լինել եւ արհամարհիլ եւ թշնամանիլ . եւ ոչ այս միայն , այլ եւ ի մահ եւս եկի եւ զանձն փրկանս ետու բազմաց , եւ այն ոչ սիրելեաց , այլ թշնամեաց եւ ատելեաց » (Ծործորեցի) : Այո՛ , Յիսուս ոչ թէ միայն պիտի ծառայէր , այլեւ պիտի զոհուէր , լինելով անձնազոհողութեան յաւիտեանական օրինակ :

29. Յիսուս Երիբովէն կը մեկնի իւր հետ ունենալով շատ ժողովուրդ : Երիբով մօտ էր Յորդանանու իբր վեց մղոն եւ կործանեցաւ Յեսուէն (Յես . 2 . 26) . յետոյ շինուեցաւ նորէն (Գ . Թազ . ԺԶ . 34) : Բարբլոնեան գերութենէն յետոյ ծաղկեցաւ (Նէեմ . Գ . 2) : Սա կը կոչուէր նաեւ « Բաղաք արմաւենեաց » (Բ . Օր . ԼԳ . 3 : Բ . Մնաց . ԻԸ . 15) : Մեծն Հերովդէս հոն

որ ձենէ մեծ ըլլալ կ'ուզէ, ձեր սպասաւորը թող ըլլայ . 27 Եւ ով որ ձենէ առաջին ըլլալ կ'ուզէ, թող ձեր ծառան ըլլայ : *28 Որդի մարդոյ ինչպէս չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու, եւ իր անձը շատերու համար փրկանք տալու :

*29 Եւ անոնց Երեքովէն ելլելու ատեն՝ անոր ետեւէն շատ ժողովուրդներ գացին : 30 Եւ ահա երկու կոյրեր ճանաչուան քով կը նստէին . երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, պոռացին ու կ'ըսեն . « Մեզի ողորմէ, ով Յիսուս, Դաւթի որդի » : *31 Եւ բաղմութիւնը անոնց սաստեց որ լռեն, եւ անոնք ալ աւելի կը պոռային ու կ'ըսէին . « Ով Տէր, մեզի ողորմէ, Դաւթի որդի » : *32 Յիսուս կանկ առաւ, զանոնք կանչեց ու կ'ըսէ . « Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ » : 33 Կ'ըսեն անոր . « Տէր, թող բացուին մեր աչքերը » : *34 Եւ Յիսուս գթալով, անոնց աչքերուն մօտեցաւ, եւ շուտ մը տեսան, եւ անոր ետեւէն գացին :

բերդ ու պալատ շինեց, ուր եւ մեռաւ : Այս բողոքին գրեթէ շատ մօտ էր այն միւս Երիբով զիւր որ կայ ցայժմ :

Յիսուս երբ կը մեկնէր Երիբովէն եւ, ըստ Ղուկասու (ԺԸ. 35-43), կը մօտենար միւս Երիբովի, երկու կոյրեր կ'աղաղակէին, « Որդի Դաւթի, այսինքն Մեսիայ, մեզ ողորմէ » : Մարկոս եւ Ղուկաս կը յիշեն մէկ հաստ միայն, Մարկոս կը գրէ թէ կուրին անունն էր Բարտիմէոս (Ժ. 46-52) : Աստ կուրերուն մին միայն յիշատակուիլը, որպէս երբեմն դիւահարներուն մին (Մատթ. Ը. 28-32), հրեշտակներուն մին (Մարկ. ԺԶ. 5), մինչ Ղուկաս երկու կը գրէ (ԻԴ. 4), եւ թէ մինչ Մատթէոս կը գրէ էշ եւ աւանակ (ԻԱ. 2), (Մարկոս (ԺԱ. 2) և Ղուկաս (ԺԹ. 30) կը գրեն միայն աւանակ, չեն ամենեւին հակասական, այլ աւելի կը հաստատեն աւետարանագիրներուն անկախ ոգին :

31. Սորա ամբոխէն կ'արգիլուին, որք զուցէ կարծեցին թէ Յիսուս կը տաղտկանար, ինչպէս Աւարեալք տաղտկացան մանուկներէն (ԺԹ. 13) : Այլ սակայն կոյրք մտիկ չեն ընեն, մինչեւ որ Յիսուսի գուժը կը շարժեն :

32. Այսպէս մեք երբ Թախանձագին խնդրեմք Աստուծոյ շնորհ . խոստովանելով իւր բարեբար անունը, կ'ընդունինք զայն իսկոյն : Նստել մեր եւ ուրիշներուն հոգեւոր կուրումեանն ի բժշկութիւն, դիմել պէտք է հասնապազ Աստուծոյ :

34. Յիսուս զիսէր թէ նորա ինչ կ'ուզեն, այլ սակայն նոցա բերանացի խոստովանութիւնը լսելէ յետոյ կը բժշկէ, վասնզի բերանացի խոստովանութիւնն ալ հարկաւոր է երբեմն :

Պ Լ Ա Ռ Ի Բ Ա .

*¹ Երբ Երուսաղեմի մօտեցան եւ եկան Ձիթենեաց լեռան մօտ՝ Բեթփազէ, այն ատեն Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց, 2 եւ կ'ըսէ անոնց. « Գացէք այդ գիւղը, որ ձեր առջեւն է, եւ շուտով պիտի գտնէք կապուած էջ եւ անոր հետ աւանակ. քակեցէք եւ ինծի բերէք: 3 Եւ թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ իրենց տիրոջը պէտք են, եւ շուտով զանոնք կը զրկէ »: * 4 Բայց այս ամենն եղաւ, որ կատարուի մարգարէին խօսքը, որ կ'ըսէ. 5 « Ըսէք Սիօնի աղջկան, ահա քու թագաւորդ քեզի կուգայ խոնարհ, իշու եւ իշու քուօակի վրայ հեծած »: 6 Աշակերտները գացին եւ ըրին, ինչպէս որ Յիսուս անոնց հրամայեց: 7 Եւ բերին էջն ու աւանակը եւ անոնց վրայ իրենց հագուստները փռեցին, եւ անոնց վրայ նստաւ: * 8 Եւ շատ ժողովուրդներ իրենց հագուստները ճամբուն վրայ փռեցին եւ ուրիշները ծառերէն ձիւ-

4. Յիսուս երկու կոյրերը բժշկելէն յետոյ՝ Ձաքէոսի տունը գնաց, ուր եւ խօսեցաւ տասը մնասներուն առակը (Ղուկ. ԺԹ. 4-27): Ապա անտի մեկնելով կուգայ ի Բեթանիա եւ կը մօտենայ Բեթփազէի, որ էր Ձիթենեաց լեռան արեւելեան գաւիժայրին վրայ գիւղ մը, ուր Յիսուս կը զրկէ իւր աշակերտներէն երկուքը, որ բերեն կապուած էջն ու անոր հետ աւանակը: Միւս աւետարանագիրք կը յիշեն միայն աւանակը որոյ վերայ Յիսուս հեծած մտաւ յերուսաղէմ: Բոլոր ձառքնաիրք եւ Շարականք ու հայրապետք կը մեկնեն Թէ էջն ու աւանակ էին Գերովթէներ, եւ էին նշանակ հրէուծեան եւ հեթանոսութեան, որոց մին՝ հրէուծիւնը՝ պիտի թողուէր, իսկ միւսը՝ հեթանոսութիւնը՝ պիտի ընտրուէր:

5. Ձաքարիայի մարգարէութիւնն էր այս (Թ. 9), զոր աշակերտք ի սկզբան չհասկըցան (Յովհ. ԺԲ. 46), Սիօնի աղջիկ ըսելով Երուսաղէմը կ'իմացուէր: Սիօն էր Երուսաղէմի ամենէն բարձր բլուրներէն մին եւ Գաււիթ հոն դրաւ իւր աժոռը: Յիսուս իշու վրայ հեծած յերուսաղէմ կը մըտնէր, վասնզի Հրեայ Թագաւորներ եւ իշխաններ կը հեծնէին յէջ եւ ի շորի ի նշան փառաւորութեան (Դատ. Է. 10: Բ. Թագ. ԺԶ. 2: Գ. Թագ. Ա. 33 38-44):

8. Եւ ահա Երուսաղէմ կը զղրդի, բերնէ բերան ձայն մը կը լսուի՝

ղեր կը կտրէին եւ ճամբուն վրայ կը դնէին : 9 Եւ ժողովուրդներն՝ որ առջեւէն ու ետեւէն կ'երթային, կը պոռային ու կ'ըռէին. « Դաւթի զաւակին օրհնութիւն. օրհնեալ է ան, որ կուգայ Աստուծոյ անունովը, օրհնութիւն ի վեր յերկինս » :

10 Եւ անոր Երուսաղէմ մտած ատենը, բոլոր քաղաքը դղրդեցաւ ու կ'ըսէ. « Ո՞վ ըլլալու է ասի » : 11 Եւ ժողովուրդները կ'ըսեն. « Աս է Յիսուս մարգարէն, որ Գալիլեայի Նազարէթէն է » :

* 12 Եւ Յիսուս տաճարը մտաւ եւ դուրս հանեց ամենքը, որոնք կը ծախէին ու կը գնէին հոն՝ տաճարին մէջ, եւ ստակ փոխողներուն սեղանները եւ աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց : * 13 Եւ կ'ըսէ անոնց . « Գրքուած է, « Իմ տունս աղօթքի տուն պիտի կանչուի, եւ դուք զայն աւազակներու այր ըրիք » :

14 Եւ տաճարին մէջ անոր մօտեցան կոյրեր ու կաղեր եւ բժշկեց զանոնք : 15 Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան այն հրաշքները, զորս ըրաւ եւ տղանե-

կ'որոտանայ. « Ելէք, ելէք ընդ յառաջ, զի անս գայ Թագաւորն Իսրայէլի » : Ժողովուրդը գունդագունդ կը վազէ ընդ առաջ Մեսիային : Շատերն իրենց հուզուածները զետնի վրայ կը փռեն, Թագաւորական պատիւ տալով Յիսուսի, որ արքայաբար կը յառաջանար զէպ ի տաճարն իշու վրայ նստած, եւ քահանայապետաբար կը մտնէր հոն ի ձայն Ովամենայից որ կը նշանակէր փրկութիւն, զոր Իսրայէլեան մանկտին կը հնչեցնէր ի ձեռին բռնած արմաւենիի եւ ձիթենիի կանաչաղեղ ճիւղեր : Կը կատողին Յիսուսի Թշնամիք, ուստի կատաղաբար կըմօտենան առ Յիսուս ու կ'ըսենր « Կը լսես, Վարդապետ, զի՞նչ ասեն զորս. Դաւթի որդի, Իսրայէլի Թագաւոր : Ստատեաւ ուրեմն, զի լռեսցեն » : Իսկ Յիսուս որ աշխարհի հետ քաղաքական զործ չուներ, աներկիւղ կը պատասխանէ. « Եթէ զորս լռեսցեն, բարինքդ աղաղակեսցեն » : Ահա այսքան մեծ եղած էին Յիսուսի բարիքն առ ժողովուրդն, որ եթէ լռէր, քարերն այն ատեն պիտի վկայէին, որպէս գրուած է Սողմոսին մէջ (Ը. 2) : Կայ եւ այլ մեկնութիւն, թէ բարերն էին հեթանոս ազգերն, որ Իսրայէլի լռութիւնը պիտի խզէին իրենց աղաղակաւն առ Տէր :

12. Յիսուս տաճարը կը մտնէ մաքրելով գաւիթը ուր առուտուր կ'ըլլար : Որովհետեւ Հրեայք յայնժամ կը գտնուէին Հռովմայեցիներուն իշխանութեանը տակ, եւ կը զործածէին Հռովմէական դահեկան, ուստի կային սեղանաւորներ, որք Հռովմէական դրամը հին հրէականին հետ փոխանա-

րը որոնք տաճարին մէջ կը պողային ու կ'ըսէին. « Դաւթի զաւակին օրհնութիւն » . բարկացան : 16 Եւ կ'ըսեն անոր. « Կը լըսե՞ս, ի՞նչ կ'ըսեն ատոնք » : Յիսուս . անոնց կ'ըսէ. « Այո, դուք կարգացած չէ՞ք, թէ մանուկներու եւ կաթնկեր տղաներու բերնէն օրհնութիւնը կատարեցիր » :

* 17 Եւ զանոնք թողլով, քաղաքէն գուրս Բեթանիա ելաւ եւ հոն գիշերեց :

* 18 Եւ առտուն երբ նորէն քաղաքը դարձաւ, անօթեցաւ : 19 Եւ թզենի մը տեսնելով ճամբուն վրայ, անոր քով դնաց, եւ անոր վրայ բան մը չգտաւ, բայց միայն թէ տեսեւ . եւ կ'ըսէ անոր. « Այսուհետեւ քենէ յաւիտեան պտուղ թող չ'ըլլայ » . եւ իսկոյն թզենին չորցաւ : *20 Աշակերտներն երբ տեսան զարմացան ու կ'ըսեն թէ « Ի՞նչ պէս իսկոյն թզենին չորցաւ » : 21 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց : « Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ հաւատք ունենաք ու չտարակուսիք, ոչ թէ միայն այդ թզենիին պիտի ընէք, այլ եւ այդ լերանն ըսէք. « Վերցիր ու ծովը ընկիր ». պիտի ըլլայ : 22 Եւ ամեն բան, ինչ որ ուզէք հաւատքով ազօթքի մէջ, պիտի առնուք » :

կելով ստակ կը շահէին : Կոյին եւ աղունի ծախողներ աղբատաց համար, որք չէին կարող բերել գառնուկ կամ ուլ պատարագի համար (Ղեւտ. Ե. 7. ԺԴ. 22),

13. Եսայի գրած է (ԾՁ. 7) . փոխանակ տաճարը գալով ազօթելու, առուտուր կ'ընէին Հրեայք, որով տաճարն եղած էր աւազակներու ույր :

17. Բեթանիա էր գիւղ Ձիճենեաց լերան արեւելեան զառիվերին վրայ, Երուսաղէմի շատ մօտ, իբր երկու մղոն : Քրիստոս հոն յսնախ կ'երթար (Մատթ. ԺԱ. 1-12, Ղուկ. ԺԹ. 29) : Հոն կը բնակէին Մարթա եւ Մարիամ, որոց Ղազարոս եղբայրը հոն յարուժիւն առաւ (Յովհ. ԺԱ) : Հոն Յիսուս օծուեցաւ Մարիամէն (Յովհ. ԺԲ. 1-9) : Յիսուս այս գիւղին մօտ Ձիճենեաց լեռնէն յերկինս համբարձաւ (Ղուկ. ԻԴ. 50) : Բեթանիա այժմ կ'անուանուի Ազիրիբէ, զուցէ Ղազարոսի անունէն կոչուած : Այսպէս Յիսուս տաճարը մաքրելէ եւ հոն եւս բժշկուածիւններ ընելէ յետոյ կը մեկնի :

18. Յիսուս այս առաւօտ Բեթանիայէն, ուր գիշերած էր, յերուսաղէմ կը դառնայ, բայց որովհետեւ անօթի էր, երբ կը տեսնէ թզենի մը, կը մօտենայ եւ ահա տեսեւ միայն կը գտնէ եւ ոչ պտուղ, ուստի կ'ըսէ . « Այսուհետեւ ո՞վ թզենի, յաւիտեան չուեննաս պտուղ » . եւ ահա թզենին կը չորնայ, օրինակ նոցա, որք թէեւ Աստուծոյ շնորհաց մէջ ծնած ու սնած

* 23 Եւ երբ տաճարը եկաւ, անոր մօտեցան քահանայապետներն ու ժողովրդին ծերերը, երբ կը քարոզէր, եւ կ'ըսեն. « Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բանը, եւ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը » : *24 Յիսուս պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոնց. « Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, զոր թէ որ ըսէք ինձի, ես ալ ձեզի պիտի ըսեմ, ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բանը : *25 Յովհաննէսի մկրտութիւնը ուրկէ՞ց էր. երկինքէ՞ն թէ մարդիկներէն » : Եւ անոնք կը խորհէին իրենց մտքին մէջ ու կ'ըսէին. 26 « Թէ որ ըսենք, « Երկինքէն », կ'ըսէ մեզի. « Ուրեմն ինչո՞ւ չհաւատացիք անոր » : Եւ թէ որ ըսենք, « Մարդիկներէն ». ժողովրդէն կը վախնանք, որովհետեւ ամենքը Յովհաննէսը իբր մարգարէ կ'ընդունէին » : *27 Յիսուսի պատասխան տուին ու կ'ըսեն. « Չենք գիտեր » : Եւ ան կ'ըսէ անոնց. « Ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս ամէնը » : *28 « Բայց ի՞նչպէս կ'երեւի ձեզի. մարդ մը երկու տղայ ունէր եւ առաջինին մօտենալով կ'ըսէ. « Որդեակ, այսօր գնա, այգիին մէջ գործէ » : 29 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ. « Կ'երթամ », եւ չգնաց : 30 Մօտեցաւ միւսին

եւ, այլ անպտուղ ունին կեանք, ուստի եւ պիտի դատապարտուին : Թող որ մեկնողներ կրն թէ որովհետեւ առաջին մարդն Աղամ, իւր մերկութիւնը ծածկեց Թզնիի տերեւով, ուրեմն ալ այսուհետեւ մարդիկ Թզնիի պէտք պիտի չունենային իրենց մեղաց ճմբկութիւնը ծածկելու համար, զի Յիսուսով մեղաց Թողութիւն եղած է այլեւս :

20. Աշակերտք ի զուր կը զարմանան, վասն զի Յիսուս քան զայս աւելի մեծագոյն հրաշքներ գործած էր, ուստի կը կրկնէ նոյն խօսքը Թէ հաւատարմով կարելի է լեռներն անգամ տեղափոխել, (Ժէ. 19: Մարկ. ԺԱ. 22: Ղուկ. Ժէ. 6) :

23. Այս ծերերն ու դպիրներն եւ փարիսեցիներ միաբանեցան, եւ հարցուցին Յիսուսի Թէ « Ի՞նչ իշխանութեամբ կը գործէր » : Որովհետեւ տեսան սոքա Յիսուսի յաղթական մուտքն յԵրուսաղէմ Ծաղկազարդի օրը, տեսան որ ժողովուրդն առ հասարակ դիմաւորելով Յիսուսի ցնձագին աղաղակեց. « Ովսաննա, օրհնութիւն ի բարձունս », տեսան որ նա իշխանաբար կը գործէր ու կը քարոզէր, ուստի այս հարցումն ըրին, ոչ Թէ ճշմարտութիւնը գիտնալու համար, այդ իրենց փոյժը չէր, այլ Յիսուսի բերնէն կորզելու համար խօսք մը, որով կարենային ամբաստանել զնա կամ առ իշխանութիւնն, որ յայնժամ ի ձեռին Հռովմայեցոց էր, եւ կամ առ ժո-

եւ կ'ըսէ նոյնպէս : Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Չեմ ուզեր » . բայց յետոյ զղջացաւ ու այգին գնաց : 31 Ուրեմն երկուքէն ո՞վ իր հօրը կամքը կատարեց . կ'ըսեն . « Մտքինը » : Յիսուս անոնց կ'ըսէ . « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ մաքսաւորներն ու պոռնիկները ձենէ առաջ պիտի մտնեն երկինքի արքայութիւնը : *32 Որովհետեւ Յովհաննէս եկաւ արդարութեան ճանապարհով եւ անոր հաւատացիք . եւ մաքսաւորներն ու պոռնիկներն անոր հաւատացին, եւ դուք տեսաք եւ յետոյ չզղջացիք անոր հաւատալու :

*33 Ուրիշ առակ լսեցէք . տանուտէր մարդ մը կար, որ այգի տնկեց, եւ ցանկով զայն պատեց եւ անոր մէջ հրնձան փորեց եւ յինեց աշարակ եւ զայն մշակներու տուաւ, եւ գնաց հեռու աշխարհ : 34 Երբ պտուղին ժամանակը հասաւ, իր ծառաները մշակներուն քով զրկեց, որ անոր պտուղներն առնուէն : 35 Եւ մշակները անոր ծառաները բռնելով որը տանջեցին, որը սպաննեցին, որը քարկոծեցին : 36 Նորէն առաջիններէն աւելի շատ մը ծառաներ զրկեց, անոնց ալ այնպէս ըրին : 37 Յետոյ իր որդին ա-

զովուրդն ամբաստանել թէ խոնգարիչ է նա օրինաց, ըմբատող լինելով հոգեւոր իշխանութեան :

24. Յիսուսի պատասխանն է կարճ . նա ցոյց տալու համար թէ ինքն ոեւ է մէկու մը պատասխանատու չէ, այլ լիազօր ունի իշխանութիւն, կը հարցընէ նոցա . « Յովհաննէսի մկրտութիւնն ուսկէջ էր, երկնքէն թէ մարդիկներէն » : Այսինքն . նորա բոլոր պաշտօնն ու վարդապետութիւնն, որոց ամբողջութիւնն ու կնիքն էր մկրտութիւնը, երկնքէն էր, այսինքն Աստուծմէ :

25. Շուարեցան նորա, տեսնելով որ Յիսուս իրենց հարցման չպատասխանելէ զատ այնպիսի հարցում մը ըրաւ, որուն անհնար է պատասխանել : Վասնզի նորա հաւատացած չէին Յովհաննէսի . եթէ հաւատացած ըլլային վաղու եւս ընդունած կ'ըլլային զՅիսուս իբրեւ Մեսիա, զի Յովհաննէս բացայայտ վկայած էր թէ Յիսուս էր Քրիստոսն, Իսրայելի Մեսիայն, Բայց որովհետեւ ժողովուրդը զՅովհաննէս՝ մարգարէ ընդունած էր, չէին կարող եւ հակառակը դաւանել, ուստի շիտեցան թէ ինչ պատասխան տան Յիսուսի, եւ փախուստ տալու համար, կակազելով ըսին . « Չենք գիտեր » :

27. Յիսուս յայնժամ վեհութեամբ եւ իշխանական փառօք նոցա կը

նոնց քով դրկեց ու կ'ըսէ. « Գուցէ իմ այս տղայէս ամըշ-
նան » : *38 Բայց մշակներն երբ տղան տեսան, կ'ըսեն մըտ-
քովնին . « Աս է ժառանգը. եկէք , սպաննենք զասի , եւ
ասոր ժառանգութիւնը բռնաբարենք » : 39 Եւ այգիէն
դուրս հանեցին զանի եւ սպաննեցին : 40 Ուրեմն երբ այգիին
տէրը գայ, այն մշակներուն ի՞նչ պիտի ընէ » : 41 Կ'ըսեն
անոր. « Չարերը չարիքով պիտի կորսնցընէ, եւ այգիին
պիտի տայ ուրիշ մշակներու , որոնք պտուղները իրենց
ժամանակին պիտի տան անոր » :

42 Յիսուս կ'ըսէ անոնց. « Դուք բնաւ կարդացած չէ՞ք
գրքին մէջ . Այն քարը զոր շինողները անարգեցին , այն
եղաւ անկիւնին դուխր . Տէրէն եղաւ այս, եւ մեր աչքին
զարմանալի է » : 43 Ասոր համար կ'ըսեմ ձեզի, որ Աս-
տուծոյ թագաւորութիւնը ձենէ պիտի առնուի, եւ այգիին
պիտի տրուի այն ազգին, որ անոր պտուղներ պիտի տայ :
44 Եւ ով որ այս քարին վրայ ընկնի, պիտի փշրուի եւ
որու վրայ ընկնի, զանի պիտի փառէ » :

*45 Երբ քահանայապետներն ու դպիրներն եւ փարիսե-

գրուցէ . « Ես այլ ուրեմն ձեզ չեմ ըսեր Թէ հրով իշխանութեամբ կը գործեմ, եւ ինչու ըսէր . քանի որ ուրիշ անգամ հրապարակաւ զրուցեց Թէ ինքն է որդի Աստուծոյ, եւ Հրեայք ոչ Թէ միայն չհաւատացին, այլ քարեր առին, որ քարկոծեն Յիսուսը (Յովհ. Ժ. 30-33) :

28. Յիսուս ցոյց տալու համար Թէ այլեւս հին տնտեսութիւնը պիտի դադրի եւ պիտի յաջորդէ նոր մը, սոյն առակը կը գրուցէ կնքելով, Թէ « Մաքսաւորք և պոռնիկ յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից » :

32. Վասնզի մկրտիչ Յովհաննէսի նորա հաւատացին, որով եւ Յիսուսի :

33. Ուրիշ մէկ առակ եւս Յիսուս կը գրուցէ ցոյց տալու համար Թէ այլ եւս իսրայէլ մերժուած է Աստուծոյ երեսէն : Աստուած այգի տուած էր իսրայելի այսինքն աշխարհ . հոն շինած էր հնձան եւ աշտարակ այսինքն հայժայթած էր կարեւորն ի պաշտպանութիւն այգւոյն : Աստուած Թողած էր որ իսրայէլ գործէ այդ այգիին մէջ, որմէ առնու պտուղ — բարեգործութիւններ, բայց իսրայէլ անպտուղ կը մնայ : Ի զուր մարգարէներ կը զրկուին եւ վերջապէս Աստուծոյ Որդին կուգայ եւ իսրայէլ զնա իսկ մեռցնելու խորհուրդը կ'ունենայ, ըսելով .

38. « Մա է ժառանգը . սպաննենք զաս » : Հրեայք այսպէս մտածեցին եւ գործողեցին . այլ սակայն այն քարը զոր անարգեցին, եղաւ անկիւնի

ցիններն անոր այս առակաները լսեցին, իմացան թէ անոնց համար ըսաւ : 16 Եւ զանի բռնելու հնարը կը վնասէին, բայց վախցան փողովդէն վասն զի զանի իբր մարգարէ կ'ընդունէին :

Ք Լ Ո Ւ Թ Ի Ք .

*1 Յիսուս նորէն պատասխան տուաւ եւ առականերով կ'ըսէ անոնց . *2 Երկնքի արքայութիւնը թագաւոր մարդու մը նմանեցաւ, որ իր զաւակին հարսնիքն ըրաւ : *3 Եւ իր ծառաները զրկեց որ հրաւիրուածները հարսնիքի կանչեն. եւ գալ չուզեցին : 4 Նորէն ուրիշ ծառաներ զրկեց եւ կ'ըսէ . «Ըսէ՛ք հրաւիրուածներուն, ահա իմ ճաշըս պատրաստեցի. իմ գուարակներն ու գէր անասուններս մորթուած են, եւ ամեն բան պատրաստ է . եկէ՛ք հարսնիքիս» : 5 Եւ անոնք անհոգանալով մէկը իր ագարակը գընաց եւ մէկը իր առեւտուրին . 6 Եւ ուրիշներն անոր ծառաներն բռնեցին, նախատեցին եւ սպաննեցին : *7 Իսկ թագաւորն երբ լսեց, բարկացաւ, եւ իր զօրքերը զրկեց

քար, եւ այդ քարին զարնուողները փշրուեցան ըստ Սաղմոսի (ՃԺԸ. 22) :

45. Զայս որ լսեցին քահանայապետք ու Փարիսեցիք բարկացան, զի ոչ թէ Յիսուս հակառակ Աստուծոյ եւ ճմարտութեան խօսեցաւ, այլ թէ Հրեայ ազգին դատապարտութիւնը մարգարէացաւ, ուստի ալ այնուհետեւ սկսան դաւ նիւթել Յիսուսի համար, եւ վճռեցին սպաննել զնա :

1. Յիսուս այս առակով վերստին կը մեկնէ թէ հին տնտեսութիւնն այլ եւս վերջացած է եւ նոր մը սկսած :

2. Ուրեմն Աւետարանի ընթրիքն է ձրի. եւ հոգեւոր կեանքն է լի ուրախութեամբ, հարսնիք է այն :

3. Աստուած զանազան ժամանակներու մէջ հրաւիրեց Իսրայէլը, որ հազորդակցի իւր աստուածային փառաց, անկեղծօրէն կատարելով նորա կամքն ու հրամանը, այլ միշտ Իսրայէլ մերժեց, անհոգ գտնուելով եւ յանդրգնելով միանգամայն նահատակութեան տալ Աստուծոյ հրաւիրակները . — մարգարէները :

7. Թագաւորն էր Քրիստոս, որ իւր զօրքերը զրկեց այսինքն Հռովմայեցի զինուորներն, որք բանդեցին Երուսաղէմը :

եւ զանոնք սպաննողները սատկեցուց, եւ անոնց քաղաքը այրեց : 8 Այն ատեն կ'ըսէ իր ծառաներուն . « Հարսնիքս պատրաստ է եւ հրաւիրուածներն արժանի չ'էին . 9 Ուրեմն զացէք ճամբաներու գլուխները . եւ ով որ գտնէք , հարսնիքիս կանչեցէք » : *10 Եւ ծառաներն ելլելով ճամբաներու վրայ՝ եւ ով որ գտան թէ չար եւ թէ բարի , ամէնքը հաւաքեցին . եւ հարսնիքը լեցուեցաւ հարսնեւորներով : *11 Եւ թագաւորն երբ մտաւ հարսնեւորները տեսնելու , հոն մարդ մը տեսաւ որ հարսնիքի լաթ հագած չէր : 12 Եւ կ'ըսէ անոր . « Ընկեր , ինչո՞ւ հոս մտար , քանի որ հարսնիքի հագուստ չունէիր » . Եւ ան պապանձեցաւ : 13 Թագաւորն այն ատեն կ'ըսէ սպասաւորներուն . « Կապեցէք ատոր ոտներն ու ձեռները , եւ զատի դրսի խաւարը հանեցէք » . հոն պիտի ըլլայ լալ եւ ակրաներու կրքճըտել . *14 Որովհետեւ կանչուածները շատ են եւ ընտրուածները քիչ են » :

*15 Փարիսեցիներն այն ատեն գալով անոր վրայօք

10. Աւարեալք էին այս ծառայք , որք անխտիր Աւետարանի ընթրիքի կոչեցին ամէն տեսակ մարդիկ . չարերէն էին Տարսոնացին Սաւուղ , յետոյ Փօղոս , եւ ուրիշ Հրեայներ , եւ բարիներէն էին Կուռնելիոս եւ ուրիշ հեծանոսներ :

11. Այլ որքան որ կը հրաւիրուինք արբայութեան հարսանեաց , այլ պատրաստութեամբ երթալու ենք , այսինքն ունենալով առաքինութեան զարդը Դատաստանի օրը շատեր պիտի պապանձին , չունենալով ճշմարիտ պատճառներ արդարանալու համար , վասն զի ոեւէ մարդ որ լսած է Աւետարանի հրաւերը եւ չէ ունեցած արդարութեան հագուստը , զոր եւ բուն իսկ հրաւիրողէն — Աստուծմէ չէ խնդրած , արժանի է անեղ դատապարտութեան :

12. Կանչուածներն են , որք կը լսեն աւետիսը , այլ չեն օգտուիր . իսկ ընտրուածներն են նորա . որք հաւատով կ'օգտուին :

13. Բարեգի հարկատուք էին յայնժամ Հռովմայեցւոցն եւ ընդ նոցա իշխանութեամբն ամենայն իբք նոցա հնազանդեալ էր , եւ զի տեսին թէ յառաջ քան զայն ժամանակ վասն այսպիսի իրաց մեռան Թեւզասեանքն եւ Յուդայեանքն , որպէս թէ ապստամբութիւն ցուցանել կամէին եւ զնա եւս այնպիսի բանիւր խորհեցան ամել ի նոյն կարծիս , վասն այնորիկ զիւրեանց աշակերտսն եւ զՀերովդէի զօրականսն առաքեցին , եւ կրկին կամէին խորխորատ , զի թէ ի Հերովդէի կողմն խօսեցիք , նորա ամբաստան

խորհուրդ ըրին , թէ ինչպէս անոր խօսքով որոգայթ դնեն :
 *16 Եւ իրենց աշակերտները Հերովդէսեաններուն հետ մէկ-
 տեղ անոր կը զրկեն ու կ'ըսեն . «Վարդապետ , գիտեմք որ
 ճշմարիտ ես եւ Աստուծոյ ճամբան ճշմարտութեամբ կը
 սորվեցնես . եւ մէկու մը համար հոգդ չէ , եւ մարդու ե-
 րեսպաշտութիւն չես ընել : Ուրեմն մեզի ըսէ . քեզի քնչ-
 պէս կ'երեւայ , պէտք է կայսեր տուրք տալ թէ ոչ » : 18
 Յիսուս անոնց խորամանկութիւնը գիտցաւ եւ կ'ըսէ . «Մն-
 չո՛ւ . զիս կը փորձէք , կեղծաւորներ » . *19 Ինծի ցոյց տուէք
 տուրքին դահեկանը » : Եւ անոնք անոր բերին դահեկան մը :
 20 Եւ կ'ըսէ անոնց . «Այս պատկերը կամ գիրը որո՞ւնն է » :
 *21 կ'ըսեն . « Կայսեր » . այն ատեն կ'ըսէ անոնց . «Քացէք ,
 թագաւորինը թագաւորին տուէք , եւ այն որ Աստուծոյնը է ,
 Աստուծոյ տուէք » : Երբ լսեցին , զարմացան եւ զանի թո-
 ղուցին ու գացին :

*23 Նոյն օրը Սաղուկեցիներն անոր մօտեցան , որոնք
 կ'ըսէին թէ « Յարուժիւն չկայ » . հարցուցին անոր , 24 եւ

լիցին , եւ Թէ ի նոցա՝ նոյն Հերովդիանոսն ոսոխ մատնիցեն , եւ երկո-
 քու մք ջանային զնա պարտաւոր ցուցանել , բայց առաւել զայն կամէին
 Թէ Հերովդիանոսացն ընդդէմ ինիցի . վասն զի ի Հերովդէէ էր , որք ասէին
 Թէ չէ պարտ պատերազմել ընդ կայսեր , վասն որոյ եւ զաշակերտան յոն-
 ցին , զի յայն կարծիս զնա զրգուցեն , որպէս զի մատնեցեն դատարրի
 (Պիղատոսի) իբրեւ այր մի ապստամբ յարբունական օրինացն : Զսոյն եւ
 Ղուկաս ասէ (Լ. 20-26 : Մարկ. ԺԲ. 13-17) , Թէ առաջի ժողովրդեան հար-
 ցանէին , զի բազում վկայս կուտեսցին զնովաւ , եւ զայն ոչ զխտէին , Թէ
 ի բազում վկայիցն ի միջի՝ անմտութիւն նոցա յանդիմանի » (Մործորեցի) :

16. Փարիսեցիք կայսեր հարկ տալը չէին համարեր օրինաւոր (Բ. Օր.
 ԺԷ. 15) , իսկ Հերովդէսեանք հակառակը : Միաբանեցան սորա , որպէս զի
 դաւեն Յիսուսի , կեղծաւորելով , Թէ անաչառ է Յիսուս , մինչդեռ ուրիշ
 անգամ ամէն նախատինք ըրած էին :

19. Տուրքին դրամը՝ դենար էր , Հռովմէական դրամ . « Յայնժամ սո-
 վորութիւն էր Թագաւորացն զիւրեանց պատկեր դրոշմել եւ զանուն զրեւ
 ի դահեկանին » (Մործորեցի) : Յայնժամ Տիբբեր ի Հռովմ կը տիրապետէր :

21. Ինքն իսկ մարդն է Աստուծոյ դահեկանը (Ծննդ. Ա. 27) , ոչ բոլոր-
 ովին կորսուած (Ծննդ. Թ. 6 : Գործք. ԺԷ. 29 : Յակ. Գ. 9) : Ուրեմն զմեզ
 տալու ենք Աստուծոյ համար : Հնազանդութիւն առ տէրութիւնս քարո-
 զուած է միշտ (Հռովմ. ԺԳ. 1-7 : Ա. Պետ. Բ. 13-14) :

կ' ըստին . «Վարդապետ , Մովսէս ըսաւ . «Թէ որ մէկը առանց զաւակի մեռնի , իր եղբայրն անոր կինը թող առնու , եւ իր եղբոր զաւակ թող հանէ» : Մեր մէջ եօթը եղբայրներ կային . առաջինը կնիկ առաւ ու մեռաւ . եւ որովհետեւ զաւակ չունէր , իր կինը իր եղբորը ձգեց . 26 Նոյնպէս եւ երկրորդը ու երրորդը՝ մինչեւ եօթներորդը : 17 Ամենէն յետոյ կինն ալ մեռաւ : 28 Ուրեմն յարութեան ատենը այն եօթներէն որո՞ւ կնիկ պիտի ըլլայ այն , որովհետեւ ամենքն ալ զանի կնիկ ունեցան» : 29 Յիսուս առնոց պատասխան տուաւ եւ կ'ըսէ . «Ով մոլորեալներ , գիրքերը չէք գիտեր , եւ ոչ Աստուծոյ զօրութիւնը : *30 Որովհետեւ յարութեան ատեն ո՛չ կնիկ կ'առնուն եւ ոչ կրնիկներ էրկներու կ'ըլլան , այլ երկնքի մէջ հրեշտակներու պէս են : 31 Բայց մեռելներու յարութեան համար դուք կարդացած չէք Աստուծոյ ձեզի բտուածը . *32 Եւ եմ Աբրահամի Աստուածը , Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը» . Եւ Աստուած մեռելներու Աստուած չէ ,

23. Ամէն դասու մէջ եղած են մարդիկ , որք ուրացած են հոգւոյ անմահութիւնը , վասնզի չեն գիտեր սուրբ գրքերը եւ Աստուծոյ այն զօրութիւնը , որոյ հնարաւոր է ամէն բան : Այդ եօթն եղբայրներու զործը կը մեկնուի ոչ թէ դէպք , այլ իբր օրինակ :

30. Յիսուս բացէ ի բաց կը խոստովանի ոչ թէ միայն մարմիններու հոգիներու հետ միանալով յարութիւնը , այլ եւ հրեշտակներու գոյութիւնն ալ , որով Սաղուկեցիք , որք յարութիւն եւ հրեշտակ բտուելը կ'ուրանային , կրկին եւ կրկին կը խայտառակուին : Քրիստոսի այս վարդապետութիւն միշտ քարոզուեցաւ (Գործք. ԻԶ. 8; Հռովմ. Դ. 17; Ը. 11: Ապոկալիպ. Զ. 14. Եփես. Ա. 13-20) :

32. Նոր արեւու մը լուսաշողջող ճառագայթներով , այսինքն անա այս վկայութեամբ կ'ողողուի աշխարհն . Յիսուս ոչ թէ յետին մարգարէներէն վկայութիւն կը բերէ (Սաղմ. ԺԶ. 10; ԺԷ. 15. Ես. ԻԶ. 19; Դան. ԺԲ. 2; Եզեկ. ԼԷ. 1-15), այլ նոյն իսկ Մովսէսէն , որպէս զեղեցիկ կը զրէ Ծործորեցի . «Վասն այսորիկ ոչ ասաց թէ Էի Աստուած Աբրահամու , այլ թէ եմ» : Աբրահամ , Իսահակ եւ Յակոբ կենդանի էին , ոչ թէ այս աշխարհի մէջ , այլ այն աշխարհին մէջ , ուր արդարք կենդանի են . եւ չեն կենդանի , որք իսկապէս մեռած են , ի դժոխս դատապարտուած , որոց եւ արդարոց միշտ տէր է Յիսուս Քրիստոս (Հռովմ. ԺԴ. 9) :

34. Փարիսեցիներէն մէկը , Մարկոս կը զրէ դպիր մը (ԺԲ. 28-34) , կը

այլ ողջերու) : 33 Ժողովուրդներն երբ լսեցին , կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ :

*34 Իսկ Փարիսեցիներն երբ լսեցին թէ Սաղուկեցիները պապանձեցուց , միասին ժողովուեցան . 35 Եւ անոնցմէ մէկը հարցուց , զանի փորձելով , եւ կ'ըսէ . 36 «Վարդապետ , օրէնքին մէջ ո՞ր պատուէրն է մեծ » : *37 Եւ Յիսուս կ'ըսէ անոր . «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ բոլոր անձովդ եւ բոլոր մտքովդ» : 38 Այս է մեծ եւ առաջին պատուէրը : 38 Երկրորդը ասոր նման . «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» : *40 Այս երկու պատուէրներէն կախուած կան բոլոր օրէնքն ու մարգարէները » :

*41 Եւ երբ Փարիսեցիները ժողովուեցան , Յիսուս անոնց հարցուց ու կ'ըսէ . *42 «Քրիստոսի համար ձեզի ի՞նչպէս կ'երևուայ . որո՞ւ որդի է» : 43 Կ'ըսեն անոր . «Դաւիթի» : Յիսուս կ'ըսէ անոնց . «Բայց ի՞նչպէս Դաւիթ զանի Հոգւովը իր Տէրը կը կոչէ , եւ կ'ըսէ . 44 Տէրն ըսաւ իմ Տիրոջս . Ննստէ իմ աջ կողմս , մինչեւ որ զնեմ քու թշնամիներդ

փորձէ գիտնալու համար Թէ Յիսուս քաշանմնւտ է Սուրբ-Գրոց եւ կրնայ ճշդել Օրինաց պատուէրներուն մեծագոյնը , որոյ համար Ռաբբիք միշտ վիճաբանութեան մէջ էին :

37. Յիսուսի պատասխանն եղաւ ճշդագոյն եւ ողբեր բարութեան , վասն զի մեր ընկերային ամբողջ շէնքն այդ երկու բարոյական պատուէրներուն վրայ կառուցուած կայ . «Ոչքա առ Աստուած անսահման » , եւ «Մէր առ ընկերն չափով , այսինքն սիրել ընկերը այն չափով որով մարդ իր անձը կը սիրէ : Միտոյ վարդապետ'ն հետեւեցան եւ իւր աշակերտներն , որք ոչ միայն Թէ սէր բարոզեցին , այլ առ սէր մարդկութեան արնեցան ու նահատակեցան :

40. Արդարեւ հին ու նոր օրինաց եւ մարգարէութեանց բովանդակութիւնն է այս երկու պատուէրները (Բ. Օր. Զ. 5) :

41. Բոլոր Հրեայք այնպէս կը հաւատային Թէ Մեսիայն պիտի գար Դաւիթի սերունդէն իբր լոկ մարդ , ուստի կը զչարէին եւ կը բարկանային , երբ Յիսուսէն կը լսէին Թէ ինքն է Որդի Աստուծոյ , այսինքն սխալ էր իրենց կարծիք , վասնզի Մեսիայն պիտի լինէր Դաւիթէն շատ վեր մէկը , մանաւանդ քանի որ նոյն իսկ Դաւիթ զնա իւր Տէրը կ'անուանէր :

42. Յիսուսի այս հարցումն առ Փարիսեցիս եւ առ զպիրս շատ պարզ էր , «Քրիստոսի վրայով ի՞նչ կարծիք ունիք» : Նորս առանց վարանելու կը պատասխանեն Թէ «Նա՛ Մեսիայն Դաւիթ որդի է» : Փարիսեցիք եւ

քու ոտներուդ պատուանդան) : 45 Ուրեմն թէ որ Դաւիթ զանի Տէր կը կոչէ, ինչպէս անոր որդին կ'ըլլայ) : 46 Եւ ոչ մէկն անոր կրնար խօսք մը պատասխան տալ, եւ ոչ մէկն այն օրէն յետոյ կը համարձակէր անոր բան մը հարցընել :

ՔԼՈՒԹ ԻՊ.

*1 Յիսուս այն ատեն խօսեցաւ ժողովուրդներուն եւ իր աշակերտներուն, եւ կ'ըսէ. 2 ԱՄովսէսի աթոռն նրատեցան դպիրներն ու Փարիսեցիները : *3 Ինչ որ ձեզի ըսեն, ըրէք ու պահեցէք, բայց անոնց գործերուն համաձայն մի ընէք, որովհետեւ կ'ըսեն ու չեն ըներ : *4 Ծանր եւ զժուարատար բեռներ կը կապեն եւ մարդիկներու ուսերուն վրայ կը դնեն, եւ իրենց մատով չեն ուղեր զանոնք չարժել : *5 Եւ իրենց գործերը կ'ընեն մարդիկներուն

դպիրք գիտէին, անշուշտ Սուրբ գրքէն լսելով, թէ Մեսիայն պիտի գայ, եւ նա է Մեսիայն որ վերջին շառաւիղն է Դաւիթի ցեղին Յիսուս ցոյց տալու համար թէ ինք խոստովանող է Սուրբ-Գրքին աստուածային ներշնչութեամբ գրուած ըլլալուն, կը վկայէ թէ Դաւիթ Սուրբ Հոգով գրած է սա խօսքը. « Տէրն իմ Տիրոջս ըսաւ. « Նստէ իմ ոչ կողմս) : Ահա այսպէս Տէր Յիսուս կը հաստատէ թէ Մեսիայն մարդկային բնութենէ զատ՝ պիտի ունենար ի վեր բան զմարդ գերագոյն բնութիւն եւս, աստուածային բնութիւն :

1. Այս է Քրիստոսի հրապարակաւ վերջին քարոզը, զոր Մարկոս (ԺԲ. 38-40) եւ Ղուկաս (Ի. 45-47) համառօտ կը գրեն : Լեռան քարոզն սկսուեցաւ երանութեամբ, իսկ այս կը վերջանայ վայերով. այլ խանդակած սէրն առ իւր օգգակիցս Յիսուս ի հանդէս կը հանէ ի վերջոյ, խոստանալով փրկութիւն, եթէ նորա զօտէպնդին ի հաւատս :

3. Յիսուս կը յորդորէ յարգել իշխանութիւնը, թէ եւ ըլլան պաշտօնեայք չար. կատարել նոցա օրինաւոր հրամանները, այլ չհետևիլ բնաւ նոցա չար օրինակներուն :

4. Յետոյ կ'սկսի կշտամբել Փարիսեցիները, թէ նոցա գործերն իրենց քարոզութեանց համաձայն չեն, թէ մարդոց ուսերուն վրայ ծանր բեռներ կը դնեն, իսկ իրենք մատի ծայրով անգամ չեն ուղեր դպիր :

5. Թէ ամէն բան կ'ընեն ի ցոյց միայն : Գրապանակն էր, մագաղաթի

իրեւելու համար . իրենց գրապանակները կը լայնցընեն եւ իրենց հազուատներուն քղանցները կ'երկընցնեն : 6 կը սիրեն ընթրիքներու մէջ առաջին բազմոցները եւ ժողովաւաններու մէջ առաջին ախոռները եւ շուկաներու մէջ բարեւները , *7 եւ մարդիկներէն կոչուիլ Ռարբի , Ռարբի : *8 Բայց զուք մէկը չկոչէք Վարդապետ , վասն զի ձեր Ուսուցիչը մէկ հատ է . եւ զուք ամէնքդ եղբայր էք : 9 Եւ մէկը Հայր մի կոչէք ձեզի երկրի վրայ , վասն զի ձեր Հայրը մէկ հատ է , որ երկինքն է : 10 Եւ մի կոչուիք ուսուցիչներ , վասն զի ձեր ուսուցիչը՝ Քրիստոս է : *11 Եւ ձենէ միւր ձեր սպասաւորը թող ըլլայ : 12. Ով որ զինքը կը բարձրացնէ , պիտի խոնարհի . եւ ով որ զինքը կը խոնարհեցընէ , պիտի բարձրանայ :

*13 Վայ ձեզի , կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ , որովհետեւ երկնքի արքայութիւնը մարդիկներու առջեւ կը գոցէք . զուք չէք մտներ , եւ մտնողներուն թող չէք տար որ մտնեն : 14 Վայ ձեզի , կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ , որովհետեւ որբեւարիներու տունները կ'ուտէք եւ պատճառանքներով աղօթքը կ'երկն-

երկայն շիրտ , ուր գրուած էին (Ելք. ԺԳ. 2-10. 11-16; Բ. Օր. 2. 4-9 13-22) համարները : Երտին մէկ ժայրը ձախ բազուկէն կապուած էր եւ միւս ժայրը ճակատը տարուած : Ծոպեր եւ կային նոցա հազուատներուն ժայրը , որք էին կապոյտ ժապուէն (Թիւք- ԺԵ. 38-39; Բ. Օր. ԻԲ. 12) : Սորա այս ամէնը կ'ընէին իբր Թէ Աստուծոյ պատուէրները յիշելու համար :

7. Կը խայտատակէ Յիսուս նոցա սնապարծութիւնն ու փառասիրութիւնը . որք կը սիրէին Ռաբբի կոչուիլ , այսինքն Տէր իմ :

8. Անս բացարձակ կը յայտարարէ Յիսուս իւր աշակերտաց եւ ունկնդիր ժողովրդեան , Թէ «Ամենքին զուք իրարու եղբայր էք , եւ ունիք Հայր միայն , որ յերկինս է , եւ մէկ հոտ Վարդապետ , Քրիստոսը» :

11. Այսպէս ի հեճուկս փարիսեցիական ամբարտաւանութեան Յիսուս խոնարհամտութիւնն քրիստոնէական բարոյակնի պայման կը քարոզէ . եւ յետոյ վա՛յ կարգալով մի առ մի կը պատահէ Փարիսեցոց եւ դպրաց բոլոր իմաստակութիւնները եւ կեղծաւոր գործը :

13. Կը վայէ զնոսա Յիսուս , որք արգելք կ'ըլլային մարդոց փրկութեան , եւ կը կեղծաւորէին երկար աղօթքներ ընելով , որով կը շահէին որբաւորները , եւ կը գրուէին կրօնի պատրուակաւ շատ անգամ նոցա տունները :

15. Նոքա իրենց աղանդին որսալու համար ԵԹէ ունէին իշխանութիւն՝

ցընէք, որպէս զի ալ աւելի դատապարտութիւն ընդունիք: 15 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ, որ ծով ու ջամաք կը պարտիք մէկը ձեր կողմը որսալու համար. եւ երբ ըլլայ, զանի ձեռնէ կրկին անգամ աւելի դժոխքի զաւակ կ'ընէք: 16 Վայ ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք. մով որ կ'երգնու տաճարին վրայ, բան մը չէ. բայց ով որ կ'երգնու ոսկիին վրայ, որ տաճարին մէջ կայ, արժան է: *17 Յիմարներ եւ կոյրեր, ո՞րը մեծ է. ոսկին թէ տաճարը, որ ոսկին կը սրբացնէ: *18 Եւ ով որ կ'երգնու սեղանին վրայ, բան մը չէ. բայց ով որ կ'երգնու պատարագին որ անոր վրայ կայ, արժան է: 19 Յիմարներ եւ կոյրեր, ո՞րը մեծ է. պատարագը թէ սեղանը, որ պատարագը կը սրբացնէ: 20 Իսկ արդ՝ ով որ երգում ըրաւ սեղանին վրայ, երգում կ'ընէ անոր եւ անոր վրայի ամեն բաներուն վրայ: 21 Եւ ով որ երգում ըրաւ տաճարին վրայ, երգում կ'ընէ անոր եւ անոր մէջ բնակողին վրայ, 22 Եւ ով որ երգում ըրաւ երկնքի վրայ, երգում կ'ընէ Աստուծոյ աթոռին եւ անոր՝ որ անոր վրայ կը նստի: *23 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ, որովհետեւ անանուխին եւ սամիթին

բռնութիւն ի գործ կը զնէին. եթէ չունէին, նենգութիւն. Բայց և այնպէս իրենց որսացած մտղը տեսնելով նսցա յոռի վարքը, զայն իւր յոռի վարքին վրայ յաւելլով՝ կրկին կ'ըլլար զեհեհի զաւակ. բարի օրինակը կ'ազդէ չարին, ի գործ կը բերէ զնա: Հեծանոսութենէ ի Հրէութիւն դարձողներէն շատերն այսպէս էին, զոր օրինակ Հերովդէս և իւր սերունդը:

17. Յիմար էին, վասն զի չէին գիտեր, թէ ինչ որ կը սրբէ, մեծ է բան զայն որ կը սրբուի: Կոյր էին, զի չէին տեսնի Սէ անշունչ իր մը չկրնար վկայ լինել երդման: «Քանզի ի կռապաշտիցն առեալ զայս աղանդ, որք պատրէին զբազումս երդելով, ոչ ի կուռս ոսկեղէն, այլ ի մեհեանն՝ յորում պատկերքն էին, և զայն ոչինչ գրէին. այսպէս և սորա վասն հաւանեցուցանելոյ զբազումս՝ երդնուին ի տաճարն, և զայն անվնաս կարծէին և ունայն բան. իսկ յորժամ ոսկին որ ի տաճարին էր, երդնուին, մեծագոյն համարէին (Ծործորեցի):

21. Երդման համար տես ի մեկնութիւն (Մատ. Ժ. 33-37): Մարդ ինքնին երբէք երդնու չէ:

23. Օրէնքը ծառերու պտուղներէն և արմտիքներէն տասանորդ առնուլ կը հրամայէր (Ղևտ. Իէ. 30): Այլ սորա չնչին խտտերէ ալ տասանորդ տալը՝ օրինական կը համարէին, Թողլով հաւատքն ու ողորմութիւնը և արգար դատաստանը (Միք. 2. 8: Ովսէ ԺԲ. 7), որք յոյժ կարևոր էին:

եւ չամանին տասանորդը կուտաք եւ կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները՝ դատաստանն ու ողորմութիւնը եւ հաւատքը . դայս պէտք էր ընել եւ զայն չթողուլ : *24 Կոյր առաջնորդներ, որ մօղուկները կը քամէք եւ ուղտերը կը կլլէք : *25 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ , որ կը սրբէք բաժակին եւ սկաւառակին դրսի կողմը եւ ներսէն յափշտակութեամբ եւ անմաքրութեամբ լեցուն են : *26 Կոյր Փարիսեցի, առաջ գաւաթին եւ պնակին ներսը սրբէ, որ անոնց դրսինն ալ մաքուր ըլլայ : 27 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ , որ ծեփուած գերեզմաններու նման էք , որոնք դրսէն դեղեցիկ կ'երեւան եւ ներսէն լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն պղծութիւնով : 28 Նոյնպէս եւ դուք դրսէն մարդիկներու արդար կ'երեւաք, եւ ներսէն լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ : *29 Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներուդ եւ Փարիսեցիներուդ , որ մարգարէներուն տապանները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք , 30 եւ կ'ըսէք . «Յէ որ մեր հայրերուն օրերն ըլլայինք , մարգարէներուն արեանը չէինք

24. Կը զամէին նոքա քացախը կամ կը զտէին, որպէս զի մօղիկէ մը չպղծուին , ուսելով անսուրբ անասնիկը (Ղևտ. ԺԱ. 20-23) , մինչդեռ ուզոն ալ անսուրբ կենդանի էր. այսինքն Օրէնքին կարեւորագոյն պատուէրները չէին կատարեր Գեղեցիկ դաս սուտ առաջնորդներու :

25. «Քանզի առ մեծամեծ չարեօք և մուրեալք փառասիրութեամբ՝ մարմնոյ սրբութեան պատկառ կային և զարդար առաքինութենէ անփոյթ առնէին» (Ծործորեցի) :

26. Յիսուս ծեփուած գերեզմանները յիշելով ցոյց կուտայ թէ էին նոքա արտաբուստ արդար, և ներքուստ՝ լի մեղօք : Ներքինը. մեր սիրտը սուրբ պահել և այնպէս երևիլ, այս է իմաստ սոյն խօսքի : Հրեայք տարին մէկ անգամ իրենց գերեզմանները կը բռէին, որպէսզի թէ գեղեցիկ երևին և թէ մարդիկ զգուշանան դպչելէ, չպղծուելու համար : (Ղուկ. ԺԱ. 44) :

29. Փարիսեցիք և դպիրք մարգարէից գերեզմանները կը զարդարէին, հառաչելով միանգամայն թէ «Ընէք եթէ՝ մեր հայրերուն օրովն եղած ըլլայինք, չէինք թոյլ տար թափել մարգարէից արիւնը» : Տէր Յիսուս սոցա այս կեղծաւորութիւնը դատապարտելու համար կը նշաւակէ զիրենք՝ ըսելով . «Ուրեմն դուք որդիներէն էք նոցա, որք մարգարէները շարդեցին» այսինքն էին ոճրագործներու ծնունդ :

34. Յիսուս խստագոյնս նշաւակելէ յետոյ նոցա ամբարշտութիւնը և

մասնակցիր) : 31 Ապա ուրեմն դուք ձեր անձերուն վրայ վկայութիւն կուտաք , թէ անոնց զաւակներն էք , որոնք մարգարէները կը ջարդէին : 32 Եւ դուք ձեր հայրերուն չափը լեցուցիք : 33 Օձեր , իժերու ծնունդներ , ինչպէս պիտի փախչիք դժոխքի դատապարտութենէն : *34 Ատոր համար անա ես կը զրկեմ ձեզի մարգարէներ եւ իմաստուններ եւ դպիրներ , եւ անոնցմէ պիտի սպաննէք ու խաչ պիտի հանէք , եւ անոնցմէ պիտի տանջէք ձեր ժողովարաններուն մէջ , եւ քաղաքէ քաղաք պիտի հալածէք : *35 Որպէս զի երկրիս վրայ թափուած ամեն արդար արիւն ձեր վրայ գայ , արդար Աբելի արիւնէն եւ մինչեւ Բարաքեայ որդի՝ Չաքարիայի արիւնը զոր տաճարին ու սեղանին մէջտեղը սպաննեցիք : 36 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի պիտի գայ այս ազգի վրայ :

37 Երուսաղէմ , ո՛վ Երուսաղէմ , որ մարգարէները կը ջարդէիր եւ քեզի զրկուածները կը քարկոծէիր , քանի՞ անգամ ուզեցի ժողովել քու զաւակներդ , ինչպէս որ հաւ մը կը ժողվէ իր ձագերը թեւերուն տակ . եւ չուզեցիք : 38 Ահա ձեր այդ տունը ձեզի աւերակ թող ըլլայ : 39 Բայց կ'ըսեմ ձեզի թէ զիս այսուհետեւ ալ պիտի չտեսնէք , մինչեւ որ ըսէք . «Տեսա՛ն անունով եկողն է՝ օրհնեալ» :

գուշակելէ յետոյ այն կատարի հալածանքը , զոր իրենները նոցա երեսէն պիտի կրէին , կը յիշատակէ Աբէլն ու Չաքարիան , երկու անոեցի զէպք (Եննդ. Դ. 1-15 : Բ. Մն. սց. ԻԴ. 21) : Երբ ժորեցի կը զրէ Չաքարիայի համար Վճմանք զհայրն Յովհաննու տանն , բանգի սպանին զնա Հրեայքն , ընդ մէջ տաճարին և սեղանոյն , վասն կարգելոյ զՄարիամ ի կարգ կուսանացն , յորժամ ընծայեաց զմանուկն Յիսուս , որպէս վկայէ Բասիլիոս եպիսկոպոսսպետ Կեսարու Կապաղովկացոց , ի գիրսն պահոց . . . և ոմանք զայլ որ երկանուն բահանայ , զոր Յովիդա կոչեն զիրք . զսա սպան Յովսա Թագաւորն ընդ մէջ տաճարին և սեղանոյն » (Երբ ժորեցի) : Աւելի հաւանականն է վերջին մեկնութիւնը :

35. Յետոյ Յիսուս յիշելով Աստուծոյ արգարութեան անաւոր դատաստանը , որ ի մօտոյ պիտի հասներ Հրեայ ազգին , կը կնքէ իւր խօսքը . «Ա՛հ , Երուսաղէմ , քանի՞ անգամ ուզեցի—աստ իւր Աստուածութիւնը կը յայտնէ , — ժողովել զաւակներդ , ինչպէս հաւ մը իւր ձագերը Թեին տակ կը ժողվէ , և դուք չուզեցիք : Ուրեմն այլ ևս Թող աւերակ դառնայ ձեր տունը : Իսկ զիս այսուհետեւ պիտի չտեսնէք , մինչև ըսէք . «Օրհնեա՛լ , եկեանայ յանուն Տեսա՛ն , այսինքն եմէ՛ չհաւատայք ինձ՝ ճշմարիտ Մեծայայտ» :

ԳԼՈՒԹ ԻԳ.

^{*1} Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար . եւ աշակերտները մօտեցան անոր ցուցնելու համար տաճարին չէնքերը : ^{*2} Եւ ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Կը տեսնէ՞ք այդ ասիւնը , ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . պիտի չմնայ հող քար քարի վրայ որ չքայքայուի » : ^{*3} Եւ երբ Ձիթհնեաց լերան վրայ կը նստէր , աշակերտներն առանձին անոր մօտեցան ու կ'ըսեն . « Ըսէ մեզի , այդ ե՞րբ պիտի ըլլայ եւ կամ քու գալստեանդ եւ աշխարհիս վերջանալուն նշանը ի՞նչ պիտի ըլլայ » : ^{*4} Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Զգուշացիք . չ'ըլլայ որ մէկը զձեզ խաբէ , ^{*5} վասնզի շատեր պիտի գան իմ անունովս եւ ըսեն թէ « Ես եմ Քրիստոսը » . եւ շատերը պիտի մոլորեցընեն » : ^{*6} Պիտի լսէք պատերազմներ եւ պատերազմներու համ-

1. Յիսուս այրի կնկան երկու լուծայներն (Մարկ. ԺԲ. 41-44; Ղուկ. ԻԱ. 1-4) ու հեծանոս Հայերը տեսնելէ , և երկնքէն ձայն մը առ ժողովուրդն լսելի ընելէ յետոյ (Յովհ. ԺԲ. 20-36) , մեկնեցաւ տաճարէն :

2. Այս մարգարէութիւն ճշդիւ կատարուեցաւ . Տիտոս , յետոյ կայսր Հռովմայ , կործանեց Երուսաղէմն ու այրուեցաւ տաճարը յամին 70 : Յովսէպոս կը գրէ . « Այնպիսի էր աւերակը , որ չէր կարելի հաւատալ թէ երբէք հոն եղած էր բնակութիւն » : Ե՞րբ Յիսուսի ցոյց տուին աշակերտք տաճարին շէնքը , Ծործորեցի կը գրէ . « Ձի լուան ի նմանէ թէ Սողեալ լիցի տունդ ձեր աւերակ և այգին տացէ այլոց , իբր զարմանալով իմ մատուցեալ ցուցանէին նմա զգեղեցկութիւն տաճարին և զամբուծիւն , թէ զիսորդ այնչափ գեղեցկութիւն ապսկանիցի և ազգի ազգի նիւթ և հնարք արուեստիցն հաստահեղոյս վիմօք արարեցեալ և աշտարակօք զարդարեալ՝ տապալիցի » : Տաճարն էր բաւակուսի , 400 ոտք լայն և 600 ոտք երկայն . բարերն էին 45 արմկաչափ երկայն , 5 արմկաչափ բարձր , և լայնութեամբ 6 : Պատը Մորիս լիւան երեք կողմէն կը բարձրանար :

3. Այսինքն Յիսուս երբ , ինչ նշանով պիտի գայ և յայտնուի իբր Մեսիա , Երուսաղէմը կործանելու և աշխարհիս վերջ տալու համար , Ձիթենեաց լեռն էր յարեւելս տաճարին , որմէ բարձր էր գրէթէ 300 ոտք և որմէ կը բաժնուէր Կեզրոնի հեղեղատով :

բաւնեբ . զգոյչ եղիք մի խռովիք , վասնզի այն ամեն բա-
 ները պէտք է որ ըլլան , բայց դեռ վերջը չէ : 7 Ազգ ազ-
 գի վրայ պիտի ելլէ եւ թագաւորութիւն թագաւորութեան
 վրայ եւ տեղ տեղ սովիւր ու ջարդեր եւ ժաժեր պիտի ըլ-
 ւան : *8 Սակայն եւ այն ամէնը ցաւերուն սկիզբն է : *9
 Այն ատեն զձեզ պիտի մատնեն նեղութիւններու եւ զձեզ
 պիտի սպաննեն եւ իմ անուանս համար բոլոր ազգերուն
 ատելի պիտի ըլլաք : *10 Եւ այն ատեն շատեր պիտի գայ-
 թակզին եւ իրար պիտի մատնեն եւ իրար պիտի ատեն :
 *11 Եւ շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ շատերը
 պիտի մոլորեցնեն *12 եւ անօրէնութիւնը շատնալուն հա-
 մար շատերուն սէրը պիտի ցամքի : *13 Բայց ով որ մին-
 չեւ վերջը համբերէ , ան պիտի ապրի : *14 Եւ արքայու-

4. Յիսուս կը յորդորէ իրենները զգուշանալ և չխարուիլ երբէք, միշտ արթուն և պատրաստ սպասել մի միայն իւր զայտեսան :

5. Յովսէպոս կը վկայէ թէ Հրէաստան լի էր յայնժամ խաբեբայներով, որոցմէ շատ մարդիկ հրապուրուելով ժամանակ առ ժամանակ յապատմ-բուծին զգրգռեցան և Հռովմայեցիներէն չարաչար պատժուեցան :

6. Ըստ վկայութեան օտար պատմադրերու, Տակիտոսի, մանուսանդ Հրեայ Յովսէպոսի նախ քան զաւեր Երուսաղեմի՝ Յիսուսի այս խօսքերը կատարուեցան : Զորս կայսրեր բռնի մահուան դատապարտուեցան զրեթէ տարի ու կէսուան մէջ : Խռովութիւններ և պատերազմներ անդադար յա-ճախեցան : Պաղեստինի Կեսարիայի մէջ Հրեայք և Ասորիք կռուեցան և սպաննուեցան 20,000 Հրեայք, նոյնպէս ի Սելևկիա 50,000 է աւելի : Կը յիշուին սովեր և ժանտամահ, մինչ զի միայն ի Հռովմ մեռան 30,000 մարդիկ : Կը յիշուին ժաժեր, որով կործանեցան շատ քաղաքներ և ամրապատ աւաններ յԱքայիա, ի Կիպրոս և ի Մակեդոնիա, ի Հռովմ, ի Կրետէ և այլուր, նաև յԵրուսաղեմ, յամի 67 : Ղուկաս կը յաւելու թէ երկնքէն մեծա-մեծ նշաններ պիտի ըլլան (ԻԱ. 11) : Ըստ վկայութեան Յովսէպոսի եղաւ այս եւս, զի երկնքէն զիսուսոր աստղ մը երևցաւ և տեւեց տարի մը : Բաղարչա-կերաց տօնին առաջին օրը լոյս ծագեցաւ և զիշերն եղաւ որպէս ցերեկ , և այս լոյս շրջապատեց տաճարը ժամերով : Տաճարին դուռը, զոր հագիւ կրնա-յին բանալ քսանի չափ մարդիկ, յանկարծ ինքնին բացուեցաւ և քանի մը օրէն երեկոյին տեսնուեցան կառքեր և զինուորական զունդեր, որք կարծես թէ ամպերուն մէջէն թռչտելով կը վազէին քաղաքներ պաշարելու : Պէնտէկոստի օրը տաճարին մէջ ձայներ լսուեցան. «Երթանք աստի» : Երուսաղեմի աւերէն չորս տարի առաջ մարդ մը երևելով և զէս ու զէն վազվտելով կ'ա-

Թեան այս աւետարանը պիտի քարոզուի բովանդակ աշխարհի մէջ, բոլոր հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար, եւ յետոյ պիտի գայ վերջը:

*15 Ուրեմն երբ տեսնէք աւերածին պղծութիւնը որ ըստած է Դանիէլ մարգարէի ձեռամբ, որ սուրբ տեղւոյն մէջ կը կենայ. ով որ կը կարդայ, թող իմանայ: *16 Այն ատեն որոնք որ Հրէաստանի մէջ են, լիռները թող փախչին: *17 Եւ ով որ տանիքի վրայ կը կենայ, թող չիջնէ իր տունէն բան մը առնելու համար: *18 Եւ ով որ արտի մէջ է, թող ետ չդառնայ իր հազուատները առնելու համար: *19 Բայց այն օրերուն մէջ վայ յղիներու եւ կաթնտուներու: *20 Աղօթքի կեցէք, որ ձեր փախուստը ձեռքը չըլլայ եւ ոչ շարաթ օրը: *21 Որովհետեւ այն ա-

ղաղակէր. «Վայ քաղաքին, վայ ժողովրդեան, վայ սուրբ տեղւոյն»: Այ՛ մարդը որքան որ ծծուկեցաւ և չարչարեցաւ. որ լռէ, այլ ամբողջ եօթը տարի և հինգ ամիս շարունակեց, մինչև որ երբ պարսպին վրայէն՝ ուր վայելք կը կարգար, Թշնամի բանակի քարածիգ մեքենայէն արձկուած քարէ մը զարնուելով՝ մեռաւ, աղաղակելով. «Վայ ինձ ևս»:

8. Հին տնտեսութիւնը կործանելու համար այս ամէնն էին ուրեմն ըսկիզբն այն երկանց, որով պիտի ծնէր նորը:

9. Այժմէն կը գուշակէ Յիսուս Թէ իրեններն ո՛րքան պիտի հալածուին և լինին ատելի: Քրիստոնեայք սկսան չարչարուիլ և սպաննուիլ (Գործք. ԻԸ. 22: Ա. Պետր. Բ. 12, Գ. 16), Հեթանոսք կ'ատէին քրիստոնեայները, որպէս կը զրնն Տակիտոս և բոլոր ժամանակակից հեթանոս և քրիստոնեայ պատմագրեր:

10. Հալածանաց երեսէն շատերը, ոչ Թէ ամէնքը, ոչ Թէ միայն պիտի ուրանային գճրիստոս, այլ և պիտի մատնէին իրենց ընկերները. և ո՞ր դարու մէջ չեն եղած այսպիսիներ:

11. Առաքեալք կը յիշեն Թէ եղան այսպիսիներ (Հռովմ. ԺԶ. 17-18 Գաղ. Ա. 6-8: Բ. Կորնթ. ԺԱ. 13: Ա. Տիմ. Ա. 6-20: Բ. Տիմ. Բ. 18: Գ. 6-8: Ա. Յովհ. Բ. 18. 26: Դ. 1-5): Ոչ Թէ քրիստոնեայներուն, այլ և Հըրեայներուն մէջ շատ խաբեբայներ երեցան, որք կը պնդէին Երուսաղեմի պաշարման ատեն, Թէ երկնքէն օգնութիւն պիտի գայ:

12. Անօրէնութիւնք պիտի շատնային և ջերմին սէրն առ Աստուած պիտի ցրտանար. տկարութիւն ի հաւատս (Բ. Տիմ. Ա. 15, Եբր. Ժ. 25: Բ. Պետ. Բ. 1-3: Յայտ. Բ. 4: Գ. 1-19):

13. «Այլ որք մինչ ի մահ գուն եղեալ վշտացն համբերեն, նորա կեան

տան մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի արարածներուն սկիզբէն ի վեր մինչեւ հիմայ չեղաւ եւ ալ պիտի չըլլայ : *22 Եւ թէ որ այն օրերը չքիչնային, ամեն մարմին պիտի չապրէր . բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի կարճընան : *23 Այն ատեն թէ որ մէկը ձեզի ըսէ . « Ահա հոս է Քրիստոսը կամ հոն » . մի հաւատաք : *24 Որովհետեւ սուտ Քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ շատ մեծ նշաններ ու հրաշքներ պիտի ցոյց տան , մինչեւ որ մոլորեցնեն , թէ որ հնար ըլլայ , ընտրեալներն ալ : 25 Ահա ձեզի առաջուց ըսի : *26 Բայց թէ որ ըսեն ձեզի, « Ահա անապատի մէջ է » . մի ելլէք . եւ թէ « Ահա ամբարներու մէջ է » . մի հաւատաք : *27 Որովհետեւ ինչպէս փայլակը որ արեւելքէն կ'ելլէ եւ մինչեւ արեւմուտք կ'երեւնայ , այնպէս պիտի ըլլայ Որդւոյ

աստ հարուստ սիրոյն օրինօք, և անդ յանսպառ կեանսն Թագաւորեացն » (Ծործորեցի) :

14. Արդարեւ Աւետարանը քարոզուեցաւ կարճ ժամանակի մէջ և ծաւալեցաւ ամեն ուրեք, որպէս Առաքեալն իսկ կը վկայէ (Հռովմ. Ժ. 18: Կող. Ա. 6. 23), որով և վերջացաւ հին տնտեսութիւնը :

15. Դանիէլ գուշակած էր արդէն այս պղծութիւնն (Թ. 26-27), և եղաւ Հռովմէական բանակին ձեռամբ , զի Հրեայք բոլոր ազգերը պիղծ կը համարէին: Իսկ տաճարը պղծեցին այն կատարի Հրեայք, նախանձաշոյզ կոչուածներ, որք զիրար բզբտեցին նոյն իսկ տաճարին մէջ :

16. Քրիստոնեայք հաւատարմով Յիսուսի այս մարգարէութեան, փախան ի Պէլլա, յսւան Բերէալի :

17. Անսպարել պէտք էր, Թողով ամէն բան, տուն ու կալուած . ամէն ոք իւր կեանքը փրկելու համար փախչելու էր :

18. Տանիքի վրայ և արտի մէջ գտնուիլն է խօսքի ձեւ, որ կը նշանակէ յապահովի ըլլալ :

19. Յղի և ստնտու կիներու յոյժ դժուարին է փախչիլը :

20. Եւ արդարեւ Երուսաղեմի պաշարումն սկսաւ կանուխէն, ամրան սկիզբէն :

21. Սոսկալի եղան նեղութիւնք: Ահռելի սովուն երեսէն շատեր լըլկեցան ու մեռան : Յովսէպոս կը գրէ Թէ կին մը , հարուստ եւ ազնուական, ստիպուեցաւ իւր զաւակը մորձել և ուտել : Բռնուած գերիներէն շատեր տանջուեցան և սպաննուեցան , շատերն ալ խաչուեցան և այլքան բազմութեամբ որ խաչերուն համար տեղ չկար և խաչ չէր բաւեր անձիւ մարմին-

մարդոյ գալուստը *28 վասնզի ուր դի կայ, հոն արժիւններ պիտի ժողովին : *29 Այն նեղութեան օրերէն յետոյ շուտ մը արեւը պիտի խաւարի եւ լուսինն իր լոյսը պիտի չտայ, եւ աստղերն երկնքէն պիտի ընկնին եւ երկնքի զօրութիւնները պիտի շարժին : *30 Եւ յետոյ Որդւոյ մարդոյ նշանը պիտի երեւնայ երկնքին վրայ, եւ այն ատեն բոլոր ազգերը կոծ պիտի ընեն . եւ երկնքի ամպերուն վրայէն զօրութեամբ եւ շատ փառքով Որդին մարդոյ եկած պիտի տեսնեն : *31 Եւ պիտի ղրկէ իր հրեշտակները մեծ փողով, եւ պիտի ժողվեն անոր ընտրեալները չորս հովերէն՝ երկնքի ծայրերէն մինչեւ անոնց միւս ծայրերը : *32 Թզենիէն սովրեցէք առակը, որովհետեւ երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւ ցցուի, գիտէք թէ ամառը մօտ է : *33 Նոյնպէս եւ դուք երբ տեսնէք այս ամենը, գիտցէք որ

ներու համար 1,000,000 է աւելի Հրեայք շարդուեցան և 100,000 Հրեայք գերի տարուեցան:

22. Կարճ տեւեց պաշարումը, գրեթէ հինգ ամիս . Տիտոս զօրավար, յետոյ կայսր Հռովմայ, զարմանօք զոչեց . « Ոչ այլ որ, այլ Աստուած Հրեայներն այս ամբողջութենէն զուրս հանեց . այսքան ամբապատ էր Երուսաղէմ : Ընտրեալներն էին նոյն իսկ Հրեայ ուղիւն մէջէն նորա . որք յետոյ, ապագայ ժամանակներու մէջ, պիտի հաւատային Քրիստոսի, ուրեմն խապուսպուռ պիտի չչնջուէին Հրեայք :

23. Յիսուս վերստին կը կրկնէ, ինչ որ արդէն խօսեցաւ (համար և - 5) :

24. Սուտ քրիստոսներէ և սուտ մարգարէներէ ընտրեալք պիտի չխաբուէին, Աստուծոյ պահպանութեամբը (Յովհ. Ժ. 28 - 29) :

26. Ըստ վկայութեան Յովսէպոսի խաբբայք ժողովրդեան շատերը տարին յանապատս, և կամ գաղտնի տեղերու մէջ պահուելով՝ ժողովուրդը հրապուրող և յապտամբութիւն զրգող համբաւներ կը հանէին :

27. Յիսուս պիտի զայ միւսանգամ և պիտի երեւի ամէն ուրեք : Շատեր կը մեկնեն թէ Յիսուսի այս զայրուստն է վերջին դատաստանի համար, թէ և եղաւ Երուսաղեմի կործանման ատենը ևս :

28. Մեկնողներ եւս կան թէ մեղաւորներու մարմիններուն վրայ պիտի թառէին Աստուծոյ զօրքը այսինքն հրեշտակները, վերջին դատաստանի օրը, իբր պաշտօնեայներ աստուածային արգարութեան : Աստուած չէր զրկեր Հռովմայեցիներն, եթէ Հրեայք ի հաւատս կենդանի եղած ըլլային : Այսպէս մեր մարմիններ կեր կը լինին շարին, կը փճանան փորձութեանց մէջ, եթէ մեր մաքուր հոգիք չկազդուրեն մարմինը, առողջ չպահեն սուրբ բարոյս կանով :

մօտ է, զոներուն քով: *34 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ որ այս ամենը ըլլայ: 35 Երկինք ու երկիր պիտի անցնին եւ իմ խօսքերս պիտի չանցնին: *36 Բայց այն օրուան եւ ժամին համար մէկը չգիտեր, ոչ երկնքի հրեշտակները եւ ոչ Որդի, բայց միայն Հայր:

*37 Բայց ինչպէս որ Նոյի օրերը, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը: 38 Որովհետեւ ինչպէս որ այն օրերուն մէջ ջրհեղեղէն առաջ, կ'ուտէին ու կը խմէին, կը կարգէին ու կը կարգուէին, մինչեւ այն օրը՝ երբ Նոյ տապանը մտաւ, 39 եւ չգիտցան մինչեւ եկաւ ջրհեղեղը եւ ամենքը ջնջեց. այնպէս եւ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը: *40 Այն ատեն թէ որ ազարակի մէջ երկու հոգի ըլլան, մէկը պիտի առնուի եւ միւսը պիտի ձգուի:

29. Ահռելի կը նկարագրուի մեղաւորներուն դատապարտութիւնը: լուսնի խաւարին ու երկնային գօրութեանց շարժին էին նշանակ թէ որպիսի անեղ փառք պիտի գար Որդի մարդոյ: Բարեւոնի կործանումը (Ծս. ԺԳ. 10), Եղովի աւերը (Ծս. ԼԳ. 4-5) յիշուած էին կանուխէն և արդարեւ եղան, որպէս գուշակած էին մարգարէք: Այլ Երուսաղեմինը կտրի անաւելի եղաւ, որպէս կը պատմէ Յովսէպոս Հրեայ ականատես պատմիչ:

30. Նշանն էր խաչը, որպէս կը մեկնեն բոլոր ձառընտիրք և Շարականք:

31. Հրեայք սովոր էին ժողով գումարել ի ձայն փողոյ (Ղեւտ. 9: Թիւք, Ժ. 2: Դատ. 9: 27): Հին տնտեսութիւնն իսպառ կործանուելով՝ նորը փողով պիտի հռչակուէր. յաղթանակ քրիստոնէութեան: Նոր եկեղեցին պիտի կազմուէր, քանի որ իւր պաշտօնեայք ի մի պիտի հաւաքէին բոլոր ցանուցիւր մարդկութիւնը:

32. Յիսուսի գալստեան օրը զիտնալու համար աշակերտք և թնդրէին զժամանակն և զօրն եւս ճշգրիտ ցանկային լսել, որ և զիտացեալ զկործիւսըն, զՊզենին առնու (օրինակ) թէ ոչ յետ բազում ժամանակաց լինի, քանզի յորժամ նորս ոստքն պտկին և տերեւն երեւի, զիտէք թէ ամառն մերձեալ է, նոյնպէս յետ ասացեալ նեղութեանցս՝ հասեալ է անորորութիւնն եւ դիւրութիւնն, զի որպէս այնմ՝ հարկ է և այսմ լինել առանց խափանածուի (Մործորեցի): Հին տնտեսութեան ձմեռը պիտի վերջանար և նորին ամառը պիտի յաշորդէր:

33. Ի մի բան՝ սա ճշմարիտ է թէ Երուսաղեմի կործանումը պիտի կատարուէր և Տէրը պիտի գար թէ յայնժամ եւ թէ վերջին դատաատանի օրը: այլ ճիւղն ու ժամը. — Յիսուս չորոշեց, այլ խոստովանեցաւ թէ Հրեայ

41 Եւ թէ որ երկու հոգի մէկ ազօրիքի մէջ աղան, մէկը պիտի առնուի եւ միւսը պիտի ձգուի:

42 Արթուն կեցէք, վասնզի չէք գիտեր թէ ո՞ր ժամին մէջ ձեր Տէրը կուգայ: *43 Զայն գիտցիք որ թէ որ տա- նուտէրը գիտնար որ պահուն գող կուգայ, կը հակէր եւ թող չէր տար իր տանը ական բանալու: 44 Ասոր համար եւ դուք պատրաստ եղիք, որովհետեւ որ ժամուն մէջ որ դուք չէք կարծէր, Որդի մարդոյ կուգայ: *45 Իսկ հաւա- տարիմ եւ իմաստուն ծառան ո՞վ է, զոր իր Տէրը իր ծա- ռաներուն վրայ կեցուց, անոնց ժամանակին կերակուր տալու համար: 46 Երանի այն ծառային, որ իր տէրը ե- կած ատենը՝ զինքն այնպէս ըրած պիտի գտնէ: 47 Ճշմա- րիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ իր բոլոր ստացուածներուն վրայ զանի պիտի կեցնէ: *48 Բայց թէ որ այն չար ծառան իր

ազգը պիտի մնայ, «Զի են ոմանք, որք աստ կան, որք մի ճաշակեցեն զմահ, մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով» (Ծործորեցի):

36. Ծործորեցի գեղեցիկ կը գրէ. «Երածկեաց, զի արժուն լինիցիմք»:

37. Ինչպէս Նոյի ժամանակն ամէն մարդ յանկարծ տեսաւ ջրհեղեղը, այսպէս պիտի տեսնուի յանկարծ Քրիստոսի գալուստն ի դատաստան:

40. Մին պիտի առնուի եւ միւսը ձգուի. «Որ ըստ հոճոյիցն Աստուծոյ գործէ և ոչ հոգովք աշխարհականօք, որպէս Նոյ եւ Աբրահամ, այնպիսին ամպովք ընկալցի յարքայութիւնն. իսկ որ մարմնական ցանկութեամբ, որ- պէս Կայէնն զործունեայ լինիցի, ի բաց ընկեցի ի վերին կենաց» (Ծործո- րեցի): Մեղաւորք եւ արգարք իրարմէ պիտի զատուին, ուրեմն միշտ ար- ժուն մնալու ենք, բանի որ չենք գիտեր թէ Տէրն Էրբ պիտի գայ:

43. Յիսուս այս երկու առակներով զմեզ կրկին կը յորդորէ յարձնու- թիւն: Աստուած զմեզ աշխարհիս տանուտէր կարգած է, ուստի արձնու- թեամբ հսկելու ենք, որ գողը այսինքն սատանայն չմտնէ հոն:

45. Նա որ օժտուած է գերագոյն շնորհօք, պարտի իւր նմաններուն, մանաւանդ իրմէ տկարագոյններուն հոգ տանիլ. այս է հաւատարիմ ծառա- յութիւնն յանուն Աստուծոյ:

48. Իսկ ով որ չընէր այսպէս, այսինքն չար կը գործէ չարերու հետ մոլելով. սաստիկ պիտի պատժուի. մէջ տեղէն կտրուիլն էր տեսակ մը ծանրագոյն պատիժ (Դան. Բ. 5: Գ. 29: Եբր. ԺԱ. 37):

51. Ուրեմն բոլոր անհաւատարիմ մարդիկ պիտի պատժուին միշտ, «Կեղծաւորներու» հետ ի միասին:

Երուսաղեմի աւերն ու Քրիստոսի վերստին գալուստն ի դատաստան կը պատմեն Մարկոս (ԺԳ. 1-37) և Դուկաս (ԻԱ. 1-37):

սրտին մէջ ըսէ . « Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ » . եւ սկսի իր ծառայակիցները ծեծել , ուստի ու խմէ գինովներու հետ : 50 Այն ծառային տէրը պիտի գայ այն օրը՝ երբ չսպասեր , եւ այն ժամին՝ զոր չգիտեր . 51 Եւ զանի մէջտեղէն պիտի կտորէ եւ անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ . հոն պիտի ըլլայ լալ եւ ակռաներու կրճըտել :

ՔԼՈՒԽ ԻԵ.

*1 Այն ատեն երկնքի Թագաւորութիւնը պիտի նմանի տաան կոյսերու , որոնք իրենց լապտերները առնելով հարսն ու փեսան դիմաւորելու ելան : *2 Անոնցմէ հինգը յիմար եւ հինգը իմաստուն էին : *3 Յիմարները առին լապտերնին եւ իրենց հետ ձէթ չառին : *4 Բայց իմաստուններն ամաններով ձէթ առին իրենց լապտերներուն հետ : *5 Եւ փեսան ուշանալուն համար ամենքը մրափեցին ու քնացան : *6 Եւ կէս գիշերուան մէջ ձայն եղաւ . « Ահա փեսան կուգայ . ելէք անոր առջեւ » : 8 Կ'ըսեն յիմարներն իմաստուններուն . « Տուէք մեզի ձեր այդ իւղէն , վասնզի մեր այս լապտերներն ահա կը մարին » : *9 Պատասխան տուին իմաստուններն ու կ'ըսեն . « Կարելի է որ մեզի ու ձեզի բաւ չըլլայ . ուստի գացէք վաճառականներուն եւ

1. Տասն կոյսերու առակի իմաստն այս է Թէ Եկեղեցին կ'սպասէ Քրիստոսի գալստեան : Որովհետեւ քրիստոնեայք հեծանոսական պղծութիւններէ զերծ են , ուստի կ'անուանուին կոյս :

2. Իմաստուն նորա են , որք իրենց աստուածատուր ձիրքերը ա'լ աւելի արգասաւորած են , շահած են իւղ այսինքն Սուրբ Հոգոյն շնորբը :

3. Իսկ նորա են յիմար , որք միևնոյն ձիրքերը չեն բնաւ անեցուցած , ի հաւատս Թերի գտնուելով :

4. Փեսայն՝ Քրիստոս է , որոյ գալուստն իսկ և իսկ չէ :

5. Քունն է հանգիստ . մարդ երբ կը դադրի յուսալէ , այլ ևս չգործեր :

6. Դատաստանի օրն այդ ձայնը պիտի հնչէ և յայնժամ արդար իրենց վառ լապտերներով — հոգոյն գործերով — պիտի դիմաւորեն փեսայն :

8. Այսպէս են այն մարդիկ , որք հաւատոյ լոյսն ընդունելէ յետոյ , անհոգ մնացած են , և կարօտը պիտի քաշեն այն փառաց , զորս սուրբք պիտի վայելեն :

ձեզի գնեցէք) : *10 Երբ անոնք գնելու գացին, փեսան եկաւ ու պատրաստ եղողներն անոր հետ մտան հարսնիքը եւ դուռը գոցուեցաւ : *11 Յետոյ կուգան եւ միւս կոյսերը ու կ'ըսեն . «Տէր, ո՛վ Տէր, բաց մեզի» : 12 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ . «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ զձեզ չեմ գիտեր» : 13 Արթուն կեցիք, որովհետեւ չէք գիտեր օրն ու ժամը :

*14 Ինչպէս որ մարդ մը հեռու երկիր երթալով, կը կանչէ իր ծառաները եւ իր ստացուածները անոնց տուաւ : *15 մէկուն տուաւ հինգ քանքար ու մէկուն երկուք եւ մէկուն մէկ . ամեն մէկին իր կարողութեանը համեմատ . եւ գնաց : 16 Այն որ հինգը առաւ, շուտով գնաց, անոնցմով գործ ըրաւ եւ ուրիշ հինգ ալ շահեցաւ : 17 Նոյնպէս այն որ երկուքը առաւ շահեցաւ ուրիշ երկուք ալ : 18 Եւ որ մէկն առաւ գնաց, գետինը փորեց եւ իր տէրին արծաթը պահեց : *19 Շատ ժամանակէ յետոյ կուգայ այն ծառաներուն տէրը եւ անոնցմէ հաշիւ կ'ուզէ : *20 Եւ այն որ հինգ քանքարը առաւ, ուրիշ հինգ քանքար ալ բերաւ ու կ'ըսէ . «Տէր, ինծի հինգ քանքար տուիր, ահա հիմայ ուրիշ հինգ քանքար ալ վրան շահեցայ» : 21 Կ'ըսէ անոր իր տէրը . «Ապրիտ, ո՛վ բարի ու հաւատարիմ ծառայ, որովհետեւ այդ քիչ բանին մէջ հաւատարիմ ես, շատ բաներու վրայ զքեզ

9. Ոչ որ իւր շնորհաց պաշարէն կրնայ ուրիշին բաժին տալ, վասնզի ինքն ա՛լ աւելին ունենալու տենչն ունի . խրատ կարելի է տալ, որպէս ըրին իմաստուն կոյսերն, այլ սակայն անօգուտ էր, բանի որ գիշեր էր, խանութները գոց էին, այսինքն աշխարհս վերջացած էր և Տէրն եկած էր :

40. Դուռը կը փակուի, բայց այժմ բաց է այդ դուռը և ով որ ուզէ, կրնայ մտնել :

41. Երբ այդ գուռն փակուի յաւիտեան, յայնժամ ուէ ազաչանք անօգուտ են, ինչպէս մեծատունին աղերսն առ Արբահիմ անօգուտ եղաւ (Ղուկ. ԺԶ. 19-31) :

43. Արժուն մնալու համար սա Շարականը յեղյեզելու ենք . «Պայծառացո՛, Տէր, զյապտերս հոգեոց մերոց» (Կանոն Աւագ-երկուշաբաթու) :

46. Իմաստուն և յիմար կոյսերուն առակով կը յորդորուինք յարժնութիւն, իսկ այս տաղանդներու առակով ի գործ լինել . գործել բարի : Բրիստոս Թողոց աշխարհս յանձնելով իւր եկեղեցին իւր աշակերտներուն (Սփեւ. Գ. 7 43) :

պիտի կեցնենմ, մտիր տէրիդ ուրախութեանը մէջ : 22 Եւ այն որ երկու քանքար առած էր, մօտենալով կ'ըսէ. «Տէր, ինձի երկու քանքար տուիր ; ահա ուրիշ երկու քանքարներ այ՛ զոր շահեցայ : » 23 Իր տէրն անոր կ'ըսէ. «Ապրիս, ո՞վ բարի եւ հաւատարիմ ծառայ, որովհետեւ այդ քիչ քանին մէջ հաւատարիմ ես, շատերուն վրայ զքեզ պիտի կեցնեմ. մտիր քու տէրիդ ուրախութեանը մէջ : 24 Եւ այն որ մէկ քանքար առած էր, մօտենալով կ'ըսէ. «Տէր, գիտէի որ դու խիստ մարդ մը ես, կը քաղես զայն զոր չցանեցիր եւ կը ժողվես, ուր չցրուեցիր. » 25 Վախցայ, դացի եւ պահեցի քու քանքարը գեանի մէջ. ուստի ահա քուկդ քեզի : » 26 Տէրը պատասխան տուաւ ու կ'ըսէ անոր. «Չար ու վատ ծառայ, գիտէիր որ կը քաղեմ ուր չըցանեցի եւ կը ժողվեմ, ուր չցրուեցի. » 27 Պէտք էր քեզի իմ ստակս սեղանաւորներուն տալ եւ ես գալով տոկոսներովք պահանջէի իմը : *28 Ուրեմն առէք առկէ այդ քանքարը, եւ տուէք անոր որ տասը քանքար ունի : 29 Վասնզի ո՞վ որ ունի, պիտի տրուի եւ պիտի աւելնայ. եւ ո՞վ որ չունի եւ ինչ որ ունենայ, անորմէ պիտի առնուի : *30 Եւ այդ անպիտան ծառան դրսի խաւարը հանեցէք) . հոն պիտի ըլլայ լալ եւ ակռաներու կրճրտել :

15. Քանքարն է իբր Օսմ. 350 ոսկի : Աստուած ամէնուն կը շնորհէ չափով :

16. Աստուծոյ պարգեւները, մեր ձիրքերը շահագործելու պարտքն ունինք. աճելու են սրբութեան և առարինութեան մէջ :

18. Մարդ որքան որ դոյզն ստանայ շնորհ Աստուծմէ, զայն սակայն աճեցնելու է գործածելով, այսինքն դոյզն բարեգործութիւնն իսկ՝ հաճելի է Աստուծոյ :

19. Պիտի գայ Քրիստոս և յայնժամ լիազոյնս պիտի վարձատրէ զնոսա, որք լիազոյն շնորհօք փայլեցան յաշխարհի աստ և զորս հազորդ կ'ընէ իւր ուրախութեան այսինքն արքայութեան :

24. Կան մարդիկ, որք կը գանգատին Թէ Աստուած քիչ կուտայ և շատ կը պահանջէ, և Թէ մինչդեռ մեղսամէտ բնութիւն տուած է, կը պահանջէ սրբութիւն. կը պահանջէ պտուղներ, մինչդեռ ցանած չէ, ուստի զԱստուած անիրաւ կարծելով՝ կը մնան անփոյթ : Երբա չեն յիշեր Թէ Աստուած, ո՛րք քան բարի է, քանի սր մեզի տուած է տաղանդներ, առողջութիւն և իմաստ տուածին, զորս յարգելով և գործածելով ա՛լ աւելի կ'օրհնուինք Աստուծմէ :

*31 Եւ երբ Որդի մարդոյ գայ իր փառքով եւ բոլոր հրեշտակները անոր հետ, այն ատեն իր փառաց աթոռը պիտի նստի: 32 Եւ անոր առջեւ պիտի ժողվին բոլոր ազգերը եւ զանոնք իրարմէ պիտի զատէ, ինչպէս հովիւը կը զատէ ոչխարներն այծերէն: 33 Եւ ոչխարները իր աջ կողմը պիտի կեցնէ, եւ այծերը ձախ կողմը: *34 Այն ատեն թագաւորն անոնց պիտի ըսէ որոնք իր աջ կողմն են. «Եկէք իմ Հօրս օրհնածները, աշխարհիս սկզբէն ի վեր ձեզի պատրաստուած արքայութիւնը ժառանգեցէք: 35 Որովհետեւ անօթեցայ եւ ինծի ուտելիք տուիք. ծարաւեցայ եւ ինծի խմցուցիք. օտարական էի եւ զիս խնամեցիք. 36 մերկ եւ զիս հագուեցուցիք. հիւանդ էի եւ զիս տեսաք. բանտի մէջ էի եւ իմ քովս եկաք»: *37 Այն ատենը արդարներն անոր պատասխան պիտի տան եւ ըսեն. «Ով Տէր, ե՞րբ զքեզ անօթի տեսանք ու կերակրեցինք, կամ ծարաւցած եւ խմցուցինք: 38 Ե՞րբ զքեզ օտարական տեսանք եւ խնամեցինք, կամ մերկ եւ հագուեցուցինք: 39 Ե՞րբ տեսանք զքեզ հիւանդ կամ բանտի մէջ եւ քեզի եկանք»: 40 Թագաւորը պատասխան պիտի տայ եւ ըսէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. որովհետեւ այս իմ պըզտիկ եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրիք»:

-26. Եթէ Աստուած խիստ է, ուրեմն ալ աւելի զգուշագոյն ըլլալու ենք. Աստուած կը պահանջէ մենէ իրենը այն համեմատութեամբ ու չափով, զոր տուած է (Բ. Կորնթ. Ը. 12): Ծործորեցի կը յաւելու. «Փոխ տալ այնտոսի որ պէտս ունէին. . . աւանդել զշնորհն հաւատարիմ մարդոց, որ կարող էին և զայլս ուսուցանել, ի վարդապետս հմուտս »:

28. Այսպէս նա որ ի հաւատս առաջին կը հանդիսանայ, պիտի տառու աւելին, վասն զի ճշմարտութիւնն այս է թէ չունեցողին ունեցածը, ունեցողը պիտի տառու, ուրեմն չունեցող կը նշանակէ այն որ ունի, բայց չը գործածեր, ուստի և իրօք չունի (ԺԳ. 12):

30. Այսպէս պիտի դատապարտուին բոլոր անհոգ և անպիտան մարդիկ:

31. Յետոյ Յիսուս կը յաւելու թէ պիտի գայ և ընէ վերջին դատաստանը:

32. Տեսարան սրանչելի, բովանդակ մարդկութիւնն անդ ներկայ, զորս հրեշտակը (ԺԳ. 49) իրարմէ պիտի զատեն: Ոչխարներն, այսինքն արդարները Յիսուսի աջ կողմը պիտի կենան. աջակողմն է պատուաւոր տեղ (Միսն. Ա. 20), իսկ մեղաւորները ձախ կողմը:

*41 Այն ատեն պիտի ըսէ եւ անոնց որոնք ձախ կողմն են . « Գացէք ինէ, անիծեալներ , յաւիտենական կրակին մէջ , որ պատրաստուած է սատանային եւ անոր հրեշտակներուն : 42 Որովհետեւ անօթեցայ եւ ինծի ուտելիք չըտուիք . ծարաւեցայ եւ ինծի չիմցուցիք : 43 Օտարական էի եւ զիս չիմամեցիք . մերկ էի եւ զիս չհագուեցուցիք . հիւանդ եւ բանտի մէջ էի , եւ զիս չտեսաք » : 44 Այն ատեն եւ անոնք պատասխան պիտի տան ու ըսեն . « Ով Տէր , ե՞րբ զքեզ անօթի կամ ծարաւ կամ օտարական կամ մերկ կամ հիւանդ կամ բանտի մէջ տեսանք եւ քեզի չծառայեցինք » : 45 Այն ատեն անոնց պատասխան պիտի տայ ու պիտի ըսէ . « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . որովհետեւ այս պզտիկներէն մէկուն չըրիք , ինծի ալ չըրիք » : *46 Եւ անոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը , եւ արդարները յաւիտենական կեանքը » :

34. Թագաւորն Քրիստոս կը հրաւիրէ արդարները վայելել արքայութիւնը , Թուելով նոցա իւրաքանչիւրին բոլոր բարի գործերը և զովելով նոցա առաքինի կենցաղը :

37. Արդարք ոչ Թէ պիտի խօսին , այլ պիտի զգան , որոց պիտի յաւելու Յիսուս . « Իրովհետեւ այս իմ եղբայրներուս ամենէն պզտիկին ինչ որ ըրիք , ինծի ըրիք » : Ո՛վ փրկութեան խօսք . զո՞ք բարութեան և առաքինութեան հեղեղ մըն է որ կ'որոզէ աշխարհս : Եղբայր կ'անուանէ Քրիստոս զմարդիկ առ հասարակ , որպէս զի ցոյց տայ Թէ որքան ատելի բան է ամբարտաւանութիւնը :

41. Յետոյ Յիսուս մեղաւորներուն կը սաստէ , պախարակելով նոցա ամուլ կենցաղը , անբարեգործ կեանքը , և զորս կը դատապարտէ յաւիտենական տանջանաց :

46. Վարձք ու պատիժ Թէև յաւիտենական , այլ նուազ կամ աւելի ըստ գործոց իւրաքանչիւր արդարոյ և մեղաւորի (Ղուկ. ԺԲ. 47. Ա. Կորնթ. ԺԵ. 41. Դան. ԺԲ. 3) :

Գ Լ Ո Ւ Ք Ի Ձ .

*¹ Եւ եղաւ երբ Յիսուս այս ամեն խօսքերը լմնցուց՝ կ'ըսէ իր աշակերտներուն . *² «Գիտէ՞ք որ երկու օրէն Ձատիկ կ'ըլլայ եւ Որդի մարդոյ կը մատնուի խաչը ելլելու » : *³ Այն ատեն քահանայապետներն ու գալիւրներն և ժողովրդեան ծերերը հաւաքուեցան քահանայապետի սրահին մէջ , որուն անունն էր Կայիափայ : *⁴ Եւ խորհուրդ ըրին որ նենգութեամբ Յիսուսը բռնեն եւ սպաննեն : *⁵ Բայց կ'ըսեն թէ « Ոչ այս տօնին մէջ որ խռովութիւն չըլլայ ժողովրդեան մէջ » : *⁶ Եւ Յիսուս եկաւ Բեթանիա բորոտ Սիմօնին տունը , *⁷ անոր կին մը մօտեցաւ որ ծանրագին

1. Երուսաղեմի աւերն ու աշխարհի կատարածը յիշատակելէ յետոյ , Յիսուս վերստին կը գուշակէ , այս անգամ շատ որոշ , թէ պիտի մատնուի ու խաչուի :

2. Պատէքը Ձատիկ Թարգմանած են մեր նախնիք , որպէս հին Իսրայէլ ազատուեցաւ Եգիպտական գերութենէ , նոր Իսրայէլ ևս ազատուեցաւ կամ զատուեցաւ մեղաց գերութենէն մահուամբ Գառինն , Պատէքը Հրեայք կը կատարէին Ապիպ , այժմ Նիսան , ամսոյ 14ի հինգշաբթի օրուան երեկոյին : Պատէքի բուն եբրայեցերէնն է Փէսախ , որ է անցք (Ելք ԺԲ. 1-20) :

3. Քահանայապետք և ծերք կը ժողովէին Կայիափայի տան մէջ , ուրնմն ի ծածուկ , զի սանետրիոնը կը գումարուէր միշտ տաճարի մէկ մասին մէջ , որ էր սրահ : Կայիափայ քահանայատետութեան պաշտօն վարեց յամին 27-36 , ինքն էր Սաղուկեցի , և ոխերիմ Յիսուսի , որ ոչ թէ շատագով էր յարութեան , այլ և կը քարոզէր թէ ինքն է Մեսիայն , Տէր կենաց և մահու : Սա յայնժամ անիրաւ վճռով դատապարտեց Յիսուսն ի մահ (Յովհ. ԺԼ. 49-51) : Կայիափայ է սոսկալի օրինակ այն մարդոց , որք ճշմարտութեան լոյսը տեսնելով հանգերձ՝ չեն զգաստանար , կարծես նոյն իսկ այդ լոյսէն շլինալով կը կուրնան : Եղբրական կը պատմուի Կայիափայի մահը . ինքնասպան եղաւ , երբ զրկուեցաւ քահանայապետութենէ :

Ծերք էին նահապետք Իսրայելի , որք կը կառավարէին իւրաքանչիւրն իւր տունն ու ցեղը : Մովսէս և Ահարոն այս ծերերուն հետ խորհրդակցեցան (Ելք Գ. 16) : Օրէնքէն յետոյ 70 կամ մանուսանդ 72 ծերեր ընտրուեցան վեց վեց անձն իւրաքանչիւր ցեղէ : Ծերակոյտն ունէր ընդարձակ իրաւասութիւն , մինչև իսկ մահապարտութեան վճիռ արձակելու իջ-

իւղի շիշ ունէր եւ անոր գլխուն թափեց, երբ Յիսուս սեղան նստած էր : *8 Աշակերտներն երբ տեսան, բարկացան ու կ'ըսեն . «Ինչո՞ւ այդ իւղին կորուստ ըլլայ . 9 որովհետեւ կարելի էր զայդ սուղ գնով ծախել եւ աղքատներուն տալ » : *10 Յիսուս գիտցաւ եւ կ'ըսէ անոնց . « Ինչո՞ւ այդ կիներ անհանգիստ կ'ընէք . ատի բարի գործ մը գործեց ինձի : 11 Ամեն ատեն աղքատները ձեզի հետ ունիք , բայց զիս ձեզի հետ չունիք : *12 Ատոր այդ իւղը իմ մարմնոյս վրայ թափելը , իմ թաղմանս համար նշան է : *13 Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ ուր որ այս աւետարանը քարոզուի բոլոր աշխարհի մէջ , թող խօսուի , ինչ որ ըրաւ ատի , ատոր յիշատակին համար » :

*14 Այն ատեն տասն երկուքէն մէկը՝ իսկարիովտացի Յուդայ ըսուածը՝ զնաց քահանայապետներուն եւ կ'ըսէ .

խանութիւն, զոր ջնջեցին Հռովմայեցիք , ուստի Ծերակոյտն ստիպուեցաւ Պիղատոսի դիմել ամբաստանելով թէ Յիսուս է պետական դուռճան :

5. Սաննտրիոնը վախնալով ժողովրդէն, որոշեց նենգաւ Յիսուսը բռնել ու մեռցնել :

6. Սիմոն բժշկուած էր Յիսուսէն, զի եթէ տակաւին բորոտ լինէր, չէր կրնար ուրիշներու հետ բնակիլ :

7. Այս այն կինը չէ, զոր Ղուկաս կը յիշէ (Է. 36-50), վասնզի այն օժումն եղաւ փարիսեցի Սիմոնի տանմէջ, իսկ այս՝ բորոտ Սիմոնի տանմէջ : Այն կինն էր մեղաւոր, իսկ սա՝ ոչ , և էր սա բոյր Ղազարու, որպէս կը գրէ Յովհաննէս (ԺԲ. 2-9), Իւղով ոչ թէ միայն օծուեցաւ Յիսուսի գլուխը, այլև ոտներն, որպէս կը յիշէ Յովհաննէս և էր հարիւր տրամ, ծանրագին, իբր տասն ոսկիի արծէքով :

8. Աշակերտք կը տրտնչան, զուցէ Յուդայէ Սելադրուելով, զի, որպէս Յովհաննէս կը գրէ, նա եղաւ առաջին այդ կարծիքը յայտնող . « Ուստի ունէին զայս միտս աշակերտքն, — յայտ է թէ ի Վարդապետէն լուեալ էին, զողորմութիւն կամիւմ և ոչ զզոն և Հրէիցն մեղադրէր . եթէ Յողին զմանք ծանր օրինացն , զուստաստանս, զողորմութիւն և զհաւատք (Մործորեցի) » :

10. Յիսուս կը գովէ կինը . « Զի բազում են բարեաց գործոց մասունք . մի է և այդ բազմացն » (Մործորեցի) :

12. Մարիամ յանախ լսելով նոյն իսկ Յիսուսէն , թէ խաչաչարչար պիտի մեռնի և զուցէ առանց օծումի թաղուի, այժմէն կ'օծէ զնա :

13. Երեք աւետարանիչները գրելով Մարիամի ոյս գործը, հռչակեցին զայն . այսպէս Քրիստոս կ'արձանագրէ ո և է սիրոյ մէկ գործ, զոր կ'ընենք յանուն իւր (Մարկ. ԺԲ. 3-10; Յովհ. ԺԲ. 1-8) :

« 15 Ի՞նչ կ'ուզէք ինձի տալ եւ ես զանի ձեզի մատնեմ » :
 Եւ անոնք անոր երեսուն արծաթ կշռեցին : 16 Եւ այնուհետեւ պատեհութիւն կը փնտռէր որ զանի անոնց մատնէ :

*17 Եւ բաղարջակերի առաջին օրը աշակերտները Յիսուսի մօտեցան ու կ'ըսեն . « Մէր կ'ուզես որ քեզի պատրաստենք Ձատիկն ուտելու » . 18 Եւ ան կ'ըսէ անոնց . « Գացէք քաղաքը այրինչին . ըսէք անոր . « Վարդապետը կ'ըսէ . « Իմ ժամանակս մօտեցած է , իմ աշակերտներուս հետ մեկտեղ քու քովը ընեմ Ձատիկը » : 19 Եւ աշակերտներն ըրին ինչպէս որ Յիսուս անոնց հրամայեց . եւ Ձատիկը պատրաստեցին :

20 Եւ երբ իրիկուն եղաւ , տասն երկու աշակերտներուն հետ նստած էր : 21 Եւ անոնք երբ դեռ կ'ուտէին , կ'ըսէ . « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ ձեռնէ մէկը զիս պիտի մատնէ » :

14. Յուդայ աշակերտած էր Յիսուսի յուսով աշխարհային պատուոյ և շահու (Յովհ. 2, 26. 66. 70), այլ երբ նոյն իսկ Յիսուսէն յաճախ լսեց Սէպիտի չարչարուի նա ու պիտի մեռնի , տակաւ առ տակաւ սկսած էր տկարանալ և երբ Յիսուսէն այժմ յանդիմանուեցաւ , այս տկարութեան հետ միացաւ և զայրոյթ , ուստի իսկոյն անապարեց մատնութեան :

15. Երբէք այսպիսի անամօթ սակարկութիւն չէ եղած , և ոճիր այսքան զիւրազնի , զի երեսուն սիկղ արծաթը կ'արժէր իբր երեք ու կէս ոսկի , օրինական զին գերոյ համար (Ելք ԻՒ. 32. Ղևտ. Իէ 3) : Այս սակարկութիւնը գուշակած էր Ջաբարիա (ԺԱ. 12. 13) : Կ'երեւի Սէ Յուդայ այս գուժարը Յիսուսը մատնելէ յետոյ ստացաւ , ոչ Սէ կանխիկ :

17. Ըստ Ղուկասու , Պետրոս և Յովհաննէս կը զրկուին (ԻՔ. 8) : Այս ինչ մարդն ըլլալու էր աշակերտ Յիսուսի , և Երուսաղեմի բնիկներն ունէին պատրաստ սենեակներ , իրենց բարեկամներուն տալու համար , որք ի հեռուստ կուզային Պասէքը ուտելու , որոյ եղանակն այս էր յայնժամ . տանուտէրը կ'առնուր հինգ անգամ բաժակ մը զինի ու կը զոհանար , կը խըմէր ու կը խմցնէր բազմականներուն : Նախ քացախէ , Սուզէ , նուշէ և համեմներէ կազմուած խիւսի մէջ դառն խոտեր Թաթխելով կ'ուտէին ի յիշատակ դառն գերութեանն Իսրայելի յեզրպոստ : Երկրորդ բաժակի ատեն , երէց որդին կը հարցընէր Սէ Խնու կը տօնուի Պասէքը (Ելք ԺԲ. 26) , և հայրը կը մեկնէր , ապա կ'ուտէին զառը և բաղարջէ հացերը դառն խոտերովն հանդերձ : Իւրաքանչիւր բաժակէ վերջ կ'երգէին Հալլէլի Սաղմոսները (ԺԳ. ձԺԴ-ձԺԸ , ձԻ-ձԼԸ) :

22. Յիսուս ստէպ գուշակած էր Սէ պիտի մատնուի , այլ չէր ըսած Սէ

*22 Եւ շատ տրտմեցան եւ սկսան անոնցմէ ամէն մէկն ըսել անոր. «Տէր, միթէ ե՞ս եմ»: *23 Ան պատասխան տուաւ եւ կ'ըսէ. «Ով որ ինձի հետ իր ձեռքը պնակին մէջ խոթեց, ան զիս պիտի մատնէ»: *24 Որդի մարդոյ կ'երթայ, ինչպէս որ գրուած է անոր համար. բայց վայ այն մարդուն՝ որուն ձեռամբ պիտի մատնուի Որդի մարդոյ. աղէկ էր չայն մարդուն որ ծնած չըլլար»: *25 Պատասխան տուաւ Յուդայ որ զանի պիտի մատնէր, եւ կ'ըսէ. «Միթէ ե՞ս եմ, վարդապետ»: կ'ըսէ անոր. «Դուն ըսիր»: *26 Եւ երբ անոնք դեռ կ'ուտէին Յիսուս հաց առաւ, օրհնեց ու բեկեց, եւ աշակերտներուն տուաւ ու կ'ըսէ. «Առէք, կերէք այս է իմ մարմինս»: *27 Եւ գաւաթը առնըլով գոհացաւ, անոնց տուաւ ու կ'ըսէ. «Ամենք խմեցէք ատկէ, որովհետեւ այդ է իմ արիւնս նոր ուխտի, որ

աշակերտներէն մէկուն ձեռամբ պիտի մատնուի, ուստի նորա տխրեցան. և որովհետեւ ոչ Յուդայի և ոչ ուրիշի մը վրայ կասկած ունէին, ուստի հարցուցին Յիսուսի Թէ ո՞վ է այդ դաւաճանը:

Կ'երեւի Թէ ընթրիքէն առաջ աշակերտաց մէջ վէճ ծագեցաւ Թէ ո՞վ պիտի ըլլայ մեծ, զոր Ղուկաս կը յիշէ իբր Թէ ընթրիքէն յետոյ եղած (ԻԲ. 24-28), այս անվայել վէճը նշաւակելու համար, Յիսուս աշակերտաց ոտները լուաց: Պատէքը ուտելէ առաջ Հրեայք իրենց ոտները պարտաւոր էին լուալ և յետոյ բազմիչ, Յիսուս կ'ընէ այդ ստորին գործը, խոնարհութեան օրինակ տալու համար (Յովհ. ԺԳ. 1-12):

23. Արեւելեան սովորութիւն է երիցագոյնէն յետոյ ապուրի կամ կերակուրի պնակին ձեռք երկարել. Յուդայ, որոյ հաւատքն առ Յիսուս խախտած էր, յանդգնեցաւ զլանալ այս յարգանքն առ իւր Վարդապետ: Կ'երեւի Թէ աշակերտք Յուդայի այս յանդգնութիւնը չէին դիտած, ուստի իրենց կասկածը չփարատեցաւ, մինչև որ Յիսուս մատնանիշ ըրաւ մատնիչը, յանուանէ շեշտեց:

24. Գուշակած էին արդէն մարգարէք Թէ Մեսիայն պիտի չարչարուէր (Մաղմ. ԻԲ. Ես. ԾԳ. 3-10; Դան Թ. 26-27; Զաք. ԺԲ. 10. ԺԳ. 7): Աստուծոյ անհռն բարութիւնն առ մարդ այսպէս պիտի յայտնուէր, այլ սակայն ոչ Յուդայի և ոչ Հրէից յանցանքը կը թեթեւնայ, զի ըրին չար դիտաւորութեամբ և յանիրաւի. և Ոչ յայն միտս արարին Թէ զգրեալսն կատարեսցեն, այլ առ չարութեան սրտից իւրեանց. Յուդայ վասն ազահութեանն և Հրեայքն վասն նախանձու և ռիսակալութեանն, վասն այսորիկ դատապարտեցան» (Մործորեցի):

չատերուն վրայ կը թափուի մեղաց թողութեան համար : *29 Բայց կ'ըսեմ ձեզի . այսուհետեւ պիտի չլսեմ որթի բերքէն մինչեւ այն օրը , երբ զայդ ձեզի հետ նորէն խըմեմ իմ հօրս արքայութեանը մէջ » : 30 Եւ օրհնեցին եւ Ձիթենեաց լեռը ելան :

*31 Յիսուս այն ատեն կ'ըսէ անոնց . « Դուք ամենքդ ինչ պիտի գայթակղիք այս գիշերուան մէջ , վասնզի գրուած է թէ « Հովիւը պիտի զարնեմ եւ հօտին ոչխարները պիտի ցրուին » : 32 Եւ յարութիւն առնելէս յետոյ ձենէ առաջ Գալիլեայ պիտի երթամ » : *33 Պատասխան տուաւ Պետրոս ու կ'ըսէ անոր . « Թէ եւ ամենքը գայթակղին քեանէ բայց ես պիտի չգայթակղիմ » : 34 Յիսուս կ'ըսէ անոր . « Ընդմարիտ կ'ըսեմ քեզի , որ այս գիշերուան մէջ դեռ հաւը չխօսած՝ զիս երեք անգամ պիտի ուրանաս » : 35 Կ'ըսէ ա-

25. Ամենէն յետոյ Յուդայ կը յանդգնի , զուցէ պատառը Յիսուսէն առած ատեն (Յովհ. ԺԳ. 26) , հարցընել Թէ քնքն է արդեօր , եւ Յիսուսէն պատասխան կ'առնու . « Դուն ըսիր » . հաստատական ձև էր այս խօսքը Հրէից մէջ , այսինքն « Այո յի տեղ » Ծործորեցի կը գրէ . « Բերան քո մատնիչ եղև մտաց քոց և զյաւելուածս սրտիդ՝ արտաքս ժայթքեաց լեզու քո » :

26. Յիսուս հաստատելու համար Հաղորդութեան սուրբ խորհուրդը , անխմոր հացը այսինքն բաղարջէ բլիթներէն մին կ'առնու և կ'օրհնէ . Ղուկաս և Պօղոս կը յաւելուն (Ա. Կորնթ. ԺԱ. 24) . կը զոհանայ , կը բեկէ հացը , և ոչ Թէ կը կտրէ . այս բեկումն էր նշանակ Քրիստոսի մարմնոյն բեկման մեկոց համար (Ա. Կորնթ. ԺԱ. 24.) , նորա մարմինը պատառեցաւ , ծակեցաւ և վիրաւորեցաւ : Յետոյ Յիսուս կ'արտասանէ . « Առէք , կերէք . ԱՅՍ է ՄԱՐՄԻՆ ԻՄ » : Ղուկաս կը յաւելու . « Որ ձեզի համար տրուած է » (ԻԲ. 19) և Պօղոս կը գրէ . « Որ ձեզի համար կը բեկուի » (Ա. Կորնթ. ԺԱ. 24) , և նորա կը յաւելուն . « Ձիս յիշելու համար » : Այս խորհուրդը կատարուելով կը յիշենք այդ՝ զՔրիստոս , որ իւր մարմինը տուաւ ի բեկումն , աշխարհի փրկութեան համար : Բնական հացով կը կազդուրուի մեր մարմինը , այս հոգեւոր հացով կը պարտրի մեր հոգին , այլ այս յանուն միսի՞ծարութիւնն ունի քրիստոնէայն յայնժամ և եթ , երբ սուրբ սրտով և հաւատով կը հաղորդի Տեառն մերոյ կենարար մարմնոյն և արեանը :

27. Յիսուս յետոյ կ'առնու բաժակը , կ'օրհնէ ու կը զոհանայ և կուտայ աշակերտներուն ըսելով . « Ամէնքդ խմեցէք ասկէց , վասնզի ԱՅՍ է ԱՄԻՒՆ ԻՄ՝ նորոյ ուխտի , Հին ուխտը հաստատուած էր արեամբ որժուց և նոխազաց (Ելք ԻԴ. 8) , իսկ նորը կը հաստատուէր անա արեամբ Գա-

նոր Պետրոս . « Թէ որ քեզի հետ մեռնելու ալ ըլլամ , գքեզ պիտի չուրանամ » . Նոյնպէս եւ բոլոր աշակերտները կ'ըսէին :

*36 Յիսուս այն ատեն կուգայ անոնց հետ գիւղ մը , ուրուն անուէն էր Գեթսեմանի եւ կ'ըսէ անոնց . « Հոգ նրատեցէք , մինչեւ երթամ , աղօթքի կենամ . » *37 Եւ իր հետ Պետրոսը ու Զեբեթեայ որդիները առնելով սկսաւ արտամիջ եւ հոգ ընել : *38 Այն ատեն կ'ըսէ անսնց . « Իմ Հոգիս մեռնելու չափ արտոււմ է . հոս կեցէք եւ ինծի հետ արթուէ մնացէք » : *39 Եւ քիչ մը առաջ երթալով իր երեսին վրայ ընկաւ , աղօթքի կեցաւ ու կ'ըսէ . « Ով իմ Հայրս , թէ որ կարելի է , թող այս գաւաթը ինէ անցնի . բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ . այլ ինչպէս որ դուն » : 40 Կուգայ աշակերտներուն քով եւ զանոնք քունի մէջ կը գտնէ , եւ կ'ըսէ Պետրոսին . « Այդ-

ուին Աստուծոյ , որ կը Սափուէր ամենուն համար (Եբր . Թ . 16-23) : Ամենուն մեղաց Սողոմեանն և փրկութեանը համար : Հին տնտեսութեան գոհերուն արիւնը չէր կրնար մեղքը ջնջել , բայց այս արիւնը մարբեց ու կը մարբէ աշխարհս ամէն մեղքէ (Ա . Յովհ . Ա . 7) : Բնական զինիով զոյգն ու առժամեայ կը զուարթանայ մեր սիրտը , այլ այս հոգեւոր զինիով ևս քան զկս լիազոյն և յաւիտեան կը զուարթանայ , զի այս է կենաց նեկտար :

Զկայ եկեղեցի մը որ այս խորհուրդը ճշդիւ դաւանի ու կատարէ . Հատինք կը զրկեն ժողովուրդը բաժակէն , միայն հացին հաղորդ կ'ընեն . Յոյնք ջրախառն կը կատարեն , այսինքն բաժակին մէջ ջուր կը հեղուն . Իսկ Բողոքականք , զրեթէ առ հասարակ , չեն դաւանիր հացն ու զինին իսկապէս մարմին և արիւն Տեսուն : Այս է մեր դաւանութիւնն այս մասին . տեսանելի հացն ու զինին են իսկապէս մարմին և արիւն Տեսուն , որոց անխտիր կը հաղորդուին բոլոր Հայ հաւատացեալք :

29. Ուրիշ անգամ խմած էր , այս վերջինը պիտի ըլլար , զի այլ ևս պիտի մեկնէր աշխարհէս , այլ սակայն հաւատացեալք յերկինս Քրիստոսի հետ պիտի ծտտին յընթրիս հարսանեաց Գառին (Յայտ . ԺԹ . 7-9) . պիտի ուտեն կենաց ծառէն ու պահուած մանանայէն (Յայտ . Բ . 7-17) : Ուրեմն յաւիտեանական ուրախութեան բաժակը պիտի խմենք Քրիստոսի հետ իւր արքայութեան մէջ :

31. Զի՞մենեաց լեռան վրայ Յիսուս կը գուշակէ Թէ իւր աշակերտք զինքը պիտի լքանեն , և Զաքարիայի (ԺԳ . 7) սոյն մարգարէութիւնը Թէ « Հովիւը պիտիվզարնեմ » , յիշելէ յետոյ դարձեալ կը հաւաստէ Թէ յարութիւն պիտի առնու , պիտի ջախջախէ մահը :

պէս մէկ ժամ չկրցի՞ք արթուն կենալ ինծի հետ : *⁴¹ Արթուն կեցէ՛ք եւ աղօթք ըրէ՛ք որ փորձութեան մէջ չ'ընկնիք . հոգիս յօժար է, բայց մարմինս տկար » : *⁴² Նորէն երկրորդ անգամ գնաց , Յիսուս աղօթքի կեցաւ ու կ'ըսէ . « Ով իմ Հայրս , թէ որ կարելի է , թող անցնի այս գաւաթն ինէ , ապա թէ ոչ խմեմ զայս . քու կամքդ թող ըլլայ » : ⁴³ Եւ նորէն գալով զանոնք գտաւ քունի մէջ , վասն զի անոնց աչերն էին ծանրացած : ⁴⁴ Չանոնք թողուց ու զընաց . երրորդ անգամ աղօթքի կեցաւ եւ նորէն նոյն խօսքը ըսաւ : ⁴⁵ Այն ատեն կուգայ աշակերտներուն ու կ'ըսէ անոնց . « Այսուհետեւ քնացէ՛ք եւ հանգչեցէ՛ք , որովհետեւ ժամն ահա հասած է , եւ Որդի մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մատնուի : *⁴⁶ Ելէ՛ք . ասկէ երթանք , որովհետեւ ահա հասաւ , որ զիս պիտի մատնէ » :

33. Յանձնապատան կը խիզախէ Պետրոս Թէ անխախտ պիտի մնայ իւր հաւատքին մէջ , այլ Յիսուսէն իսկ և իսկ կը լսէ Թէ նոյն իսկ նոյն զիշերուն մէջ պիտի ուրանայ իւր Վարդապետը . մեծարանուծիւնն երբէք ներելի չէ , ծանր մեղք է :

36. Յիսուս Գեթսեմանի կուգայ , որ էր պարտէզ , ուր կան ցարդ հինաւուրց ձիթենիներ :

37. Պետրոսն ու Յակոբոս և Յովհաննէսն որք երբեմն ականատես եղան Յիսուսի աստուածային փառաց (ԺԷ. 1-9) , հիմա ականատես ըլլալու կ'ընտրուին նորա անագին տագնապին ու վշտին :

38. Տրտմուծիւնն այնքան սաստիկ , մինչ զի , որպէս Ղուկաս կը գրէ , ջրտինքն արեան խոշոր կամիլներու պէս էր որ կը թափուէր (ԻԲ. 39-46) և անտարակոյս կը մեռնէր , — այսպիսի մահեր շատ կան պատահած — , եթէ երկնքէն հրեշտակ չհասներ յօցնուծիւն : Այլ էր այսքան սաստիկ տրտմուծիւն . — վասնզի բոլոր աշխարհիս մեղաց անագին բեռն էր որ կը ճմլէր իւր սիրտը . կը ճնշէր իւր մարմինը և յոյժ երկիւղիւ կը պաշարուէր , մտածելով Թէ անօրէններու հետ պիտի համարուէր և անօրէնի մահուամբ պիտի պատժուէր . նա զի այս ոճրին համար աստուածային արդարուծիւնը պիտի ստիպուէր կործանել Երուսաղէմը , քանզի տաճարը և ցիրուցան ու ողորմուկ կենաց դատապարտել իւր ազգը : Այս ամէնը յիշելով՝ կը խռովէր Յիսուս և ծայրագոյն տագնապի մատնուելով՝ զրեթէ մօտ էր մահուան և Թէ մանաւանդ կը յիշէր Թէ ո՛րքան անգթուծիւնք և ոճիրք պիտի գործուին սուտ Քրիստոնեայներու ձեռամբ եւ հալածուին բուն իսկ ուղղափառք եւ կողկողագին ու կտտամահ տանջանօք մեռնին , ուստի իւր այս բերք աշա-

*47 Եւ ան դեռ զայն կը խօսէր, ահա տասներկուքէն մէկը՝ Յուդայ եկաւ եւ անոր հետ քահանայապետներէն եւ ժողովրդեան ձերբերէն սուրբորով եւ բիրբորով շատ բազմութիւն : *48 Եւ ան որ զանի պիտի մասնէր, անոնց նշան տուաւ եւ կ'ըսէ. « Որու հետ ես պագտուիմ, ան է. զանի բռնեցէք » : 49 Եւ իսկոյն Յիսուսի մօտենալով կ'ըսէ. « Բարեւ, վարդապետ ». եւ զանի համբուրեց : 50 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. « Ընկեր, որո՞ւ համար դուն եկար ». Այն ատեն մօտենալով Յիսուսի ձեռք երկնցուցին եւ զանի բռնեցին : *51 Եւ ահա անոնցմէ մէկը որոնք Յիսուսի հետ էին, ձեռքը երկնցուց եւ իր սուրը հանեց եւ քահանայապետի ծառային զարկաւ եւ անոր ականջը կտրեց : *52 Յիսուս այն ատեն կ'ըսէ անոր. « Քու սուրդ իր տեղը դարձուր, վասընզի անոնք որոնք սուր կ'առնուն, սրով պիտի ընկնին :

Կերտաց կը պատուիրէ արժուն մնալ և հսկել, իբր մարդ կ'ըզձար որ իւր բարեկամք իւր քով գտնուին, կարեկցին իրեն. հիւ փորձութեանց մէջ չըզձար վայելել բարեկամներու կարեկցութիւնն ու օգնութիւնը, թէ և նորա ան կարող ըլլան ընել օգնութիւն :

39. Դուկաս կը գրէ իբր քարընկէց մը հեռանալով կը ծնրադրէ : Թէպէտ փափաքեցաւ որ նորա գան իւր քով, այլ առանջն ընտրեց աղօթեց : Մարդ առանձինն ալ աւելի համարձակ իւր սիրտը կը բանայ Աստուծոյ : Յիսուս կ'աղօթէ նախ ի ծունր և ապա, երեսի վրայ ի գետին ընկած. համառօտ էր իւր աղօթք, և իբր մարդ՝ մահու բաժակը ըմպելէ կը սոսկայ : Գեղեցիկ կը մեկնէ Ծործորեցի. « Կարժ էարկ զերկիւղ մահուն, որով համարձակեացի կլ անել զնա եւ փութացի թրանել զնա, քանզի վասն նորա խափանելոյ եղև այս ամենայն : Այլ սակայն որպէս զի Յիսուս ցոյց տայ թէ հնազանդ է Հօր մահու չտի և մահու խաչի, կը յաւելու. « Ոչ որպէս ես կսմիմ, այլ որպէս դու » : Ինչ գեղեցիկ աղօթք է այս ի ժամանակի փորձութեան. « Զի զմեզ խրատեսցէ, ի ժամանակի փորձութեան յորժամ աղօթեմք, ոչ ի կամաց մերոց լրումն, այլ զնորայն՝ որ առաւել զիտէ զօգուտն և ըստ այնմ տնօրինէ » (Ծործորեցի) :

40. Աշակերտք բնացած էին, ոչ թէ ժամանակին ուշ ըլլալէն, այլ եւ տրտմութենէ, զի տխրութիւնք երբեմն բուն կը բերեն : Առ Պետրոս Յիսուս կը խօսի, գրեթէ շատ թեթև յանդիմանութեամբ վասն զի նա որ Քրիստոսի տրտմութեան չէր կրցած լինել հաղորդ, Ինչպէս պիտի հաւատարիմ մնար Քձ վտանգին ատենը : Մէկ ժամը հոս կը նշանակէ կարճ ժամանակ :

41. Կը պատուիրէ նոցա հսկել եւ աղօթել : Այլ նորա ոչ կը հսկէին եւ

*53 Կը կարծես թէ չեմ կրնար իմ Հօրս աղաչել, եւ ինծի հասցնէ հիմայ հոս տասներկու գունդորէ աւելի հրեշտակներ: 54 Բայց ինչպէս պիտի կատարուին գրքերը, թէ որ այսպէս պէտք է ըլլալ:

55 Յիսուս այն ատեն ըսաւ ամբոխին «Իբր թէ աւագակի վրայ ելաք սուրերով եւ բիրերով զիս բռնելու. միշտ տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի եւ զիս չբռնեցիք»: 56 Բայց այս ամենն եղաւ որ կատարուին մարգարէներուն գիրքերը: Այն ատեն թուրք աշակերտներն ամենքը զանի թողուցին ու փախան:

*57 Իսկ անոնք Յիսուսը բռնելով բերին Կայիափա քահանայապետին, ուր զպիրներն ու ծիրերը ժողովուեր էին:

*58 Եւ Պետրոս անոր ետեւէն կ'երթար հեռուէն մինչեւ քահանայապետին սրահը, եւ ներս մտնելով սպասաւոր-

ոչ կ'աղօթէին: Աղօթքն է հարկաւոր, ոչ թէ միայն փորձութիւններէ զերծ մնալու համար, այլ եւ փորձութեանց մէջ իսկ, զի աղօթքն է՝ միխձարութիւն եւ ուրախութիւն ըստ հոգոյ (Յակ. Ա. 2): հոգին կը յօժարի, այլ մարմինը կը տկարանայ, երբ փորձութիւնք վերահաս են: Սակայն հոգին եւս կը տկարանայ, այսինքն մարդ հոգով եւ մարմնով կը կորսուի, եթէ իւր հոգին զօրացած չէ հաւատով ի Քրիստոս:

42. Յիսուս երկիցս եւ երիցս աղօթելէ եւ իւր աշակերտները քնացած գտնելէ յետոյ այլ եւս պէտք չտեսներ իւր աշակերտներուն ոչ արթնութեանն ու աղօթքին, վասն զի ինքն աղօթած ու զօրացած էր: Գիտէր թէ մօտ էր վտանգը, չփախաւ, այլ կամաւ յանձնեց զինքը վտանգին:

47. Յուդայ գիտէր թէ ուր էր Յիսուս, եկաւ իւր հետ ունենալով քահանայապետներէն եւ ծերերէն սպասաւորներ, տաճարի իշխաններէն շատեր (Ղուկ. ԻԲ. 52), այսինքն Ղեւտացի ոստիկաններ (Յովհ. Է. 32: Գործք. Դ. 4), Հռովմայեցի զինուորներու գունդ մը (Յովհ. ԺԸ. 3. 12), որք կը մնային տաճարի Անտոնիոս ուղտարակին մէջ, սուրերով եւ բիրերով, շահերով եւ լրագրներով (Յովհ. ԺԸ. 3), որպէս զի չսխալին մուծին մէջ:

48. Յուդայ նշան տուած էր, թէ զով համբուրէ, զնա բռնեն, որպէս զի մի գուցէ ձերբակալողք սխալելով Յիսուսի աշակերտներէն մին բռնեն եւ Յիսուս փախչելու դիւրութիւն ունենայ, այլ կը յանդիմանուի Յիսուսէն: Ձերբակալողք թէ եւ կը պատժուին (Յովհ. ԺԸ. 1-9), այլ սակայն Յիսուս կամաւ կը յանձնուի նոցա:

51. Այս մարդն էր Պետրոս ըստ Յովհաննու (ԺԸ. 40). նա կամբխու ընդդիմացած էր Յիսուսի չարչարանաց (ԺՁ. 22-23), այս անգամ կ'ընդդի-

ներուն հետ կը նստէր տեսնելու համար վախճանը: *59 Իսկ քահանայապետն ու ամբողջ ատեանը սուտ վկայութիւն կը փնտռէին Յիսուսի վրայօք որ զանի սպաննեն: *60 Եւ չէին գտնուիր, թէ եւ շատ սուտ վկայներ բերուած կային, յետոյ երկու սուտ վկայներ մօտենալով, 61 կ'ըսէին թէ «Աս կ'ըսէր, Աստուծոյ տաճարը կրնամ քակել եւ՝ երեք օրուան մէջ շինել»: 62. Եւ քահանայապետը ոտքի ելլելով կ'ըսէ անոր. «Պատասխան չտա՛ս, ինչ է ատոնց քու վրադ ըրած ամբաստանութիւնը»: *63 Եւ Յիսուս լուռ կը կենար. քահանայապետը պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոր. «Կենդանի Աստուծոյ վրայ զքեզ կ'երդուընցընեմ, որ ըսես մեզի թէ զո՞ւն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: *64 Յիսուս կ'ըսէ անոր. «Դուն ըսիր». Բայց կ'ըսեմ ձեզի, այսուհետեւ պիտի տեսնէք զօրութեան աջ կողմը Որդի մարդոյ նստած եւ երկնքի ամպերուն վրայէն եկած»: *65 Քահանայապետն այն ատեն իր հագուստները պատռեց եւ կ'ը-

մանայ բռնութեամբ: Մինչ միւս աշակերտք հրաման կը խնդրեն Յիսուսէն որ գարնեն ու գարնուին (Ղուկ. ԻԲ. 49), այլ Պետրոս յանձնապատասան՝ չբարկանալով հրամանի, եւ Մաղքոսի ականջը կը կտրէ, զոր կը բռնէ իսկոյն Յիսուս (Ղուկ. ԻԲ. 51):

52. Քրիստոս չհաճիր սուր զործածել ի պաշտպանութիւն եւ ի տարածումն հաւատոյ: Սուրբ զործածելու իշխանութիւնն Աստուած տուած է պետութեանց (Ղուկ. ԺԳ. 4), որոց զինուորք չարին ի սաստ եւ ի պատիժ կան ի ծառայութեան:

53. Երկնաւոր զօրաց զնոյն Յիսուսի հրամանով կրնային երկնքէն իջնել եւ պաշտպանել զինքը, այլ յայնժամ չէին կատարուեր մարգարէութիւնք (Յս. ԾԳԳ. Գն. Թ. 26. եւ այլն):

57. Յիսուս նախ կը տարուի առ Աննա (Յովհ. ԺԸ. 13-15): Սա քահանայապետութեան կոչուեցաւ յամին 7-8: Այլ որովհետեւ յայնժամ Հրեայք անկախ չէին, ուստի քահանայապետը յաճախ կը փոփոխուէին, որով Գայիափայ, Աննայի փեսայն յաջողեցաւ պաշտօնանկ ընել տալ իւր աներն ու ինքն յաջորդել: Սակայն կ'երեւի թէ Աննա մեծ յարգ ունէր իբր բուն քահանայապետն ազգին (Ղուկ. Գ. 2), եւ զուցէ էր նախագահ Սանտրիոնին: Առաջին հարցուփորձն Աննա ըրաւ, որոյ մէկ սպասուորէն Յիսուս սպտակեցաւ և Աննա առ Գայիափայ զրկեց Յիսուսը (Յովհ. ԺԸ. 19-24), որ Սանտրիոնը հաւաքած արձուն կ'սպասէր:

սէ. « Հայհոյեց. ալ մեզի ինչ պէտք են վկայներ. ահա հիմայ անոր հայհոյութիւնը լսեցիք. 66 Ի՞նչ ձեզի հաճոյ է: Անոնք պատասխան տուին ու կ'ըսեն. « Մահապարտ է »: *67 Այն ատեն անոր երեսը թքին եւ զանի կոպեցին եւ ուրիշներն ապտակեցին եւ կ'ըսին. 68 « Մարգարէացիք մեզի դու՛ ով Քրիստոս, ո՞վ է որ քեզի զարկաւ »:

69 Բով Պետրոս դուրսը գաւիթին մէջ կը նստէր, եւ աղախին մը անոր մօտեցաւ ու կ'ըսէ. « Եւ դուն Գալիլեացի Յիսուսի հետ էիր »: *70 Ան ամենուն առջեւ ուրացաւ ու կ'ըսէ թէ « Ի՞նչ որ դու կը խօսիս, չիմ գիտեր »: 71 Եւ երբ ան դռնէն դուրս ելաւ, ուրիշ կին մը զանի տեսաւ, եւ կ'ըսէ անոնց որոնք հոն կը կենային. « Եւ ասի Նազովրեացի Յիսուսի հետ էր »: 72 Եւ նորէն ուրացաւ երդումով թէ « Չեմ գիտեր այն մարդը »: 73 Եւ քիչ մը յետոյ հոն ե-

58. Յիսուսի աշակերտք փախան, միայն Քէ Պետրոս հեռուէն եւ Յովհաննէս զնացին մինչեւ ի գաւիթ քահանայապետին, ուր Պետրոս երիցս իւր Տէրն ուրացաւ, երբ նա կը հարցաքննուէր (Ղուկ: ԻԲ. 59-65), եւ ծաղրուելով զանսկոծեցաւ:

59. Սպաննուծեան խորհուրդն ի վաղուց ունէին սորս (Յովհ. Ե. 18: Է-20, 25: Ը. 37-40: ԺԱ. 50), եւ վկայներ կ'որոշէին (Ղուկ. ԺԱ. 53-54): Այժմ նոյնը կ'ընէին օրինաւոր պատրուակաւ իրենց վատ նպատակը ի գործ դնելու համար:

60. Չգտան իրարու համաձայն վկայներ (Մարկ. ԺԴ. 56) եւ Քէ զտան երկու վկայներ, այլ սուտ էին: « Տես Քէ հրչտի Թիւրեցին զուսցեալն ի Տեսունէ. քանզի նա ոչ սասց քակեցից, այլ քակեցէք » (Ծործորեցի): Հրեայք պիտի քակէին տաճարը եւ Յիսուս զայն պիտի վերաշինէր (Յովհ. Բ. 19): Յիսուս իւր մարմինը քայքայելով, ամբողջ մարդուծեան մարմինը պիտի վերաշինէր, զայն տաճար Աստուծոյ կազմելով:

63. Յիսուս կը լռէր, զի գիտէր Քէ պատասխանելն անօգուտ էր, ուստի քահանայապետն ստիպուեցաւ Յիսուսի ք'րնէն առնուլ վկայութիւն, երդում տալով Քէ է նա մեհիայն, Աստուծոյ որդին:

64. Եւ որպէսզի ամէն տարակոյս փարստուէր, եւ Յիսուս հաստատելու համար իրեններն իրենց հաւատքին մէջ, Քէ ինչ որ աւանդինն ըսած էր նոցա, կրնայ հրապարակաւ խոստովանիլ, պատասխանեց քահանայապետին, ոչ Քէ միայն այդ, այլ իւր մեհիայական փառքն իսկ խոստովանեցաւ ըսելով. « Պիտի տեսնէք զիս Աստուծոյ աջ կողմը նստած: Նա յայնժամ կապուած կաշկանդուած էր իբր անարգ մէկ մահապարտ, այլ յաղթա-

դողները մօտենալով կ'ըսեն Պետրոսին . « Յիրաւի եւ դու անոնցմէ ես, որովհետեւ եւ քու զրուցուածքդ զքեզ կը յայտնէ » : 74 Այն ատեն սկսաւ անիծել ու երդնուլ թէ « Չեմզիտեր այն մարդը ». եւ իսկոյն հաւը խօսեցաւ : 75 Եւ Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը որ ըսաւ թէ « Իեռ հաւը չխօսած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս » : Եւ դուրս ելլելով՝ սաստիկ լացաւ :

Նաևը զոր պիտի տանէր Յիսուս, ա խարհ համօրէն աչօք պիտի տեսնէր, նոյն իսկ եւ Հրէուծիւնը :

65. Հագուստ պատռելն էր Հրէից նշան սոյն և դժկամակութեան (Դ. Թագ. ԺԸ. 37: ԺԹ. 4), « Որպէս թէ ըստ օրինացն առնիցէ, բանգի այնպիսի բանք ասացեալ՝ հայհոյութիւն կարծէին եւ զհանգերձ պատառէին, որպէս Յեսու և Եզեկիաս և Եզրաս և այլք բազումք » (Մործօրեցի) : Սանետրիոնն ուրեմն այլ ևս հասաւ իւր նպատակին, ուստի դատապարտեց Յիսուսը մահուան :

67 Յիսուս իսկոյն կը զանտկոծուի և ւարակահար կը նախատուի, և որովհետև երեսը լսածով ծածկած էին (Ղուկ. ԻԲ. 65). ծագելով կը փորձէին հարցնելով Յիսուսի թէ, եթէ մարգարէ է, ո՞վ է իրեն զարնողը : Այլ նոյն Յիսուս որ Ստատանային յաղթեց (Ղուկ. Դ. 3 14) սքանչելիք չգործելով, այժմ և ոչ ի խաչին չհրաշագործեց ի պէտս անօրէններու հետաքրքրութեան :

70. Պետրոսի այս առաջին ուրացութենէն յետոյ, խօսեցաւ հաւը (Մարկ. ԺԴ. 68), որով կ'երևի թէ նա զգաստանալով անտի մեկնիլ կը փութայ. այլ նոր փորձութիւն, ուրիշէ մը կը հարցաքննուի և ուրացութեան մեղքին կը յաւելու երդումը, սո՛ւտ երդում, Կրկին կը խօսի հաւը (Մարկ. ԺԴ. 70-72) : Եւ զի մեղքը կ'ամօի մեր անզգուշութեան երեսէն, Պետրոս իւր ուրացութեան և ստերդմութեան մեղաց կը յաւելու անէծքը, երրորդ անգամ ուրանալով, և յայնժամ, մանաւանդ Յիսուսի իրեն նայելէն (Ղուկ. ԻԲ. 61), կ'զգայ թէ որպիսի ծանրագոյն մեղք գործած է, յանձնապատասխանութեամբ զիմելով վտանգին տեղը, առանց զգուշութեան և հաստատամտութեան, որով նա որ առաջին դաւանողն եղաւ Քրիստոսի աստուածութեան, այժմ առաջին ուրացողն եղաւ և պիտի կորսուէր Յուդայի նման, եթէ իւր Վարդապետին նայուածքն ի թուեղ չհաներ իւր սիրտը, և առատահոս արցունքով չբաւեր իւր այս մեղքը : Այսպէս մարդ ո և է փորձութեան մէջ գիտնալու է թէ Աստուած կը նայի իրեն եւ այս նայուածքը բաւ է զինքը փրկելու :

Պ Լ Ո Ւ Պ Ի Է.

^{*1} Երբ առտու եղաւ, բոլոր քահանայապետներն ու ժողովրդեան ծերերը Յիսուսի համար խորհուրդ ըրին որ զանի սպանենն: ^{*2} Կապեցին զանի եւ առին գացին եւ տուին Պոնտացի Պիղատոս դատաւորին ձեռքը:

^{*3} Այն ատեն Յուդայ՝ որ զանի մատնեց, տեանելով թէ դատապարտուեցաւ, զղջացաւ. եւ արծաթը քահանայապետներուն եւ ժողովրդեան ծերերուն դարձուց ու կ'ըսէ. ^{*4} «Մեղայ. որ որովհետեւ արդար արին մատնեցին». եւ անոնք կ'ըսեն. «Մեր հոգը չէ. զուն գիտես»: ^{*5} Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց ու զուրս ելաւ. եւ զնաց խղզուեցաւ: ^{*6} Իսկ քահանայապետներն արծաթը առնելով կ'ըսեն. «Պէտք չէ զայդ ընդունիլ գանձանակին մէջ, վասնզի ար-

1. Գիշերն արդէն որոշած էին նորս, որ Յիսուսը սպանեն, և որովհետեւ յայնժամ չունէին իշխանութիւն մահուան դատապարտելու ու է մէկ մարդ, ուստի առաւօտուն արդէն կապուած Յիսուսը, կրկին կապելով,

2. Մատնեցին Պոնտացի Պիղատոսի, որ էր Հռովմէական պետութեան կողմէն կարգուած կուսակալ յամին 26 և իւր պաշտօնը վարեց զրեթէ տասն տարի: Սա ամբաստանուելով արքայութեան ի վիճակնս Գաղատացոց, ուր անձնասպան եղաւ: Կը նստէր ի Կեսարիա, և տօնի ժամանակ միայն կուգար յԵրուսաղէմ հսկելու համար, ուր ունէր պալատ (Յովհ. ԺԸ. 28):

3. Յուդայ զգաց Թէ իրպիսի անուելի ոճիր է գործած: Նա զիտէր Թէ Յիսուս, քանի որ յաճախ լսած էր, պիտի չարչարուի և մատնուի մահուան, այժմ նոյնը կը կատարուէր, զիտէր Յիսուսի անձին աստուածազօր բնութիւնն, ուստի անհնարին միանգամայն կը կարծէր նորս դատապարտութիւնը, մինչ այժմ հնաւոր եղած էր. արդ՝ քանի որ Յիսուսի գուշակութիւնը ճշդեցան, ուրեմն միւս գուշակութեան կատարումն ալ մտալուտ էր, այսինքն Յիսուս պիտի յաղթէր մահուան, յարութիւն առնելով, և պիտի յաղթահարէր իւր Թշնամիները, հաստատելով իւր մեծիայական փառաւորութեանը: Երեսուն արծաթն այլ ևս ծանր բեռ մըն էր: Յանկալի արծաթն այժմ էր գարշելի արծաթ: Այսպէս ամէն մարդ չար գործելէ յետոյ կ'զգայ սպառնալ և կը խայթուի խղճէն, եթէ գոնէ գոյգրն ինչ աշակերտած է ճշմարտութեան, և գէթ ընդ աղօտ իմն եղանարած է Աստուծոյ փառաց լոյսը:

եան գին է) : *7 Խորհուրդ ընելով անով բրտի ագարակը ծախու առին օտարականներու գերեզմաննոց ըլլալու համար : 8 Անոր համար այն ագարակը մինչեւ այսօր Արեան ագարակը ըսուեցաւ : *9 Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէէն ըսուածը . « Եւ ծախուողին գինն եղած երեսուն արծաթը առին, որ Իսրայելի զաւակներէն առնէ սակարկեցին , 10 և զայն տուին բրտի ագարակին , ինչպէս որ Տէրն ինձի հրամայեց » :

*11 Եւ Յիսուս դատաւորին առջեւ կեցաւ . դատաւորն անոր հարցուց ու կ'ըսէ . « Դ՞ո՞ւ ես Հրեայներուն թագաւորը » : Եւ Յիսուս կ'ըսէ . « Դ՞ու կ'ըսես ») : 12 Եւ քահանայապետներէն ու ծերերէն անոր ամբաստանուած ատենը , բան մը պատասխան չտուաւ : 13 Պիղատոս այն ատեն

4. Յուդայ կը խոստովանի իւր ոճիրը, այլ բարձ. փոխանակ Աստուծոյ խոստովանելու եւ Աստուծոյ դիմելու, մարդոց կը դիմէ և կը խոստովանի :

5. Յուդայ արծաթը տոճարէն ներս կը նետէ, և երբ իւր դաւակինցներէն բրտուծեամբ կը վճատուի, զայրուծին կը յաջորդէ յուսահատուծիւն եւ խեղդամահ կը կորսուի: Մատնուծիւնն էր մեղք, զոր կարելի էր բուսել, որպէս Պետրոս քուսեց իւր ուրացուծիւնը, այլ անձնասպանուծիւնն էր աններելի մեղք:

6. Կը վախնային պղծել զանձանակը (Բ. Օր. ԻԳ. 18), մինչդեռ չէին վախցած պղծել իրենց հոգին, արծաթով անմեղի մը արիւնը թափել տալով:

7. Այս արտն է այժմ սեփականուծիւն Հայոց, էր երբեմն գերեզմաննոց:

9. Ոչ թէ Երեմիա, այլ Զաքարիա գրած է (ԺԱ. 12-13) : Գուցէ այս սխալն եղած է հին ընդօրինակողէ մը, Զրիոն համառօտապրուծիւնը որ կը նշանակէ Զաքարիա, Երիոն ընթեռնելով, որ կը նշանակէ Երեմիա:

11. Որովհետև Հրեայք, որպէսզի չպղծուին, չէին ուզէր մտնել Պիղատոսի պալատը, այլ առանց քննուծեան Պիղատոսէն կը պահանջէին Յիսուսի դատապարտուծիւնը, ուստի Պիղատոս առանձին կը հարցարնէ և Յիսուսէն լսելէ յետոյ թէ նորա թագաւորուծիւնն այս աշխարհէն չէ, Պիղատոս Յիսուսը անմեղ կը վճռէ (Յովհ.ԺԸ. 36-39) : Հրեայք կրկին կը պնդէին թէ Յիսուս խռովարար է (Ղուկ. ԻԳ. 2) եւ թէ զանձն իւր կ'անուանէ թագաւոր Հրէից. Պիղատոս վերստին կը հարցաւորձէ, եւ մինչ Յիսուս պնդագոյնս կ'ամբաստանուի Հրեայներէն, Յիսուս կը լռէր ըստ Եսայեայ (ԾԳ. 7) . այլ Պիղատոս ուզելով իւր խիղճը հանդարտեցնել և միանգամայն ժողովուրդը շահիլ, լսելով թէ Յիսուս Գալիլեացի է (Ղուկ. ԻԳ. 5-11), Յի-

կ'ըսէ անոր . «Չե՞ս լսեր, որչափ ատոնք քեզի դէմ կը վրկային» : 14 Եւ անոր պատասխանն շտուաւ եւ ոչ մէկ խօսք, այնպէս որ շատ զարմացաւ դատաւորը : 15 Բայց որովհետեւ դատաւորը սովորութիւն ունէր, որ տօնի ատեն արձկէ կալանաւոր մը զոր ժողովուրդը կ'ուզէ : 16 Այն ատեն ունէին նշանաւոր կապուած մը, որուն անունն էր Յեսու Բարաբբայ : 17 Երբ ժողովեցան, կ'ըսէ անոնց Պիղատոս . «Այս երկուքներէն ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձրկեմ . Բարաբբայ Յեսու՞ն թէ Քրիստոս ըսուած Յիսուսը» : 18 Վասնզի գիտէր թէ զանի մատնեցին նախանձութեան համար :

*19 Եւ երբ կը նստէր ատեանին մէջ . իւր կիներն անոր մարդ զրկեց ու կ'ըսէ . «Ի՞նչն այն արդարին հետ բան մը

սուր Գալիլեայի չորրորդագետ Հերովդէսի զրկեց, որ յայնժամ կը գտնուէր յԵրուսաղէմ : Հերովդէս արհամարհեց Յիսուսը եւ վերադարձուց Պիղատոսի, որ յայնժամ առաջարկեց ժողովրդեան, որ կամ Յիսուսի ազատուիլը պահանջեն կամ Բարաբբայի, որ էր ստուգիւ խռովարար եւ գործած էր աւազակութիւն եւ սպաննութիւն խռովութեան մը ժամանակ (Մարկ. ԺԾ. 7 : Ղուկ. ԻԳ. 19 : Յովհ. ԺԸ. 40) :

19. Հին տնտեսութեան ժամանակ Աստուած կը յայտնէր իւր կամը շատ անգամ երազներով . ևս և հեծանոսաց (Իննդ. Ի. 3 7 : ԹԱ. 1-8 : Դատ. Է. 13 : Դան. Բ. 7. 10-18), ինչպէս և մոգերուն (Բ. 12) : Հռովմայեցիք կը հաւատային երազներու : Աստուած այսպէս Պիղատոսի կ'ողորմի և նորա կիներ գործիք կ'ընէ, այլ նա անհոգ կը մնայ :

20. Հրեայք կը խնդրեն որ Բարաբբան արձկուի, եւ Յիսուսը հանուի ի խաչ . ո՞վ մոլեցին կատաղութիւն, աւազակն ու մարդասպանը փոխանակել բարերար ու արդար մարդոյ . այս ո՞րպիսի գործ անօրէնութեան :

23. Ի զուր Պիղատոս նոցա խղճին կը դիմէ ըսելով . «Ի՞նչ ըրաւ Յիսուս» : Ի զուր նոցա կարեկցութիւնը զրգռելու համար կը հրամայէ որ Յիսուս ի տես գայ ժողովրդեան գանակոծ եւ փշեպսակ եւ ի զուր կ'ըսէ . «Ահա այդ ցձեզ» : Ի զուր նոցա ազգասիրութիւնը զրգռելու համար կ'աղաղակէ . «Ահա ձեր Թագաւորը » եւ « Ես ձեր Թագաւորը ի խա՞չ հանեմ », այլ նոքա ալ աւելի կը զրգռուին, մինչ զի Պիղատոս իւր վրայէն նետելու համար Յիսուսի մահուան պատասխանատուութիւնը (Յովհ. ԺԹ. 4-17),

24. Կը լուայ ձեռները գոչելով . «Անպա՛րտ եմ այդ արդարին արիւնէն» : Պիղատոս հրէական այս սովորութիւնը գործածեց իբր ի նշան իւր անպարտութեան (Բ. Օր. ԻԱ. 6-9) : Հեծանոտք ևս զուցէ ունէին այս սովորութիւն :

չունենաս, վասնզի այսօր երազիս մէջ ինէ շատ բաներ անցան:»

*20 Իսկ քահանայապետներն ու ծերերը համոզեցին ժողովուրդները, որ Բարաբբան ուզին եւ Յիսուսը կորսնցընեն: 21 Պատասխան տուաւ դատաւորը եւ կ'ըսէ անոնց. «Ո՞րը կ'ուզէք, որ ձեզի արձկեմ այս երկուքներէն»: Եւ անոնք կ'ըսեն. «Բարաբբան»: 22 Պիղատոս կ'ըսէ անոնց. «Բայց ինչ ընեմ Քրիստոս ըսուած Յիսուսը»: *23 Կ'ըսեն ամենքը. «Թող խաչուի»: Եւ ան կ'ըսէ ինչ չար բան ըրաւ: Եւ անոնք ալ աւելի կը պռռային ու կ'ըսէին. «Թող խաչուի»: *24 Եւ Պիղատոս տեսնելով թէ օգուտ մը չ'ընէր, այլ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առնլով ժողովրդեան առջեւ իր ձեռները լուաց ու կ'ըսէ. «Ես այդ ար-

Պիղատոս էր այսպէս կը վարուէր: Թուի, զի վատասիրտ և թուլամորթ էր և կաշառատէր, վասն այսօրիկ և ոչ զնա ազատ արար Քրիստոս ի պատժոց» (Ծործորեցի):

25. Բառ առ բառ կատարուեցաւ այս անէժքը: Իբր քառասուն տարիէ յետոյ այդ մարդոց շատը եւ նոցա որդիներէն բիւրաւորներ սովալլուկ եւ կտտամահ սատակեցան, Երուսաղեմի աւերն ու կոտորած եւ մինչև ցայսօր Հրէից ցտնուցիր վիճակն ու կրած տառապանք տարակո՞յս կը թողուն այդ անէժքին կտտարման նկատմամբ: Նոյն իսկ ղիսաւորներէն Յուդայ խեղատման կորսուեցաւ. Կայիափայէ յաջորդ տարին քահանայապետութիւնը ստնուելով յարքորս անձնասպան եղաւ. Հերովդէս մեռաւ տարագիր. Պիղատոս դատապարտեցաւ արքորի եւ մեռաւ գարշելի անձնասպանութեամբ: Աննայի տունը փլատակ եղաւ կատաղի ամբոխին ձեռամբ և որդին փողոցէ փողոց քաշկռտուելով բրածեծ սպաննուեցաւ:

26. Յիսուս կը ծեծուի, սովորութիւն էր նախ բուն զխաչելութիւնը ձաղկել յանցապարտը: Հրեայք ըստ օրինաց չէին կրնար տալ գաւազանի հարուած քառասունէ աւելի (Բ. Օր. ԻԵ, 3), այլ Հռովմայեցիք չունէին որոշ թիւ: Հարուածը կը տրուէր գաւազանով, և երբեմն երկամեայ և կամ կապարեայ սուր ծայրեր ունեցող փոկեայ խարազանով, մինչ զի դատապարտեալն առնլով հետզհետէ խոր վէրքեր, առ սաւտիկ ցաւոցն՝ շատ անգամ կը մեռնէր: Ըստ Յովհաննոս (ԺԹ. 1-15) Թէև Պիղատոս ուզեց Յիսուսը փրկել, այլ ուր ուրեմն հրամայեց որ խաչուի նա:

27. Յիսուս կը ծաղրուի զինուորներէն, որք ամբողջ գունդը, իբր 600 մարդ, կը կոչեն: Հռովմայեցի զինուորներ էին, որք անշուշտ խիստ զրգառուեցան, լսելով Թէ Յիսուս է Թագաւոր Հրէից:

դարին արիւնէն անպարտ եմ. դուք գիտէք» . *25 Բոլոր ժողովուրդը պատասխան տուաւ ու կ'ըսէ . «Ասոր արիւնը մեր վրայ եւ մեր զաւակներուն վրայ լնայ ըստ» . 26 Այն ատեն անոնց արձրկեց Բարաբբան , եւ Յիսուսը ծեծելով անոնց ձեռքը տուաւ , որ խաչուի :

*27 Դատաւորին զինուորներն այն ատեն առին Յիսուսը ապարանքին մէջ , եւ անոր վրայ ժողովեցին բոլոր գունդը .

*28 Զանի հանուեցուցին եւ կարմիր վերարկու ձգեցին անոր վրայ : 29 Եւ փուշէ պսակ հիւսելով՝ անոր գլուխը դրին եւ եղէգ մը անոր աջ ձեռքը . անոր առջեւ ծնրագրելով կը ծաղրէին ու կ'ըսէին . «Բարեւ , ով Հրեայներու թագաւոր» : 30 Եւ անոր թքնելով՝ այն եղէգը կ'առնէին եւ անոր գլուխը կը ծեծէին : 31 Եւ երբ զանի ձաղկեցին ,

28. Կարմիր վերարկուն նշանակ էր Թագաւորութեան . փուշէ պսակ դրին Յիսուսի գլուխը , և եղէգ տուին ձեռքը իբր արքունական գաւազան , ծաղրելով , Կքնելով եւ ծեծելով , ինչ որ նոյն իսկ Հրեայք ըրած էին արդէն (ԻՁ. 67) : Եղէգով երբեմն Յիսուսի գլուխը կը ծեծէին , որպէսզի փուշերը աւելի խոր մտնեն :

32. Որովհետեւ Յիսուս ուժաւորու եղած էր տքնուծենէն որ ի Գեթսեմանի , երկար ու տաղտկալի հարցուփորձներէ որ ի ձեռն Աննայի , Կայիափայի և Պիղատոսի , և մանաւանդ անգում զանակոծուծիւններէն որ ի բանտի , և անձամբ չէր կրնար տանիլ խաչն ի Գողգոթա , ուստի հարկ եղաւ Կիւրենացի Սիմոնը պահակ բռնել և խաչը նմա բառնալ տալ : Կիւրենա էր քաղաք Լիբիայ յիւփրիկէ , ուր կային գաղթական Հրեայներ : Մարկոս զաս կը կոչէ հայր Աղէքսանդրի և Ռուփայ , իբր ծանօթ անձեր (Մարկ. ԺԵ. 21) :

33. Գողգոթա երբայեցերէն բառ է և կը նշանակէ գանգ : Աւանդուծիւն կայ , թէ Արամայ գանգը հոս բերուած ու Թաղուած ըլլալուն համար Գողգոթա կոչուած է :

34. Մովորուծիւն էր տալ այսպիսի ըմպելի , որպէսզի Թմրէին մահապարտք և անզգայ մնային ցաւոց , այլ Տէր Յիսուս որ կամաւ կը չարչարուէր , երբ համն առաւ , չիմեց : Բայց յետոյ երբ լոկ քացախ տուին , խմեց (համար 48 : Յովհ. ԺԹ. 28-30) :

35. Խաչը կը շինուէին սա երեք կերպերով \dagger T X : Յիսուս տառչին ձևով խաչուեցաւ , վասնզի իւր յանցանքը գիտուն վերեւ գրուած դրուեցաւ (համար 37) : Զեռք կը գամուէին և ոտք կը գամուէին կամ կը կապուէին Յիսուսի ոտները գամուեցան ձեռներուն պէս (Ղուկ. ԻԴ. 39-40) : Խաչեալը նախ կը գամուէր խաչափայտին և յետոյ խաչը կը կանգնուէր , որով կը

անորմէ հանեցին վերարկուն , եւ անոր հագուստները անոր հագցուցին եւ զանի տարին խաչը հանելու :

*32 Եւ դուրս ելլելով Սիրոն անունով Կիւրենացի մարդ մը գտան , զանի պահակ բռնեցին որ անոր խաչը վերցնէ :
 *33 Գալով Գողգոթա ըսուած տեղը որ գլուխ կտրելու տեղ էր , *34 տուին անոր լեղիով խառնած քացախ . եւ երբ համը առաւ , չէր ուզեր խմել : *35 Եւ զանի խաչը հանելով անոր հագուստները վիճակով բաժնեցին , որ կատարուի այն խօսքը՝ որ ըսուեցաւ մարգարէէն . « Իմ հագուստներս իրենց մէջ բաժնեցին եւ իմ պատմուճանիս վրայ վիճակ կը ձգէին » : *36 Եւ նստելով զանի կը պահէին : » *37 Եւ անոր գլխին վրայ զրին անոր յանցանքը գրուած թէ « Աս է Հրեայներուն Յիսուս թագաւորը » : *38 Այն ատեն անոր

ցնցէր խաչելոյն մարմինը անհնարին տառապանօր : Մինչ զինուորք Յիսուսը կը գամէին , Յիսուս արտասանեց սա վսեմ եւ լի գթութեամբ աղօթքը . « Հայր , թող զոցա , զի ոչ զիտեն , զինչ գործեն » (Ղուկ. ԻԳ. 34) : Չկայ պատիժ մը այնքան տհաճի , որքան խաչի պատիժը , մինչ զի մարդիկ շատ անգամ կաշառով կը գնէին ուրիշ պատժով սպաննուելու արտօնութիւնը : Նոյն իսկ շատ անգամ խաչահաններն իսկ ձանձրանալով , ԵՅէ մահը չիտուծար , տիպաւ կը խոցէին խաչեալը եւ թակով կը ջախջախէին : Մահապարտք մերկ կը խաչուէին և նոցա հագուստը կը բաժնուէր զինուորաց մէջ : Քրիստոսի լսմեքը բաժնեցին , եւ պատմուճանին համար վիճակ ձգեցին , ըստ մարգարէութեան (Սաղմ. ԻԲ. 18) :

36. Զինուորք կ'սպասէին , որպէսզի խաչուողին բարեկամք խաչէն վար չառնուն :

37. Երեք լեզուով Պիլատոս զրեց Յիսուսի մահավճիռը (Յովն ԺԹ. 19) :

38. Ի մէջ երկու աւազակներու Յիսուս խաչուեցաւ , որով կատարուեցաւ Եսայեայ մարգարէութիւնը թէ « Ընդ անօրէնս համարեցաւ » (ԻԳ. 12) :

39. Գլուխ շարժելն էր նշան տակուածեան եւ ծաղու (Յոր. ԺԶ. 4) եւ կը կատարուէր Սաղմոսին խօսքը (ԻԲ. 7) :

40. Զէր ըսած տաճարը կը քակեմ . ուրեմն կը ստէին . անհնարին կը թուէր նոցա թէ է նա Աստուծոյ որդի . քանի որ Աստուծոյ երեսէն լքուած կար յայնժամ : Թաժամուծին սոյն կարծիրը կրկնեցին բահանայապետք զըպիրներուն եւ ծերերուն հետ : ԵՅէ Յիսուս յայնժամ խաչէն իսկ իջնելու հրաշքը գործէր , պիտի չհաւատային , վասնզի այդ հրաշքէն մեծագոյնը — մեռելներու յարութիւն տալը — տեսած էին եւ չէին հաւատացած :

44. Խաչակից երկու աւազակներն ալ ի սկզբան նախատեցին Յիսուսը ,

հետ խաչ համեցին երկու աւագակներ, մէկը անոր աջ կողմէն եւ մէկը ձախ կողմէն :

*39 Եւ որոնք կ'անցնէին, անոր կը հայհոյէին, իրենց գլուխները կը շարժէին եւ կ'ըսէին. *40 «Վահ, որ տաճարը կը քաղէիր եւ երեք օրուան մէջ զայն կը շինէիր, ազատէ գքեզ. թէ որ Աստուծոյ Որդին ես այդ խաչէն իջիր:» 41 Նոյնպէս եւ քահանայապետները դպիրներով եւ ծերերով մէկտեղ կը ծաղրէին ու կ'ըսէին. 42 «Ուրիշները ազատեց, իր անձը չկրնար ազատել. թէ որ Իսրայելի թագաւորն է, թող իջնէ հիմայ այդ խաչէն եւ ատոր հաւատանք:» 43 Թէ որ Աստուծոյ յուսացաւ, թող հիմայ ազատէ զատի, թէ որ կ'ուզէ զատի, վասն զի ըսաւ թէ Աստուծոյ Որդին եմ:» *44 Նոյնպէս այն աւագակներն՝ որ

որոց մին զգրցաւ յետոյ և հաւատաց (Ղուկ. ԻԳ. 36-43):

45. Ժամը երեքին խաչուեցաւ Յիսուս ըստ Մարկոսի (ԹԾ. 25), և ժամը վեցին խաւարեցաւ արեւ. որովհետեւ լուսնի լրման ժամանակն էր, հնար չէր բնական խաւարում լինել արեւու, գերբնական էր այս, որոյ եւ յաջորդեց ժամ (համար 51): Այսպէս Աստուած կը յայտնէր Թէ էր նա իւր Որդին եւ Յոյ կուտար որ տիեզերք սոյս եւ կարեկցի իւր չարչարուած Աստուծոյն: Հեթանոս մատենագիրներէն կան յիշատակող արեւու այս անբնական խաւարումը եւ նոյն իսկ Դիոնիսիոս Արիստոպոսի, որ հեթանոս էր յայնժամ, երբ տեսաւ խաւարն յեզիպոոս զոչեց. «Կամ Աստուած մը կը չարչարուի եւ կամ աշխարհս կը կործանի»:

46. Այս խաւարման ատեն քահանայապետը և ժողովուրդը եւ նոյն իսկ զինուորը անշուշտ ստրաստիանար լռեցին և Յիսուս ևս լռութեամբ, տարաւ խաչաչարչար անռելի տազնապներու, միջեւ որ ժամը իննին, բարձրաձայն գոչեց Աստուծոյն լռեցումը, որ այն ժամանակի Հրէից լեզուն էր. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր Թողեր զիս:» Յանիբալի տառապուած մարդուն աղաղակն է այս. աղաղակ, որ կը դղրդէ երկիրը, որովաստուածային արդարութիւնն երկնքէն յերկիր շանժանար պատուհասել կը փութայ չարը՝ ի դարման չարիքին. աղաղակ, որ կը հաստատէ Թէ զեւ եզժուած չէ Աստուծոյ պատկերը մարդկային սրտին մէջ, զի կը հաւատայ Թէ իւր անձին տէրը կայ եւ նա միայն իրաւունք ունի իւր կեանքը իրձէն առնուլ եւ որմէ զատ ոչ որ, եւ ոչ ինքն իսկ՝ մարդը: Օրհնասական յետին տազնապներու մէջ այս աղաղակն է նշան վշտահեծ սրտերու խորին հաւատքին, որք զիտեն Թէ երբեք չեն լքանիր Աստուծմէ :

47. Զինուորը Ելոին բառը կարծեցին Եղիայ, վասնզի չէին գիտեր այդ

իր հետը խաչուած էին, կը նախատէին զանի :

*45 Եւ օրուան վեցերորդ ժամէն մինչեւ իններորդ ժամը խաւար եղաւ բոլոր աշխարհի վրայ : 46 Եւ ժամը իննին Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու կրտէ . « Էլի , էլի , լամա սաբաքթանի , այսինքն Աստուած իմ , Աստուած իմ , ի՞նչու զիս թողուցիր » : *47 Անոնցմէ որոնք հոն կային երբ լսեցին , կ'ըսէին . « Ատի Եղիան կը կանչէ . » 48 Եւ անոնցմէ մէկն իսկոյն քացախով լեցուն սպունգ մը առաւ եւ եղէգի մը անցընելով՝ անոր տուտ որ խմէ : 49 Եւ շատեր կ'ըսէին . « Թող տուր . տեսնենք թէ Եղիան կուզայ զատի ազատելու » : *50 Եւ Յիսուս նորէն մեծ ձայնով աղաղակեց եւ հոգին աւանդեց :

*51 Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն ի վար երկու-

լեզուն, այլ լսած էին գուցէ Հրեայներէն , թէ Եղիս երկնքէն կը հասնի օգնութեան Աստուծոյ սրբելիներսւն, երբ նոքա են տեսել տաճարայնորու մէջ :

48. Ըստ Յովհաննու քացախը տրուեցաւ երբ Յիսուս գրեց . « Ծարաւի եմ » (ԺԹ. 28-29) :

50. Յիսուս արտասանելէ յետոյ թէ Ամենայն ինչ կրտս ընդէ » (Յովհ. ԺԹ. 30), աղաղակեց . « Հայր , ի ձեռս քո աւանդեմ գնայ իմ » (Ղուկ. ԻԳ. 46) :

51. Տաճարին վարագոյրը պատուեցաւ, որ էր ներքին վարագոյրն որ կը բաժնէր սրբութեանց սրբութիւնը սրբութենէն (Ելք ԻԶ. 33 Եւ Թ. 2-3) : Երկիր կը շարժի, վէմեր կը ճղբուին, ցարդ իսկ կան այլ ինչ, ուստի ապառաժներէն ի Գողգոթա : Գերեզմաններ կը բացուին և շատ արեւորուն մարմիններ յարուժին թէ և կ'առնուն, այլ Յիսուսի յարուժենէ : Ետոյ կ'երեւին շատերու : Այլ սորա յետոյ ինչ եղան . — անշուշտ Յիսուսի իստ վերացան յերկինս :

54. Հեծանոս հարիւրապետն ու ընկերներն երբ այս արեւելիքները տեսան, հուստացին, մինչդեռ քահանայապետը և Փարիսէյցիք ոչ այս ըսքանչելիքներէն եւ ոչ Յիսուսի յարուժենէն պատկառելով՝ հուստացին :

55. Այս կիներն էին Յիսուսի հաւատացող եւ հետեւող (Ղուկ. Ը. 2-3), որոց երեքն աստ կը յիշուին . Մարիամ Մագդաղենացի, որ մեծօմն զն հանուած էր (Մարկ. ԺԶ. 9 : Ղուկ. Ը. 2) : Մարիամ՝ մայր Յիսուսի և Յովսեայ, ըստ Յովհաննու կին Կղէովպայ (ԺԹ. 25) , որ տար Մատթէոսէ կոչուած է Ալիէոս (Ժ. 3) : Սողոմէ էր մայր որդւոց Զերեկեայ (Մարկ. ԺԾ. 40), եւ բոյր կը կարծուի Յիսուսի մօր (Յովհ. ԺԹ. 25) : Էր բուն իսկ տի-

քի պատուուեցաւ . և երկիրը շարժեցաւ եւ քարերը ճաթըստեցան : 52 Եւ գերեզմանները բացուեցան եւ շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին , 53 եւ գերեզմաններէ ելլելով , անոր յարութենէն յետոյ սուրբ քաղաքը մտան եւ շատերուն երեւցան : *54 Իսկ հարիւրապետն եւ որոնք անոր հետ Յիսուսը կը պահէին , երբ տեսան ժածը ու եղածները , շատ վախցան ու կ'ըսեն . « Յիրաւի աս էր Աստուծոյ Որդի » :

*55 Հոն շատ կնիկներ կային , հեռուն կը կենային ու կը նայէին , որոնք Գալիլեայէն Յիսուսի ետեւէն եկան անոր ծառայելու համար , 56 որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենային եւ Յակովթայ և Յովսեայ մայրը՝ Մարիամը , եւ Զեբեթեայ որդիներուն մայրը :

րամայրն Մարիամ անդ (Յովհ. ԺԹ. 27) . այլ կ'երևի Թէ այդ դստնակոկիծ տեսարանէն հեռացաւ ըստ Թախանձանոց Յովհաննէսի : Այսպէս մինչ Առաքեալք եւ Յիսուսի միւս աշակերտք հեռացան ու փախան , այս արիւսփրտ կիներն համարձակեցան նախ խաչին մօտ զանուիլ (Յովհ. ԺԹ. 25) , և յետոյ հեռուէն , եւ մասնակցեցան Քրիստոսի տաղանայներուն , և Թաղման ևս ներկայ գտնուելէ յետոյ՝ նորա եղան առաջին այցելու Քրիստոսի գերեզմանին , որով արժանացան առաջին լինել ի տես փառաց յարուժեան ամէնօրհնեալ որդւոյն Աստուծոյ :

57. Յիսուսի կողը խոցուելէ յետոյ (Յովհ. ԺԹ. 31) , Յովսէփ Արեմա-Թացի կը խնդրէ Պիղատոսէն նորա մարմինը : Արեմամիա էր բաղար յեփրայիմ , ուր ծնաւ Սամուէլ . իսկ Յովսէփ էր անդամ Սանեաթրիոնին , այր պարկեշտ եւ նախարար եւ երբեք նոցա հետ չէր միաբանած (Մարկ. ԺԵ. 43 ; Ղուկ. ԻԳ. 51) : Թէև ի ծածուկ աշակերտած էր , այլ այժմ կը համարձակի երթալ առ Պիղատոս : Սա հարուստ էր միանգամայն , որով կտատարուեցաւ Եսայեայ մարգարէութիւնը Թէ « Երբ մեռաւ հարուստին հետեղաւ » , (ԵՊ. 9) :

58. Պիղատոս հարիւրապետէն ստուգելէ յետոյ Յիսուսի մահը , (Մարկ. ԺԵ. 44-45) , հրամայեց որ տրուի մարմինը :

59. Յովսէփ մարուր կտաւ գնելով (Մարկ. ԺԵ. 39) , պատեց Յիսուսի մարմինը , Նիկողեմասի հետ որ բերած էր իրր հարիւր լիար զմուսոյ և հալուէի խառնուրդ (Յովհ. ԺԹ. 39) :

60. Նոր էր գերեզմանը . և Յովսէփ իրեն համար էր պատրաստած , Ղուկաս կը յաւելու . « Հոն բնաւ մէկը դրուած չէր » (ԻԳ. 53) , որպէս զի չկարծուի Թէ ուրիշ մէկ մեռեալ յարեաւ , կամ Թէ Յիսուս յարեաւ զըպ-

*57 Եւ երբ իրիկուան եղաւ, Արիմաթեայէն հարուստ մարդ մը եկաւ, որուն անունն էր Յովսէփ, որ եւ Յիսուսի աշակերտեցաւ: *58 Աս Պիղատոսի մօտնալով Յիսուսի մարմինը ուզեց. այն ատեն Պիղատոս հրամայեց որ տրուի մարմինը: *59 Եւ Յովսէփ մարմինը առնլով մաքուր կտաններով պատեց: *60 Եւ դրաւ նոր գերեզմանի մէջ զոր քարի մէջ փորած էր. եւ գերեզմանին դուռը մեծ քար մը զլտորցնելով գնաց: *61 Հոն էր Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը, կը նստէին գերեզմանին դէմ:

*62 Եւ միւս օրը որ ուրբաթէն յետոյ էր, քահանայապետներն ու փարիսեցիները Պիղատոսին քով հաւաքուեցան *63 ու կ'ըսեն. «Տէր, յիշեցինք որ այն խաբեբան երբ

չելով սրբոյ մը ոսկորներուն, ինչպէս յարեաւ Եփսէի ոսկորներուն դպչող մեռեալը (Դ. Թագ. ԺԳ. 21), Այս գերեզման չէր գեանափոր, ոչ բարայրի կամ խոռոչի մէջ, այլ բարէ փորած: Թաւալուած քարը կափարիչ եղաւ գերեզմանին:

61. Յիսուսի այս թաղման ներկայ էին այս երկու կիներն, որք փուծացան ի բաղաք եւ պատրաստեցին խունկեր եւ իւզեր, որպէս զի զկնի շաքածուն գան եւ օծեն մարմինը, վաանգի Յովսէփ եւ Նիկողեմոս տճապարանօք, ուրեմն հարևանցի ըրած էին. ինչ որ ըրին:

62. Քահանայապետք եւ Փարիսեցիք որք յաճախ կը գանդատէին Թէ Յիսուս շարածը կը պղծէ, իրենք ահա զայն կը պղծեն առ դատաւորն երթալով:

63. Հրեայք լսած էին անշուշտ նոյն իսկ Յիսուսի աշակերտներէն Թէ երեք օրէ յետոյ յարուածին պատի առնու նա: Թող որ ինքն իսկ Յիսուս օկնարկած էր զայս (ԺԲ. 39-40, Յովհ. Բ. 19, 1-23):

64. «Ո՛վ տխմարք, Թէ մոլորեցուցիչ է, եւ սուս կարծէք, որպէս ասէրըդ. զի կասկածէք, Էր վասն ի շուրջ գոյք եւ ազգի ազգի հնարս խնդրէք» (Մործորեցի). Ինչ շահ կար աշակերտներուն իրենց վարդապետին մարմինը գողնալուն մէջ: Յիսուս ինքն անձամբ երեւելու էր, որպէս զի իրեններն աւելի ևս հաստատուէին ի հաւատս, այն ևս՝ մահու չափ:

65. Ոչ Թէ նոքա զինուորներ ունէին, այլ Թէ Պիղատոս զինուորներ դրաւ նոցա տրամադրութեան տակ, որպէս զի ընեն, որպէս և կ'ուզեն. ուստի զինուորք Յիսուսի յարուածինը, ոչ նախ Պիղատոսի, այլ նոցա իմաց տուին: Ահա նոցա այս զգուշութիւնն՝ ալ աւելի Յիսուսի յարուածինը ստոյգ ըրաւ:

66. Գերեզմաններու դռներ կը կնքուէին շատ անգամ մոմով կամ կաւով

գեռ ողջ էր, կ'ըսէր թէ «Երեք օրէն յարութիւն պիտի առնուի»։ *64 Ուստի ՚րամայէ որ մինչեւ երեք օր գերեզմանին զգուշութիւն ըլլայ. զուցէ աշակերտները գիշերատեն զայով զանի գողնան, եւ ըսեն ժողովրդին թէ «Մեռելներէն յարութիւն առաւ» եւ ետքի մոլորութիւնն առաջինէն աւելի շար ըլլայ։ *65 Պիղատոս կ'ըսէ անոնց, «Զինուորներ ունիք. գացէք, ինչպէս որ գիտէք, զգուշութիւն ըրէք»։ *66 Եւ անոնք երթալով գերեզմանին զգուշութիւն ըրին, եւ զինուորներով մէկտեղ կնքեցին քարը։

Ք Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ը.

*1 Եւ շարաթ երեկոյին՝ երբ կը լուսնար շարաթուան առաջին օրը, Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն եկան գերեզմանը տեսնելու։ 2 Եւ ահա մեծ ժափ եղաւ,

(Գոսն. 2. 17)։ «Կնքեցին մատանեաւ քահանայապետին, որ ունէր զանփակ գիրն զ է, անուն Աստուծոյ քանդակուած յակն մատանեոյն, զոր, սենն, յառաջին տախտակացն գոլ զքարն զայն, զոր խորտակեաց Մովսէս։ Այնու կնքեցին զվէմն Քրիստոսի. այս է, վկայեցին թէ սա՛ նա է, որ երեւցաւ ի լեւոռն Քորեբ եւ սասց. «Ես եմ ՈՐԷՆՆ» (Մործորեցի)։

1. Յիսուսի յարութեան առաւօտն Աւետարանագիրք նուազ կամ առաւել կանուխ կը գրեն, այլ այսպիսի տարբերութիւններ կ'սպասուին անկոխ վկայներէ։ Մագդաղենացին Մարիամ և միւս Մարիամը, մայր Յակոբայ, և Սողոմէ ըստ Մարկոսի (ԺՁ. 1) և Յովհաննան՝ կին Քուզա հազարապետի (Ղուկ. ԻԳ. 10) եւ ուրիշներ եւս (Ղուկ. ԻԳ. 10) կուզան գերեզմանը տեսնելու եւ Յիսուսը օծելու (Մարկ. ԺՁ. 1) այն խունկերով ու իւղերով որոց մէկ մասը պատրաստած էին ուրբաթ երեկոյ (Ղուկ. ԻԳ. 56) եւ մէկ մասը շաբաթ երեկոյին (Մարկ. ԺՁ. 1)։

2. Մեծ էր սասանութիւնն եւ զինուորք անշուշտ խռովեցան եւ մանաւանդ սարսափահար եղան երբ հրեշտակի երեւոյթը տեսան։ Քարը զըլտորեցաւ, այլ իսկ և իսկ յետ յարութեան Տեսուն, վասնզի նա պէտք չունէր հրեշտակի օգնութեան եւ ոչ կնքուած քարը կրնար արգելք ըլլալ նորա յարութեան։ Քարն ի բաց ծաւալեցաւ իւղաբեր կիներուն և առաքեալ-

զի հրեշտակ Տեառն իջնելով երկնքէն, մօտեցաւ եւ դռներէն քարը մէկզի գլտորեց եւ անոր վրայ կը նստէր: 3 Եւ անոր տեսքը փայլակի պէս էր, եւ անոր հագուստը ձիւնի պէս ճերմակ: 4 Եւ անոր վախէն պահապանները խռովեցան եւ մեռելներու պէս եղան: *5 Պատասխան տուաւ հրեշտակն ու կ'ըսէ կնիկներուն. «Ի՞նչք մի վախնաք, գիտեմ, որ խաչուած Յիսուսը կը փնտռէք. 6 հոռ չէ, որովհետեւ յարեաւ, ինչպէս որ ան ըսաւ. եկէք, տեսէք այն տեղը ուր կը կենար: *7 Եւ շուտով գացէք, ըսէք անոր աշակերտներուն թէ յարեաւ, եւ անա ձեռնէ առաջ Գալիլեա կ'երթայ. հոն պիտի տեսնէք զանի. ահա

ներուն համար, որպէսզի նախ Թափուր տեսնեն գերեզմանը եւ ապա զնա կենդանի: Կ'երևի թէ Մարիամ գերեզմանը հեռուէն Թափուր տեսնելուն պէս չյառաջացաւ, այլ փուծացաւ պատմել աշակերտաց (Յովհ. Ի. 2), քայքայ միւս կիներն յառաջացան եւ հրեշտակին հետ եղան խօսակից:

5. Մարկոս կը գրէ, երիտասարդ մը ճերմակ պատմուճոն հագած. Ղուկաս կ'ըսէ, երկու մարդիկ լուսաւոր հագուստներով. իսկ Յովհաննէս կը գրէ թէ Մարիամ, երբ յետոյ դարձաւ ի գերեզման, տեսաւ երկու հրեշտակներ ի սպիտակաւ: Մարտի կը գրեն Մարկոս եւ Ղուկաս, վասնզի այդ հրեշտակներն երևեցան ի կերպարանս մարդոյ (Եննդ. ԺԸ. 2-22, Գործք. Ա. 10): Մատթէոս եւ Մարկոս մէկ հրեշտակ կը գրեն, անշուշտ զանի միայն յիշատակել ուզելով, որ խօսեցաւ կիներուն: Ուրիշ անգամ Մատթէոս երկու դիւահար եւ երկու կոյր գրած է (Ը. 18, Ի. 30) իսկ միւս աւետարանագիրք մեկ միայն:

7. «Գալիլեա՛ ստտանօր ոչ եթէ զգաւառէն ասէ, յորում նազարէթ էր, այլև էր տեղի ինչ ի լերինն ձիթենեաց, մերձ ի տեղին. ուր վերացաւ յերկինս, որ այս անուամբ կոչէր» (Ծործորեցի): Աստ կ'երևի թէ Յիսուս ժամադրած էր իւր բոլոր աշակերտներուն աւելի քան հինգ հարիւր եղբայրներու երեւիլ հանդիսապէս (Ա. Կորնթ. ԺԷ. 6), վասն զի այս երեւումէն առաջ ունեցաւ ուրիշ երեւումներ առանձնական, այսինքն իւղաբեր կիներու եւ մետասաններուն, եւ Մատթէոս այս վերջինը միայն կը գրէ:

9. Կ'երևի թէ Պետրոս եւ Յովհաննէս երբ ի գերեզման եկան, մեկնած էին կունայք. եւ Մարիամ Պետրոսի եւ Յովհաննէսի մեկնելէն յետոյ երբ դարձաւ նորէն ի գերեզման, Յիսուս նմա երևեցաւ, առաջին անգամ. ապա անմիջապէս եւ այս կիներուն, որք իսկոյն ի նշան մեծարանաց փարեցան նորա ոտներուն:

ձեզի ըսի) : 8 Եւ իսկոյն գերեզմանէն ելլելով վախով ու շատ ուրախութեամբ կը վազէին աշակերտներուն պատմեալու : * 9 Եւ ահա անոնց Յիսուս պատահեցաւ ու կ'ըսէ . « Ողջոյն ձեզ » . եւ անոնք մօտենալով անոր ոտները բռնեցին եւ անոր երկրպագութիւն ըրին : * 10 Յիսուս այն ատեն կ'ըսէ անոնց . Մի վախնաք . գացէք , ըսէք իմ եղբայրներուս , որ Գալիլեա երթան եւ զիս հոն տեսնեն » : * 11 Երբ անոնք գացին , ահա զինուորներէն մէկ քանին քաղաքն եկան եւ քահանայապետներուն պատմեցին , ինչ որ եղաւ : 12 Եւ անոնք ծերերով մէկտեղ խորհուրդ ըրին եւ շատ արծաթ տուին զինուորներուն ու կ'ըսին . 13 « Ըսէք

40. Այժմ իսկ իրենները եղբայր կ'անուանէ , երբ այլ ևս փառաւորուած է . այս ո՛րպիսի անհուն սէր և շնորհ առ մարդիկ :

41. Պահապան զինուորները կը մտնեն յերուսաղէմ և կը պատմեն քահանայապետներուն Սէ յարեաւ Յիսուս , որք իսկոյն ժողով զումարելով կ'որոշեն կաշառել պահապանները , որպէս զի համբաւեն Սէ աշակերտք զողացան Յիսուսի մարմինը , երբ իրենք քնացած էին : Այս ո՛րպիսի անճոռնի սուտ . կարելի՞ էր այդ , երբ գերեզմանն էր պահպանուած Հոովմայեցի զինուորներէ . կարելի՞ էր ի բաց նետել անպիսի բար մը տուանց զինուորներն արձնցնելու . կամ Սէ կարելի է՞ր որ բոլոր զինուորք քնանային , մինչ այսպիսի զանցառուծեան մը պատիժն էր Տ-հ . եւ ե՞նչ կը քնանային , ի՞նչէն զիտցան Սէ աշակերտք զողացան : Այս բաշտպանք Հրէից մէջ համբաւեցաւ և կար մինչեւ Յուստինոս վկայի ժամանակ , երկրորդ դարուն մէջ , և ապա ուրիշ գրոյց փոխանակեցաւ , իբր Սէ Հրեայք Յիսուսի մարմինը գողցած ըլլան ու թաղած արտի մը մէջ , զոր հերկեր են անմիջապէս , որպէս զի աշակերտք չգտնեն . բայց ե՞նչ աշակերտք զողացած ըլլային , կամ Յիսուս նոցա կենդանի չերեւէր , ուրեմն պիտի չհաւատային Սէ յարեաւ . ա՛յ ուրեմն ի՞նչ հարկ կար նոցա կրելու հալածանքներ և շարալուկ նահատակութիւններ յանուն սուտ մեսիայի մը :

46. Իւր յարուծեան օրն Յիսուս նոխ կ'երեւի Մաթթաղենացի Մարիամին (Ղուկ. ԻԴ. 12 : Յովհ. Ի. 11—18) , եւ յետոյ Պետրոսի և այն երկու աշակերտներուն որք կ'երթային յէմմաւուս (Ղուկ ԻԴ. 43-53) . նոյն երեկոյին տասն առարեալներուն և ուրիշներուն յերուսաղէմ , և շարժմ մը յետոյ մետասաններուն (Յովհ. Ի. 19-30) : Յետոյ երբ զտոսկին անցած էր , ի Գալիլեա կ'երևի այն եօթն աշակերտներուն որք ձուկ կ'որսային , (Յովհ. ԻԱ. 1—14) : Եւ վերջապէս այս լերան վրայ մետասաններուն , ուր

Թէ անոր աշակերտներն գիշեր աստն դալով զանի դող-
ցան, երբ մենք կը քնանայինք: 14 Եւ թէ որ դատաւորն
այդ բանը լսէ, մենք զանի կը հաճեցնենք., եւ զձեզ
ապահով կ'ընենք»: 15 Եւ անոնք արծաթը առնողը ըրին,
ինչպէս որ սովորեցան. եւ այս համբաւը Հրեաներէն ելաւ
մինչեւ այսօր:

* 16 Իսկ տաանեամէկ աշակերտները գացին Գալիլեա՝
այն լեռը, ուր Յիսուս անոնց ժամադիր եղաւ: * 17 Երբ տե-
սան զանի, անոր երկրպագութիւն ըրին, եւ ոմանք երկ-
բայեցան: * 18 Եւ Յիսուս մօտենալով անոնց հետ խօսե-

կ'երեւի թէ, ըստ Պագոսի, ներկայ էին հինգ հարիւր, աւելի եզրայրներ
(Ա. Կորնթ. ԺԵ. 6): Եւ Յիսուս յետոյ կ'առանձնանայ մետասաններուն
հետ իւր վերջին խօսքն ու պատուէրները տալու համար:

17. Է՞ր ոմանք տարակուսեցան.— ոչ թէ Յիսուսի վերակենդանութեան
համար, վասն զի նախապէս տեսան զնա երբեմն եւ վայելեցին նորա հրա-
շարժառ ներկայութիւնները, զորս Մատթէոս չյիշատակեր, այլ այս
վերջինը միայն, այլ տարակուսեցան, վասնզի աւանդութիւն մը որ խո-
րապէս ազդած էր բովանդակ Հրեայ լազգին, այն էր թէ Մեսիայն յերուսա-
ղէմ Դաւթի յաճողուն նստելով պիտի վերականգնէր Հրէական կործանուած
Թագաւորութիւնը եւ յաւիտեան պիտի տիրէր, և պիտի նուաճէր բոլոր
աշխարհին ազգերը. այժմ աշակերտներէն ոմանք կ'երկբային. թէ է նա
Մեսիայ, քանի որ կը մեկնէր աշխարհէս, առանց Իսրայելի այս ականա-
լութիւնը զոհագնելու: Եւ, գուցէ, սոքա էին անշուշտ, որք համարձակե-
ցան անձկանօք հարցընել. և Տէր, այս ժամանակիս մէջ ալ Իսրայելի Թա-
գաւորութիւնը չե՞ս հաստատեր» (Գործք. Ա. 6):

18. Նա արդէն ունէր այդ իշխանութիւն ի սկիզբնէ անտի իբրեւ որդի
Աստուծոյ (Յովհ. Ա. 1-3). այս անգամ այդ իշխանութիւնը կ'առնու իբրեւ
որդի մարդոյ, ուստի կ'արտօնէ իւր աշակերտները երթալ և բոլոր ազգե-
րուն քարոզել իւր աւետարանը և յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ
մկրտել, որք կը հաւատան և կ'աշակերտին Աւետարանի: Յիսուս չըսեր
մկրտել անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, իբր թէ ըլլային երեք
աստուածք, այլ եզակի. զի երեքինս մի են, անբաժան եւ համազօր:

20. Այլ եւս Առաքեալք չեն զրկուիր միայն Հրեայներու քարոզել (Ժ. 5-
7), այլ բոլոր ազգերու. Յիսուս իւր աշակերտներուն կը պատուիրէ զայն
ուսուցանել եւ զայն պահել տալ աշակերտողներուն, ինչ որ ինքն է իրենց
ուսուցած. ոչ պակաս եւ ոչ աւելի (Յայտ. ԻԲ. 18 40): Եւ որպէս զի աշա-

ցաւ ու կ'ըսէ . « Ամէն իշխանութիւն ինձի երկնքի մէջ ու երկրի վրայ տրուեցաւ . ինչպէս որ զիս Հայրը զրկեց եւ ես զձեզ կը զրկեմ : 19 Գացէք այսուհետեւ . բոլոր Հեթանոսները աշակերտեցէք . զանոնք մկրտեցէք Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն անուանով : *20 Անոնց սորվեցուցէք պահել այն ամէնը, ինչ որ ձեզի պատուիրեցի . եւ անա ես ձեզի հետ եմ ամէն օր , մինչեւ աշխարհիս վերջը » :

Կերտք երբէք յուսահատին կարծելով թէ միայնակ մնացած են աշխարհիս մէջ, Յիսուս վատահարար կը զրուցէ նոցա թէ « Է՛ս ձեզ հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը » : Նա ինչպէս է ամենակարող եւ է միայնգամայն ամէնուրեք : Նա չըսեր թէ ձեզ հետ պիտի ըլլամ, այլ ե՛՛՛ս եւ այս ոչ թէ մինչեւ ցվերջ աշխարհիս, այլ յետոյ եւս պիտի ըլլայ մեզ հետ , եւ զինքը պիտի վայելենք յաւիտեանս յաւիտենից . ամէն :



ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ



ԱԻԵՏԱՐԱՆ

R U S

Մ Ա Ր Կ Ո Ս Ի

Ք Լ Ո Ւ Թ Ա՝

*1 Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսի Աւետարանին սկիզբը : *2 Ինչպէս որ մարգարէներուն մէջ գրուած է . « Ահա կը զրկեմ իմ հրեշտակս քու առջեւդ , որ քու ճամբադ պատրաստէ քու առջեւդ : 3 Անպատին մէջ խօսքի ձայն կայ . Տէրոջը ճամբան պատրաստեցէք , եւ անոր ճամբան օւղիղ ըրէք » : *Եւ եղաւ որ Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր , ապաշխարութեան մկրտութիւնը կը քարոզէր մեղքերու թողութեան համար : 5 Եւ Հրէաստանի բոլոր աշխարհն ու Երուսաղեմացիներն՝

1. Մարկոս կը գրէ իւր աւետարանը, Յիսուսի պաշտօնական կեանքէն սկսելով . հին տնտեսութիւնը Յովհաննէս Մկրտիչով կը վերջանար, որպէս ինքն իսկ Յիսուս յայտարարեց (Ղուկ. ԺԶ. 16) :

2. Այս վկայութիւնն է Մաղաքիայէն (Գ. 1), զոր Մատթէոս չյիշեր, այլ կրկնորդը միայն (Գ. 2),

4. Յովհաննէս կը մկրտէ (Մատթ. Գ. 1 - 12; Ղուկ. Գ. 1 - 20),

ամէնքն անոր կ'երթային, եւ անորմէ Յորդանան գետին մէջ կը մկրտուէին, իրենց մեղքերը խոստովանելով: 6 Եւ Յովնաննէս հագած էր ուղտու մազեղէն եւ կաշիէ գօտի իր մէջքը. եւ անոր կերակուրը մարախ եւ վայրենի մեղր էր: 7 Կը քարոզէր ու կ'ըսէր. «Ինէ հօրագոյնն իմ ետեւէս կուգայ, որուն չեմ կրնար ծռիլ, անոր կօշիկներուն կապերը քակելու: 8 Ես ձեզ ջրով մկրտեցի, եւ ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգով»:

*9 Եւ եղաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեացիներու Նազարէթէն եկաւ, եւ Յովնաննէսէն Յորդանանու մէջ մկրտուեցաւ: 10 Եւ նոյն ատեն շուրէն ելլելուն պէս՝ երկինքը բացուած տեսաւ, եւ Աստուծոյ Հոգին աղաւնիի նման՝ անոր վրայ կ'իջնէր: 11 Երկինքէն ձայն եղաւ եւ կ'ըսէ. «Իմ սիրելի Որդիս դուն ես, քեզի հաւնեցայ»:

*12 Եւ շուտ մը հօգին զանի անապատ կը հանէ: 13 Եւ ան քառասուն օր հոն էր Սատանայէն փորձուած, եւ զազաններու հետ էր. եւ հրեշտակները զանի կը պաշտէին:

*14 Եւ Յովնաննէսին մատուելէն ետքը, Յիսուս Գալիլեա եկաւ. Աստուծոյ աւետարանը կը քարոզէր եւ կ'ըսէր թէ «Ժամանակը լրացած է, 15 եւ Աստուծոյ արքայութիւնը հասած է. ապաշխարեցէք եւ աւետարանին հաւատացէք»: *16 Երբ Գալիլեացիներու ծովիզերքէն կ'անցնէր, տեսաւ Սիմօնը եւ Սիմօնին եղբայրն՝ Անդրէասը, որոնք ուռկաններ ձգած էին ծովուն մէջ, որովհետեւ ձկնորս էին: 17 Եւ Յիսուս անոնց կ'ըսէ. «Իմ ետեւէս եկէք եւ ձեզ ընեմ՝ որ ըլլաք մարդիկներու որսորդ»: 18 Եւ շուտ մը ուռկանները թողլով անոր ետեւէն գացին: 19 Եւ անկէ քիչ մը առաջ երթալով, տեսաւ Զեբեդիան Յակոբոսը եւ անոր եղբայրն՝ Յովնաննէսը. եւ անոնք երբ նաւին մէջ ուռկանները կը շտկէին, 20 եւ

9. Յիսուս կը մկրտուի (Մատթ. Գ. 13 - 17; Ղուկ. Գ. 21 - 22):

12—12 Այս փորձութիւնը լիագոյն յիշուած են Մատթէոսէ (Գ. 1—11) և Ղուկասէ (Գ. 1—13):

14—15 Յիսուս կը քարոզէ ի Գալիլեա (Մատթ. Գ. 17; Ղուկ. Գ. 45; Յովհ. Գ. 43—45):

16—20 Կոչումն այս չորս Առաքեալներուն և հրաշալի որս ձուկերուն (Մատթ. Գ. 18—22; Ղուկ. Ե. 4—11):

զանոնք կանչեց, որոնք իսկոյն իրենց Զերեդիոս հայրը վարձկաններուն հետ մէկտեղ նաւին մէջ թողով, անոր ետեւէն գացին:

*21 Կափառնայում կը մտնեն, եւ իսկոյն մտնելով ժողովարանին մէջ շարաթ օրը՝ անոնց կը սորվեցընէր: 22 Եւ անոր վարդապետութեանը վրայ կը զարմանային, վասն զի անոնց կը սովորեցնէր իշխանութեամբ եւ ոչ թէ զպիրներուն պէս: 23 Եւ անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար, որ իր ներսի դին պիղծ ոգի ունէր. աղաղակեց ու կ'ըսէ. *24 «Թող տուր. մեր եւ քու մէջ ի՞նչ կայ, Յիսուս նազովրեցի. մեզի կորսնցնելու եկար. գիտե՞ք քեզ, ո՞վ ես, Աստուծոյ սուրբը»: 25 Յիսուս զանի յանդիմանեց ու կ'ըսէ. «Լո՛ւ է եւ ելիր ասորմէ»: 26 Եւ պիղծ ոգին զանի ցնցեց, եւ մեծ ձայնով պոռաց եւ անորմէ ելաւ: 27 Եւ ամենքը զարմացան, իրարու կը փսփայային ու կ'ըսէին, «Այս՛նոր վարդապետութիւնն ի՞նչ է, վասն զի իշխանութեամբ պիղծ ոգիներուն կը սա՛ստէ եւ կը հնազանդին ասոր»: 28 Եւ անոր համբաւը Գալիլիացիներուն ամէն կողմը տարածուեցաւ:

*29 Եւ շուտ մը ժողովարանէն ելլելով, Սիմոնին եւ Անդրէասին տունը եկաւ՝ Յակոբին եւ Յովհաննէսին հետ մէկտեղ: 30 Եւ Սիմոնին զոքանչը Զերմէ բռնուած էր, եւ իսկոյն անոր կ'ըսեն անոր համար: 31 Եւ մօտենալով, ոտքի հանեց զանի՝ անոր ձեռքէն բռնելով. եւ տենողը զանի թողուց, եւ անոնց կը ծառայէր:

32 Երբ իրիկուն եղաւ, արեւուն մարը մտնելու ատեն անոր կը բերէին ամէն հիւանդներ եւ զիւահարներ: 33 Եւ ամբողջ քաղաքը զրանը քով ժողովուած էր: 34 Եւ շատ հիւանդներ իրենց տեսակ տեսակ ախտերէն բժշկեց, եւ շատ զեւեր հանեց. եւ զեւերուն խօսել չէր տար, որովհետեւ գիտէին թէ ան է Քրիստոսը:

*35 Եւ առաւօտուն կանուխ ելլելով անապատ սեղ մը

21—28 Բժշկութիւն զիւահարի ժողովրդանոցին մէջ (Ղուկ. Գ. 33—37):

24. Դիւահարներու զոյւթեանն ու կանխազիտութեանը համար տես ի մեկնութիւն Մատթէոսի (Ը. 28—29):

29—34 Բժշկութիւն զօրանչին Պետրոսի և ուրիշներուն (Մատթ. Ը. 14—17, Ղուկ. Գ. 38—42):

35. Թէեւ մարդ աղօթելու է ատեն ատեն և ամեն տեղ, այլ առանձ-

գնաց, եւ հոն կ'աղօթէր: 36 Եւ անոր ետեւէն գնաց Սիւսոն եւ որոնք անոր հետ էին: 37 Եւ երբ զանի գտան, ըսին անոր թէ «Ամենքը քեզ կը փնտռեն»: 38 Եւ ըսաւ անոնց. «Եկէք, երթանք ուրիշ մօտակայ գիւղաքաղաքներ, եւ հոն ալ քարոզեմ, վասն այս բանիս համար եկած եմ»: 39 Եւ անոնց ժողովարաներուն մէջ կը քարոզէր բազոր Գալիլեացիներուն մէջ, եւ դեւեր կը հանէր:

40 Անոր բորոտ մը կուգայ, կ'աղաչէր, կը ծնրադէր ու կ'ըսէր. «Տէր, թէ որ ուզես, կարող ես զիս սրբել»: 41 Իսկ Յիսուս գթալով ձեռքը երկնցուց, անոր մօտեցաւ ու կ'ըսէ անոր. «Կ'ուզեմ, սրբուէ»: 42 Եւ երբ ըսաւ անոր, շուտ մը բորոտութիւնն անորմէ գնաց եւ սրբուեցաւ: 43 Եւ անոր սաստելով իսկոյն զանի դուրս հանեց, ու կ'ըսէ. 44 «Զգոյշ եղիր, մէկու մը բան չըսես, հապա գնա, քեզ քահանային ցոյց տուր. եւ քու սրբուելուդ համար այն նուէրը, զոր Մովսէս պատուիրեց անոնց վկայութիւն ըլլալու համար»: 45 Եւ ան ելլելով սկսաւ յոյժ քարոզել եւ հռչակել այն բանը, անանկ որ ալ չէր կրնար յայտնի քաղաք մտնել, հապա դուրսը անապատ տեղերէր, եւ ամէն կողմերէն անոր կուգային:

Գ Լ Ա Ի Բ . Բ

*1. Եւ քանի մը օրէն յետոյ կատառնայում նորէն մտնելով, 2 ըսուեցաւ թէ տան մէջ է, եւ շատերը ժող-

նուծեան մէջ աղօթքն է յաւազոյն, զի մեր միտքն է յայնժամ ամփոփ և զգաստ: Յիսուս յաճարս կ'աղօթէր (Մատթ. 2. 46: Ղուկ. Ե. 16: 2. 12: ԻՔ. 41): Յիսուս որ անմեղ էր, կ'աղօթէր. հապա մեզ ո՛րքան պիտոյ են աղօթք, քանի որ մենք միշտ մեղք գործելու վտանգին մէջ ենք:

36—39. Յիսուս ի Գալիլեա կը շրջի, և բժշկութիւններ կ'ընէ (Մատթ. Դ. 23—25: Ղուկ. Դ. 43—45):

40—44. Բժշկութիւն բորոտին (Մատթ. Ը. 2—4: Ղուկ. Ե. 12—16):

45. Բորոտին այս անհնազանդութիւն չէր այնքան մեծ յանցանք որպէս կարելի է կարծել, քանի որ իւր շնորհակալու սրտէն զրդուած կ'ընէր, այլ ծայրագոյն մեղք է այն անհնազանդութեան, երբ մարդ զայն կ'ընէ մղուելով իւր չար կրքէն:

1—12. Այս բժշկութիւնը (Մատթ. Թ. 2—8: Ղուկ Ե. 17—26):

վաւեցան՝ անանկ որ ալ տեղ չկար, եւ ոչ դրանք քով. եւ անոնց կը խօսէր Աստուծոյ խօսքը: 3 Եւ անոր կուգային, կը բերէին չորս հօգիէ վերցուած անդամալոյծ մը: 4 Եւ երբ չէին կրնար անոր մօտենալ բազմութիւնէն, քակեցին այն յարկը՝ ուր Յիսուս էր, եւ առատազր բանալով վար իջուցին մահիճը, որուն մէջ անդամալոյծն էր: 5 Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, կ'ըսէ անդամալոյծին. «Որդեակ, քեզի քու մեղքերդ թող ներուած ըլլան»: 6 Եւ զպիրններէն մէկ քանիներ կային, որոնք հոն կը նստէին. եւ իրենց սրտին մէջ կը խորհէին. 7 «Ի՞նչ է այս, որ այս հայնոյութիւնը կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թագութիւն տալ, եթէ ոչ միայն Աստուած»: 8 Եւ Յիսուս իր հոգւովն իմանալով թէ անոնք իրենց սրտին մէջ այնպէս կը խորհին, կ'ըսէ. «Ի՞նչ կը խորհիք ձեր սրտին մէջ: 9 Ո՞րը դիւրին է. ըսել անդամալոյծին. քու մեղքերդ քեզի ներուած ըլլան, թէ ըսել. ելի՛ր, առ քու մահիճը եւ տունդ գնա»: 10 Այլ որպէս զի գիտնաք թէ Որդի մարդոյ երկրին վրայ իշխանութիւն ունի մեղքերու թողութիւն տալ», կ'ըսէ անդամալոյծին: 11 «Քեզի կ'ըսեմ, ելի՛ր. առ քու մահիճը եւ տունդ գնա»: 12 Եւ շուտ մը մահիճը առնելով ոտքի ելաւ, ամենուն առջեւ դուրս ելաւ. անանկ որ ամէնքը զարմացան, եւ Աստուած կը փառաւորէին եւ կ'ըսէին թէ «Այսպիսի բան մը երբէք չտեսանք»: 13 Եւ նորէն ծովեզերքն ելաւ, եւ բոլոր ժողովուրդներն անոր կուգային. եւ անոնց կը սովորեցունէր: *14 Եւ երբ կ'անցնէր, Ալիսան Ղեւին տեսաւ որ մաքաւորութեան մէջ կը նստէր,՝ եւ կ'ըսէ անոր. «Ետեւէս եկուր». եւ իլլելով անոր ետեւէն գնաց: 15 Եւ երբ ան անոր տան մէջ նստաւ, եւ շատ մաքաւորներ նստած էին Յիսուսին եւ անոր աշակերտներուն հետ, վասն զի շատեր անոր ետեւէն կ'երթային: *16 Իսկ զպիրններն ու Փարիսեցիներն

13—22. Ղեւեայ կոչումն ու կոչուները եւ զպիրներուն եւ Փարիսեցիներուն գայթակհուծիւնը (Մատթ. Թ. 9—17, Ղուկ. Ե. 29—39):

16. Փարիսեցի բառը թէն մեկնուած է (Մատթ. Գ. 7.), այլ արդի գիտնականներէն կարծողներ կան թէ այդ բառը Փարսի այսինքն Պարսիկ բառէն ծագած է: Մորս կը փաստարտնեն թէ այն Հրեայներն, որք վերադարձան Պարսկաստանէն և վերստին հաստատուեցան Հրէաստանի մէջ:

երբ տեսան թէ մաքաւորներուն եւ մեղաւորներուն հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն. « Ինչո՞ւ համար մեղաւորներուն եւ մաքաւորներուն հետ կ'ուտէք եւ կը խմէք »: 17 Երբ Յիսուս լսեց, կ'ըսէ անոնց. « Ողջերուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն: Չեկայ արդարները կոչելու, այլ մեղաւորները »: 18 Եւ Յովհաննէսի աշակերտներն ու Փարիսեցիները պահք կը բռնէին, կուգան եւ կ'ըսեն անոր. « Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտներն ու Փարիսեցիները պահք կը բռնեն, եւ քու աշակերտներդ չեն պահք »: 19 Եւ Յիսուս անոնց կ'ըսէ. « Միթէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքները երբ դեռ փեսան իրենց հետ է, պահք բռնեն. որքան ժամանակ փեսան իրենց հետ ունին, կարելի չէ պահել: 20 Բայց պիտի գան օրեր՝ երբ փեսան անոնցմէ վերցուի, եւ հապա այն օրը պահք բռնեն: 21 Մէկը նոր լաթի կտոր, կարկտան չձգեր հինցած հագուստի վրայ, ապա թէ ոչ նորն այն հինէն իր ամբողջութեամբ կ'առնու, եւ ալ աւելի գէշ կ'ըլլայ պատուածքը: 22 Եւ մէկը նոր գինին հին տիկերուն մէջ չըզներ. ապա թէ ոչ այն գինին տիկերը կը պայթեցնէ, գինին կը թափուի եւ տիկերը կը կորսուին. այլ նոր գինին նոր տիկերու մէջ զնելու է »:

*23 Եւ եղաւ որ շաբաթ օրը արտերուն մէջէն անցնի, եւ աշակերտներն որ կ'երթային, սկսան հասկ փրցընել եւ ուտել: 24 Եւ Փարիսեցիները կ'ըսեն անոր. « Տես, քու աշակերտներդ ի՞նչ կ'ընեն շաբաթ օրը, որ արժան չէ »:

անուանուեցան Փարիսեցի, վասն զի էին հետեւեղ Զրադաշտեան կրօնի, զոր Փարսիք կ'ընդունէին, եւ ցայժմ իսկ կայ Փարսի ժողովուրդ մը ի Հնդկաստան որ այդ կրօնին դաւանող է: Արդ՝ որովհետեւ Զրադաշտեան կրօնը, թէեւ ընդ ազօտ, կ'ընդունի Երրորդուծեան խորհուրդը եւ կը վարդապետէ կուսէ ծնունդը եւ մեռելոց յարուծեամբ վերջին դատաստանը եւ այլն, ուրեմն Փարիսեցիք եւ Փարսք չէին իրարմէ այնքան հեռի դաւանակիցներ եւ Սաղուկեցիք որ կ'ատէին Փարիսեցիները, զնոսա Փարսի այսինքն Փարիսեցի անուանելով՝ նախատած կ'ըլլային, ցոյց տալով Հրեայ ժողովրդեան թէ նորա հեթանոսական կրօնի մը վարդապետութեանց առաւել շատագով են քան Մովսիսական օրինաց:

23—28. Աշակերտներուն հասկ կորգելն եւ ուտելը (Մատթ. ԺԲ. 1—8, Դուկ. Զ. 1—5):

25 Եւ Յիսուս կ'ըսէ անոնց . « Չէք կարդացած, ինչ որ ըրաւ Դաւիթ , երբ պէտք ունեցաւ , եւ անօթեցաւ ինք եւ որոնք իրեն հետ էին : 26 Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրովը եւ առաջաւորութեան հացերը կերաւ , եւ տուաւ անոնց ալ որոնք անոր հետ էին , ու քահանաներէն զատ ձեռք մը ուտել օրէնք չէր » : 27 Եւ կ'ըսէ անոնց . « Շաբաթը մարդուն համար եղաւ , եւ ոչ թէ մարդը շաբաթին համար : 28 Ապա ուրեմն Որդի մարդոյ շաբաթին ալ տէր է : »

ՊԼՈՒԽ Պ.

*1 Եւ նորէն ժողովրդանոցը մտաւ , եւ հոն մարդ մը կար 'որուն ձեռքը չորցած էր : 2 Եւ կ'սպասէին անոր թէ զանի շաբաթ օրը պիտի բժշկէ , որպէս զի անոր վրայով շարախօսութիւն ընեն : 3 Եւ կ'ըսէ մարդուն , որուն ձեռքը չորցած էր . « Ելի՛ր , մէջ տեղը կեցիր » : 4 Եւ կ'ըսէ անոնց . « Շաբաթ օրը ի՞նչ պէտք է . բարի՞ բան ընել թէ չար բան ընել . հոգի՞ մը ապրեցնել թէ կորսնցնել » . եւ անոնք լռեցին : *5 Եւ Յիսուս լի բարկութեամբ անոնց նայելով , տրամելով անոնց սրտին կուրութեանը համար՝ մարդուն կ'ըսէ . « Ձեռքդ երկնցուր » . եւ ան երկնցուց , եւ անոր ձեռքը աղէկցաւ : 6 Եւ Փարիսեցիները Հերովդիանոսներուն հետ մէկտեղ , չուտ մը դուրս ելլելով , անոր վրայով խորհուրդ կ'ընէին թէ ի՞նչպէս զանի կորսնցնեն :

*7 Իսկ Յիսուս իւր աշակերտներովը ծովեզերքը գնաց . եւ շատ ժողովուրդ անոր ետեւէն կերթային , եւ Գալիլեայէն եւ Հրէաստանէն , 8 եւ Երուսաղէմէն եւ Յորդանանու անդիի կողմէն , եւ անոնք՝ որոնք Տրւրոսէն եւ Սի-

1-6 Չորցած ձեռքին բժշկութիւնը (Մատթ. ԺԲ. 9-14. Ղուկ. 2. 6-11) :

5. Բարկութիւն որ մեզքը կը նշաւակէ , արդար է . Աստուած մեղաւորին ամէն օր կը բարկանայ (Սաղմ. Է. 11) : Յիսուս այժմ կը բարկանայ նոցա մեղքին համար , մինչ ուրիշ ատեն կարեկցեցաւ արտասուելով (Ղուկ. ԺԹ. 41-44) :

7-13. Մատթէոս եւս կը գրէ (ԺԲ. 15. 41) :

զոնէն էին շատ ժողովուրդ, երբ կը լսէին, ինչ որ կ'ընէր, անոր կուգային: 9 Եւ իր աշակերտներուն կ'ըսէ որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար բազմութեան պատճառաւ, որ զինքը չնեղեն: 10 Վասն զի շատերը բժշկեց անանկ որ անոր շուրջը կը խոնուէին՝ որոնք որ ախտեր ունէին, որպէս զի անոր մօտենան: 11 Եւ պիղծ ոգիները երբ զանի կը տեսնէին, անոր առջեւ կ'իյնային, կը պոռային եւ կ'ըսէին թէ 12. « Դուն ես Աստուծոյ Որդին »: Եւ ան զանոնք սաստիկ կը յանդիմանէր, որ զինքը յայտնի չընեն:

*13 Եւ լեռը կելլէ եւ իրեն կը կանչէ զանոնք, որոնք ինքն ուզեց. եւ անոր քով գացին:

14 Եւ տասներկուքն ընտրեց որ իր հետ ըլլան, եւ զանոնք քարոզելու դրկէ: 15 Եւ իշխանութիւն ունենան ցաւեր բժշկելու եւ դեւեր հանելու: 16 Եւ Սիմօնն աւուսնը դրաւ Պետրոս, 17 Եւ Զեբեդեան Յակոբոսին եւ Յակոբոսին եղբօրը Յովհաննէսին՝ անոնց անունները Բաներեզէս դրաւ, այսինքն Որդիք որոտման. 18 Եւ Անդրէասն ու Փիլիպպոսը, եւ Բարթուղիմէոսն ու մաքսաւոր Մատթէոսը, եւ Թովմասն, ու Ալփիտան, Յակոբոսը եւ Թադէոսն ու Կանանացի Սիմօնը 19 Եւ Սկարիովտացի Յուդան որ եւ զանի մատնեց:

*20 Տուն կուգան, եւ ժողովուրդը նորէն անոնց հետ կուգայ, անանկ որ անոնք հաց ուտելու ժամանակ չունէին: 21 Եւ երբ իրենները լսեցին, ելան զանի բռնելու, վասն զի կը կարծէին թէ խելրուած է: *22 Եւ զպիրներն որոնք Երուսաղէմէն եկած էին, կ'ըսէին թէ « Անոր ներսի դին Բէեղզեբուղ կայ, եւ դեւերու իշխանութեամբ դեւերը կը հանէ »: 23 Եւ զանոնք իր քովը կանչելով, անոնց հետ առակներով կը խօսէր. « Ինչպէս կ'ըլլայ որ Սատանայ Սատանան հանէ: 24 Եւ թէ որ թագաւորութիւն մը իր մէջ բաժնուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ: 25 Եւ թէ որ տուն մը իր մէջ բաժնուի, այն

13-19. Աւտքեալներուն ընտրութիւնը (Մատթ. Ժ. 1-4; Դուկ. 2. 14-19):

20-30. Դպիրներուն եւ Փարիսեցիներուն հայտնութիւնը (Մատթ. ԺԲ. 22-37; Դուկ ԺԱ. 14-23):

տուներ չկրնար կենալ : 26 Եւ թէ որ Սատանան իր ան-
ձին դէմ ելաւ եւ բաժնուած է , չկրնար կենալ , ա՛լ վեր-
ջացած է : 27 Բայց մէկը չկրնար զօրաւորին կարասին՝
անոր տուներ մտնելով , աւարի տալ , թէ որ նախ զօրա-
ւորը չկապէ . եւ յետոյ անոր տուներ աւարի կուտայ : 28
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . « Թող ներուին մարդկութեան որ-
դիններուն ամէն մեղքերը , հայհոյութիւններն ա՛լ որքան ո՞ր
հայհոյեն : 29 Բայց ով որ Սուրբ Հոգիին կը հայհոյէ ,
յաւիտեան թողութիւն պիտի չունենայ , հապա պարտապան
պիտի ըլլայ յաւիտեանական մեղաց » . 30 Որովհետեւ կ'ըսէ-
ին թէ « Պիղծ ողբ կալ անոր մէջ » :

*31 Անոր եղբայրներն ու մայրը կուգան , եւ զուրսը
կենալով ճարտ դրկեցին եւ դանի կը կանչէին : 32 Եւ հոն
ժողովուրդը անոր բոլորտիքը կը նստէր . եւ երբ անոր
ըսին , « Ահա մայրդ եւ եղբայրներդ զուրսը կը կենան եւ
քեզ կ'ուզեն » , պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . 33
« Ո՞վ է իմ մայրս կամ եղբայրներս » : 34 Նայեցաւ իր բո-
լորտիքն եղող աշակերտներուն որ կը նստէին , եւ կ'ըսէ-
« Ահա իմ մայրս ու եղբայրներս : 35 Ով որ Աստուծոյ
կամքը կ'ընէ ան է իմ եղբայրս , ու քոյրս եւ մայրս » :

ՔԼԱՒԵ Գ.

*1 Մորէն սկսաւ սովրեցնել ծովերին վրայ . եւ ա-
նոր շուրջը շատ ժողովուրդ ժողովուրդացան , անանկ որ ան
նաւը մտաւ եւ ծովուն վրայ նստեցաւ , եւ բոլոր ժողո-
վուրդը ծովերին վրայ ցամաքը կը կենար : 2 Եւ ա-
նոնց շատ բան առաւիներով կը սովրեցնէր , եւ անոնց կ'ը-
սէր իր վարդապետութեանը մէջ . 3 « Լսեցէք , ահա սեր-
մանողը ցանկու ելաւ : 4 Եւ ցանկու ատուն , մէկը ճան-
բուն քով ինկաւ , եւ թռչունը եկաւ , կերաւ զայն : 5 Եւ

31-35. Յիսուսի մօրն ու եղբայրներուն գալուստը (Մատթ. ԺԲ. 46-
50; Ղուկ. Ը. 19-24) :

1-20 Առակ սերմանացանի (Մատթ. ԺԴ. 1-23; Ղուկ. Ը. 4-18) :

ուրիշ մը ապառաժին վրայ ինկաւ , ուր շատ հող չկար . շուտ մը բուսաւ , վասն զի գետինը հիւթ չունէր : 6 Եւ երբ արեւը ծագեցաւ՝ տաքցաւ , եւ որովհետեւ արմատներ չկային , չորցաւ : 7 Եւ ուրիշ մը ինկաւ փուշերուն մէջ , փուշերն ելան եւ խղճեցին զայն , եւ պտուղ չտուաւ : 8 Եւ ուրիշ մը աղէկ հողի մէջ ինկաւ , եւ բուսնելով պտուղ կուտար . եւ մէկին տեղ երեսուն եւ մէկին տեղ վաթսուն եւ մէկին տեղ հարիւր կը բերէր : 9 Եւ կ'ըսէր . « Ով որ լսելու ականջներ ունի , թող լսէ » :

10 Եւ երբ առանձին եղաւ , անոր քով եղողներն իր աշակերտներուն հետ մէկտեղ հարցուցին այն առակը : 11 Եւ կ'ըսէ անոնց . « Ձեզի տրուած է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտնալ , բայց անոնց որ զուրաճն են , ամեն բան առակներով կ'ըլլայ : 12 Որովհետեւ տեսնելով պիտի տեսնեն եւ պիտի չտեսնեն , եւ լսելով պիտի լսեն եւ պիտի չիմանան , որպէս զի երբէք չդառնան , եւ անոնց մեղաց թողութիւն ըլլայ » : 13 Եւ կ'ըսէ անոնց . « Չէ՞ք գիտեր այս առակները , եւ ի՞նչպէս ամէն առակները պիտի գիտնաք : 14 Ան՝ որ կը ցանէ , խօսքը կը ցանէ : 15 Եւ ճամբուն քովիներն անոնք են , որոնց մէջ խօսքը կը ցանուի , եւ երբ զայն կը լսեն , Սատանան կուգայ եւ անոնց սրտերուն մէջ ցանուած խօսքը կը հանէ : 16 Եւ ապառաժին վրայ ցանուածներն անոնք են , որոնք երբ խօսքը կը լսեն , շուտ մը ուրախութեամբ կ'ընդունին : 17 Եւ որովհետեւ իրենց անձին մէջ արմատներ չունին , հապա առ ժամանակեայ են . երբ խօսքին համար նեղութիւնը կամ հալածանքը կը հասնի , իսկոյն կը զայթակզին : 18 Եւ փուշերուն մէջ ցանուածներն անոնք են , որ երբ խօսքը կը լսեն , 19 աշխարհիս հոգերն ու մեծութեան խաբէութիւնները կը մտնեն եւ խօսքը կը խղճեն եւ անպտուղ կ'ըլլայ : 20 Եւ աղէկ գետնի մէջ ցանուողներն անոնք են , որոնք կը լսեն խօսքը եւ կ'ընդունին եւ պտուղ կուտան , մէկուն տեղ երեսուն եւ մէկուն տեղ վաթսուն եւ մէկուն տեղ հարիւր » :

*21 Եւ կ'ըսէ . « Միթէ ճրագը մահիճին կամ գրուանին տակը զրուելո՞ւ կուգայ . չէ՞ որ աշտանակին վրայ զըր-

ուելու համար : *22 Որովհետեւ չկայ ծածուկ բան մը որ չյայտնուի , եւ գաղտնի բան մը չեղաւ որ երեւան չգայ : *23 Եթէ մէկը լսելու ականջներ ունի , թող լսէ » :

*24 Եւ կ'ըսէ անոնց . « Նայեցէք , դուք ինչ կը լսէք . եւ ձեզի որ կը լսէք , պիտի աւելնայ : Ինչ չափով որ կը չափէք , անով պիտի չափուի ձեզի : *25 Ով որ ունի , պիտի տրուի անոր . եւ ով որ չունի , եւ ինչ որ ունի , զայն ալ անորմէ պիտի առնուի » :

*26 Եւ կ'ըսէր . « Աստուծոյ արքայութիւնը ասանկ է , որպէս թէ մարդ մը հողին մէջ հունտ կը ձգէ : 27 Եւ կը քնանայ եւ կ'արթննայ գիշեր եւ ցերեկ , եւ հունտերը կը բուսնին ու կ'ածին . եւ ան չգիտեր , 28 թէ գետինն ինքնին պտուղ կուտայ . առաջ խտրել եւ յետոյ հասկը , այնուհետեւ լեցուն ցորենը հասկին մէջ : 29 Այլ երբ պտուղը տայ , շուտով մանգաղ կը զրկուի , որովհետեւ հունձքը հասած է » :

30 « Աստուծոյ արքայութիւնն որո՞ւ նմանցընենք կամ ինչ առակով առակենք : 31 Մանանեխի հատին պէս է , որ երբ հողին մէջ կը ցանուի , հողին մէջ եղած բոլոր հունտերէն պզտիկն է , 32 Եւ երբ ցանուի , կը բուսնի եւ ամէն խտտէ աւելի մեծ կ'ըլլայ եւ մեծամեծ ոտեր կ'արձկէ , անանկ որ երկնքի թռչուններուն բաւական կ'ըլլայ անոր շուքին տակ բնակելու » : 33 Եւ ասանկ առակներով կը խօսէր անոնց հետ խօսքը , որչափ կրնային մտիկ ընել : 34 Եւ առանց առակի անոնց հետ բան մը չէր խօսեր , բայց իր աշակերտներուն առանձին կը մեկնէր ամէնը : 35 Եւ կ'ըսէ անոնց այն օրն երբ իրիկուն կ'ըլլար . « Եկէք , անդի՛ր կողմը անցնինք » : 36 Ժողո-

21. Մատթ. Ե. 15.

22. » Ժ. 26.

23. » ԺԱ. 15.

24. » Է. 2.

25. » ԺԳ. 12.

26. Այս առակը յիշուած չէ Մատթէոսէ , եւ պէտք չէ մեկնել որոմանց առակին նման (Մատթ. ԺԳ. 37), փոսնզի կարելի չէ կարծել թէ այս առակի մէջ յիշուած սերմանացան մարդն է Ռիդի մարդոյ , որ անբուն պատուպանն է Իսրայելի , որոյ անհար է չգիտնալ թէ բոյսն ինչպէս մ'ածի , այսինքն Եկեղեցին ինչպէս կը զարգանայ եւ կը բարգաւաճի :

վարդը կը թողուն եւ զանի նաւով մէկտեղ կ'առնուն, եւ ուրիշ նաւերն ալ՝ որոնք անոր հետ կային: 37 Եւ հովի մեծ փոթորիկ կ'ըլլար, եւ ալիքները նաւին վրայ կը հասնէին, անանկ որ գրեթէ կը լցուէր: 38 Եւ ինք կը քնանար նաւին ետեւի կողմը բարձի վրայ. կ'արթնցնէին զանի ու կ'ըսէին. «Վարդապետ, հոգո՛ չէ՞, որովհետեւ ահա կը կորսուինք»: 39 Եւ արթննալով հովին սաստեց եւ ծովին կ'ըսէ. «Դադրէ, լռէ». եւ հովը դադրեցաւ ու մեծ խաղաղութիւն եղաւ: 40 Եւ կ'ըսէ անոնց. «Ի՞նչու ատանկ վախկոտ էք. գիտ հաւատք չունիք»: 41 Եւ շատ վախով վախցան եւ իրարու կ'ըսէին. «Արդեօք աս ո՞վ է, որ հովն ու ծովը ասոր կը հնազանդին»:

Ք Ա Ո Ի Թ Ե .

*1 Եւ ծովուն անգիի կողմը Գերգեսացիներուն երկիրը եկաւ: 2 Եւ անոր նաւէն ելլելուն պէս, գերեզմաններէն ելած մարդ մը անոր պատահեցաւ, որ ունէր պիղծ ոգի. 3 որուն ընտանիքները գերեզմաններու մէջ էր. եւ շղթաներով մէկը չէր կրնար զանի կապել: 4 Եւ շատ անգամ ոտնակապերով եւ շղթաներով կապուած էր եւ ան կը կոտորէր շղթաները, եւ ոտնակապերը կը խորտակէր. եւ մէկը չէր կրնար զանի զսպել: 5 Եւ թէ միշտ գիշեր ու ցերեկ գերեզմաններու եւ լեռներու մէջ կը պոռչոտէր, եւ քարերով զինքը կը հարուածէր: 6 Երբ Յիսուսը հեռուէն տեսաւ, վազեց եւ անոր երկրպագութիւն ըրաւ: 7 Մեծ ձայնով պոռաց ու կ'ըսէ. «Ինձի ու քեզի ի՞նչ կայ, Յիսուս՝ բարձրեալ Աստուծոյ Որդին. զքեզ Աստուծով կ'երգունցընեմ, զիս մի՛ տանջեր»: 8 Վասն զի կ'ըսէր անոր. «*9 Պիղծ ոգի, ելիր այդ մարդէն»: Եւ անոր կը հարցընէր թէ «Անունդ

1—21. Բժշկութիւն դիւահարումեան ի Գաղարս (Մատթ. Ը. 28—Թ. 1): 22-40. Ը. 26—40):

9. Յիսուս դեւին անունը կը հարցընէ, որ կը կը պատասխանէ. «Լէզոն»: Այս բառ կը զործածուէր առ Հռովմայեցիս եւ կը նշանակէր զօրագունդ իբր 6000 մարդոյ: Բայց աստ կը նշանակէ անորոշ թուով բազմութիւն:

ի՞նչ է՝ . եւ կ'ըսէ անոր . Լէգէտօն է անունս , որովհետեւ շատուոր ենք » : 10 Եւ անոր շատ կ'աղաչէին , որ զանոնք այն երկրէն դուրս չդրկէ : 11 Եւ հոն լեբանը մօտ կար արածուող խոզերու մեծ երամակ մը : 12. Բոլոր դեւերն անոր աղաչեցին ու կ'ըսեն . « Չմեզ խոզերուն մէջ զրկէ , որ անոնց մէջ մտնենք » : 13 Եւ հրամայեց անոնց . եւ երբ պիղծ ոգիներն ելան , խոզերուն մէջ մտան , եւ երամակն այն գահաւանդէն ծովը վազեց . երկու հազարի չափ էին , եւ ծովուն մէջ կը խղզուէին : 14 Եւ խոզերն արածողները փախան եւ քաղաքին ու ագարակներուն մէջ պատմեցին . եւ ելան տեսնելու թէ ի՞նչ է այն որ գործուեցաւ : 15 Յիսուսին կուգան , եւ Լէգէտոն ունեցող դիւանայրը կը տեսնեն որ կը նստէր հագուած եւ զգաստացած . եւ վախցան : 16 Եւ անոնք որ տեսեր էին , թէ դիւանարին ի՞նչ եղաւ եւ թէ խոզերու ի՞նչ , անոնց պատմեցին : 17 Եւ սկսան անոր աղաչել որ իրենց սահմաններէն երթայ : 18 Եւ երբ ան նաւը մտաւ , դիւանայրը անոր կ'աղաչէր որ անոր հետ ըլլայ : 19 Եւ Յիսուս անոր թող շտուաւ , հապա անոր կ'ըսէ . « Քու տունդ ընտանիքիդ գնա , եւ պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ եւ ողորմեցաւ » : 20 Եւ գնաց եւ սկսաւ Դեկապոլիսին մէջ քարոզել ինչ որ Յիսուս անոր ըրաւ . եւ ամէնքը կը զարմանային :

21 Եւ երբ Յիսուս ուրիշ անգամ այն կողմը անցաւ , անոր քով շատ ժողովուրդ ժողովուեցան , եւ ծովեզերքն էր : *22 Եւ ահա ժողովրդապետներէն մէկը կուգար , որուն անունն Յայրոս էր , եւ երբ զանի տեսաւ , անոր ոտքերուն ինկաւ : 23 Անոր շատ կ'աղաչէր ու կ'ըսէր թէ « Իր աղջիկը մահուան մօտ է . գայ եւ ձեռքը անոր վրայ դնէ , ազատուի եւ ապրի » : 24 Եւ անոր հետ գնաց . շատ ժողովուրդ անոր ետեւէն կ'երթար եւ զանի կը նեղէին :

25 Եւ կնիկ մը տամներկու տարի արեան տեռատեսութեան մէջ էր : 26 Եւ շատ վիշտ կրած էր շատ բժիշկներէ , եւ իր բոլոր ստացուածները մսխած էր , եւ չէր օգտուած , հապա ա՛լ աւելի սաստկացած էր : 27 Երբ Յիսուսին վրայով լսեց , բազմութեան մէջ եկաւ ետեւէն , եւ

22—23. Բժշկութիւն գեռատես կնոջ եւ յարութիւն դտեր Յայրոսի (Մատթ. Թ. 18—26; Դուկ. Ը. 44—56) :

անոր զգեստին դպաւ . 28 որովհետեւ միտքին մէջ կը խորհէր թէ «Միայն անոր հագուստներուն դպչում, պիտի փրկուիմ» : 29. Եւ շուտ մը անոր արեան ազրիւրը ցամաքեցաւ . եւ իր մարմնովը գիտցաւ թէ տանջանքներէն բժշկուեցաւ : 30 Եւ իսկոյն Յիսուս իր անձովը գիտացաւ այն զօրութիւնը որ ելաւ իրմէ . բազմութեան դարձաւ ու կ'ըսէ . «Իմ հագուստներուս ո՛վ դպաւ» . 31 Եւ աշակերտները կ'ըսեն անոր . «Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ , եւ կ'ըսես թէ «Իմ հագուստիս ո՛վ դպաւ» : 32 Եւ բոլորտիքը կը նայէր , որ տեսնէ թէ ո՛վ զայն ըրաւ : 33 Եւ կինը գաղտուկ ըրած ըլլալուն համար վախնալով եւ զողալով , որովհետեւ գիտէր ալ թէ ինչ եղաւ իրեն , եկաւ , անոր առջեւ ինկաւ , եւ բոլոր եղածը ճշդութեամբ ըսաւ : 34 Եւ Յիսուս կ'ըսէ անոր . «Ո՛վ աղջիկ , քու հաւատքդ քեզ ազատեց . խաղաղութեամբ գնա եւ քու տանջանքներէդ բժշկուած եղիր» :

35 Երբ ան զայն կը խօսէր , ժողովրդապետին տունէն ոմանք կուգան եւ կ'ըսեն թէ «Աղջիկդ մեռաւ . ալ ի՞նչու վարդապետը կը յոգնեցընես» : 36 Իսկ երբ Յիսուս ըսուած խօսքը լսեց , ժողովրդապետին կ'ըսէ . «Մի վախնար , այլ միայն թէ հաւատա» : 37 Եւ իրեն հետ զալ մէկու մը թող չտուաւ , բայց միայն Պետրոսը եւ Յակոբոսը եւ Յակոբոսի եղբայրը՝ Յովհաննէսը : 38 Ժողովրդապետին տունը կուգայ , եւ շատ բազմութիւն ու լալկաններ եւ շատ ազմուկ կը տեսնէ : 39 Եւ ներս մտնելով՝ կ'ըսէ անոնց . «Ինչու խռոված էք եւ կուլաք . մանուկը մեռած չէ , հապա կը քնանայ» : 40 Եւ զանի կը ծաղրէին . եւ ան ամէնքը դուրս հանելով , իր հետ կ'առնու մանուկին հայրը ու մայրը եւ անոնք որ իր հետ էին , եւ կը մտնէ ուր մանուկը կը դրուէր : 41 Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ կ'ըսէ անոր . «Տալիթա , կումի» . որ կը թարգմանուի . «Աղջիկ , (քեզի կ'ըսեմ) , ոտքի եղիր» : 42 Եւ իսկոյն աղջիկն ոտքի ելաւ եւ կը քայլէր , որովհետեւ տասներկու տարեկան էր . եւ մեծ զարմանքով զարմացան : 43 Եւ անոնց խափել կը պատուիրէր որ մէկը չգիտես նոյ զայն . եւ ըսաւ որ անոր ուտելիք տան :

Ք Լ Ա Ռ Խ Թ Զ.

*1 Եւ անկէ ելաւ, իր գաւառը եկաւ. եւ անոր հետ կ'երթային իր աշակերտները: 2 Եւ եզաւ որ շաբաթօրը ժողովրդարանին մէջ սկսաւ սովրեցնել. եւ շատերն երբ կը լսէին, անոր վարդապետութեանը վրայ կը զարմանային ու կ'ըսէին. «Այս բանն ո՞ւրսկէց ունի աս, կամ այս ի՞նչ իմաստութիւն է որ ասոր տրուած է, որ ասանկ հրաշքներ ասոր ձեռքով կ'ըլլան»: 3 Ասի հիւանին եւ Մարիամին որդին չէ՞, Յակոբին եւ Յովսէին, Յուդային եւ Սիմօնին եւրայրը. եւ ասոր քոյրերը հոս մեր քովը չե՞ն»: Եւ անոր վրայ կը գայթակղէին: 4 Եւ կ'ըսէ անոնց. «Մարգարէ մը անպատիւ չէ, բայց եթէ իր գաւառին եւ ազդատոհմին եւ իր տանը մէջ»: 5 Եւ չէր կրնար հոն եւ ոչ մէկ հրաշք ընել. միայն թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք դնելով կը բժշկէր զանոնք: 6 Եւ անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար:

7 Եւ գաւառններուն շուրջը կը պտտէր եւ կը սովրեցնէր: Եւ տասներկուքը իր քով կանչեց, եւ սկսաւ զանոնք զոյգ զոյգ դրկել, եւ անոնց կուտար պիղծ ոգիներու վրայ իշխանութիւն: 8 Եւ պատուիրեց անոնց որ բան մը չառնուն ճամբու համար, բայց միայն թէ գաւազան մը. ոչ պարկ, ոչ հաց, ոչ պղինձ գօտիներու մէջ. *9 Հապա հողաթափներ հագնիլ. «Եւ կրկին զգեստներ մի՛ հագնիք». կ'ըսէ: 10 Եւ կ'ըսէր անոնց. «Որ տուն որ մտնէք, հոն կեցէք, մինչեւ որ հոնկէ ելլէք»: 11. Եւ որոնք որ ձեզ չընդունին եւ ձեզի մտիկ չընեն, երբ

1 — 6 Յիսուս կ'արհամարհուի վերստին ի Նսագարէն (Մատթ. ԺԳ. 53 — 58: Ղուկ. Գ. 2 — 20):

7 — 13 Առաքելը կը դրկուի (Մատթ. Ժ. 1 — ԺԱ. 1: Ղուկ. Թ. 4 — 6):

9. Քաւազան եւ հողաթափ հայժայժելու հոգն ունենալու չէին Առաքելայք, այլ կը թոյլատրուէին զայնս կրել, եթէ արդէն ունին. եթէ չունէին, ըստ Մատթէոսի եւ Ղուկասի գաւազանի ու կօշիկի համար ժամուկաճառ ըլլալու չէին:

հոնկէ ելլէք, ձեր ոտներուն փոշին թոթուեցէք անոնց վկայութիւն ըլլալու համար): 12 Եւ ելլելով կը քարոզէին որ ապաշխարեն: *13 Եւ շատ դեւեր կը հանէին, եւ շատ հիւանդներ իւղով կ'օծէին եւ զանոնք կը բժըկէին:

*14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց, վասն զի անոր անունը յայտնի եղաւ, եւ կ'ըսէր թէ «Յովհաննէս մկրտիչ մեռելներէն յարութիւն առաւ, եւ անոր համար անով հրաշքներ կ'ըլլան»: 15 Ուրիշներ կ'ըսէին թէ «Նիլիան է»: ուրիշներն ալ թէ «Մարգարէ, կամ թէ մարգարէներէն մէկուն պէս»: 16 Երբ Հերովդէս լսեց, կ'ըսէ. «Յովհաննէսն է աս, որուն ես գլուխը կտրեցի. աս ան է, մեռելներէն յարութիւն առաւ»: 17 Որովհետեւ Ֆաւր դրկեց եւ Յովհաննէսը բռնեց, եւ կապեց զանի եւ բանտին մէջ դրաւ իր Փիլիպպոս եղբօր Հերովդիա կնոջը համար, որովհետեւ ան զանի իրեն կին առաւ: 18 Վասն զի Յովհաննէս կ'ըսէր Հերովդէսին թէ «Օրինաւոր չէ որ դու եղբօրդ կինը առնուս»: 19 Եւ Հերովդիա անոր դէմ ոխ նէր, եւ կ'ուզէր սպաննել զանի եւ չէր կրնար: 20 Վասն զի Հերովդէս Յովհաննէսէն կը վախնար, որովհետեւ զանի սուրբ եւ արդար մարդ գիտէր եւ անորմէ կ'ակնհաճէր եւ անորմէ լսելով շատ բան կ'ընէր, եւ քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր: 21 Երբ դիպուկ օր մը եղաւ, եւ Հերովդէս իր ծննդեան օրը ընթրիք կուտար իր նախարարներուն եւ հազարապետներուն եւ Գալիլեացի մեծամեծներուն, 22 եւ Հերովդիայի աղջիկն երբ ներս մտաւ եւ խաղաց, Հերովդէսի եւ հանդիսականներուն հաճելի եղաւ, կ'ըսէ թագաւորը աղջկան. «Ինչ խնդրէ ինչ որ կ'ուզես, եւ քեզի տամ»: 23 Եւ շատ անգամ երդում ըրաւ, թէ «Ինչ որ դուն ինչ ուզես,

13. Հիւանդք կ'օծուէին իւղով, որ էր նշան բժշկութեան (Յակ. Ե. 11): Բայց այս օծութիւն պարտաւորիչ չէր, վասնզի Առաքեալք աւելի յաճախ ձեռք դնելով կը բժշկէին, ուստի իրաւամբ մեր եկեղեցին կը մերժէ Վերջին Օծում ըսուած արարողութիւնը, բաւական համարելով հիւանդներու վրայ աղօթելն ու ձեռք դնելը:

14—19. Գլխատուծիւն Յովհաննէս մկրտչի (Մատթ. Ժ 1—12: Զուկ. Թ. 7—9):

պիտի տամ քեզի, մինչեւ անգամ իմ թագաւորութեանս կէսը): 24 Ան դուրս ելլելով կ'ըսէ իր մօրը. «Ի՞նչ ուզեմ». եւ ան կ'ըսէ. «Յովհաննէս մկրտչի գլուխը»: 25 Եւ շուտ մը նորէն թագաւորին քով մանելով՝ կ'ըսէ. «Կ'ուզեմ որ հիմայ իսկոյն ինծի տաս սկուտեղի մը վրայ Յովհաննէս մկրտչի գլուխը»: 26 Եւ թագաւորը շատ տրտմեցաւ, այլ երզումներուն եւ հանդիսականներուն համար չուզեց զանի անարգել, 27 Եւ շուտ մը թագաւորը դահիճ դրկեց, եւ հրամայեց անոր գլուխը բերել. ան ալ գնաց, գլխատեց զանի բանտին մէջ, 28 եւ անոր գլուխը սկուտեղով բերաւ եւ տուաւ աղջկան, եւ աղջիկը տարաւ եւ իր մօրը տուաւ: 29 Երբ անոր աշակերտները լսեցին, եկան. մարմինը առին եւ գերեզմանի մէջ դրին:

³⁰ Եւ առաքեալները Յիսուսին քով ժողովուեցան, եւ պատմեցին անոր ամէնը, ինչ որ ըրին եւ սովորեցուցին: 31 Եւ Յիսուս կ'ըսէ անոնց. «Եկէք դուք առանձին անապատ տեղ մը, եւ քիչ մը հանգչեցէք». որովհետեւ շատեր կային որ կ'երթային եւ կուգային. եւ հաց անգամ ուտելու ժամանակ չունէին: 32 Եւ նաևով առանձին անապատ տեղ մը գացին: 33 Եւ տեսան զանոնք որ կ'երթային, եւ շատերն իմացան. եւ ոտքով բոլոր քաղաքներէն բազմութեամբ հոն կը վազէին, եւ անոնց կը մօտենային: 34 Եւ ելլելով տեսաւ շատ բազմութիւն եւ անոնց վրայ գթաց, որովհետեւ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին: Եւ սկսաւ անոնց սովորեցնել շատ բան: 35 Եւ երբ ժամանակը շատ ուշացաւ, աշակերտները մօտենալով կ'ըսէին. «Այս տեղն անապատ է, երբ դեռ ժամանակ կայ, 36 այդ ժողովուրդները արձկէ, որ երթան բոլորտիքի ագարակներն ու գիւղերը եւ իրենց ուտելիք գնեն, որովհետեւ հոս ուտելու բան չունին»: 37 Ան պատասխան տուաւ եւ կ'ըսէ. «Դուք տուէք ատոնց ուտելիք»: Կ'ըսեն անոր. «Երթանք. գնենք երկու հարիւր դահեկանի հաց, եւ անոնց տանք որ ուտեն»: 38 Կ'ըսէ անոնց. «Ո՞րքան նկանակ ունիք, գացէք. նայեցէք»: Երբ գիտցան, կ'ըսեն անոր. «Հինգ, եւ երկու ձուկեր»:

30—44. Առաքեալը կը վերադառնան եւ կը կերակրուին հինգ հազարը (Մատթ. ԺԳ. 13—21, Դուկ. Թ. 10—17, Յովհ. Զ. 1—14):

39 Եւ հրամայեց որ անոնք կանաչ խոտի վրայ խաւմք խաւմք նստին : 40 Եւ նստան դաս դաս՝ տեղ տեղ հարիւրական եւ տեղ տեղ յիսունական : 41 Եւ հինգ նկանակը եւ երկու ձուկերը առնլով, երկինք նայեցաւ . օրհնեց, նկանակները մանրեց եւ աշակերտներուն տուաւ որ անոնց տան, եւ երկու ձուկերը ամենուն բաժնեց : 42 Կերան եւ կշտացան . 43 Եւ տանն երկու սակառ լեցուն կտորուանքներ վերուցին, եւ այն ձուկերէն ալ : 44 Եւ ուտողներն էին հինգ հազարի չափ էրիկ մարդիկ :

*45 Եւ իսկոյն իր աշակերտներն արտորցուց նաւը մտնել, եւ անորմէ առաջ միւս կողմը՝ Բեթսայիգայ երթալ, մինչեւ որ ինք ժողովուրդները արձրկէ : 46 Եւ անոնցմէ զատուելով լեռը ելաւ աղօթքի կենայու : 47 Եւ երբ իրիկուն եղաւ, նաւը ծովուն մէջ տեղն էր, եւ ինք ցամաքն էր : 48 Եւ տեսաւ զանոնք, որ թի քաշելու ատեն հովէն կը նեղուէին, որովհետեւ հովն անոնց դէմ էր : Եւ գիշերուան չորրորդ պահուն ծովուն վրայէն քաշելով անոնց կուգայ, եւ կ'ուզէր անոնցմէ անցնիլ : 49 Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քալէր, կարծեցին թէ աչքի երեւոյթ բան մըն է, եւ պոռացին, 50 որովհետեւ ամէնքն ալ զանի տեսան եւ շփոթեցան : Եւ ան իսկոյն խօսեցաւ անոնց հետ ու կ'ըսէ . «Քաջ եղէք, ես եմ . մի վախնաք» : 51 Եւ նաւն ելաւ անոնց քով, եւ հովը դադրեցաւ . եւ ալ աւելի իրենց մտքերուն մէջ խիստ ապշած էին եւ շատ կը զարմանային : 52 Որովհետեւ հացին վրայ եղած հրաշքը չիմացան, վասնզի անոնց սիրտը թմրած էր :

53 Եւ երբ միւս կողմը անցան, Գեննեսաքեթի երկիրը եկան : 54 Եւ երբ այն նաւէն ելան, տեղացի մարդիկ-

45. Բեթսայիգա էր քաղաք Յորդանանու եզրը որ կը բաժնէր զայն երկու մասի . ի սկզբան էր գիւղ ձկնորսաբնակ, ուստի Բեթսայիգա կը ծարգմանուի «Տուն ձկանց» : Քրիստոսի ատեն Հերովդէս - Փիլիպպոս . Գաւլոնիտիս գաւառին չորրորդապետը վերածեց զայն քաղաքի եւ կոչեց Յուլիա ի պատիւ զստեր կայսեր Հռովմայ : Այլ սակայն բուն անունը միշտ պահպանուեցաւ (Մատթ. ԺԱ. 20) :

46-56 : Յիսուս ծովուն վրայ կը քալէ (Մատթ. ԺԳ. 22-36 : Յովհ. 2. 15-21) :

ներն խոկոյն զանի ճանչցան : 55 Եւ բարբ զաւառին մէջ հոռ ու հոն վազելով , սկտան մահիճներով հիւանդներ բերել , ուր որ լսէին թէ հոն է : 56 Եւ ուր որ կը մտնէր զիւզերը կամ քաղաքները կամ ագարակները հրապարակներու մէջ կը դնէին ախտածէտները , եւ կ'աղաչէին անոր որ զոնէ անոր հագուստներուն ծայրին դպչին . եւ որոնք որ դպչեցան , բժշկուեցան :

ՔԼՈՒԹ Ե.

¹ Եւ փարիսեցիները ու դպիրներէն մէկ քանինք անոր քով ժողվուեցան որոնք Երուսաղեմէն եկած էին : 2 Եւ աշակերտներէն մէկ քանինքը տեսնելով , որոնք անմաքուր ձեռքով՝ այսինքն չլուացուած հաց կ'ուտէին , բամբասեցին : 3 Որովհետեւ Փարիսեցիները եւ ամէն Հրեայները թէ որ աղէկ մը ձեռք չլուան , հաց չեն ուտեր . վասն զի ծերերու աւանդութիւնը կը պահէին : 4 Եւ չուկայէն գալով՝ թէ որ առաջ չլուացուին , չեն ուտեր . եւ ուրիշ շատ բան կայ , զոր ընդունեցին պահել , գաւաթներու , ամաններու եւ պղնձէ պնակներու եւ անկողիներու լուացումներ : 5 Յետոյ Փարիսեցիները ու դպիրները կը հարցնեն անոր թէ « Ինչու քու աշակերտները ծերերուն աւանդութեան պէս չեն երթար , այլ անմաքուր ձեռքով հաց կ'ուտէին : 6 Ան պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոնց . « Աղէկ մարգարէացաւ Եսայի ձեզի՝ կեղծաւորներուդ համար , ինչպէս որ ըսաւ . « Այս ժողովուրդը չրթունքներով զիս կը պատուէ . եւ անոնց սիրտերը ինէ հեռացած գատուած են . 7 Պարապ տեղը զիս կը պաշտեն , մարդիկներէ պատուիրուած վարդապետութիւններ կը սովորեցունեն : 8 Աստուծոյ պատուէրը թողլով , մարդիկներու աւանդութիւնը կը բռնէք , ամաններու եւ գաւաթներու լուացումներ , եւ ասոնց նման շատ բաներ կ'ընէք » : 9 Եւ կ'ըսէ անոնց . « Աստուծոյ պատուէրը աղէկ կ'արհամարհէք , որ ձեր աւանդութիւնը

1—23. Կը պատարակուին Փարիսեցիներն Յիսուսէն իրենց ուսանողական վարդապետութեանց համար (Մատթ. ԺԵ. 1—20) :

հաստատէք: 10 Որովհետեւ Մովսէս կ'ըսէ. «Հայրդ ու մայրդ պատուէ. եւ ով որ հօր կամ մօր վրայ կը չարախօսէ, մահով թող մեռնի»: 11 Եւ դուք կրսէք. «Թէ որ մէկը հօրը կամ մօրը կ'ըսէ. «Կորբան այսինքն նուէր է այն որ ինէ պիտի շահիս»: 12 Եւ ալ անոր թող չէք տար հօրը կամ մօրը բան մը ընել: 13 Եւ Աստուծոյ խօսքը կ'անարգէք, եւ կ'ընէք ուրիշ շատ բան՝ որ ասոր նման է»:

14 Եւ բոլոր ժողովուրդն իրեն կանչելով, կ'ըսէ անոնց. «Ամէնքդ լսեցէք ինձի եւ իմացէք: 15 Իրսէն մարդուն մէջ մտած բան մը զանի չկրնար պղծել, հապա ինչ որ կ'ելլէ անորմէ, ան է որ մարդը կը պղծէ: 16 Ով որ լսելու ականջ ունի, թող լսէ»:

17 Եւ երբ ամբօխէն բաժնուելով տուն մտաւ, աշակերտներն անոր կը հարցնէին այն առակին համար: 18 Եւ կ'ըսէ անոնց. «Դ՞ուք ալ ատանկ անխելք էք. չէ՞ք իմանար թէ ամէն բան որ դրսէն մարդուն ներսի դին կը մտնէ, չկրնար զանի պղծել. 19 Որովհետեւ չէ թէ անոր սրտին մէջ կը մտնէ, հապա փորը, եւ դուրս կ'ելլէ. եւ կերածները կը մաքրէ: 20 Եւ կ'ըսէր թէ «Ինչ որ մարդէն կ'ելլէ, այն մարդը կը պղծէ: 21 Վասն զի ներսի դիէն՝ մարդուն սրաէն շարութեան խորհուրդներ կ'ելլեն, շնութիւններ, պոռնկութիւններ, 22 Գողութիւններ, սպաննութիւններ, ագահութիւններ, շարութիւններ, նենգութիւններ, գիջութիւններ, չարաչքութիւններ, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: 23 Այս ամէն շարիքները ներսէն կ'ելլեն եւ մարդը կը պղծեն»:

24 Եւ անկէ ելլելով՝ Տիւրոսի եւ Սիդոնի սահմանները եկաւ, եւ տուն մտնելով չէր ուզիր մէկու մը յայտնուիլ, եւ չիրցաւ ծածկուիլ: 25 Կին մը որուն աղջիկը պիղծ ոգիէն կը նեղուէր, անոր վրայով լսեց եւ եկաւ անոր առջեւ ինկաւ: 26 Եւ կնիկը հեթանոս էր՝ Փիւնիկեցի, ազգով Ասորի. եւ կ'աղաչէր անոր որ դեռն իր աղջիկէն հանէ: 27 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. «Թող սուր որ մանուկները առաջ կշտանան, վասն զի աղէկ չէ մանուկներուն հացը առնուլ եւ շուներուն նետել»: 28 Ան պա-

տասխան տուաւ ու կ'ըսէ . «Տէր, եւ շուները մանուկներու սեղանին փշրանքներէն կը կերակրուին» : 29 Եւ կ'ըսէ անոր . «Այդ խօսքիդ համար գնա . քու աղջիկէդ դեւն ելաւ» : 30 Իր տունը գնաց եւ գտաւ դեւն ելած եւ աղջիկը որ անկողնին վրայ ինկած կը դրուէր :

*31 Եւ ուրիշ անգամ Սիդոնի եւ Տիւրոսի սահմաններէն ելլելով, Գալիլեացիներուն ծովեզրը եկաւ Դեկապոլիսի սահմաններուն մէջէն : 32 Եւ անոր առջեւ բերին խուլ եւ համր մը, եւ կ'աղաչէին որ ձեռք դնէ անոր վրայ : *33 Եւ բաղմութեան մէջէն զանի մէկդի առնելով, իր մատները անոր ականջին խոթեց եւ հոն թքաւ . եւ անոր լեզուէն բռնեց, *34 երկինք նայեցաւ, հառաչեց ու կ'ըսէ . «Եփփաթա, այսինքն բացուէ» : 35 Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան, եւ անոր լեզուին կապերը քակուեցան եւ շիտակ կը խօսէր : 36 Եւ պատուիրեց անոնց որ մէկու մը չըսեն . եւ որչափ որ ան անոնց կը պատուիրէր, անոնք ալ աւելի կը քարոզէին . 37 Եւ ալ աւելի կը զարմանային եւ կ'ըսէին . «Ամէն բան աս աղէկ ըրաւ, որովհետեւ խուլերուն լսել կուտայ եւ համբերուն խօսիլ» :

ՔԼՈՒԾ Ը :

*1 Այն օրերը նորէն շատ ժողովուրդ կար, եւ ուտելու բան մը չունէին . իւր աշակերտները կանչեց եւ

31—37. Բժշկութիւն խուլ - համրին ի Դեկապոլիս, զոր Մատթէոս չիշտատակեր, այլ կը գրէ շատ կոյրեր . կաղեր եւայլն (ԺԾ. 29—31) :

33. Յիսուս մեկուսի ժողովուրդէն կը բժշկէ, ցոյց տալու համար թէ երբեմն Աստուած իւր բարիքը կը շնորհէ մեզ, մեր առանձնութեանը մէջէ Դպչելով կը բժշկէ այս անգամ հաստատելու համար թէ բժշկական զօրութիւնն իրմէ է :

34. Յերկին նայելով կը բժշկէ, որով կը խրատէ զմեզ, մեծագոյն բարենպաստակ գործերու ձեռնարկելէ առաջ՝ Աստուծոյ օղնութիւնը խընդրել : Յիսուս կը հառաչէ, այս էր նշան իւր արգաստանացն առ խուլ - համր մարդկութիւն :

1—9. Կը կերակրուին չորս հազարք (Մատթ. ԺԾ. 32—39) :

կ'ըսէ անոնց . 2 Այդ ժողովուրդին վրայ կը մեղքընամ , որովհետեւ հիմայ երեք օր է որ ինձի հետ են , եւ չունին ուտելու բան . 3 Եւ թէ որ զանոնք իրենց տուները անօթի արձկեմ , ճամբան պիտի մարմրին . որովհետեւ շատեր հեռու տեղէ եկած են : 4 Անոր աշակերտները պատասխան տուին անոր . « Այս անապատին մէջ զանոնք ինչպէս կրնաս հացով կշտացնել » : 5 Եւ անոնց կը հարցընէր . « Քանի նկանակ ունիք » . եւ անոնք կ'ըսեն . « Եօթը » : 6 Եւ ժողովուրդին հրամայեց որ գետնի վրայ նստի . եւ եօթը նկանակը առնելով գոհացաւ , կտրեց եւ աշակերտներուն կուտար որ տան . եւ ժողովուրդին առջեւ դրին : 7 Եւ քիչ ձուկեր ունէին , զայն ալ օրհնեց եւ հրամայեց տալ : 8 Կերան ու կշտացան . եւ եօթը զամբիւղ հացի կտորներ վերուցին : 9 Եւ ուտողները չորս հազար էին . եւ զանոնք արձկեց :

*10 Եւ իսկոյն աշակերտներուն հետ մէկտեղ նաւ մը տնելով Դաղմանունեայի կողմերը եկաւ : 11 Փարիսեցիներն եկան եւ անոր հետ սկսան վիճել , եւ զանի փորձելով երկնքէն նշան կ'ուզէին : 12 Եւ իր ոգւովն բարկացաւ ու կ'ըսէ . « Ի՞նչ կայ որ այս աղգին նշան պիտի տրուի » : 13 Թողուց զանոնք , նորէն նաւ մտաւ եւ անդիի կողմը գնաց :

*14 Եւ հաց առնուլ մոռցան , եւ մէկ նկանակ միայն ունէին նաւին մէջ իրենց հետ : 15 Եւ կը պատուիրէր անոնց եւ կ'ըսէր . « Փարիսեցիներու խմորէն եւ Հերովդիանոսներու խմորէն զգուշացէք » : 16 Եւ իրարու հետ կը խորհէին եւ կ'ըսէին թէ « Որովհետեւ հացեր չունինք » : 17 Յիսուս գիտցաւ եւ կ'ըսէ անոնց . « Ձեր սրտերուն մէջ ի՞նչու կը խորհիք , թերահաւատներ , թէ հաց չունիք . զեռ չէք իմանար եւ չէք յիշեր . ձեր սիրտերն ապշուած թիւն ունի . 18 Աչքեր ունիք եւ չէք տեսներ , ականջներ ունիք եւ չէք լսեր , եւ զեռ չէք իմանար , եւ չէք յիշեր : 19 Երբ հինգ նկանակը հինգ հազարներուն քուրճ , քանի՞

10—13. Երկրորդ անգամ Յիսուսէն նշան կը խնդրուի (Մատթ. ԺԶ. 1—4) :

14—21. Յորդոյ զգուշումնան ի խմորոյ Փարիսեցւոց և Հերովդիանոսաց (Մատթ. ԺԶ. 5—12) :

ասակաւ լեցուն կտորներ վերուցիք», եւ կ'ըսեն. «Տար-
ներկու»: 20 «Եւ երբ եօթը նկանակը չորս հազարներուն
տոկոսի, քանի զամբիւղ լեցուն կտորներ վերուցիք». եւ
անոնք կ'ըսեն. «Եօթը»: 21 Եւ կ'ըսէ անոնց. «Ուրեմն
ի՞նչու չէք իմանար»:

*22 Բեթսայիդա կուգան. անոր առջեւ կոյր մը կը բե-
րեն, եւ կ'աղաչէին անոր որ անոր դպչի: 23 Եւ կոյրին
ձեռքէն բռնելով գիւղէն դուրս հանեց, աչքերուն թքաւ
եւ անոր վրայ ձեռք դրաւ. եւ կը հարցունէր անոր թէ
բան մը կը տեսնէ: 24 Բացուեցաւ, եւ կ'ըսէր. «Մար-
դիկներ կը տեսնեմ, որոնք իբր թէ ծառեր կը պտըտին»:
25 Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, բացուեցաւ,
եւ կը տեսնէր. բժշկեցաւ եւ ամէն բան համարձակ կը
տեսնէր: 26 Զանի իւր տունը արձկեց եւ կ'ըսէ. «Այդ
գիւղը մի՛ մաներ, այլ տուն գնա. եւ երբ գիւղը մասնաւ,
մէկու մը մի ըսեր դիւղին մէջ»:

*27 Յիսուս իր աշակերտներուն հետ մէկտեղ Փիլիպ-
պեան Կեսարիայի գիւղերն ելաւ, ճամբան կը հարցընէր
իր աշակերտներուն ու կ'ըսէր. «Մարդիկներն ինձի հա-
մար ի՞նչ կ'ըսեն թէ եմ»: 28 Անոնք պատասխան տուին
ու կ'ըսեն. «Յովհաննէս մկրտիչը», ուրիշներն՝ «Եզրիան»,
եւ ուրիշներն՝ «Մարգարէներէն մէկը»: 29 Կ'ըսէ անոնց.
«Իսկ դուք ինձի համար ի՞նչ կ'ըսէք թէ եմ». պատաս-
խան տուաւ Պետրոս ու կ'ըսէ անոր. «Քրիստոսը դուն
ես»: 30 Եւ անոնց խափել պատուիրեց որ անոր համար
մէկու մը չ'ըսեն: 31 Եւ սկսաւ անոնց սովորեցունել թէ
«Որդի մարդոյ պէտք է որ շատ մը չարչարանքներ կրէ,
եւ երէցներէն, քահանայապետներէն եւ դպիրներէն ա-
նարգուծի ու մեռնի եւ երեք օրէն յարութիւն առնու»: 32
Եւ այս խօսքը յայտնի խօսեցաւ: Եւ Պետրոս զանի մէկ-

22—26. Կոյրը կը բժշկուի. բայց ոչ անմիջապէս, վասն զի կուրին
հաւատն էր դեռ տկար, ուստի կը տեսնէր նա ի ոկզբան ազօտ, այսինքն
չէր կրնար որոշել թէ մարդիկ էին բաղդ թէ ծառերը: Յիսուսի կրկին հար-
ցումը թէ «Կը տեսնես» շարժել էր կուրին հաւատքը:

27—39. Դաւանուծիւն Պետրոսի և յայտարարուծիւն Յիսուսի թէ
պիտի մեռնի ու յարուծիւն տանու (Մատթ. ԺԶ. 13—28: Դուկ. Թ. 18
—27):

դի առնելով սկսաւ զանի յանդիմանել : 33 Եւ ան դառնալով տեսաւ աշակերտները , յանդիմանեց Պետրոսը ու կ'ըսէ . « Ետիս գնա , Սատանայ , որովհետեւ Աստուծոյ բաները չես խորհիր , այլ մարդիկներունը » :

34 Եւ ժողովուրդը աշակերտներուն հետ մէկտեղ իրեն կանչելով կ'ըսէ անոնց . « Թէ որ մէկն իմ ետեւէս գալ կ'ուզէ , իր անձը թող ուրանայ եւ իր խաչը վերցընէ ու իմ ետեւէս գայ : 35 Վասն զի ով որ իր անձը ապրեցընել կ'ուզէ , զանի պիտի կորսնցընէ . եւ ով որ իր անձը աւետարանին համար կը կորսնցընէ , զանի պիտի ապրեցընէ : 36 Ի՞նչ օգուտ է մարդու մը , թէ որ ամբողջ աշխարհ շահի , եւ իր անձը տուժէ : 37 Վասն զի մարդ իր անձին փոխարէն ի՞նչ պիտի տայ : 38 Ով որ ամօթ համարի զիս եւ իմ խօսքերս այս շնացող եւ մեղաւոր ազգին մէջ , եւ Որդի մարդոյ զսնի ամօթահար պիտի ընէ , երբ իւր Հօրը փառքով եւ սուրբ հրեշտակներուն հետ գայ » : 39 Եւ կ'ըսէ անոնց . « Ըջմարիտ կ'ըսեմ ձեզի թէ հոս եղողներէն մէկ քանին մահուան համը պիտի չառնուն , մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը զօրութեամբ եկած տեսնեն » :

ԳԼՈՒԽ Թ.

*1 Վեց օրէն ետքը Յիսուս իր հետ կ'առնու Պետրոսը եւ Յակոբոսը ու Յովհաննէսը , եւ զանոնք առանձին բարձր լեռ մը կը հասնէ , եւ անոնց առջեւ այլակերպեցաւ : 2 Եւ անոր լաթերը եղան փայլուն խիտ ճերմակ , անանկ որ աշխարհի թափիչներ չեն կրնար այնպէս ճերմկեցընել : 3 Եւ անոնց երեւցաւ Մովսէսին հետ Եղիան . եւ Յիսուսի հետ կը խօսէին : 4 Պետրոսս պատասխան տուաւ եւ կ'ըսէ Յիսուսին . « Վարդապետ , աղէկ է մեզի հոս մնալ . եւ երեք վրան շինենք . մէկը քեզի եւ մէկը Մովսէսին ու մէկը Եղիային » . վասն զի չէր գիտեր թէ ինչ կը խօսէր , որովհետեւ վախցած էին : 6 Եւ ամպ

1—12. Այլակերպութիւն Յիսուսի (Մատթ. ԺԷ. 1—13 , Դուկ. Թ. 28—36) :

մը անոնց վրայ շուք եղաւ . այն ամպէն ձայն եղաւ . ու կ'ըսէ . «Ատ է իմ սիրելի Որդիս , ատոր մտիկ ըրէք » : 7 Եւ յանկարծ ապրին անդին նայելով՝ մէկը շտեսան , հապա միայն Յիսուսը իրենց հետ : *8 Եւ երբ ան լեռնէն կ'իջնէին , պատուիրեց անոնց որ մէկու մը չ'ըսեն՝ ինչ որ տեսան , բայց եթէ երբ Որդի մարդոյ մեռելներէն յարութիւն առնու : 9 Եւ անոնք այն խօսքը մտքերնուն մէջ կը պահէին եւ իրարու հարցութորձ կ'ընէին թէ մեռելներէն յարութիւն առնուին ի՞նչ է : 10 Հարցուցին անոր եւ կ'ըսեն թէ «Ի՞նչ է այն՝ զոր զպիրները կ'ըսեն թէ «Առաջ Եղիան պէտք է որ գայ» : 11 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . «Եղիան նախ գալով՝ ամէն բան պիտի կարգադրէ . իսկ Որդւոյ մարդոյ համար՝ ինչպէս գրուած է , շատ պիտի շարձարուի ու անարգուի : 12 Սակայն ես կ'ըսեմ ձեզի թէ Եղիան եկաւ , եւ ըրին անոր ինչ որ օւղեցին , ինչպէս որ անոր համար գրուած է » :

13 Եւ աշակերտներուն գալով , անոնց շուրջը բազմութիւն տեսաւ , եւ զպիրները՝ որոնք անոնց հետ կը վիճէին : *14 Եւ իսկոյն երբ բոլոր ժողովուրդը զանի տեսաւ , զարմացաւ . եւ անոր ընդ առաջ վագելով անոր բարեւ կուտային : 15 Եւ հարցուց անոնց թէ «Անոնց հետ ի՞նչ կը վիճէիք» : *16 Ժողովրդեան մէջէն մէկը պատասխան տուաւ եւ կ'ըսէ . «Վարդապետ , իմ որդիս քեզի բերի , որ համբ դեւ ունի : 17 Եւ ուր-որ անոր կը հասնի , գետինը կը զարնէ զանի . եւ կը փրփրի ու ակռաները կը կը կրճրտէ ու կը ցամքի . եւ քու աշակերտներուդ ըսի որ հանեն , եւ չկրցան զանի հանել» : 18 Պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . «Ո՞վ անհաւատ ազգ , մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ , մինչեւ երբ ձեզի պիտի համբերեմ . զանի ինձի բերէք» : 19 Եւ զանի անոր բե-

8. Աստ կ'սկսի ճոն - Բարսեղ իւր ըստ Մարկոսի Աւետարանի մեկնութիւնը :

14. Զարմացան , տեսնելով զուցէ ի դէմս Յիսուսի այլակերպութեան փառաց հետքը , որպէս եղաւ Մովսէսի , երբ իշու Սինա լեռնէն (Ելք ԼԻ. 29—30) :

16—28. Բժշկութիւն սոյն դիւանարի (Մատթ. ԺԷ. 14—20 : Դուկ. Թ. 37—44) :

յել : 39 Որովհետեւ ան որ մեզի հակառակ չէ, մեր կողմն է :
 *40 Եւ ով որ ձեզի գաւաթ մը ջուր խմցնէ այս անուշով
 թէ դուք Քրիստոսին էք, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, իր վարձքը
 պիտի չկորսնցընէ : 41 Եւ ով որ ինձի հաւատացող այս
 պղտիկներէն մէկը գայթակղեցընէ, անոր աւելի աղէկ էր
 որ ջաղացքի քար մը անոր վզէն ձգուէր եւ ծովը նետ-
 ուէր : 42 Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ,
 կտրէ, քենէ ձգէ. որովհետեւ քեզի աւելի աղէկ է յա-
 լիտենական կեանքը խեղ մտնել, քան թէ երկու ձեռք
 ունենալ եւ գեհնը երթալ անչէջ կրակին մէջ, *43 ուր ա-
 նոնց որդը չմեռնիր եւ կրակը չմարիր : 44 Եւ թէ որ
 քու ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ քենէ նետէ.
 աղէկ է քեզի յալիտենական կեանքը կաղ մտնել, քան
 թէ երկու ոտք ունենալ եւ գեհնը իյնալ անմարելի կրա-
 կին մէջ, *45 ուր անոնց որդը չմեռնիր եւ կրակը չմա-
 րիր : 46 Եւ թէ որ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, զայն
 նետէ. աղէկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ արքայու-
 թիւնը մտնել, քան թէ երկու աչք ունենալ եւ գեհնը
 իյնալ, *47 ուր անոնց որդը չմեռնիր եւ կրակը չմարիր :
 *48 Վասն զի ամէն քան աղով պիտի աղուի, եւ ամէն
 զոհ կրակով պիտի աղուի : *49 Աղը աղէկ է. եւ թէ որ աղը
 անհամնայ, ի՞նչով համ պիտի տայ. ուրեմն ձեր անձե-
 րուն մէջ աղ ունեցէք. եւ իրարու հետ խաղաղութիւն
 ըրէք :

40. 42. Խրատ զոհողութեան (Մատթ. Ե. 29—30) : ԺԸ. 6—9) :

43. 45. 47. «Ուր անոնց որդը չմեռնիր և կրակը չմարիր», այսինքն
 չարերուն կակիծն ու տազնապն է յալիտենական :

48. 49. Զոհը կը կատարուի աղով և կրակով, ուրեմն մարդիկ լինե-
 լու են կենդանի զոհ Քրիստոսի համար. երբ գանձն զոհելու. ոգին կը տիրէ
 մեր սրտին մէջ, յայնժամ վերջանալով անմիտ վէճեր կամատելութիւններ,
 կը տիրէ խաղաղութիւնը : Աղով աղուի և մկրտուի կրակով (Մատթ. Գ.
 11 : Ի. 22 : Լուկ. ԺԲ. 49), մահու չափ զոհողութեամբ ապրիլ է, և այս
 կարելի է միայն շնորհօք Հոգւոյն Սրբոյ :

Պ Լ ՈՒ Խ Ժ .

*1. Եւ անկէ ելլելով Հրէաստանի սահմանները կողմայ Թորդանանու անդիի կողմէն . եւ ժողովուրդն անոր քով նորէն կ'երթար անոր քով խռնուելով . եւ ինչպէս որ սովորութիւն ունէր , նորէն կը սովրեցնէր անոնց : 2 Իսկ Փարիսեցիներն անոր մօտեցան , փորձելով կը հարցնէին անոր եւ կ'ըսէին թէ « Արժան է էրիկ մարդուն իր կնիկը արձկել » : 3 Ան պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . « Մովսէս ձեզի ինչ պատուիրեց » : 4 Եւ անոնք կ'ըսեն . « Մովսէս հրաման տուաւ զատուելու գիրը գրել եւ արձկել » : 5 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոնց . « Չիբ խստասրտութեանը համար ձեզի ան պատուէրը գրեց : 6 Բայց արարածներու սկիզբի ատենը արու եւ էգ ըրաւ զանոնք Աստուած ու կ'ըսէ . 7 « Ասոր համար մարդ իւր հայրը եւ իւր մայրը պիտի թողու եւ իր կնիկանը ետեւէն պիտի երթայ » : 8 Եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան . եւ անկէ ետքը երկուք չեն , հապա մէկ մարմին : 9 Ուրեմն զոր Աստուած միաւորեց , մարդ թող չզատէ » : 10 Եւ տանը մէջ նորէն աշակերտները նոյն բանը հարցուցին անոր : 11 Եւ կ'ըսէ անոնց . « Թէ որ մարդ իր կինը արձկէ եւ ուրիշ մը առնու , կը չնայ : *12 Եւ թէ որ կինը իր էրիկէն զատուի , եւ ուրիշ մարդու ըլլայ , կը չնայ » :

*13 Եւ անոր մանուկներ կը մօտեցնէին , որ անոնց վրայ ձեռք դնէ . սակայն աշակերտները կը յանդիմանէին զանոնք բերողները : 14 Երբ Յիսուս տեսաւ , սրդողելով յանդիմանեց զանոնք ու կ'ըսէ . « Այդ մանուկներուն թող տուէք որ ինձի գան , եւ զանոնք մի' արդիւէք . վասն զի ատանկներուն է Աստուծոյ արքայութիւնը : 15 Ծնմարիտ

1-11. Ապոստոլոսի (Մատթ. ԺԹ. 1-12) :

12. Հրէուծիւնը չէր թոյլատրէր կնոջ թողուլ իւր ամուսինը , մինչ չէր այնպէս հեծանոսականը , որ կը թոյլատրէր կնոջ եւս : Յիսուս անո այր ու կին ամուսիններու հաւասարապէս կ'արգիլէ :

13-16. Մանկտին կ'օրհնուի Քրիստոսէ (Մատթ. ԺԹ. 13-15 : Լուկ. ԺԸ. 15-17) .

կ'ըսեմ ձեզի, ով որ Աստուծոյ արքայութիւնը տղու մը պէս չընդունի, պիտի չմտնէ անոր մէջ»: 16 Եւ զանոնք գիրկը առնելով ձեռք դրաւ եւ օրհնեց զանոնք:

*17 Եւ անոր անկէ ճամբայ ելլելուն պէս, հարուստ մէկը վագելով ծունկ կը չոքէր, կը հարցնէր անոր ու կ'ըսէր. «Բարի վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտեանական կեանքը ընդունիմ»: 18 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. «Ի՞նչու ինձի բարի կ'ըսես. բարի մէկը չկայ, բայց եթէ միայն Աստուած: 19 Պատուիրանքները գիտե՛ս. Շնութիւն մի՛ ընե՛ր: Մի՛ սպաննե՛ր, Մի՛ գողնա՛ր, Սուտ վկայութիւն մի՛ ընե՛ր, Հայրդ եւ Մայրդ պատուէ՛»: 20 Ան պատասխան տուաւ եւ կ'ըսէ. «Վարդապետ, այդ ամէնը տղայութենէս ի վեր ըրի, ուրեմն ի՞նչ պակաս է»: 21 Եւ անոր նայելով՝ զանի սիրեց, ու կ'ըսէ անոր. «Քեանէ բան մը պակաս է. թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա, ինչ որ ունիս ծախէ եւ աղքատներուն տուր, եւ երկինքը զանձ պիտի ունենաս, եւ ան խաչը եւ իմ ետեւէս եկուր»: 22 Եւ ան խոտոռելով այն խօսքին վրայ՝ տրտում գնաց, վասն զի շատ ունեւոր էր: 23 Եւ Յիսուս ասդին անդին նայելով՝ կ'ըսէ աշակերտներուն. «Ստացուածներ ունեցողներուն ո՛րքան դժուար է Աստուծոյ արքայութեան մէջ մտնել»: 24 Եւ աշակերտները անոր խօսքերուն վրայ զարմացած էին. իսկ Յիսուս պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ. «Որդեակներ, ո՛րչափ դժուարին է հարստութեան վտահոդներուն Աստուծոյ արքայութեան մէջ մտնել: 25 Դիւրին է ուղտին ասեղի ծակէն անցնիլը, քան թէ հարուստին Աստուծոյ արքայութեան մէջ մտնելը»: 26 Եւ անոնք ալ աւելի կը զարմանային եւ իրարու կ'ըսէին. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ»: 27 Յիսուս անոնց նայելով կ'ըսէ. «Այդ՛ մարդիկներու համար անկարելի է, բայց ոչ Աստուծոյ համար»: 28 Պետրոս սկսաւ անոր ըսել. «Ահա մենք ամեն բան թողուցինք եւ քու ետեւէդ եկանք»: 29 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. չկայ մէկը որ թողուց տունը կամ եղբայրները կամ քույրերը

17-31. Խրատ առ հարուստ ոմն և առ աշակերտս (Մատթ. ԺԹ. 16-30; Լուկ. ԺԸ. 18-30):

կամ հայրը կամ մայրը կամ որդիները կամ աղարակներն ինձի կամ աւետարանին համար, 30 թէ հարիւրապատիկը պիտի չառնու տունէր եւ եղբայրներ եւ քոյրեր եւ մայրեր եւ որդիներ եւ ազգականներ հիմա այս ժամանակիս մէջ հալածանքով մէկտեղ, եւ գալիք աշխարհին մէջ յաւիտենական կեանքը: 31 Որովհետեւ շատ առաջիններ վիրջին պիտի ըլլան եւ վերջիններն առաջին»:

*32 Եւ երբ Երուսաղէմ կ'ելլէին եւ ճամբուն մէջ էին, Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար, եւ հետը գացողները զարմացած էին եւ կը վախնային: Եւ նորէն տասներկուքը առանձին առնելով, սկսաւ ըսել անոնց ինչ բաներ որ անոր պիտի պատահէին. 33 թէ «Ահա Երուսաղէմ կ'ելլինք, եւ Որդի մարդոյ պիտի մատնուի զպիրներու եւ քահանայապետներու. եւ զանի մահուան պիտի դատապարտեն, եւ զանի հեթանոսներուն պիտի մատնեն: 34 Եւ զանի պիտի ծաղրեն եւ զանի պիտի ծեծեն, եւ անոր պիտի թքեն եւ պիտի սպաննեն, եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնու»:

*35 Եւ անոր քով կուգան Յակոբոս եւ Յովհաննէս՝ Զեբեդեայի որդիները, եւ կ'ըսեն անոր. «Վարդապետ, կ'ուզենք որ ինչ որ խնդրենք քեռէ, մեզի ընես»: 36 Եւ ան կ'ըսէ անոնց. 37 «Ի՞նչ կ'ուզէք ինչ որ ձեզի ընես»: Եւ անոնք կ'ըսեն անոր. «Մեզի հրամայէ որ նստինք քու փառացոյ մէջ մենչէ մէկը քու աջ կողմդ եւ միւսը ձախ կողմդ»: 38 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոնց. «Զէք գիտեր թէ ինչ կ'ուզէք. կրնա՞ք խմել այն բաժակը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտուիլ, որով ես պիտի մկրտուիմ»: 39 Իւ անոնք կ'ըսեն անոր. «Կրնանք»: Եւ Յիսուս կ'ըսէ անոնց. «Այն բաժակը որ ես պիտի խմեմ, խմեցէք, եւ այն մկրտութիւնով, որով ես պիտի մկրտուիմ, մկրտուեցէք. 40 սակայն իմ աջ կամ ձախ կողմս նստեցնեն՝ ինձի չէ որոշ, հապա որոնց որ պատրաստուած է»: 41 Եւ տասները զայն լսելով, սկսան Յակովբին եւ Յովհաննէսին

32-34. Վերստին ղուշակութիւն Յիսուսի իւր մահուանն ու յարութեանը համար (Մատթ. Ի. 17-19; Ղուկ. ԺԸ. 31-34):

35-45. Փառասէր խնդրուած Զեբեդեայի եղբայր (Մատթ. Ի. 20-28):

բարկանալ : 42 Եւ Յիսուս զանոնք իրեն կանչեց , եւ կ'ըսէ անոնց . « Գիտէք որ հեթանոսներու իշխան կոչուածները անոնց կը տիրեն . եւ անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց : 43 Բայց ձեր մէջ անանկ պիտի չըլլայ . ով որ ձենէ մեծ ըլլալ ուզէ , ձեր սպասաւորը թող ըլլայ : 44 Եւ ով որ ձենէ առաջին ըլլալ ուզէ , ան ամենուն ծառայ թող ըլլայ : 45 Որովհետեւ Որդի մարդոց ծառայութիւն առնելու չեկաւ , այլ հապա ծառայելու եւ իւր անձը շատերուն համար փրկանք տալու » :

*46 Եւ Երիքով եկան . եւ աշակերտներով ու շատ ժողովրդով Երիքովէ ելլելու ատեն , Տիմէոսի որդի կոյր Բարտիմէոս ճամբուն քով կը նստէր մուրացկան : 47 Երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին է , սկսաւ պոռալ եւ ըսել . « Դաւթի որդի Յիսուս , ինձի ողորմէ » : 48 Եւ շատեր անոր կը սաստէին որ լռէ . եւ ան ալ աւելի կը պոռար . « Դաւթի որդի , ինձի ողորմէ » : 49 Յիսուս կանկ առաւ եւ հրամայեց զանի կանչել . կը կանչեն կոյրը ու կ'ըսեն անոր . « Սիրտ սա , ելիր . քեզ կը կանչէ » : 50 Եւ ան իր լաթերը ձգելով , ելաւ եւ Յիսուսին եկաւ : 51 Յիսուս անոր պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի » . կոյրը կ'ըսէ անոր . « Վարդապետ , թող բացուին աչքեր » : 52 Եւ Յիսուս կ'ըսէ անոր . « Գնա , քու հաւատքդ քեզ բժշկեց » . եւ իսկոյն բացուեցան , եւ ճամբան անոր ետեւէն կ'երթար :

ԳԼՈՒԹ ԺԱ.

*1 Եւ երբ Երուսաղէմի մօտեցան Ձիթենեաց լեռան Բեթփագէի եւ Բեթանիայի մօտ , աշակերտներէն երկուքը կը զրկէ , 2 ու կ'ըսէ անոնց . « Գացէք այդ գիւղը , որ ձեր դէմն է , եւ նոյն ատեն երբ անոր մէջ մտնէք , աւանակ մը կապուած կը գտնէք , որուն վրայ մարդիկներէն մէկը

46-52. Բժշկութիւն կուրին յերիքով (Մատթ. Ի. 29-34 : Ղուկ. ԺԶ. 35-43) :

1-11. Յաղթական մուտն Յիսուսի յերուսաղէմ (Մատթ. ԻԱ. 1-11 : Ղուկ. ԺԹ. 29-44 : Յովհ. ԺԲ. 12-19) :

չէ նստած, քակեցէք զանի ու բերէք: 3 Եւ թէ որ մէկը ձեզի ըսէ թէ « Այդ աւանակը ի՞նչու կը քակէք ». ըսէք թէ « Իր Տէրոջը պէտք է. եւ անմիջապէս զայն հոս պիտի զրկէ »: 4 Գացին եւ գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրան քով կապուած եւ քակեցին զայն: 5 Եւ մէկ քանինք որոնք հոն էին, կ'ըսեն անոնց. « Ի՞նչ կ'ընէք. ի՞նչու այդ աւանակը կը քակէք »: 6 Եւ անոնք կ'ըսեն անոնց, ինչ որ Յիսուս ըսաւ. եւ անոնց թող տուին: 7 Աւանակը Յիսուսին կը բերեն. եւ անոր վրայ լաթեր կը ձգեն. եւ անոր վրայ նստաւ: 8 Եւ շատերն իրենց հագուստները ճամբուն վրայ կը փռէին, եւ ուրիշներ ծառերու ճիւղեր կը կտրէին եւ ճամբուն վրայ կը տարածէին: 9 Եւ որոնք որ առջեւէն ու ետեւէն կ'երթային, կը պռռային ու կ'ըսէին. 10 « Ովասննա Աստուծոյ. օրհեալ ես դու, որ Տիրոջը անունովը կուգաս. մեր Դաւիթ հօր այդ թագաւորութիւնն, որ եկած է, օրհնեալ ըլլայ. խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս »: 11 Եւ Յիսուս Երուսաղէմ ու տաճարը մտաւ, եւ ամէն կողմ դիտեց. եւ որովհետեւ իրիկուն եղած էր, տասներկու քին հետ մէկտեղ Բեթանիա ելաւ:

*12 Եւ յաջորդ օրը երբ Բեթանիայէն կ'ելլէին, անօթեցաւ: 13 Հեռուէն թզենի մը տեսաւ տերեւոտ. եւ եկաւ որ բան մը գտնէ հոն. եւ երբ անոր մօտ եկաւ, բան մը չգտաւ տերեւներէն զատ, վասնզի թուղի ժամանակ չէր: 14 Պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոր. « Յաւիտեան քինէ մէկը ակ պտուղ թող չուտէ ». եւ անոր աչակերտները կը լսէին:

*15 Երուսաղէմ եկան. եւ տաճարը մտնելով՝ վաճառականները ու գնողները որոնք տաճարին մէջ էին, սկսաւ դուրս հանել, եւ ստակ փոխողներուն սեղանները եւ աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց. 16 եւ չէր թողուր որ մէկը անօթ մը տաճարին մէջ մտցընէ: 17 Եւ կը սովրեցնէր ու կ'ըսէր անոնց. « Գրուած է. « Իմ տունս բոլոր հեթանոսներուն աղօթքի տուն պիտի կոչուի, եւ դուք զատի աւագակներու այր ըրիք »: 18 Քա-

12-14. Թզենին կ'անիծուի (Մատթ. ԻԱ. 18) :
 15-19. Տաճարը կը սրբուի (Մատթ. ԻԱ. 12 13. Ղուկ. ԺԹ. 45-48) :

հանայապետները ու դպիրները լսեցին, եւ կ'ուզէին թէ զանի ի՞նչպէս կորսնցնեն, բայց անորմէ կը վախճային. որովհետեւ բոլոր ժողովուրդը անոր քարոզութեան վրայ զարմացած էր: 19 Եւ երբ իրիկուն կ'ըլլար, քաղաքէն դուրս կ'իլլէին:

*20 Եւ երբ առտուն անկէ կ'անցնէին, թզենին իր արմատէն չորցած տեսան: 21 Պետրոս յիշեց ու կ'ըսէ անոր. «Վարգապետ, ահա թզենին որ դուն անիծեցիր, չորցաւ»: 22 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոնց. «Թէ որ Աստուծոյ վրայ հաւատք ունենաք, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, 23 ով որ այս լիբան ըսէ. «Ելիր եւ ծովն ինկիր». եւ իր սրտին մէջ չտարակուսի, հապա հաւատայ թէ ինչ որ ըսէ, կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր, ինչ որ ըսէ: 24 Ասոր համար կ'ըսեմ ձեզի. ամէն բան որուն համար ազօթք ընել ուզէք, եւ հաւատաք թէ կ'առնուք, պիտի ըլլայ ձեզի: 25 Եւ երբ ազօթքի կենաք, ներեցէք թէ որ մէկու մը դէմ բան մը ունիք, որ ձեր Հայրն ալ, որ երկինքն է, ձեզի ձեր յանցանքներուն ներէ: 26 Որովհետեւ թէ որ դուք չներէք, ձեր Հայրն ալ որ երկինքն է, ձեր յանցանքներուն պիտի չներէ»:

*27 Նորէն Երուսաղէմ կուգան, եւ երբ տաճարին մէջ կը պտըտէր, ծերերն ու դպիրներն ու քահանայապետներն անոր կուգան: 28 Եւ կ'ըսեն անոր. «Ի՞նչ իշխանութեամբ այդ բանը կ'ընես, եւ քեզի այդ իշխանութիւնն ո՞վ տուաւ»: 29 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, ինծի պատասխան տուէք. եւ ես պիտի ըսեմ ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բանը: 30 Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր թէ մարդիկներէն. ինծի պատասխան տուէք»: 31 Իրարու հետ կը խորհէին եւ կ'ըսէին. «Թէ որ ըսեմք թէ «Երկինքէն», կ'ըսէ մեզի. «Ուրեմն ինչո՞ւ անոր չհաւատացիրք»: 32 Բայց թէ որ ըսեմք, «Մարդիկներէն». ժողովրդէն կը վախճանք, որովհետեւ ամէնքն ալ գիտէին թէ Յովհաննէս մարգարէ էր»: 33 Պատասխան տուին եւ կ'ըսեն Յիսուսի. «Չենք գիտեր»: Եւ

20-26. Թզենին կը չորնայ (Մատթ. ԻԱ. 19-22):

27-33. Հարցում առ Յիսուս (Մատթ. ԻԱ. 23-32, Ղուկ. Ի. 1-8):

Յիսուս պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ. « Ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բանը »:

ՔԼՈՒԹ ԺԲ.

*1 Եւ սկսաւ անոնց հետ առակներով խօսիլ ու ըսել. « Մարդ մը այգի տնկեց եւ անոր բոլորտիքը ցանկ քաշեց, եւ հնձանի գուռ փորեց եւ աշտարակ շինեց. եւ զայն մշակներու տուաւ եւ հետու երկիր դնաց: 2 Եւ մշակներուն ծառայ մը ղրկեց ժամանակին, որպէս զի ան մշակներէն այգիին պտուղներէն առնու: 3 Ու անոնք բռնելով ծեծեցին զանի եւ պարապ ղրկեցին: 4 Նորէն անոնց ուրիշ ծառայ մը ղրկեց, եւ զանի գլխէն վերաւորեցին ու անարգուած վռնտեցին: 5 Եւ նորէն ուրիշը ղրկեց, եւ զանի սպաննեցին. եւ շատ ուրիշներ ալ զբէջ, որոնց մէկ քանին կը ծեծէին ու մէկ քանին կ'սպաննէին: 6 Յետոյ, սիրելի որդի մը ունէր, ամենէն վերջը զանի ղրկեց անոնց ու կ'ըսէ. « Կարելի է իմ այս որդիէս ամբշնան »: 7 Սակայն երբ մշակները տեսան զանի որ կուգայ, կ'ըսեն իրարու. « Ժառանգորդը աս է, եկէք, զանի սպաննենք, եւ ժառանգութիւնը մեզի թող ըլլայ »: 8 Եւ բռնելով զանի սպաննեցին ու այգիէն դուրս հանեցին: 9 Ուրեմն այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ եւ մշակները պիտի կորսնցընէ, եւ այգին ուրիշներուն պիտի տայ: 10 Եւ դուք այն գրուածը կարդացած չէ՞ք թէ « Վէ՛մը որ շինողները անարդեցին, այն եղաւ անկիւնի գլուխ. 11 Այս տիրոջմէն եղաւ, եւ մեր աչքերուն զարմանալի է: 12 Եւ կ'ուզէին զանի բռնել, բայց ժողովրդէն վախցան, որովհետեւ գիտցան թէ այն առակը անոնց համար քաւ. զանի թողուցին ու գացին »:

*13 Եւ անոր այն Փարիսեցիներէն ու Հերովդիանոսներէն մէկ քանին կը ղրկեն անոր, որ զանի խօսքով որ-

1-12. Առակ չար մշակաց (Մատթ. ԻԱ. 33-46. Ղուկ. Ի. 9-19):

13-17. Պետուժեան տուրք տալու է (Մատթ. ԻԲ. 15-22: Ղուկ. Ի. 20-26):

ասն: 14 Եւ անոնք գալով անոր կը հարցնէին նենգութեամբ ու կ'ըսէին. «Վարդապետ, գիտնե՞ք որ ճշմարիտ ես, եւ քեզի հոգ չէ մէկու մը համար, որովհետեւ մարգիկներուն երեսը չես նայիր, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սովորեցնես. ուրիմն ըսէ մեզ. պէ՞տք է կայսրին տուրք տալ թէ ոչ. տա՞նք թէ չտանք»: 15 Եւ Յիսուս գիտցաւ անոնց կեղծաւորութիւնը, կ'ըսէ անոնց. «Ի՞նչու զիս կը փորձէք, կեղծաւորներ. ինձի զբամ մը բերէք որ տեսնեմ»: 16 Եւ անոնք բերին, եւ կ'ըսէ անոնց. «Այս պատկերը կամ գիրն որո՞ւնն է». եւ անոնք կ'ըսեն. «Կայսրին»: 17 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Գացէ՛ք, կայսրինը կայսրին տուէ՛ք, եւ Աստուծոյն՝ Աստուծոյ»: Եւ անոր վրայ զարմացան:

*18 Սաղուկեցիներն անոր կուգան, որոնք կ'ըսեն թէ «Յարութիւն չկայ». կը հարցնէին անոր ու կ'ըսէին. 39 «Վարդապետ, Մովսէս մեզի գրեց թէ «Որուն որ եղբայրը մեռնի ու կին թողու եւ որգի չթողու. թող առնու անոր եղբայրն անոր կինը, եւ իրեն եղբօրը զաւակ հանէ»: 20 Արդ՝ մեր մէջ եօթը եղբայրներ կային. առաջինը կին առաւ ու մեռաւ ու զաւակ չթողուց: 21 Եւ երկրորդը զանի առաւ ու մեռաւ, ան ալ զաւակ չթողուց. այսպէս երրորդն ալ առաւ նոյն կինը: 22 Եւ եօթն ալ զանի առնի, եւ զաւակ չթողուցին, ամենէն ետքը կինն ալ մեռաւ: 23 Ուրիմն յարութեան ատեն, երբ յարութիւն առնուն, անոնցով որո՞ւն ան պիտի ըլլայ կին, որովհետեւ եօթն ալ զանի կին առին»: 24 Պատասխան տուաւ Յիսուս անոնց ու կ'ըսէ. «Ասոր համար չէ՞ որ մոլորած էք. փան զի չէք գիտեր Գիրքը եւ Աստուծոյ զօրութիւնը»: 25 Որովհետեւ մեռելներէն երբ յարութիւն առնուն, ոչ մարդիկ կ'ինքեր կ'առնուն, եւ ոչ ալ կ'ինքեր մարդերու կ'ըլլան, հապա պիտի ըլլան հրեշտակներու պէս որոնք երկինքն են: 26 Իսկ մեռելներու յարութեանը համար թէ յարութիւն կ'առնուն, կարդացած չէ՞ք Մովսիսի գիրքին մէջ մօրենիին վրայ, ինչպէս ըսաւ անոր Աստուած. «Ես եմ, կ'ըսէ, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստ-

ուածը եւ ու Յակովբի Աստուածը» : 27 Եւ մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն. ուրեմն դուք շատ մոլորած էք :

*28 Դպիրներէն մէկը մօտենալով մտիկ կ'ընէր անոնց, երբ կը վիճէին. երբ տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր ու կ'ըսէ. « Ո՞ր պատուիրանը առաջինն է » : 29 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. « Ամենէն առաջինն է. Վսէ, Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր մը է » : 30 Եւ քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սիրտէդ, եւ բոլոր քու անձէդ, եւ քու բոլոր մտքէդ, եւ քու բոլոր զօրութիւնէդ ». այս է առաջին պատուիրանը : 31 Եւ երկրորդը ասոր նման. « Քու ընկերդ անձիդ պէս սիրես ». ասոնցմէ մեծ՝ ուրիշ պատուիրան չկայ » : 32 Եւ դպիրն անոր կ'ըսէ. « Աղէկ, վարդապետ, ճշմարտութեամբ ըսիր թէ Աստուած մէկ է, եւ անորմէ զատ ուրիշ չկայ » : 33 Եւ զանի սիրելը բոլոր սրտէ ու բոլոր զօրութենէ եւ բոլոր մտքէ, եւ ընկերը իր անձին պէս սիրելը ողջակէզներէ ու զոհերէ աւելի է » : 34 Եւ Յիսուս տեսնելով թէ իմաստութեամբ պատասխան տուաւ, կ'ըսէ անոր. « Աստուծոյ արքայութենէն հեռու չես ». եւ մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցնել :

*35 Յիսուս պատասխան տուաւ եւ կ'ըսէ, երբ տաճարին մէջ կը սովրեցնէր. « Ի՞նչու համար դպիրները կ'ըսեն թէ Քրիստոսը Դաւթի որդին է » : *36 Եւ Դաւիթ ինքը Սուրբ Հոգիով կ'ըսէ. Տէրը իմ տէրիս ըսաւ. « Աջ կողմս նստէ, մինչեւ որ քու թշնամիներդ քու ոտներուդ պատուանդան ընեմ » : 37 Ուրեմն թէ որ Դաւիթ ինք զանի Տէր կ'անուանէ, ի՞նչպէս անոր որդին կ'ըլլայ » : Եւ շատ ժողովուրդ անոր սիրով մտիկ կ'ընէր :

*38 Եւ իր վարդապետութեանը մէջ սովրեցնելով կ'ըսէր. « Այն դպիրներէն զգուշացէք, որոնք փառաւոր

28-34. Ո՞րն է առաջին պատուիրանը (Մատթ. ԻԲ. 34-40) :

35-37. Յիսուս ինչպէս Դաւթի որդի է (Մատթ. ԻԲ. 41-46; Ղուկ. Ի. 41-44) :

36. Սողմոս ձԹ. 1-6 :

38-40. Խրատ զգուշուծեան կեղծաւորութենէ (Մատթ. ԻԳ. 1-12 ; Ղուկ. Ի. 45-47) :

հագուստներով կ'ուզեն պտրտիլ, շուկաներու մէջ առաջին ողջոյնը կը փնառեն, 39 եւ ժողովարաններու մէջ առաջին աթոռը, եւ ընթրիքներու մէջ առաջին բազմոցները: 40 Որոնք որբեվարիներու տունները կ'ուտեն, եւ պատճառանքներով իրենց աղօթքը կ'երկնցնեն, որպէս զի ալ աւելի դատապարտութիւն ընդունին»:

*41 Յիսուս գանձանակին դէմ կը կենար, կը նայէր թէ ժողովուրդն ի՞նչպէս գանձանակին մէջ ստակ կը ձգէր. եւ շատ հարուստներ շատ բան ձգեցին: 42 Որբեւարի մը եկաւ եւ երկու լումա ձգեց, որ մէկ նաքարակիտ է: 43 Եւ իր աշակերտներն իրեն կանչելով կ'ըսէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այն խեղճ որբեւարին գանձանակը «ո՞չ ձգողներուն ամենէն աւելի ձգեց»: 44 Որովհետեւ ամէնն ալ իրենց աւելորդէն ձգեցին, բայց ան իր չքաւորութենէն, ինչ որ ունէր՝ ձգեց, այնչէս իր բոլոր ապրուստը»:

ԳԼՈՒԽ ԺԳ.

*1 Եւ անոր տաճարէն ելլելու ատեն՝ անոր աշակերտներէն մէկն անոր կ'ըսէ. «Վարդապետ, նայէ՛. ի՞նչ քարեր են եւ ի՞նչ շինուածք»: 2 Պատասխան տուաւ անոր Յիսուս ու կ'ըսէ. «Այդ ամէն շէնքերը կը տեսնե՞ս, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այդ տեղ քար քարի վրայ պիտի չմնայ որ չքայքայուի»:

3 Եւ ան հրք Զեթենեաց լեռը տաճարին դէմ կը նըստէր, Պետրոս եւ Յակոբոս ու Յովհանէս ու Անդրէաս

41-44. Թալմուտէն յայտնի է թէ տաճարին մէջ կային տասներեք գանձանակներ. այրին որ ունէր երկու լումա, — մէկ լումայի արժէքն է իբր երկու փարս, չպահեր մին, մինչդեռ էր չքաւոր. ուստի Յիսուսէն կը զոգասանուի: Ուրեմն զիտնալ պէտք է թէ Աստուած աղքատին նուէրն ալ չմերժեր իբր անարժէք կամ քիչ համարելով զայն: Ղուկասէ եւս կը յիշուի սոյն այրին (ԻԱ. 1-4):

1.37 Գուշակուծիւն Երուսաղեմի աւերման և վերջին գատաատմի համար (Մատթ. ԻԳ. 1-42; Ղուկ. ԻԱ. 5-6):

առանձին անոր կը հարցնէին : 4 « Ըսէ մեզի , այդ ե՞րբ պիտի ըլլայ , եւ ի՞նչ նշան կայ թէ այդ ամէնը պիտի կատարուի » : 5 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ անոնց . « Զգուշացէք , մէկը ձեզ չխարէ : 6 Որովհետեւ շատեր իմ անունովս պիտի գան , եւ պիտի ըսեն թէ « Քրիստոսն ես եմ » . եւ շատերը պիտի մոլորեցնեն : 7 Բայց երբ պատերազմներ եւ պատերազմի լուրեր լսէք , մի խռովիք . որովհետեւ պէտք է ըլլայ , բայց դեռ վախճանը չէ : 8 Որովհետեւ ազգ ազգի վրայ պիտի ելլէ եւ թագաւորութիւն թագաւորութեան վրայ , եւ տեղ տեղ ժաժեր պիտի ըլլան , սովեր , ժանտամահեր եւ խռովութիւններ . սակայն այն ամէնը ցաւերուն սկիզբն է : 9 Եւ ձեզ ալ ատեաններու պիտի մատնեն , եւ ժողովրդանոցներու մէջ պիտի տանջուիք , եւ ինծի համար դատաւորներու եւ թագաւորներու առջեւ պիտի կենաք անոնց , 10 եւ բոլոր հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար . բայց առաջ պէտք է այս աւետարանը քարոզել : 11 Բայց ձեզ երբ մատնելու տանին , առաջուց հոգ մի՛ ընէք եւ մի մտածէք թէ ի՞նչ պիտի խօսիք . հապա ինչ որ ձեզի տրուի այն ժամուն՝ զայն պիտի խօսիք . որովհետեւ դուք չէք որ պիտի խօսիք , այլ Հոգին Սուրբ : 12 Եղբայրն եղբայրը մահուան պիտի մատնէ եւ հայրն որդին . որդիներն իրենց հայրերուն վրայ պիտի ելլեն եւ զանոնք պիտի սպաննեն : 13 Եւ իմ անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք . բայց ով որ համբերէ մինջեւ վերջը , ան պիտի ապրի : 14 Եւ երբ աւերուածին պղծութիւնը տեսնէք , որ պիտի ըլլայ այն տեղը , ուր պէտք չէ ըլլայ . — ով որ կը կարդայ , թող հասկնայ — . այն ատեն որոնք Հրէաստանի մէջ են , լեռները թող փախչին . 15 Եւ ով որ տանիքի վրայ է , տունը թող չիջնէ , եւ թող չմանէ տունէն բան մը վերցնելու համար : 16 Եւ ով որ ագարակին մէջ է , ետ թող չդառնայ իր լաթերը առնելու համար : 17 Բայց վա՛յ այն օրը յգիններուն ու ծիծ տուողներուն : 18 Աղօթք ըրէք որ ձմեռը չըլլայ այն : 19 Նեղութիւններու անանկ օրեր պիտի ըլլան այն օրերը , որ արարածներուն ստեղծուելէն մինչեւ հիմա չեն եղած եւ ա՛լ պիտի չըլլայ : 20 Թէ որ Աստուած կարճըցուցած չըլլար այն օրերը իր ընտրեալներուն համար , եւ ոչ մէկ մարմին չէր ապրեր . բայց այն ընտրեալներուն համար որոնք ընտրեց , այն օրերը կարճըցուց :

21 Այն ատեն թէ որ մէկը ձեզի ըսէ թէ «Քրիստոսը հոս է», կամ «Հոն», մի՛ հաւատաք: 22 Որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ մուրեցնելու համար նշաններ եւ հրաշքներ ցոյց պիտի տան, եւ թէ որ կարելի ըլլայ, ընտրեալներն ալ: 23 Բայց դուք զգուշացէք. ահա ձեզի ամէնը առաջուց ըսի:

24 Սակայն այն օրերը այն նեղութենէն յետոյ արեւը պիտի խաւարի եւ լուսինը իր լոյսը պիտի չտայ: 25 Երկինքի աստղերը պիտի թափթփին եւ երկինքի մէջ եղած զօրութիւնները պիտի շարժին: 26 Եւ այն ատեն պիտի տեսնեն Որդի մարդոյ ամպերով, զօրութեամբ եւ շատ փառքով եկած: 27 Եւ այն ատեն իր հրեշտակները պիտի զրկէ, եւ իր ընտրեալները չորս կողմերէ պիտի ժողվէ երկրի ծայրերէն մինչեւ երկինքի ծայրը: 28 Բայց դուք առակը թզնսիէն սովորեցէք. երբ հետզհետէ անոր ոտները կը կակուղնան ու տերեւ կ'արձկուին, գիտէք թէ ամառը մօտ է: 29 Այսպէս եւ դուք երբ այս ամէնը եղած տեսնէք, գիտցէք թէ մօտ է. դռներուն քով: 30 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ որ այս ամէնը ըլլայ: 31 Երկինք եւ երկիր պիտի անցնին, եւ իմ խօսքերս պիտի չանցնին: 32 Բայց այն օրուան ու ժամուն համար, մէկը չգիտեր, ոչ երկինքի մէջ հրեշտակները եւ ոչ Որդի, բայց միայն Հայր: 33 Չզուշացէք. արթուն եղէք եւ աղօթքի կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ժամանակն ե՞րբ է: 34 Ինչպէս որ մարդ մը հեռու երկիր երթալով իր տունը կը թողու, եւ իր ծառաներուն իշխանութիւն կուտայ, եւ ամէն մէկուն իր գործը, եւ դռնապանին պատուէր կուտայ, որ արթուն կենայ: 35 Ուրեմն արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր, տանուտէրն երբ կուգայ. իրիկունը, թէ կէս գիշերին, թէ հաւախօսի, թէ առտուան ատեն: 36 Կարելի է յանկարծ գալով ձեզ քունի մէջ գտնէ: 37 Բայց ինչ որ ձեզի կ'ըսեմ, ամենուն կ'ըսեմ. «Արթուն կեցէք»:

ԳԼՈՒԹ ԺԴ.

*1 Եւ երկու օրէն յետոյ զատիկ ու բաղարջակեր էր . քահանայապետներն ու դպիրները կ'ուզէին թէ ի՞նչ պէս զանի նենգութեամբ բռնելով սպաննեն : 2 Բայց կ'ըսէին թէ « Ոչ այս տօնի ատեն , որ ժողովրդեան մէջ խռովութիւն չըլլայ » :

*3 Եւ երբ Բեթանիա բորոտ Սիմօնի տանը մէջնստած էր , կին մը եկաւ որ ազնիւ ու սուղ նարդոսի իւղի շիշ մը ունէր , եւ այն շիշը կոտորելով անոր գլխուն վրայ թափեց : 4 Եւ աշակերտները կը նեղանային ու կ'ըսէին . « Ի՞նչու այդ իւղին կորուսաւ եղաւ . 5 կարելի էր այդ իւղը երեք հարիւր զահեկանէն աւելի ծախել ու աղքատներուն տալ . եւ անոր դէմ սաստիկ կը բարկանային : 6 Եւ Յիսուս կ'ըսէ անոնց . « Թող սուէք ատոր . ի՞նչու անհանգիստ կ'ընէք , որովհետեւ ատ' իմ վրայ աղէկ գործ մը ըրաւ : 7 Ամէն ստեն աղքատները ձեզի հետ ունիք . եւ երբ ուզէք , կրնաք անոնց բարիք ընել . բայց զիս ամէն ատեն ձեզի հետ չունիք : 8 Ատ' ինչ որ ունէր , ըրաւ . առաջուց իմ մարմինս խնկեց ի նշան պատանքի : 9 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . բոլոր աշխարհի մէջ ուր որ քարոզուի այս աւետարանը , եւ ինչ որ ատ ըրաւ՝ ատոր յիշատակին համար թող խօսուի » :

*10 Եւ Յուդայ իսկարիովտացի՝ տասներկուքէն մէկը , քահանայապետներուն զնաց որ զանի անոնց մատնէ : 11 Անոնք երբ լսեցին , ուրախացան , ու անոր ստակ տալ խոստացան . եւ կը փնտռէր թէ ի՞նչ պատեհութեամբ զանի մատնէ :

*12 Եւ բաղարջակերի առաջին օրը , երբ զատիկը կը մորթէին , աշակերտներն անոր կ'ըսին . « Ո՛ւր կ'ուզես ,

1-2. Նենց խորհուրդ Յիսուսի համար (Մատթ. ԻՁ 1-5; Ղուկ. ԻԲ. 1-2) :

3-9. Յիսուս կ'օժուի Մարիամէն (Մատթ. ԻՁ. 6-13; Յովհ. ԺԲ. 2-8) :

10-11. Յուդայի սակարկութիւն (Մատթ. ԻՁ. 14-16; Ղուկ. ԻԲ. 3-6) :

12-26. Տէրունական ընթրիք (Մատթ. ԻՁ. 17-30; Ղուկ. ԻԲ. 7-30; Յովհ. ԺԳ. 2-30) :

երթանք, պատրաստենք, որ զատիկը ուտես): 13 Եւ աշակերտներէն երկուքը կը զրկէ ու կ'ըսէ անոնց. «Քաղաքը գացէք. եւ երբ քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի պատահի, որ ուսին վրայ ջուրի սափոր մը ունի, անոր ետեւէն գացէք: 14 Եւ որ տունը մտնէ, տանուտէրին ըսէ՛ք. «Վարդապետը կ'ըսէ. «Ո՛ւր է օթեւանը, ուր աշակերտներու հետ զատիկը ուտեմ: 15 Եւ ան ձեզի պիտի ցոյց տայ զարդարուած մեծ վերնատուն մը. հոն մեզի պատրաստեցէք): 16 Ու անոր աշակերտները գացին պատրաստելու. քաղաքը եկան ու գտան ինչպէս որ իրենց ըսաւ. եւ զատիկը պատրաստեցին:

17 Եւ երբ իրիկունս եղաւ, տասներկուքին հետ մէկտեղ կուգայ: 18 Եւ երբ նստան ու դեռ կ'ուտէին, կ'ըսէ Յիսուս. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեռնէ մէկը զիս պիտի մատնէ, որ ինծի հետ հիմա կ'ուտէ): 19 Եւ անոնք սկսան տրտմիլ ու ըսել մէկմէկու ետեւէ. «Միթէ ե՞ս եմ): Եւ ուրիշը «Միթէ ե՞ս եմ): 20 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Այդ տասներկուքէն մէկը, որ ինծի հետ ձեռքը սկաւառակը խօթեց: 21 Բայց Որդի մարդոյ կ'երթայ, ինչպէս որ գրուած է անոր համար. սակայն վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդի մարդոյ պիտի մատնուի. ադէկ էր անոր թէ որ ծնած չըլար): 22 Եւ դեռ կ'ուտէին, Յիսուս հաց առնելով՝ օրհնեց ու բեկեց, անոնց տուաւ ու կ'ըսէ. «Առէք, իմ մարմինս այդ է): 23 Եւ գաւաթը առնելով՝ գոհացաւ ու անոնց տուաւ. եւ ամէնքը անկէ խմեցին: 24 Եւ կ'ըսէ անոնց. «Այս է իմ նոր ուխտի արիւնս, որ շատերու համար կը թափուի: 25 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ալ այսուհետեւ բնաւ պիտի չխմեմ որթի բերքէն մինչեւ այն օրը՝ երբ պիտի խմեմ զայն Աստուծոյ նոր արքայութեանը մէջ): 26 Եւ գոհանալով Զիթենեաց լեռը ելան:

*27 Եւ Յիսուս անոնց կ'ըսէ. «Ամէնքնիդ այս գիշեր ինէ պիտի դայթակղիք, որովհետեւ գրուած է թէ «Հովիւը պիտի զարնեմ եւ ոչխարները պիտի ցրուին): 28 Սակայն իմ յարութենէս յետոյ ձեռնէ առաջ Գալիլեա պիտի երթամ): 29 Պատասխան տուաւ Պետրոս ու կ'ըսէ անոր.

27-31. Գուշակուծիւն ուրացուծեան Պետրոսի (Մատթ. ԻԶ. 31-35; Դուկ. ԻԲ. 31-39; Յովհ. ԺԳ. 36-38):

« Թէ որ ամէնքն ալ գայթակղին, բայց ես ոչ »: 30 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. « Ճշմարիտ կ'ըսեմ քեզի թէ « Նոյն իսկ դուն այս գիշեր դեռ հաւը երեք անգամ չիօսած՝ զիս պիտի ուրանաս »: 31 Իսկ Պետրոս ալ աւելի կը պնդէր ու կ'ըսէր « Թէ որ քեզի հետ մինչեւ անգամ մեռնիլ ալ պէտք ըլլայ, քեզ պիտի չուրանամ »: Նոյնպէս ամէնն ալ կ'ըսէին:

*32 Կուզան այն գիւղը; որուն անունը Գեթսեմանի էր, եւ կ'ըսէ աշակերտներուն. « Հոս նստեցէք, մինչեւ որ ես աղօթքի կենամ »: 33 Եւ իր հետ կ'առնու Պետրոսն ու Յակոբոսը եւ Յովհաննէսը, եւ սկսաւ տրտմիլ ու հոգ ընել: 34 Այն ատեն կ'ըսէ անոնց. « Իմ անձս մեռնելու չափ տրտում է, հոս կեցէք ու արթուն եղէք »: 35 Եւ քիչ մը առաջ երթալով, իր երեսին վրայ գետինը ինկաւ եւ աղօթք կ'ընէր, թէ որ կարելի է այն ժամը անորմէ անցնի: 36 Եւ կ'ըսէ. « Աբրա, Հայր, ամէն բան քեզի հնարաւոր է. այս գաւաթն ինէ անցուր. բայց չէ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս որ դուն կ'ուզես »: 37 Եւ կուգայ կը գտնէ ղանոնք որ կը քնանային. եւ Պետրոսին կ'ըսէ. « Սիմօն, կը քնանաս. չկրցար ժամ մը արթուն կենալ: 38 Արթուն կեցէք եւ աղօթք ըրէք, որ փորձութեան մէջ չմտնէք. ոգիս յօժար է, բայց մարմինս տկար »: 39 Եւ նորէն գնաց աղօթքի կեցաւ, ու նոյն խօսքը ըսաւ: 40 Նորէն դարձաւ եւ ղանոնք նորէն քնացած գտաւ. որովհետեւ անոնց աչքերը ծանրացած էին. եւ չէին գիտեր թէ ինչ պատասխան տան անոր: 41 Երրորդ անգամ նորէն կուգայ ու կ'ըսէ անոնց. « Այսուհետեւ քնացէք ու հանգչեցէք, որովհետեւ վախճանը հասած է. եկաւ ժամը եւ Որդի մարդոյ ահա մեղաւորներուն ձեռքը կը մատնուի: 42 Օն, ելէք, երթանք, որովհետեւ ահա մօտեցաւ ան որ զիս պիտի մատնէ »:

*43 Եւ դեռ ան զայս կը խօսէր, Յուդա Իսկարիօվտացի՝ տասներկուքէն մէկը, կուգայ, եւ իրեն հետ քա-

32-42. Տագնապ Յիսուսի ի Գեթսեմանի (Մատթ. ԻՁ. 36-46; Ղուկ. ԻԲ. 39-46):

43-52. Ձերբակալուծիւն Յիսուսի (Մատթ. ԻՁ. 47-56; Ղուկ. ԻԲ. 47-53; Յովհ. ԺԸ. 2-18):

հանայապետներէն եւ դպիրներէն ու ծերերէն զհիւսիս
աւերելով եւ բիրելով շատ բազմութիւն: 44 Մատնիչք
նշան տուած էր ու կ'ըսէր. « Զով որ ես պահնեմ, ան
է. զանի բռնեցէք եւ զգուշութեամբ տարէք »: 45 Եւ
իսկոյն մօտենալով՝ կ'ըսէ անոր. « Վարդապետ, Վար-
դապետ ». եւ զանի պագաւ: 46 Եւ անոնք անոր ձեռք
զարկին ու զանի բռնեցին: 47 Եւ անոնցմէ մէկը որոնք
անոր բոլորտիքն էին, սուրբ հանեց, եւ քահանայա-
պետին ծառային զարկաւ, ու անոր ականջը մէկ-
դի ձգեց: 48 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց.
« Իբր թէ աւաղակի վրայ՝ ելաք սուրերով ու բիրելով
զիս բռնելու համար: 49 Միշտ ձեր քով էի ու տաճարին
մէջ կը սովորեցնէի, եւ զիս չբռնեցիք. բայց թող կա-
տարուին մարգարէներուն գրքերը »: 50 Այն ատեն բոլոր
աշակերտները զանի թողուցին ու փախան: 51 Եւ երի-
տասարդ մը անոր ետեւէն կ'երթար՝ որ իր մերկ մարմ-
նոյն վրայ կտաւ մը ձգած էր. երիտասարդները զանի կը
բռնէին: 52 Եւ ան կտաւը թողուց, եւ մերկ փախաւ ա-
նոնցմէ:

*53 Եւ Յիսուսը կայիափա քահանայապետին տարին,
եւ անոր քով կուգային բոլոր քահանայապետներն ու
դպիրներն ու ծերերը: 54 Եւ Պետրոս հեռուէն կ'երթար
անոր ետեւէն մինչեւ ներսը՝ քահանայապետին գաւիթը,
եւ սպասաւորներուն հետ կը նստէր ու կրակին քով կը
տաքնար: 55 Իսկ քահանայապետներն ու բոլոր ատեանը
Յիսուսի դէմ հակառակ վկայութիւն մը կը փնտռէին, որ
զանի սպաննեն, եւ չէին գտներ: 56 Որովհետեւ շատերը
անոր վրայով սուտ վկայութիւն կը վկայէին, եւ վկա-
յութիւններն իրարու նման չէին: 57 Ուրիշներն ելլելով
անոր վրայով սուտ կը վկայէին ու կ'ըսէին. 58 թէ « Մենք
ասորմէ լսեցինք որ կ'ըսէր. « Ես այդ ձեռագործ տաճարը
պիտի քակեմ, երեք օրուան մէջ ուրիշը պիտի շինեմ
առանց ձեռագործի »: 59 Սակայն եւ այնպէս անոնց վկա-
յութիւնը համաձայն չէր: 60 Յետոյ քահանայապետը
մէջտեղ ոտքի ելլելով Յիսուսի կը հարցնէր ու կ'ըսէր.

53-65. Դատապարտութիւն և զանակոծումն Քրիստոսի (Մատթ. ԻԶ.
56-68; Ղուկ. ԻԲ. 56-71):

« Պատասխան չե՛ս տար, ատոնք քեզի դէմ ի՞նչ կը վկայեն » : 61 Եւ ան լուռ կը կենար ու պատասխան չէր տար Նորէն քահանայապետը կը հարցնէր անոր ու կ'ըսէր . « Բրիստոսը դո՞ւն ես, օրհեալ Ասաուծոյ Որդին » : 62 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոր . « Ի՞նչ ըսիր թէ ես եմ . սակայն Որդի մարդոյ պիտի տեսնէք Չօրու թեան աջ կողմը նստած եւ երկնքի ամպերուն մէջէն Ելած » : 63 Եւ քահանայապետն իսկոյն իր պանամուճամը պատուեց ու կ'ըսէ . « Ա՛յ մեզի ի՞նչ պէտք է վկայներ : 64 Ահա ամէնքս ատոր բերնէն հայհոյութիւն լսեցինք . ձեզի ի՞նչպէս կ'երեւի » . եւ ամէնքը զանի դատապարտեցին թէ մահապարտ է :

65 Եւ ոմանք անոր երեսը թքնել սկսան , գլուխը լաւ թով ծածկել , բռունցո՞ղ ծեծել ու ընծի . « Մեզի մարդարէացիր , Բրիստոս , ո՞վ է ան որ քեզի զարկաւ » . եւ սպասաւորները անոր ապտակ կը զարնէին :

*66 Եւ երբ Պետրոս վարը գաւիթն էր , քահանայապետին աղախիններէն մէկը կուգայ , եւ զանի կը տեսնէ որ կը տաքնար . նայեցաւ անոր ու կ'ըսէ . 67 « Եւ դուն Նազովրեցի Յիսուսին հետ էիր » : 68 Ան ուրացաւ ու կ'ըսէ : « Չեմ ճանչնար եւ չեմ գիտեր , դուն ինչ կ'ըսես » : Եւ երբ դրոյ գաւիթն ելաւ , հաւը խօսեցաւ : 69 Նորէն աղախինը զանի տեսաւ , ու սկսաւ ըսել անոնց որ իր բոլորտիքը կը կենային . « Եւ աս անոնցմէ է » : 70 Եւ ան նորէն ուրացաւ . եւ քիչ մը ետքը որոնք բոլորտիքը կը կենային , նորէն Պետրոսին կ'ըսեն . « Իրաւ դուն անոնցմէ ես , որովհետեւ Գալիլեացի ես , եւ զրուցուածքը կը նմանի » : 71 Եւ ան սկսաւ նզովել , երգում ընել ու ըսել թէ « Այն մարդը չեմ ճանչնար , որուն վրայով զուք կ'ըսէք » : 72 Եւ անմիջապէս կրկին հաւը խօսեցաւ . եւ Պետրոս յիշեց այն խօսքը , որ Յիսուս անոր ըսաւ թէ « Հաւը երկու անգամ դեռ չիստած՝ դուն դիս երեք անգամ պիտի ուրանաս » . եւ լալ սկսաւ :

66-72. Ուրացուածին Պետրոսի (Մատթ. ԻԶ. 69-75: Լուկ. ԻԲ. 54-62: Յովհ. ԺԼ. 16-27):

ՊԼՈՒԽ ԺԵ.

¹ Եւ սուաւօտուն շուտ մը քահանայապետները , ծերերուն ու դպիրներուն հետ մէկտեղ ու բոլոր ատեանը խորհուրդ ըրին . Յիսուսը կապեցին ու տարին , Պիղատոսին մատնեցին : 2 Պիղատոս անոր հարցուց ու կ'ըսէ . « Հրեաներուն թագաւորը զո՞ւն ես » . ան պատասխան տուաւ անոր ու կ'ըսէ . « Իուն կ'ըսես » : 3 Եւ քահանայապետներն անոր վրայով շատ ամբաստանութիւն կ'ընէին , եւ ան պատասխան չէր տար : 4 Իսկ Պիղատոս նորէն կը հարցնէր անոր . « Պատասխան չե՞ս տար , տես , ո՞րքան քեզի դէմ ամբաստանութիւն կ'ընեն » : 5 Եւ Յիսուս անկէ ետքը պատասխան չտուաւ , անանկ որ Պիղատոս շատ զարմացաւ :

6 Բայց տօնի ատեն անոնց կ'արձկէր կապուած մէկը , զոր իրենք կ'ուզէին : 7 Եւ մէկը կար որուն անունն էր Բարաբբա , որ խռովարարներուն հետ կապուած էր , որոնց խռովութիւն հանած ատենը , մարդ մը սպաննած էր : 8 Բազմութիւնը մեծ ձայնով սկսաւ պոռալ եւ ուզել , ինչպէս որ սովոր էր , որ Բարաբբան արձկէ . 9 Պատասխան տուաւ Պիղատոս եւ անոնց կ'ըսէ . « Կ'ուզէ՞ք որ ձեզի շնորհեմ Հրեաներուն թագաւորը » : 10 Որովհետեւ գիտէր թէ նախանձու համար քահանայապետները զանի մատնեցին , 11 որոնք ամբոխը համոզեցին , որ անոնց արձկէ Բարաբբան : 12 Նորէն Պիղատոս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Բայց ի՞նչ կ'ուզէք , որ Հրեաներու թագաւորին ընեմ » : 13 Եւ անոնք նորէն կը պոռային , քահանայապետներէն գրգռուած . « Սաչը հանէ զանի » : 14 Պիղատոս կ'ըսէ անոնց . « Ի՞նչ չար գործ ըրած է ատ » . եւ անոնք ալ աւելի կը պոռային ու կ'ըսէին . « Սաչը հանէ զանի » : 15 Իսկ Պիղատոս ամբոխը գոհ ընել ուզելով , Բարաբբան անոնց արձկեց , ու Յիսուսը ծեծելով յանձնեց որ խաչ ելլէ :

1-16. Յիսուս կը տարուի առ Պիղատոս և կը հարցափորձուի (Մատթ. 15. 1-31; Լուկ. 19. 1-25; Յովհ. 6Գ. 28-ժԹ. 3):

16 Եւ զինուորները զանի ներս տարին գաւիթը ուր հրապարակ կար . եւ միանգամայն բոլոր գունդը կը կանչեն : *17 Եւ անոր հազցուցին կարմիր քղամիդ ու ծիրանիներ , ու անոր գլուխը դրին փուշերէ հիւսուած պսակ : 18 Եւ սկսան անոր բարեւ տալ ու ըսել . « Բարեւ քեզ , Հրեաներու թագաւոր » : 19 Եւ գլուխը եղէգով կը ծեծէին , ու երեսին կը թքնէին , ու ծունր իջնելով երկրպագութիւն կ'ընէին անոր : 20 Եւ երբ զանի ծաղրեցին , քղամիդը ու ծիրանիները հանեցին ու անոր հազցուցին իր հազուստները , եւ դուրս հանեցին որ զանի խաչ հանեն :

21 Եւ Աղէքսանդրի եւ Ռուփայ հայրը՝ Սիմօն Կիւրանացին , որ ազարակէն գալով անկէ կ'անցնէր , պահակ կը բռնէին , որ անոր խաչափայտը վերցնէ : 22 Եւ տարին զանի Գողգոթայ ըստ սեղ մը՝ որ կը թարգմանուի գլուխ կտրելու տեղ : 23 Եւ անոր զմուտած գինի կուտային , ու ան չառաւ . եւ զանի խաչ հանեցին : 24 Եւ անոր հազուստները բաժնեցին , վիճակ ձգելով թէ ով ինչ պիտի առնու :

25 Ժամն երեքն էր եւ զանի խաչ հանեցին : 26 Եւ անոր յանցանքի գիրն էր թէ « Հրեաներուն թագաւորն է » : 27 Եւ անոր հետ երկու աւազակներ խաչը հանեցին , մէկը աջ կողմէն ու մէկը ձախ կողմէն : 28 Եւ կատարուեցաւ այն զրուածն որ կ'ըսէ , թէ « Անօրէններու հետ համարուեցաւ » : 29 Եւ որոնք որ կ'անցնէին , իրենց գլուխը շարժելով հայհոյութիւն կ'ընէին ու կ'ըսէին . « Կայ , որ տաճարը կը քակէիր ու երեք օրուան մէջ կը շինէիր » : 30 ազատէ քու անձդ եւ այդ խաչէն իջիր » : 31 Նոյնպէս քահանայապետները դպիրներուն հետ իրարու մէջ ծաղր ընելով կ'ըսէին . « Ուրիշները ազատեց , իր անձը չկրնար ազատել » : 32 Իսրայելի թագաւոր այդ Քրիստոսը թող հիմայ այդ խաչէն իջնէ , որ տեսնենք ու ատոր հաւատանք » : եւ որոնք որ անոր հետ խաչ ելած էին , եւ զանի կը նախատէին :

16-32. Չարչարանք Յիսուսի և խաչելութիւն (Մատթ. Իէ. 32-44; Ղուկ. ԻԳ. 25-39; Յովհ. ԺԹ. 17-26):

*33 Եւ իբր ժամը վեց եղաւ բոլոր երկիրը խաւար պատեց մինչեւ իննբարդ ժամը: 34 Եւ իննբարդ ժամուն Յիսուս մեծ ձայնով ազարակեց ու կ'ըսէ. «Ելի, Ելի, լսումս սարաքթանի, որ կը թարգմանուի, Աստուած իմ, Ապառաիտ իմ, ինչու դիս թողուցիր»: 35 Եւ անոնցմէ ովանք որոնք անոր բոլորութիւնը կը կենային, երբ լսեցին, կ'ըսէին թէ «Նղիան կը կանչէ»: 36 Եւ մէկը վազելով քաջակամ սպառնգ մը լեցուց, եւ եղէգի մը անցնելով պնդոյ կուտար որ խմէ, եւ կ'ըսէ. «Քաջ սուր. փեռնեմք, Նղիան կուգայ՝ զատի իջեցնելու»:

37 Եւ Յիսուս մեծ ձայն մը արձկեց ու հոգին աւանդողեց: 38 Եւ տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի պատուեցաւ: 39 Եւ հարիւրապետը որ հոն կը կենար, փեռնելով թէ թղազակեց ու ու հազին տուաւ, կ'ըսէ. «Յիսուս այս մարդն Աստուծոյ Արգի էր»: 40 Կիներ կային որոնք հեռուէն կը նայէին, որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի եւ փոքրիկ Յակովբոսի եւ Յովսէի մայրը Մարիամ եւ Սողովմէ: 41 Որոնք ան երբ Գալիլեա էր, անոր ետեւէն կ'երթային եւ զանի կը պաշտէին. եւ քրիշտ չատ կրնէր այլ որոնք անոր հետ երուսազէմ ելած էին:

*42 Եւ երբ իրիկունս եղաւ, որովհետեւ օւրբաթ էր եւ չարաթը կը մտնէր, 43 եկաւ Արիմաթացի Յովսէի որ պարկեշտ նախարար մարդ էր, որ ինքն այլ Աստուծոյ արքայութեանը կ'ակնկալէր, համարձակեցաւ, Պիղատոսի քով մտաւ, ու Յիսուսի մարմինը խնդրեց: 44 Այլ Պիղատոս զարմացաւ որ այնքան շատ մեռաւ. եւ հարիւրապետը իրեն կանչելով, հարցուց անոր ու կ'ըսէ թէ «Իբրաւ այգչաի շուտ մեռաւ»: 45 Եւ երբ այն հարիւրապետէն սառուգեց, մարմինը Յովսէիին շտրկեց: 46 Այլ Յովսէի կտաւ գնեց, եւ զանի վար իջեցնելով այն կտաւովը պատեց եւ գերեզմանի մէջ դրաւ, որ քարէ փեռուած էր. եւ գերեզմանին գուռը վէմ մը գլորեց: 47 Իսկ Մագթաղենացի Մարիամ եւ Յակովբոսի եւ Յովսէի մայրը Մարիամ տեսան այն տեղը, ուր գրուեցաւ:

33-41. Մահ Յիսուսի (Մատթ. ԻԶ. 45-56: Լուկ. ԻԳ. 44-49: Յովհ. ԺԹ. 30-37):

42-47. Թաղումն Յիսուսի (Մատթ. ԻԷ. 57-64: Լուկ. ԻԳ. 50-56: Յովհ. ԺԹ. 38-42):

Ք Լ Ա Ն Ի Ժ Զ .

^{*1} Եւ երբ շարաթը անցաւ . Մագդաղենացի Մարիամ եւ Յակոբոսի Մարիամ եւ Սողոմէ գացին , խունկեր պատրաստեցին , որ գան զանի օծեն : 2 Եւ միաշարաթի առաւօտուն՝ արեւազային գերեզմանը կուգան : 3 Եւ իրարու կ'ըսէին . « Գերեզմանի դրնէն քարը ո՞վ պիտի գըլտորցնէ մեզի » : 4 Եւ նայելով տեսան որ գերեզմանին քարը գլտորցուած էր , վասնզի շատ մեծ էր : 5 Եւ ներս գերեզմանը մտնելով երիտասարդ մը տեսան որ աջ կողմը կը նստէր՝ ճերմակ պատմուճան հագած , ու վախցան : 6 Եւ ան կ'ըսէ անոնց . « Մի վախնաք . խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք , յարութիւն առաւ , հոս չէ . ահա այն տեղը ուր զանի դրին : 7 Բայց գացէք , անոք աշակերտներուն ու Պետրոսին ըսէք , թէ ահա ձենէ առաջ Գալիլեա կ'երթայ , հոն պիտի տեսնէք զանի ինչպէս որ ձեզի ըսաւ » : 8 Եւ երբ լսեցին , որովհետեւ վախցած էին , ելան ու գերեզմանէն փախան եւ մէկու մը բան մը չըսին , որովհետեւ կը վախնային :

^{*9} Յիսուս շարթուան առաջին օրուան առաւօտուն ելելով Մագթաղենացի Մարիամին երեւցաւ , որմէ եօթը դեւ հանած էր : 10 Եւ ան երթալով պատմեց անոնց , որոնք որ անոր հետ էին , երբ սուգ կ'ընէին ու կուլային : 11 Անոնք երբ լսեցին թէ կենդանի է ու անոր երեւցաւ , չհաւատացին :

^{*12} Յետոյ ուրիշ կերպարանքով երեւցաւ որոնք արտ կ'երթային : 13 Անոնք գացին եւ ուրիշներուն պատմեցին , եւ անոնց ալ չհաւատացին :

^{*14} Յետոյ երբ տասնըմէկները սեզան նստած էին , ա-

1-8. Աւետիս հրեշտակին Թէ յարեաւ Քրիստոս (Մատթ. ԻԸ. 1-8; Ղուկ. ԻԴ. 1-12):

9-11. Առաջին երեւումն Յիսուսի Մարիամ Մագդաղենացւոյ (Յովհ. Ի. 11-18):

12-13. Երեւումն Տեսառն երկու աշակերտաց (Ղուկ. Իդ. 13-35):

14-18. Յիսուսի վերջին երեւումն աշակերտաց (Մատթ. ԻԸ. 16-20; Ղուկ. ԻԴ. 36-49):

նոնց երեւցաւ , եւ անոնց անհաւատութիւնն ու խստասրբ-
տութիւնը պարսաւեց , որովհետեւ անոնց , որոնց երեւցաւ
մեռելներէն յարութիւն առած , չհաւատացին : 15 Եւ
կ'ըսէ անոնց . « Բոլոր աշխարհ գացէք , եւ աւետարանը
բոլոր արարածներուն քարոզեցէք : 16 Ով որ կը հա-
ւատայ ու կը մկրտուի , պիտի փրկուի . եւ ով որ չհա-
ւատայ , պիտի դատապարտուի : 17 Եւ անոնք որ կը հա-
ւատան , այս նշաններն անոնց ետեւէն պիտի երթան . իմ
անունովս դեւեր պիտի հանեն , եւ լեզուներ պիտի խօ-
սին : 18 Իրենց ձեռքերով օձեր պիտի բռնեն , եւ թէ որ
մահացնող դեղ մը խմեն , անոնց բնաւ պիտի չվնասէ .
հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն ու պիտի բժշկեն » :
*19 Եւ ինքն Տէր Յիսուս անոնց հետ խօսելէն ետքը .
երկինք համբարձաւ , եւ Հօրը աջ կողմը նստաւ : 20 Եւ
անոնք ելլելով բոլոր աշխարհ կը քարոզէին Տեառն գոր-
ծակցութեամբ եւ խօսքը կը հաստատէին այն ամէն նշան-
ներով , որոնք անոնց ետեւէն կ'երթային :

19-20. Համբարձումն Յիսուսի (Ղուկ. ԻԴ. 50-53):



ԱՒԵՏԱՐԱՆ

Ը Ս Տ Ղ Ո Ւ Կ Ա Ս Ո Ւ



ՂՈՒԿԱՍՈՒ

Ք Ա Ո Ւ Ս Ա

*1 Արովհետեւ շատերն ուզեցին մեր մէջ հաստատուած բաներուն պատմութիւնը նորէն կարգի դնել, 2 ինչպէս որ մեզի աւանդեցին, որոնք որ սկիզբէն ականաբոս եղան եւ Բանին սպասաւոր. *3 Եւ ալ որ սկիզբէն ամենուն ետեւէն գացած էի, կամեցայ ճշմարտութեամբ ու կարգով քեզի գրել, ո՛վ ազնիւ Թէոփիլոս, 4 որպէսզի ճանչնաս այն խօսքերուն ճշմարտութիւնը, որոնց աշակերտեցար:

1. Կարելի չէ կարծել թէ քրիստոնէութիւնն սկսու տարածուիլ ու հպատատուիլ առանց Առաքելոց և անոնց աշակերտաց թղթերուն և զբրուածներուն որք հիմնուած էին այն ճշմարտութեանց վրայ, որք էին էական մասն հաւատոյ: Ուստի Ղուկասի այս խօսք չէ միւս երեք Աւետարաններուն համար:

3. Ղուկաս իւր Աւետարանը կ'ընծայէ Թէոփիլոսի, որ Ղուկամայեցի կամ Յոյն էր, ազնուական քրիստոնեայ:

⁵ Եւ Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը Արիայի դասակարգէն Չաքարիա անուն քահանայ մը եղաւ, եւ անոր կինը Ահարովի աղջիկներէն էր, եւ անոր անունը Եղիսաբէթ: ⁶ Եւ երկուքն ալ Աստուծոյ առջեւ արգար էին, եւ Տէրոջ ամէն պատուէրներուն եւ իրաւունքներուն մէջ անարատ կ'երթային: ⁷ Եւ զաւակ չունէին, վասն զի Եղիսաբէթ ամուլ էր, եւ երկուքն ալ իրենց օրերն անցուցած էին:

⁸ Եւ եղաւ որ երբ անոր Աստուծոյ առջեւ քահանայութիւն ընկու կարգի օրերն հասան, ⁹ քահանայութեան օրէնքին համաձայն՝ Տէրոջ տաճարը մտնելով խունկ ծխելու կարգն անոր հասաւ: ¹⁰ Եւ ժողովրդեան բոլոր բազմութիւնը խունկի ատեն դուրսը աղօթքի կեցած էր:

¹¹ Եւ անոր երեւցաւ Տէրոջ հրեշտակը որ խունկերու սեղանին աջ կողմը կը կենար: ¹² Եւ խոովեցաւ Չաքարիա՝ երբ տեսաւ, եւ անոր վրայ ա՛ն ինկաւ: ¹³ Անոր կ'ըսէ Տէրոջ հրեշտակը. «Մի՛ վախնար, Չաքարիա, որովհետեւ քու աղօթքդ լսուեցաւ, եւ կինդ Եղիսաբէթ քեզի որդի պիտի ծնի եւ անոր անունը Յովհաննէս պիտի դնես: ¹⁴ Եւ ուրախութիւն ու ցնծութիւն պիտի ըլլայ քեզի եւ շատեր պիտի ինդան անոր ծնած ատենը: ¹⁵ Վասն զի Տէրոջ առջեւ մեծ պիտի ըլլայ. եւ զինի ու

5. Արիայի դասակարգն էր ուժերորդը քահանայական քսան և չորս դասակարգներէն (Մնաց. ԻԳ. 10-19; Եէեմ. ԺԲ. 4-18).

8. Սովորութիւն կար վիճակաւ որոշել և սկսիլ քահանայական սպասաւորութիւնը:

11. Ողակիզաց և Աւաշաւորութեան հացի սեղաններէն ուրիշ էր ինկոց սեղանը, որ էր բուն տաճարին մէջ, այն վարագուրին առջեւ որ Սրբութիւն սրբութեանցը կը զատէի տաճարէն: Այս սեղանին առջեւ օրը երկու անգամ խնկարկութիւն կ'ըլլար (Ելք. 7-8):

13. Յովհաննէս կը ծարգմանուի «Շնորհք Աստուծոյ»:

15. Որովհետեւ պիտի երեւէր Յովհաննէս իբրեւ Եղիա և պիտի ըլլար Մեսիային կարապետը, ուստի այժմէն կ'արգիլուէր զինիէ և օղիէ: Քահանային՝ երբ երժար տաճարը, խմած ըլլալու չէր, ծոմ և զգաստ երժարու էր հոն (Ղեւտ. Ժ. 9; Թիւք 2. 3): Օղին այժմ գործածուած տեսակը չէ, զի արդի օղին հնարուած է Թ. դարուն մէջ: Յովհաննէս իւր մորմէն պիտի ծնէր Սուրբ Հոգւոյն շնորհքն ունենալով:

օղի պիտի չխմէ. եւ դեռ իր մօրը արգանդէն Սուրբ Հոգւով պիտի լցուի. 16 եւ Իսրայելի որդիներէն շատերն իրենց Տէր Աստուծոյն պիտի գարձընէ: *17 Եւ ինքն անոր առջևէն պիտի գայ Եղիայի հոգւով, զօրութեամբ, զարձընելու համար հայրերու սրտերն որդիներուն, եւ չհաւանողներն արգարներու իմաստութեանը, Տէրոջ կազմուած ժողովուրդ պատրաստելու: *18 Եւ կ'ըսէ Չաքարիա հրեշտակին. «Եւ ինչով պիտի գիտնամ այդ բանը, որովհետեւ ես ծեր եմ, եւ կինս իւր օրերն անցուցած է»: 19 Պատասխան տուաւ հրեշտակն ու կ'ըսէ անոր. «Ես եմ Գարբիէլ, որ Աստուծոյ առջեւ կը կենամ, եւ զրկուեցայ քեզի հետ խօսել եւ քեզի աւետիս տալ այդ բանը: *20 Եւ ահա համը պիտի ըլլաս եւ պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրն՝ երբ այդ պիտի ըլլայ. վասն զի իմ խօսքերուս չհաւատացիր, որոնք իրենց ժամանակին պիտի կատարուին»: *21 Եւ ժողովուրդը կ'սպասէր Չաքարիայի, եւ կը զարմանային անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ: 22 Եւ երբ հլաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ, եւ հասկցան թէ տեսիլք տեսաւ տաճարին մէջ. եւ ան նշանով կը խօսէր անոնց հետ, եւ պապանձած կը կենար: 23 Եւ եղաւ, երբ լմացան անոր պաշտօնի օրերը, իր տունը գնաց: 24 Եւ նոյն օրերէն յետոյ՝ անոր Եղիսաբեթ կինը յղացաւ, եւ իր անձը հինգ ամիս կը պահէր ու կ'ըսէր. *25 «Ի՞նչ գործ գործեց ինձի Տէր այն

17. Յովհաննէսի պաշտօնն էր պատրաստել ժողովուրդն Մեսիայի համար (Մատթ. Գ. 6):

18. Չաքարիա եւ նման Աբրահամու և Գէղէոնի նշան կը խնդրէ (Իննդ. ԺԵ 8: ԺԷ. 17):

20. Համբուժուելը թէ և ի պատիժ էր Թերահաւատութեանն Չաքարիայի, այլ միանգամայն ունէր նպատակ զարթուցանել ժողովրդեան ուշողութիւնը թէ հոստած էր փրկութեան ժամը, բանի որ գրեթէ չորս հարիւր տարիէ ի վեր Աստուծոյ ձայնը լռած էր և ոչ հրեշտակ խօսած էր տաճարին մէջ կամ հրաշալի տեսիլք մը եղած:

21. Որովհետեւ խնկարկու քահանայն ուշացաւ դառնալ ու տալ ժողովրդեան օրհնութիւն, ուստի զարմանքն իսկոյն տիրեց:

25. Եղիսաբեթ այնքան ուրախ, որ իւր ազգականներուն և դրօսցիներուն խնդակցութիւններէն հրաժարելով նախամեծար կը համարի տաւան-

օրերուն մէջ՝ երբ իմ նախատինքս մարդիկներուն մէջէն
վերցնելու համար ինծի նայեցաւ » :

*26 Եւ վեցերորդ ամիտը Աստուծոյ հրեշտակը Գաբրիէլը Գալիլեացիներու մէկ քաղաքը ղրկուեցաւ, որուն անունը Նազարէթ էր, *27 Դաւթի տունէն՝ Յովսէփ անունը մարդու մը նշանուած կոյսի մը, որուն անունը Մարիամ էր : *28 Եւ անոր քով գալով՝ կ'ըսէ . « Ո՛ւրախ եղիք, ո՛վ բերկրեալ, Տէրը քեզի հետ է » 29 Եւ ան այդ խօսքերուն վրայ խռովեցաւ, եւ կը խորհէր մտքին մէջ թէ ի՞նչ պիտի ըլլայ այս բարեւը : 30 Եւ հրեշտակը կ'ըսէ անոր . « Մի՛ վախնար, Մա՛րիամ, որովհետեւ Աստուծոյ շնորհք գտար » 31 եւ ան պիտի յղանաս եւ զաւակ պիտի ծնիս եւ անոր անունը Յիսուս պիտի դնես : 32 Ան մեծ պիտի ըլլայ եւ Աստուծոյ զաւակ պիտի ըսուի. եւ Տէր Աստուած անոր հօրը՝ Դաւիթին աթոռը անոր պիտի տայ, յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի տանը վրայ . 33 եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ » : *34 Եւ Մարիամ հրեշտակին կ'ըսէ . « Ի՞նչպէս պիտի ըլլայ ինծի այդ բանը, որովհետեւ էրիկ մարդ չեմ գիտեր » : 35 Պատասխան տուաւ հրեշտակը ու կ'ըսէ անոր . « Սուրբ Հոգին պիտի գայ քեզի եւ Աստուծոյ զօրութիւնը հովանի պիտի

ձին լինել և Աստուծոյ միայն ընկերութիւնը վայելել : Իսրայելի մէջ ամուլութիւնն էր ամօթ և նախատինք (Ա. Թագ. Ա. 6) :

26. Եղիսաբեթի յղութենէն վեց ամիս յետոյ :

27. Թէեւ Յովսէփ Դաւթի տունէն էր, այլ Մարիամ ևս քանի որ գուշակուած էր Սէ Մեսիայ պիտի լինի « Ի պտոյ որովայնի նորա » այսինքն Դաւթի (Սաղմ. ՃԼԲ. 11) :

28. Յոյն չա՛րբ « Ուրախ լեր » կը թարգմանուի, ևս և, « Ողջ լեր, ողջոյն ընդ քեզ », և χε/χαριτωμενη բերկրեալ է, միանգամայն և շնորհալի կամ լի շնորհօք :

31. Յովսէփ ևս այս անուանակոչութեան հրամանն աւած էր հրեշտակէն, ի տեսլեան (Մատթ. Ա. 21) :

34. Ի՞նչ մեծ տարբերութիւն կայ Մարիամի և Չաքարիայի հաւատքին մէջ : Մարիամ չճերսահաւատիք, և Չաքարիայի պէս չպահանջօր գիտնալ թէ ինչպէս պիտի կատարուի հրեշտակի աւետիսին ստուգութիւնը : Մին կոյս, միւսը քահանայ՝ խորին հաւատք աղբկան մը և թերի հաւատք ալեւորի մը :

ըլլայ քու վրայ. վասն զի ան որ քննէ պիտի ծնի, սուրբ է, եւ Աստուծոյ զաւակ պիտի կոչուի: *36 Եւ անա քու օգ-
գրեականոց Եղիսաբեթ՝ ան ալ յղի է իբ ծերութեան ատեն: Եւ այս վեցերորդ ամիսն է անոր, որ ամուլ կոչուած էր. *37 որովհետեւ Աստուծոյ համար անհնարին բան չկայ: *38 Եւ կ'ըսէ Մարիամ. «Ահա Տէրոջ աղախինն եմ, թող ըլլայ ինձի քու խօսքիդ համեմատ». եւ հրեշտակն անորմէ գնաց:

*39 Մարիամ այն օրերուն մէջ ելլելով փութով լեռան կողմը Յուդայի մէկ քաղաքը գնաց, 40 եւ Ջա-
քարիտայի տունը մտաւ, ու Եղիսաբեթին բարեւ սուաւ: *41 Եւ եղաւ երբ Մարիամին բարեւը Եղիսաբեթ լսեց, մանուկն անոր արգանդին մէջ խաղաց եւ Եղիսաբեթ Սուրբ Հոգւով լցուեցաւ. 42 եւ բարձր ձայնով աղաղա-
կեց ու կ'ըսէ. «Կիներուն մէջ դուն օրհնուած ես, եւ քու որովայնիդ պտուղը օրհնուած է. 43 Եւ ուսկէ՞ց է ինձի այս, որ իմ Տէրոջս մայրը իմ քովս գայ: 44 Վասն զի անա երբ քու բարեւիդ ձայնը ականջիս հասաւ, իմ մանուկս ուրախութեամբ խաղաց արգանդիս մէջ: *45 Եւ երանի որ հաւատայ, թէ Տէրոջմէն անոր ըսուածները պիտի կատարուին»: *46 Եւ կ'ըսէ Մարիամ. «Իմ անձս թող փառաւորէ Տէրը 47 եւ իմ հոգիս ուրախացաւ իմ

36. Խնամուծիւն տարբեր ցեղերու մէջ անսովոր չէր. Ահարոն Յու-
դայի ցեղէն առաւ կին (Ելք. 2. 23):

39. Լեռնային այն մասն ի հարաւակողմն Երուսաղէմի: Բերրոն կը
կարծուի այդ քաղաքը, որ կը վերաբերէր քահանայից:

41. Եղիսաբեթ իւր մանուկին ցնծութիւնը կ'զգայ գալստեամբն Մա-
րիամու, ուստի կը մարգարէանայ իսկոյն Թէ Մարիամ ևս յղի է, մինչդեռ
Մարիամէն զեռ լսած չէր, և Թէ Մարիամի արգանդի ծնունդն է Թէ իւր
Տէրը և Թէ իւր մանուկին:

45. Եղիսաբեթ Երանի, կը կոչէ, անոր (Մարիամու) որ հաւատա-
ցեր էր հրեշտակին, մինչդեռ իւր այրը՝ Ջաքարիան չէր հաւատացած և
ի պատիւն նս զեռ կը կրէր համբուծիւնը:

46. Մարիամի այս չքնաղ երգն ունի նմանութիւն Աննայի երգին (Ա-
թագ. Բ. 1-10): Մարիամ կը զարմանայ ու կը փառաւորէ զԱստուած, որ
զինքն ընտրելով՝ երանելի կ'ընէ իւր խոնարհ անձը և յիշելով խոստումն
Աստուծոյ առ Աբրահամ, կը գոհանայ:

փրկիչ Աստուածով, 48 վասն զի իր աղախինին խոնարհութեանը նայեցաւ : Որովհետեւ անա այսուհետեւ ամէն ազգեր ինձի երանի պիտի տան . 49 վասն զի Հզօրն ինձի մեծամեծ բաներ ըրաւ : Եւ անոր անունը սուրբ է . 50 եւ անոր ողորմութիւնն իր երկիւղածներուն է ազգէ ազգ : 51 Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ . սրտի խորհուրդներով ամբարտաւանները ցրուեց, 52 եւ զօրաւորները աթոռներէ վար առաւ եւ բարձրացուց խոնարհները : 53 Անօթեցածները բարութեամբ լցուց , եւ մեծատունները պարապ արձկեց : 54 Իր ողորմութիւնները յիշելով պաշտպանութիւն ըրաւ իր Իսրայէլ ծառային , 55 ինչպէս խօսեցաւ մեր հայրերուն՝ Աբրահամին ու անոր զաւակին յաւիտեան » : 56 Մարիամ անոր քով մնաց իբր երեք ամիս , եւ իր տունը դարձաւ :

57 Եւ Եղիսաբեթի ծնելու ժամանակները լցուեցան , եւ ղաւակ ծնաւ : 58 Եւ որոնք անոր բոլորտիքը կային եւ անոր ազգականները լսեցին , թէ Տէրը անոր իր մեծ ողորմութիւնն ըրաւ , կ'ուրախանային անոր հետ : *59 Եւ եղաւ որ ութերորդ օրը տղան թլփատելու եկան եւ ղանի իր հօր անունով Չաքարիա կ'անուանէին : *60 Պատասխան տուաւ անոր մայրը ու կ'ըսէ . « Ո՛չ . այլ Յովհաննէս պիտի կոչուի » : *61 Եւ կ'ըսեն անոր . « Քու ցեղիդ մէջ չկայ մէկը՝ որուն անունը Յովհաննէս կոչուի » : 62 Աչք կ'ընէին անոր հօր թէ ի՞նչ կ'ուզէ կոչել ղանի : *63 Եւ տախտակ ուզեց , գրեց ու կ'ըսէ . « Ատոր անունը Յովհաննէս է » : Եւ ամէնքը զարմացան : 64 Եւ անոր բերանը ու լեզուն բացուեցաւ շուտով , եւ կը խօսէր ու

59. Թլփատուածիւնն ուժերորդ օրը կը կատարուէր (Ծննդ. Ժէ. 12), շաբաթ օրն անգամ, եթէ ուժերորդ օրը շաբաթի պատահէր (Յովհ. է. 23). Նոյն օրը տղայը անուն կ'ընդունէին :

60. Եղիսաբեթ Չաքարիայէն ուսած ըլլալու էր Թէ Յովհաննէս կոչուելու է իւր տղան . այլ Թէ թնչպէս . — անշուշտ նշանագրերով :

61. Շատ հին սովորութիւն է հօր կամ ազգականի նորածիններու անուն դնելը :

63. Ներկայք կը զարմանան, վասն զի այր ու կին միաբանեցան այնպիսի մէկ անուան վրայ, որ իրենց ցեղին մէջ չկար :

կ'օրհնէր զԱստուած : *65 Եւ եզաւ վախ ամենուն վրայ , որոնք զայս կը լսէին , եւ անոնց վրայ ալ , որոնք անոնց շուրջը բնակած էին . եւ Հրէաստանի բոլոր լեռնակողմը այս ամէն բաները կը պատմուէին . 66 Եւ բոլոր լսողներն իրենց սրտերուն մէջ դրին ու կ'ըսէին . « Ի՞նչ պիտի ըլլայ այս տղան » : Եւ Տէրոջ ձեռքը անոր հետ էր : 67 Եւ անոր հայրը Զաքարիա լցուեցաւ Սուրբ Հոգով , մարգարէացաւ ու կ'ըսէ . 68 « Օրհնալ Տէր Աստուած Իսրայելի , որ այցելութեան ելաւ մեզի եւ իր ժողովրդեան փրկութիւն ըրաւ : 69 Եւ փրկութեան եղջիւր հանեց մեզի իր Դաւիթ ծառայի տունէն , 70 Ինչպէս խօսեցաւ բերանով այն սուրբերուն՝ որոնք սկիզբէն անոր մարգարէններն էին : 71 Մեր թշնամիներէն , եւ բոլոր մեզ ատողներուն ձեռքէն փրկութիւն ընէ , 72 ողորմութիւն ընել մեր հայրերուն , եւ յիշել իր սուրբ ուխտը : 73 Երգումը որ մեր Աբրահամ հօր երգուընցաւ , տալ մեզի : 74 առանց վախի , մեր թշնամիներուն ձեռքէն փրկուած՝ զանի պաշտել , 75 սրբութեամբ եւ արդարութեամբ մեր կենաց բոլոր օրերուն մէջ : *76 Եւ դո՛ւն , ո՛վ մանուկ , Բարձրելոյն մարգարէն պիտի կոչուիս , որովհետեւ Տէրոջ երեսին առջեւէն պիտի երթաս , անոր ճամբաները պատրաստելու : 77 Անոր ժողովրդեան գիտցընելու փրկու-

65. Ժողովուրդն արդէն զարմացած էր , երբ Զարարիա հասրացաւ , այս անգամ ալ աւելի կը զարմանայ և ո՛րքան լի միսիՊարուՍեանք կը լսէ Զաքարիայի երգը , որ կը զուշակէ փրկութեան եղջիւրն (Մեսիա) այլ եւս Դաւիթի տունէն հանած է , յիշելով անշուշտ Մարիամի յղութիւնը , Կալեւտէ Թէ Իսրայել այլ եւս թշնամիներէ փրկուած պիտի պաշտէ իւր Տէրը սրբութեամբ և արդարութեամբ :

72. Զաքարիա կը մարգարէանայ Թէ Աստուծոյ ողորմութեան այն շնորհն ոչ Թէ կենդանի Իսրայելի , այլ և պիտի ըլլար կենդանի Իսրայելի հայրերուն ալ , որք Թէեւ մեռած , այլ կենդանի էին (Մատթ. Իբ. 31-33) , այսինքն Քրիստոսով պիտի փրկուէին մեռեալ արդարներն ու կենդանի հաւատացեալները :

76. Յետոյ Զաքարիա բացէ ի բաց կը մարգարէանայ Թէ իւր զաւակին պաշտօնն ինչ պիտի ըլլայ . — կարապետ Արեգականն արդարութեան , որ լոյս պիտի տար անոնց , որոնք խաւարի և մահուան ստուերներու (մեղաց անդունդին) մէջ էին :

Թիւնը թողութեամբ անոնց մեղքերուն : 78 Մեր Աստուծոյն ողորմած գթութեանն համար , որով Արեւն այցելութիւն պիտի ընէ մեզի վերէն , 79 երեւնալ անոնց որոնք խաւարի եւ մահուան շուքերու մէջ կը նստէին , շակել մեր ոտքերը խաղաղութեան ճամբաներուն մէջ » : *30 Եւ տղան կ'աճէր ու կը զօրանար հոգեով , եւ անապատին մէջ էր մինչեւ անոր Իսրայելի երեւնալու օրը :

ՓԼՈՒԽ Բ.

*1 Եւ եղաւ որ այն օրերը հրաման ելաւ Օգոստոս կայսրէն՝ աշխարհագիր ընել բոլոր տիեզերքի մէջ : 2 Այս առաջին աշխարհագիրն եղաւ Կիւրենոսի Ասորիներու վրայ դատաւորութեան ատենը : *3 Եւ կ'երթային ամէնքն աշխարհագիրը մտնելու իր քաղաքին մէջ : 4 Ելաւ Յովսէփ ալ Գալիլեայէն՝ Նազարէթ քաղաքէն՝ զէպ ի Հրէաստան , Դաւթի քաղաքը , որ Բեթղեհեմ կ'ըսուի , անոր Դաւթի տունէն ու ցեղէն ըլլալուն 5 Իւ աշխարհագիրը մտնելու համար Մարիամին հետ մէկտեղ , որ անոր

80. Յովհաննէս յետոյ այն անապատին մէջ ապրեցաւ , ուր սկսաւ քարոզել (Մատթ. Գ. 1) :

1. Այն օրերն այսինքն Յովհաննէսի ծննդեան օրերն աշխարհագիր եղաւ : Աշխարհագիրն ըլլալու հրամանը նշան էր թէ Հրէաստան ենթարկուած է Հռովմէական պետութեան պաշտպանութեանը տակ Յովսէպոս կը յիշատակէ թէ հազարի չափ Փարիսեցիներ ըմբոստութեան համար տուգանքի դատապարտեցան , կ'երեւի թէ սոքա արձանագրուիլ չուզեցին : Կիւրենոս ի Կիլիկիա յաջող յաղթութիւն մը ընելուն համար ի Հռովմայեացի թական կոթողի արժանացաւ , և կ'երեւի թէ Օգոստոսէն յայնժամ կարգեցաւ զինուորական ընդհանուր հրամանատար Ասորեստանի և սահմանա. կից աշխարհներու և հրաման ստացաւ հսկել սոյն առաջին աշխարհագրին և յետոյ Տրեբըն միանգամայն Ասորոց դատաւոր անուանեցաւ սստ տիեզերք բառն ալ բովանդակաշխարհս իմանալու չէ , այլ այն աշխարհներն որք էին հպատակ Հռովմէական պետութեան :

3. Ըստ Հրէական սովորութեան արունքը միայն արձանագրուելու էին , իւրաքանչիւր որ իւր ծնած տեղը , վասն զի խստիւ կը պահուէին

Նշանուած էր եւ յղի էր : 6 Եւ եղաւ որ անոր շոն հասած ատեն , անոր ծնելու օրերը լցուեցան : *7 Եւ իր անգրասիկ զաւակը ծնաւ , եւ խանձարուբներով փաթթեց , եւ մսուրի մէջ դրաւ զանի , որովհետեւ իջեւանին մէջ ամսոնց տեղ չկար :

*8 Եւ այն տեղ հովիւներ կային բացօթեայ՝ որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնները կը պահէին : Եւ Տէրոջ հրեշտակը՝ երեւցաւ անոնց : 9 Եւ Տէրոջ պատճր ծագեցաւ անոնց , եւ մեծ երկիւղով վախցան : 10 Եւ հրեշտակը կ'ըսէ անոնց . « Ի՛ր վախնաք , որովհետեւ անա ձեզի մեծ ուրախութիւն կ'աւետեմ , որ բոլոր ժողովրդեան պիտի ըլլայ . 11 վասն զի ձեզի Փրկի՞ջ ծնաւ , որ է օծեալ Տէր , Դաւթի քաղաքին մէջ : 12 Եւ այս նշան ձեզի . պիտի գտնէք խանձարուբներուն մէջ փաթառուած տղայ , եւ մսուրին մէջ գրուած » : *13 Եւ յան-

դեռ ցելական խորութիւնները . բայց որովհետեւ հրամանն էր Հռովմէական , և կը հրամայէր ըստ Հռովմէական օրինաց այր ու կին և մանկտի անխտիր արձանագրել , ուստի հարկ եղաւ Մարիամու Յովսեփայ . հետ երթայ ի Բեթլեհէմ :

7. Ի՞նչ Աստուծային արգար տնօրինութիւն . Աստուած կը ծնի մսուրի այսինքն արքայի բնակարանին մէջ , աղբատներու հետ ըլլալը ցոյց տալու համար , և յետոյ կը թաղուի հարուստի սեպհական գերեզմանին մէջ , ուրեմն հարուստներ եւ հարստութիւն եւս կ'օրհնուին Աստուծմէ , այլ սակայն ըստ հաւատոց :

8. Հովիւներուն բացօթեայ լինելէն չհետեւիր Սէ ձմեռ չէր . գիտնալ պէտք է Սէ յևսիա ուր ձմեռն այնքան սաստիկ չէ , ընտանի անասուններն ոչխար , կով եւ այլն հովիւներուն հետ բացօթեայ կը գիշերեն . ներս կ'առնուին , յայնժամ ե՞՞՞՞ օղը բաց չէ : Իսկ Սէ Յունվար վեցին Սէ Դեկտեմբեր 25ին ծնաւ Քրիստոս . — Դեկտեմբեր 25ը չէր ծանօթ եւ չէր պահուեր մինչեւ ցՉորրորդ դար : Բաց ի այլ եւ այլ վկայութիւններէ՝ նոյն իսկ Յովհան Ոսկեբերան յամի Տեառն 386 կ'ըսէ Սէ « Տասը տարի միայն էր որ Դեկտեմբերի 25ը ծանօթ եղաւ Յոյներուն , իբր օր ծննդեան Քրիստոսի , եւ այն եւս արեւմտեան այսինքն Հռովմայ եկեղեցւոյն միջոցաւ եղաւ » :

13. Աւետատու հրեշտակէն յետոյ՝ ուրիշ հրեշտակներու բազմութիւն մը կ'երգէ Սէ Աստուծոյ ընծայելի փառքն , որ կը տրուէր անոտիներու , ալ յերկինս ճշմարիտ Աստուծոյ պիտի տրուէր եւ խաղաղութիւնն որ չկար երկրի վրայ եւ սէրը մարդիկներուն մէջ , պիտի ճաստատուէին այլ եւս :

կարծակի այն հրեշտակին հետ երկնաւոր զօրքերու բազմութիւն եղաւ, որոնք կ'օրհնէին զԱստուած ու կ'ըսէին. 14 «Փառք Աստուծոյ ի վեր յերկին եւ երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդիկներուն մէջ հաճութիւն» : 15 Եւ եղաւ, երբ հրեշտակներն անոնցմէ վերացան, հովիւներն իրարու կ'ըսեն. «Եկէք. մինչեւ Բեթղեհէմ երթանք, եւ տեսնենք թէ ի՞նչ է այս բանը, որ մեզի եղաւ եւ որ Տէր ցուցուց մեզի» : 16 Եւ եկան իսկոյն, եւ գտան Մարիամը ու Յովսէփը, եւ աղան մտորին մէջ դրուած : 17 Եւ երբ տեսան, ճանչցան խօսքին համաձայն՝ որ ըսուեցաւ անոնց տղուն վրայով : *18 Եւ ամէնքն որոնք կը լսէին՝ կը զարմանային այն խօսքերուն վրայ, որ հովիւները անոնց խօսեցան : *19 Եւ Մարիամ բոլոր այս խօսքերը կը պահէր, եւ կը մտածէր իր մտքին մէջ : 20 Եւ դարձան հովիւները կը փառաւորէին եւ կ'օրհնէին զԱստուած այն ամենուն համար որ լսեցին ու տեսան, ինչպէս պատմուեցաւ անոնց :

*21 Եւ երբ զանի թլփատելու ութ օրերը լմնցան, եւ անոր անունը Յիսուս դրուեցաւ, ինչպէս որ հրեշտակէն կոչուած էր՝ զեռ արգանդի մէջ չյղացուած :

*22 Եւ երբ Մովսէսի օրէնքին համեմատ անոր սրբութեան օրերը լմնցան, Երուսաղէմ բերին զանի Տէրոջ դէմ հանելու : *23 Ինչպէս Տէրոջ օրէնքին մէջ գրուած է, թէ «Ամէն արու որ արգանդը կը բանայ՝ Տէրոջ տուրք պիտի կոչուի» : *24 Եւ նուէր տալ՝ Տէրոջ օրէնքին մէջ

18. Ուրեմն այս հովիւներն եղան առաջին Աւետարանիչները, քանի որ պատմեցին ուրիշներու ինչ որ տեսան ու լսեցին հրեշտակէն, որք եւ կարի զարմացան անշուշտ :

19. Մարիամ սրտին մէջ կը պահէ այս ամէնը, ուրեմն ալ աւելի կ'ամբապնդի ի հուստոս :

21. Գրիստոս կը Թլփատուի, վասն զի հնազանդ էր Օրինաց :

22. Քառասներորդ օրն էր սրբութեան օր (ՂԵԼՄ. ԺԲ. 2-4), այսինքն մայրը պիտի մաքրուէր օրհնութեամբ քահանային :

23. Եզրպտոսի ւսնդրանիկներու սպանութեանն ի փոխարէն Աստուած պահանջեց որ Իսրայելի ամէն արու անդրանիկ իրեն ձուրուի (Ելք. ԺԳ. 2-15, ԹԻԲ. Գ. 13) :

24. Ընծան էր գառն մի ողջակէզ. եթէ մէկը կարող չըլլար բերել

ըստւածին պէս, տատրակներու զոյգեր կամ աղանինե-
րու երկու ձագեր)։

*25 Եւ անա Երուսաղէմի մէջ մարդ մը կար, որուն
անունը Սիմէոն էր, եւ ան մարդը արդար եւ երկիւղած
էր, եւ Իսրայելի միսիթարութեանը կ'ակնկալէր, եւ Սուրբ
Հոգին անոր մէջ էր։ 26 Եւ ան Սուրբ Հոգիէն հրաման
առած էր շտեմնել մահը, մինչեւ որ Տէրոջ Օծեալը տես-
նէ։ 27 Եւ Հոգւով տաճարը եկաւ. եւ երբ ծնողքը Յի-
սուս մանուկը բերին, որ օրէնքին սովորութեան համե-
մատ անոր ընեն։ 28 Եւ ան առաւ, զանի իր գիրկը ըն-
դունեց, եւ զԱստուած օրհնեց ու կ'ըսէ. 29 « Հիմա Տէր,
քու ծառագ խաղաղութեամբ արձկէ քու խօսքիդ համե-
մատ. 30 որովհետեւ իմ աչքերս քու փրկութիւնդ տես-
ան, 31 որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդներու առ-
ջեւ։ 32 Հեթանոսներու յայանութեան լոյսը, եւ քու Իս-
րայել ժողովրդեանդ փառքը)։ 33 Եւ անոր հայրն ու մայրը
զարմացած էին այն խօսքերուն վրայ, որ անոր վրայով
կը խօսէին։ *34 Եւ Սիմէոն զանոնք օրհնեց, եւ անոր
մօրը Մարիամին կ'ըսէ. « Ահա աս կը կենայ Իսրայելի
մէջ շատերուն գլորմանն ու կանգնուելուն համար եւ ի
նչան հակառակութեան։ *35 Եւ քու սրտէդ թուր պիտի

զառն, անոր Թոյլ տրուած էր բերել երկու տատրակ կամ աղանիի եր-
կու ձագ (Ղեւտ. ԺԲ. 6-8)։ Աղբատ էր Մարիամ (Մատթ. Ծան. Բ. 1-14)։

25. Շատ անգլեւեր աւանգուածիւններ կան այս Սիմէոնի վրայ. իբր
Թէ սա եղած ըլլայ մին այն բարբիներէն որք Հին-Կտակարանը յունա-
րենի Թարգմանեցին հրամանաւ Պտղեմէոսի Թագուորին Եզրպտոսի, նախ
քան զԲրիտտոս յամին 275։ Ուրեմն Սիմէոն տպրած կ'ըլլայ զրեԹէ 300
տարի։ Ինչ և իցէ սա ճշմարիտ է որ Սիմէոն էր Հոգւով սրբով, և ինչ որ
մարգարէացաւ Յիսուսի համար, ճշդիւ կատարուեցաւ, վասն զի Մեսիայի
Թագաւորութեան բարբիքն ոչ Թէ միայն հրէութիւնը, այլ և հեթանոսու-
թիւնն ալ պիտի վայելէր որպէս զուշակուած էր արդէն (Ես. ԽԹ. 6)։

34. Արդարեւ Յիսուս Իսրայելի մէջ եզաւ շատերու քար գայթակղու-
թեան և շատերու վէմ փրկութեան (Բ. Կորնթ. Բ. 6)։ Այլ բովանդակ մարդ-
կութեան միշտ եզաւ և է յաւիտենական օրհնութիւն և միսիթարութիւն։

35. Այ Յովտէփ, այլ Մարիամ պիտի խոցուէր. ուրեմն Յովտէփ չփի-
րաւորեցաւ Մարիամի պէս տեսնելով Յիսուսի խաչի չարչարումքն ու մահը.
ուրեմն Մարիամ որ մինչեւ յայնժամ աւետիս ու խնդակցութիւն լսած էր,

անցնի . որովհետեւ շատ սրտերէ խորհուրդներ պիտի յայտնուին » :

*36 Եւ հոն էր Աննա մարգարէ՝ Փանուէլի աղջիկը , Ասերի ցեղէն . աս իր օրերն շատ անցուցած էր , իր կուսութենէն ի վեր էրկանը հետ եօթը տարի ապրելով : 37 Եւ ութսուն չորս տարեկան որբուարի էր եւ տաճարէն չէր զատուեր , այլ ծղմով ու ազօթքով գիշեր ուցերեկ կը ծառայէր : 38 Եւ աս այն ժամուն ելլելով Տիրոջ մէջ կը գոհանար . եւ անոր վրայով կը խօսէր ամենուն՝ որոնք Երուսաղէմի փրկութեանը կ'ակնկալէին : *39 Եւ երբ ամէն բան կատարեցին Տէրոջը օրէնքին համեմատ , իսկոյն Գալիլեա դարձան իրենց Նազարէթ քաղաքը : 40 Եւ մանուկը կ'աճէր ու կը զօրանար իմաստութեամբ լցուած , եւ Աստուծոյ շնորհքն անոր վրայ էր :

*41 Եւ անոր ծնողքը տարուէ տարի զատկի տօնին Երուսաղէմ կ'երթային : 42 Եւ երբ ան տասն երկու տարեկան եղաւ , տօնին սովորութեանը համեմատ անոնք երբ Երուսաղէմ եկան , 43 եւ այն օրերը լմնցուցին , եւ նորէն ետ դարձան , Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց , եւ անոր ծնողքը չգիտցան : 44 Անոր վրայով կը կարծէին թէ ճամբորդներու հետ է . երբ մէկ օրուան ճամբայ գացին եւ զանի կը փնտռէին դրացիներու եւ ծանօթներու մէջ : 45 Եւ երբ չգտան , նորէն Երուսաղէմ դարձան զանի փնտռելու : 46 Եւ երբք օրէն ետքը զանի տաճարին մէջ գտան , որ վարդապետներուն հետ կը նըստէր , անոնցմէ կը լսէր ու անոնց կը հարցնէր : 47 Ամէնքն ալ որոնք անորմէ կը լսէին , կը զարմանային անոր իմաստութեանն ու անոր պատասխաններուն վրայ :

այժմ այս գոյժը լսելով կը խառնուի իւր բոլոր ուրախութեանց մէջ տրբամուծիւն ևս , որով կ'ստուգուի սա ճշմարտութիւնը թէ չկայ արեւուն տակ անտրտմախառն ուրախութիւն :

36. Աննա ևս էր այն բարեպաշտներէն , որք կը հաւատային թէ այլ ևս հասած է Մեսիայի զայտնան ժամանակը :

39. Վերադարձ Յիսուսի ի Նազարէթ (Մատթ. Բ. 23) :

41. Յիսուս իւր մանկութեան ու պատանեկութեան մէջ այս միակ հրաշայի զօրութիւնը ցոյց տալով՝ յապուշ կը կրթէ իւր ծնողքու վարդապետներն և ունկնդիրները :

*48 Եւ երբ զանի տեսան, սքանչացան. եւ իր մայրը ա-
նոր կ'ըսէ. «Որդեակ, ի՞նչո՞ւ դուն մեզի այդպէս բրիր.
ահա քու հայրդ եւ ես կը տառապէինք, քեզ կը փնտր-
ուէինք:» 49 Եւ կ'ըսէ անոնց. «Ինչու զիս կը փնտուէիք,
չէ՞իք գիտեր թէ ինձի պէտք է Հօրս տանը մէջ ըլլալ»: *50
Եւ անոնք չհասկցան խօսքը՝ որ անոնց խօսեցաւ: 51
Եւ անոնց հետ իջաւ եւ Նազարէթ գնաց, եւ անոնց հնա-
զանդ էր. եւ անոր մայրը այս ամէն խօսքերը իր սրտին
մէջ կը պահէր: *52 Եւ Յիսուս կը զարգանար իմաստու-
թեամբ ու հասկողով եւ Աստուծմէ եւ մարդիկներէն
չնորհք Գործելով:

Ք Լ Ո Ւ Խ Ք

*1 Տիբերիոս կայսեր տէրութեան տասնհինգերորդ
տարին, Պոնտացի Պիղատոսի Հրէաստանի վրայ դատաւո-
րութեան եւ Հերովդէսի Գալիլեացիներու վրայ չորրորդա-
պետութեան, եւ Լիւսանիայի Աբելինացիներու վրայ չոր-
րորդապետութեան, եւ անոր Փիլիպպոս եղբոր Իտուրա-
ցիներու եւ Տրաքոնացիներու երկրին վրայ չորրորդա-
պետութեան, *2 եւ Աննայի եւ Կայիափայի քահա-

48. Երբ Մարիամ Յովսէփը Յիսուսի հայր կ'անուանէ, Յիսուս կը
հերքէ զԱստուած ցոյց տալով հայր իրեն (Յովհ. Ե. 17: Ժ. 30):

50. Յիսուսի ծնողք թէեւ հրեշտակէն լսած էին թէ նա է որդի Աս-
տուծոյ, այլ սակայն չտեսնելով տասներկու տարիէ ի վեր նորա ոչ մէկ
աստուածային զօրութիւնը, ուստի չեն ըմբռներ նորա «Հօրս տանը մէջ
ըլլալ» խօսքը.

52. Յիսուս իբր մտրդ կը զարգանար տակաւ առ տակաւ, հասակով
և իմաստութեամբ, այլ որովհետեւ մեղք չունէր, ուրեմն էր շնորհալի,
այսինքն Աստուծմէ և մարդիկներէն շնորհք կը գտներ, կը սիրուէր և կը
յարգուէր:

1. Տիբեր էր յայնժամ կայսր Հռովմայ, իսկ սոյն Հերովդէսի և Փիլիպ-
պոսի, Պիղատոսի և Կայիափայի համար ծանօթագրուած է արդէն (Մատթ.
ԺԳ. 1: ԻՁ. 3: ԻԷ. 2):

2. Աննա էր բուն քահանայապետը, Կայիափայ յափշտակած էր այդ
բարձրագոյն պաշտօնը: Իտուրիա էր այն երկիրն որ Լիբանանու ստորո-

նայապետութեան աստն Աստուծոյ խօսքն եղաւ անապատին մէջ Զաքարիայի որդի Յովհաննէսին վրայ : 3 Եւ եկաւ Յորդանանու ամէն կողմը՝ քարոզել ապաշխարութեան մկրտութիւնը մեղքերու թողութեան համար *4 Ինչպէս որ գրուած է Եսայի մարգարէի պատգամներու գիրքին մէջ . « Անապատին մէջ խօսքի ձայն կայ . Տէրոջը ձամբան պատրաստ ըրէք , եւ ուղիղ ըրէք անոր շաւիղները : 5 Ամէն ձորեր պիտի լցուին , եւ ամէն լեռներ ու բլուրներ պիտի ցածնան , եւ զժուարները դիւրին եւ խորդուրորդ գետինները հարթ ձամբայ պիտի ըլլան : 6 Եւ ամէն մարմին պիտի տեսնէ Աստուծոյ փրկութիւնը » :

*7. Եւ կ'ըսէր անորմէ մկրտուելու եկող ժողովուրդներուն . « Իժերու ծնունդներ , ո՞վ ձեզի ցուցուց փախչիլ բարկութենէն որ պիտի գայ : 8 Ասկէ ետքը ապաշխարութեան արժանի պտուղներ բերէք , ու մի՛ սկսիք ըսել թէ « Աբրահամը հայր ունինք . զայս կ'ըսեմ ձեզի , թէ Աստուած կրնայ այս քարերէն Աբրահամու որդիներ հանել : 9 Բայց հիմա տապարը ծառերուն արմատին քով է . ամէն ծառ որ աղէկ պտուղ չբերեր , կը կտրուի եւ կրակը կը ձգուի » : *10 Անոր կը հարցնէին ժողովուրդները ու կ'ըսէին . « Ուրեմն ի՞նչ ընենք » : 11 պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Ով որ երկու հագուստ ունի , մէկը անոր թող տայ որ չունի . եւ ով որ կերակուր ունի , անանկ թող ընէ » : 12 Մաքսաւորներն ալ եկան մկրտուելու ու կ'ըսեն անոր . « Վարդապետ , մենք ի՞նչ ընենք » : 13 Եւ ան

տէն կ'երկարէր յայկոյս Յորդանանու մինչեւ Սիզոնի լեռները և Տրաքոնիա էր յայնկոյս Յարգանանու ի ստորոտս Լիբանանու , իսկ Աբելինա էր գաւառ մերձ Լիբանանու , որոյ իշխանապետն էր յայնժամ Լիւսանիաս :

4. Եսայի Խ. 3: ԾԲ. 10:

7-18. Յովհաննէս կը քարոզէ և Քրիստոսի համար կը վկայէ (Մատթ. Գ. 1-12: Մարկ. Ա. 7-8: Յովհ. Ա. 19-28):

10-14. Աշխարհիս մէջ զլիսւորապէս երեք դասակարգեր կան. մին որ արհեստով կ'ապրի և միւսն առեւտրով , իսկ միւսն ճոշակով: Առաջին դասակարգն գժուծեամբ ապրած ըլլալու համար իւր աւելորդէն տալու է ուրիշին որ կարօտ է • երկրորդն արդարուծեամբ ապրած ըլլալու համար օրէնքին հպատակելու է , օրէնքէն դուրս ելնելու չէ • իսկ երրորդն հաւատարմուծեամբ ապրած ըլլալու համար իւր ճոշակէն դուրս ուրիշ բանի ակնկալելու չէ :

Կ'ըսէ անոնց . « Զեզի հրամայուածէն աւելի բան մի՛ ըտէք » : 14 Զինուորներն ալ անոր կը հարցնէին ու կ'ըսէին . « Մենք ի՞նչ ընենք » : կ'ըսէ անոնց , « Մէկը մի՛ հաբատահարէք . եւ մէկը մի՛ գրպարտէք . ձեր թոշակները ձեզի հերիք թող ըլլան » :

15 Երբ ժողովուրդը կ'ակնկալէր եւ ամէնքն ալ կը խորհէին իրենց սրտերուն մէջ Յովհաննէսին համար թէ արդեօք ա՞ն է Քրիստոսը » : 16 Ամենուն պատասխանատուաւ ու կ'ըսէ . « Ես ձեզ ջրով կը մկրտեմ , բայց ինչ հզօրագոյնը պիտի գայ , որուն չեմ արժանի կօշիկները վերցնել , ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգւով ու կրակով , 17 որուն ձեռքն է հեծանոցը , իր կալը մաքրելու եւ ցորենը իր շտեմարանը ժողվելու համար . եւ յարդը պիտի այրէ անչէջ կրակով » : 18 Աւրիշ շատ բան մխիթարութեամբ կ'աւետարանէր ժողովրդեան :

*19 Բայց չորտորդապես Հերովդէս անորմէ յանդիմանուելով եղբորը կնոջ Հերովդիայի համար , եւ այն ամէն շարիքներուն համար զոր Հերովդէս գործեց , 20 ան ամենուն վրայ զայն ալ աւելցուց , եւ Յովհաննէսը բանտ դրաւ :

*21 Եւ եղաւ , որ երբ բոլոր ժողովուրդը մկրտուեցաւ , եւ Յիսուս ալ մկրտուելով աղօթք կ'ընէր , երկինք բացուեցաւ , 22 Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երեւոյթով կ'իջնէր աղաւնիի պէս անոր վրայ . եւ երկինքէն ձայն եղաւ որ կ'ըսէր . « Իուն ես իմ սիրելի Արգիս , քեզի հաւնեցայ » :

*23 Եւ ինք Յիսուս գրեթէ երեսուն տարեկանի կ'սկըսէր , որ ինչպէս կը կարծուէր Յովսէփի որդի , որ ան

19-20. Յովհաննէս կը բանտարկուի (Մատթ. ԺԳ. 1-12: Մարկ. 2. 44-29: Ղուկ Թ. 7-17):

21-22. Յիսուս կը մկրտուի (Մատթ. Գ. 13-17: Մարկ. Ա. 9-11):

23-38. Ազգաբանուծիւն Յիսուսի (Մատթ. Ա. 1-17): Արդիտեսեւ Ղուկաս հեծանոցսց համար կը գրէր իւր Աւետարանը, ուստի կը թուի թէ իւր այս ազգահամարն՝ է Մարիամինը, մինչ Մատթէոսինն է Յովսէփինը: Մարիամ կը սերէր Դաւթի Նածան որդւոյն ճիւղէն , Սողոմոնի տոհմը ընդուեցաւ Յերոնիայով (Երեմ. ԻԲ. 30), և Սաղամիէլ Նածանայ տունէն յաշորդեց և եղաւ նահապետ ցեղին :

Յակոբին , որ ան Հեղին , որ ան Մատաթիային , որ ան Ղեւիին , որ ան Մեղքիին , որ ան Յաննէին , 24 որ ան Յովսէփին , որ ան Մատթէին , որ ան Ամովսին , 25 որ ան Նաւուսին , որ ան Եղիին , որ ան Նանքէին , որ ան Մահաթիին , որ ան Մատաթիային , որ ան Սեմէին , 26 որ ան Յովսէքիին , որ ան Յովդային , որ ան Յովնանին , 27 որ ան Բեսէին , որ ան Զորարարելիին , որ ան Սաղաթիէլին , 28 որ ան Ներիին , որ ան Մեղքիին , որ ան Ադդիին , որ ան Կովսամին , որ ան Եղմովդադին , որ ան Էրին , որ ան Յեսուէին , 29 որ ան Եղիազարին , որ ան Յովրամին , որ ան Մատթէին , որ ան Ղեւիին , 30 որ ան Սիմոնին , որ ան Յուդային , որ ան Յովսէփին , որ ան Յովնամին , որ ան Եղիակիմին , որ ան Մեղթիին , 31 որ ան Մէննէին , որ ան Մատաթիային , որ ան Նաթանին , որ ան Դաւիթին , որ ան Յէսսէին , որ ան Ովբէղին , որ ան Բոոսին , 32 որ ան Սաղմոնին , որ ան Նասսոնին , որ ան Ամինադարին , որ ան Արամին , որ ան Ադմէին , որ ան Առնէին , որ ան Եսրովմին , որ ան Փարէսին , որ ան Յուդային , 34 որ ան Յակոբին , որ ան Իսահակին , որ ան Աբրահամին , որ ան Թարային , 35 որ ան Նաքովրին , որ ան Սերուքին , որ ան Ռազաւին , որ ան Փաղէկին , որ ան Եբերին , որ ան Սաղային , 36 որ ան Կայնանին , որ ան Արփաքսադին , որ ան Սեմին , որ ան Նոյին , 37 որ ան Ղամէքին , որ ան Մաթուսաղային , որ ան Ենովքին , որ ան Յարեղին , որ ան Մաղաղիէլին , որ ան Կայնանին , 38 որ ան Ենովսին , որ ան Սէթին , որ ան Ագամին , որ ան Աստուծոյ :

Ք Լ Ա Ի Ե Գ .

*1 Եւ Յիսուս Սուրբ Հոգևով լցուած Յորդանանէն դարձաւ , եւ Հոգևով անապատ կը տարուէր : 2 Քառասուն որ Սատանայէն փորձուելով , չկերաւ ու չխմեց այն օրերը . եւ երբ լմնցան «յ՛ յէբ՛ն» , անօթեցաւ : 3 Եւ Սատանան անոր կ'ըսէ . « Թէ որ Աստուծոյ որդին ես , այդ քա-

1-13. Փորձութիւնն Յիսուսի ի սատանայէ (Մատթ. Ե. 1-11; Մարկ. Ա. 13):

բին ըսէ որ հաց ըլլայ) : 4 Յիսուս պատասխան տուաւ անոր ու կ'ըսէ . « Գրուած է թէ « Մարգ միայն հացով չապրիր , հապա Աստուծոյ ամէն խօսքովը » : 5 Եւ զանի քարծր լեռ մը հանելով , բոլոր աշխարհի թագաւորութիւնները ցուցուց մէկ վայրկեանի մէջ : 6 Եւ Սատանան կ'ըսէ անոր , « Քեզի պիտի տամ այս ամէն իշխանութիւններն ու ասոնց փառքերը . որովհետեւ ինձի տրուած է , եւ որու որ ուզեմ՝ կուտամ զայն , 7 ուստի թէ որ իշխալով երկրպագութիւն ընես իմ առջեւ , ամէնը քեզի թող ըլլայ » : 8 Յիսուս անոր պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Գրուած է . « Քու Տէր Աստուածոյդ երկրպագութիւն ընես եւ միայն զանի պաշտես » : 9 Եւ զանի Երուսաղէմ բերաւ , եւ տաճարի աշտարակին վրայ կեցուց ու կ'ըսէ անոր . « Թէ որ Աստուծոյ որդի ես , քեզ ասկէ վար ձգէ . 10 որովհետեւ գրուած է թէ « Իր հրեշտակներուն քեզի համար պատուիրուած է , որ քեզ պահեն 11 եւ իրենց ձեռքերուն վրայ քեզ վերցնեն , որ ոտքդ քարին ընաւ երբէք չզարնես » : 12 Յիսուս անոր պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Ըսուած է թէ « Քու Տէր Աստուածդ չփորձես » : 13 Եւ Սատանան բոլոր այն փորձութիւնը կատարելէ յետոյ՝ ժամանակ մը հեռացաւ անորմէ :

14 Եւ Յիսուս Հոգւոյն զօրութեամբ Գալիլեա դարձաւ . եւ անոր վրայով համբաւ ելաւ զաւառին ամէն կողմերը : 15 Եւ ան անոնց ժողովրդանոցին մէջ կը սովորեցնէր ամենէն փառաւորուելով : 16 Եւ Նազարէթ եկաւ , ուր մեծցած էր . եւ իր սովորութեանը համեմատ շարաթ օրը ժողովրդանոցը մտաւ : 17 Եւ Եսայի մարգարէի գիրքն անոր տուին . եւ գտաւ այն տեղը , որ գրուած էր . *18 « Տէրոջ Հոգին իմ վրայ . անոր համար զիս օծեց , աղքատներու աւետարանել զիս ղրկեց , սրտաբեկները բժշկել , 19 Գերիներուն թողութիւն քարոզել եւ կոյրերուն տեսնել , վիրաւորներն ա-

18. Եսայի կա. 1-2; ԽԹ ԿԶ: Արդարեւ Յիսուս եղաւ աղքատներու օրհնութիւն , սրտաբեկներու միսթարութիւն , ազատութիւն նոցա , որք մեզաց գերի էին , լոյս նոցա , որոց աչերն էին կուրցած մեղաց խաւարէն , բժշկութիւն նոցա , որք ի տազնապի էին , ի չարչարանս և ի վէրս կը հեծէին : Նա հաստատելով Աւետարանի տնտեսութիւնը , աշխարհի շնորհեց նոր Յորելեան , հանգստեան և երջանկութեան ամ ու ժամանակ :

դաս արձկել , Տէրոջն ընդունելի տարին քարոզել : *20 Եւ գիրքը գոցելով պաշտօնեային տուաւ ու նստաւ . եւ առ մենուն աչքերն , որոնք ժողովրդանոցին մէջ էին , անտր կը նայէին : 21 Եւ սկսաւ անոնց ըսել . « Այսօր այս գիրքերը ձեր ականջներուն մէջ լցուեցան » : 22 Եւ ամէնքն ալ անտր կը վկայէին , եւ կը զարմանային այն չնորայի խօսքերուն վրայ , որոնք անտր բերնէն կ'ելլէին եւ կ'ըսէին . « Աս Յովսէփի որդին չէ » : 23 Եւ կ'ըսէ անոնց . « Անշուշտ դուք ինծի պիտի ըսէք այս առակը . « Բժիշկ , քու անձդ բժշկէ . որչափ լսեցինք որ կափառնայու մի մէջ ըլլիր , հոս քու գաւառիդ մէջ ալ ըրէ » : *24 Եւ կ'ըսէ . « Ըշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ « Մարգարէ մը իր գաւառին մէջ ընդունելի չէ : *25 Յիրաւի կ'ըսեմ ձեզի որ Եգիպայի օրերն շատ

20. Թոյլտուութիւն կար ու է պատուաւոր մարդու ժողովրդանոցներու մէջ ընթեռնուլ Սուրբ-Գիրքը և մեկնել :

24 (Մատթ. ԺԳ. 58: Յովհ. Դ. 44):

25-30. Տէր Յիսուս Հրէից կ'ազդարարէ Թէ ինչպէս ի հնումն Եգիպայի օրհնութիւնը վայելեց հեծանոս կին մը և ինչպէս Եղիսէէն բժշկեցաւ միայն Նէեման Ասորին , այս երկու օրհնակներն բաւական ապացոյց են Թէ Աստուած մարդիկն իրարմէ չխտրեբ , այլ արժանաւորին կը շնորհէ իւր բարիք , ուստի Մեսիայի Թագաւորութեան օրհնութիւնն ու շնորհք նոցա միայն պիտի հասնին , որք պիտի աշակերտին ճշմարտութեան , և այս՝ ոչ Թէ միայն Իսրայելի , այլ և հեծանոսաց : Հրեայք որք Մեսիայի Թագաւորութեան շնորհքն ու օրհնութիւն միայն իրենց համար կը կարծէին , և ոչ բնաւ ուրիշ ազգի . Հրեայք՝ տեսնելով որ մէկ կողմէն Յիսուս գինքը Մեսիայ կը հռչակէ և միւս կողմէն կը փակէ Իսրայելի առջեւ Մեսիական արքայութեան դռները , այն աստիճան կատաղեցան , որ անմիջապէս բռնեցին Յիսուսը , և քաղաքէն դուրս հանելով՝ առին տարին ի պրսծայր գազամ այն լերան , որոյ վրայ Նազարէթ շինուած էր , անտի վար նետելու համար Յիսուսը . այլ սակայն որովհետեւ Յիսուսի նահատակութեան ժամը հասած չէր , ուստի պրծաւ (Յովհ. Ը. 59: Ժ. 39): Իգնատիոս Ենորհալի եւս կը գրէ . Հին է այս և ոչ նոր , խոտել Աստուծոյ զՀրեայան և ընտրել զհեծանոսս . . . : Մրբեցաւ Նէեման ջրովն Յորդանանու , և զնոյն բորոտութիւն՝ զոր մերկացաւ նա , զգեցաւ Գէեզի՝ աշակերտ Եգիպէի : Այսպէս եւ հեծանոսք մերկացան զմեզս եւ զանհաւատութիւն ի ջուրս աւազանին , եւ զնոյն զգեցան աշուկերտքն Մովսէսի , արդ՝ ըստ որում առ մարգարէսն տպացաւ խորհուրդ օտարանալոյն որդւոցն Իսրայելի եւ հաւատոցն հեծանոսաց ի

որքեւարիներ կային Իսրայելի մէջ, եւ երբ երկինք գոցուեցաւ երեք տարի եւ վեց ամիս, մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ: 26 Եւ անոնցմէ ոչ մէկուն Նղիա զրկուեցաւ, հապա միայն Սիդոնացիներու Սարեփթայ քաղաքի մէջ որքեւարի կնկան մը: 27 Եւ շատ բորոտներ կային Իսրայելի մէջ Նղիսէ մարգարէի ատեն եւ անոնցմէ մէկը չարքուեցաւ, հապա միայն Ասորի Նէեման: 28 Եւ ժողովրդանոցին մէջ ամէնքն ալ բարկութեամբ լցուեցան, երբ այս խօսքերը կը լսէին: 29 Եւ ելլելով զանի քաղաքէն դուրս հանեցին, եւ բերին զանի մինչեւ լերան ծայրը, որուն վրայ անոնց քաղաքը շինուած էր, զանի գահավէժընելու: 30 Եւ ան անոնց մէջէն անցնելով կ'երթար:

*31 Եւ իջաւ Գալիլեացիներու Կափառնայում քաղաքը, եւ շաբաթ օրերը անոնց կը սովորեցնէր: 32 Եւ անոր վարդապետութեանը վրայ կը զարմանային, որովհետեւ անոր խօսքը իշխանութեամբ էր: 33 Եւ ժողովրդանոցին մէջ մարդ մը կար, որ պիղծ դեւի ոգի ունէր, եւ մեծ ձայնով պոռաց 34 ու կ'ըսէ. «Թող տուր. մեր եւ քու մէջդ ի՞նչ կայ, Նազովրեցի Յիսուս, մեզի կորսնցնելո՞ւ եկար. քեզ գիտենք, ո՞վ ես, Աստուծոյ Սուրբը»: 35 Յիսուս անոր սաստեց ու կ'ըսէ. «Պապանձէ ու ասորմէ ել»: զեւր զանի հոն մէջտեղը գետինը զարկաւ ու անորմէ ելաւ, եւ անոր չմնասեց: 36 Եւ ամէնքն ալ զարմացան, իրարու հետ կը խօսէին ու կ'ըսէին, «Այս ի՞նչ խօսք է, իշխանութեամբ եւ զօրութեամբ կը սաստէ պիղծ ոգիներուն ու կ'ելլեն»: 37 Եւ անոր վրայով համբաւ կը տարածուէր շրջակայ գաւառին ամէն կողմերը:

*38 Եւ ան ժողովրդանոցէն ելլելով, Սիմոնի տունը: մտաւ: 39 Սիմոնի զոքանջը սաստիկ ջերմով կը տառա-

ձեռն այրոյն, որ գծիւս ընկալաւ, եւ ի ձեռն Նէեմայ Ասորոյ, այսպէս եւ առ Տէրամբն մերով յայտնի ցուցաւ օրինակ փրկութեան հեծանոսաց՝ Հորիւրապետուն եւ Քանանացեալուն: Վասն որոյ ասոց Տէր. «Եկեացե՛ն յամենայն ծագաց երկրի, եւ բուզեսցին ընդ Աբրահամու, եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին»։ (Մատթ. Ը. 11)։

- 31-37. Բժշկութիւն զիւահարին (Մարկ. Ա. 21-28)։
- 38-42. Բժշկութիւն զոքանջին Պետրոսի և ուրիշներուն (Մատթ. Ը. 14-17; Մարկ. Ա. 29-31)։

պէր, անոր ազաչեցին անոր համար: 40 Անոր եկաւ, ջերմին սաստեց, եւ զանի թողուց. եւ իսկոյն ելաւ եւ անոնց կը ծառայէր:

41 Եւ արեւուն մարը մտնելու ատենը, ամէնքն ալ որ տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ ունէին, զանոնք անոր կը բերէին: Եւ ան անոնց ամէն մէկուն վրայ ձեռք կը դնէր ու զանոնք կը բժշկէր: 42 Դեւերը շատերէն կ'ելլէին, կը պոռային ու կ'ըսէին թէ «Աստուծոյ որդին գունս ես»: Եւ ան կը սաստէր եւ թող չէր տար անոնց խօսիլ, որովհետեւ գիտէին զանի թէ Քրիստոսն է:

*43 Եւ երբ ցերեկ եղաւ, անապատ տեղ մը ելաւ գնաց, եւ ժողովուրդները զանի կը փնտռէին, մինչեւ անոր եկան եւ զանի կ'արգիլէին որ անոնցմէ չերթայ: 44 Եւ ան կ'ըսէ անոնց, «Ուրիշ քաղաքներու ալ պէտք է ինծի Աստուծոյ արքայութիւնը քարոզել, որովհետեւ անոր համար զրկուեցայ»: 45 Եւ Գալիլեացիներու ժողովրդանոցներուն մէջ կը քարոզէր:

Ք Լ Ա Ի Թ Ե.

*1 Եւ եղաւ որ երբ ժողովուրդը անոր բոլորաթիւը դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար, ինքն ալ Գեննեսարեթի ծովակին քով կը կենար: 2 Եւ տեսաւ երկու նաւեր, որ կը կենային ծովակին քով, եւ ձկնորսներն անոնցմէ ելլելով՝ գործիքները կը լուային: 3 Ան այն նաւերէն մէկուն մէջ մտաւ, որ Սիմոնին էր, եւ անոր ազաչեց որ քիչ մը ցամաքէն դէպ ի ներս տանի. նստեցաւ եւ այն նաւէն ժողովուրդներուն կը սովորեցնէր:

4 Եւ երբ այն խօսքերէն լռեց, կ'ըսէ Սիմոնին. «Նաւը խորունկը տար եւ ձեր գործիքները ձգեցէք որսի համար»: 5 Պատասխան տուաւ Սիմոն ու կ'ըսէ անոր.

43-45. Յիսուս կը քարոզէ ի Գալիլեա (Մատթ. Գ. 23-25; Մարկ. Ա. 35-39):

1-12. Կոչումն Պետրոսի և Ջերեզեան որդւոց և հրաշալի որս ձկանց (Մատթ. Գ. 18-22; Մարկ. Ա. 16-20):

«Վարդապետ, բոլոր գիշերս աշխատեցանք եւ բան մը չբռնեցինք, բայց այդ խօսքիդ համար ձգեմք գործիքները» : 6 Այս երբ ըրին, ձուկերու շատ բազմութիւն մը ներսը փակեցին, անանկ որ անոնց ուռկանները կը պատրուտէին : 7 Եւ միւս նաւին մէջ եղող իրենց որսակիցներուն աչք կ'ընէին որ գան օգնեն իրենց, եւ եկան, եւ երկու նաւերն ալ լցուեցան, անանկ որ ընկղմելու մօտ էին : 8 Սիմոն Պետրոս երբ տեսաւ, Յիսուսի ծունկերուն ինկաւ ու կ'ըսէ. «Ինչ մէկդի գնա, ով Տէր, որովհետեւ ես մեղաւոր մարդ եմ» : 9 Վասն զի ձուկերու որսին համար որ բռնեցին, վախը պատեց զանի եւ ամէնքն ալ որոնք անոր հետ էին : 10 Նոյնպէս Զեբեդիոսի որդիներն ալ Յակոբոսն ու Յովհաննէսը, որոնք Սիմոնի որսակից էին : Եւ Յիսուս կ'ըսէ Սիմոնին. «Մի՛ վախնար, ասկէ ետքը մարդերը դէպ ի կեանք պիտի որսաս» : 11 Եւ նաւը ցամաք հանելով ամէն բան թողուցին եւ անոր ետեւէն գացին :

*12 Եւ եղաւ որ ան այն քաղաքներէն մէկուն մէջ մտաւ, եւ ահա բորոտութեամբ լեցուն մարդ մը երբ Յիսուսը տեսաւ, երեսի վրայ իյնալով անոր աղաչեց ու կ'ըսէ. «Տէր, թէ որ ուզես, կրնաս զիս սրբել» : 13 Իր ձեռքը երկնցուց, անոր հասցուց ու կ'ըսէ. «Կ'ուզեմ. սրբուէ» . եւ իսկոյն բորոտութիւնն անորմէ գնաց : 14 Եւ ան անոր պատուիրեց մէկու մը չըսել, բայց թէ «Գնա, քու անձը քահանային ցուցուր, եւ տուր քու մաքրութեանդ համար այն ընծան, ինչպէս որ Մովսէս հրամայեց անոնց վկայութեանը համար» : 15 Եւ անոր վրայով խօսքը աւելի կը տարածուէր. եւ շատ ժողովուրդներ կը ժողովուէին մտիկ ընելու եւ իրենց հիւսնողութիւններէն բժշկուելու համար : 16 Եւ ան անապատ տեղեր կը քաշուէր եւ աղօթքի կը կենար :

*17 Եւ եղաւ որ այն օրերէն մէկ օր մը ինք կը սովորեցնէր, Փարիսեցիներն ու օրէնքի վարդապետները կը նստէին, որ ժողովուած էին Գալիլեացիներու եւ Հրէաս-

12-16. Բժշկութիւն բորոտի (Մատթ. Ը. 2-4; Մարկ. Ա. 40-45) :

17-26. Բժշկութիւն անդամալուծին ի Կափառնայում (Մատթ. Թ. 2-8; Մարկ. Բ. 1-12) :

տանի եւ Երուսաղեմի բոլոր քաղաքներէն . եւ Տէրոջ գորութիւնը կար զանոնք բժշկելու համար : 18 Եւ ահա մարգիկներ մահիճով մարդ մը կը բերէին որ անդամալոյծ էր , եւ կ'ուզէին զանի ներս մտցնել ու անոր առջեւը դնել : 19 Եւ երբ համբայ չէին զտներ թէ ուրկէ զանի ներս մտցնեն ամբոխին համար , տանիքն ելան եւ առաստաղէն զանի կախեցին , եւ մահիճով մէկտեղ մէջտեղը Յիսուսի առջեւ զանի իջեցուցին : 20 Եւ անոնց հաւատքը տեսնելով՝ կ'ըսէ անոր . « Ով մարդ , քու մեղքերդ քեզի թողուած ըլլան » : 21 Դպիրներն եւ Փարիսեցիները սկսան խորհիլ ու կ'ըսեն . « Աս ո՞վ է որ հայհոյութիւններ կը խօսի . ո՞վ կրնայ մեղքերը թողուլ , բայց միայն Աստուած » : 22 Երբ Յիսուս անոնց խորհուրդները գիտցաւ , պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . 23 « Զեր սրտերուն մէջ ի՞նչ կը խորհիք . ո՞րը դիւրին է , ըսել . « Քու մեղքերդ քեզի թողուած ըլլան » , թէ ըսել . « Ել եւ գնա » : 24 Բայց որպէս զի գիտնաք թէ Որդի մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը թողուլ » , կ'ըսէ անդամալոյծին . « Քեզ կ'ըսեմ , ել . քու մահիճդ առ ու տունդ գնա » : 25 Եւ շուտ մը ելլելով ամենուն առջեւ , վրան առաւ , որուն վրայ դրուած էր . իր տունը գնաց , եւ զԱստուած կը փառաւորէր : 26 Ամէնքն ալ զարմացան , եւ զԱստուած կը փառաւորէին . վախով լցուեցան ու կ'ըսեն թէ « Այսօր նոր նշան տեսանք » :

27 Անկէ ետքը ելաւ հոնկէ եւ մաքսաւոր մը տեսաւ , որուն անունը Ղեւի էր , որ մաքսաւորութեան մէջ կը նստէր . եւ կ'ըսէ անոր . « Իմ ետեւէս եկուր » : 28 Եւ ամէնը թողլով՝ ելաւ գնաց անոր ետեւէն : 29 Եւ Ղեւի իր տանը մէջ անոր մեծ խնջոյք ըրաւ . եւ մաքսաւորներու եւ ուրիշներու շատ բազմութիւն կար , որոնք անոնց հետ նստած էին : 30 Եւ Փարիսեցիներն ու դպիրները կը տրտնջային անոր վրայով անոր աշակերտներուն ու կ'ըսէին . « Թէ մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ կուտէք ու կը խմէք » : 31 Պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Ողջերուն բժիշկ պէտք չէ , հապա հի-

27-39. Կոչումն Ղեւեայ և խնջոյք նորա (Մատթ. Թ. 9-17: Մարկ, Բ. 13-22):

ւանդներուն : 32 Արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները՝ արաշխարութեան համար : 33 Եւ անոնք կ'ըսեն անոր . « Ի՞նչու Յովհաննէօի աշակերտները պահք կը պահեն միշտ եւ աղօթք կ'ընեն, նոյնպէս Փարիսեցիներուն ալ . եւ քուկիներդ կ'ուտեն ու կը խմեն » : 34 Եւ ան կ'ըսէ անոնց . « Միթէ կրնա՞ք հարսնիքի տղաքներուն, երբ փեսան անոնց հետ է, հրաման տալ որ պահեն » : 35 Օրեր պիտի գան՝ երբ փեսան անոնցմէ պիտի վերցնուի, յետոյ այն օրերուն մէջ պիտի պահեն : 36 Անոնց մէկ առակ ալ ըսաւ թէ . « Մէկը չձգեր նոր լաթէն կտոր հինցած լաթի վրայ . ապա թէ ոչ՝ նորն ալ պատած կ'ըլլայ, եւ հինցածին հետ չմիաբանիր այն նորը : 37 Եւ մէկը չձգեր նոր գինին հին տիկերու մէջ . ապա թէ ոչ՝ նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը, ինք կը թափի ու տիկերը կը կորսուին : 38 Հապա նոր գինին նոր տիկերու մէջ ձրգուելու է, եւ երկուքն ալ կը պահուին : 39 Եւ մէկը չխմեր հինը եւ նորը ուզէ, վասն զի կ'ըսէ թէ « Հինը աւելի անուշ է » :

Ք ԱՌԻՍ Զ.

¹ Եւ եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը արտերու մէջէն կ'անցնէր, եւ անոր աշակերտները հասկ կը փրցնէին, ափի մէջ կը շփէին ու կ'ուտէին : 2 Եւ Փարիսեցիներէն ոմանք կ'ըսեն անոնց . « Ի՞նչ կ'ընէք, որ շաբաթ օրը ընել օրէնք չէ » : 3 Պատասխան տուաւ Յիսուս անոնց եւ կ'ըսէ . « Չէ՞ք կարդացած, ինչ որ Իսաի ըրաւ, երբ ինք եւ անոր հետ եղողներն անօթեցան : 4 Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը, եւ Առաջաւորութեան հացը կերաւ՝ եւ տուաւ անոնց ալ որոնք իրեն հետ էին, որ օրէնք չէր մէկու մը ուտել, բայց միայն քահանայապետներուն » : 5 Եւ կ'ըսէ անոնց . « Որդի Մարդոյ շաբաթին ալ Տէրն է » :

1. Հրեայք կը հաշուէին շաբաթներն իրենց երեք մեծ տօներուն իւրաքանչիւրէն, այսինքն առաջին առաջին, երկրորդ առաջին և երրորդ առաջին : Այս երկրորդ առաջինն էր առաջինն յետ Պենտէկոստէի :

1-5. Աշակերտք հասկ կը կորզեն (Մատթ. ԺԲ. 1-8; Մարկ. Բ. 23-27) :

*6 Եւ եղաւ որ ան միւս շարաթ օրը ժողովրդանոցին մէջ մտաւ սովրեցնելու . եւ հոն մարդ մը կար եւ իր աջ ձեռքը գօսացած էր : 7 Եւ դպիրներն ու Փարիսեցիները կ'սպասէին թէ շարաթ օրը պիտի բօշկէ՞, որպէս զի անոր վրայով շարախօսութիւն գտնեն : 8 Եւ անոնց խորհուրդները գիտէր . կ'ըսէ մարդուն՝ որուն ձեռքը չորցած էր . « Ել , մէջտեղը կեցիր » . եւ ան ելլելով կեցաւ : 9 Յիսուս կ'ըսէ անոնց . « Ձեզի բան մը պիտի հարցնեմ . « Շարաթ օրը ի՞նչ արժան է . բարի բան ընել թէ չար գործել , ոգի մը ապրեցնել թէ կորսնցնել » : 10 Եւ բոլորաբն ամենուն վրայ զայրագին նայելով կ'ըսէ անոր . « Ձեռքդ երկնցուր » : Եւ երկնցուց , եւ անոր ձեռքը հաստատուեցաւ միւսին պէս : 11 Անոնք յիմարութեամբ լցուեցան , եւ իրարու հետ կը խօսէին թէ Յիսուսի ինչ ընեն :

*12 Եւ եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթքի կենալու , եւ բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով կ'անցընէր : 13 Եւ երբ առաւօտ եղաւ , իր աշակերտները կանչեց , եւ անոնցմէ տասներկուք ընտրեց , որոնք առաքեալներ անուանեց : 14 Սիմոն՝ որ Պետրոս ալ անուանեց եւ անոր եղբայրը Անդրէասը , Յակոբոսն ու Յովհաննէսը , եւ Փիլիպպոսը , Բարթողիմէոսը , 15 Եւ Մատթէոսը , Թովմասը , եւ Ալփիայ Յակոբոսը , Նախանձայոյ ըսուած Սիմոնը , 16 Եւ Յակոբի Յուդան , եւ Սկարիփտացի Յուդան՝ որ մատնիչ ալ եղաւ : 17 Եւ անոնց հետ մէկտեղ տափարակ տեղ մը իջաւ . եւ կար անոր աշակերտներուն ժողովն ու ժողովրդեան շատ բազմութիւն բոլոր Հրէաստանէն ու Երուսաղեմէն , եւ այն կողմէն , եւ Տիւրոսի ու Սիդոնի ծովեզիրքէն , 18 որոնք եկան անորմէ լսելու եւ իրենց հիւանդութենէն բօշկուելու , ու պիղծ ոգիներէն նեղուողները կը բօշկուէին : 19 Եւ բոլոր ժողովուրդը կ'ուզէր անոր մօտենալ , որովհետեւ շատ զօրութիւն կ'ելլէր անորմէ եւ ամէնքն ալ կը բօշկէր :

*20 Եւ ան իր աչքերը դէպի աշակերտներուն վերցուց

6 11. Բժշկութիւն գօսացելոյն (Մատթ. ԺԲ. 9-14, Մարկ. Գ. 1 6) : 12-19. Ընտրութիւն Առաքելոց (Մատթ. Ժ. 1-4, Մարկ. Գ. 13-19) : 20-49. Լերան քարոզը (Մատթ. Ե. 4 Է.) :

24-26. Այս չորս վայրերն են այնպիսիներու համար , որք իրենց հս-

ու կ'ըսէ. և Հոգիով աղքատներուդ երանի, որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը ձերն է: 21 Երանի որ հիմա անօթեցած են, որովհետեւ պիտի կշտանան: Երանի որ հիմա կուլան, որովհետեւ պիտի ուրախանան: 22 Երանի է ձեզի, երբ մարդիկ ձեզ ատեն, երբ ձեզ մերժեն ու նախատեն, եւ ձեր վրայով չար անուն հանեն մարդոյ Որդիին համար: 23 Այն օրը ուրախ եղէք եւ ցնծացէք, որովհետեւ ահա ձեր վարձքը երկնքի մէջ շատ է. այդ կերպով իրենց հայրերը մարգարէներուն կ'ընէին. *24 Բայց վա՛յ ձեզի, հարուսներուդ, որ ձեր մխիթարութիւնն ընդունեցիք, վա՛յ ձեզի, որ հիմա կշտացած էք, որովհետեւ պիտի անօթենաք. 25 վա՛յ ձեզի, որ հիմա կ'ուրախանաք, որովհետեւ պիտի տրտմիք եւ պիտի լայք: 26 վա՛յ ձեզի, երբ բոլոր մարդիկ ձեր վրայով բարի ըսեն, որովհետեւ ասանկ կ'ընէին մարգարէներուն անոնց հայրերը:

27 Բայց ձեզի կ'ըսեմ որ կը լսէք. ձեր թշնամիները սիրեցէք, ձեր ատելիներուն բարի ըրէք: 28 Ձեզ անիծողները օրհնեցէք, ձեզ նեղողներուն համար աղօթք ըրէք: 29 Ով որ քու ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ անոր մօտեցուր. եւ ով որ քենէ քու բաճկոնդ կը հանէ, քու շապիկդ ալ անորմէ մի' արգիլեր: 30 Այն ամենուն որ քենէ կ'ուզէ, տուր, եւ ինչ որ կը հանէ մէկը քենէ, մի' ուզեր: 31 Եւ ինչպէս որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք: 32 Թէ որ դուք ձեր սիրելիները սիրէք, ձեզի ի՞նչ շնորհք կայ, որովհետեւ մեղաւորներն ալ իրենց սիրելիները կը սիրեն: 33 Եւ թէ որ ձեր բարեբարներուն բարիք ընէք, ձեզի ի՞նչ շնորհք կայ, վասն զի մեղաւորներն ալ նոյնը կ'ընեն: 34 Եւ թէ որ փոխ տաք անոնց որոնցմէ յոյս ունիք առնուլ, ձեզի ի՞նչ շնորհք կայ, որովհետեւ մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան, որպէս զի չափովը նորէն առնուն: 35 Բայց ձեր թշնամիները սիրեցէք, եւ ձեզ ատողնե-

բըստուծիւնը չեն զործածեր ի բարին, արդարեւ թաղց, փոփաք երկնային փառաց չունին, ի նաձիր կը զուարճանան և կը սիրեն շողքործուծիւնը:

36. Քրիստոսի բուն կատարելութիւնն յայտարհի էր Էֆեսոսը:

բուն բարի ըրէք . եւ փոխ տուէք՝ որոնցմէ յոյս չունիք
առնուլ . եւ ձեզի շատ վարձք պիտի ըլլան , եւ Աստու-
ծոյ որդիները պիտի ըլլաք . որովհետեւ ան բարերար է
չարերուն եւ ասպաշարհներուն : *36 Գթած եղէք , ինչպէս
որ ձեր հայրը գթած է :

37 Մի՛ դատէք եւ պիտի չդատուիք . մի՛ պատժէք ու
պիտի չպատժուիք , արձկեցէք ու պիտի արձկուիք :
38 Տուէք եւ ձեզի պիտի տրուի . լի ու լի , դէզադէզ ,
լիագեղ , աղէկ չափով պիտի տրուի ձեր գոգը . ան չափով
որով դուք կը չափէք , ձեզի պիտի չափուի :

*39 Անոնց մէկ առակ ալ ըսաւ . « Միթէ կրնա՞յ կոյր
կայրի առաջնորդել , չէ՞ որ երկուքն ալ փոսը կ'իջնան » :
40 Աշակերտն իր վարդապետէն վեր չէ : Ամենէն կատար-
եալը թող իր վարդապետին պէս ըլլայ :

41 Քու եղբորդ աչքի շիւղը ի՞նչու կը տեսնես , եւ
քու աչքիդ գերանը չես նշմարեր : 42 Կամ ի՞նչպէս կըր-
նաս ըսել քու եղբորդ . « Եղբայր , թող տուր որ հանեմ
քու աչքէդ շիւղը » , եւ դուն քու աչքիդ գերանը չեմ
տեսներ . կեղծաւոր , առաջ քու աչքէդ գերանը հանէ , եւ
յետոյ նայէ քու եղբորդ աչքէն շիւղը հանել : 43 Որովհե-
տեւ չկայ բարի ծառ՝ որ չար պտուղ բերէ , եւ ոչ ալ
չար ծառ՝ որ բարի պտուղ բերէ : 44 Վասն զի ամէն մէկ
ծառ իր պտուղէն կը ճանչցուի . որովհետեւ փշերէն թուզ
չեն քաղեր . ոչ ալ մարենիէն խաղող կը կթեն : *45 Բարի
մարդը իր սրտի բարի գտնձէն բարի կը բղխէ , եւ չար
մարդը չարէն չար կը բղխէ : Վասն զի սրտին աւելցու-
քէն անոր բերանը կը խօսի :

46 Ի՞նչու զիս Տէր , Տէր կը կանչէք եւ ինչ որ կ'ըսեմ
չէք ընդեր : 47 Այն ամէնն որ ինծի կուգայ , ու իմ խօս-
քերս կը լսէ եւ զանոնք կ'ընէ , ցուցնեմ ձեզի թէ որո՞ւ
նման է : 48 Նման է մարդու մը , որ տուն կը շինէ , որ
փորեց ու չափեց , եւ հիմը քարի վրայ դրաւ . հեղեղնե-
րուն բարձրանալու ատեն գետը տունին զարկաւ , եւ չը
կրցաւ զանի շարժել , ինչո՞ւ որ հիմը քարի վրայ հաս-
տատուած էր : 49 Բայց ան որ կը լսէ իմ խօսքերս ու

39. (Մատթ. ժԵ. 14) :

45. (Մատթ. ժԲ. 35) :

չընեն, նման է այն մարդուն, որ տուն կը շինէ հողին վրայ առանց հիմի, գոր գեաք զարկաւ. եւ խակոյն ինկաւ, եւ այն տան կործանուաք մեծ եղաւ»:

Ք Լ Ո Ւ Պ Է .

¹ Եւ կրք իք ամէն խօսքերը լմնցուց ժողովրդեացն յականջին, Կափառնայում մտաւ: 2 Հարիւրապետի մը ծառայ խիստ հիւանդանալով մեռնելու մօտ էր, որ էր անոր սիրելի: 3 Երբ Յիսուսին վրայով լսեց, Հրեայնեքէն ծերեր զրկեց, անոր կ'աղաչէր որ գայ, իր ծառան բժշկէ: 4 Եւ անոնք Յիսուսի գալով անոր շատ կ'աղաչէին եւ կ'ըսէին թէ «Արժանի է, որուն այս շնորհքը ընես»: 5 Որովհետեւ մեր ազգը կը սիրէ, եւ ժողովրդանոցը ան մեզի շինեց»: 6 Եւ Յիսուս անոնց հետ գնաց, երբ տունէն քիչ հեռու էր, հարիւրապետը բարեկամներ զրկեց անոր ու կ'ըսէ. «Տէր, մի՛ յոգնիր, որովհետեւ արժանի չեմ թէ որ իմ յարկիս տակ մտնես»: 7 Ասոր հասար իմ անձս ալ քեզի գալու արժանի չեսպեցի. հապաքսէ խօսքով եւ իմ այս ծառաս թող բժշկուի: 8 Ինչու որ ես ալ մարդ մը եմ իշխանութեան տակ դրուած. իմ հրամանիս տակ զինուորներ ունեմ, եւ բռեմ անոր, «Գնա» . եւ կ'երթայ. եւ ուրիշին թէ «Եկուր» . եւ կուգայ. եւ իմ ծառայիս թէ «Այս ըրէ» . եւ կ'ընէ: 9 Եւ երբ Յիսուս զայս լսեց, զարմացաւ, ժողովրդեան դարձաւ, որոնք անոր ետեւէն կ'երթային ու կ'ըսէ. «Չեղի ճշմարիտ կ'ըսեմ թէ Իսրայելի մէջ այսչափ հաւատք չգտայ»: 10 Եւ պատգամաւորները նորէն տուն դարձան, եւ հիւանդ ծառան բժշկուած գտան:

¹¹ Եւ եղաւ, զաղուան օրը քաղաք մը կ'երթար, որուն անունը Նային էր. անոր հետ իր աշակերտներն ու

1.10. Բժշկութիւն հարիւրապետի ծառային. (Մատթ. Ը. 5-13):
11. Այս քաղաքը կ'երթայ, որ այժմ Թեթեւ փոփոխութեամբ կը կոչուի Նէին, և է իբր երեք մղոն հեռի Թափոր լեռնէն, և քսան և հինգ մղոն Կափաղնայումէ: Այժմ գիւղ է և հետեւիւնք չկան բացի գերեզմաններէ, որք փորուած կան ապագածներու մէջ:

չատ ժողովուրդ կ'երթային: *12 Երբ քաղաքին դրան մօտեցաւ, եւ ահա մեռել մը կ'ելլէր իր մօրը մէկ հատիկ որդին, եւ ան որբեւարի էր. եւ քաղաքին շատ ժողովուրդն անոր հետ էր: *13 Երբ Տէրը զանի տեսաւ՝ զթաց անոր աւ կ'ըսէ. Մի լար: *14 Եւ մօտենալով դադաղին դպչեցաւ. եւ որոնք վերուցած կը տանէին՝ կեցան. եւ կ'ըսէ. «Պատանի դու, քեզի կ'ըսեմ, ել»: *15 Ելաւ եւ մեռելը նըստեցաւ եւ սկսաւ խօսիլ. եւ զանի իր մօրը տուաւ: *16 Եւ ամէնն ալ վախցան, եւ զԱստուած կը փառաւորէին:

12. Յիսուս երբ քաղաքին դրանը կը մօտենայ, կը տեսնէ որ մեռել մը կը տարուի, որ մէկ հատիկն էր իւր որբեւարի մօրը: Կ'երեւի Թէ այս կինն էր ազնուական, վասն զի յուզարկաւորութեան հանդէսին մեծ բազմութիւն կար:

13. Յիսուս որ միշտ ցաւակից է տրտմելոց, կը զթայ այդ կնկան օկարծելու չէ Թէ նա հրաշքներ կ'ընէր հաստատելու համար միայն իւր աստուածային փառքը, այլ կ'ընէր նաեւ մարդոց Սշուռութենէն ի գուժ շարժելով:

14. Յիսուս այդ կնկան ըսելէ յետոյ ՎՄի լար. դադաղին կը դպչի Ե Դագաղի դպչիլն էր պիղծ գործ, ըստ հրէական օրինաց, ուստի աղօտ յոյս մը ծագեցաւ յուզարկաւորաց սրտին մէջ Թէ նոր հրաշքով մը, մեծագոյն հրաշքով, Յիսուս պիտի հաստատէր Թէ ինքն է նոյն իսկ Մեսիայն Ե Դագաղակիրները կանգ առին և նորա և բոլոր ժողովուրդը սքանչացմամբ և տիրւ լսեցին Յիսուսի սա ձայնը, ՎՄ՛վ պատասնի, քեզի կ'ըսեմ ի իր: :

15. Եւ սհա մեռելն իսկոյն յարութիւն կ'տանու: Այսպէս տէր Յիսուս վերջին դատաստանի օրն մեռելոց յարութիւն պիտի տայ: Հին մարգարէներէն Եզրիա և Եգիսէ ևս մեռել յարուցին, այլ սակայն աղօթքով և ճիգով (Գ. Թագ. Ժէ. 17-24: Դ. Թագ. Դ. 8-38): Բայց Յիսուս իշխանաբար կը հրամայէր և կ'ընէր այնպէս, որպէս Թէ հասարակ գործ մը կ'ընէր:

16. Բոլոր ժողովուրդը զարմացաւ և փառաւորեց զԱստուած, հաւատալով Թէ այլ ևս հասած է Մեսիայի գալստեան ժամանակը կամ Թէ նոյն իսկ Յիսուս է ճշմարիտ Մեսիայն: Զարմանալ պէտք չէ Թէ ժողովուրդն ինչհու իսկոյն այսքան միաժարուեցաւ, վասն զի տարիներէ ի վեր հրաշագործ մարգարէի ձայն լսուած չէր Սուրբ-Սրկրին մէջ, այժմ մարգարէ մը կը տեսնէր, որ կը փայլեցնէր իւր անձին վրայ այն ամէն յատկութիւններ, զորս Մեսիայն ըստ գուշակութեանց բոլոր մարգարէից՝ պիտի ունենար:

եւ կ'ըսէին թէ «Մեծ մարգարէ մը մեր մէջ ելած է» . եւ թէ «Աստուած իր ժողովրդեան բարութեանը համար այցելեց» : *17 Եւ անոր համար այս համբաւը բոլոր Հրէաստանի եւ այն երկրին բոլոր կողմերը տարածուեցաւ : *18 Եւ պատմեցին Յովհաննէսին իր աշակերտներն այս ամենուն համար : 19 Եւ Յովհաննէս իր աշակերտներէն երկուքը , Տէրոջ զրկեց ու կ'ըսէ . «Դո՞ւն ես որ պիտի գաս , թէ ուրիշին ակնկալենք» : 20 Եւ այն մարդերը անոր դալով կ'ըսեն . «Յովհաննէս մկրտիչ մեզ քեզի զըրկեց ու կ'ըսէ . «Դո՞ւն ես որ պիտի գաս , թէ ուրիշին ակնկալենք» : 21 Եւ այն ժամուն հիւանդութիւններէ , եւ ցաւերէ եւ չար ոգիներէ նեղուած շատեր բժշկեց եւ շատ կոյրերու տեսնել շնորհեց : 22 Պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . «Գացէք , Յովհաննէսին պատմեցէք ինչ որ դուք տեսաք եւ լսեցիք , թէ կոյրեր կը տեսնեն , եւ կաղեր կը քալեն , բորոտներ կը սրբուին , խուլեր կը լսեն , մեռելներ յարութիւն կ'առնուն , աղքատներ կ'աւետարանուին : 23 Եւ երանի որ իմ վրայ չգայթակղիր» : 24 Եւ երբ պատգամաւորները Յովհաննէսին գացին , ժողովրդեան սկսաւ խօսիլ Յովհաննէսին համար . «Ի՞նչ տեսելու համար անպատ ելաք . հովէն շարժուող եղէ՞գը : 25 Հապա ի՞նչ տեսնելու ելաք , փափուկ հագուստներով զարդարուած մարդ . ահա որոնք փառաւոր հագուստներով են եւ հեշտութեան մէջ , պալատներու մէջ են : 26 Բայց ի՞նչ տեսնելու ելաք . մարգարէ՞ . այո , կ'ըսեմ ձեզի , մարգարէէ ա'լ աւելի մարգարէ : 27 Որովհետեւ աս է , որուն համար գրուած է թէ «Ահա իմ հրեշտակս քու առջեւ կը զրկեմ , որ քու ճամբադ քու առջեւդ շտկէ» : 28 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի «Կիներու ծնունդներուն մէջ Յովհաննէսէն աւելի մեծ մարգարէ մէկը չկայ , բայց Աստուծոյ արքայութեանը մէջ փոքրիկն անորմէ մեծ է» : 29 Եւ բոլոր ժողովուրդն ու մաքսաւորներն ալ երբ լսեցին , զԱստուած արդարացուցին . որովհետեւ Յովհաննէսի

17. Յիսուսի համբաւն այս հրաշքով՝ ալ աւելի տարածուեցաւ բովանդակ Հրէաստանի մէջ և հասաւ մինչեւ Յովհաննէս մկրտչի , որ յայնժամ բանտարկուած էր :

18-35. Պատգամաւորք Յովհաննէս մկրտչի (Մատթ. ԺԱ. 2-19) :

38

մկրտու թեանք մկրտուեցան 30 Իսկ Փարիսեցիներն ու
օրինակամիտներն իրենց անձերովն Աստուծոյ խորհուրդը ա-
նարգեցին, վասնզի անարմէ չմկրտուեցան 31 «Ուրեմն
որո՞ւ նմանցնեմ այս պղծի մարգիկը, եւ որո՞ւ նմանազ-
նեք են 32 Մանկտիներու նման են, որոնք հրապարակ-
ները կը նստին, եւ իրար կը կանչեն ու կ'ըսեն «Չեղի
փողեր հնչեցինք ու չխազացիք, ողբացինք ու չլացիք» 33
Յովհաննէս մկրտիչ եկաւ, չէր ուտեր եւ չէր խմեր,
եւ կ'ըսէիք «Անոր մէջ դեւ կայ» 34 Արդի մարդոյ ե-
կաւ, կ'ուտէ ու կը խմէ, եւ կ'ըսէք «Ահա դատող եւ
խմող մարդ, մաքրաւորներու եւ մեղաւորներու բարեկ-
կամ» 35 Եւ իրենց զրդիներէն իմաստութիւնն արդա-
րացաւ»:

*36 Փարիսեցիներէն մէկը անոր կ'աղաչէր, որ անոր
հետ ճաշ ուտէ. եւ Փարիսեցիին տունը մտնալով նստե-
ցաւ 37 Եւ քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ
իմացաւ թէ Փարիսեցիին տունը նստած է, ազնիւ իւզի
չիչ մը բերելով: *38 անոր ետին ոտքի կը կենար, կ'ու-
լար, եւ արցունքներովն սկսաւ անոր ոտքերը թրջել,
եւ իր գլխին մազերով կը սրբէր. եւ անոր ոտքերը
կը համբուրէր եւ իւզով կ'օծէր: *39 Եւ զանի հրաւիրող
Փարիսեցին տեսնելով իր մտքն մէջէն կ'ըսէր «Թէ որ
աս մարդարէ մէկն էր, պիտի գիտնար թէ ով եւ ինչ-
պիսի կին մը իրեն կը մօտենայ որովհետեւ մեղաւոր է»:

36. Այս Փարիսեցւոյն անունն էր Սիմոն:

37. Այս կին չէր այն կին, որ զՅիսուս օծեց ի Բեթանիա (Մատթ.
ի2. 6-13: Մարկ. ժԴ. 3-8: Յովհ. ժԲ. 2-9): Կը կարծուի թէ էր սա Մ.ու-
րիամ Մաղդաղենացի:

38. Հրեայք սեղանի տուն չէին նստեր, այլ կ'ընկողմէին, ճախ ար-
մուկով բարձի կռծնելով և իրենց ոտներն երկարելով, ուստի այս կին կըր-
նար մօտենալ Յիսուսի ոտներուն, զորս և լուալ արցունքով և սրբել մա-
զերովն, որք փառք ու պսակ են կիններուն, եւ համբուրել շրճներովն ո-
րովք մեղանշած էր յանախ, եւ օծել ազնիւ իւզով որ էր նշանակ իւր շեր-
մազերմ սիրոյն եւ խորին յարգանացն առ Յիսուս:

39. Փարիսեցին կը զայժակղի, բարձ, և միշտ չեն եղած այնպիսիներ,
որք արցունքն, ապաշխարող սիրտն անտեսելով՝ կը շարունակեն իրենց
զայժակղութիւնը:

40 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոր. «Միմն, քեզի բան մը ունի՞մք քեզի», եւ ան կ'ըսէ. «Ըսէ՛, Վարդապետ», եւ կ'ըսէ. «41 «Փոխ տուող» մը երկու պարտասպաններ ունէր. մէկը հինգ հարիւր դանկեան պարտք ունէր, ու միւսը՝ յիսուն: 42 Եւ երբ անոնք չէին կըրնար վճարել, երկուքին ալ շնորհեց. հիմա ըսէ. ո՞վ աւելի գանձի պիտի սիրէ»: 43 Միմն կ'ըսէ. «Ինծի այնպէս կ'երեւի թէ որուն որ շատ շնորհեց», եւ ան կ'ըսէ անոր. «Ուղիղ դատեցիր»: 44 Եւ կ'սոջ կողմը դառնալով, Աիմոնին կ'ըսէ. «Այս կինը կը տեսնե՞ս, քու տունը մտայ, քիմ սուքերու ջուր շտուիր, իսկ աս իր արցունքներով իմ սուքերս թրջեց, եւ իր մազերովը սրբեց»: 45 Եւն ինծի հաճոյք մը շտուիր, աս ահա՛ հո՞մ մտնելէս իւրով քիմ սոսներս համբուրելէ՛ չդադրեցաւ: 46 Իմ գլուխս իւրով չօծեցիր, աս անուշ իւղով օծեց: 47 Ասոր համար քեզի կ'ըսեմ. «Ասոր թող թողուած ըլլան, որովհետեւ շատ սիրեց. վասն զի որու՛ շատ թողուի, շատ կը սիրէ. եւ սրան քի՛՛քի՛»: 48 Եւ կ'ըսէ անոր. «Քու մեղքերդ քեզի ներուած թող ըլլան»: 49 Եւ նկան որոնք անոր հետ նստած էին, ըսել իրենց՝ մտքերուն մէջ. «Ո՞վ է աս, որ մեղքերը կը թողու»: 50 Եւ ան կ'ըսէ կ'սոջ. «Քու հաւատքդ՝ քեզ փրկեց. գնա խաղաղութեամբ»:

ՊԼԱՌԾ Ը.

1 Եւ անկէ ետք ինք կը պարտէր քաղաքներն ու գիւղերը, կը քարոզէր ու կ'աւետարանէր Աստուծոյ ար-

40-43. Յիսուս կը շտիջտիսէ Փարիսեցւոյն հպարտութիւնն այս աւտով, որոյ իմաստն է թէ Աստուած որու շատ ներէ, անորմէ շատ կը սիրուի: Ո՞վ գերընտիր բարոյական վարդապետութիւն:

44-47. Թէ թէ այդ տեսակ հիւրամեծար օմիլորութիւններ կային յայնժամ, այլ թէ Փարիսեցիս զՏէրն ընդունած ըլլալուն համար իրը՝ սոսկական հիւր, կը կշտամուրի:

48-50 Յիսուս կը ներէ կնոջ, սոյց տալով թէ նա փրկուեցաւ, զի ունեցաւ հաւատք, և կը գայթակղին սեղսնակիցներն, ինչպէս՝ ուրիշ անգամ եւս այս գայթակղութիւն տեղի ունեցաւ (Մատթ. Թ. 2-8):

քայութիւնը . եւ տասն երկուքն անոր հետ էին : *2 Եւ քանի մը կիներ՝ որոնք բժշկուած էին չար ոգիներէ ու հիւանդութիւններէ , Մարիամ որ մագղազենացի կը կոչուէր , որմէ եօթը դեւ ելած էր : *3 Եւ Հերովդէսի հազարապետ՝ Քուզայի կինը Յովհաննա , եւ Շուշան եւ ուրիշ շատեր , որոնք անոր կը ծառայէին իրենց ստացուածներովը : *4 Եւ շատ ժողովուրդներ այլ եւ այլ քաղաքներէ անոր քով գալով հաւաքուած ատեն՝ առակով կ'ըսէ .

5. « Սերմանողը իր հունտերը ցանելու ելաւ , եւ իր ցանելու ատենը՝ կար որ ճամբուն քով ինկաւ եւ կոխկոտուեցաւ , եւ երկինքի թռչունները դայն . կեւրան : 6 Եւ ուրիշը ապառաժի վրայ ինկաւ . եւ բուսնելու ատենը՝ հիւթ չունենալուն չորցաւ : 7 Եւ ուրիշը փուշերուն մէջ ինկաւ , եւ անոր հետ փուշեր բուսնելով դայն խղիցին : 8 Եւ ուրիշը աղէկ ու պարարտ երկիր ինկաւ , եւ բուսնելով հարիւրապատիկ պտուղ բերաւ » : Այս երբ խօսեցաւ , կ'ըսէ . « Ով որ լսելու ականջներունի , թող լսէ » : 9 Աշակերտներն անոր կը հարցնէին թէ այն առակը ի՞նչ է : 10 Եւ ան կ'ըսէ . « Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ արքայութեան խորհուրդները , բայց՝ ուրիշներուն առակներով . որովհետեւ պիտի տեսնեն եւ պիտի չտեսնեն , եւ լսեն ու պիտի չիմանան » : 11 Առակն այս ինչ է . հունար՝ Աստուծոյ խօսքն է : 12 Եւ որոնք ճամբուն քով , անոնք են որ կը լսեն , եւ յետոյ կուգայ Սատանան , խօսքը անոնց սրտերէն կը հանէ , որ չհաւատան ու ապրին : 13 Եւ որոնք ապառաժին վրայ , որոնք երբ կը լսեն , ուրախութեամբ խօսքը կ'ընդունին , եւ արմատներ չունին , որոնք ժամանակ մը կը հաւատան ,

2. Աշակերտներէն զատ Յիսուսի սպասուորող կային և կիներ. հրէական սովորութիւն էր կիներուն, մանաւանդ այրի կիներուն օգնել և իրենց ստացուածներէն բաժին հանել քարոզիչ պաշտօնեայններուն : Այս կիներէն էին և սորա, որոց մէջ Մարիամ Մագղազենացի կը յիշուի յետոյ (Մարկ. ԺԾ. 40: ԺՁ. 1-9: Յովհ. Ի. 11-17):

3. Յովհաննա էր կին Հերովդէսի տան վերակացուին, կը յիշուի յետոյ (ԻԴ. 10): Իսկ Շուշան այլուր չյիշուի, ինչպէս միւս կիները բնաւ չեն յիշուի յանուանէ :

4-18. Առակ սերմանացանին (Մատ. ԺԳ. 1-23: Մարկ. Դ. 1-25):

եւ փորձութեան ժամանակ կը հեռանան : 14 Իսկ որոնք փուշերուն մէջ ինկան, անոնք են : որոնք երբ խօսքը կը լսեն, եւ աշխարհի հոգերով եւ մեծութեամբ եւ ցանկութեամբ զբաղած են, կը խեղդուին ու անպտուղ կ'ըլլան : 15 Իսկ որոնք պարարտ երկրին մէջ, անոնք են, որոնք աղէկ եւ զուարթագին սրտով խօսքը լսելով կ'ընդունին, եւ համբերութեամբ պտուղ կուտան :

16 Մէկը ճրագ չվառեր . եւ կարասիին տակ չպահեր կամ մահիճին տակ չդներ . հապա աշաանակին վրայ կը դնէ, որպէս զի մտնողները լոյս տեսնեն : 17 Մածուկ բան մը չկայ, որ յայտնի չըլլայ . ոչ ալ գաղտնի բան, որ չճանչցուի ու չյայտնուի : 18 Տեսէք ասկէ ետքը . դուք որ կը լսէք, ով որ ունի, անոր պիտի տրուի . եւ ով որ չունի եւ ինչ որ կը կարծուի թէ ունի, անորմէ պիտի վերցուի :

19 Անոր մայրն ու իր եղբայրներն եկան, եւ անոր չէին կրնար հասնիլ բազմութեան համար : 20 Լուր Թըրուեցաւ անոր ու կ'ըսեն . « Բու մայրդ ու եղբայրներդ դուրսը կը կենան եւ քեզի տեսնել կ'ուզեն : 21 Եւ կ'ըսէ անոնց . « Իմ մայրս ու եղբայրներս ասոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կ'ընեն » :

22 Եւ եղաւ, այն օրերէն մէկը նաւն ելաւ ինք եւ իր աշակերտները ու կ'ըսէ անոնց . « Եկէք, ծովակին անդի կողմը անցնինք » . եւ գացին : 23 Եւ երբ կը նաւէին, քնացաւ, եւ մորիկ փրթաւ եւ ծովակը կ'ուռննար, եւ կը տազնապէին : 24 Մօտենալով արթնցուցին զանի ու կ'ըսեն . « Վարդապետ, վարդապետ, ահա կը կորսուինք » . եւ ան ելլելով հովին եւ ջուրերուն խռովութեանը սաստեց եւ հանդարտեցան, եւ խաղաղութիւն եղաւ : 25 Կ'ըսէ անոնց . « Ձեր հաւատքն ո՞ր է » : եւ վախնալով զարմացան եւ իրարու կ'ըսեն . « Արդեօք աս ո՞վ է, որ հովերուն ու ջուրերուն հրաման կուտայ, եւ ասոր կը հնազանդին » :

19-21. Մայր և եղբայրք Յիսուսի (Մատթ. ԺԲ. 46-50; Մարկ. Գ. 31-35),

22-25. Սաստ մորկիս (Մատթ. Ը. 18-27; Մարկ. Գ. 35-41),

քայութիւնը . եւ տասն երկուքն անոր հետ էին : *2 Եւ քանի մը կիներ՝ որոնք բժշկուած էին չար ոգիներէ ու հիւանդութիւններէ , Մարիամ որ մագդաղենացի կը կոչուէր , որմէ եօթը զեւ ելած էր : *3 Եւ Հերովդէսի հազարապետ՝ Քուզայի կիներ Յովհաննա , եւ Շուշան եւ ուրիշ շատեր , որոնք անոր կը ծառայէին իրենց ստացուածներովն : *4 Եւ շատ ժողովուրդներ այլ եւ այլ քաղաքներէ անոր քով գալով հաւաքուած ատեն՝ առակով կ'ըսէ . 5 . « Սերմանողը իր հունտերը ցանելու ելաւ , եւ իր ցանելու ատենը՝ կար որ ճամբուն քով ինկաւ եւ կոխկռտուեցաւ , եւ երկինքի թռչունները զայն կերան : 6 Եւ ուրիշը ապառաժի վրայ ինկաւ . եւ բուսնելու ատենը՝ հիւթ չունենալուն չորցաւ : 7 Եւ ուրիշը փուշերուն մէջ ինկաւ , եւ անոր հետ փուշեր բուսնելով զայն խղզեցին : 8 Եւ ուրիշը աղէկ ու պարարտ երկիր ինկաւ , եւ բուսնելով հարիւրապատիկ պտուղ բերաւ » : Այս երբ խօսեցաւ , կ'ըսէ . « Ով որ լսելու ականջներունի , թող լսէ » : 9 Աշակերտներն անոր կը հարցնէին թէ այն առակը ինչ է : 10 Եւ ան կ'ըսէ . « Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ արքայութեան խորհուրդները , բայց ուրիշներուն առակներով . որովհետեւ պիտի տեսնեն եւ պիտի չտեսնեն , եւ լսեն ու պիտի չիմանան » : 11 Առակն այս ինչ է . հունտը՝ Աստուծոյ խօսքն է : 12 Եւ որոնք ճամբուն քով , անոնք են որ կը լսեն , եւ յետոյ կուգայ Սատանան , խօսքը անոնց սրտերէն կը հանէ , որ չհաւատան ու ապրին : 13 Եւ որոնք ապառաժին վրայ , որոնք երբ կը լսեն , ուրախութեամբ խօսքը կ'ընդունին , եւ արմատներ չունին , որոնք ժամանակ մը կը հաւատան ,

2. Աշակերտներէն զատ Յիսուսի սպասաւորող կային և կիներ. հիշական սովորութիւն էր կիներուն, մանաւանդ այրի կիներուն օգնել և իրենց ստացուածներէն բաժին հանել քարոզիչ պաշտօնեայներուն : Այս կիներէն էին և սորա, որոց մէջ Մարիամ Մագդաղենացի կը յիշուի յետոյ (Մարկ. ԺԾ. 40; ԺԶ. 1-9; Յովհ. Ի. 11-17) :

3. Յովհաննա էր կին Հերովդէսի տան վերակացուին, կը յիշուի յետոյ (ԻԴ. 40) : Իսկ Շուշան այլուր չյիշուիր, ինչպէս միւս կիները բնաւ չեն յիշուիր յանուանէ :

4-18. Առակ սերմանացանին (Մատ. ԺԳ. 1-23; Մարկ. Դ. 1-25) :

եւ փորձութեան ժամանակ կը հեռանան : 14 Իսկ որոնք փուշերուն մէջ ինկան, անոնք են : որոնք երբ խօսքը կը լսեն , եւ աշխարհի հոգերով եւ մեծութեամբ եւ ցանկութեամբ զբաղած են , կը խեղդուին ու անպտուղ կ'ըլլան : 15 Իսկ որոնք պարարտ երկրին մէջ , անոնք են , որոնք աղէկ եւ զուարթագին սրտով խօսքը լսելով կ'ընդունին , եւ համբերութեամբ պտուղ կուտան :

16 Մէկը ճրագ չվառեր . եւ կարասիին տակ չպահեր կամ մահիճին տակ չդներ . հապա աշտանակին վրայ կը դնէ , որպէս զի մանողները լոյս տեսնեն : 17 Մածուկ բան մը չկայ , որ յայտնի չըլլայ . ոչ ալ գաղտնի բան , որ չճանչցուի ու յայտնուի : 18 Տեսէք ասկէ ետքը . դուք որ կը լսէք , ով որ ունի , անոր պիտի տրուի . եւ ով որ չունի եւ ինչ որ կը կարծուի թէ ունի , անորմէ պիտի վերցուի :

19 Անոր մայրն ու իր եղբայրներն եկան , եւ անոր չէին կրնար հասնիլ բազմութեան համար : 20 Լուր տըրուեցաւ անոր ու կ'ըսեն . « Քու մայրդ ու եղբայրերդ դուրսը կը կենան եւ քեզի տեսնել կ'ուզեն : 21 Եւ կ'ըսէ անոնց . « Իմ մայրս ու եղբայրերս ասոնք են , որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կ'ընեն » :

22 Եւ եղաւ , այն օրերէն մէկը նաւն ելաւ ինք եւ իր աշակերտները ու կ'ըսէ անոնց . « Եկէք , ծովակին անդիի կողմը անցնինք » . եւ գացին : 23 Եւ երբ կը նաւէին , քնացաւ , եւ մրրիկ փրթաւ եւ ծովակը կ'ուռնար , եւ կը տաքնապէին : 24 Մօտենալով արթնցուցին զանի ու կ'ըսեն . « Վարդապետ , վարդապետ , ահա կը կորսուինք » . եւ ան ելլելով հովին եւ ջուրերուն խռովութեանը սաստեց եւ հանդարտեցան , եւ խաղաղութիւն եղաւ : 25 Կ'ըսէ անոնց . « Ձեր հաւատքն ո՞ր է » . եւ վախնալով զարմացան եւ իրարու կ'ըսեն . « Արդեօք աս ո՞վ է , որ հովերուն ու ջուրերուն հրաման կուտայ , եւ ասոր կը հնազանդին » :

19-21. Մայր և եղբայրք Յիսուսի (Մատթ. ԺԲ. 46-50; Մարկ. Գ. 31-35),

22-25. Սաստ մրրիկն (Մատթ. Ը. 18-27; Մարկ. Գ. 35-41),

*26 Եւ նաւեցին, Գերգեսացւոց աշխարհը իջան, որ անդիի կողմը՝ Գալիլեայի ղէմ է: 27 Եւ անոր ցամաք ելլելու ատեն, քաղաքէն մարդ մը պատահեցաւ, որ զեւեր ունէր. եւ շատ ժամանակէ ի վեր հագուստ հագած չէր, ոչ ալ տունը բնակած, հապա գերեզմաններու մէջ: 28 Եւ Յիսուսը տեսնելով, պոռաց եւ անոր առջեւ ինկաւ, եւ մեծ ձայնով կ'ըսէ. «Իմ եւ քու մէջ ի՞նչ կայ, բարձրեալ Աստուծոյ որդի Յիսուս. կ'աղաչեմ քեզի, զիս մի տանջեր»: 29 Վասն զի հրաման կուտար պիղծ ոգիին ան մարդէն ելլելու, որովհետեւ շատ ժամանակէ ի վեր զանի յափըշտակած էր, եւ շլթաներով կը կապուէր, եւ երկաթներով կը պահուէր, եւ կապանքները կը քակէր, եւ դեւէն անապատ կը տարուէր. 30 Յիսուս անոր կը հարցնէ ու կ'ըսէ. «Անունդ ի՞նչ է»: Եւ ան կ'ըսէ. Վէգէոն. որովհետեւ շատ զեւեր անոր մէջ մտած էին: 31 Եւ անոր կ'աղաչէին՝ որ հրաման չտայ անոնց անդունդները երթալ: 32 Եւ հոն լեբան վրայ արածուող շատ խոզերու երամակ մը կ'ար եւ աղաչեցին անոր, որ հրաման տայ մտնել անոնց մէջ. եւ հրամայեց անոնց: 33 Եւ զեւերը մարդէն ելլելով խոզերուն մէջ մտան, եւ երամակը ան ցահաւանդէն ծովը վազեց եւ խղզուեցաւ: 34 Երբ խոզ արածողները այս եղած բաները տեսան, փախան, եւ քաղաքին մէջ ու ագարակները պատմեցին: 35 Եւ երբ այն գործերը տեսնել էլան, Յիսուսի եկան, եւ մարդը գտան, որմէ զեւերն ելած էին, հագուած եւ զգաստացած կը նստէր Յիսուսի ոտներուն քով, եւ փախցան: 36 Եւ որոնք որ տեսած էին անոնց պատմեցին թէ ինչպէս զիւահարը փրկուեցաւ: 37 Եւ Գերգեսացիներու կողմերն եղող բազմութիւնն անոր կ'աղաչէր, անոնց սահմաններէն երթալ, վասն զի մեծ վախով կը տազնապէին. եւ ան նաև մտնելով նորէն դարձաւ: 38 Եւ այն մարդն որմէ զեւերն ելած էին անոր կ'աղաչէր անոր հետ պտրտել. արձկեց զանի ու կ'ըսէ. 39 «Քու տունդ դարձիր եւ պատմէ միւսնազամայն ինչ որ քեզի Աստուած ըրաւ». քաղաք զնայ ու քարոզեց ինչ որ Յիսուս ըրաւ անոր:

26-40. ԲժշկուՍիւն զիւահարուՍեան մը ի Գողարա (Մատթ. Ը. 28-Թ. 4: Մարկ. Ե. 1-21):

40 Եւ երբ Յիսուս նորէն դարձաւ, ժողովուրդը զանկ ընդունեց, վասն զի ամէնքն ալ անոր կ'սպասէին: *41 Եւ ահա մարդ մը եկաւ, որուն անունը Յայրոս էր, եւ ան ժողովրդեան իշխան էր. Յիսուսի ոտներուն իյնալով կ'աղաչէր անոր իր տունը մտնել: 42 Որովհետեւ մէկ հատիկ աղջիկ մը ունէր տասն երկու տարեկան, եւ մահուան մօտ էր: Եւ անոր երթալու ատեն ժողովուրդները զանի կը նեղէին: 43 Եւ տասն երկու տարիներէ ի վեր արեան տեռատեսութիւն ունեցող կին մը կար, որ բժիշկներուն համար մխսած էր իր բոլոր ստացուածքները. եւ որուն կարելի չէր եղած մէկէ մը բժշկուիլ: 44 Ետեւէն մօտենալով անոր հագուստին ծայրին զպչեցաւ. եւ ան ժամուն անոր արեան բղիւսմը կեցաւ: 45 Եւ Յիսուս կ'ըսէ. «Ո՛վ է, որ ինձի զպչեցաւ», Երբ ամէնքն ալ կ'ուրանային, Պետրոս կ'ըսէ եւ որոնք անոր հետ էին. «Վարդապետ, ժողովուրդները կը խռնին եւ քեզ կը նեղեն»: 46 Եւ կ'ըսէ Յիսուս. «Ինձի մէկը զպչեցաւ, որովհետեւ գիտցայ թէ ինչ զօրութիւն եկաւ»: 47 Երբ կինը տեսաւ թէ անորմէ չծածկուեցաւ. դողալով եկաւ եւ անոր առջեւ ինկաւ. եւ ինչ բանի համար անոր զպչեցաւ, եւ թէ ինչպէս իսկոյն բժկուեցաւ, բոլոր ժողովրդեան առջեւ պատմեց: 48 Եւ կ'ըսէ. «Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց. խաղաղութեամբ գնա»: 49 Եւ երբ ան կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը կուգայ եւ կ'ըսէ անոր. «Քու աղջիկդ մեռաւ, զատի մի՛ յողմեցուներ»: 50 Իսկ Յիսուս երբ լսեց, պատասխան տուաւ անոր ու կ'ըսէ. «Մի՛ վախնար, միայն հաւատա, եւ պիտի ապրի»: 51 Եւ տունը մտնելով՝ մէկը թող չտուաւ մտնել, միայն թէ Պետրոսն ու Յակոբոսն եւ Յովհաննէսը եւ տղուն հայրն ու անոր մայրը: 52 Ամէնքն ալ կուլային ու զանի կը կոծէին. եւ ան կ'ըսէ. «Մի՛ լաք. որովհետեւ չէ մեռած, հապա կը քնանայ»: 53 Եւ անոնք զանի ծաղր կ'ընէին, որովհետեւ գիտէին թէ մեռաւ: 54 Եւ ան ամէնքն ալ դուրս հանելով, խօսեցաւ ու կ'ըսէ. «Ել, կեցիր, ո՛վ մանուկ»: 55 Եւ անոր ոգին դարձաւ եւ իսկոյն

41-56. Բժշկութիւն տեռատես կնոջ և յարուժիւն դստերն Յայրոսի (Մատթ. Թ. 18-26; Մարկ. Ե. 22-43):

կանգնեցաւ, եւ հրամայեց անոր ուտելիք տալ: 56 Եւ անոր ծնողքը զարմացան. եւ ան կը պատուիրէր մէկու մը չըսել ինչ որ եղաւ:

ՓԼՈՒԽ Բ.

¹ Եւ տասներկու առաքեալները կանչելով, անոնց զօրութիւն ու իշխանութիւն տուաւ ամէն գեւերու վրայ, եւ հրահրութիւններ բժշկելու: 2 Եւ զրկեց զանոնք Աստուծոյ արքայութիւնը քարոզել ու ախտաւորները բժշկելի: 3 Եւ կ'ըսէ անոնց. «Ճամբան բան մը մի՛ վերցնէք, ո՛չ գաւազան եւ ո՛չ մախաղ, ո՛չ իաց եւ ո՛չ արծաթ, երկու հագուստներ մի՛ ունենաք»: 4 Եւ որ տուն մտնէք, հոն օթեւանեցէք եւ անկէ գացէք: 5 Եւ որոնք ձեզ չընդունին, երբ այն քաղաքէն ելլէք, ձեր ոտներուն փոշին թոթուեցէք անոնց վկայութեանը համար»: 6 Եւ ելլելով կը պտրտէին քաղաքներն ու գիւղերը, կ'աւետարանէին ու կը բժշկէին ամէն տեղ: 7 Հերովդէս չորրորդապետ այն բոլոր գործերը լսեց, եւ կը զարմանար մէկ քանիներուն ըսելուն համար, 8 թէ «Յովհաննէս մեռելներէն յարութիւն առաւ». եւ մէկ քանիներէ եւս, թէ «Եղիա յայտնուեցաւ». ու ուրիշներէ եւս, թէ «Հինբէն մարգարէ մը յարեաւ»: 9 Հերովդէս կ'ըսէ. «Ես գլխատեցի Յովհաննէսը, իսկ աս ո՞վ է, որուն վրայ այսպիսի բաներ կը լսեմ». եւ կ'ուզէր զանի տեսնել:

¹⁰ Առաքեալները դարձան եւ անոր պատմեցին այն ամենը որ ըրին: Եւ զանոնք առնելով առանձին գնաց քաղաքի մը անապատ տեղը, որուն անունը Բեթսայիզա էր: 11 Եւ ժողովուրդները երբ գիտցան, անոր ետեւէն գացին. եւ զանոնք ընդունելով՝ անոնց հետ կը խօսէր Աստուծոյ արքայութեանը համար, եւ որոնք որ բժշկութեան պէտք ունէին, կը բժշկէր: 12 Եւ օրը երեկոյանալ սկսաւ. տաս-

1-9. Երկրորտասանք կը զրկուին և Յովհաննէս մկրտիչ կը զվսատուի (Մատթ. Ժ.-ժԱ-1: ԺԴ. 1-12: Մարկ. 2. 7-30):

10-17. Հինգ հազարը կը կերակրուի (Մատթ. ԺԴ. 13-21: Մարկ. 2. 30-44: Յովհ. 2. 1-14):

ներկուքը մօտեցան ու կ'ըսեն անոր, «Այդ ժողովուրդը ար-
 ձըկէ, որպէս զի գիւղերու ու ագարակներու կողմերն եր-
 թալով, հանգչին ու կերակուր գնեն, որովհետեւ հոս ա-
 նապատ տեղ ենք»: 13 Կ'ըսէ անոնց. «Դուք ատոնց ուտե-
 լիք տուէք». եւ անոնք կ'ըսեն. «Մեզի հինգ նկանակէ եւ
 երկու ձուկերէ աւելի չկայ. բայց երթանք, գնենք այդ
 ժողովրդեան բաւական կերակուր. 14 (որովհետեւ հինգ
 հազարի չափ մարդիկ էին). կ'ըսէ աշակերտներուն. «Դաս
 դաս, յիսուն յիսուն զատոնք նստեցուցէք»: 15 Եւ այն-
 պէս ըրին, ու ամէնն ալ նստեցուցին: 16 Եւ հինգ նկա-
 նակն ու երկու ձուկերը առնլով՝ երկինք նայեցաւ, օրն-
 նեց ու կտրեց եւ աշակերտներուն կուտար ժողովրդեան
 տալու համար: 17 Ամէնքն ալ կերան ու կշտացան, եւ
 տասներկու սակառ նշխարներու կտորներ վերուցին:
 *18 Եւ եղաւ որ ան առանձին աղօթքի կենայ, անոր
 աշակերտներն ալ անոր հետ էին. հարցուց անոնց ու կ'ը-
 օսէ. «Ի՞նչ կ'ըսեն ժողովուրդներն իմ վրայով թէ եմ»:
 19 Եւ անոնք պատասխան տալով կ'ըսեն. «Յովհաննէս
 մկրտիչը». եւ ուրիշներ. «Եղիան». իսկ ուրիշներ, թէ
 «Հինբերէն մարգարէ մը ելաւ»: 20 Կ'ըսէ անոնց. «Դուք ո՞վ
 կ'ըսէք իմ վրայով, թէ եմ». Պետրոս պատասխան տուաւ
 ու կ'ըսէ. «Աստուծոյ Քրիստոսը»: 21 Ան զանոնք յան-
 գիմանեց ու պատուիրեց ուրիշի չըսել զայն: 22 Եւ կ'ըսէ
 թէ «Պէտք է մարդոյ Որդիին քահանայապետներէն եւ
 ծերերէն ու դպիրներէն շատ չարչարուիլ ու անարգուիլ,
 եւ սպաննուիլ եւ երրորդ օրը յարութիւն առնուլ»: 23
 Եւ ամենուն կ'ըսէր. «Թէ որ մէկը կ'ուզէ իմ ետեւէս
 գալ, թող ուրանայ իր անձը եւ իր խաչը միշտ առնու
 եւ իմ ետեւէս գայ: 24 Թէ որ մէկը կ'ուզէ իր անձը ապ-
 րեցնել, զանի պիտի կորսնցնէ, եւ ով որ իր անձը
 կը կորսնցնէ ինծի համար, զանի պիտի ապրեցնէ:
 25 Ի՞նչ օգուտ է մարդուն թէ որ աշխարհ շահի, եւ իր
 անձը կորսնցնէ կամ տուժէ: 26 Թէ որ մէկը ամօթ
 համարի զիս ու իմ խօսքերս, Որդի մարդոյ զանի ամօ-
 թահար պիտի ընէ, երբ իր եւ Հօր եւ սուրբ հրեշտակ-
 ներու փառքով գայ: 27 Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ

18-27. Դաւանանք Պետրոսի (ԺԶ. 13-28; Մարկ. Ը. 27-39):

ապոնցմէ մէկ քանիններ որոնք հոտ կը կենան, պիտի մահը չճաշակեն, մինչեւ Աստուծոյ արքայութիւնը տեսնեն :

²⁸ Եւ այս բաներէն ութ օր ետքը, Պետրոսն ու Յակոբոսը եւ Յովհաննէսը առնելով լեռն ելաւ, ազօթքի կենալու : ²⁹ Եւ ազօթքի կենալու ատեն՝ անոր երեսին՝ երեւոյթն այլակերպ եղաւ, եւ անոր հագուստը փոխուեցաւ եւ փայլուն ու սպիտակ եղաւ : ³⁰ Եւ ահա երկու մարդերը անոր հետ կը խօսէին, որոնք էին Մովսէս ու Եղիա, : ³¹ Փառքով երեւելով. եւ կ'ըսէին անոր վախճանին վրայով՝ որ Երուսաղէմ պիտի կատարուէր : ³² Իսկ Պետրոս եւ որոնք անոր հետ էին՝ քունէ ծանրացած, աթիւնցան եւ անոր փառքը տեսան եւ երկու մարդերը, որ անոր քով կը կենային : ³³ Եւ անոնց անորմէ մեկնելու ատեն, Պետրոս Յիսուսի կ'ըսէ. «Վարդապետ, աղէկ է մեզի հոս կենալ, եւ երեք տաղաւարներ շինենք, մէկը քեզի եւ մէկը Մովսէսի ու մէկը Եղիայի» : եւ չէր գիտեր թէ ինչ կը խօսէր : ³⁴ Եւ երբ աս ըսաւ, ամպ կիւաւ ու անոնց վրայ հովանի եղաւ. եւ անոնց ամպին տակ մտնելու ատեն՝ վախցան : ³⁵ Ամպին մէջէն ձայն եղաւ ու կ'ըսէ. «Իմ ընտրեալ Որդիս ադ է. աստոր մտիկ ըրէք» : ³⁶ Եւ ձայնը ըլլալուն պէս՝ Յիսուս միայնակ գտնուեցաւ : Եւ իրենք լռեցին, եւ այն օրերն մէկու մը չպատմեցին եւ ոչ բան մը ինչ որ տեսան :

³⁷ Եւ եղաւ, յաջորդ օրը երբ անոնք այն լեռնէն կ'իջնէին, շատ ժողովուրդ անոր առջեւ ելաւ : ³⁸ Եւ ահա այն ժողովրդէն մարդ մը պոռաց ու կ'ըսէ. «Վարդապետ, քեզի կ'աղաչեմ, իմ որդւոյս նայէ, որովհետեւ իմ մէկհատիկս է : ³⁹ Եւ ահա անոր ոգի կը զարնուի, եւ յանկարծ կը պոռայ. եւ զանի կը զարնէ ու կը գլտորցնէ զանի, եւ կը փրփրեցնէ, եւ հազիւ անորմէ կ'երթայ՝ զանի խորտակելով : ⁴⁰ Եւ քո՛ւ աշակերտներուդ աղաչեցի որ զանի հանեն, եւ չկրցան» : ⁴¹ Պատասխան տաւ Յիսուս ու կ'ըսէ. «Ով անհաւատ ու թիւր ազգ, մինչեւ

28-36. Այլակերպութիւն Տեսուն (Մատթ. Ժէ. 1-13; Մարկ. Թ. 4-12):

37-43. Բժշկութիւն զիւհար պատանւոյն (Մատթ. Ժէ. 14-20; Մարկ. Թ. 13-28):

ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ ու ձեզի մտիկ ընեմ. քու որդիդ հոս մօտեցուր» : 42 Եւ երբ կը մօտենար, դեւը զանի զարկաւ ու շարժեց : 43 Յիսուս պիզծ ոգիին սաստեց . եւ տղան բժշկեց եւ զանի իր հօրը տուաւ : *44 Եւ ամէնքն ալ կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ :

*44 Եւ երբ ամէնն ալ կը զարմանային այն ամենուն վրայ որ կ'ընէր, իր աշակերտներուն կ'ըսէ . « Բուք ձեր ականջներուն մէջ դրէք այս խօսքերը, որ Որդի մարդոյ մարդիկներուն ձեռքը պիտի մատնուի » : 45 Եւ անոնք չէին դիտեր այն խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր որպէս զի չգիտնան . եւ կը վախնային անոր հարցնել այն բանին համար :

*46 Անոնց մէջ խորհուրդ մտաւ թէ անոնցմէ ո՞վ արդեօք մեծ է : 47 Յիսուս երբ անոնց սրտի խորհուրդները գիտցաւ, մանուկ մը առաւ, իր քովը անոնց մէջ կեցուց, 48 եւ կ'ըսէ անոնց . « Ով որ այս մանուկն՝ իմ անունով կ'ընդունի, զիս կ'ընդունի, եւ ով որ զիս կ'ընդունի, զիս դրկողը կ'ընդունի, որովհետեւ ով որ ձեր ամենուն մէջ փոքրիկն է, ան մեծ պիտի ըլլայ » : 49 Յովհաննէս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր, եւ զանի արգիլեցինք, որովհետեւ մեզի հետ չէր պտրտեր » : *50 Յիսուս կ'ըսէ անոնց . « Մի արգիլէք, վասն զի ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է » :

44-45. Յիսուս վերստին կը զուշակէ իւր մահն ու յարուծիւնը (Մատթ. Ժէ. 14-20: Մարկ. Թ. 29-31):

46-48. Վէճ աշակերտաց թէ՞ ով է մեծ (Մատթ. ԺԸ. 1-35: Մարկ. Թ. 32-49):

49-56. Յիսուս գիտնալով թէ իւր կենաց վախճանը հասած է, դէպ յերուսաղէմ ճամբայ կ'ելնէ, և պատգամաւորներ կը ղրկէ, ոչ 72ը, որպէս յետոյ (Ժ. 1-21), որպէս զի օճեւանի պատրաստութիւն տեսնեն : Որովհետեւ Սամարացիք և Հրեայք զիրար կ'արհամարհէին (Յովհ. Դ. 9), ուստի երբ գիւղէ մը կը մերժուին պատգամաւորք և Չերեղեան որդիք զըրգուելով, կը պահանջեն Յիսուսէն որ կրակ իջնէ երկնքէն ու պատժէ այդ անասպնջական զիւրը, Եղիայի գործն անշուշտ յիշելով (Դ. Թագ. Ա. 9-12): Իայց Յիսուս իրենները կը յանդիմանէ թէ իրենք ունենալու են այն ոգիէն, որ ինքն ունի, գթուածեան ոգի :

51 Եւ եղաւ, երբ անոր վերանալու օրերը լմընցան. ինքն ալ Երուսաղէմ երթալու պատրաստուեցաւ: 52 Եւ իր առջեւէն պատգամաւորներ զրկեց. եւ երբ գացին, Սամարացիներու մէկ գիւղը մտան անոր բռն պատրաստելու: 53 Եւ զանի չընդունեցին, որովհետեւ ան միտքը դրած էր Երուսաղէմ երթալու: 54 Երբ Յակոբոսն ու Յովհաննէս աշակերտները տեսան, կ'ըսեն. «Տէր, կ'ուղեմ որ ըսենք, եւ երկինքէն կրակ իջնէ եւ զանոնք սատակէ»: 55 Դարձաւ, անոնց սաստեց ու կ'ըսէ. «Չէ՞ք գիտեր, որո՞ւ հոգիին էք դուք. 56 Որովհետեւ Որդի մարդոյ չեկաւ մարդիկներուն ոգիները կորսնցնելու, հապա ապրեցնելու». եւ ուրիշ գիւղ գացին:

*57 Եւ երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը անոր կ'ըսէ «Քու ետեւէդ գամ, ուր տեղ ալ երթաս»: 58 Յիսուս կ'ըսէ անոր. «Աղուեսներն որջեր ունին. եւ երկընքի թռչունները բոյն, եւ Որդի մարդոյ տեղ մը չունի, ուր գլուխը դնէ»: *59 Միւսին ալ կ'ըսէ. «Իմ ետեւէս եկուր». եւ ան կ'ըսէ. «Տէր, հրաման տուր ինձի առաջ երթալ, իմ հայրս թաղել»: 60 Յիսուս կ'ըսէ անոր. «Մեռելները թող որ իրենց մեռելները թաղեն, եւ դուն գնա Աստուծոյ արքայութիւնը պատմելու»: *61 Եւ ուրիշ մը կ'ըսէ. «Քու ետեւէդ գամ, Տէր, բայց առաջ ինձի հրաման տուր իմ տունէս հրաժարելու»: 62 Յիսուս կ'ըսէ անոր. «Մէկը ձեռքը մածին վրայ չդներ, եւ ետին նայի, թէ Աստուծոյ արքայութեանը յաջողած է»:

57. Աշակերտիլ Քրիստոսի (Մատթ. Ը. 18-22):

59-60. «Յիսուս ոչ ճողացոյց, զի մի ի հրաժարելն զու՞ ընտանեացն և բանք զորովայիցք զոր խօսել սովոր են նորա, կոպեալ արգելուցուն գնա» (Իգն. Ենորհայի):

61-62. Յիսուս կը պատուիրէ Թէ սուետարանի աշակերտ մը իւր կէտ նպատակի ունենալու է միայն Աստուծոյ արքայութիւնը ժառանգել, առանց ու է աշխարհուսէր զբաղումներ ունենալու, և դէպ յերկինք երթալու է առանց տնտնալու և վարանման, այսինքն սկօսելու է աշխարհս բարեգործութեամբ, այս է մածին վրայ ձեռք դնելն ու ետին նայելու անմտութիւնը:

ՊԼՈՒԹ Ժ.

^{*1} Ասկէ ետքը Տէրն ուրիշ եօթանասուն երկուք ալ երեւցուց, եւ զանոնք զոյգ զոյգ իր առջեւէն ղրկեց այն ամէն քաղաքներն ու տեղերը, որ ինք պիտի երթար: ^{*2} Եւ կ'ըսէ անոնց. « Հունձքերը շատ են եւ մշակները քիչ. ուրեմն հունձքերուն Տէրոջ աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հունձքերուն համար: ^{*3} Գացէք, ահա ձեզի կը ղրկեմ գառնուկներու պէս գայլերու մէջ: ^{*4} Քսակ մի՛ վերցնէք, ո՛չ մախաղ, ո՛չ կօշիկներ, եւ ճամբան մէկու մը բարեւ մի տաք: ⁵ Որ տուն մտնէք, առաջ ըսէք թէ « Բարեւ այս տանը »: ⁶ Եւ թէ որ հոն բարեւի դաւակ կայ, ձեր բարեւն անոր վրայ թող հանգչի. ապա թէ ոչ՝ ձեզի թող դառնայ. ⁷ Եւ այն տանը մէջ օթեւանեցէք, կերէք ու խմեցէք անոնցմէ. որովհետեւ մշակն իր վարձքին արժանի է. տունէ տուն մի՛ փոխուիք: ⁸ Որ քաղաքը մրտնէք ու ձեզի ընդունին, կերէք ինչ որ ձեր առջեւ դնեն: ⁹ Եւ բռնիկեցէք, թէ որ անոր մէջ հիւանդներ կան, եւ ըսէք անոնց. « Աստուծոյ արքայութիւնը ձեր վրայ մօտեցած է »: ¹⁰ Իսկ որ քաղաքը մտնէք եւ ձեզ չընդունին », երբ անոր հրապարակները ելլէք, ըսէք. ¹¹ « Եւ փոշիներն որ մեր ոտներուն փակչած է ձեր քաղաքէն, ձեզի կը թոթուենք. բայց աս գիտցէք թէ Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է »: ¹² Կ'ըսեմ ձեզի, որ Սողոմայիներուն այն օրն աւելի ղիւրին պիտի ըլլայ քան թէ այն քաղաքին: ¹³ Վա՛յ քեզի, Քորազին. վա՛յ քեզի, Բեդսայիդա, վասն զի թէ որ Տիւրոսի եւ Սիդոնի մէջ այն ղօրութիւն-

1-16. Եօթանասուն եւ երկու տշակերտք կ'ընտրուին ըստ Թուոյ ձերերուն որ յԱրիմ (Թիւք ԺԱ 16-17; Եւք. ԺԵ. 27): Եւ կը զրկուին:
 2. (Մատթ. Թ. 27):
 3. (Մատթ. Ժ. 16):
 4. (Մատթ. Ժ. 9-10): Ղուկաս կը յաւելու, ճամբան բարեւ չտալ. ժամովանճառ չըլլալու համար:
 7. Տեղափոխութիւնն է նշանակ ղժգրհուժեան:
 8 16. (Մարկ. Ժ. 11-12):

ներն ըլլային, որ ձեր մէջ եղան, շատոնց անշուշտ խոր-
գով ու մոխրով նստելով ապաշխարած էին: 14 Բայց Տիւ-
րոսի եւ Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ դատաս-
տանի ատեն քան թէ ձեզի. 15 Եւ դուն Կափառնայում,
որ մինչեւ երկինք բարձրացած ես, մինչեւ՝ դժոխք պիտի
իջնես: 16 Ով որ ձեզի կը լսէ, ինծի կը լսէ. եւ ով որ
ձեզ կ'անարգէ, զիս կ'անարգէ. եւ ով որ զիս կ'անարգէ,
զիս զրկողը կ'անարգէ. եւ ով որ ինծի մտիկ կ'ընէ, մտիկ
կ'ընէ անոր, որ զիս զրկեց»:

*17 Եօթանասուն երկուքը ուրախութեամբ դարձան ու
կ'ըսեն. «Տէր, դեւերն ալ մեզի կը հնազանդին քու ա-
նունովդ»: 18 Եւ կ'ըսէ անոնց. «Սատանան կը տեսնէի
փայլակի պէս երկինքէն ինկած: 19 Ահա ձեզի իշխանու-
թիւն տուի կարիճներն ու օձերը կոխել եւ թշնամիին
բոլոր զօրութիւնը, եւ ձեզի պիտի չվնասեն: 20 Բայց
անոր համար մի՛ խնդաք թէ դեւերը ձեզի կը հնազանդին.
հապա ուրախ եղէք որ ձեր անուններն երկինքի մէջ գրու-
ուած են»:

*21 Նոյն ժամուն Յիսուս ուրախացաւ Սուրբ Հոգւով
ու կ'ըսէ. «Կը գոհանամ քեանէ, Հայր, երկինքի եւ երկ-
րի Տէր, որովհետեւ այս բանը ծածկեցիր իմաստուններէ
ու գիտուններէ, եւ աս բանը տղաքներու յայտնեցիր.
այո, Հայր, որովհետեւ քու առջեւ ասանկ հաճելի եղաւ:
22 Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս. եւ մէկը չը
գիտեր թէ Որդին ո՞վ է, եթէ ոչ՝ Հայրը. եւ ո՞վ է Հայր,
եթէ ոչ՝ Որդին. եւ որու ուզէ Որդին յայտնել»:

*23 Եւ նորէն առանձին աշակերտներուն կ'ըսէ. «Երանի
աչքերուն, որ կը տեսնեն զոր դուք կը տեսնէք: 24 Ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, որ շատ մարգարէներ ու թագաւորներ

17-20. Եօթանասուն երկուները կը վերադառնան և Յիսուսէն աւե-
տիս կ'առնուն թէ երկնային կենաց զպրութեան մատենին մէջ իրենց ա-
նուններն արձանագրուած են, այսինքն արժանացած են երկնային փառաց:
Եւ թէ Սատանայն իսկոյն ջախջախուելով այլ եւս դադրած է իշխանու-
թենէ և անոր զօրութիւնը փճացած:

21 - 22. (Մատթ. ԱԱ. 25 - 27):

23 - 24. (Մատթ. ԺԳ. 16 - 17):

ուղեցին տեսնել զոր կը տեսնէք, եւ զանի չտեսան. եւ մտիկ ընել ինչ որ դուք կը լսէք, եւ չստեցին»:

*25 Եւ ահա օրինական մը ելաւ, զանի կը փորձէր ու կ'ըսէր. «Վարդապետ, ի՞նչ գործեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: 26 Եւ ան կ'ըսէ անոր. «Օրէնքներու մէջ ի՞նչ գրուած է. ի՞նչպէս կը կարդաս»: 27 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Քու Տէր Աստուածդ սիրէ քու բոլոր սրտովդ ու բոլոր անձովդ եւ բոլոր զօրութեամբդ ու բոլոր մտքովդ. եւ քու ընկերդ անձիդ պէս»: 28 Եւ կ'ըսէ անոր. «Ճիշտ պատասխան տուիր. զայդ ըրէ եւ պիտի փրկուիս»: 29 Ան երբ ուղեց իր անձը արդարացրնել, Յիսուսի կ'ըսէ. «Եւ իմ ընկերս ո՞վ է»: 30 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ «Մարդ մը Երուսաղեմէն Երիթով կ'իջնէր, եւ աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք զանի հանուեցողցին եւ վիրաւորեցին, կիսամեռ թողուցին ու գացին»: 31 Պատահեցաւ որ քահանայ մը ան ճամբէն անցնի եւ զանի տեսաւ եւ զանց ըրաւ: 32 Նոյնպէս Ղեւտացի մը նոյն տեղը գալով տեսաւ ու զանց ըրաւ: 33 Սամարացի մը ճամբորդելով եկաւ նոյն տեղը անոր քով, եւ զանի տեսնելով գթաց: 34 Եւ մօտենալով պնտր վէրքերը պատեց, վրան ձէթ ու գինի դնելով. եւ իր գրաստին վրայ գնելով զանի պանդոկ մը բերաւ եւ զանի դարմանեց: 35 Եւ վաղուան օրը երբ անկէ կ'ելլեր, պանդոկապետին երկու դահեկան տուաւ ու կ'ըսէ. Չանի դարմանէ, եւ ինչ որ անոր ծախսես, նորէն գալու ատենս քեզի պիտի վճարեմ»: 36 Հիմա անոնց երեքէն ո՞րը աւազակներուն ձեռքն իյնողին մերձաւոր եղած կը համարուի քեզի»: 37 Եւ ան կ'ըսէ. «Ով որ անոր վրայ

25 - 29. (Մատթ. ԻԲ. 37 - 40):

30 - 37. Անխտիր իրարու գծով և օգնել, այսինքն ամէն մարդ իրարու է ընկեր, կարօտ եւ արժանի իրարու կարեկցութեան. այս է իմաստ այս պատմութեան:

38 - 42. «Եւ վստն կալաւ ի տանն Մարթայի եւ Մարիամու. սորա են բորք Ղազարու» (Յովհ. ԺԱ. 1 - 20): Յիսուս որքան որ կը յարգուի Մարթայէն, այլ որովհետեւ Մարթա «Խոտեաց զՄարիամու ուսանեն», որպէս Քէ չիցէ ինչ, անարգեաց և Տէրն զնորա սպասաւորութիւնն» (Իգն. Շնորհալի):

այն ողորմութիւնն ըրաւ) : Յիսուս կ'ըսէ անոր . « Գնա . գուն ալ անանկ ըրէ » :

*38 Եւ երբ անոնք գացին , ինքն ալ գիւղ մը մտաւ . եւ Մարթա անուն կին մը զանի իր տունը ընդունեց : 39 Եւ ան քոյր մը ունէր , որուն անունը Մարիամ էր , որ եկաւ Տէրոջ սոսներուն քով նստաւ եւ անոր խօսքերուն մօտիկ կ'ընէր : 40 Եւ Մարթա շատ ծառայութեամբ զբաղած էր , անոր եկաւ ու կ'ըսէ . « Տէր , հոգդ չէ , որ իմ քոյրս զիս մինակ ծառայութեան մէջ թողուց . ուրեմն ըսէ ատոր որ ինձի օգնէ » : 41 Յիսուս պատասխան տրւաւ ու կ'ըսէ . « Մարթա , Մարթա . դուն հոգ կ'ընես եւ շատ բանով զբաղած ես : 42 Բայց հոս քիչ բանի պէտք կայ . Մարիամ աղէկ մասը ընտրեց , որ անորմէ պիտի չվերցուի » :

ՊԼԱՌԻԾ Ա.

*1 Եւ եղաւ որ տեղ մը աղօթքի կենայ . եւ երբ դադարեցաւ , իր աշակերտներէն մէկը կ'ըսէ անոր . « Տէր , մեզի աղօթք ընել սովրեցուր , ինչպէս Յովհաննէս իր աշակերտներուն սովրեցուց » : 2 Կ'ըսէ անոնց . « Երբ աղօթքի կենաք , ըսէք . ով մեր Հայրը , քու անունդ սուրբ ըլլայ . քու արքայութիւնդ գայ : 3 Մեր հացը միշտ օրէ օր մեզի տուր : 4 Եւ մեր մեղքերը մեզի ներէ , որ մենք ալ ամենուն ներենք , որոնք մեզի պարտական են . եւ մեզ փորձութեան մի տանիր » :

*5 Եւ կ'ըսէ անոնց . « Ձեռնէ ո՞վ է , որ բարեկամ ունենայ եւ գիշերուան մէջ անոր երիթայ եւ ըսէ անոր . « Բարեկամ , ինձի երեք նկանակ փոխ տուր » : 6 Որովհետեւ բարեկամս ճամբէ եկաւ ինձի , եւ բան մը չունիմ անոր առջեւ դնելու » : 7 Եւ ան ներսէն պատասխան կուտայ ու կ'ըսէ . « Ինձի մի՛ յոգնեցուներ , որովհետեւ դռները գոցուած են , եւ տղաքներս իմ բողորտիքս անկողինի մէջ

1-4. Տէրունական աղօթք (Մատթ. 2. 9-13) :

5-8. Խնդրել Աստուծմէ յանսխ և Սախսնձագին , զայն որ օգտակարն է :

են, չեմ կրնար ելլել ու քեզի տալ» : 8 կ'ըսեմ ձեզի . « Թէ ելլելով անոր չտար բարեկամութեանն համար , հապտ թախանձանքներուն համար ելլելով կուտայ անոր , ինչ որ պէտք է : » 9 Եւ ես կ'ըսեմ ձեզի . ուղեցէք եւ ձեզի պիտի տրուի . փնտոնցէք եւ պիտի գտնէք . զարկէք եւ ձեզի պիտի բացուի : 10 Որովհետեւ ամէն ով որ ուզէ , կ'առնու . եւ ով որ կը փնտոնէ , կը գտնէ , եւ ով որ կը զարնէ , անոր կը բացուի : 11 Զեր մէջէն ո՞ր հայրն իր որդին ձուկ ուզէ , միթէ ձուկին տեղ անոր օձ կուտայ : 12 Եւ կամ հաւկիթ ուղէ , միթէ կարի՞ճ կուտայ անոր : 13 Իսկ դուք որ շարեր էք , գիտէք ձեր որդիներուն աղէկ պարգեւներ տալ , ո՞րքան ա՛յլ աւելի ձեր Հայրն երկինքէն կուտայ բարիքներ անոնց , որոնք անորմէ կ'ուզեն » :

14 Եւ համը դեւ մը կը հանէր , եւ դեւին ելլելուն ատեն համըը խօսեցաւ , եւ բոլոր ժողովուրդները զարմացան : 15 Եւ անոնցմէ մէկ քանիները կ'ըսեն . « Դեւերու Բէեզզերուդ իշխանով ատ դեւեր կը հանէ » : 16 Եւ ուրիշներ կը փորձէին ու անորմէ երկինքէն նշան կ'ուզէին : 17 Իսկ ան անոնց խորհուրդները գիտնալով , կ'ըսէ անոնց . « Իր մէջ բաժնուող տունը կը կործանուի : » 18 Իսկ թէ որ Սատանան ալ իր մէջ բաժնուեցաւ , ի՞նչպէս անոր թագաւորութիւնը կը կենայ , որովհետեւ իմ վրայով կ'ըսէք թէ դեւերու Բէեզզերուդ իշխանով ատ դեւեր կը հանէ : 19 Թէ որ ես Բէեզզերուդով դեւեր կը հանեմ , ձեր որդիներն ի՞նչով պիտի հանեն . ատոր համար անոնք ձեր դատաւորները պիտի ըլլան : 20 Բայց թէ որ Աստուծոյ մատովը դեւեր կը հանեմ , ուրեմն ձեր վրայ Աստուծոյ արքայութիւնը հասած է : 21 Երբ զօրաւոր մը զինուած իր տունը կը պահէ , անոր ստացուածքներն ապահովութեան մէջ են : 22 Բայց թէ որ անորմէ զօրաւորը գայ եւ անոր յաղթէ , սպառազինութիւնը կը հանէ , որուն յուսացած էր , եւ անոր աւարը կը բաշխէ : 23 Ով որ ինձի հետ չէ , ինձի հակառակ է , եւ որ ինձի հետ չժողովեր , կը ցրուէ :

9-13. (Մատթ. է. 7-13):

14-23. Բժշկութիւն դիւանարի և չարախօսութիւնը զծիսուէ (Մատթ. թթ. 22-37: Մարկ. Գ. 20-30):

*24 Երբ պիղծ ոգին մարդէն հլլէ, զոր տեղեր կը պտըտի, հանգիստ կը փնտռէ. եւ երբ չգտնէր, կ'ըսէ. «Նորէն իմ տունս դաճնամ, որմէ ելայ»: 25 Եւ կուգայ, կը գտնէ մաքրուած ու շտկուած: 26 Այն ատեն կ'երթայ, կ'առնու իրմէ աւելի չար ուրիշ հօթը ոգիներ եւ մանկով հոն կը բնակի. եւ այն մարդուն հաքինը կ'ըլլայ առջինէն աւելի գէշ»: 27 Եւ երբ այս կը խօսէր, կին մը ժողովրդեան մէջէն ձայն հանեց ու կ'ըսէ. «Երանի այն որովայնին՝ որ քեզ կրեց, եւ այն ծիծերուն որ քեզ սնուցին»: 28 Եւ ան կ'ըսէ. «Երանի անոնց է, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն ու կ'ընեն»:

*29 Եւ անոր շուրջ ժողովուրդներուն դիզուելու ատեն՝ սկսաւ ըսել. «Այս ազգը չար ազգ է, նշան կը լնդորէ, եւ երկինքէն նշան պիտի չտրուի ասոր, բայց Յովնանու նշանը: 30 Որովհետեւ ինչպէս Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ, Որդի մարդոյ այ այս ազգին այնպէս պիտի ըլլայ: 31 Հարաւի թագուհին դատաստանի ատեն այս ազգի մարդիկներուն հետ պիտի ելլէ ու զանոնք պիտի դատապարտէ, որովհետեւ աշխարհի ծայրերէն եկաւ Սոզոմոնի իմաստութիւնը լսելու, եւ անա Սոզոմոնէն աւելին կայ հոս: 32 Նինուէացի մարդիկներ դատաստանի ատեն պիտի ելլեն այս ազգին դէմ եւ զանի պիտի գափապարտեն, որովհետեւ ապաշխարեցին Յովնանու քարոզութեամբ. եւ անա Յովնանէն աւելին է հոս»:

*33 Մէկը վառուած ճրագը չղներ պահեստի տեղ, ոչ ալ գրուանի տակ, հապա աշտանակին վրայ, որպէսզի մըտնողները՝ լոյս տեսնեն: *34 մարմնոյ ճրագն աչքն է. երբ

24-26. (Մատթ. ժԲ. 43-45):

26-28. Ահա այս կինն առաջինը կ'ըլլայ երանող Մարիամը, ըստ նոյն իսկ Մարիամու գուշակութեանն (Ղուկ. Լկ. 48):

39-32. Խնդիր երկնքէն նշանի (Մատթ. ժԲ. 38-45):

33-36. (Մատթ. Ե. 25: 2. 22-24):

34-52. Յիսուս կը ճաշէ այս Փարիսեցոյն տան մէջ, ինչպէս ուրիշ անգամ ուրիշ Փարիսեցոյ մը տան մէջ (Ե. 36-50): Զլուացուիր (Մատթ. ժԵ. 2: Մարկ. Է. 3-4): Եւ կը վայէ Փարիսեցիներն ու օրինականները. Մատթէոս երկար կը գրէ և զայնս խօսուած տաճարին մէջ, (Մատթ. ԻԳ.): ուրեմն Յիսուս յայնժամ վայեց հրապարակաւ, մինչ այժմ առանձին:

քաջքն աղէկ ըլլայ, բոլոր մարմինը լուսաւոր պիտի ըլլայ. եւ երբ աչքը գէշ է, մարմինն ալ խաւար պիտի ըլլայ: 35 Ուրեմն զգոյշ եղիր, կարելի է այդ լոյսը որ քու մէջ է, խաւար ըլլայ: 36 Թէ որ քու բոլոր մարմինդ լուսաւոր է ու խաւար մաս չըլլայ, բոլորն ալ լուսաւոր պիտի ըլլայ. ինչպէս երբ ճրագը նշոյններով քեզ կը լուսաւորէ:

*37 Եւ երբ այս կը խօսէր, Փարիսեցի մը անոր կ'աղաչէր, որպէսզի անոր հետ ճաշէ. եւ ան մտնելով նստաւ: 38 Երբ Փարիսեցին տեսաւ, զարմացաւ, որովհետեւ ճաշէն առաջ չլուացուեցաւ: 39 Տէրն անոր կ'ըսէ. « Հիմա դուք Փարիսեցիներդ բաժակին եւ պնակին դրսի կողմը կը մաքրէք, եւ ձեր ներսի դին յափշտակութեամբ ու չարութեամբ լեցուն է: 40 Անմիտներ, չէ՞ որ ով որ դրսինն ըրաւ, նոյնպէս ներսինն ալ ըրաւ: 41 Բայց օն ուրեմն ողորմութիւն սուէք, եւ ահա բոլորը ձեզի սուրբ է: 42 Բայց վա՛յ ձեզի, Փարիսեցիներուդ, որովհետեւ կը տաաանորգէք անանուխը եւ փեզինան ու բոլոր բանջարները, եւ Աստուծոյ իրաւունքն ու սէրը զանց կ'ընէք. այս աղէկ է ընել ու անկէ չանցնիլ: 43 Վա՛յ ձեզի, Փարիսեցիներուդ, որովհետեւ ժողովրդանոցի մէջ բարձր գահը կը սիրէք եւ հրապարակներու մէջ առաջին բարեւները: 44 Վայ ձեզի, որովհետեւ դուք անյայտ գերեզմաններու պէս էք, եւ մարդիկ վրան կը քայեն ու չգիտին: 45 Պատասխան տուաւ օրինականներէն մէկը ու կ'ըսէ անոր. « Վարդապետ, այդ խօսքերը ըսողով մեզ ալ կը նախատես: » 46 Եւ ան կ'ըսէ. « Եւ վա՛յ ձեզի օրինականներուդ, որովհետեւ մարդիկներուն վրայ դժուարակիր բռններ կը գնէք եւ մէկ մատով դուք բռններուն չէք մօտենար: 47 Վայ ձեզի, որ մարգարէներուն գերեզմանները կը շինէք, եւ ձեր հայրերը զանոնք սպաննեցին: 48 Ուրեմն կը վկայէք թէ ձեր հայրերուն գործերուն կամակիցներ էք. որովհետեւ անոնք ջարդեցին զանոնք, եւ դուք անոնց գերեզմանները կը շինէք: 49 Անոր համար Աստուծոյ իմաստութիւնն ըսաւ. « Անոնց մարգարէներ եւ առաքեալներ պիտի զրկեմ, եւ անոնցմէ պիտի սպաննուին եւ պիտի հալածուին: 50 Որովհետեւ աշխարհի սկիզբէն թափուած բոլոր մարգարէներուն արիւնը պիտի ուզուի այդ ազգէն: 51 Արելի արիւնէն մինչեւ տաճարին ու սեղանին մէջ կորսուած Զաքարիայի արիւնը, այո,

կ'ըսեմ ձեզի, այդ ազգէն պիտի ուզուի: 53 Վա՛յ ձեզի օրինականներուդ, որովհետեւ զիտութեան փականքները կը պահէք. դուք չէք մաներ, եւ որոնք կը մտնեն կ'արգիլէք»: *53 Այս բոլորը ժողովրդեան առջեւ անոնց խօսելու ատեն, ամօթահար կ'ըլլային եւ դպիրներն ու Փարիսեցիներն սկսան նախանձիլ եւ շատ բաներու համար գրգռուիլ անոր դէմ, 54 եւ սպասել անոր բերնէն խօսք մը որսալ, որպէսզի անոր վրայով չարախօսութիւն ընեն:

ՓԼՈՒԽ ԺԲ.

*1 Որոնցմով եւ բիւրաւոր ժողովուրդ զիզուած ատեն անանկ որ իրար կը կոխկռտէին, սկսաւ իր աշակերտներուն ըսել. «Նախ դուք զգոյշ եղէք Փարիսեցիներու խմորէն, որ է կեղծաւորութիւն»: *2 Որովհետեւ չկայ ծածուկ բան, որ չյայտնուի, եւ գազանի՝ որ չճանչցուի: 3 Որովհետեւ ինչ որ մուծի մէջ ըսէք, լոյսի մէջ պիտի լսուի. եւ ինչ այս ականջէ խօսիք շտեմարաններու մէջ, տանիքներու վրայ պիտի քարոզուի: *4 Բայց ձեզի կ'ըսեմ, իմ սիրելիներուս, մի՛ վախնաք անոնցմէ որ մարմինը կ'ըսպաննեն, եւ անկէ ետքը աւելի բան մը չունին ընելու: 5 Սակայն ձեզի ցուցնեմ, ո՞րմէ վախնալու էք. վախցէք անորմէ, որ սպաննելէն ետքը գեհնի մէջ ձգելու իշխանութիւն ունի. այո, կ'ըսեմ ձեզի, «Անորմէ վախցէք: 6 Չէ՞ որ հինգ ձուկ երկու դանկի կը ծախուի, եւ անոնցմէ մէկը մոռցուած չէ Աստուծոյ առջեւ: 7 Բայց ձեր գլխի մազն ամբողջ համրուած է. մի վախնաք, որովհետեւ շատ ձագերէ աւելի աղէկ էք դուք: 8 Կ'ըսեմ ձեզի, այն ամէնը, ով որ զիս կը խոստովանի մարդիկներու

53-54. Յետոյ լորեցին դարան (Մատթ. ԻԲ. 15-40):

1. (Մատթ. ԺԶ. 6-12, Մարկ. Ը. 15-17):

2-3. (Մատթ. Ժ. 27-27 Մարկ. Դ. 22):

4-10. (Մատթ. Մարկ. 28-33):

առջեւ, Որդի մարդոյ ալ անոր վրայով պիտի խոստովանի Աստուծոյ հրեշտակներուն առջեւ: 9 Եւ ով որ զիս մարդիկներուն առջեւ կ'ուրանայ, Աստուծոյ հրեշտակներուն առջեւ ուրացեալ պիտի ըլլայ: 10 Եւ ամէնը, ով որ մարդոյ Որդիին վրայով խօսք ըսէ, անոր պիտի ներուի. բայց ով որ Սուրբ Հոգիին հայհոյէ, անոր պիտի չներուի: *11 Բայց երբ ձեզ տանին ժողովրդանոցներու եւ պետութիւններու եւ իշխանութիւններու, մի հոգաք թէ՞ արդեօք ի՞նչ պատասխան պիտի տաք կամ ի՞նչ պիտի ըսէք: 12 Որովհետեւ Սուրբ Հոգին ձեզ պիտի սովորեցունէ այն ժամուն թէ ինչ պէտք է խօսիլ »:

*13 Ժողովրդէն մէկը կ'ըսէ անոր. «Վարդապետ, իմ եղբորս ըսէ որ ժառանգութիւնն ինձի հետ բաժնէ»: 14 Եւ ան կ'ըսէ անոր. «Ով մարդ, ո՞վ կեցուց զիս դատաւոր կամ բաժանարար ձեր վրայ »: *15 Եւ կ'ըսէ անոնց. «Տեսէք ու զգուշացէք ամէն ազահութենէ, որովհետեւ չէ թէ մէկու մը ստացուածքներուն մթերքէն չէ անոր կեանքը »: *16 Անոնց առակ մը խօսեցաւ ու կ'ըսէ Մեծատուն մարդու մը արտերը տուին շատ հունձք: Եւ իր մտքին մէջ կը խորհէր ու կ'ըսէր. *17 «Ի՞նչ ընեմ, որովհետեւ չկայ տեղ, ուր ժողովեմ իմ արդիւնքներս »: 18 Եւ կ'ըսէ. «Գիտեմ, ինչ ընեմ», իմ շտեմարաններս քակեմ, եւ աւելի մեծերը շինեմ, եւ ժողովեմ ցորենը ու բոլոր բարութիւններս: *19 Եւ ըսեմ իմ անձիս. «Ով անձս,

11-12- (Մատթ. 17-20: Մարկ. ԺԳ. 9-11):

13-14. Յիսուս չէր եկած յաշխարհ իշխելու կամ դատելու:

15. Յիսուս յորդորելէ յետոյ զգուշանալ ազահութենէ, կը գրուցէ անմիտ հարուստի առակը, հաստատելով թէ մարդկային կեանքը կախուած չէ հարստութենէ, այլ Աստուծմէ:

16. «Բազմացոյց Աստուած զսերմանիս նորս, զոր էարկ յերկիր, զի ուսցի նմանիլ երկրին բարութեան և այնպէս առատացուցանել յինքն Աստուծոյ զպտուղ առաքինութեան... սակայն նա յայսպիսեաց աստի ինչ որ ամէր զմտաւ » (Իզն. Շնորհալի)

17-18. Գեղեցիկ կը զրէ հին վարդապետներէն մին. «Ունիս շտեմարաններ, կարօտելոց գոզը, այրիներուն տուները, որբերու և տղեկներու բերանները: Ասոնք են ամբարանոցներ, որ կը մնան յաւիտեան »:

19-29. Է՞ր այսքան տքնութիւններ և ազահութեան ախտ, երբ կարծ

չատ բարութիւններ ունիս շատ տարիներու համար ամբարուած . հանգչէ , կեր , խմէ եւ ուրախ եղիր » : 20 Աստուած կ'ըսէ անոր . « Անմիտ , թէ որ այս գիշեր ոգիդ քենէ պահանջեն , իսկ ինչ որ պատրաստեցիր , որո՞ւ պիտի ըլլայ » : 21 Անանկ է ան որ անձին համար կը գանձէ , եւ ոչ թէ Աստուծով կը մեծնայ :

*22 Իր աշակերտներուն կ'ըսէ « Ուստի կ'ըսեմ ձեզի , հոգ մի ընէք ոգւոյ համար թէ ի՞նչ պիտի ուտէք , ոչ ալ մարմնոյն համար թէ ի՞նչ պիտի հագնիք : 23 Որովհետեւ ոգին կերակուրէն աւելի է եւ մարմինը հագուստէն : 24 Ազգաւներուն նայեցէք , որովհետեւ չեն ցաներ ու չեն քաշեր , որոնք շտեմարաններ չունին , ոչ ալ ամբարանոցներ , եւ Աստուած զանոնք կը կերակրէ , ո՛րչափ աւելի ձեզ՝ որ թռչուններէն աւելի աղէկ էք : 25 Ո՛վ ձենէ իր հոգալսիլը կրնայ աւելցնել իր հասակին վրայ կանգուն մը : 26 Ուրեմն թէ որ քիչին համար բաւական չէք , ուրիշներուն համար ինչո՞ւ կը խորհիք : 27 Շուշանին նայեցէք , ինչպէս կ'աճի , ոչ ջանք կ'ընէ եւ ոչ կը նիւթէ . կ'ըսեմ ձեզի , Սողոմոն ալ իր բոլոր փառքով անոնց մէկուն պէս չհագուեցաւ : 28 Իսկ թէ որ այն խոտ՝ որ այսօր բացը կայ եւ վաղը հնոցը նետուելու է , Աստուած այնպէս կը հագուեցնէ , ո՛րչափ աւելի ձեզ , թերահաւատներ : 29 Եւ դուք մի՛ ուզէք , թէ ինչ պիտի ուտէք կամ ինչ պիտի խմէք , եւ մի՛ զբաղիք . 30 Որովհետեւ այն ամէնը աշխարհի հեթանոսները կը խնդրեն . որովհետեւ ձեր Հայրը գիտէ որ այն բոլորը պէտք է : 31 Սակայն Աստուծոյ արքայութիւնը ուզեցէք , եւ այն ամենը ձեզի պիտի աւելնայ :

*32 Մի՛ վախնար , փոքրիկ հօտ , որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ արքայութիւնը ձեզի տալու : *33 Ձեր ստաց-

ու յեփակարձ է մեր կեանքը , ուրեմն չէ լաւագոյն մեր հարստութեանը համեմատութեամբ հարուստ ըլլալ ի հաւատս , որով մլ աւելի օրհնուի մեր հարստութիւնը :

22-31. (Մատթ. 2. 25-33) :

32. Աստուծոյ ժողովուրդը եզսձ է և է հօտ փոքրիկ , զի մարդիկ աւելի պինդ յարած են աշխարհի , քան երկնքի :

33-34. Մարդ որքան բարեգործէ , այնքան գանձեր կը յսեմսիւէ յերկինս (Մատթ. 2. 19-20, ԺԲ. 21) :

ուածքները ծախեցէք եւ ողորմութիւն ըրէք . եւ ձեզի չհինաւու քսակներ ըրէք , երկինքի մէջ անպակաս գանձ . ուր ոչ գող կը մտնեայ , ոչ ալ ցեցը կ'ապականէ : 34 Որովհետեւ ուր ձեր գանձը կայ , հոն պիտի ըլլան ձեր սիրտերը : *35 Ձեր գօտիները ձեր մէջքը պինդ կապուած թող ըլլան , եւ ճրագները վառուած : 36 Եւ դուք նման եղէ՛ք այն մարդիկներուն որոնք կ'սպասեն իրենց տէրոջը թէ ե՛րբ հարսնիքէն պիտի դառնայ . որպէս զի երբ գայ ու զարնէ , իսկոյն անոր բանան : 37 Երանի է այն ծառայիներուն , որոնց տէրը գալով արթուն կը գտնէ . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ մէջքը գօտի պիտի կապէ եւ զանոնք պիտի նստեցունէ , եւ շուրջ գալով անոնց պիտի ծառայէ : 38 Եւ թէ որ երկրորդ կամ երրորդ պահուն գայ ու անանկ գտնէ , այն ծառաները երանելի են : *39 Բայց զայն գիտցէք , թէ որ տանուտէրը գիտնար որ ժամուն գող կուգայ , կը հսկէր , եւ թող չէր տար իր տանը տակէն փոս փորել : 40 Եւ դուք պատրաստ եղէք , որովհետեւ որ ժամուն որ չէք կարծեր , Որդի մարդոյ կուգայ» :

41 Պետրոս կ'ըսէ . « Տէր , մեզի՞ ըսիր այդ առակը թէ ամենուն . » 42 Եւ Տէրը կ'ըսէ . « Հաւատարիմ ու իմաստուն տնտեսն . ո՞վ է . որ իր տէրը կեցուց իր բոլոր գերդաստանին վրայ ժամանակին կերակուր տալու համար : 43 Երանի այն ծառային , որու տէրը գալով կը գտնէ անանկ եղած : 44 Արդարեւ կ'ըսեմ ձեզի , որ իր բոլոր ստացուածքներուն վրայ զանի պիտի կեցունէ : 45 Հապա թէ որ այն ծառան իր սրտին մէջ ըսէ . « Իմ տէրս գալու կ'ուշանայ » . եւ սկսի ծեծել ծառաներն ու աղախիները , ուտել , խմել եւ գինովնալ : 46 Ան ծառային տէրը պիտի գայ այն օրն որ չկարծեր , եւ այն ժամուն որ չգիտէր . մէջտեղէն զանի կը կտրէ եւ անոր բաժինը անհաւատներուն հետ կը դնէ : 47 Եւ այն ծառան որ իր տէրոջ կամքը գիտէ եւ անոր կամքին համեմատ չպատրաստեր ,

35-38. Գօտէպինդ ըլլալ , այսինքն ժիր . վառ ճրագ ունենալ , այսինքն արթուն ըլլալով սպասել Տեառն , որ պիտի գայ , և մեր հաւատարիմ ծառայութեանց փոխարէն՝ մեզ պիտի ծառայէ , այսինքն պիտի առաջնորդէ մեզ յիւրն արքայութիւն :

39-48 (Մատթ. Ի՛. 43-51) :

չատ ծեծ կ'ուտէ : 48 Եւ ան որ չգիտեր եւ ծեծի արժանի բան կ'ընէ , քիչ ծեծ կ'ուտէ . ամենուն որուն շատ տրուեցաւ , անորմէ շատ պիտի ուզուի , եւ որուն շատ աւանդուեցաւ , անորմէ ալ աւելի պիտի պահանջուի :

*49 Աշխարհի մէջ եկայ կրակ ձգելու , եւ ի՞նչ . կ'ուզեմ որ արդէն բորբոքուէր : *50 Եւ մկրտութիւն մը ունիմ մկրտուելու , եւ ի՞նչպէս կ'արտորամ կատարելու : 51 Կը կարծէ՞ք թէ աշխարհի խաղաղութիւն տայ եկայ . Ոչ , կ'ըսեմ ձեզի , հապա բաժիններ : 52 Որովհետեւ ասկէ ետքը պիտի ըլլան մէկ տան մէջ հինգ բաժնուածներ . երեքը երկուքէն , եւ երկուքը երեքէն : 53 Հայրը որդիէն պիտի բաժնուի ու որդին հօրմէն , մայրն աղջիկէն ու աղջիկը մօրմէն , սկեսուրը հարսէն եւ հարսն իր սկեսուրէն :

*54 Եւ ժողովրդեան ըսաւ . « Երբ արեւմուտքէն ամպ ծագած տեսնէք , իսկոյն կ'ըսէք թէ « Անձրեւ պիտի գայ » եւ անանկ կ'ըլլայ . 55 Եւ երբ հարաւ փչէ , կ'ըսէք թէ « Պորչակ պիտի ըլլայ » եւ անանկ կ'ըլլայ : *56 Կեղծաւորներ , երկրի ու երկրի երեսը փորձել գիտէք , իսկ այս ժամանակը ի՞նչպէս չէք փորձեր : *57 Ինչո՞ւ բուն իսկ ձեր անձերէն արժանը չէք ընտրեր : 58 Երբ քու ոտխիդ հետ իշխանին կ'երթաս , ճամբան տուր հաշիւդ անորմէ ազատուելու համար , որովհետեւ կարելի է որ քեզ դատաւորին քաշէ , եւ դատաւորն դահճին մատնէ , դահիճն ալ բանտը նետէ » : 59 Կ'ըսեմ քեզի . հոնկէ պիտի չելլես , մինչեւ որ վերջին բնիոնը չվճարես » :

49. « Բնութիւնս մեր ոսկեղէն ոմն էր , անարատ աստուածային բընութեան նմանութեամբ , անս ի դժբանաց չարին ազտեղացու : Եկն Յիսուս հրով Հոգւոյն վերստին ձուլել , զի յառաջին պայծառութիւնն հանցէ (Իգն. Ծնորհայի) :

50. Այս էր իւր չարչարանաց և մահուան մկրտութիւնը (Մատթ. Ի. 22, ԻՔ. 40-44) :

51-53. Մատթ. Ժ. 34-36) :

54-56. Մատթ. ԺԶ. 2-3) :

56-59. (Մատթ. Ե. 25-36) :

ՔԼՈՒԽ ԺԳ.

¹ Այն ժամանակ ոմանք եկան եւ անոր պատմեցին այն Գալիլեացիներուն համար որոնց արիւնը Պիղատոս խառնեց անոնց զոհերուն մէջ : 2 Պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Կը կարծէք թէ բոլոր Գալիլեացիներէն աւելի այն Գալիլեացիները մեղաւոր եղան , որ այնպիսի անցք կրեցին : 3 Ոչ , կ'ըսեմ ձեզի . հապա թէ որ չապաշխարէք , ամենքնիդ ալ անանկ պիտի կորսուիք : 4 կամ այն տասնութները , որոնց վրայ Սելովամի աշտանակը ինկաւ եւ զանոնք սպաննեց . կը կարծէք թէ անոնք պարտապան եղան այն ամէն մարդիկնիրէն աւելի , որոնք Երուսաղէմ ընակած են . 5 Ոչ , կ'ըսեմ ձեզի . հապա թէ որ չապաշխարէք՝ ամենքնիդ ալ անանկ պիտի կորսուիք » :

1. Գալիլեացիներէն շատեր կ'սպաննուին տաճարի գաւիթին մէջ և ժողովուրդը կարծեց թէ յաստուածուստ պատուհաս էր այս ի զպատուծիւն բերելու համար Գալիլիացիներն , որք մեղաւոր ու զարշի մարդիկ նկատուած էին , նոյնպէս Տէր կը յիշէ թէ երբ Սելովամայ աշտարակը կը փլչի , 18 անձեր փլատակին տակ մնալով՝ կը մեռնին : Այս երկու դէպքերն Յիսուս յիշելով ժողովրդեան կը քարոզէ թէ « Մի կարծէք թէ նոքս միայն մեղաւոր էին , որք այդ ահռելի արկածներուն ենթարկեցան , այլ թէ զոք ևս իբր մեղաւոր մարդիկ , եթէ չապաշխարէք , պիտի կորսուիք » :

Թէ արկածք մեղաց երեսէն են , ամէն դարու մէջ մարդիկ այսպէս հաւատացին : Յորայ բարեկամները նորա կրած սոսկալի շարչարանքները վերագրեցին նորա մեղաց մեծութեանը : Նոյնպէս Մելիտեցիներն երբ Պոզոսի թեւէն իժը կտխուած տեսան , համարեցան թէ Պոզոս էր սոսկալի մեղաւոր (Գործք. ԻԸ. 4) : Նոյն իսկ Յիսուսի աշակերտներն երբ ի ծնէ կոյրը տեսան (Յովհ. Թ. 2) , Յիսուս կը հերքէ այն կարծիքը թէ աղետալի պատահարք միմիայն մեղաց երեսէն են , աղէտք որ կուգան շատերուն , ի խրատ զգուշութեան են ամենուն : Աստուծոյ անհասանելի տնօրինութիւնն է որ կը գործէ , միւսմ այսպէս և միւսին այնպէս ընելով : Մարդիկ ամէն ատեն զիտնայու են թէ մեղաւոր են , և ենթակայ փորձութեանց , ուստի ապաշխարութիւնն ու ազօք հարկաւոր են ամեն տեսն :

*6 Եւ այս առակը ըսաւ . « Մէկու մը այգիին մէջ թզենի մը կար տնկուած , եւ եկաւ անկէ պտուղ փնտռելու եւ չգտաւ : 7 Այգեգործին կ'ըսէ . « Ահա երեք տարի է, յորմէ հետէ կուգամ այդ թզենիէն պտուղ փնտռելու եւ չեմ գտներ . ուրեմն զայն կտրէ , ի՞նչու համար գետինը կը խափանէ » : 8 Ան պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Տէր , այս տարի ալ թող , մինչեւ որ ատոր շուրջը բրեմ եւ աղբ ձգեմ . 9 Կարելի է պտուղ տայ . ապա թէ ոչ տարիէ մը յետոյ զատի կը կտրես » :

*10 Եւ շարաթ օրերը ժողովարաններէն մէկուն մէջ կը սովբեցունէր : 11 Եւ ահա կին մը՝ որ տասնութը տարուան հիւանդութեան դեւ ունէր , եւ էր կարկամած եւ բնաւ չէր կրնար վեր նայիլ : 12 Եւ Յիսուս զանի տեսնելով՝ իրեն կանչեց ու կ'ըսէ անոր . « Ո՛վ կին , քու հիւանդութենէդ արձկուած ես » : 13 Եւ անոր վրայ ձեռք դրաւ , եւ իսկոյն շտկուեցաւ եւ զԱստուած կը փառաւորէր : 14 Ժողովրդապետը պատասխան տուաւ բարկանալով , թէ ի՞նչու Յիսուս շարաթ օրը բժշկեց » : 15 Տէրը անոր պատասխան տուաւ ու կ'ըսէ , « Կեղծաւորներ , ձենէ ամէն մէկը շարաթ օրը շարձկեր իր եզը կամ էջը մտուրէն եւ կը տանի , շուր կուտայ : 16 Իսկ աս՝ Աբրահամի ազջիկն էր . որ Սատանան կապեց ահա տանն ութ տարի , արժան չէ՞ շարաթ օրը ան կապանքէն արձկել » : 17 Եւ երբ զայս կ'ըսէր , ամենքն ալ կ'ամհնային , որոնք անոր հակառակ կը կենային . եւ բոլոր ժողովուրդը ու-

6-9. Եւ որպէս զի այս ապաշխարութեան ու աղօթքի վարդապետութիւնն ալ աւելի տպաւորութիւն գործէ ժողովրդեան սրտին, Յիսուս յետոյ տոյն առակը կը զրուցէ, հաստատելու համար թէ Աստուած համբերող է մեր պակասութեանց, անմիջապէս չպատժեր զմեզ, և այս՝ ի շնորհս Քրիստոսի, որ է բարեխօս վասն մեր: Բրեւ շուրջ և աղբ ցանել կը նշանակեն շնորհաց այն միջոցները, զորս Քրիստոս կը գործածէ մեր հոգեւոր փրկութեանն համար: Ուրեմն բունի որ Աստուած մեզ ժամանակ շնորհած է, ուրեմն պտուղ տալու ենք Աստուծոյ, պտուղ մեր սրտէն՝ ապաշխարութեամբ, պտուղ մեր կենցաղավարութենէն՝ բարեգործութեամբք: Ով որ առաքինութեան պտուղ չտար, կը մերժուի Աստուծոյ արքայութենէն:

10-17. Նմանազոյն է սմին և բժշկութիւնն զօսացած ձեռին (Մատթ. ԺԲ. 9-14):

րախ կ'ըլլար բոլոր այն փառաւորութիւններուն վրայ, որոնք անորմէ կը գործուէին :

*18 Եւ կ'ըսէր. « Աստուծոյ արքայութիւնն որո՞ւնման է, եւ զանի որո՞ւ նմանութեամբ նմանցնեմ : 19 Մանա-նելիի հատին նման է, որ մարդն առնելով իր պարտէզը ձգեց. անեցաւ ու ծառ՝ եղաւ, եւ երկինքի թռչունները անոր ուտեցուն վրայ բնակած էին » : 20 Եւ նորէն կ'ըսէ. « Աստուծոյ արքայութիւնն որո՞ւ նմանցնեմ. 21 խմորի նման է, որ կինն առնելով երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ բոլորն ալ խմորեցաւ » :

*22 Եւ քաղաքներն ու գիւղերը կը պտրտէր, դէպի Երուսաղէմ ճամբայ ընելով. 23 մէկն անոր կ'ըսէ. « Տէր, քիչե՞ր կան, որ պիտի փրկուին ». եւ ան կ'ըսէ անոր. 24 « Ջանացէք նեղ դռնէն մտնելու. ձեզի կ'ըսեմ, որովհետեւ շատեր ուզեցին մտնել ու չկրցին : *25 Յորմէհետէ տանուտէրը պիտի մտնէ եւ դուռը պիտի գոցէ, եւ պիտի սկսիք դուրսը կենալ եւ դուռը զարնել ու ըսել. « Տէ՛ր, Տէ՛ր, մեզի բաց ». եւ պատասխան տալով պիտի ըսէ ձեզի. « Չեմ գիտեր ձեզ, ո՞ւրկէ էք » : *26 Այն ատին պիտի սկսիք ըսել. « Քու առջեւդ կերանք ու խմեցինք, եւ մեր հրապարակներուն մէջ սովորեցուցիր » : 27 Եւ պիտի ըսէ. « Կ'ըսեմ ձեզի, չեմ գիտեր ձեզ, ո՞ւրկէ էք. մէկդի կեցէք ինէ, ամէնքդ, անիրաւութեան մշակներ » : *28 Հոն պիտի ըլլայ լալ եւ ակոսներու կրճտել. երբ տեսնէք Աբրահամն ու Իսահակն եւ Յակոբն ու բոլոր մարգարէները Աստուծոյ արքայութեան մէջ, եւ դուք դուրս հանուած, 29 եւ պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն ու հարաւէն, եւ Աստուծոյ արքայութեանը մէջ պիտի

18-21. (Մատթ. ԺԳ. 31-33):

22-24. (Մատթ. Է. 13-14):

25. Ուրեմն նեղ դուռն ևս չէ միշտ բաց (Մատթ. ԻԵ. 10):

26-27. Շատեր, իբր քրիստոնեայ, Թէեւ կը վայելեն Քրիստոսի բարիքը, կ'ուտեն նորա սեղանէն և կը յեն նորա խօսքը, եթէ չեն ունեցած անկեղծ հուատք և սրտի սրբութիւն. պիտի չփրկուին, նոյն իսկ եթէ գործած ըլլան մեծամեծ հրաշալի գործեր յանուն Տեսուն (Մատթ. Է. 21-23):

28-29. (Մատթ. Ը. 11-12):

նստին : *30 Եւ ահա յետիններն են, որ առաջիններ պիտի ըլլան, եւ առաջիններն են՝ որ յետիններ պիտի ըլլան : *31 Նոյն օրը Փարիսեցիներէն մէկ քանինք մօտեցան ու անոր կ'ըսեն . « Ել եւ ասկէ գնա, որովհետեւ Հերովդէս քեզ սպաննել կ'ուզէ » : 32 Եւ կ'ըսէ անոնց . « Բացէք այն ազուէսին ըսէք . « Ահա դեւեր կը հանեմ, եւ բժշկութիւններ կը կատարեմ այսօր եւ վաղը, եւ երբորդ օրը կը կատարուիմ : 33 Բայց այսօր եւ վաղը եւ միւս օրը պէտք է երթալ . որովհետեւ կարելի չէ մարգարէի մը Երուսաղեմէն դուրս կորուսիլ : *34 Երուսաղէմ, դ՛վ Երուսաղէմ, որ մարգարէները կը ջարդէիր եւ կը քարկոծէիր քեզի դրկուողները, քանի՞ անգամ ուզեցի ժողովել քու որդիներդ, ինչպէս հաւն իր ձագերը թելին տակ . եւ չուզեցիր : 35 Ահա ձեր տունը ձեզի թողուած թող ըլլայ . բայց ձեզի կ'ըսեմ, թէ ա՛լ զիս պիտի չտեսնէք, մինչեւ ըսէք . « Տէրոջ անունով եկողն է օրհնեալ » :

ՔԼՈՒԹ ԺԳ.

*1 Եւ եղաւ որ ան Փարիսեցի իշխաններէն մէկու մը տուը մտնէ շարաթ օրը հաց ուտելու, եւ անոնք անոր կ'սպասէին : 2 Եւ ահա հոն ջրգողած մարդ մը կար անոր առջեւ : 3 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ օրի-

30. (Մատթ. ԺԺ. 30, Ի. 16):

31-33. Այդ Փարիսեցիք զուցէ զրգոծ էին զՀերովդէս ի սպանութիւն Յիսուսի, իսկ նա մէկ կողմէն ժողովրդէն օկնածելուն և միւս կողմէն գոհացնելու համար Փարիսեցիները, զուցէ սպառնացած էր, ուստի իւր այս խորամանկ ընծացքին համար Յիսուսէն աղուէս կը կոչուի : Յիսուս քիչ ատեն ևս պիտի գործէր և յետոյ պիտի կատարուէր այսինքն պիտի մեռնէր յԵրուսաղէմ, ուր ընդհանրապէս մարգարէք կը մեռնէին, որով իսկոյն ի զլուս պիտի հանէր փրկութեան մեծ գործը :

34-35. (Մատթ. ԻԴ. 37-38):

1-4. Փարիսեցիք կ'ըսպասէին Թէ Յիսուս պիտի պղծէ՞ տրդեօք շաբաթը նոյն իսկ այդ տան մէջ իրենց աչքին առջեւ բժշկութիւն գործելով, ուր ջրգողեալ մարդ մը կար :

նականներուն ու Փարիսեցիներուն, թէ «Արժան է շաբաթ օրը բժշկել» : 4 Եւ անոնք լուռ կեցան . եւ զանի բռնելով բժշկեց զանի եւ արձկեց : *5 Եւ անոնց կ'ըսէ . «Ձեռնէ որո՞ւն էշը կամ եզը ջրհորն իյնայ, եւ զանի իսկոյն չհաներ շաբաթ օրը» : 6 Եւ պատասխան չկրցին տալ անոր այն բանին համար :

*7 Կոչնականներուն ալ առակ մը ըսաւ, նայելով թէ ի՞նչպէս բարձրնոտի կ'ըլլային, կ'ըսէ անոնց . 8 «Երբ մէկը քեզ հարսնիքի կամ խնջոյքի կանչէ, առաջին տեղը չնստտիս . կարելի է քեռն աւելի պատուաւարն անորմէ կանչուած ըլլայ : 9 Եւ գալով որ քեզ ու զանի կանչեց, ըսէ քեզի . «Ասոր տեղ տուր» . եւ յետոյ ամօթով պիտի սկսիս յետին տեղը բռնել : 10 Բայց երբ կանչուիս, գնա, նստէ յետին տեղը, որ երբ գայ որ քեզ կանչեց, ըսէ քեզի . «Բարեկամ, վեր հրամմէ» . այն ատեն քեզի փառք պիտի ըլլայ քու սեղանակիցներուդ առջեւ : 11 Որովհետեւ ամէնն ուր որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի . եւ ուր որ կը խոնարհեցնէ իր անձը, պիտի բարձրանայ» :

*12 Կոչնատէրին ալ կ'ըսէ . «Երբ ճաշ կամ ընթրիք

5 6. Յիսուս սոյն նշանուոր խօսքն առ այն կեդուոր Փարիսեցիս ուղղելէ յետոյ թէ «Ձեռնէ ո՞ր եթէ շաբաթ օրը իւր էշն ու եզն ընկնին ի ջրհոր, անտի ի զուրս չհաներ փուծով» ,

7 11. Կը խայտառակէ նախ նոցա բարձրեցումեան, այսինքն բարձր ու պատուաւոր տեղեր նստելու և երեւելու փառասիրական տենչն, և ապա կը պարսուէ նոյն իսկ զինքն հրաւիրողին անապարծութիւնն, որ յայտնի էր հրաւիրելէն ի ճաշ այնպիսիներն միայն, որք կարող էին փոխառեանք հասնուցանել, այսպէս մինչ նորա կըստպասեին զանել յանցանք Յիսուսին վրայ, ահա Յիսուս նոցա յանցանքներն ի վեր կը հանէ սոյն օրինակ բարոյական վարդապետութեամբ մը :

12-14. Յիսուս ուրիշ անգամ բոցայայտ բարեգործով բարեգործութեան պարկեշտ եղանակն, արդէն պարսուած էր գնտաւ որք իրենց բարի գործոց հատուցումն ունին աստ (Մատթ. 2. 2-5) : Այս անգամ եւս այս առթիւ կը հաստատուէ թէ բնական բան է մեր բարեգործութիւնն առ մեր բարեկամս ու ազգականս, և թէ ո և է գործ որ փոխարինելի է, չէ ուրեմն գործ առարինական : Դու բարեբարելու ես նոցա, որք ո և է եղանակաւ չունին կարողութիւն փոխարէնը վճարելու : Եւ որովհետեւ ըրածդ բարի է և արժանի փոխարինութեան, և անորմէ, որու ըրած ես բարի, անհնար է

ընես, քու բարեկամներդ մի՛ կանչեր, ո՛չ ալ քու եղբար-
ներդ, ո՛չ ալ քու ազգականներդ, ո՛չ դրացիներդ եւ ո՛չ
մեծամեծները, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէն քեզ
կանչեն, եւ քեզի հատուցում ըլլայ: ¹³ Բայց երբ ըն-
դունելութիւն ընես, կանչէ աղքատները, խեղերը, կա-
ղերը եւ կոյրերը: ¹⁴ Եւ երանելի պիտի ըլլաս, որովհետեւ
չունին փոխարէնը քեզ հատուցանելու, եւ քեզի պիտի
հատուցուի արդարներու յարութեանը ատեն»: ¹⁵ Երբ նըս-
տողներէն մէկը զայս լսեց, կ'ըսէ անոր. « Երանի անոր, որ
Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ »:

¹⁶ Եւ ան կ'ըսէ. « Մարդ մը ընթրիք պատրաստեց եւ
շատերը հրաւիրեց: ¹⁷ Եւ իր ծառան զրկեց ընթրիքի
ժամուն հրաւիրեալները կանչելու թէ « Եկէք, որովհետեւ
ահա ամէն բան պատրաստ է »: ¹⁸ Եւ սկսան հետզհետէ
ամէնքն ալ հրաժարիլ: Առաջինը կ'ըսէ. « Ագարակ գնեցի,
եւ պէտք է երթալ զայն տեսնել. կ'աղաչեմ քեզի, զիս
հրաժարած համարէ »: ¹⁹ Եւ միւսը կ'ըսէ. Հինգ լուծ եզ

քեզ փոխարէն առնուլ, և արդարութեան դէմ է անվարձ մնալը. ուստի
Աստուած, որ բարի ընելու զգացումը տուած է քեզ, ուրեմն նա պիտի
փոխարինէ քեզ, ո՛չ միշտ աստ, վասն զի զուցէ ժամանակ չունիս. օրի-
նակի համար բարեկամիդ համար երբ կը մեռնիս, այդ առաքինութիւնդ
նր վարձատրուելու է. — անշուշտ ուրիշ աշխարհի մէջ, ուրեմն կայ
հանդերձեալ կեանք, քանի որ Աստուած արդար է և արդարութիւնն է
իւր կատարելութիւններէն մին:

¹⁵. Այս մտղն զգոծուելով Յիսուսի այս սքանչելի վարդապետու-
թենէն, մինչ կ'երանէ զնա, որ կ'արժանաւորի վայելել ուրախութիւն Աս-
տուծոյ արքայութեան մէջ, Յիսուս ցոյց տալու համար թէ մարդիկ ընդհան-
րապէս պիտի չխորհին այսպէս, այլ պիտի հրաժարեալ մնան նոյն հաց-
կերութեն, առակաւ մը կը հասկցնէ զայս:

¹⁶⁻¹⁷. Աստուած թէ զՀրեայս եւ թէ զԳեթանոս անխսիտ կը կոչէ
իւր ծառայներուն ձեռամբ, որք էին մարգարէք և առաքեալք, և նոյն ինքն
իսկ տէր Յիսուս ի կերպարանս ծառայի խոնարհելով (Փիլիպ. Բ. 7.)
քանիցս հրաւիրեց թէ Աւետարանի ընթրիքն է պատրաստ:

¹⁸. Ահա պատճառ մը, որ կը շեշտուի իբրև կարեւոր հարկէ, մինչ-
դեռ չէր այնպէս, քանզի միայն մեկ բան պէտք է մեզ (Զուկ. ԺԲ. 31):

¹⁹⁻²⁰. Ահա և ուրիշ պատճառ մը, որ կը շեշտուի իբր կարեւոր գործ,
մինչդեռ չէր այնպէս, քանզի մեզ կար ուրիշ մեկ գործ (Յովն. Զ. և 27):

գնեցի, եւ կ'երթամ զանոնք փորձելու. կ'աղաչեմ քեզի զիս հրաժարած համարէ» : *20 Եւ միւսը կ'ըսէ. « Կին առի եւ անոր համար չեմ կրնար զալ» : *21 Եւ ծառան գալով պատմեց զայն իր տէրոջը. այն ատեն տանուտէրը բարկանալով իր ծառային կ'ըսէ. « Իսկոյն ել հրապարակներն ու քաղաքին փողոցները, եւ աղքատները, խեղերը, կաղերն ու կոյրերը հոս մտցուր» : *22 Եւ ծառան կ'ըսէ. « Տէր, ինչ որ հրամայեցիր, եղաւ. եւ դեռ տեղ կայ» : *23 Եւ տէրը ծառային կ'ըսէ. « Ճամբաներն ու ցանկերը ել, եւ հոս մտցուր, որպէս զի իմ տունս լցուի» : *24 Ձեզի կ'ըսեմ, որ այն կանչուածներէն ոչ մէկն իմ ընթրիքէս պիտի ճաշակէ» :

Իսկ ևրրորդն է պատճառ ընտանեկան և առիթ միանգումայն ընկերական ուրախութեան, մինչդեռ մեզ աւելի պէտք է փնտռել մեր անուպառելի ուրախութիւնն որ յերկինս : Ուրեմն անս այս երեքն՝ ստացուած ու գործ և զուարճութիւն մանաւանդ զգայական, ընդհանրապէս արգելք են մեզ ունկնդրութեան հրաւերին Աստուծոյ :

21. Երբ Աստուծոյ հրաւերէն հրաժարեցան այն մարդիկ, որք յաւակնութիւն ունէին կարծելու թէ էին արդար և իմաստուն, որով և անկատօս բարութեանն Աստուծոյ, յայնժամ Աստուծոյ անուար ձայնն էր որ կոչեց և ցայսօր կը կոչէ զայն մարդիկ այսինքն հեթանոսներն, որք ի մեզս կը ղեգեղէին և ի ստուերս մահու, որք և կը կարծուէին անարժան աստուածային շնորհաց այն ազգէն, որ զինքն ևեթ կը կարծէր սխեղի ժողովուրդ Աստուծոյ :

22. Եւ որպէս զի բնաւ չկարծուի թէ Աստուծոյ անհուն սէրն կը սահմանափակի օր մը, և որպէս զի շեշտէ թէ իւր աստուածային ՀՐԱԻՆՏԻՆ անընդհատ պիտի շարունակուի ամէն ժամանակի մէջ առ ամենայն մարդիկ առ հասարակ, ուստի ծառային խոստովանել կուտայ թէ տակաւին ճեղ կայ երկնից անհունութեանը մէջ :

23. Թէև այս հրաւերն ստիպման երեւոյթն ունի, բայց ոչ շքանի ըստիպում է այս, այլ սիրով եւ յորդորանօք, որպէս կ'ընէր Պօղոս (Բ. Կորնթ. Ծ. 20 : Գործք Ի. 31) : Ուրեմն Քրիստոսի բոլոր ծառայից հարկ է սոյն գունակ վարուիլ և իրարու տալ հրաւեր ի մասնակցութիւն ընթրեանցն Աստուծոյ :

24. Այսպէս տէր Աստուած կը փակէ վերջապէս յուսոյ գուռն ամէն նոցա առգեւ, որք ընդունեցին իւր հրաւերն ու մերժեցին զայն : (Մատթ. ԻԱ. 43 : ԵԲԲ. ԺԲ. 25) :

25 Եւ անոր հետ շատ ժողովուրդներ կ'երթային . դարձաւ ու կ'ըսէ անոնց . *26 « Թէ որ մէկն ինձի կուգայ , եւ շատեր իր հայրն ու մայրը եւ կիներն ու որդիները եւ եղբայրներն ու քոյրերը , նաեւ իր անձը , իմ աշակերտս չկրնար ըլլալ : 27 Որովհետեւ ով որ իր խաչը չվերցնէր ու իմ ետեւէս չգար , իմ աշակերտս չկրնար ըլլալ : *28 Ո՞վ ձենէ ուզէ աշտարակ շինել , եւ առաջուց նստելով ծախքը չհաշուէր , թէ լմնցնելու համար բաւական բան ունի : 29 Որովհետեւ գուցէ հիմր ձգէ եւ չկրնայ լմնցնել , ամէն տեսնողները պիտի սկսին զանի ծաղրել , 30 եւ ըսել թէ . « Այս մարդը շինել սկսաւ , ու չկրցաւ լմնցնել » : 31 Կամ ո՞ր թագաւորն երթալով պատերազմ կուտայ ուրիշ թագաւորի , եւ չնստելով առաջ չխորհիր , թէ կարող է տասը հազարով դէմ դնել անոր , որ անոր վրայ կուգայ քսան հազարով : 32 Ապա թէ ոչ երբ աւելի հեռուն է , պատգամաւորութիւն զրկելով խաղաղութեան համար աղաչանք կ'ընէ : 33 Ուրեմն այսպէս ամէնն , ով որ չհրաժարիր իր բոլոր ստացուածքներէն , չկրնար իմ աշակերտս ըլլալ : *34 Ազը աղէկ է . թէ որ աղն անհամեսայ , ի՞նչով պիտի համեմուի : 35 Ոչ գետնի եւ ոչ աղբի պիտանացու է , հապա զայն դուրս նետելու է : Ով որ լսելու ականջներ ունի , թող լսէ » :

ԳԼՈՒԽ ԺԵ .

*1 Եւ անոր մօտ էին բոլոր մաքաւորներն ու մեղաւորներն՝ անորմէ լսելու համար : 2 Դպիրներն ու Փարիսեցիները կը տրտնջային ու կ'ըսէին . « Ի՞նչու աս մե-

26-27. (Մատթ. Ժ. 37) :

28-33. « Դէմք առակիս այսպիսի տան զկարծիսն , եթէ որ բուական է զամենայնն ի կատարումն ամել , աշակերտիլ պարտ է . ոպա թէ ոչ բնու չէ պարտ սկիզբն ամենել աշակերտութեան » (Իգն. Ենտհոսի) :

34-35. (Մատթ. Է. 13 : Մարկ. Թ. 49) :

1. Ուրեմն ժողովրդեան այս մասն ոչ թէ միայն հետաքրքրութեան կամ բժշկութեան համար , այլ և լսելու կուգար Յիսուսի խօսքերը :

դաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կ'ուսէ » : *3 Անոնց այս առակն ըստ . 4 « Զեր մէջէն ո՞վ է այն մարդը , որ հարիւր ոչխար ունենայ , եւ անոնցմէ մէկը կորսնցնէ . իննսուն եւ ինը չ'թողուր անապատին մէջ , եւ կորսուածին հետեւէն կ'երթայ , մինչեւ գայն գտնէ : 5 Եւ երբ կը գտնէ , գայն իր ուսերուն վրայ կը դնէ ուրախութեամբ , 6 եւ տուն կ'երթայ , բարեկամներն ու դրացիները կը կանչէ ու անոնց կ'ըսէ . « Ինձի հետ ուրախ եղէք , որովհետեւ կորսուած ոչխարս գտայ » : 7 Կ'ըսեմ ձեզի , որ ասանկ ուրախութիւն կայ երկնքի մէջ մեղաւորի մը համար , որ կ'ապաշխարէ , քան թէ իննսուն եւ ինն արդարներուն համար՝ որոնց ապաշխարութեան պէտք չկայ : *8 Կամ ո՞ր կիճն է , որ տասը դրամ ունենայ . եւ թէ որ դրամ մը կորսնցնէ , ճրագ չ'վառեր եւ տունը կ'աւլէ , եւ միշտ կը փնտտէ , մինչեւ գտնէ : 9 Եւ երբ գտնէ , բարեկամներն ու դրացիները կը կանչէ ու կ'ըսէ . « Ինձի հետ ուրախ եղէք , որովհետեւ կորսնցուցած դրամս գտայ » : 10 Ասանկ , կ'ըսեմ ձեզի , Աստուծոյ հրեշտակներուն առջեւ ուրախութիւն պիտի ըլլայ մէկ մեղաւորին վրայ , որ կ'ապաշխարէ » : *11 Եւ կ'ըսէ . « Մարդ մը երկու որդի ունէր : 12 Ա-

3-7. Մատթէոս եւ կը յիշէ այս առակը, Թէեւ համառօտ (ԺԼ. 11-14), Իսկ մեր Շարականը գեղեցիկ կ'երգէ. « Լոյս ի լուսոյ, ծնունդ և ծագումն , որ եկիր ի խնդիր մալորեալ ոչխարի բնութեանս, զոր ընդ խաչին բարձեր ի վերայ ուսոյդ, մաքրեան զմեզ ի սեղաց մերոց » :

8-10. Թէ կորսուած ոչխարին և Թէ դրամին ի գիւտ՝ մարդ կ'ուրախանայ , ո՞րքան և Աստուած, որոյ վտան՝ մեր Շարականը կը յաւելու. « Գովմք զբեզ՝ Բան և Լոյս, որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր . . . : Սուրբդ սրբոց, էից մաքրութիւն, որ աներ տան քո աւել՝ ի սեղաց զաշխարհս մաքրելով , ի սմա գտեալ զգատկեր քո նորոգեցեր, նորոգեան զմեզ ի հնութենէ մեզաց » :

11-32. « Անառակի՛ այս գեղեցկագոյն առակի մէջ իսկապէս կը պատկերանայ Աստուծոյ անհուն սէրն առ մարդ : Մեր հին վարդապետներն Թէ ի ճառընտիրս, Թէ ի Շարականս և Թէ ի Քարոզգիրս շատ երկուր , կարի մանրակրկիտ կը մեկնարանեն այս առակը, որոյ ամբողջ իմաստն է այս, Թէ մարդկային բնութիւն է հակամէտ անկարեւոյնս , անխոհմտաբար անձին եւեթ վատահելով, որոյ հետեւանքն է միշտ Թշուառութիւն, որով կորուստ անձին, հողաով և մարմնով : Այլ որքան որ մարդ կը խորհի և կը

նոնցմէ պզտիկը հօրը կ'ըսէ . « Հայր , ինձի բաժին տուր ,
 ինչ որ ստացուածքէդ կ'իջնայ » եւ ան անոնց բաժնեց
 ինչքերը : 13 Ոչ շատ օրերէ յետոյ՝ փոքր որդին ամէնը
 ժողովելով հեռու աշխարհ գնաց . եւ հոն իր ստացուածքը
 վասնեց , որովհետեւ անառակութեամբ կ'ապրէր : 14 Եւ
 երբ լմնաց , այն երկրին մէջ սաստիկ սով եղաւ , եւ
 սկսաւ ինքն աղքատանալ : 15 Եւ երթալով այն երկրի
 քաղաքացիներէն մէկուն յարեցաւ , եւ զանի իր ագարակը
 դրկեց խոզեր արածելու համար : 16 Եւ կը փափաքէր իր
 որովայնը լեցնել այն եղջիւրէն , որ խոզերը կ'ուտէին , եւ
 մէկն անոր չէր տար : 17 Եւ խելքի գալով կ'ըսէ .
 « Քանի՜ վարձկաններ կան իմ հօրս տանը մէջ հացալի եւ
 ես հոս սովամահ կ'ըլլամ : 18 Ելլելով երթամ իմ հօրս ու
 անոր ըսեմ . « Հայր , երկինքի ու քու առջեւդ մեղայ . 19
 ես ալ արժանի չեմ քու որդիդ կոչուելու , զիս քու վարձ-
 կաններուդ մէկուն պէս ըրէ » : 20 Եւ ելլելով իր հօրը ե-
 կաւ . եւ երբ հեռուն էր , հայր զանի տեսաւ ու զթաց .
 ելաւ եւ ընդ առաջ վազեց , անոր պարանոցին ինկաւ ,
 եւ զանի համբուրեց : 21 Եւ որդին անոր կ'ըսէ . « Հայր ,
 երկինքի ու քու առջեւդ մեղայ , ալ ես քու որդիդ կոչ-
 ուելու արժանի չեմ » : 22 Հայրը ծառաներուն կ'ըսէ . « Իս-

կամի լինել ազատ բան Որդի Աստուծոյ , սակայն ուր ուրեմն բանին լոյ-
 սէն , որ դեռ չէ շիշած , կ'զգայ Թէ մեղաւոր է , որով կ'ստիպուի գալ ի
 զեղջ գոչելով . « Հայր , մեղայ յերկինս և առաջի քո » : Այս է նշմարիտ վե-
 րազարձ ի փրկութիւն անձին և յուրախութիւն Աստուծոյ , որմէ կ'օժտուի
 նա այլ ևս փառօք (Ես. ԺԶ. 10) , վայելելով միանգամայն պարարակ եզր .
 զնա՝ որ ի սպանդ վարեցաւ (Ես. ԾԳ. 7) : Ուրեմն նա որ սովալլուկն էր
 երբեմն ըստ Ամոփսայ Թէ « Տաց ձեզ . սաէ Տէր , ոչ սով հացի և ոչ ծարաւ
 ջրոյ , այլ սով լսելոյ զբանն Աստուծոյ » (Ը. 14) , այնպիսի գերահրաշ փա-
 ռաց կ'արժանաւորի . մինչ զի շարժել նախանձ հրեշտակաց , որք կը մխի-
 Թարուին լսելով Աստուծմէ Թէ իրենք « Հանապազ տեսանեն զերեսս Ա-
 ստուծոյ » (Մատթ. ԺԸ. 10) , այսինքն կը վայելեն միշտ Աստուծոյ փառքը ,
 և այս իրենց էջառանձն էր իրենց անմեղութեան համար . մինչ միւսին
 այսինքն մարդուս՝ այս շօք էր եւեթ :

Անառակի այս առակ ինչ զեղեցիկ նիւթ եզրած է մեր շնորհազարգ
 հայրապետներուն , որք սուրբ հոգեով և վսեմ գրգով աղօթքներ յօրինած ու
 երգած են , աղօթքներ , լի ի ժամագիրս և ի Շարականս :

կոյն առաջին պատմութեանը հանեցէք եւ անոր հազցուցէք, մատնին անոր ձեռքը տուէք, եւ կօշիկներ՝ անոր ոտքը. 23 Եւ պարարտ եզր բերէք, մորթեցէք, ուտենք եւ ուրախ ըլլանք. 24 Որովհետեւ այս իմ որդիս մեռած էր ու ապրեցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ. եւ սկսան ուրախանալ: 25 Եւ անոր մեծ որդին ազարակն էր. եւ երբ կուգար եւ տանը մօտեցաւ, երգերու ու պարերու ձայներ լսեց: 26 Եւ ծառաներէն մէկն իրեն կանչելով՝ կը հարցնէր թէ «Ի՞նչ է այն»: 27 Եւ ան կ'ըսէ անոր. «Որովհետեւ քու եղբայրդ եկած է, եւ քու հայրդ մորթեց պարարտ եզր, որովհետեւ զանի ողջ առողջ ընդունեց»: 28 Բարկացաւ ու չէր ուզեր մտնել, եւ հայրը դուրս ելլելով՝ անոր կ'աղաչէր. 29 Պատասխան տուաւ ու կ'ըսէ հօրը. «Այս քանի՞ տարիներ են, որ քեզի կը ծառայեմ, եւ բնաւ քու պատուիրանէդ չանցայ. ու մը անգամ ինծի չտուիր, որպէս զի իմ բարեկամներու հետ ուրախանայի: 30 Երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքներդ պոռնիկներուն հետ կերաւ, անոր պարարտ եզր մորթեցիր»: 31 Եւ կ'ըսէ անոր. «Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես, եւ ամէն բան՝ որ իմն է, քուկդ է: 32 Բայց ուրախանալ ու ցնծալ պէտք էր, որովհետեւ քու այս եղբայրդ մեռած էր ու ապրեցաւ. կորսուած էր ու գտնուեցաւ»:

ՔԼՈՒՍ ԺԶ.

¹ Եւ աշակերտներուն կ'ըսէ. «Հարուստ մարդ մը կար, որ տնտես ունէր. եւ անոր վրայով ամբաստանութիւն եղաւ, որպէս թէ անոր ստացուածքները կը վատնէ:

1-8. Տնտեսի առակն և աղքատ Հազարոսի պատմութիւնն ևս շատ զեղեցիկ նիւթ եղած են մեր հին վարդապետներուն, որք զայնս մեկնաբանած են ի հաւատով և լուսաւոր հոգով Թէ ի Շարականս և Թէ ի Քարոզգիրս և ի Ճառքնտիրս: Տնտեսի առակին իմաստն աւասիկ. մարդ մղուելով իւր բունն ու անյագուրդ կամբէն և մոլեկան կրբէն կը մեղանչէ, կը գործէ Աստուծոյ դէմ անհաւատարմութեան մեղքը, առանց խորհելու Թէ աշխարհս վայելիլու է իմաստութեամբ և արդարութեամբ, այսինքն մարդ.

2 Կանչեց եւ կ'ըսէ անոր. « Ի՞նչ է այս որ քու վրայով կը լսեմ. քու տնտեսութեանդ հաշիւը տուր, որովհետեւ ա՛յլ չես կրնար անտես ըլլալ »: 3 Տնտեսը իր միտքէն կ'ըսէ. « Ի՞նչ պիտի ընեմ. որովհետեւ իմ տէրս անտեսութենէ կը հանէ. գործել չեմ կրնար, մուրալ կ'ամհնամ »: 4 Գիտեմ, ինչ պիտի ընեմ, որ երբ տնտեսութենէ մէկգրի ըլլամ, զիս իրենց տուներուն մէջ ընդունին »: 5 Եւ մի առ մի իրեն կանչելով իր տիրոջ պարտապանները, առաջինին կ'ըսէ. « Ո՞րքան տէրօջս պարտական ես »: 6 Եւ ան կ'ըսէ. « Հարիւր մար ձէթ »: Կ'ըսէ անոր. « Առ տետրակդ եւ նստէ յիսուն գրէ »: 7 Նորէն մուտին կ'ըսէ. « Ի՞նչն ո՞րքան պարտական ես ». եւ ան կ'ըսէ. « Հարիւր քոռ ցորին ». եւ կ'ըսէ անոր. « Առ տետրակդ եւ նստէ ութսուն գրէ »: 8 Եւ տէրն աներաւ անտեսը գովեց,

ոչ թէ միայն իւր անձը տնտեսելու է, այլ և ուրիշներն եւս տնտեսելու է, այսինքն բարի ընելու է և ուրիշներուն, այս է իմաստութիւնը, որպէս զի ինքն ևս օր մը, քանի որ աշխարհս է փորձութեան աշխարհ, ուրիշներէն տնտեսուելու այսինքն ուրիշներէ օգտուելու իրաւունքն ունենայ, այս է արդարութիւնը իմաստութիւն և արդարութիւն մարդկային ընկերութեան եղած են միշտ երջանկութեան առաջնորդ:

Աւետարանի տնտեսն իմաստութեամբ զինքը տնտեսած չէր, այսինքն ի մեզս վատնած էր Աստուծոյ շնորհքը, վասնզի կ'ըսէ. « Գործել ոչ կարեմ և մուրանալ ամաչեմ ». ուրեմն ուժէ և պատիւէ ընկած էր: Ի՞նչ ընէր. — խորհեցաւ, և անս ծագեցաւ լոյս մը, բանին լոյսը և այդ լոյսէն, խելքէն առաջնորդուած, քանի որ դեռ ժամանակ ունէր, մտածեց ուրիշները տնտեսելով, այսինքն ուրիշներու բարի ընելով, փրկել իւր անձը:

Յիսուս կը զովէ այս անձին իմաստութիւնը միայն և ոչ թէ գործն, որ աներաւ էր, իսկ լուսոյ որդիներն են այն ճշմարիտ բրիստոնեայք (Յովհ. ԺԲ. 36: Եփես. Ե. 8), որք թէեւ ունին բարձր վիճակ իմաստութեան, այլ չեն կրնար գերազանց լինել միւսներէն այսինքն աշխարհիս որդիներէն, որք աւելի իմաստութեամբ կը վարուին իրենց ցած ու վատ նպատակներուն հասնելու համար:

Հիներէն կան մեկեղանք թէ հրեշտակներն են լուսոյ որդիները և մարդիկ իմաստութեամբ անոնցմէ աւելի. « Զի մարդիկ անկեալ ի փառաց և օտարացեալք յԱստուծոյն հնարս զտին ապաշխարութեամբ խնդրել զԱստուած . . . իսկ որ ի դասուց անտի նոցա շեղեալ անկան, այսպիսի ինչ նոցա ոչ եղև. այլ առաւել ևս չարացան անմտութեամբս Իզն. Ետրհայի:

որովհետեւ իմաստութեամբ ըրաւ, վասն զի այս աշխարհի որդիներն իրենց ցեղին մէջ աւելի իմաստուն են քան թէ լուսոյ որդիներն: *9 Եւ ես ձեզի կ'ըսեմ. ձեզի բարեկամներ ըրէք անիրաւ մամոնայէն, որ երբ այն պակսի, ձեզ յաւիտենական յարկերուն մէջ ընդունին: *10 Ով որ քիչին հաւատարիմ է, շատին ալ հաւատարիմ է. եւ ով որ քիչին անիրաւ է, շատին ալ անիրաւ է: *11 Ուրեմն թէ որ անիրաւ մամոնային հաւատարիմ չեղաք, ճշմարիտը ձեզի ո՞վ պիտի հաւատայ: 12 Եւ թէ որ օտարին հաւատարիմ չեղաք, ձերինն ո՞վ ձեզի պիտի տայ: *13 Մառայ մը չկրնար երկու տէրերու ծառայել, որովհետեւ թէ որ մէկը ատէ, միւսը պիտի սիրէ. կամ մէկը պիտի պատուէ եւ միւսը պիտի արհամարհէ. չէք կրնար Աստուծոյ ու մամոնայի ծառայել »:

*14 Երբ Փարիսեցիներն այս ամէնը կը լսէին, վասն զի արծաթասէր էին, զանի կը պախարակէին: *15 Եւ կ'ըսէ անոնց. « Դուք էք որ ձեր անձերը կ'արդարացնէք մարդիկներուն առջեւ, սակայն Աստուած ձեր սիրտերը գիտէ. որովհետեւ ով որ մարդիկներուն առջեւ բարձր է, Աստուծոյ առջեւ պիղծ է: *16 Օրէնքներն ու մարգարէները մինչեւ Յովհաննէս. անկէ ետքը Աստուծոյ արքայու-թիւնը կ'աւետարանուի, եւ ամէն ոք զանի կը բռնաբարէ »:

9. Այս է իմաստ Գրիստոսի այս խօսքին. աշխարհիս մէջ մեր գանձերը, հարստութիւնը գործածելով յանուն Աստուծոյ, գանձեր դիզել երկընքի մէջ (Ղուկ. ԺԲ. 33-34):

10. « Փորուքն տան օրինակ մտացն բարութեան և չարութեան առ մեծամեծս և բազումս » (Իզն. Շնորհալի):

11-12. Այսպէս մտրդ որ իւր երկրաւոր հարստութիւնը գործածել չգիտեր, էր արժանի ըլլալ երկնաւորին:

13. (Մատթ. 2. 24):

14. Փարիսեցիներն որովհետեւ: Էին արծաթասէր, այսինքն ւզա՞ր ըլլալով դրամը չէին գործածեր յօգտակարս. կը բարկանան. չկան մի՞թէ սոցա նման քրիստոնէայներ այժմ ևս:

15 « Պիղծ են առաջի Աստուծոյ, որք զամենայն հնարս հնարեն և միշտ ի յայն հային, զի պատիւս ի մարդկանէ ընկալցին » (Իզն. Շնորհալի):

16. (Մատթ. ԺԱ. 12-13):

*17 Դիւրին է երկնքի եւ երկրի անցնիլը քան թէ օրէնք-
ներէն նշանախնեցի մը իյնալը :

*18 Ամէնն՝ ով որ իր կինը կ'արձկէ եւ ուրիշը կ'առ-
նու, կը շնայ. եւ ով որ արձակուածը կ'առնու, կը շնայ :

*19 Հարուստ մարդ մը կար, եւ կը հագնէր բեհեզներ
ու ծիրանիններ եւ ուրախ կ'ըլլար միշտ առատապէս :

20 Եւ աղքատ մը, Ղազարոս անուն, անոր դրան քով վի-
րաւորուած ինկած կը դրուէր :

21 Եւ կը փափաքէր իր որովայնը լեցնել այն փշրանքներէն, որոնք հարուստին
սեղանէն կ'իյնային. շուններն ալ կուգային եւ կը լզէին

անոր վէրքերը, 22 Եւ եղաւ որ աղքատը մեռնի, եւ
հրեշտակները զանի Աբրահամի գիրկը տարին. մեծա-
տունն ալ մեռաւ ու թաղուեցաւ :

*23 Եւ դժոխքին մէջ իր աչքերը վերուց, երբ տանջանքի մէջ էր. Աբրահամը
հեռուէն տեսաւ, եւ Ղազարոսը անոր գիրկը հանգչած :

24 Եւ ան պոռաց ու կ'ըսէ. « Հայր Աբրահամ, ողորմէ ինձի,
եւ Ղազարոսը դրկէ, որպէս զի մատին ծայրը ջուրին մէջ

թրջէ, եւ իմ լեզուս զովայցնէ, որովհետեւ ահա կը
մարմրիմ այս տաքութենէն » :

25 Եւ Աբրահամ կ'ըսէ ա-
նոր. « Որդեակ, յիշէ՛ որ դուն կեանքիդ մէջ բարիքներ
ընդունեցիր, եւ նոյնպէս Ղազարոս ալ չարչարանքներ.

հիմա աս հոս կը մխիթարուի, եւ դուն հոտ կը մարմրիս :

*26 Եւ այս ամենուն վրայ մեծ վիհ մը կայ մեր եւ ձեր

17 (Մատթ. Ե. 48):

18. (Մատթ. Ե. 31-32: Մարկ. Ժ. 14):

19 23. Ղազարոս կը յիշուի յանուանէ, վասնզի տրդարոց անուններն
գրուած են ի դպրութեան կենաց և արժանի են միշտ յիշատակութեան
(Մաղմ. ձժԲ. 6), իսկ ոչ ամբարիշտներունը (Առակ. Ժ. 7): Մեծատունը
կը Թաղուի, զի ունէր պատիւ, ընտանիք և բարեկամներ, իսկ Ղազարոս
ունէր որ, չոր յետ մահուն հողոյ տայր զմարմին նորս» (Իզն. Շնորհալի):

23-26. Բայց այս երկուքին վախճանն է տարբեր. Ղազարոս հրեշ-
տակներէն կը տարուի ի զոգն Աբրահամու, իսկ միւսը կը դատապարտուի
դժոխքի տանջանաց. ի զուր կը հայցէ Աբրահամու գոռութիւնը Թէ իրեն և
Թէ իւր եղբայրներուն համար: Ահա ամենագորեց փաստ և օրինակ աղո-
թելու և աղերսելու առ սուրբ որ մեռեալ, որպէս կը խոստովանի, նոյն
իսկ ՎԲեկնութիւն չորից Աւետարանացո հայ բողոքականութեան գիրքը :

26-31. Կը յիշէ նա իւր եղբայրները, ուրեմն յիշողութիւն և մեր

մէջ . թէ որ ուզեն հոսկէ ձեզի անցնիլ , չեն կրնար . եւ ոչ հոսկէ մէկը մեզի անցնիլ » : 27 Եւ կ'ըսէ . « Ուրեմն կ'աղաչեմ քեզի , հայր , որպէսզի զատի զրկես իմ հօրս տունը : 28 Հոն հինգ եղբայրներ ունիմ , որպէսզի անոնց վկայութիւն տայ , որ անոնք ալ չգան այս տանջանքի տեղը » : 29 Եւ Աբրահամ կ'ըսէ . « Մովսէսն ու մարգարէներն ունին . անոնց թող լսեն » : 30 Եւ ան կ'ըսէ . « Ոչ , հայր Աբրահամ , բայց թէ որ մեռելներէն մէկն անոնց երթայ , կ'ապաշխարեն » : 31 Եւ կ'ըսէ անոր . « Թէ որ Մովսէսի ու մարգարէներուն չեն լսեր , մեռելներէն մէկն ալ թէ որ յարութիւն առնու , չեն հաւատար » :

ԳԼՈՒԽ ԺԷ.

*1 Իր աշակերտներուն ըսաւ . « Կարելի չէ գայթակղութեան չգալ , բայց վա՛յ է անոր , որուն ձեռքով կուգայ : 2 Աղէկ էր անոր , թէ որ անոր պարանոցէն երկանաքար կախուէր եւ ծովը իյնար , քան թէ գայթակղեցնէ այս փոքրիկներէն մէկը : *3 Զգոյշ կեցէք ձեր անձերուն , թէ որ քու եղբայրդ մեղանչէ , սաստէ անոր . եւ թէ որ ապաշխարէ , ներէ՛ անոր : 4 Եւ թէ որ քեզի եօթն անգամ մեղանչէ , եւ եօթն անգամ քեզի դառնայ ու ըսէ . « Կ'ապաշխարեմ » . անոր պիտի ներես » :

*5 Եւ առաքեալները Տէրոջ կ'ըսեն . « Հաւատք աւելցուր մեզի » : 6 Եւ Տէրը կ'ըսէ . « Թէ որ մանանելի չափ հաւատք ունենաք , եւ այս թթենիին ըսէք . « Խլուէ՛ եւ ծովու մէջ տնկուէ » . եւ ձեզի պիտի հնազանդի » :

բոլոր հոգեկան զգացումներն արժուն պիտի ըլլան հանդերձեալ աշխարհի մէջ ևս . ի զուր կը կարծէր նա թէ մեռելներէն մէկն եթէ յարութիւն առնու , փրկարար շնորհ մը պիտի ըլլայ ողջերուն , մինչդեռ ապաշխարի ողջերու համար ոչ Ղազարոսի (Յովհ. ԺԱ. 44-54) յարութիւնը և ոչ իսկ Քրիստոսինը նշանակութիւն ունեցաւ :

1-2. (Մատթ. ԺԸ. 6-7) :

3-4. (Մատթ. ԺԸ. 15. 21-22)

5-6. (Մատթ. ԺԷ. 19; Մարկ. ԺԱ. 23) :

*7 Իսկ ո՞վ ձենէ, որ հողագործ կամ հովիւ ծառայ ունենայ, որ երբ ազարակէն գայ, անոր խկոյն ըսէ թէ «Անցի՛ր, նստէ՛» : 8 Հապա չըտե՛ր անոր թէ պատրաստէ ինչ որ պիտի ճաշեմ, եւ գօտի կապելով ծառայէ ինձի, մինչեւ ուտեմ ու խմեմ, եւ յետոյ գուն ուաեա ու խմեա : 9 Միթէ շնորհք մը ըրած կ'ըլլայ այն ծառան, որ բոլոր հրամանները ըրաւ : 10 Անանկ ալ դուք երբ ամէն ձեզի հրամայուածները ընէք, ըսէք թէ «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ կը պարտէինք ընել, ըրինք» :

*11 Եւ եղաւ որ երբ Երուսաղէմ կ'երթար ան. եւ ինք Սամարիայի ու Գալիլեացիներուն մէջէն կ'անցնէր : 12 Եւ երբ գիւղ մը կը մտնէր, անոր տասը բորոտ մարդիկ պատահեցան, որոնք հեռուն կեցան : 13 Ձայներնին վերուցին ու կ'ըսեն . «Յիսուս վարդապետ, մեզի ողորմէ» : 14 Եւ երբ զանոնք տեսաւ, կ'ըսէ անոնց . «Գացէք, անձերնիդ քահանաներուն ցուցուցէք .» եւ երբ գացին, շուտով սրբուեցան : 15 Անոնցմէ մէկն երբ տեսաւ թէ բժշկուեցաւ, նորէն դարձաւ, մեծ ձայնով զԱստուած կը փառաւորէր : 16 Իր երեսներուն վրայ ինկաւ անոր ոտներուն քով, եւ անորմէ կը գօհանար . եւ ինքն էր Սամարացի : 17 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ . «Այս տասները շարժուեցան, ուրեմն իններն ո՞ր են, 18 որ չգտնուեցան դառնալ, Աստուծոյ փառք տալ, լայց միայն այս այլազգին» : 19 Եւ կ'ըսէ անոր . «Ել, գնա, որովհետեւ քու հաւատքդ քեզ ապրեցուց» :

*20 Երբ Փարիսեցիներէն հարցուեցաւ թէ «Աստուծոյ

7-10. Ինչպէս տէր մը իւր ծառային շնորհակալ ըլլալու պարտքը չունի անոր անձերի սպասուորութեանն համար, այսպէս և Աստուած կը պահանջէ մենէ նախ իրեն ծառայել և յետոյ իրմէն վայելել, փոխարէնն ընդունիլ, առանց պահանջումներ ընելու և կոտ պարծենալու :

11-19. Տասն բորոտներ հեռուն ք կենան (Ղեւտ. ԺԳ. 46), կ'ազաչեն և կը բժշկուին, որոց մին միայն կը փուծայ առ Տէր իւր շնորհակալութիւնն անձամբ մատուցանելու համար, ի նշան երախտագիտութեան, իսկ միւսներն ոչ . այսպէս ամէն ատեն և ամէն տեղ շատեր կը վայելեն Աստուծոյ շնորհքն ու բարիքը, այլ միշտ շատ քիչեր եղած են շնորհապարտ առ Աստուած :

20-21. Նոքա Աստուծոյ Սագաւորութիւնն ըսելով՝ Մեսիայի զինու զօ-

արքայութիւնն երբ պիտի գայ» . պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . «Աստուծոյ արքայութիւնը խտրութեամբ չգար . 21 Եւ չըսեն թէ «Ահա հոս կամ հոն է» . որովհետեւ անա Աստուծոյ արքայութիւնը ներսը , ձեր մէջ է» : *22 Աշակերտներուն բաւ . «Օրեր պիտի գան ձեզի , որ պիտի փափաքիք մարդոյ Որդիին օրերէն մէկը տեսնելու եւ պիտի չտեսնէք . *23 Եւ թէ որ ձեզի ըսնն . «Ահաւասիկ է կամ հոն» . ետեւէն մի՛ երթաք : *24 Որովհետեւ ինչպէս փայլակը փայլատակելով երկնքի մէկ կողմէն մինչեւ երկնքի միւս կողմը կը ծագի , անանկ եւ Որդի մարդոյ իր օրը : *25 Բայց առաջ պէտք է անոր չարչարուիլ եւ մերժուիլ այս ազգէն : 26 Եւ ինչպէս Նոյի օրերն եղան , անանկ պիտի ըլլայ մարդոյ Որդիին օրերը : 27 Կ'ուտէին , կը խմէին , կիներ կ'առնէին ու էրիկներու կ'ըլլային , մինչեւ երբ Նոյ տապանը մտաւ , եւ ջրհեղեղ եղաւ եւ ամէնը կորսնցուց : 28 Նոյնպէս՝ ինչպէս Ղովտի օրերն ալ եղաւ , կ'ուտէին , կը խմէին , կը գնէին , կը ծախէին , կը տնկէին , կը յինէին , 29 Եւ որ օրը Ղովտ ելաւ Սողոմէն , հուր եւ ծծումբ տեղաց երկինքէն եւ ամէնը կորսնցուց : 30 Նոյն օրինակին նման պիտի ըլլայ այն օրն՝ երբ Որդի մարդոյ պիտի յայտնուի : *31 Այն օրն ով որ տանիքն ըլլայ , եւ կարասին իր տանը մէջ , թող չիջնէ զայն առնրու . եւ ով արտի մէջ է , նոյնպէս ետ թող չզառնայ : *32 Ղովտի կիներ յիշեցէք : *33 Ով որ իր անձը ապրեցնել

րութեամբ իսրայելի թագաւորութեան վերահաստատութիւնը կ'իմանային . թիւր կը մեկնէին մեսիայական մարգարէութիւնները , որոց կը պատասխանէր Քրիստոս , թէ «Արքայութիւնն Աստուծոյ ի ներքս՝ ի ձեզ է» : ձը՜՜մարտութիւնն էր այն (Յովն . ԺԸ . 36-37) :

22. Աշակերտք պիտի ցանկանային տեսնել նորէն Փրկիչն մանուանդ իրենց փորձութեան օրերուն մէջ :

23. (Մատթ . ԻԳ . 23-26 ; Մարկ . ԺԳ . 24) :

24. (Մատթ . ԻԳ . 27) :

25. (Մատթ . ԺԶ . 21 ; ԺԷ . 21 ; Մարկ . Ժ . 33) :

26-30. (Մատթ . ԻԳ . 37-39) :

31. (Մատթ . ԻԳ . 10-13) :

32. (Եննդ . ԺԹ . 17-26) :

33. (Մատթ . Ժ . 39) :

կ'ուզէ, զանի պիտի կորսնցնէ. եւ ով որ կը կորսնցընէ, զանի պիտի ապրեցնէ: *³⁴ Զեզի կ'ըսեմ. այն գիշերն թէ որ ըլլան երկուք մէկ մահիճի մէջ, մէկը պիտի առնուի ու միւսը պիտի թողուի. ³⁵ Եւ թէ որ երկու ըլլան միասին աղալու, մէկը պիտի առնուի ու միւսը պիտի թողուի: Եւ թէ որ երկու ըլլան արտի մէջ, մէկը պիտի առնուի ու միւսը պիտի թողուի»: ³⁶ Պատասխան տուին ու կ'ըսեն անոր. «Ո՛ւր, Տէ՛ր»: *³⁷ Եւ ան կ'ըսէ անոնց. «Ուր մարմին կայ, հոն արժիւններ պիտի ժողվըւին»:

ՊԼՈՒԾ ԺԸ.

*¹ Անոնց մէկ առակ ալ ըսաւ այն բանին համար թէ պէտք է անոնց ամէն ատեն աղօթքի կենալ ու չձանձրանալ: ² Կ'ըսէ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, Աստուծոյ չէր վախնար ու մարդիկնորէն չէր ամչնար: ³ Եւ նոյն քաղաքին մէջ որբեւարի մը կար, կուգար անոր

34-36. (Մատթ. ԻԴ. 40-41):

37. (Մատթ. ԻԴ. 28):

1-7. Եւ որպէսզի ցոյց տայ Յիսուս, թէ մարդ որչափ աւելի աղօթէ, այնքան աւելի կը լսուի Աստուծոյ, կը զրուցէ Դատաւորի առակը, որոյ մեկնութիւնը որ երկարօրէն զրուած կայ ի ճառընտիրս և ի Քարգղիբոս, զեղեցիկ և կարծաւօտ ամփոփուած կայ մեր Շարականի մէջ, որ և աւասիկ. «Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զմիտս մեր, դատել զհոգի և զմարմին, արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց, Քրիստոս: Իսկ անիրաւ դատաւորին՝ որ ի քաղաք բնութեան մերում. ոչ ունելով զերկիւղ քո սուրբ և անպատկառ ի մարդկանէ, ոչ առնելով դատ զրկելոյն: Այլ անմահ սուրբ Փեսայից այրի հոգի իմ պաղատի. ուսո՞ զիրաւունս քո իմում դատաւորիս առնել ինձ դատաստան արդար ընդ ռոխի մարմնոյ իմոյ»:

Այս առակի իմաստէն այս կը հետեւի, թէ կնոջ մը Սախանձելէն Աստուծոյ չվախցող եւ մարդերէ չամչցող մարդ մը ի գում եւ ի դատաստան կը շարժի, հրքան եւ ամենողորմածն Աստուած իւր վշտանեմ երկիւղածներուն բողբոքին իսկոյն կը լսէ եւ կը գործադրէ արդարութիւնը:

ու կ'ըսէր. «Իստէ՛ զիս իմ հակառակորդիս դէմն: 4 Եւ շատ ժամանակներ չէր ուզեր. անկէ ետքը կ'ըսէ իր մտքին մէջ. «Թէ որ Աստուծոյն չեմ վախնար, ու մարդիկնեւրէն չեմ ամչնար. 5 գոնէ զիս ձանձրացնելուն համար այն որքեւարիին դատը տեսնեմ, որ ամէն ատեն ինծի գալով զիս չթախանձէ»: 6 Եւ Տէրը կ'ըսէ. «Լսեցէք անիրաւ դատաւորն ի՞նչ կ'ըսէր: 7 Իսկ Աստուած պիտի չընէ՞ վրէժխնդրութիւն իր ծառաներուն համար, որոնք անոր գիշեր ու ցորեկ կ'աղաղակեն, եւ միայն անոնց համբերող ըլլայ: *8 Այո՛, ձեզի կ'ըսեմ, որ անոնց համար շուտով վրէժխնդրութիւն պիտի ընէ. իսկ Որդի մարդոյ գալով արդեօք երկրի վրայ հաւասար պիտի գտնէ՞»:

*9 Եւ անոնց, որոնք իրենց անձերուն վստահացած էին թէ արդար են եւ շատերը կ'արհամարհէին, այս առակն ըսաւ. 10 երկու մարդեր ելան տաճարը աղօթքի կենալու, մէկը Փարիսեցին եւ միւսը մաքսաւոր: 11 Փարիսեցին մեկուսի կը կենար եւ զայս առանձին աղօթք կ'ընէր. «Աստուած իմ, քենէ շնորհակալ եմ. որովհետեւ ուրիշ մարդիկներուն պէս չեմ յափշտակող, անիրաւ, շնացող եւ կամ այս մաքսաւորին պէս: 12 Հապա շաբաթը երկու անգամ պահք կը պահեմ, եւ իմ բոլոր ստացուածքներուս տասանորդը կուտամ»: 13 Եւ մաքսաւորը մեկուսի կը կենար, եւ չէր ուզեր ոչ ալ աչքերն երկինք վերցնել, հապա իր կուրծքը կը ծեծէր ու կ'ըսէր. «Աստուած, զիս՝ մեղաւորս քաւէ՛»: 14 Կ'ըսեմ ձեզի, աս իր տունը իջաւ արդարացած քան թէ ան: Որովհետեւ այն ամէնն, ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի.

8. Ուրեմն շատերը Թերացած պիտի գտնուին ի հաւատս, երբ զայ Որդի մարդոյ, այսինքն անհաւատութիւնն յաճախած:

9-14. Փարիսեցին ոչ Թէ միայն ամբարտաւանութեամբ կ'աղօթէր, ուրիշներուն մեղքերը Թուելով, այլև մատնանիշ լինելով ի մաքսաւորն՝ զանի տարապարտ ճշնամանեցու մեղքն ալ կը գործէր, վասն զի զուցէ չէր նա այնքան մեղաւոր, որպէս ինք կը կարծէր: Իսկ մաքսաւորն, երբ Փարիսեցին իւր բարեմտանութիւնները կը հռչակէր, իւր մեղքերը խոստովանելով Թողութիւն կը խնդրէր Աստուծոյն, որով նա որ մեղաւոր մտած էր արդարացած կը մեկնէր տաճարէն, իւր փրակն որ հոն արդար մտած էր, մեղաւոր զուրս կ'եկնէր:

եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ , պիտի բարձրանայ » :

*15 Անոր մանուկներ կը մօտեցնէին որ անոնց դպչի-
երբ աշակերտները տեսան , անոնց կը սաստէին : 16 Բայց
Յիսուս զանոնք իրեն կանչելով կ'ըսէ . « Այդ մանուկնե-
րուն թող տուէք ինծի գալու . եւ զանոնք մի' արգիլէք ,
որովհետեւ Աստուծոյ արքայութիւնն ատանկներուն է :
17 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , « ով որ Աստուծոյ արքայու-
թիւնը մանուկի պէս չընդունիր , անոր մէջ պիտի չմտնէ » :

*18 Իշխան մը անոր հարցուց ու կ'ըսէ . « Բարի վար-
դապետ , ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառան-
գեմ » : 19 Յիսուս անոր կ'ըսէ . « Ինչո՞ւ ինծի բարի կ'ըսես .
բարի մէկը չկայ , բայց միայն թէ Աստուած » : 20 Պատուի-
րանները գիտես . Մի' շնար , մի' սպաններ , մի' գողնար ,
սուտ մի' վկայեր , քու հայրդ ու մայրդ պատուէ » : 21 Եւ
ան կ'ըսէ . « Այդ ամէնն իմ մանկութենէս ի վեր պահեցի » :
22 Յիսուս երբ զայս լսեց , կ'ըսէ անոր . « Իեռ մէկ բան ալ
քեզի պակաս է . ամէն բան որ ունիս , ծախէ ու աղ-
քատներուն տուր , եւ երկինքի մէջ զանձեր պիտի ունե-
նաս . եւ իմ ետեւէս եկուր » : 23 Ան երբ այս լսեց , տրտ-
մեցաւ , վասն զի շատ հարուստ էր : 24 Երբ Յիսուս զանի
տրտմած տեսաւ , կ'ըսէ . « Ո'րչափ դժուար է անոնց , ո-
րոնք ստացուածքներ ունին , Աստուծոյ արքայութիւնը
մտնել : 25 Ուղտին դիւրին է ասեղի ծակէն անցնել ,
քան թէ հարուստին Աստուծոյ արքայութիւնը մտնել » :
26 Եւ որոնք լսեցին՝ կ'ըսէին . « Եւ ո՞վ կրնայ ապրիլ » :
27 Եւ ան կ'ըսէ , « Մարդիկներէն անհնարիններն՝ Աստուծ-
մէ հնարաւոր են » : 28 Եւ Պետրոս կ'ըսէ . « Ահա մենք մեր
ստացուածքները թողուցինք , եւ քու ետեւէդ եկանք » :
29 Եւ ան կ'ըսէ անոնց . « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ մէ-
կը չկայ որ թողուց տուներ կամ ծնողք , կամ եղբայրներ ,
կամ կին , կամ որդիներ Աստուծոյ արքայութեանը հա-
մար : 30 Թէ որ բազմապատիկը չառնու այս ժամանակիս

15-17. Յիսուս կ'օրհնէ մանուկները (Մատթ. ԺԹ. 13-15: Մարկ. Ժ.
13-16):

18-30. Յիսուս կը պատասխանէ հարուստ իշխանին (Մատթ. ԺԹ.
16-30: Մարկ. Ժ. 17-34):

մէջ, եւ այն աշխարհին մէջ, որ գալու է, յաւիտենական կեանքը պիտի ժառանգէ»:

*31 Եւ տաան երկուքն առանձին առնելով՝ կ'ըսէ անոնց. «Ահա երուսաղէմ կ'ելլինք, եւ մարգարէներուն բոլոր գրուածները մարդոյ Որդիին համար պիտի կատարուին: 32 Որովհետեւ հեթանոսներուն պիտի մատնուի, եւ ծաղրուի, 33 եւ պիտի ծեծեն ու զանի պիտի սպաննեն, եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնու»: 34 Եւ անոնք անոնցմէ բան մը չհասկցան, հապա այն խօսքն անոնցմէ ծածկուած էր, եւ ըսածները չէին իմանար:

*35 Եւ եղաւ որ Երիքովի մօտենայ, կոյր մը ճամբուն քով մուրացկան կը նստէր: 36 Երբ ժողովրդեան անցնիլը տեսաւ, կը հարցնէր թէ «Ի՞նչ է այն»: 37 Եւ անոր ըսին թէ Նազովրեցի Յիսուսը կ'անցնի»: 38 Պտուց ու կ'ըսէ. «Յիսուս, Դաւթի որդի, ողորմէ ինձի»: 39 Եւ որոնք առջեւէն կ'երթային, անոր կը սաստէին որ լռէ. եւ ան ա՛լ աւելի կը պոռար. «Դաւթի որդի, ինձի ողորմէ»: 40 Կեցաւ Յիսուս, եւ հրամայեց զանի իրեն բերել. եւ երբ անոր մօտեցաւ, հարցուց անոր ու կ'ըսէ. 41 «Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ». եւ ան կ'ըսէ. «Տէր, իմ աչքերս թող բացուին ու տեսնեմ»: 42 Եւ Յիսուս կ'ըսէ անոր. «Նայէ՛, քու հաւատքդ քեզ բժշկեց»: 43 Եւ իսկոյն տեսաւ եւ անոր հտեւէն կ'երթար եւ զԱստուած կը փառաբարէր. եւ բոլոր ժողովուրդը տեսնելով Աստուծոյ օրհնութիւն կուտար:

Պ Լ Ա Ւ Խ Ժ Թ.

*1 Եւ մանելով Երիքովի մէջ կը պտրտէր: 2 Եւ ահա մարդ մը, անունը Զաքէոս ըսուած, եւ ան մաքսապետ

31-34. Յիսուս կը զուշակէ այս երիցս իւր մահը (Մատթ. Ի. 17-19: Մարկ Ժ. 32-34):

35-43. Բժշկուածին կուրին յերիքով (Մատթ. Ի. 29-34: Մարկ. Ժ. 46-52):

էր եւ հարուստ . 3 Եւ կ'ուզէր տեսնել թէ Յիսուս ո՞վ է , եւ բազմութենէն չէր կրնար , որովհետեւ հասակով կարճ էր : 4 Եւ առաջ անցնելով , ժանտաթզենին ելաւ , որպէս զի զանի տեսնէ . վասն զի անկէ պիտի անցնէր : 5 Երբ եկաւ այն տեղը , Յիսուս վեր նայեցաւ եւ կ'ըսէ անոր . « Զաքէ , յուտ ըրէ . ասկէ իջիր , որովհետեւ այսօր քու տանդ մէջ պէտք է ինծի իջնել » : 6 Աճապարեց ու իջաւ եւ զանի ուրախութեամբ ընդունեց : 7 Երբ ամէնն ալ տեսան , կը տրանջէին ու կ'ըսէին թէ « Մեղաւոր մարդուն քով մտաւ օթեւանելու » : 8 Եկաւ Զաքէոս , կեցաւ եւ Տէրոջ կ'ըսէ . « Տէր , ահա իմ ստացուածքներուս կէսը աղքատներուն տամ , եւ թէ որ մէկը զրկեցի , չորս անգամը վճարեմ » : 9 Եւ Յիսուս կ'ըսէ անոր . « Այսօր այս տանը փրկութիւնս եղաւ . որովհետեւ աս ալ Աքրահամբ որդի է : 10 վասն զի Որդի մարդոյ եկաւ փնտռել ու փրկել կորսուածը » :

*11 Եւ երբ անոնք այս կը լսէին , առակ մը կցեց ու կ'ըսէ , անոր Երուսաղեմի մօտենալուն եւ անոնց կարծելուն համար թէ իսկոյն Աստուծոյ արքայութիւնը պիտի յայտնուի : 12 կ'ըսէ . « Ազնուական մարդ մը հեռու աշխարհ գնաց իր թագաւորութիւնն առնլու եւ դառնալու : 13 Եւ իր ծառաները կանչելով՝ անոնց տասը մնաս տուաւ եւ կ'ըսէ անոնց . « Գործածեցէք այդ , մինչեւ գամ » : 14 Եւ անոր քաղաքացիները զանի կ'ատէին , անոր ետեւէն պատգամաւորներ զրկեցին ու կ'ըսեն թէ « Զենք ուզեր ադոր մեր վրայ թագաւորելը » : 15 Եւ եղաւ որ ան դառնայ թագաւորութիւնն առնլով , եւ կանչեց այն ծառաները՝ որոնց դրաւը տուած էր , որպէս զի գիտնայ թէ ով ինչ շահեցաւ : 16 Առաջինն եկաւ ու կ'ըսէ . « Տէր , քու

Քէ միայն կը փութայ Յիսուսը հիւրընկալելու , այլ եւ ապաշխարութեամբ եւ ողորմածութեամբ քուել իւր բոլոր մեղքերը :

11-28. « Եւսան են այս առակիս և որ ի Մատթէոսի աւետարանն (ԻԵ, 14-30) գրեալ են քանբարբն , և այնպէս մինչ զի կարծելի եղաւ Քէ նոյն իցէ : Սոսկայն զդոյն տսել՝ կարգ բանիցն ոչ ունի , զի անդ այլ չափ առաջնոյն և այլ երկրորդին և երրորդին . իսկ աստ հաւասար չափէ սովնեցուն : Եւ անդ հաւասար մատուցին զշահն չափով , իսկ աստ ի հաւատարէն զոր ընկալան , ոմն բազումս և ոմն սակաւս մատոյց » (Իզն. Շնորհալի) :

մնասդ տասը մնաս եղաւ) : 17 Եւ կ'ըսէ անոր . « Ապրիս , բարի ծառայ , որովհետեւ քիչիդ հաւատարիմ եղար , իշխանութիւն ունեցիր տասն քաղաքի վրայ » : 18 Երկրորդն եկաւ ու կ'ըսէ , « Քու մնասը հինգ մնաս եղաւ » : 19 կ'ըսէ անոր ալ . « Եւ դուն հինգ քաղաքներու վրայ եղիր » : 20 Միւսն եկաւ ու կ'ըսէ . « Տէր , ահա քու մնասը՝ որ վարչամակի մէջ ծրարած էի . 21 քննէ կը վախնայի , որովհետեւ խիստ մարդ ես . կը վերցնես , ուր չդրիր , եւ կը քաղես , ուր չցանեցիր » : 22 Եւ կ'ըսէ անոր . « Քու բերանէդ քեզ դատեմ , անհաւատ ծառայ . գիտէիր թէ ես խիստ մէկ մարդ եմ . կը վերցնեմ ուր չդրի , եւ կը քաղեմ . ուր չցանեցի » : 23 Եւ ի՞նչու իմ դրամս չտուիր սեզանաւորներուն , եւ ես գալով տոկոսներովը պահանջէի » : 24 Եւ սպասաւորներուն կ'ըսէ . « Ատկէ մնասը առէք , եւ տարէք անոր տուէք , որ տասը մնաս ունի » : 25 Եւ կ'ըսեն անոր . « Տէր , տասը մնաս ունի » : 26 « Կ'ըսեմ ձեզի . « Այն ամէնն , ով որ ունի , պիտի տրուի . եւ ան որ չունի , ինչ որ ունի , անորմէ պիտի վերցուի » : 27 Բայց իմ այն թշնամիներս , որոնք չէին ուզեր իմ թագաւորելս անոնց վրայ , հոս բերէք եւ իմ առջեւ սպաննեցէք » : 28 Եւ երբ այս ըսաւ , յառաջ գնաց Երուսաղէմ երթալու :
 *29 Եւ եղաւ , երբ մօտեցաւ Բեթֆազէի եւ Բեթանիայի այն լերան մօտ՝ որ կ'ըսուի Զիթենեաց , իր աշակերտներէն երկուքը զրկեց ու կ'ըսէ . 30 « Դուք գացէք այն գիւղը՝ որ մեր դէմ կայ , ուր երբ մտնէք , կապուած աւանակ մը պիտի գտնէք , որուն վրայ մարդիկնրէն մէկը բնաւ չնստաւ . քակեցէք զանի ու բերէք » : 31 Եւ թէ որ մէկը ձեզի հարցնէ թէ « Ի՞նչու կը քակէք » . այսպէս ըսէք անոր թէ « Իր Տէրովը պէտք է » : 32 Երբ գացին , որոնք զրկուեցան , գտան , ինչպէս որ ըսաւ անոնց . աւանակը կը կինար : 33 Եւ երբ աւանակը կը քակէին , անոր տէրերն անոնց կ'ըսեն . « Ի՞նչու այդ աւանակը կը քակէք » : 34 Եւ անոնք կ'ըսեն . « Իր Տէրովը պէտք է » : 35 Եւ զանի Յիսուսի բերին , եւ անոր վրայ հագուստներ ձգեցին եւ Յիսուսը հեծցուցին : 36 Եւ երբ կ'երթար , ի-

29-40. Ծաղկազարդ (Մատթ. ԻԱ. 1-11; Մարկ. ԺԱ. 4-11; Յովն. ԺԲ. 12-19):

րենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ : 37 Եւ երբ ա՛յ մօտեցաւ Ձիթհնետաց լերան զառիվայրէն իջնելով, աշակերտներուն բոլոր բազմութիւնն սկսաւ ուրախութեամբ օրհնել զԱստուած միժ ճայնով, այն բոլոր եղած հրաշքներուն համար, որ տեսան . 38 Եւ կ'ըսէին . « Օրհնեալ այդ թագաւորը , որ Տէրոջ անունով կուգայ . յերկինս խաղաղութիւն եւ փառք ի բարձունս » : 39 Եւ այն բազմութենէն Փարիսեցիներէն մէկ քանինիւր կ'ըսեն անոր . « Վարդապետ , քու աշակերտներուդ սաստէ » : 40 Պատասխան տուաւ ու կ'ըսէ . « կ'ըսեմ ձեզի , թէ որ ասոնք լռեն , այդ քարերը պիտի պռռան » :

*41 Եւ երբ մօտեցաւ , քաղաքը տեսնելով անոր վրայ լազաւ ու կ'ըսէ . 42 « Թէ որ դուն գտնէ այս օրերուն մէջ պիտնայիր քու խաղաղութիւնը , բայց հիմա քու երեսէդ ծածկուեցաւ : 43 Որովհետեւ օրեր պիտի գան քու վրայ , եւ քու յուստիքդ քու թշնամիներդ պատնէշ պիտի շինեն եւ քեզ պիտի պաշարեն , եւ քեզ ամէն կողմերէն պիտի նեղեն . 44 Եւ քեզ հիմնայատակ պիտի ընեն եւ քու մէջ եղած որդիներդ . եւ քու մէջդ պիտի չթողուն քար քարի վրայ , որովհետեւ չճանչցար քու այցելութեան ժամանակը » :

*45 Եւ տաճարը մտնելով սկսաւ աղաւնի վաճառողներն ու գնողները հանել , եւ դրամափոխներուն սեղանները ցրուց : 46 Եւ կ'ըսէ անոնց . « Գրուած է , թէ իմ տունս աղօթքի տուն թող ըլլայ , եւ դուք զանի աւագակներու քարայր ըրիք » :

47 Եւ միշտ տաճարին մէջ անոնց կը սովրեցնէր . իսկ քահանայապետներն ու դպիրներն ու ժողովրդեան գլխաւորները կ'ուզէին զանի կորսնցնել : 48 Եւ չէին գտներ թէ ինչ ընեն , որովհետեւ բոլոր ժողովուրդն անոր յարեր էր մտիկ ընելու համար :

41-44. Յիսուս արտասուելով ցոյց տուաւ Թէ ունէր կաթոգին սէր առ իւր աշակերտները :

45-48. Տաճարը կը մտքորուի (Մատթ. ԻԱ. 12-16; Մարկ. ԺԱ. 12-19) :

ԳՐԻՆԵՐ ԱՊՈՒՅԵՆՆԵՐ
 ՔԼԱՌԻՍ ԿԱՌԳԱՅԻՆ

*1 Եւ եղաւ որ այն օրերէն մէկուն մէջ, հոն տաճա-
 րին մէջ կը սովորեցնէր ժողովրդեան եւ կ'աւետարանէր,
 քահանայապետներն ու դպիրները ծերերով մէկտեղ վրայ
 հասան, 2 Եւ անոր կ'ըսեն. «Ըսէ մեզի, որո՞ւ իշխանու-
 թեամբ դուն այդ կը գործես. կամ ո՞վ է որ այդ իշխա-
 նութիւնը քեզի տուաւ»: 3 Պատասխան տուաւ եւ կ'ըսէ
 անոնց. «Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, եւ ինձի ըսէք.
 4 Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր թէ մարդիկ-
 ներէն»: 5 Եւ անոնք իրենց մտքին մէջ խորհեցան ու
 կ'ըսեն. 6 «Թէ որ ըսենք. «Երկինքէն». կ'ըսէ. «Իսկ ի՞ն-
 չու չհաւատացիք անոր». եւ թէ որ ըսենք. «Մարդիկնե-
 րէն». բոլոր ժողովուրդը մեզի կը քարկոծեն. որովհետեւ
 մտքով համոզուած էին Յովհաննէսին վրայով, թէ մար-
 դարէ է»: 7 Եւ պատասխան տուին, թէ չեն գիտեր, ուր-
 կէ է: 8 Եւ Յիսուս կ'ըսէ անոնց. «Եւ ես ձեզի չեմ ը-
 սեր, որո՞ւ իշխանութեամբ կ'ընեմ այս բանը»:

*9 Սկսաւ ժողովրդեան այս առակը ըսել. «Մարդ մը
 այգի տնկեց, եւ զայն մշակներու տուաւ. եւ ինքը ճամ-
 բայ գնաց շատ ժամանակ: 10 Եւ ժամանակին մշակնե-
 րուն ծառայ զրկեց, որպէս զի այգիին պտուղէն անոր
 տան. եւ մշակները զանի ծեծեցին, եւ պարապ արձկե-
 ցին: 11 Եւ ուրիշ մէկ ծառայ ալ զրկեց. անոնք զանի ալ
 ծեծեցին, անարգեցին եւ պարապ զրկեցին: 12 Եւ երրորդ
 մը զրկեց. անոնք զանի ալ վիրաւորեցին ու դուրս հա-
 նեցին: 13 Այգիին տէրը կ'ըսէ. «Ի՞նչ ընեմ, իմ սիրելի
 որդիս զրկեմ. կարելի է անորմէ պատկառին»: 14 Երբ
 մշակները զանի տեսան, իրարու հետ խորհեցան ու կ'ը-
 սեն. «Ժառանգն աս է, սպաննենք զասի, որպէս զի ժա-
 ռանգութիւնը մերն ըլլայ»: 15 Եւ զանի այգիէն դուրս
 հանեցին եւ սպաննեցին. հիմա այգիին տէրը ի՞նչ պիտի

1-8. Հարցուիորձ վասն իշխանութեան Քրիստոսի (ԱտտՊ. ԻԱ.
 23-32: Մարկ. ԺԱ. 27-33):

ընէ . 16 չէ՞ որ պիտի գայ եւ այն մշակները պիտի կորսընցնէ եւ իր այգին ուրիշներուն պիտի տայ . երբ լսեցին , կ'ըսեն . « Ոչ . քաւ լիցի » : 17 Եւ անոնց նայելով կ'ըսէ . « Իսկ ի՞նչ է այն , որ գրուած է թէ Վայն քարը ոչ շինողները անարգեցին , այն եղաւ անկիւնին գլուխը » : 18 Այն ամէնն ով որ այս քարին զարնուի , պիտի խորտակուի . եւ որուն վրայ իյնայ , պիտի փշրէ զանի » : 19 Եւ դպիրներն ու քահանայապետները կ'ուզէին զանի նոյն ժամուն ձեռք ձգել , եւ ժողովորդէն վախցան , որովհետեւ գիտցան թէ այն առակը իրենց համար ըսաւ :

*20 Եւ յետոյ սպասեցին , եւ իրենց անձերն արդար կեղծաւորող խաբեբաներ դրկեցին , որպէս զի զանի խօսքով բռնեն , զանի պետութեան ու դատաւորին իշխանութեանը մատնելու համար : 21 Անոր հարցուցին ու կ'ըսեն . « Վարդապետ , գիտենք թէ ուղիղ կը խօսիս եւ կը սորվեցնես , եւ աշառութիւն չես ըներ , հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սովորեցնես » : 22 Պէտք է մեզի կայսրին հարկ տալ թէ ոչ » : 23 Եւ անոնց խորամանկութեանը նայելով կ'ըսէ անոնց . 24 « Ինծի դահեկան մը ցուցուցէք » . եւ անոնք ցուցուցին . եւ կ'ըսէ . « Որո՞ւ պատկերն ու գիրն ունի » . պատասխան տուին ու կ'ըսեն . « Կայսրին » : 25 Եւ ան կ'ըսէ անոնց . « Ուրեմն գացէք , կայսրինը կայսրին տուէք , Աստուծոյն ալ Աստուծոյ » : 26 Եւ զանի չկրցան բռնել խօսքով ժողովորդեան առջեւ . եւ անոր պատասխանին վրայ զարմացած լռեցին :

*27 Եւ Սաղուկեցիներէն մէկ քանինը մօտենալով , որոնք յարութիւն չըլլալուն համար կը պնդէին , հարցուցին անոր ու կ'ըսեն . 28 « Վարդապետ , Մովսէս մեզի գրեց թէ « Թէ որ մէկուն եղբայրը մեռնի , որ կին ունենայ , եւ ան որդի չունենայ , անոր եղբայրն այն կինն առնու , եւ իր եղբորը զաւակ հանէ » : 29 Ուրեմն եօթը եղբայրներ կային , եւ առաջինը կին առնլով անորդի մե-

9-19. Առակ չար մշակաց (Մատթ. ԻԱ. 33-46; Մարկ. ԺԲ. 1-12):

20-26. Վասն հարկին (Մատթ. ԻԲ. 15-22; Մարկ. ԺԲ. 13-17):

27-40. Վասն յարութեան (Մատթ. ԻԲ. 23-33; Մարկ. ԺԲ. 18-27):

41-44. Թէ Քրիստոս որդի՞ է Դաւթի (Մատթ. ԻԲ. 41-46; Մարկ. ԺԲ. 35-37):

առաւ, 30 Երկրորդն ալ զանի առաւ. ան ալ անորդի մե-
 առաւ: 31 Եւ երրորդը զանի առաւ, եօթն ալ ախպէս, եւ
 որդիներ չթողուցին: 32 Կինն ալ մեռաւ: 33 Ուրեմն յա-
 բուժեան ատեն անոնցմէ որո՞ւ կին պիտի ըլլայ, որով-
 հետեւ եօթն ալ զանի ունեցան: 34 Յիսուս անոնց պա-
 տասխան տուաւ ու կ'ըսէ. «Այս աշխարհի որդիները կիներ
 կ'առնուն եւ էրիկներուն կ'ըլլան. 35 Իսկ անոնք, որոնք
 արժանի պիտի ըլլան այն աշխարհին համեմուտ եւ մեռելներէ
 յարութիւն առնուու, ոչ կիներ կ'առնուն, ոչ ալ էրիկնե-
 րու կ'ըլլան: 36 Վասն զի ալ չեն կրնար մեռելի, որովհե-
 տեւ հրեշտակներուն հաւասար են, եւ Աստուծոյ որդի-
 ներ, վասն զի յարութեան որդիներ են: 37 Բայց թէ մե-
 ռելները յարութիւն կ'առնուն, եւ Մովսէս մորենիին մէջ
 գուշակեց, ինչպէս Տէրոջ վրայով կ'ըսէ Աբրահամի Աս-
 տուածը եւ Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը:
 38 Եւ Աստուած մեռելներուն չէ, հապա կենդաններուն,
 որովհետեւ ամէնքն ալ անոր կենդանի են»: 39 Դպիրնե-
 րէն մէկ քանիներ պատասխան տուին ու կ'ըսեն. «Վար-
 դապետ, աղէկ ըսիր»: 40 Եւ մէկը չէր համարձակեր ա-
 նոր բան մը հարցնել:

*41 Եւ անոնց կ'ըսէ. «Ի՞նչպէս Քրիստոսին համար կ'ը-
 սեն թէ Դաւիթ որդին է, 42 որովհետեւ ինք Դաւիթ, Սաղ-
 մոններու զրքին մէջ կ'ըսէ. «Տէրն իմ Տէրոջս ըսաւ. «Իմ
 աջ կողմս նստէ, 43 մինչեւ քու թշնամիներդ քու ոտ-
 քերուդ տակը դնեմ»): 45 Ուրեմն թէ որ Դաւիթ զանի
 Տէր կ'անուանէ, ի՞նչպէս անոր որդին կ'ըլլայ»:

*45 Եւ բոլոր ժողովրդեան առջեւ կ'ըսէ աշակերտնե-
 րուն, 46 «Դպիրներէն զգուշացէք, որոնք կ'ուզեն պատ-
 մուճանով պտրտիլ, եւ հրապարակներու մէջ բարեւներ կը
 սիրեն, եւ ժողովարաններու մէջ առաջին աթոռները, եւ
 ընթրիքներու մէջ պատուաւոր տեղերը, 47 Որոնք որբե-
 լարիներուն տունները կ'ուտեն, եւ պատճառանքներով
 աղօթքը կ'երկնցնեն. անոնք աւելի դատապարտութիւն
 պիտի ընդունին»:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա.

^{*1} Եւ նայելով տեսաւ հարուստներն, որոնք իրենց ընծաները գանձանակին մէջ կը ձգէին: ² Եւ որբեւարի աղքատ կին մը տեսաւ, որ հոն երկու լուամայ ձգեց: ³ Եւ կ'ըսէ. «Արդարեւ կ'ըսեմ ձեզի, թէ այն աղքատ որբեւարին ամենէն աւելի ձգեց: ⁴ Անոնք ամէնքն ալ իրենց աւելորդէն Աստուծոյ ընծաներուն մէջ ձգեցին, ան իր կարօտութենէն իր բոլոր ապրուստը՝ որ ունէր, ձգեց»:

^{*5} Եւ ոմանք տաճարին վրայով կ'ըսէին թէ «Գեղեցիկ քարերով ու աշտարակներով զարդարուած է», կ'ըսէ. ⁶ «Այդ ամէնը որ կը տեսնէք, օրեր պիտի գան որ հոն քար քարի վրայ պիտի չձգուի, որ չքակուի»: ⁷ Հարցուցին անոր ու կ'ըսեն. «Վարդապետ, երբ պիտի ըլլայ այդ, եւ ի՞նչ նշան կայ, երբ այդ պիտի ըլլայ»: ⁸ Եւ ան կ'ըսէ. «Զգուշացէք, չխաբուիք, որովհետեւ շատեր իմ անունով պիտի գան, եւ պիտի ըսեն թէ «Ես եմ». եւ ժամանակը մօտեցաւ. անոնց ետեւէն մի՛ երթաք: ⁹ Երբ պատերազմներ ու խռովութիւններ լսէք, մի վախնաք. վասն զի պէտք է առաջ այդ ըլլալ, բայց վախճանն իսկոյն չէ»: ¹⁰ Այն ատեն կ'ըսէ անոնց. «Ազգ ազգի վրայ եւ թագաւորութիւն թագաւորութեան վրայ պիտի ելլէ. ¹¹ Եւ մեծ ժափեր, տեղ տեղ ալ սովեր ու մահտարածամներ, երկնքէն ահռելի բաներ եւ մեծամեծ նշաններ պիտի ըլլան: ¹² Բայց այս ամենէն առաջ, իրենց ձեռքերը ձեզի պիտի մխեն ու պիտի հալածեն, ժողովրդանոցներու եւ բանտերու պիտի մատնեն, եւ դատաւորներու ու թագաւորներու առջեւ պիտի տանին իմ անուանս համար: ¹³ Եւ այն ձեզի պիտի ըլլայ վկայութիւն: ¹⁴ Ուրեմն ձեր սրտերուն մէջ դրէք, առաջուց չպատրաստուիլ պատասխան տալու համար: ¹⁵ Որովհետեւ ես ձեզի բերան ու

1-4. Լուամայ այրւոյն (Մարկ. ԺԲ. 41-44):

5-38. Կը գուշուի Յիսուս Երուսաղեմի ուերն և իւր գալուստը (Մատթ. ԻԲ. 1-42; Մարկ. ԺԳ. 1-37):

իմաստութիւն պիտի տամ, որուն պիտի չկրնան հակառակ կենար կամ պատասխան տալ ձեր բոլոր հակառակորդները: 16 Պիտի մատնուիք ծնողքներէ եւ եղբայրներէ, ազգակիցներէ եւ բարեկամներէ, եւ ձեռնէ պիտի սպաննեն: 17 Եւ ամուսնէն ատելի պիտի ըլլաք իմ անունիս համար: 18 Եւ ձեր պիտէն մազ մը պիտի չկորսուի: 19 Եւ ձեր համբերութեամբ ձեր հոգիները պիտի ստանաք:

20 Բայց երբ Երուսաղէմը զօրքերով պաշարուած տեսնէք, այն ատեն գիտցէք թէ անոր աւերը մօտ է: 21 Այն ատեն որոնք Հրէաստանի մէջ են, լեռներու մէջ թող փախչին, եւ որոնք հոն են, անոր մէջ թող չմտնեն: 22 Որովհետեւ անոնք վրէժինպրութեան օրեր են, որպէս զի բոլոր զրուածները կատարուին: 23 Բայց վայ է ստնտուներուն եւ յղիններուն այն օրերը, որովհետեւ երկրի վրայ մեծ տագնապ պիտի ըլլայ, եւ բարկութիւն այն ժողովրդին վրայ: 24 Եւ սուրի բերան պիտի իյնան, եւ բոլոր հեթանոսներու մէջ գերի պիտի տարուին, եւ Երուսաղէմ ազգերէ կոխան պիտի ըլլայ, մինչեւ հեթանոսներու ժամանակները վերջանան: 25 Եւ նշաններ պիտի ըլլան արեւուն, լուսնին եւ աստղերուն վրայ, եւ աշխարհի մէջ հեթանոսներու տագնապ, ծովու եւ խոտվութեան ահաւոր բարբառէ, 26 մարդիկներուն ոգիները պիտի մարմիրն վախէ եւ բոլոր աշխարհի վրայ բաներ գալու կարծիքէն, վասն զի երկնքի զօրութիւնները պիտի շարժին: 27 Եւ այն ատեն Որդի մարդոյ պիտի տեսնեն ամպերով, եւ զօրութիւններով եւ շատ փառքով եկած: 28 Դւ երբ այս բանը ըլլալ սկսի, ձեր գլուխները վերուցէք եւ բարձրացուցէք, որովհետեւ ձեր փրկութիւն մօտ է»:

29 Եւ անոնց առակ մը ըսաւ. «Թղենին տեսէք եւ բոլոր ծառերը: 30 Երբ իրենց պտուղները ցուցնեն, կը տեսնէք եւ անոնցմէ կը ճանչնաք թէ ամառը մօտ է: 31 Անանկ ալ դուք երբ այս ամենը եղած տեսնէք, գիտցէք թէ Աստուծոյ արքայութիւնը մօտ է: 32 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ այս ամէնն ըլլայ: 33 Երկինք եւ երկիր պիտի անցնին, եւ իմ խօսքերս պիտի չանցնին: 34 Զգուշացէք ձեր անձերուն, կարելի է ձեր սրտերը անառակութեամբ եւ արեւցութեամբ եւ աշխարհային հոգերով ծանրանան, եւ յանկարծ ձեր վրայ

հասնի այն օրը : 35 Որովհետեւ բոլոր երկրի վրայ բնակողներուն , ամենուն վրայ թակարդի մը պէս պիտի հասնի : 36 Ապէ տեքք արթուն կեցէք . ամէն ատեն աղօթք քրէք , որպէս զի արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուիլ եւ կենալ մարդոյ Որդիին առջեւ » :

37 Եւ ցերեկը տաճարին մէջ կը սորվեցնէր , եւ գիշերները ելլելով այն լեռը կ'օթեւանէր որ Զիթենեաց կ'ըսուէր : 38 Եւ բոլոր ժողովուրդը առաւօտուն կանուխէն անոր կ'երթային տաճարը , անորմէ լսելու համար :

Ք Լ Ո Ւ Պ Ի Թ .

*1 Բաղարջակերի տօնը մօտեցաւ՝ որ Պասքա կը կոչուէր . 2 Եւ քահանայապետներն ու դպիրները կ'ուզէին թէ ի՞նչպէս զանի սպաննեն , բայց ժողովրդէն կը վախնային : 3 Սակայն Սասանան Սկարիոփտացի ըսուած Յուդային մէջ մտաւ , որ տասն երկուքի թիւէն էր : 4 Գնաց խօսք ըրաւ քահանայապետներուն , դպիրներուն եւ ժողովրդեան իշխաններուն հետ , որպէս զի զանի անոնց մատնէ : 5 Եւ ուրախացան ու խոստացան անոր դրամ տալ : 6 Եւ յանձն առաւ , պատեհ առիթ կը փնտռէր բազմութենէն մէկուսի զանի անոնց մատնելու :

7 Բաղարջակերի օրն եկաւ , որուն մէջ օրէնք կար պատէքը մորթելու : 8 Եւ Պետրոսն ու Յովաննէսը դրկեց ու կ'ըսէ . « Գացէք , մեզի պատեքը պատրաստեցէք , որպէս զի ուտենք » : 9 Եւ անոնք կ'ըսեն . « Ո՛ր կուզես որ պատրաստենք » : 10 Եւ կ'ըսէ անոնց « Ահա երբ քաղաքը մտնէք , ձեզի մարդ մը պիտի պատահի ջուրի սափոր վերուցած . գացէք անոր ետեւէն այն տունը , ուր մտնէ . 11 Եւ տանը տանտէրին ըսէք . « Վարդապետը քեզի կ'ըսէ . « Իմ վանքս ո՛ր է , որ պատեքն ուտեմ աշակերտաներուս հետ մէկտեղ » : 12 Եւ ան ձեզի պիտի ցուցնէ մեծ

1-6 . Սակարկուածիւն Յուդայի (Մատթ. ԻԶ. 14-16 : Մարկ. ԺԴ. 10-11) :

7-23. Տէրունական ընծրիք (Մատթ. ԻԶ. 27-30 : Մարկ. ԺԴ. 12-26 : Յովհ. ԺԴ. 2-30) :

վերնատուն մը զարդարուած, եւ հոն պատրաստեցէք: 13 Եւ երթալով գտան ինչպէս ըսաւ անոնց. եւ պատեքք պատրաստեցին:

14 Եւ երբ ժամը հասաւ, նստեցաւ, եւ տան երկու առաքեալներն անոր հետ: 15 Եւ կ'ըսէ անոնց. «Յանկացայ այս պատեքք ձեզի հետ ուտել, դեռ չչարչարուած»: 16 Բայց կ'ըսեմ ձեզի թէ ես պիտի չուտեմ ասորմէ, մինչեւ Աստուծոյ արքայութեանը մէջ կատարուի»: 17 Եւ բաժակն աննլով գոհացաւ ու կ'ըսէ. «Այդ առէք եւ ձեր մէջ բաժնեցէք: 18 Կ'ըսեմ ձեզի ասկէ ետքը որթի բերքէն պիտի չխմեմ, մինչեւ Աստուծոյ արքայութիւնը գայ»: 19 Եւ հացն աննլով գոհացաւ, բեկեց եւ անոնց տուաւ ու կ'ըսէ. «Այս է իմ մարմինս, որ շատերուն համար տրուած է. այս ըրէք իմ յիշատակիս համար»: 20 Նոյնպէս բաժակն ալ ընթրիքէն յետոյ առաւ ու կ'ըսէ. «Այս բաժակը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի»:

21 Բայց անաւասիկ իմ մատնչիս ձեռքը ինծի հետ սեղանին վրայ է: 22 Եւ Որդի մարդոյ, ինչպէս որ սահմանուած է, կ'երթայ, բայց վայ այն մարդուն՝ որուն ձեռքով պիտի մատնուի»: 23 Եւ անոնք սկսան իրարու մէջ փնտռել, թէ անոնցմէ ով է, որ այն բանը պիտի ընէ:

*24 Եւ անոնց մէջ հակառակութիւն եղաւ, թէ անոնցմէ ով մեծ պիտի համարուի: 25 Եւ ան կ'ըսէ անոնց. «Ազգերու թագաւորներ անոնց կը տիրեն, եւ որոնք անոնց կ'իշխեն, բարերարներ կը կոչուին: 26 Բայց դուք ոչ այնպէս. հապա ով որ ձեր մէջ մեծ է, փոքրի պէս թող ըլլայ, եւ առաջնորդը սպասաւորի պէս: 27 Ո՞վ է մեծ, նստո՞ղը թէ սպասաւորը, չէ՞ որ նստողը. բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: 28 Եւ դուք անոնք էք, որ միշտ ինծի հետ կայիք իմ փորձութիւններուս մէջ: 29 Եւ ես ձեզի կ'ուխտեմ, ինչպէս որ Հայրն ալ ուխտեց ինծի արքայութիւն, 30 թէ պիտի ուտէք եւ պիտի խմէք իմ

24-30. Այս վէճ երկիցս եղաւ արդէն, (Մատթ. ԺԸ. 1-7, Ի. 20-28) այլ այս անգամ կը կարծուի եղած ըլլալ սա պատճառէն թէ ընծրիբի ատեն ով իրենց մէջ իբր փոքր ոտներու լուացումը պիտի ընէ: Վասն զի ըստ Թալմուտի այսպիսի սովորութիւն կար, և Յիսուս ինքնին տուաւ խոնարհ հոռեան օրինակը լուանալով իւր աշակերտաց ոտները (Յովհ. ԺԳ, 1-20):

սեղանիս վրայ իմ արքայութեանս մէջ, եւ տաաներկու
աթոռ պիտի նստիք Իսրայելի տաաներկու ցեղերը դա-
տելու համար) :

*31 Եւ Տէրը կ'ըսէ. « Սիմոն, Սիմոն, ահա Սատանան
ուղեց քեզ ցորենի պէս խարբալիլ, 32 բայց ես աղաչե-
ցի քեզի համար, որպէս զի քու հաւատքդ չպակսի. եւ
դուն յետոյ դառնաս ու հաստատես եղբայրներդ »: 33 Եւ
ան կ'ըսէ անոր. « Տէր, պատրաստ եմ քեզի հետ բանդ
եւ մահուան երթալ »: 34 Եւ ան կ'ըսէ անոր. « Բեզի կ'ը-
սեմ, Պետրոս, այսօր հաւը դեռ յիսուած՝ մինչեւ երեք
անգամ զիս պիտի ուրանաս, թէ զիս չես գիտեր »:

*35 Եւ կ'ըսէ անոնց. « Երբ ձեզի զրկեցի առանց քա-
կի, մախազի եւ կօչիկներու, միթէ բանի մը կարօտ ե-
ղա՞ք »: 36 Եւ անոնք կ'ըսեն. « Եւ ոչ բանի մը ». յետոյ
կ'ըսէ. « Բայց իմա ով որ քսակ ունի, թող վերցնէ,
նոյնպէս ալ մախազ. եւ ով որ չունի, թող ծախէ իր
հագուստը եւ իրեն սուր թող գնէ »: *37 Բայց կ'ըսեմ ձե-
զի, որովհետեւ այս ալ գրուած է, պէտք է որ իմ վրայ
կատարուի թէ « Անօրէններուն հետ համարուեցաւ. զասն
զի ինչ որ ինձի համար գրուած է, կատարուած է »: *38 Եւ
անոնք կ'ըսեն. « Տէր, ահաւասիկ հոս երկու սուրեր կ'ան ».
Եւ ան կ'ըսէ անոնց. « Բաւական են »:

*39 Եւ ելլելով դնաց սովորութեանը համեմատ Ձիթե-
նեսաց լեռը. աշակերտներն ալ անոր հետ գացին: 40 Երբ
այն տեղը հասաւ, անոնց կ'ըսէ. « Աղօթքի կեցէք փոր-
ձութեան մէջ չմտնելու համար »: 41 Եւ ինք անոնցմէ
մէկ քարընկեցի չափ հեռացաւ, սղօթքի կը կենար, 42

31-34. Գողակուծիւն ուրախութեան Պետրոսի (Մատթ. ԻԶ. 31-
35; Մարկ. ԺԴ. 27-31; Յովհ. ԺԳ. 36-38):

35-36. Այս է խրատ ոչ միայն ի պաշտպանութիւն մեր անձին, այլ և
ուրիշներուն ևս, մանաւանդ նոցա, որք բարերար եղած են մեզ: Փոր-
ձանքը վտնելու համար միշտ պատրաստականութիւն ունենալու է:

37. (Ես. ԻԳ. 12):

38. Յիսուս օգնութեան պէտք չունէր, ուստի երկու սուրը բուն հո-
մարեցաւ:

39-46. Տագնուպ Յիսուսի ի Գեթսեմանի (Մատթ. ԻԶ. 36-46; Մարկ.
ԺԴ. 32-42):

Եւ կ'ըսէր . « Հայր , թէ որ կ'ուզես , այս բաժակն ինէ անցուր . բայց ոչ իմ կամքս , հապա քուկդ թող ըլլայ » : 43 Եւ երկնքէն հրեշտակ անոր երեւցաւ եւ զանի կը զօրացնէր . եւ տագնապի մէջ էր , եւ ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր : 44 Եւ անորմէ քրտինքներ կը հոսէին արեան խոշոր կաթիլներու պէս՝ կաթիլ կաթիլ գետինը թափուելով : 45 Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն եկաւ , զանոնք տրտմութենէ քունի մէջ գտաւ . 46 Եւ կ'ըսէ անոնց . « Ինչո՞ւ կը քնոնաք , ելէք , աղօթք ըլէք , որպէս զի փորձութեան մէջ չմտնէք » :

*47 Եւ երբ կը խօսէր , ահա բազմութիւն , եւ ան , որ Յուդա կը կոչուէր , եւ տասներկուքէն մէկն էր , անոնց կ'առաջնորդէր . երբ Յիսուսին մօտեցաւ , զանի համբուրեց . վասն զի այն նշանը անոնց տուած էր , թէ « Զով համբուրեմ , ան է , զանի բռնեցէք » : 48 Յիսուս անոր կ'ըսէ . « Յուդա , համբուրելո՞վ մարդոյ Որգին կը մատնես » : 49 Երբ տեսան որոնք անոր շուրջն էին , ինչ որ եղաւ , կ'ըսեն անոր . « Տէր , զանոնք սրով զարնենք » : 50 Եւ անոնմէ մէկը զարկաւ քահանայապետին ծառան , եւ մէկդի նետեց անոր աջ ականջը : 51 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Թող տուէք մինչեւ այդ տեղը » : Եւ ականջին մօտենալով՝ զայն բժշկեց : 52 Եւ անոր վրայ եկող քահանայապետներուն , եւ տաճարի իշխաններուն եւ ծերերուն կ'ըսէ . « Իբր աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բրերով : 53 Տաճարին մէջ միշտ ձեզի հետ էի , եւ ինծի ձեռք չդպցուցիք . բայց այս է ձեր ժամանակն ու խաւարի իշխանութիւնը » :

*54 Եւ զանի բռնելով բերին եւ քահանայապետին տունը մտցուցին . եւ Պետրոս անոր ետեւէն կ'երթար հեռուէն : 55 Երբ գաւիթին մէջ կրակ վառեցին ու բոլորտիքը նստեցան , Պետրոս ալ անոնց մէջ նստաւ : 56 Ազախին մը տեսաւ զանի , որ լոյսին քով կը նստէր , անոր նայեցաւ ու կ'ըսէ . « Եւ աս անոնց հետ էր , որոնք ա-

47-53. Զերբակալուծիւն Յիսուսի (Մատթ. ԻԶ. 47-55: Մարկ ԺԴ. 43-52):

54-62. Ուրացուծիւն Պետրոսի (Մատթ. ԻԶ. 69-75 Մարկ. ԺԴ. 66-72):

նոր հետ էին » : 57 Իսկ Պետրոս ուրացաւ ու կ'ըսէ . « Զանի չեմ ճանչնար , սվ կին » : 58 Եւ քիչ մը յետոյ ուրիշ մը զանի տեսաւ ու կ'ըսէ . « Եւ դուն անոնցմէ ես » . եւ Պետրոս կ'ըսէ . « Ով մարդ , անոնցմէ չեմ » : 59 Եւ ժամ մը անցնելէն յետոյ , ուրիշ մը կը վիճէր եւ կ'ըսէր . « Յիրաւի աս ալ անոր հետ էր , վասն զի Գալիլեացի է » : 60 Պետրոս կ'ըսէ , « Ով մարդ , չեմ գիտեր , ինչ կը խօսիս դուն » . եւ իսկոյն , երբ ան այս կը խօսէր , հաւը խօսեցաւ : 61 Տէրը դարձաւ եւ Պետրոսին նայեցաւ . եւ Պետրոս Տէրոջը խօսքը յիշեց որ անոր ըսաւ . « Դեռ հաւը չխօսած , երեք անգամ պիտի ուրանաս զիս թէ չեա գիտեր » : 62 Եւ դուրս ելլելով՝ սաստիկ լացաւ :

*63 Եւ այն մարդիկներ , որ զանի կը պահէին , կը ծաղրէին զանի եւ կը զարնէին : 64 Անոր երեսը կը ծածկէին ու կը տանջէին , եւ անոր կը հարցնէին ու կ'ըսէին . « Մարգարէացի , ո՞վ է որ քեզի զարկաւ » : 65 Եւ ուրիշ շատ բան հայհոյելով անոր կը խօսէին :

66 Եւ կրբ առաւօտ եղաւ , ժողովրդեան ծերակոյտը քահանայապետներն ու զպիրները ժողովուեցան , եւ հանեցին , զանի իրենց ատեանը բերին ու կ'ըսեն . « Թէ որ դուն ես Քրիստոսը , ըսէ՛ մեզի » : 67 կ'ըսէ անոնց . « Թէ որ ըսեմ ձեզի , սակայն չէք հաւատար . 68 Թէ որ ձեզի բան մը հարցնեմ , պատասխան չէք տար կամ չէք արձրկեր : 69 Բայց ասկէ ետքը Որդի մարդոյ Աստուծոյ զօրութեանը աջ կողմը պիտի նստի » : 70 Եւ ամէնքը կ'ըսեն . « Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես » . եւ ան կ'ըսէ անոնց . « Դուք կ'ըսէք թէ ես եմ » : 71 Եւ անոնք կ'ըսեն . « Ա՛լ մեզի վկայութեան ի՞նչ պէտք կայ . որովհետեւ մենք մեզէն ատոր բերնէն լսեցինք » :

63-71. Գանակոծումն Յիսուսի և դատապարտութիւն (Մատթ. ԻԶ. 56-68; Մարկ. ԺԴ. 53-65):

ՔԼՈՒԾ ԻՊ.

¹ Եւ անոնց բոլոր բազմութիւնը ելլելով, զանի Պիղատոսին բերին: ² Եւ սկսան անոր վրայով չարախօսութիւն ընել եւ ըսել, « Զասի գտանք որ մեր ազգը կը մոլորեցնէր եւ կ'արգիլէր կայսրին հարկ տալէ, եւ իր անձին վրայով կ'ըսէր թէ « Թագաւոր Քրիստոսն է »: ³ Իսկ Պիղատոս հարցուց անոր եւ կ'ըսէ. « Հրէից թագաւորը դո՞ւն ես ». ան պատասխան տուաւ ու կ'ըսէ. « Դուն ըսիր »: ⁴ Պիղատոս քահանայապետներուն եւ ժողովուրդներուն կ'ըսէ. « Այս մարդուն վրայ յանցանք չեմ գտներ »: ⁵ Եւ անոնք կը պնդէին ու կ'ըսէին թէ « Ժողովուրդները կը խռովէ, բոլոր Հրէաստանի մէջ կը սորվեցնէ Գալիլեայէն սկսելով մինչեւ հոս »: ⁶ Իսկ Պիղատոս երբ լսեց Գալիլեայի վրայով, հարցուց թէ այն մարդը Գալիլեացի՞ է: ⁷ Եւ երբ գիտցաւ թէ Հերովդէսի իշխանութենէն է, զանի Հերովդէսի տանել տուաւ, որովհետեւ ան ալ այն օրերը Երուսաղեմի մէջ էր:

⁸ Եւ Հերովդէս երբ Յիսուսը տեսաւ, շատ ուրախ եղաւ, որովհետեւ շատ ժամանակէ ի վեր կը փափաքէր զանի տեսնել. շատ անգամ անոր վրայով կը լսէր, եւ կ'սպասէր անորմէ եղած հրաշք մը տեսնել: ⁹ Անոր շատ խօսքերով կը հարցնէր. եւ ան պատասխան մը չտուաւ: ¹⁰ Քահանայապետներն ու դպիրներն կը կենային եւ ալ աւելի սաստիկ կ'ամբաստանէին զանի: ¹¹ Եւ Հերովդէս զանի արհամարհեց իր զօրականներուն հետ մէկտեղ, եւ ծաղրելով անոր վրայ ճերմակ հագուստ ձգեց, եւ նորէն Պիղատոսի տանել տուաւ: ¹² Եւ բարեկամ եղան Պիղատոս ու Հերովդէս այն օրը, որովհետեւ առաջ իրարու թշնամի էին:

¹³ Պիղատոս կանչեց քահանայապետներն եւ իշխաններն ու ժողովուրդը, ¹⁴ եւ կ'ըսէ անոնց. « Բերիք ինձի եւ յանձնեցիք այս մարդը իբր ժողովրդեան մոլորեցուցիչը:

1-28. Յիսուս կը տարուի առ Պիղատոս և առ Հերովդէս եւ կը հարցափորձուի (Մատթ. Իէ. 1.31; Մարկ. ԺԵ. 1-16; Յովհ. ԺԸ. 28-ժԹ. 3):

եւ ահա ձեր առջեւ դատեցի, եւ աս մարդուն վրայ յանցանք չգտայ, որուն համար դուք կ'ամբաստանէք: 15 Ոչ ալ Հերովդէս, վասն զի զանի անոր տանել տուի. 16 զանի պիտի խրատեմ ու արձկեմ»: 17 Որովհետեւ հարկ էր տօնի ատեն մէկն անոնց արձկել: 18 Եւ անոնք բոլոր բազմութեամբ կը պոռային ու կ'ըսէին. «Վերցուր զանի եւ մեզի Բարաբբան արձկէ», 19 որ քաղաքին մէջ եղած խռովութեան մը եւ սպանութեան համար մտած էր բանտ: 20 Նորէն Պիղատոս սկսաւ խօսիլ, վասն զի կ'ուզէր զանի արձկել: 21 Եւ անոնք նորէն կը պոռային ու կ'ըսէին. «Զանի խաչ հանէ»: 22 Եւ ան երրորդ անգամ կ'ըսէ անոնց. «Աս ի՞նչ չար բան ըրաւ. ասոր վրայ մահուան արժանի յանցանք մը չգտայ. խրատեմ զանի եւ արձկեմ»: 23 Եւ անոնք մեծ ձայնով կ'ստիպէին եւ զանի կ'ուզէին խաչ հանել, եւ անոնց ու քահանայապետներուն ձայները կը զօրանային: 24 Եւ Պիղատոս հաւանեցաւ կատարել անոնց խնդիրը, 25 Արձկեց անոնց Բարաբբան, որ խռովութեան եւ սպանութեան համար բանա մտած էր, որ եւ կը խնդրէին, եւ Յիսուսը անոնց կամբքին յանձնեց:

26 Երբ զանի առին, գացին, Կիւրենացի Սիմօն մէկը բռնեցին, որ արտէն կուգար. անոր վրայ զրին խաչը Յիսուսին ետեւէն բերելու համար. 27 եւ անոր ետեւէն ժողովրդեան բազմութիւնը, կիներու՝ որոնք կ'ողբային եւ կուլային զանի: 28 Յիսուս գարձաւ ու կ'ըսէ անոնց. «Երուսաղեմի աղջիկներ, իմ վրաս մի՛ լայք, հապա լացէք ձեր անձերուն եւ ձեր որդիներուն վրայ: 29 Որովհետեւ օրեր պիտի գան, երբ պիտի ըսեն թէ «Երանի՛ մահուաներուն եւ որովայններուն, որոնք չծնան, եւ ծիծերուն, որոնք կաթ չտուին»: 30 Այն ատեն պիտի սկսին ըսել լեռներուն թէ «Մեր վրայ ինկէք». եւ բլուրներուն՝ թէ «Մեզ ծածկեցէք»: 31 Որովհետեւ թէ որ թաց փայտին այս կ'ընեն, չորին ի՞նչ պիտի ըլլայ»:

*32 Ուրիշ երկու չարագործներ ալ բերին՝ անոր հետ

28-31. Բան առ բան կատարուեցաւ այս մարգարէութիւն Յիսուս մի կործանման ատեն:

32-44. Չարչարանք Յիսուսի եւ խաչելութիւն (Մատթ. Իէ. 32 Մարկ. ԺԵ. 16-32: Յովհ. ԺԹ. 17 24):

սպաննելու : 33 Երբ Գազաթ կոչուած տեղը գացին , հոն
զանի խաչ հանեցին . եւ չարագործները՝ մէկը աջ կողմը
եւ միւսը ձախ կողմը խաչեցին : 34 Եւ Յիսուս կ'ըսէ .
« Հայր , ատոնց ներէ , որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ը-
նեն » : 35 Եւ անոր հագուստը բաժնելով վիճակ ձգեցին :
Եւ ժողովուրդը նայելով կը կենար , իշխանները անոնց
հետ մէկտեղ զանի կ'անարգէին եւ կ'ըսէին . « Ուրիշներն
ազատեց . իր անձն ալ թող ազատէ , թէ որ այդ է Քրիս-
տոսը , Աստուծոյ ընտրեալ Որդին » : 36 Զինուորներն ալ
զանի կը ծաղրէին , առջեւը գալով անոր քաջախ կը մո-
տեցնէին , 37 եւ կ'ըսէին « Թէ որ Հրէից թագաւորը դուն
ես , քու անձդ ազատէ » : 38 Եւ անոր վրայ զիր գրուած
էր Յունարէն , Իաղմատերէն եւ Եբրայեցերէն գրով թէ
« Աս է Հրեաներուն թագաւորը » :

39 Իսկ կախուած չարագործներէն մէկն անոր կը հայ-
հոյէր եւ կ'ըսէր . « Իուն Քրիստոսը չե՞ս , քու անձդ փրկէ
եւ մեզ ալ » : *40 Պատասխան տուաւ ընկերը յանդիմանե-
լով զանի ու կ'ըսէ . « Իուն Աստուծոմէն չե՞ս վախնար ,
վասն զի միեւնոյն դատապարտութեան մէջ կաս : 41 Եւ
մենք յիրաւի , վասն զի ինչ որ գործեցինք , արժանաւոր
հատուցումը կ'առնունք . եւ աս վնասակար բան մը չը-
րաւ » : 42 Եւ Յիսուսին կ'ըսէ . « Յիշէ զիս , Տէր , երբ քու
արքայութեամբ գաս » : 43 Եւ Յիսուս անոր կ'ըսէ . « Ծըշ-
մարիտ կ'ըսեմ քեզի , այսօր դրախտին մէջ ինձի հետ ես » :

*44 Եւ երբ վեցերորդ ժամ էր , խաւար եղաւ բոլոր
աշխարհի վրայ մինչեւ իններորդ ժամ . արեւը խաւարե-
ցաւ : 45 Եւ տաճարին վարագոյրը մէջտեղէն պատռեցաւ :
46 Եւ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու կ'ըսէ . « Հա՛յր ,
քու ձեռքդ իմ հոգիս կ'աւանդեմ » . այս երբ ըսաւ , հո-
գին տուաւ :

47 Եւ հարիւրապետը տեսնելով ինչ որ եղաւ , զԱստ-
ուած փառաւորեց ու կ'ըսէ . « Արդարեւ այս մարդն ար-

40 43. Մինչ Յիսուսի աշակերտք կը զայնակղին. անա այս աւագակ
կը հուատայ եւ իսկոյն կը փրկուի : Աւաշիւր սա կ'ըլլայ արքայութեան
մէջ մտնող Քրիստոսի հետ :

44 49. Մահ Յիսուսի (Մատթ. Իէ. 45-56 : Մարկ. ԺԵ. 33-41 : Յովհ.
ԺԹ. 30-37) :

դար էր : 48 Եւ բոլոր ժողովուրդն որ եկած էին , կը տեսնէին այն տեսիլքն ու գործը , իրենց կուրծքին կը զարնէին ու կը դառնային : 49 Եւ անոր բոլոր ծանօթները հետուն կը կենային , եւ կիներ՝ որոնք Գալիլեայէն անոր ետեւէն եկած էին , կը տեսնէին այն բաները :

*50 Եւ ահա Յովսէփ անուն մարդ մը , որ նախարար էր , բարեգործ եւ արդար մարդ . 51 Սա միաբանած չէր անոնց խորհուրդներուն եւ գործերուն , Հրէից Արեմաթիա քաղաքէն , որ եւ ինքն ալ Աստուծոյ արքայութեանը կ'ակնկալէր : 52 Աս Պիղատոսին մօտենալով Յիսուսի մարմինը խնդրեց : 53 Եւ զանի իջնցնելով պատառակալով պատեց , եւ կռածոյ գերեզմանի մէջ դրաւ , ուր բնաւ մէկը դրուած չէր : 54 Եւ օրը ուրբաթ էր ու շաբաթ կը լուսնար : 55 Եւ անոր ետեւէն կիներ կ'երթային , որոնք Գալիլեայէն անոր ետեւէն եկած էին . գերեզմանը տեսան , եւ ինչպէս դրուեցաւ անոր մարմինը : 56 Դարձան ու պատրաստեցին խուկեր ու իւղեր , եւ շաբաթ օրը հանդարտեցան օրէնքին համար :

ՔԼԱՌԻՍ ԻԳ.

*1 Բայց միաշարաթի առաւօտուն շատ կանուխէն գերեզմանը եկան . խուկերը բերին , որ պատրաստեցին , եւ անոնց հետ ուրիշ կիներ . 2 Եւ քարը գլորեցուած գտան այն գերեզմանէն : 3 Եւ ներս մտնելով Տէր Յիսուսի մարմինը չգտան : 4 Եւ երբ անոնք հիացած էին այս բանին համար , ահա լուսաւոր հագուստներով երկու մարդեր անոնց հասան : 5 Եւ երբ վախցան ու իրենց երեսները դէպ ի գետին խոնարհեցուցին , կ'ըէ անոնց . « Ի՞նչու ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ . 6 Հոս չէ , հպա յարութիւն առաւ . յիշեցէք , ինչպէս խօսեցաւ ձեզի ,

50-56. Քաղուսն Յիսուսի (Մատթ. Իէ. 57-69 : Մարկ. ԺԵ. 42-47 Յովհ. ԺԹ. 38-42) :

1-12. Յարութեան աւետիս հրեշտակին (Մատթ. ԻԸ. 1-8 : Մարկ. ԺԶ 1-8) :

երբ ան Գալիլեա էր . 7 Եւ կ'ըսէր թէ պէտք է մարդոյ Որդւոյն մատնուիլ մեզաւոր մարդիկներուն ձեռքը , եւ խաչելիլ եւ երրորդ օրը յարութիւն առնուլ : 8 Եւ անոր խօսքերը յիշեցին : 9 Եւ դարձան , եւ այս պատմեցին տասն եւ մէկին եւ ուրիշ ամենուն : 10 Եւ անոնց հետ էին Մագդաղենացի Մարիամը , Յովաննան ու Յակոբի Մարիամը եւ ուրիշներ , որոնք առաքնալներուն այս պատմեցին : 11 Եւ անոնց առջեւ շաղակրատական խօսքեր երեւցան , եւ անոնց չէին հաւատար : 12 Բայց Պետրոս ելլելով գերեզմանը վազեց , եւ նայելով կը տեսնէ միայն կտաւները , որոնք կային , եւ գնաց , ինքնին զարմանալով թէ ինչ եղաւ :

*13 Եւ ահա անոնցմէ երկուքը կ'երթային նոյն օրը գիւղ մը , որ Երուսաղեմէն հեռու էր վախճուն ասպարէզ , եւ անոր անունը էմմատուս էր : 14 Եւ անոնք իրարու հետ կը խօսէին բոլոր անցած դէպքերուն համար : 15 Եւ երբ անոնք կը խօսէին ու կը վիճէին , Յիսուս ինքն ալ մօտեցաւ ու անոնց հետ կ'երթար : 16 Եւ անոնց աչքերը բռնուած էին զանի չճանչնալու համար : 17 Եւ կ'ըսէ անոնց . « Ի՞նչ են այդ խօսքերը որոնց համար իրարու հետ կը վիճիք , երբ կ'երթաք ու տրտմած էք » : 18 « Անոնցմէ մէկը պատասխան տուաւ , որուն անունը Կղէովպաս էր , եւ կ'ըսէ անոր . « Ի՞նչ մինակ Երուսաղեմի մէջ կը գտնուիս , որ չես գիտնար անոր մէջ այս օրերն ինչ գործուեցաւ » : 19 Եւ կ'ըսէ անոնց . « Ի՞նչ » . եւ անոնք կ'ըսեն . « Նազովրեցի Յիսուսին համար , ան որ Աստուծոյ եւ բոլոր ժողովրդեան առջեւ գործքով ու խօսքով զօրաւոր մարգարէ էր : 20 Ի՞նչպէս զանի քահանայապետներն ու իշխանները մահուան դատաստանի մատնեցին եւ զանի խաչ հանեցին : 21 Մենք կ'ակնկալէինք թէ ան է որ Իսրայէլը պիտի փրկէ . բայց այս ամենուն հետ մէկտեղ այս երրորդ օրն է , յորմէ հետէ այն բանը գործուեցաւ . 22 Հապա մննէ մէկ քանի կիներ մեզ զարմացուցին , որոնք առաւօտուն կանուխ գերեզման գացին . 23 Եւ անոր մարմինը չգտան . եկան ու կ'ըսեն թէ հրեշտակներու տեսիլ ալ տեսան , որոնք անոր վրայով կ'ը-

սէին թէ ողջ է : 24 Եւ մենէ մէկ քանիներ զացին գերեզմանը , եւ այնպէս գտան , ինչպէս այն կիներն ալ ըսին . բայց զանի չտեսան : 25 Եւ ան կ'ըսէ անոնց . « Ո՛վ անմիտներ եւ թուլասիրտներ հաւատալու համար այն ամենուն , որոնք մարգարէները խօսեցան : 26 Չէ՞ որ նոյնը պէտք էր , Գրիստոսի չարչարուիլ եւ իր փառքը մտնել » : 27 Եւ սկսելով Մովսէսէն ու բոլոր մարգարէներէն , անոնց կը մեկնէր ինչ որ անոր վրայով գրուած էր գիրքերուն մէջ : 28 Երբ մօտեցան այն գիւղը , ուր կ'երթային , եւ ան կը պատճառէր աւելի հեռու տեղ երթալ : 29 Եւ զանի բռնադատեցին ու կ'ըսեն . « Մեր քովը օթեւանէ՛ . որովհետեւ երկոյ է եւ օրը տարածամ » : Եւ մտաւ հոն օթեւանիլ անոնց քով : 30 Եւ երբ անոնց հետ ան նստեցաւ , հաց առնլով օրհնեց , կտրեց եւ անոնց տուաւ : 31 Եւ անոնց աչքերը բացուեցան ու զանի ճանչցան . եւ ան անոնցմէ աներեւոյթ եղաւ : 32 Եւ իրարու կ'ըսեն . « Չէ՞ որ մեր սրտեր եւ մեր մէջ կը ճմլուէին , երբ մեզի հետ ճամբան կը խօսէր եւ ի՞նչպէս մեզի գրքերը կը մեկնէր » :

33 Եւ շուտ մը ելլելով Երուսաղէմ դարձան , եւ տասն մէկըր գտան ժողվուած եւ որոնք անոնց հետ էին . 34 Եւ կ'ըսեն թէ « Արդարեւ Տէրն յարութիւն առաւ եւ Սիմոնի երեւցաւ » : *35 Եւ անոնք կը պատմէին ինչ որ ճամբան եղաւ եւ թէ ինչպէս ճանչցուեցաւ անոնց , հացը կտրած ատեն :

36 Երբ զայն կը խօսէին , ինքն իսկ Յիսուս անոնց մէջտեղը կեցաւ եւ կ'ըսէ անոնց . « Սազաղութիւն ձեզի , ես եմ , մի՛ վախնաք » : 37 Եւ վախնալով կը վախնային , եւ կը կարծէին ոգի մը տեսնել : 38 Եւ կ'ըսէ անոնց . « Ի՞նչու խռոված էք եւ ի՞նչու ձեր սրտերուն մէջ խորհուրդներ կ'ելլեն : 39 Իմ ձեռքերս եւ ոտքերս տեսէք , որովհետեւ ես նոյն եմ . չօշափեցէք զիս եւ տեսէք , որովհետեւ ոգին մարմին եւ ոսկորներ չունի , ինչպէս զիս տեսնէք որ ունիմ » : 40 Եւ այս ըսելով ցուցուց անո ձեռքերն ու ոտքերը :

36.49. Յիսուս կ'երեւի իւր աշակերտաց (Մարկ. ԺԶ. 14-18; Յ. 19-25):

41 Եւ երբ դեռ չէին հաւատար իրենց ուրախութենէն ու զարմացած էին, կ'ըսէ անոնց. « Հոս կեբրակուր մը ունի՞ք »: 42 Եւ անոնք տուին անոր խորոված ձուկի կտոր եւ մեղուի խորիսխ: 43 Եւ առաւ ու անոնց առջեւ կերաւ, եւ մնացորդներն անոնց տուաւ: 44 Եւ կ'ըսէ անոնց. « Այս խօսքերն են, որ ձեզի խօսեցայ, երբ ձեզի հետ էի թէ «Պէտք է որ կատարուին Մովսէսի օրէնքին եւ մարգարէներուն ու սաղմոսին մէջ ինձ համար գրուածները»: 45 Այն ատեն անոնց միտքը բացաւ գրքերը հասկնալու համար: 46 Եւ անոնց կ'ըսէ թէ « Այսպէս պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, եւ մեռելներէն յարութիւն առնուլ երրորդ օրը. 47 եւ անոր անունով քարոզել ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն բոլոր ազգերու մէջ, Երուսաղեմէն սկսելով: 48 Եւ դուք էք ասոնց վկայները: 49 Եւ ահա ես ձեզի կը դրկեմ իմ Հօրս աւետիսը. եւ դուք նստեցէք այս Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչեւ վերէն զօրութիւն առնուք »:

50 Չանոնք մինչեւ Բեթանիա հանեց, եւ իր ձեռքերը վերցնելով զանոնք օրհնեց: 51 Եւ երբ ան զանոնք օրհնեց, անոնցմէ զատուեցաւ եւ երկինք կ'ելլէր: 52 Եւ անոնք անոր երկրպագելով մեծ ուրախութեամբ Երուսաղէմ դարձան: 53 Եւ միշտ տաճարին մէջ էին, կը գովէին ու կ'օրհնէին զԱստուած:

50-53. Համբարձումն Քրիստոսի (Մարկ. ԺԶ. 19-20):

ԱՒԵՏԱՐԱՆ

Ը Ս Տ Յ Ո Վ Շ Ա Ն Ն Ո Ւ



Ը Ս Տ

ՅՈՎՀԱՆՆՈՒ



ՔԼՈՒԹ Ա.

^{*1} Սկիզբէն կար Բանը , եւ Բանն էր առ Աստուած , եւ Բանն Աստուած էր : ^{*2} Սկիզբէն ան առ Աստուած էր : ^{*3} Ամէն բան անով եղաւ , եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ : ⁴ Անով կեանք կար եւ կեանքը մարդիկներուն լոյսն էր : ⁵ Եւ այն լոյսը խաւարին մէջ կը լուսաւորէ , եւ խաւարը զանի չհասկցաւ :

1.5. Չկայ Աստուածաշունչ Սուրբ Գրքին մէջ սկսուած մը այնքան վսեմ , այնքան սքանչելի , այնքան խորախորհուրդ , որպիսի են սոյն տողերը : Աւետարանագիրն արժուի պէս կը խոյանայ ի վեր , կը ճախարէ սրտ , եւ , կը պատռէ երկինքը , ահասարսափ կը նայի Աստուծոյ խորանին , ը նշմարէ լոյս , աստուածային լոյս կենաց եւ բազկատարած ծնրադրելով ը դուանի . ըի սկզբանէ էր Բանն : Բայց Աւետարանագիրն անդ շատ դեգերիր , հոն , երկնային բնագուլաւորն մէջ , նս ապա թեւատարած դէպ ի երկիր կը խոնարհի , կը հծծէ յունկն յուսահատ մարդկութեան . Եւ Բանն հարմին եղեւ :

*6 Աստուծմէ զրկուած մարդ մը եղաւ, որուն անուէնը Յովհաննէս էր: 7 Աս եկաւ վկայութեան որ Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքն անով հաւատան: 8 Ան չէր այն Լոյսը. բայց եկաւ որ վկայէ Լոյսին համար: *9 Ճշմարիտ Լոյսը ան էր որ կը լուսաւորէ ամէն մարդ որ

էր. — Ի սկիզբն Մատթէոսեան Աւետարանի երկարօրէն ծանօթագրուած է (յերես 1-5), որոյ համառօտ բովանդակութիւնն այս է. առաջին մարդն Աստուած ըլլալ ուզեց, ուստի պատժուեցաւ ըստ աստուածային արգարութեան, իսկ փրկութեան աւետիսն առաւ անդէն ըստ աստուածային գթութեան:

Ի՞նչ էր այդ աւետիս. — Մտրդուն, որ Աստուած ըլլալ ուզելուն համար պատժուեցաւ, Աստուած մտրդուն խոստացաւ մարդ ըլլալ Աստուած ընելու համար մտրդը, այսինքն մտրդուն յաւիտեանական կեանք ու փառք տալու շնորհն ընելու Ուրեմն նա որ Բանն էր ի յաւիտենից, նա որ ի պատկեր իւր ստեղծեց զմտրդն, նա խոնարհեցաւ եւ զգեցաւ զմտրդն չի նմանութիւն մարմնոյ մեղաց: (Հւովմ. Ը. 3): Նա խոնարհեցաւ աստուածութիւնը մտրդուն հաղորդ ընելու համար եւ Եպիս Բարձրացաւ մտրդն աստուածութեան հաղորդ ընելու համար. ո՞վ սրանչելի խորհուրդ մեծ:

Թէ կայ Բանն Աստուած, չէր այս անծանօթ ի հնումն, Թէ Հին Կտակարանի եւ Թէ հրէական Թարկումներուն մէջ կայ անտես եւ տեսանելի Աստուծոյ մը, անյայտ եւ յայտնուած Ստուծոյ մը խօսքը, եւ վերջինը ըստուած է Բան, Իմաստութիւն, կամ Որդի Աստուծոյ: Մինչեւ իսկ հեթանոսական դաւանութեանց մէջ բառը *λόγος* (Լոյս) կը նշանակէ Բան, եւ Գնոստիկեանք կը պնդէին Թէ Կեանք եւ Լոյս էին խոնարհագոյն աստուածութիւններ, զերագոյն աստուածութենէ մը բխուած: Աւետարանագիրն հաստատելու համար Թէ այդ ամէն դաւանութիւններն էին ստուերք ՃՋՇՄԱՐՏԻՆԵ, եւ Թէ Կեանք, Լոյս, Ծնորհք, Ճշմարտութիւն եւ այլն, էին միացած յանձին ճշմարիտ Բանին, բուն իսկ էութիւն մը աստուածային, որ էր Աստուած յԱստուծոյ: Եւ Թէ ինչպէս մարդոյ խորհուրդը կը յայտնուի բանիւ, Աստուծոյ խորհուրդը եւս կը յայտնուի եւ յայտնուած են Ը նիւ. որով տիեզերքս եւ մարդ ստեղծուեցան,

3. Մտրդ կեանք ունենալով ունի իւր մէջ լոյս, Բանին լոյսը, մտրդ յին միտքն որ է լոյս, մեզ կ'առաջնորդէ ի բարին, որուն երբ չանսայ մի քօկամակութեամբ կամ ապստամբութեամբ, զի է ազատ սրբարած, յի կամ ճշմարտի Թէ չխուար ոչ եղեւ նմա հաստ: :

6-8. Վկայութիւն Յովհաննէսի (Մատթ. Գ. 1-12; Դուկ. Գ 1-18);

աշխարհ գալու է: 10 Աշխարհի մէջ էր, եւ աշխարհ ա-
նով եղաւ, ու աշխարհ զանի չճանչցաւ: 11 Իրեններուն
եկաւ, եւ իրենները զանի չընդունեցին: 12 Իսկ որոնք
զանի ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստու-
ծոյ որդիներ ըլլալու, որոնք անոր անուանը հաւատացին:
*13 Որոնք արիւնէ եւ մարմնի կամքէ եւ մարդու կամքէ,
չձան, հապա Աստուծոյ ծնան: *14 Եւ Բանը մարմին ե-
ղաւ ու մեր մէջ բնակեցաւ. եւ անոր փառքը տեսանք,
Հօրմէն իբր Միածին ունեցած փառքը, շնորհքով եւ ճշ-
մարտութեամբ լեցուն:

*15 Յովհաննէս անոր համար վկայեց, ազաղակեց ու
կ'ըսէ. «Աս է, որուն համար կ'ըսէի. «Ան որ իմ ետեւէս
պիտի գայ, ինէ առաջ եղաւ, որովհետեւ ինէ առաջ էր»:
16 Եւ մենք ամենքս անոր կատարելութենէն շնորհքի վը-
րայ շնորհք առինք: *17 Որովհետեւ օրէնքը Մովսիսի ձեռ-
քով տրուեցաւ, շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսուս
Քրիստոսի ձեռքով եղան:

*18 Երբէք մէկը զԱստուած չտեսաւ, միայն միածին

9-12. Նա՛ Բանն աշխարհի լուսաւորութեան շնորհն ընել հանցու
եւ թէեւ իրեններն՝ Իսրայել սիրեց, այլ նոքա չընդունեցին իւր լոյսը,
որով ուրիշներն որք ընդունեցին լոյսն, Աստուծոյ որդի լինելու կոչումն
ունեցան, յաւիտենական կեանք ու փառք ունեցան, ընդունելով Սուրբ-
Հոգին (Դործ. Ժ. 44: ԺԱ. 15-17):

13. Մարդկեղէն արեամբ կամ սերնդեամբ չէ այս որդիութիւն, այլ
ըստ հուատոց որ ի Յիսուս Քրիստոս:

14. Բանն մարմին առնելով բնակեցաւ ի մեզ, եւ նորա փառքն իւր
աշակերտներն տեսան լիովին: Նա էր միածին որդի Հօր, լի շնորհք եւ
ճշմարտութեամբ. միակ, վանձի չէր նման մեզ որդի Աստուծոյ, ինքն էր
ԲՈՒՆ ԻՍՎ որդի, մերն էր շնորհ, իւր իսկ ձեռամբ եւ եթ տրուած:

15-16. Յովհաննէսի վկայութիւնը յիշուելէ յետոյ, կը յայտնուի Բանին
առատազեղ հանգամանքը, որով մարդկութիւնն ընդունեցաւ շնորհք շնորհքի
վրայ, այսքան անհուն եղաւ Բանին սէրն առ մեզ:

17. Մովսէս օրէնք տուաւ, բայց Քրիստոս շնորհք եւ ճշմարտութիւն:
Մովսէս կը հրամայէր չընել ո եւ է մեղք, Քրիստոս կ'ուսուցանէր թէ ին-
չու մեղք ընելու չէ: Մովսէս կը հրամայէր պատժել մեղաւորը, Քրիստոս
կը շնորհէր մեղաւորին յապաշխարութիւն յորդորելով. այս որպիսի մեծ
տարբերութիւն ընդ մէջ Օրէնքին եւ Աւետարանին:

Որդին որ Հօրը ծոցին մէջ է, ան պատմեց: *19 Եւ Յովհաննէսի վկայութիւնն այս է, երբ Հրեաները անոր զրկեցին Երուսաղեմէն քահանաներ եւ Ղեւտացիներ, որոնք հարցուցին անոր թէ «Դուն ո՞վ ես»: 20 Սոստովանեցաւ եւ չուրացաւ. խոստովանեցաւ թէ «Ես Քրիստոսը չեմ»: *21 Եւ անոր հարցուցին. «Հապա դուն ո՞վ ես, Եղիա՞ն ես». եւ կ'ըսէ. «Չեմ». «Իսկ դուն մարգարէ՞ն ես». պատասխան տուաւ թէ «Ոչ»: 22 «Ուրեմն ըսէ մեզի. Դուն ո՞վ ես, որ պատասխան տանինք, որոնք որ մեզի զրկեցին. քեզի համար ի՞նչ կ'ըսես»: 23 Կ'ըսէ. «Ես խօսքի ձայնն եմ անապատի մէջ. Տէրոջ ձամբաները ուղիղ ըրէք, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ»: 24 Եւ որոնք զրկուեցան, Փարիսեցիներէն էին: 25 Հարցուցին անոր ու կ'ըսեն. «Ուրեմն ի՞նչու կը մկրտես, թէ որ դուն Քրիստոսը չես, եւ Եղիան ալ չես, եւ ոչ ալ մարգարէն»: *26 Պատասխան տուաւ անոնց Յովհաննէս ու կ'ըսէ. «Ես ձեզ ջրով կը մկրտեմ, ձեր մէջ կայ մէկը, որ դուք չէք գիտեր, 27 որ իմ ետեւէս պիտի գայ, որուն ես արժանի չեմ անոր կօշիկներուն կապերը քակելու»: *28 Այս եղաւ Յորդանանու անդիի կողմը Բեթարբայի մէջ, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր:

*29 Յաջորդ օրը Յիսուս կը տեսնէ որ անոր կուգար ու կ'ըսէ. «Ահա Աստուծոյ Գառնը՝ որ աշխարհի մեղքե-

18. Եւ ոչ իսկ Մովսէս (Ելք. 17. 20): Աստուծոյ վրայ ճվ կարող է ունենալ լիակատար գիտութիւն. — Ան միայն, որ էր յաւիտենից անտի ի ծոց Հօր (Մատթ ժԱ. 27): Ո՞չ ապաքէն աշխարհս չճանչցաւ զԱստուած իւր իմաստութեամբն (Ա. Կորնթ. Ա. 21):

19-20. Հրեայք կը կարծէին թէ Եղիա երկնքէն իջնելով Մեսիայի գալուստը պիտի աւետէ, եւ թէ Մովսէսէ յիշուած մարգարէն պիտի գայ (Բ. Օր. ժԸ. 15): Նոքա Մեսիայէն տարբեր մէկու մը համար կը մեկնէին Մովսէսի այդ մարգարէութիւնը:

21-25. (Մատթ. Գ. 3-13):

26-27. (Մատթ. Գ. 13-17: Ղուկ. Գ. 21-23: Մարկ. Ա. 9-11):

28. Բեթարբայի տեղն անյայտ է այժմ:

29-34. Եսայի գուշակած էր արդէն «Գառն ի սպանդ վարեալ» (Ծ Գառներ կը զոհուէին վասն քառուժեան մեղաց (Ղեւտ. Գ. 32): Քրի՛ պիտի զոհուէր վասն քառուժեան մեղաց բովանդակ մարդկութեան:

րը կը վերցնէ : 30 Աս է այն մարդն , որուն համար ես կ'ըսէի , իմ ետեւէս կուգայ , որ ինէ առաջ եղաւ , որովհետեւ ինէ առաջ էր : 31 Եւ ես զանի չէի գիտեր , հապա որպէս զի Իսրայելի յայտնի ըլլայ , անոր համար ես եկայ ջրով մկրտելու » : 32 Յովհաննէս վկայեց ու կ'ըսէ թէ « կը տեսնէի Հոգին , որ ազաւնիի պէս կ'իջնէր երկինքէն , եւ անոր վրայ կը հանգչէր : 33 Եւ ես զանի չէի գիտեր , հապա ան որ զիս զրկեց ջրով մկրտելու , ան ինձի ըսաւ . « Որուն վրայ որ Հոգին կը տեսնես , որ անոր վրայ հանգչի ու իջնէ , ան է որ Սուրբ Հոգով կը մկրտէ » : 34 Եւ ես տեսայ եւ վկայեցի թէ « Աս է Աստուծոյ Որդին » :

*35 Յաջորդ օրն Յովհաննէս կը կենար , եւ անոր աշակերտներէն երկուքը : 36 Եւ Յիսուսին նայելով որ կ'երթար , կ'ըսէ . « Ահա Աստուծոյ Գառնը » : 37 Հսեցին անորմէ երկու աշակերտներն որ կը խօսէր , եւ Յիսուսի ետեւէն գացին : 38 Երբ Յիսուս դարձաւ ու զանոնք տեսաւ որ անոր ետեւէն կ'երթային , կ'ըսէ անոնց . « Ի՞նչ կ'ուզէք » . անոնք կ'ըսեն . « Ռարբի , որ թարգմանուելով կ'ըսուի վարդապետ , քու օթեւանդ ո՞ւր է » : 39 Կ'ըսէ անոնց . « Եկէք եւ տեսէք » . եկան ու տեսան ուր անոր օթեւանն էր , այն օրը անոր քով կեցան , որովհետեւ ժամն էր տասներորդ : 40 Սիմոն վեմի եղբայր՝ Անդրէասն էր այն երկուքէն մէկը որոնք Յովհաննէսէն շեցին ու անոր ետեւէն գացին : 41 Աս առաջ իր Սիմոն եղբայրը կը գտնէ ու կ'ըսէ անոր . « Մեսիան գտանք , որ Քրիստոս կը թարգմանուի » : 42 Աս զանի Յիսուսին բերաւ . Յիսուս անոր նայելով կ'ըսէ . « Դուն Յովնանի որդին Սիմոնն ես , եւ կեփաս պիտի կոչուիս , որ Պետրոս կը թարգմանուի » :

*43 Յաջորդ օրն ուղեց Յիսուս Գալիլեա ելլել . Փիլիպպոսը կը գտնէ ու կ'ըսէ անոր Յիսուս . « Իմ ետեւէս եկուր » : 44 Եւ Փիլիպպոս Բեթսայիղայէն էր , Պետրոսի եւ Անդրէայի քաղաքէն : 45 Փիլիպպոս Նաթանայէլը կը գտնէ

35-42 . Նախ Անդրէաս եւ ուրիշ մը , կը կարծուի թէ սա ինքն է Յովհաննէս : եւ ապա Սիմոն-Պետրոս կ'աշակերտին Քրիստոսի :

43-50 . Փիլիպպոս կոչուելէ յետոյ յաշակերտուածին , կ'աւետէ Նաթանայի Մեսիայի գալուստը : Նաթանայէլն է Բարձրիմէոս , մին Հայոց ա-

ու կ'ըսէ անոր . « Որուն վրայով Մովսէս օրէնքին մէջ գրեց եւ մարգարէներն ալ , Յովսէփի որդի Նազարէթցի Յիսուսը գտանք » : 46 Նաթանայէլ կ'ըսէ անոր . « Նազարէթէն միթէ կարելի՞ է որ բարի բան մը ըլլայ » . Կ'ըսէ անոր Փիլիպպոս . « Եկուր եւ տես » : 47 Երբ Յիսուս Նաթանայէլը տեսաւ որ անոր կուգար , կ'ըսէ անոր համար . « Ահա ճշմարիտ Իսրայէլացի մը , որուն մէջ նենգութիւն չկայ » : 48 Կ'ըսէ անոր Նաթանայէլ . « Զիս ո՞ւրիկէ կը ճանչնաս » . պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ . « Երբ դեռ Փիլիպպոս քեզ կանչած չէր , թզենիին տակը նստած էիր . քեզ տեսայ » : 49 Պատասխան տուաւ անոր Նաթանայէլ ու կ'ըսէ . « Վարդապետ , դուն Աստուծոյ Որդին ես . Իսրայելի թագաւորը դուն ես » : 50 Պատասխան տուաւ Յիսուս անոր ու կ'ըսէ . « Որովհետեւ քեզի ըսի թէ թզենիին տակը տեսայ , կը հաւատաս . ասկէ աւելի մեծ բաներ ալ պիտի տեսնես » , *51 Եւ կ'ըսէ անոր . « Ծըշմարիտ կ'ըսեմ ձեզի , երկինքը բացուած պիտի տեսնէք , եւ Աստուծոյ հրեշտակներն՝ որոնք պիտի ելլեն ու պիտի իջնեն մարդոյ Որգւոյն վրայ » :

ՓԼՈՒԾ Բ .

*1 Երբորդ օրը Գալիլեացիներու Կանային մէջ հարանիք կար , եւ Յիսուսի մայրն հոն էր : 2 Յիսուս եւ անոր աշակերտներն ալ այն հարանիքին կանչուեցան : *3 Գինիին պակսելու ատենը , մայրն Յիսուսին կ'ըսէ . « Գինի չունիտ » :

Ուրեւններուն , որ կը զարմանայ Սէ կարելի է Նազարէթէն մարգարէ ելնել նման Փարիսեցիներուն , որք յետոյ նոյնը ըսին (է. 52) : Ուրեմն Փիլիպպոս դեռ չէր գիտեր Յիսուսի Բեթլեհեմցի ըլլալը : Բայց Նաթանայէլ երբ Յիսուսի իւր անձին նկատմամբ եղած (համար 48-50) մարգարէական մէկ խօսքը կը լսէ , իսկոյն կը հաւատայ :

51 . (Ծննդ . ի՞նչ . 10-17) :

1-2 . Կանա , այժմ աւերակ եւ անմարդի եւ կը կոչուի Քէֆր Քէնն

3 . Մարիամ որ տեսած էր Քրիստոսի հրաշափառ ծնունդը եւ լա Յովհաննէս Մկրտչի վկայութիւնը , անշուշտ կը փափաքէր որ այլ եւս Յիսուս յայտնէ իւր հրաշագործ զօրութիւնը :

4 Եւ Յիսուս անոր կ'ըսէ . « Ինչ ի՞նչ կ'ուզես , կին դու , ժամանակս հասած չէ » : 5 Անոր մայրը սպասաւորներուն կ'ըսէ . « Ձեզի ինչ որ ըսէ , ըրէք » : 6 Հոն կոտին մարմարիոնէ վեց թակոյկներ Հրեաներուն սրբութեանը համեմատ , անոնց ամէն մէկը երկու կամ երեք մար կը պարունակէր : 7 Կ'ըսէ անոնց Յիսուս . « Այդ թակոյկները ջրով լեցուցէք » . եւ զանոնք մինչեւ վեր լեցուցին : 8 Եւ կ'ըսէ անոնց . « Հիմայ առէք եւ տաճարապետին ըրէք » . եւ անոնք ըբրին : 9 Երբ տաճարապետը գինի եղած ջուրը ճաշակեց , ու չէր գիտեր՝ ուրկէց է . բայց սպասաւորները գիտէին , որոնք ջուրը լեցուցին , տաճարապետը փեսային հետ կը խօսի ու կ'ըսէ . 10 « Ամէն մարդ անուշ գինին առաջ կը հրամարնէ . եւ երբ գինուփնան , այն ատեն գէշը . դուն անուշ գինին մինչեւ հիմայ պահեցիր » : 11 Այս ըրաւ Յիսուս հրաշքներուն սկիզբը Գալիլեոցիներու Կանային մէջ , եւ իւր փառքը յայտնեց . եւ անոր աշակերտները անոր հաւատացին :

12 Ասկէ ետքը Յիսուս Կափառնայում իջաւ՝ ինքն ու իր մայրը եւ իր եղբայրները . եւ հոն շատ օրեր չէր ըլլար : 13 Եւ Հրեաներուն Չատիկը մօտ էր , եւ Յիսուս Երուսաղէմ ելաւ . 14 Եւ գտաւ տաճարին մէջ , որոնք կը ծախէին արջառներ եւ ոչխարներ ու աղանձներ , եւ լուամայափոխները , որ կը նստէին : 15 Եւ չուանէ խարազան շինեց , եւ ամէնը տաճարէն հանեց , ոչխարները եւ արջառները , եւ լուամայափոխներուն դրամները ցրուեց , ու սեղանները

4-12. Ոչ մայր, ցոյց տալու համար Սէ չէր նա մայր իւր աստուածային բնութեան, զոր ունէր: Ուրիշ անգամ նաեւ յայտնեց Սէ Յովսէփ եւս չէր իւր հայրը (Ղուկ. Բ. ԵԾ): Յիսուս որբուն որ կը նկատէ Սէ դեռ հասած չէ ժամանակը, այլ սակայն երբ կը տեսնէ Սէ իւր մայրն վստահ իւր աստուածային զօրութեան կը հրամայէ սպասաւորներուն, իւր իբր մարդ ծնողասիրութեան պարտը կատարած ըլլալու համար, ուր ուրեմն կ'ընէ այս հրաշքը: Այսպէս Յիսուս կը պատուէ ծնողասիրութիւնն ու ամուսնութիւնը, կ'օրհնէ մեր խրախճանութիւններն, երբ անմեղ են:

13-16. Յիսուսի հրապարակային կենաց առաջին զատիկն էր այս . նա առաջին անգամ մարտից տաճարը, ինչպէս յետոյ երկրորդ անգամ եւս, Սէ այժմ եւ Սէ յետոյ ըսելով. « Տուն իմ տուն աղօթից է » (Մատթ. ԻԱ. 1-11): Մարկ. ԺԱ. 1-11 . Ղուկ. ԺԹ. 29-44):

կործանեց : 16. Եւ որմօք աղաւնիներ կը ծախէին , կ'ըսէ
անոնց . « Ատի վերուցէք ասկի . եւ ին չօրս տունդք աստ-
ծախի տուն մի ընէք » : *17 Յետոյ աշակերտներդ յիշեցին
թէ գրուած է . « Քու տանդ նախանձը գիտ պիտի տատէ » :
*18 Հրեաները պատասխան տուին ու կ'ըսեն անոր . « Ահա
գի ի՞նչ նշան պիտի ցուցնես դուն , որ այդ կ'ընես » : *19
Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց . « Այդ աս-
ճարը քակեցէք , եւ զատի երեք օրուան մէջ կանգնեմ » :
*20 Հրեաները կ'ըսեն անոր . « Այս տանտըք քառասուն
վեց տարիէն շինուեցաւ , եւ դուն երեք օրուան մէջ կը
չինես զատի » : *21 Բայց ան իր մարմնի տանտարին համար
կ'ըսէք : 22 Իսկ երբ մտեղներէն յարութիւն տուաւ , ա-
նոր աշակերտները յիշեցին , թէ այս է որ ըստ . եւ հա-
ւատացին զրին ու խօսքին որ Յիսուս ըսաւ :
*23 Եւ երբ զատի տօնին նրուադէմ էր , շատեր ան-
նոր անուան հաւատացին , որովհետեւ կը տեսնէին հրաշք-
ներն , որ կ'ընէր : 24 Բայց Յիսուս անոնց անձին չէր հա-
տար , վասն զի ինք ասէն ըսն գիտէր . 25 եւ պէտք չկար
թէ մէկը մարդուն համար վկայէ , որովհետեւ ինք գիտէր
մարդուն մէջ ինչ որ կար :

17. (Մատ. 4թ. 9):

18. Հրեայք միշտ նշան կը խնդրէին, ասանց յիշելու թէ կրնային խա-
րուիլ նշաններէ (Ք. Օր. ԺԳ. 1-3):

19. Յիսուս չըսեր թէ քակեմ, զի ինքն եկած էր շինելու, ոչ թէ քա-
կելու. եկած չէր օրէնքը լուծունելու, այլ լնու: Հրեայք պիտի քանդէին
Յիսուսի աստուածաբանակ մարմինը, այլ նա զայն երեք օրուան մէջ պիտի
վերականգնէր, ալ տեսիլ հզօր եւ փառաւոր:

20. Ժողովուրդը զինացաւ զայս եւ ոչ իսկ թէր աշակերտք:

21-22. Մեծն Հերովդէս Զորաբարեխան տանար քակեց եւ սխառ զայն
վերաշինել, որ տեւեց ցամ տեւան 66 ըստ Յովսէփոսի. Եւ որովհետեւ
տանարին այս շինութիւնն նախ ըսն զՔրիստոս 20 Ետակապնէ: Եւ Յի-
սուս այս տունն էր 30 ամեայ, ուրեմն նա ծնած էր նախ ըսն մեր
Թուականն իբր էին, որ է Հերովդէսի մահուան տարին:

23-25. Նոքա թիւս սխառ Յիսուսի հաւատող, ասկայն նա չէր և
տար նոցա. վասնզի ամենազէտ էր. պիտք չունէր նա վկայուծն
է ի՞նչ է մարմն եւ հրաբոխ ունի գիւրամեք եւ դիւրափոխու. բնութիւն
հրբան հակամէտ ի մեզ :

Փ Լ ՈՒ Խ Ծ Փ.

*1 Եւ այն Փարիսեցիներէն մարդ մը կար Նիկողոսմոս անունով, Հրեաներուն իշխան: 2 Աս գիշերն անոր եկաւ ու կ'ըսէ անոր. «Տարբի, դիտենք որ Աստուծա՛ն եկած վարդապետ ես. որովհետեւ մէկը չկրնար ընել այդ նշանները որ դուն կ'ընես, թէ որ Աստուած անոր հետ չըլլայ»: 3 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոր. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, «Թէ որ մէկը նորէն չծնի, Աստուծոյ արքայութիւնը չկրնար տեսնել»: *4 Նիկողոսմոս կ'ըսէ անոր. «Ի՞նչպէս մարդ կրնայ ծնիլ, որ ծեր է. կարելի՞ է նորէն իւր մօրը որովայնին մէջ կրկին մտնել եւ ծնիլ»: *5 Յիսուս պատասխան տուաւ եւ կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի. թէ որ մէկը ջրէն եւ Հոգիէն չծնի, Աստուծոյ արքայութիւնը չկրնար տեսնել»: *6 Որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը հոգի է: *7 Մի զարմանար թէ քեզի ըսի, պէտք է քեզի ծնիլ: Ծ Որովհետեւ հոգը ուր կ'ուզէ, կը գչէ, եւ անոր ձայնը կը լսես, սակայն չես գիտեր, ուրկէ կուգայ կամ ուր

1-3. Ի սոյն գիշերի Յիսուսի և Նիկողոսմոսի մէջ խորհրդաւոր և բարձրաժողի մի խօսակցութիւն տեղի կունենայ: Յիսուս որ գիտէր իբր մարդ զնել հոն, մարդկային մահաւիժ վերսին գրայն Նիկողոսմոսին կըսէ. «Եթէ ոչ որ ծնցի վերստին, ոչ կարէ տեսնել զարքայութիւն Աստուծոյ»: Թողաւ հին մարդը, մեղաց մարդը, յաւաքանալ ի բարին անդր, այսինքն ի գիտութիւն «չմարտութեան», այս է վերածնութիւն և ճանապարհ մտոյ յարքայութիւն Աստուծոյ:

4. Նիկողոսմոս մարդկային վերածնութեան այս խորհուրդն ընդունելէ կը տկարանայ, ուստի սաղոմեանք կը հարցնէ առ Յիսուս. «Ձի՞նքդ կորէ մարդ ծնանել»:

5. Պոզոս Յիսուսի խօսքն ակնարկելով կը գրէ. «Ոչ ի գործոց արդարութեան զոր արարար մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն՝ սպրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանկամ ծննդեանն եւ նորգութեանք Հոգոյն արքոյս. (Տիպ, Գ.) Երբս որք պիտի վերածնէին ի ջրոյ և ի Հոգոյ, այլ ևս չգիտի համարուէին ծնուող արեան կամ մարմնոյ և կամ վամաց առն, այլ Եստուծոյ Որդի»:

կ'երթայ . անանկ ալ Հոգիէն ամէն ծնածները » : 9 Նիկոզեմոս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Ի՞նչպէս այդ բանին կարելի է ըլլալ » : *10 Յիսուս պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոր . « Ի՞նչ Իսրայելի վարդապետն ես ու այդ չե՞ս գիտեր : *11 Ճշմարիտ կ'ըսեմ քեզի , ինչ որ գիտենք , կը խօսինք , եւ ինչ որ կը տեսնենք , կը վկայենք , եւ մեր վկայութիւնը չէք ընդունիր : *12 Իսկ հիմայ թէ որ ձեզի երկրաւորը ըսի , չէք հաւատար , ի՞նչպէս թէ որ երկնաւորն ըսեմ , պիտի հաւատաք :

*13 Երկինքը մէկը չելաւ , թէ ոչ ան որ երկինքէն իջաւ , մարդոյ Որդին , ան որ երկինքն է : 14 Եւ ինչպէս որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց , այնպէս եւ մարդոյ Որդւոյն բարձրանալ պէտք է : 15 Որովհետեւ ով որ անոր հաւատայ , պիտի չկորսուի , հապա յաւիտենական կեանքը պիտի ընդունի : 16 Վասն զի Աստուած աշխարհը այնպէս սիրեց , մինչեւ իր միածին Որդին տուաւ : 17 Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ չղրկեց , որ աշխարհը դատէ , հապա աշխարհ անով փրկուի : 18 Ով որ անոր կը հաւատայ , պիտի չդատապարտուի . եւ ով որ անոր չհաւատար , արդէն դատապարտուած է , որովհետեւ

6. Փրկչին այս խօսքն առ Նիկողեմոս կը ճշդէ Սուրբ առաքեալն Պօղոս , որպէս զի հաւատացեալք կատարելապէս ըմբռնեն Սէ Ինչ , է վերածնութիւնն մարդոյ . « Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է , և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն : Քանզի խորհուրդ մարմնոյ մշնամութիւն է յԱստուած , զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի , ևս եւ կարե իսկ ոչ » . այսինքն առանց շնորհացն Հոգւոյն սրբոյ կարելի չէ մարդոյ մեզք չգործել , անմեղ սպրիլ , ուստի « Որ մարմնովն են , Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն » . (Հռովմ. Ը. 6—8) :

7-9. Յիսուսի այս բարձրիմաստ և մինչեւ իսկ մարդկային մտաց այս անհատանելի խօսքն ըմբռնել ո՛րքան զժուարին էր Նիկողեմոսի , որ արդարեւ վերստին կրկնեց իւր առաջին հարցումը , որ Սէ եւ այս անգամ կարճ , այլ սակայն պնդելով իմն . « Զիմրդ մարմի այդմ լինել » :

10. Յիսուս զրնՍէ յանդիմանական ձեւով մը կը պատասխանէ . « Դ ես վարդապետ Իսրայելի եւ զայդ ոչ գիտես » :

11. Յիսուսի այս և ուրի . խորախորհուրդ խօսքերն , անըմբռնել վարդապետութիւններն և բարոյականի ամենախիստ դասերն ոչ Սէ Նիկղեմոսի պէս նորահաւատ անձերու համար լսել զժուար էր , այլ՝ նոքա ի

չհաւատաց Աստուծոյ միածին Որդւոյն անուան : 19 Եւ այս է դատաստանը , որ լոյսն աշխարհ եկաւ , եւ մարդիկ խաւարը սիրեցին լոյսէն աւելի , որովհետեւ իրենց գործերը չար էին : 20 Ամէնն , ով որ չար կը գործէ , լոյսը կ'ատէ ու լոյսին չգար , որպէսզի անոր գործերը չըյանդիմանուին : *21 Իսկ ով որ ճշմարտութիւն կ'ընէ , լոյսին կուգայ , որ անոր գործերը յայտնի ըլլան թէ Աստուծով գործուեցան :

*22 Ասկէ ետքը Յիսուս եւ իր աշակերտները Հրէաստանի երկիրը եկան . եւ հոն անոնց հետ կը պտըտէր ու կը մկրտէր : 23 Յովհաննէս ալ կը մկրտէր Այնտնի մէջ Մաղիմի մօտ , որովհետեւ հոն շատ Զուրբեր կային . եւ կուգային ու կը մկրտէին , 24 որովհետեւ դեռ Յովհաննէս բանտ ձգուած չէր : *25 Եւ Յովհաննէսի աշակերտներէն ինչոր եղաւ Հրէաներուն հետ սրբութեան համար : 26 Յովհաննէսին եկան եւ կ'ըսեն անոր . « Վարդապետ , ան որ քեզ հետ Յորդանանի անգիի կողմն էր , որուն դուն վկայեցիր , ահա ան կը մկրտէ , եւ ամէնն ալ անոր կուգան » : *27 Յովհաննէս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Մարդ ինքնին բան մը չկրնար ընել , թէ որ անոր

որք իւր հետ կը շրջէին միշտ , վերջապէս օր մը հեռացան իրմէն ըսելով . « Ի՞նչստ է բանդ այդ . ո՞ր կարէ լսել դմաս . (2. 64—67) :

12. Արդարեւ ըստ առաքելոյն « Ո՞րք ի մարդկանէ զիտէ ինչ զմարդոյն . եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա , նոյնպէս եւ ոչ զԱստուծոյն որ զիտէ , եթէ ոչ Հօգին Աստուծոյ » . այլ սակայն որովհետեւ « Մեր ոչ եթէ զհոգի աշխարհիս տուար , այլ զՀօգին որ յԱստուծոյ , զի ծանիցուի զայն որ յԱստուծոյն շնորհեցու մեզս (Ա. Կորնթ. 11—13) : Ուրեմն մեզ անիմանալի եւ անհասանելի չէ վերածնունդեան խորհուրդը եւ մարդկային յաւիտեակեան երջանկութեան հաւատքն ի Քրիստոս Յիսուս :

13—20. Կը խոստովանի Քրիստոս Սէ երկնքէն իջած է , այլ պիտի բարձրունայ նման Մովսէսի օձին (Թիւր ԻԱ. 6—9) , շախմատելու համար հին օձին զլուխը , սատանայի իշխանութիւնը : Ինչպէս այն օձն ունէր օձի նմանութիւն միայն եւ ոչ թոյնը , ինքն ալ չունէր ամենեւին մեղք , եւ ինչպէս այն օձին նայողներն կը փրկուէին , իրեն նայողներն ալ այսինքն հաւատացողները պիտի փրկուին , վասն զի առ այս Հայր Աստուած իւր Որդին զրկեց յաշխարհ , իսկ չհաւատացողներն այսինքն խաւարն լոյսէն աւելի սիրողները պիտի դատապարտուին :

տրուած չըլլայ վերէն՝ երկինքէն : *28 Դուք ինքնին ինծի համար կը վկայէք , որովհետեւ ձեզի լոսի թէ ես Քրիստոսու չեմ , հասար անոր առջեւէն զրկուած եմ : *29 Ով որ հարսն ունի , փեսան ան է . իսկ փեսային բարեկամը որ կը կենայ եւ անոր կը լսէ , ուրախութեամբ ուրախ կ'ըլլայ փեսայի ձայնին համար . եմայ այս ուրախութիւնն որ ինչ է , լցուած է : *30 Պէտք է անոր անկը եւ ինծի մեզմանս : *31 Ով որ վերէն կուգայ , ամենէն վեր է . եւ ով որ այս երկրէն է , երկրէ է եւ երկրէ կը խօսի : 32 Ով որ երկինքէն կուգայ , ինչ որ լսեց եւ ինչ որ տեսաւ , կը վկայէ , եւ անոր վկայութիւնը մէկը չընդունիր : 33 Ով որ անոր վկայութիւնը կ'ընդունի , կնքեց թէ Աստուած ճշմարիտ է : 34 Արովհետեւ զանի որ Աստուած զրկեց . Աստուծոյ խօսքերը կը խօսի . որովհետեւ Աստուած Հոգին չափով չտար : 35 Հայր կը սիրէ Արգին , եւ ամէն բան անոր առստ : *36 Ով որ Արգւոյն կը հաւատայ , յուսիտեանական կեանք կ'ընդունի . եւ ով որ Արգւոյն չ'հնար զանգիր , պիտի շտեմնէ կեանքը , հասար Աստուծոյ բարեկութիւնը անոր վրայ կը մնայ :

21. Չարագործն է միշտ խցնահոր եւ փոխառական լոյսէն . իսկ բարեգործը լուսոյ մէջ ըլլալ կ'ուզէ :

22-24. Այնոն եւ Ոսայիմ էին Բեթսանէն քիչ հեռի Յորդանանը մօտ :

25-26. Ո՞րն էր կարեւորագոյնը . — Յիսուսի եւ իրեննորուն մկրտութիւնը թէ Յովնանէսինը . այս էր գուցէ վեցը :

27 Յովնանէս ճշմարտութիւնը կը խօսի . ով որ հոգոյ փրկութեան համար կը գործէ , պաշտօնայ է Աստուծոյ , որովհետեւ այդ պաշտօնն Աստուծմէ առած է :

28. (Դուկ. Գ. 3-6: Մատթ. Գ. 11):

29. Յովնանէս էր բարեկամ որ կը բերէր փեսայն (Քրիստոսը) առ իւր հարսն (եկեղեցին) , եւ իրբեւ փեսաւէր կը ցնծայ :

30. Ա՛լ իւր պաշտօն վերջանալու մօտ էր .

31-35. Յովնանէսի այս վկայութիւնն է փառաւոր իւր իրք կէիք ճշմտութեան , զիսն զի Քրիստոսի համակ ստատուածութիւնը կը խոստովան

36. Իր կնքէ Յովնանէս իւր խօսքը զստատարտութիւն սպառնալով անգիղջներուն եւ պնդաւաններուն :

Փ Լ Ո Ւ Խ Փ.

*1 Արք. Յիսուս գիտցաւ թէ Փարիսեցիները լսեցին թէ Յիսուս շատ աշակերտներ կ'ընէ եւ Յովսաննէսէն աւելի կը սկսեալ . 2 Արովհետեւ ոչ թէ Յիսուս ինքզինն կը սուրբորաւէր, հապա անոր աշակերտները . 3 Հրէաստան երկիրը թողուց, եւ նորէն Գալիլեա եկաւ : 4 Եւ ան Սամարիայէն կ'անցնէր : 5 Ան Սամարացիներուն մէկ քաղաքը կուգայ՝ որուն անունը Սիւզար էր, մօտ այն գիւղին որ Յակոբ իր Յովսէփ որդիին սուսաւ : 6 Եւ հոն Յակոբի մէկ ազգիւրը կար, եւ Յիսուս ճամբէն յոգնած՝ աղբիւրին գլայ կը նստէր, եւ ժամը վեցն էր : *7 Սամարիայէն կ'ին վր կուգայ Զուր հանելու համար . Յիսուս կ'ընէ անար, «Ինձի խմելու Զուր սուր» : 8 Արովհետեւ անար աշակերտներն այն քաղաքը գացած էին, որ կերակուր գտնէ : 9 Կ'ըսէ անոր Սամարացին . «Գուն որ Հրեայ նա, Ի՞նչ տեսնէ՞ Սամարացի կ'ընէ Զուր խմել կ'ուզես» . որովհետեւ Հրեաները Սամարացիներուն հետ չեն խառնակիր : 10 Յիսուս պատասխան առաւ . եւ կ'ըսէ անոր . «Թէ որ գուն Սառաւնայ պարզեւնորը հանցնայիք, եւ մ'զ է որ քեզի ըսաւ ինձի խմելու Զուր սուր, գուն անարմէ՞ ազգէր», եւ քեզի կենդանի Զուր պիտի տար» : *11 Կ'ինը անոր կ'ըսէ . «Տէր, դուն որովհետեւ դոյլ չունիս, եւ այս Զրհորը

1.6. Յիսուս փարիսեցիներուն հոգնանը լսելով ներքին Գալիլեա կենտրոնար Սիւզարի մօտ աղբիւրի վր գլայ վրնստի : Արեւար կամ Սիւքէճ սպան մասպուս 36 մղոն կրուսացեմէն գէպ ի հրեախ ի մէջ Գարեգին եւ Ռերաղ լեաներուն . Յակոբ զայն գնեց եւ Յովսէփ հոն Սաղուեցաւ (Ծննդ. ԽՉ. 22 : Յես. 44. 32) : Յիւրեմ յետոյ եկաւ Գեւտական քաղաք, որոյ մօտ էր Յակոբայ գրեորը կամ աղբիւրը :

7-10 . Յիւր վր զարմանայ որ Հրեայ մը քրմէն խմելու զուր կ'ուզէ . գուն զի Հրեայներուն քա Սամարացիներուն մէջ այնքան աստիկ հակառակութիւն կար, որ իրարմէ հաց անգամ չէին զներ :

11-19 . Յիսուսի եւ այս կ'ըսէ մէջ եղած խօսակցութեան փոխան այս էր, եւ թէ կ'ընէ էր մեղաւոր, ինչպէս Յիսուս զուշտիկեց, որով կ'ընէ ասի պաշտեցաւ փոստագլուխի մէջ Յիսուս է մարցարտ :

խոր է, բայց հիմա կենդանի ջուրն ո՛ւրկէ պիտի ունենաս: Միթէ դուն մեր Յակոբ հայրէն աւելի մե՞ծ մէկն ես, որ այս ջրհորը մեզի տուաւ. եւ ինքն ասկէ խմեց, եւ անոր որդիներն ու անոր ոչխարները»: 13 Պատասխան տուաւ անոր Յիսուս ու կ'ըսէ. «Ամէնն, ով որ այդ ջուրէն կը խմէ, նորէն կը ծարաւնայ. բայց ով որ այն ջուրէն խմէ, որ ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չըծարաւնայ: 14 Բայց ջուրն որ ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ ջրոյ աղբիւր, որ պիտի բղխի յաւիտեանական կեանքի համար»: 15 Կինը կ'ըսէ անոր. «Տէր, այն ջուրը ինծի տուր, որ չծարաւնամ եւ հոս չգամ ջուր հանելու»: 16 Յիսուս կ'ըսէ անոր. «Գնա, քու էրիկդ կանչէ եւ հոս եկուր»: 17 Կինը պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոր. «Էրիկ չունիմ». Յիսուս կ'ըսէ անոր. 18 «Աղէկ ըսիր թէ էրիկ չունիմ. որովհետեւ հինգ էրիկ փոխած ես, եւ որ հիմայ ունիս, քու էրիկդ չէ. այդ իրաւ ըսիր»: 19 Կինը անոր կ'ըսէ. «Տէր, կը կարծեմ թէ դուն մարգարէ մը ես»: *20 Մեր հայրերն այս լերան վրայ երկրպագութիւն ըրին, եւ դուք կ'ըսէք թէ միայն Երուսաղէմ է այն տեղը, ուր արժան է երկիրպագանել»: *21 Կ'ըսէ անոր Յիսուս. «Կին դու, ինծի հաւատա, որովհետեւ ժամանակ պիտի գայ, երբ ոչ այս լերան վրայ եւ ոչ Երուսաղէմ Հօրը երկրպագութիւն պիտի ընեն»: *22 Իուք երկըր-

20. Կինը ճանչելով իր յանցաւորութիւնը եւ փափարելով երթալ առ Աստուած թողութիւն գտնելու համար ուզեց գիտնալ թէ ճեր երկրպագելու է Աստուծոյ. յերուսաղէմ թէ ի Գարեգին, որ էր լեռ եւ հոն կար տաճար: Սամարացիք հոն երկրպագութիւն ըրին իբր հինգ հարիւր տարի: Յովհաննէս Հիւրկանոս կործանեց այդ տաճարը իբր 129ին նախ քան զՔրիստոսայլ տեղն էր միշտ նուիրական Սամարացոց եւ է ցարդ: Նոքա կը պնդէին թէ հոն պաշտելու է զԱստուած (ըստ Բ. Օրինաց Իէ. 4 համարին), ուր սամարերէն հնգամատեանն ունի Քէբաղ անուան տեղ Գարեգին: Նսեւ կը պնդէին թէ այս լեռն էր և ոչ Երուսաղէմ, ուր իսահակ պիտի պատարագուէր: Յարզ հոն կան Սամարացիներ փոքրամիւ և ունին այս լեռ սասորտ ժողովրդանոց:

21. Յիսուս կը յայտնէ թէ հոս ուհոն Աստուծոյ երկրպագելու խնդիր պիտի վերջանայ այլ ևս:

22. Սամարական կրօնքն էր զարմանալի խառնուրդ հրէութեան և /

պագուծիւն կ'ընէք, որուն չէք գիտեր, մենք երկրորդա-
գուծիւն կ'ընենք որուն գիտենք. որովհետեւ փրկուծիւնը
Հրեաներէն է: *23 Սակայն ժամանակ պիտի գայ, որ
ճշմարիտ երկրպագուները հոգևով եւ ճշմարտութեամբ
երկրպագուծիւն պիտի ընեն Հօր, վասն զի Հայրն ալ
անանկ երկրպագուներ կ'ուզէ: *24 Աստուած հոգի է, եւ
անոր երկրպագուներուն պէտք է հոգևով եւ ճշմարտու-
թեամբ երկրպագուծիւն ընել: *25 Կի՛նը անոր կ'ըսէ.
«Գիտեմ որ Մեսիան կուգայ, Քրիստոս անուանուածը,
երբ գայ, ան մեզի ամէն բան պիտի պատմէ»: *26 Կ'ըսէ
անոր Յիսուս. «Ես եմ որ քեզի հետ կը խօսիմ»: 27 Եւ
այն խօսքին վրայ աշակերտներն եկան, եւ կը զարմանա-
լին որ կ'նոջ հետ կը խօսէր. բայց անոնցմէ մէկը չըսաւ
թէ «Ի՛նչ կ'ուզես, կամ անոր հետ ի՞նչու կը խօսիս»: 28
Կի՛նը իր սափորը թողուց ու քաղաք գնաց, եւ մար-
դիկներուն կ'ըսէ. 29 «Եկէք, մարդ մը տեսէք, որ ինձի
ամէն բան ըսաւ, ինչ որ ես գործած եմ. միթէ ա՞ն է
Քրիստոսը»: 30 Քաղաքէն ելան եւ անոր եկան:

*31 Եւ դեռ անոնք եկած չէին, աշակերտներն անոր
կ'աղաչէին ու կ'ըսէին. «Վարդապետ, հաց կեր»: 32 Ան
կ'ըսէ անոնց. »Ես ուտելու կերակուր ունիմ, որ դուք
չէք գիտեր»: 33 Աշակերտներն իրարու կ'ըսէին. «Միթէ
մէկը անոր ուտելու բան մը բերա՞ւ»: 34 Յիսուս կ'ըսէ

Յանոսեթեան (Դ. Թագ. Ժէ 24-34). Սամարացիք միայն հնգամստեանը
կ'ընդունէին, որով տգէտ էին մարգարէութեանց. իսկ Հրեայք հին կտակա-
րանը ամբողջ կ'ընդունէին որով Յովնափած էին կուսպաշտութիւնը բոլո-
րովին, և Մեսիայի գալուստը իրենցմէ և իրենց համար կ'ակնկալէին:

23. Աստուած հաճիք միայն արտաքին ձեւերուն, այլ կը նայի մեր
արտին Սէ կնայ հոն անկեղծ հաւատք:

24. Թէ Հրեայք և Սէ Սամարացիք կը դուանէին Սէ Աստուած հոգի է,
այլ սակայն կը կարծէին Սէ այս ու այն տեղ երկրպագելն է Աստուծոյ
հաճելի: Յիսուս ասա կը քորով Սէ Աստուած հոգի է և նորա պաշտօնն
ալ պարտի լինել հոգեոր այսինքն հոգևով և ճշմարտութեամբ: Աստուած
մարդու տուած է հոգի, որով մարդ կը ճանչէ ճշմարտութիւնը, որով կը
միանայ Աստուծոյ հետ. այս է հոգևով և մարմնով Աստուծոյ երկրպագու-
թիւնը:

25. Ուրեմն կնոջ այս վկայութենէն կը հաստատուի Սէ Սամարացիք

անանց, « Եւ կերպուցաւ այն է որ ընեմ անոր կամքն, որ զիս գրկեց, եւ կատարեմ անոր գործերը: » 35 Դուք չէ՞ք որ կ'ընէք թէ « Դեռ չորս ամիս կան, եւ հուճե՞քի ժամանակը կուգայ. ահա եւ կ'ըսեմ ձեզի, ձեր ուշքերը վերադէք ու արածըրդ տեսէք, որ ձերակցացած են եւ հուճե՞քի հասած: » 36 Եւ ով որ կը հնձէ, ժորձքը կ'ապնու, եւ յախտենական կեանքի համար պատու չը Ժողովէ. ցանազն ու հնձողը՝ միասին պիտի ու բախտանան: 37 Ասոր հասար է ճշմարիտ խաբը, որ « ցանազն ուրիշ է եւ հնձազն ալ ուրիշ է: » 38 Եւ ձեզ պիտի զրկեմ հնձելու, ուր դուք չուշխատեցաք. ուրիշներն աշխատեցան եւ դուք անանց աշխատութեան մէջ մտաք: »

*39 Սակարացքներու այն քաղաքէն շատեր անոր հուշատարներն կ'ընող այն խաբին համար, որ վկայեց թէ « Ինձի ամէնը ըսաւ՝ ինչ որ ես գործած եմ: » 40 Իսկ երբ Սաճարացիներն անար եկան, կ'աղաչէին անոր որ իրենց քով մնայ, եւ հին երկու օր կեցաւ: 41 Եւ շատերն ալ անոր հաւատարմին անոր խաբին համար: 42 Եւ կ'ընող կ'ընէին թէ « Ասկէ ետքը քու խաբերուդ համար չենք հաւատար, որովհետեւ անեք իսկ ատորձէ շնեցիք, եւ պիտենք թէ աս է աշխարհի ճշմարիտ Քրիստոսը: »

*43 Եւ երկու օրէն ետքը երաւ անկէ ու զմայ Գալիլէա: Եւ Յիսուս ալ վկայեց թէ « Մարգարէ՛տը իր քառու-

ըստ իրենց հնգամսանկն ակն ունէին Մեսիայի (Թեոլ. ԺԹ. Ան Բ. Յր. ԺԳ. 15-18): Բայց նորս Հին կտակարանին միւս մասերէն չէին գիտէր թէ Մեսիան ոչ թէ իրան էր մարգարէ, այլ նաև Քուցարտ, ու այսպէս զեթ կը մնային ճշմարտութենէն որք կը հարձակն թէ Մեսիան պիտի տեսնուի թողք աշխարհիս:

26-30. Կինը երբ կը լսէ թէ Յիսուսն է Մեսիայն կը փուռայ ի քարոս պատահելու ու ըսելու թէ « Ան է Քրիստոսը: » Իսկ աշակերտներն երբ կուգան ու կը տեսնեն Յիսուսի խաբիը կ'ընող հետ կը զգումանան. վասն զի արգելուած էր ճշմարտութի կողմէն կ'ընող հետ առանձին կամ ճիշտակաւ իսկ թէ քայքայ ար արտակարանաց Յիսուսի շին նարցիւր պատճառը:

31-35. Յիսուս կը յայտարարէ թէ մարդ եզր իր նոգիւր պարտքը կատարէ նա ըրած կողմէն Աստուծոյ կամքը. այն է անոր հիմարտութի ու պիտի վայել յախտենական կենաց մէջ:

35-38. Յորեւր կը հասնի միշտ Աստուծոյ արտերուս մէջ. ինչ զեթ

տին մէջ պատիւ չունի: 45 Երբ այն Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զանի ընդունեցին. վասն զի տեսած էին անոր բոլոր հրաշքները, որ տօնին ատեն Երուսաղէմ ըրաւ. որովհետեւ անոնք ալ այն տօնին եկած էին:

*46 Նորէն եկաւ Գալիլեացիներուն Կանայ քաղաքը. ուր Գուրբ գինի ըրաւ. եւ հոն Թագաւորացուն զք կայր, որուն որդին Կափառնայումի մէջ նիւանդ էր: 47 Ան երբ շտեղ թէ Յիսուս Հրէաստանէն Գալիլեա եկած է, անոր եկաւ, կ'աղաչէր որ իջնէ եւ անար որդին բժշկէ, վասն զի մեռնելու մօտ էր: 48 Յիսուս անոր կ'ըսէ. « Թէ որ նշան մը եւ հրաշքներ չտեսնէք, չէք հաւատար »: 49 Թագաւորացուն անար կ'ըսէ. « Տէր, իջիր դու իմ մանուկս շնորհաւ »: 50 Յիսուս կ'ըսէ անոր. « Քնա, քու որդիդ ողջ է ». եւ մարդը հաւատաց այն խօսքին որ Յիսուս իրեն ըրաւ ու դնաց: 51 Եւ երբ կ'իջնէր, անոր ծառաներն աւնար առջեւ ելան, աւետիս առին ու կ'ըսեն թէ « Ի՞նչ մանուկը օգջ է »: 52 Անոնց կը հարցնէր այն ժամին հօմար որ բժշկուեցաւ. եւ կ'ըսեն անար. « Երէկ ժամը եօթնին Ղերմը զանի թողուց »: 53 Անոր հարցը զբացաւ թէ այն ժամին՝ որ Յիսուս ըսաւ անոր թէ « Քու որդիդ ողջ է », եւ ինքն ու իր բոլոր տունը հաւատաց: 54 Այս նորին երկրորդ հրաշք ըրաւ Յիսուս՝ Հրէաստանէն Գալիլեա գալով:

խոր, ցանկն ու բազաք հուստարագէս կ'օգտուան, այսինքն բարեբարոյ և բարեբարեալ մի՞՞է միևնոյն ուրախութիւնը չեն զգար: Քրիստոս ինք ցանկած էր, ուրիշներն այսինքն մէկը իւր հաւանքը բողբու կոչուած ենք. այս փոքր միսթարութիւն է մեզ:

39-42, Այսպէս Սամարացիք ևս կը հաւատան Յիսուսի:

43-45. (Մատթ. Գ. 17: Մարկ. Ա. 16: Գով. Գ. 44):

46-54. Յիսուս ի Կափառնայում կը բժշկէ ազնուականի մը որդին, մէկ և այս ազնուականին հաւատարը չէր այնքան մեծ, որքան էր հարեբարայտիւնը (Մատթ. Ը. 10):

Գ Լ Ո Ս Ե .

¹ Ասկէ ետքը Հրեաներուն տօն էր, եւ Յիսուս Երուսաղէմ գնաց: ² Եւ Երուսաղէմ Պրոպատիկէ աւազանը կար, որ Եբրայեցերէն Բեթ-Էզզա կը կոչուէր, հինգ սրահ: ³ Ուր կը դրուէր հիւանդներու, կոյրերու, կաղերու, զօսացածներու շատ բազմութիւն, որ ջուրին յուզուելուն կ'սպասէին: ⁴ Եւ Տէրոջ հրեշտակը ժամանակին աւազանը կ'իջնէր եւ ջուրերը կը յուզէր. եւ տն որ ջուրին յուզուելու ատեն՝ առաջին անգամ կ'իջնէր, կը բժշկուէր հիւանդութեան նշան չունենալով: ⁵ Եւ հոն կար մարդ մը, որ երեսուն ութ տարի հիւանդ էր: ⁶ Յիսուս երբ զանի տեսաւ որ կը կենար, եւ գիտցաւ թէ անկէ ետքը դեռ շատ ժամանակ կայ. կ'ըսէ անոր. « Կ'ուզե՞ս բժշկուիլ »: ⁷ Հիւանդը անոր պատասխան տրուաւ. « Տէր, մէկը չունիմ, որ երբ ջուրերը յուզուին, դիտ աւազանը ձգէ. եւ երբ ես դանդաղիմ, ուրիշ մէկը ինէ առաջ կ'իջնէ »: ⁸ Յիսուս կ'ըսէ անոր. « Եւ, մահի՞նգ առ ու գնա »: ⁹ Եւ մարդն աղէկցաւ, եւ ելաւ իր մահի՞ն տառ ու կը պտրտէր. եւ այն օրը շարաթ էր: ¹⁰ Հըրեաները բժշկուողին կ'ըսեն. « Շարաթ է եւ արժան չէ քեզի քու մահի՞նգ առնուլ »: ¹¹ Պատասխան տուաւ ա-

1-5. Յիսուս կուգայ յԵրուսաղէմ և Պրոպատիկէ աւազանի քով կը տեսնէ անդամալոյծ մը :

6-12. Յիսուս Թէև ընդհանրապէս հուատք կը պահանջէր նախ, և ապա կը հրաշագործէր (Մատթ. ԺԳ. 58; Մարկ. Թ. 23-24. եւ այլն), բայց այս անգամ առանց խնդրուելու և առանց հուատք պահանջելու կը բժշկէ: Աստուծոյ շնորհն է ձրի. ում կամի, տայ: Ո՞չ ապարէն յաճօխ և գրեթէ միշտ Աստուծմէ այնպիսի բարիքներ կը վայելենք, զորս խնդրած չենք:

13. Վասն զի Յիսուս չուզեց յայտնել զինքն ոչ բժշկուողին և ոչ գովորեան:

14. Ուրեմն այս մարդուն հիւանդութիւնն էր իւր մեղաց երեսէ Քրիստոս իբրև ամենագետ՝ մարդը բժշկելէ յետոյ, կը պատուիրէ ամ այլ ևս չմեղանշել: Մեր հիւանդութիւններէն շատին մեր մեղաց հետեալ ըլլալը հիվ չգիտեր:

նոնց եւ կ'ըսէ, «Ով որ զիս բժշկեց, ան ըսաւ ինձի. «Քու մահիճդ առ ու գնա»։ 12 Հարցուցին անոր եւ կ'ըսեն, «Ով է այն մարդը՝ որ ըսաւ քեզի, «Մահիճդ առ ու պտըտէ»։ *13 Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ո՞վ էր. որովհետեւ Յիսուս խոյս տուաւ այն տեղէն բազմութեանն համար։ *14 Ասկէ ետքը Յիսուս զանի տաճարին մէջ կը գտնէ ու կ'ըսէ անոր. «Ահա աղէկցար. այլ եւս մի մեղանչիր, որ քեզի չար բան մը չըլլայ»։ *15 Մարդը գնաց եւ Հրեաներուն պատմեց, թէ Յիսուան էր որ զիս բժշկեց։ *16 Եւ անոր համար Հրեաներն Յիսուսը կը հալածէին, որովհետեւ այս բանը չարաթ օրը կ'ընէր։ 17 Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց. «Հայրս մինչեւ հիմայ կը գործէ եւ ես կը գործեմ»։ 18 Անոր համար Հրեաներն աւելի կ'ուզէին զանի սպաննել, որովհետեւ չէ թէ միայն չարաթը չէր պատուեր, հապա զԱստուած իր Հայրը կ'անուանէր եւ իր անձը Աստուծոյ հաւասար կ'ընէր։ *19 Յիսուս պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ. «Ճամբրիտ կ'ըսեմ ձեզի, մարդոյ Որդին ինքնին բան մը չկրնար ընել, թէ որ չտեսնէ Հայրը որ կ'ընէ. եւ ինչ որ ան կ'ընէ, Որդին անոր նման կ'ընէ։ 20 Որովհետեւ Հայրը Որդին կը սիրէ, եւ ամէն բան անոր կը ցուցնէ՝ ինչ որ ինք կ'ընէ. եւ ասոնցմէ աւելի մեծ բաներ կը ցուցնէ անոր, գործեր, որոնց վրայ դուք կը զարմա-

15. Պատմեց նա, անշուշտ առ շնորհապարտութեան, այլ սակայն կայ մէկ տխուր աւանդութիւն, իբր Սէ այս մարդն ըլլայ Քրիստոսի առաջին անգամ ապտակ զարնողն առաջի Աննա քահանայապետի. այս Սէկ կեղծ, այլ է քստմենչի նկարագիր մարդկային ապերախտ բնաւորութեան։

16-17. Յիսուս կը շեշտէ Սէ ինքն Սէկ Որդի մարդոյ, այլ իբրեւ Որդի Աստուծոյ, կը շարունակէ աստուծային բարերարութեան պաշտօնն, որ խտր չընդունիր օրերու կամ ժամանակներու մէջ։ Աստուած կը բարերարէ ամէն օր. բարերարելու համար Աստուծոյ առջեւ հանգստեան օր չկայ. մարդիկ եւս բարերարելու համար նշանակուած ժամերու կամ օրերու նայելու չեն։ Քրիստոնէական բարոյականի վեմուծութիւնն այս է. — խտր չընել մարդերու մէջ, և օրերու և ժամանակներու նայելով չկասիլ բարերարութենէս ((Մատթ. ԺԲ. 1-8)։

18. Ուրեմն Յիսուսի խոստովանութիւնը Սէ է Աստուած, էր հրապարակաւ։

նաք: 21 Ինչպէս որ Հայր մեռելները կը յարուցանէ եւ կեանք հուտայ, անանկ ալ Որդին որոնց ուզէ, կեանք կուտայ: 22 Եւ չէ թէ Հայր մէկը կը դատէ, հապա ամէն դատաստան իր Որդւոյն առաւ: 23 Ինչպէս զի ամէնքը Որդին պատուեն, ինչպէս որ Հայրը կը պատուեն. ով որ Որդին չպատուեր, զանի դրկող Հայրն ալ չպատուեր: 24 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, ով որ իմ խօսքս կը լսէ, եւ կը հաւատայ անոր, որ զիս զրկեց, յաւիտենական կեանքը կ'ընդունի: դատաստանի չմտներ, հապա մահէն կեանքի պիտի փոխուի: 25 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Ժամանակ պիտի գայ եւ արդէն ալ է, երբ մեռելներն Աստուծոյ Որդւոյն ձայնը պիտի լսեն. եւ որոնք որ լսեն, պիտի ապրին: 26 Ինչպէս որ Հայր իր անձին մէջ կեանք ունի, անանկ ալ Որդւոյն առաւ իր անձին մէջ կեանք ունենալ: 27 Եւ անոր իշխանութիւն տուաւ դատաստան ընել, եւ որովհետեւ մարդոյ Որդին է: *28 Անոր համար թնչու կը զարմանոք, վարն զի Ժամանակ պիտի գայ, որ ամէնն ալ որոնք գերեզմաններու մէջ են, անոր ձայնը պիտի լսեն, 29 եւ գուրա պիտի գան. անանք որ բարի գործած են, կեննադ յարութեան համար, եւ որոնք որ չար գործած են, դատաստանի յարութեան համար: *30 Բն ինձէն բան մը չեմ կրնար ընել. հապա ինչպէս կը լսեմ, կը դատեմ, եւ

19-27. Յետոյ Յիսուս կը յանելու Թէ ինքն ինչպէս յանեսակից է Հօր Աստուծոյ, նոյնպէս և գործակից է, և Թէ ի դատաստանի՝ աշխարհի գերշին օրը անաչառ դատաւորութեան պաշտօնն ինք պիտի ստանձնէ: Որդին հոմապատիւ է Հօր, ուստի ով որ հաւատայ նմա, պիտի փրկուի:

28-29. Ապա նա վերստին կը շեշտէ. կը զարմանանք Թէ Որդի մարդոյ տէր է կենաց և մահու, և Թէ դատելու իշխանութիւն ունի այն, պիտի գայ Ժամանակ, երբ գերեզմաններ պիտի բացուին և մեռեալք յարութիւն պիտի առնուն: այլ սակայն ընթաց բարիս գործեալ իցէ ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց: Այսօր տէր Յիսուս կը կնքէ իւր խօսքը ցոյց տալով աստուածային արգասիքով: Եւ հասնելու օրը, ի վարձ բարի մտքուն և ի պատիժ չարին:

30. Վասն զի իւր և Հօր կամքն էին նոյն:

31. 47. Հաստատելու համար իւր անձին փառքը տէր Յիսուս և շատակէ վկայութիւններ: Ա. Յովհաննէս մկրտչիւնը. Բ. իւր գործերը Հօր վկայութիւնը որ ի Սուրբ-գիրս:

Իմ գոտաատանս արդար է . որովհետեւ իմ կամքս չեմ ուս-
զեր , հապառ անոր կամքք՝ որ զիս ղրկեց :

*31 Թէ որ ես ինծի համար վկայեմ , իմ վկայութիւնս
ճշմարիտ չէ : 32 Ուրիշն է որ ինծի համար կը վկայէ . եւ
գուք գիտէք թէ այն վկայութիւնը ճշմարիտ է , որ ինծի
համար վկայեց : 33 Իուք Յովհաննէսին ղրկեցիք եւ ճշը-
մարտութեանը վկայեց : 34 Բայց ես չէ թէ մարդէ վկա-
յութիւն կ'առնուի , հապա այս կ'ըսեմ որ գուք ապրիք :
*35 Ճրագն ան էր , որ զօռած էր եւ կը ծագէր , եւ գուք
ուզեցիք ուրախանալ ժամանակ մը անոր լուսովը *36 Բայց
ես Յովհաննէսէն ալ մեծ վկայութիւն ունիմ . գործերն , որ
Հայրն ինծի տուաւ , որ զանոնք կատարեմ . այն գործերն
իսկ որ կը գործեմ , ինծի համար կը վկայեն , թէ զիս Հայր
ղրկեց : *37 Եւ Հայրն որ զիս ղրկեց , ան ինծի համար
վկայեց . գուք երբէք անոր ձայնին չլսեցիք , եւ ոչ ալ ա-
նոր տեսիլը տեսաք : 38 Եւ ոչ անոր խօսքը ձեր մէջ բնա-
կած ունիք , որովհետեւ գուք չէք հաւատար անոր որ ան
ղրկեց : Բնեցէք գրքերը , վասն զի գուք կը համարիք ա-
նոնցմով յաւիտենական կեանք ունենալ . եւ անոնք են՝ որ
ինծի համար կը վկայեն , որոնցմով կը համարիք կեանք
ունենալ : 40 Եւ գուք չէք ուզեր ինծի գալ . որ կեանք
ունենալք : *41 Ես մարդիկներէն փառք չեմ առնուր : 42
Բայց գիտեմ թէ ձեր անձերուն մէջ Աստուծոյ սէրը չու-

35. Ի՛նչ հումեմատուծիւն ընդ մէջ լուսոյ և ճրագի :

36. Կարծելով թէ նա էր Մեսիայն (Ղուկ. Գ. 15)

37. Քանիոր Հրեայք կ'ընդունէին Սուրբ-գիրքը իրրեւ աստուածաշունչ
գիրք , ուրեմն հաւատալու էին Քրիստոսի , վասն զի մեսիայական այն բոլոր
շնորհքները , զորս զուշախօծ էին մարգարէք , լիովին կը տեսնուէին յանձին
Յիսուսի : Չլսել Հօր Աստուծոյ ձայնը և չտեսնել հոգւոյ աչօք անոր կեր-
պարանքը , որով չունենալ անոր սէրը , է բոլորովին ամբարշտուծիւն :

41. Վասն զի փառքի պէտք չունէր , և գիտէր թէ այդ փառք սին է և
ոչ է յաւիտենականն : Ծա պիտի ընդունէր փառք , բայց իւր ճշմարիտ եր-
կրպագուններէն միայն :

43. Ինչպէս Յիսուսէն առաջ (Գործք. Ծ. 35-38) և յետոյ եւս Հրեայք
հրապուրուեցան սուտ Մեսիայներէ և չարաչար պատժուեցան :

44. Անձնագան փառասիրտանան մարտիկներ կը Թորքե յիշել տալու
Աստուծոյ փառքը :

նիք: *43 Եւ Հօրս անունով եկայ, եւ զիս չէք ընդունիր թէ որ ուրիշ մէկը գայ իր անունով, զանի կ'ընդունիրք: *44 Ի՞նչպէս կրնաք դուք հաւատալ, որ փառք իրարմէ կ'անուք, եւ մէկ Աստուծոյն փառքը չէք փնտսեր: *45 Մի կարծէք թէ ես չարախօս եմ ձեզի համար Հօրը քով կայ չարախօս մը, Մովսէս՝ որուն դուք յուսացած էք: 46 Թէ որ դուք Մովսէսի հաւատայիք, ինծի ալ կը հաւատայիք, որովհետեւ ան ինծի համար գրեց: 47 Թէ որ անոր գրքերուն չէք հաւատար, ինչպէս իմ խօսքերուն ախար հաւատաք):

Ք Ա Ո Ւ Ս Զ .

*1 Ասկէ ետքը Յիսուս Գալիլեացիներուն Տիրերիայ ծովուն անդիի կողմը գնաց. 2 Եւ անոր ետեւէն շատ ժողովուրդ կ'երթար, որովհետեւ կը տեսնէին նշաններն որ հիւանդներու վրայ կ'ընէր: 3 Յիսուս լեռն ելաւ, եւ աշակերտներուն հետ մէկտեղ կը նստէր, 4 Եւ Հրեաներու Չատկի տօնը մօտ էր: 5 Յիսուս իր աչքը վեր վերցուց եւ տեսաւ, որ շատ ժողովուրդ անոր կողքար, կ'ըսէ Փիլիպպոսին. « Հաց ո՞ւրկէ գնենք, որ ատոնք ուտեն »: 6 Այս կ'ըսէր զանի փորձելով, բայց ինք գիտէր ինչ ընելու էր: 7 Փիլիպպոս անոր պատասխան տուաւ. « Երկու հարիւր զահեկանի հաց ատոնց չքաւեր, թէ որ ամէն մէկն ալ քիչ բան առնու »: 8 Անոր աշակերտներէն մին Սիմոն վիմի եղբայրն Անդրէաս կ'ըսէ անոր. 9 « Հոս պատանի մը կայ, որ գարեղէն հինգ նկանակ ունի ու երկու ձուկեր. սակայն այն ինչ է այդչափ մարդիկներուն

45. Կենդանի էր Մովսէս և էր դատարագ առ Հայր Աստուած իւր ազգին յամառութեանն համար, որ իւր օրէնքին չլսելով (Ծննդ. Գ. 15: Բ. Օր. ԺԸ. 15), չէր հաւատար Քրիստոսի: Սուրբերուն բարեխօսութեանն առ Աստուած՝ զօրաւոր ապացոյցներէն մին է այս խօսք:

1-16. Կը կերակրուի հինգ հազարը (Մատթ. ԺԳ. 13-21, Մարկ. 2.30-44, Դուկ. Թ. 10-17):

համար) : 10 Յիսուս կ'ըսէ . « Այդ մարդիկները նստեցուցէք » . եւ այն տեղը շատ խոտ կար , եւ մարդիկները նստան թուով իբր հինգ հազար : 11 Եւ Յիսուս հացը առաւ ու գոհացաւ եւ բաշխեց նստողներուն . նոյնպէս ալ ձուկները , որչափ եւ ուզեցին : 12 Եւ երբ կշտացան , աշակերներուն կ'ըսէ . « Ժողովեցէք այդ աւելցած կտորները որ չկորսուի » : 13 Ժողովեցին եւ տասներկու սակառ կտորներ լեցուցին այն հինգ գարեղէն նկանակէն , որ կերողներէն աւելցաւ : 14 Իսկ մարդիկներն երբ տեսան այն հրաշքը որ ըրաւ , կ'ըսէին թէ « Ճշմարիտ մարգարէն աս է , որ աշխարհ գալու էր » : 15 Յիսուս երբ գիտցաւ թէ զինքը յափշտակելու պիտի գան , որ զինքը թագաւոր ընեն , նորէն առանձին լեռը գնաց :

*16 Եւ երբ իրիկուն եղաւ , անոր աշակերտները ծովեզերքը իջան . 17 Եւ նաւ մտնելով ծովուն անդիի կողմը Կափառնայում կուգային . եւ երբ մթնցաւ , եւ Յիսուս դեռ անոնց քով եկած չէր . 18 Եւ ծովը հովին սաստիկ փչելէն կը յուզուէր : 19 Եւ թի քաշելով իբր քսան հինգ կամ երեսուն ասպարէզ գացին , Յիսուսը կը տեսնէին որ ծովուն վրայ կը քալէր ու նաւուն կը մօտենար , շատ վախցան : 20 Ան կ'ըսէ անոնց . « Ես եմ , մի վախնաք » : 21 Եւ զանի նաւը ընդունել կ'ուղէին . եւ իսկոյն հասաւ այն երկիրն ուր կ'երթային :

16-21. Յիսուս ի ծովու (Մատթ. ԺԴ. 22-36; Մարկ. Զ. 45-51),

22-24. Յիսուս մեկնած էր յանկարծ , և ժողովուրդը Տրեբրակոսն ծովուն մէկ կողմը կեցած կը փնտռէր զանի , և երբ տեսաւ Թէ չկայ , նաւերու մէջ նստելով Կափառնայում եկան , ուր Յիսուսը տեսնելով կ'ըսեն . « Վարդապետ , դուն Քրք հոս եկար » : Նորա Յիսուսը կը փնտռէին , վասն զի քանի մը հացով տեսան որ ահագին բազմութիւն մը՝ այսինքն 5000 մարդիկ կշտացան Յիսուսի հրաշագործ զօրութեամբը միայն : Այսպէս այս ժողովուրդն որովհետեւ միայն այս ակնկալութեամբ Յիսուսը փնտռելու ելած էր , այսինքն կը փնտռէր այնպիսի մէկը որ իւր փորը ճրի կշտացնէ , եւ զնա միանգամայն հրատարակել թագաւոր , ուստի կը յանդիմանուի լսելով Յիսուսի սա խօսքը . « Ճշմարիտ , կ'ըսես ձեզի , դուք զիս կը փնտռէք ոչ անոր համար որ հրաշքներ տեսար , հապա անոր համար որ հացերէն կերաք ու կշտացաք » :

27. Ժողովուրդը Յիսուսի հետեւիլ կը փափաքէր , ոչ Թէ անոր հոգեւոր

*22 Յաջորդ օրը ժողովուրդն որ ծովուն անդիի կողմը կը կենար, կը տեսնէր թէ հոն ուրիշ նաւ չկար, բայց մինակ այն մէկը, որուն մէջ աշակերտները մտան. եւ որովհետեւ Յիսուս չէր մտած աշակերտներու հետ նաւուն մէջ, բայց միայն անոր աշակերտները գացին: 23 Երբ ուրիշ նաւեր Տիբերիայէն կուգային այն տեղին մօտ՝ ուր հացը կերան: 24 Իսկ ժողովուրդը՝ երբ տեսաւ թէ Յիսուս հոն չէ, եւ ոչ ալ անոր աշակերտները, անոնք նաւերն առին, եւ կափառնայում եկան Յիսուսը փնտռելու: 25 Եւ երբ զանի ծովուն անդիի կողմը գտան կ'ըսեն անոր «Վարդապետ, հոս նրբ եկար»: *26 Յիսուս պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ. «Ճմարիտ կ'ըսեմ ձեզի, կը փնտռէք զիս, չէ թէ ձեր տեսած հրաշքներուն համար, հապա որովհետեւ այն հացէն կերաք ու կշտացաք: *27 Գացէք, գործեցէք ոչ թէ կորստական կերակուրը, հապա այն կերակուրը՝ որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ, որ Որդի մարդոյ ձեզի պիտի տայ. վասն զի Հայրը զանի Աստուած կնքեց»: *28 Կ'ըսեն անոր. «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք»: *29 Յիսուս պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոնց. «Աստուծոյ գործն այս է, որ հաւատաք անոր որ զիս զրկեց»: *30 Կ'ըսեն անոր. «Ի՞նչ նշան պիտի ընես որ տեսնենք ու հաւատաք. ի՞նչ պիտի գործես: 31 Մեր հայրերը հոն սնա-

պարգեւները, այլ անոր այն շնորհները վայելելու համար միայն, որով կազդուրուի ու պարարի իւր մարմինը: Մի՞թէ ամէն դարու մէջ չեն եղած այսօրինակ բրիստոնեայներ. որք Քրիստոսի ետեւէն կ'երթան. այլ չեն Քրիստոսի համար երբէք անձնանուէր: Եւ Յիսուս ջրելու համար ժողովրդեան այս գողափարը կ'ըսէ. «Գացէք ու գործեցէք ոչ թէ կորստական կերակուրին, հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ. և զայն ձեզ պիտի տայ Որդի մարդոյ: Առաջինը այսինքն մեր մարմինը պարարող կերակուրը տեւական չէ, այսինքն կորստական է, իսկ միւսն, այսինքն հոգին պարարող կերակուրն է տեւական: Առաջինը կը պահէ մեր բնական կենանքը առժամանակ մը, իսկ միւսը զմեզ կը պահէ յաւիտեան, լի երջանկութեամբ:

28-29. Եւ որպէս զի այս ժողովուրդն իմանայ թէ ինքն է գեր ի վերջուն զմարդ, Յիսուսի կը յաւելու թէ Հայրը կնքած է զինքն Աստուած, այսինքն ինչպէս նամակ մը կամ դ և է գրուած կը վաւերացուի կնքով.

պատին մէջ մանանան կերան, ինչպէս գրուած է. «Անոնց ուտելու հաց տու աւ երկինքէն» : 32 Յիսուս կ'ըսէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Մովսէս չտուաւ երկինքի հացը, հապա իմ Հայրս ձեզի երկինքի ճշմարիտ հացը պիտի տայ : 33 Որովհետեւ այն հացը Աստուծոմէ է, որ երկինքէն կ'իջնէ եւ աշխարհի կեանք կուտայ :

*34 Կ'ըսեն անոր. «Տէր, ամէն ատեն այն հացը մեզի տուր» : *35 Կ'ըսէ անոնց Յիսուս. «Ես եմ կենաց հացը. ով որ ինծի կուգայ, պիտի չանօթենայ. եւ ով որ ինծի կը հաւատայ, ընաւ պիտի չծարաւնայ : *36 Բայց ձեզի ըսի թէ զիս կը տեսնէք ու չէք հաւատար : 37 Այն ամէնն՝ ով որ Հայրը ինծի կուտայ, ինծի կուգայ. եւ ով որ ինծի կուգայ, դուրս պիտի չհանեմ : *38 Որովհետեւ ես երկինքէն իջայ, ոչ թէ իմ կամքս ընեմ. հապա անոր կամքը՝ որ զիս զրկեց : *39 Իմ Հօրս կամքը այս է որ զիս զրկեց, այն ամէնն որ Հայրն ինծի տուաւ, անորմէ պիտի չկորսընցնեմ, հապա վերջին օրը պիտի յարուցանեմ : 40 Հօրս կամքն այս է. ով որ Որդին կը տեսնէ ու սնոր կը հաւատայ, յաւիտենական կեանք պիտի ընդունի, եւ ես զանի վերջին օրը պիտի յարուցանեմ» :

*41 Հրեաներն անոր վրայով կը արտնջին, վասն զի ըսաւ թէ «Երկինքէն իջած հացն ես եմ, 42 Եւ կ'ըսէին. «Աս Յովսէփի որդին Յիսուսը չէ՞, որուն մենք հայրը եւ

այսպէս Հայրն Աստուած դրած է իւր կնիքը՝ այսինքն տուած է իւր վրկայութիւնը, բանի որ Յիսուսի վարդապետութիւնները հաստատող հրաշքներն էին գերբնական : Ժողովուրդն այն ատեն կը զոչէ. «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ զործերն ըրած ըլլանք» : Այս ժողովուրդը զեւ չէր գիտեր Սէ քնչ ընելու էր Աստուծոյ հոգեւի ըլլալու համար : Յիսուսի պատասխանն է կործ. «Այս է Աստուծոյ կամքը, որ հաստատար սնոր որ զըրկեց ձեզի» :

30-33. Այլ Հրեայք որք Մուրք Գրքէն լսած էին Սէ մարտիրները մեծամեծ հրաշքներ գործած են, Սէ յաւանդութենէ պիտէին. Սող որ մարգարէութիւններէն ալ լսած էին. Սէ Մեսիայն մեծագոյն հրաշքներ պիտի գործէ, կ'ըսեն Յիսուսին. «Դուն քնչ հրաշք ունիս, որ հաւատասք բեզիմեր հայրերն անսպատին մէջ մանանայ կերան, Մովսէս երկինքէն անոնց հաց տուաւ, կերան ու կշտացան, իսկ դո՛ւն : Կը պատասխանէ Յիսուս. «Այն հացը Մովսէս չէր որ տուաւ ձեր հայրերուն. այլ իմ Հայրս. այն

մայրը կը ճանչննք . իսկ հիմա Բնչպէս կ'ըսէ թէ «Ես երկինքէն իջայ » : *43 Պատասխան տուաւ Յիսուս եւ կ'ըսէ անոնց : « Իրարու հետ մի փոփոսաք : 44 Մէկը չկրնար ինծի գալ , թէ որ Հայրն որ զիս զրկեց , զանի ինծի չբերէ , եւ ես զանի վերջին օրը պիտի յարուցանեմ : *45 Մարգարէներուն մէջ գրուած է . « Ամէնքն ալ Աստուծոմէ ուսած պիտի ըլլան . այն ամէնն ով որ Հօրմէն կը լսէ ու կ'ուանի , ինծի կուգայ : *46 Ոչ թէ մէկը տեսած է Հայրը , թէ ոչ ան՝ որ Աստուծոմէ է , ան տեսած է Հայրը :

*47 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի , ով որ ինծի հաւատայ , յաւիտենական կեանք պիտի ընդունի , 48 Կենաց հացն ես եմ : 49 Ձեր հայրերն անապատին մէջ մանանան կերան ու մեռան : 50 Այս է հացը որ երկինքէն իջած է , թէ որ մէկը ասորմէ ուտէ , պիտի չմեռնի : 51 Կենդանի հացն ես եմ , երկինքէն իջած : 52 Թէ որ մէկն այս հացէն ուտէ , յաւիտեան պիտի ապրի . եւ հացն որ ես պիտի տամ , իմ մարմինս է , որ ես աշխարհի կենաց համար պիտի տամ :

*53 Հրեաներն իրարու հետ կը վիճէին ու կ'ըսէին . « Ի՞նչպէս աս մեզի կրնայ տալ իր մարմինն ու տեւլու » : 54 Կ'ըսէ անոնց Յիսուս . « Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ մինչեւ մարդոյ Որդւոյն մարմինը չուտէք ու անոր արիւնը չխմէք , ձեր անձերուն մէջ կեանք պիտի չունենաք :

հոսցէն կերողները մեռան . իսկ այն հոցը որ ես կուտամ , աշխարհիս կեանք է , որմէ ուտողը պիտի չանօթենայ յաւիտեան : Այսպիսի խօսք մը անօթի ժողովրդեան մը ո՛րքան փաղաքշելի և ո՛րքան խրախուսական , որ իսկոյն կ'աղաղակէ . « Տէր . տուր մեզի այդ հոցը : Ապաքէն չունէին նորա փափաք երկնաւոր հոցին , այլ այն հոցին որ մարմինը սնուցանողն էր :

35 Բայց որպէս զի Յիսուս ցոյց տայ Սէ ինքն է կենդանի և կենսատու հոցը , և Սէ իւր վարդապետութիւններն էին կերակուր յաւիտենապէս սընընդարար միայն հոգւոյ , կը յաւելու . « Ես եմ հոցն կենաց : Այս խօսքըն էր կնիք իւր բոլոր վարդապետութեանց , վասն զի Յիսուս իբր հաց իւր մարմինը տալով և իբր նեկտար անմահութեան իւր արիւնը տալով պիտի կեանք տար աշխարհի , նոր ու երջանիկ կեանք : Մարդիկ ալ պիտի չանօթենային և պիտի չմարաւնային , վասն զի կենաց հոցն ու ջուրը աւետարանով պիտի ուտէին ու խմէին և ապրէին յաւիտեան :

36-37. Յիսուս բացարձակապէս պատարակելու համար Հրեայներուն

55 Ով որ իմ մարմինս կ'ուտէ ու արիւնս կը խմէ, յաւիտեանական կեանք ունի, եւ ես զանի վերջին օրը պիտի յարուցանեմ: 56 Որովհետեւ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է: 57 Ով որ իմ մարմինս կուտէ ու իմ արիւնս կը խմէ, իմ մէջ կը ճնակի, ես ալ անոր մէջ: 58 Ինչպէս կենդանի Հայրը զիս զրկեց, եւ ես Հօր համար կենդանի եմ. եւ ով որ զիս կուտէ, եւ ան ինծի համար պիտի ապրի: 59 Երկինքէն իջած հացն այս է. ոչ ինչպէս կերտան ձեր հայրերը մանանան ու մեռան. ով որ այս հացը կուտէ, յաւիտեան պիտի ապրի»:

*60 Այս ըսաւ ժողովրդանոցին մէջ, երբ Կափառնայու մի մէջ կը սորվեցնէր: 61 Եւ անոր աշակերտներէն շատերն երբ լսեցին, կ'ըսեն. «Խիստ է այդ խօսքը. ո՞վ կրնայ ատոր լսել»: 62 Երբ Յիսուս գիտցաւ իր անձին մէջ թէ անոր համար իր աշակերտները կը տրանջեն, կ'ըսէ անոնց. 63 «Ա՛յդ ձեզ կը գայթակղեցնէ: ուրեմն թէ որ մարդոյ Որդին տեսնէք, որ ելլէ, ուր էր առաջ: 64 Հոգին կենդանարար է, մարմինն օգուտ չընէր. խօսքը՝ որ ես ձեզի խօսեցայ, հոգի եւ կեանք է: 65 Հապա կան ձեր մէջ մէկ քանիններ՝ որ չեն հաւատար» . որովհետեւ Յիսուս սկիզբէն գիտեր, անոնք ով էին որ չեն հաւատար, եւ ով է ան, որ զանի պիտի մատնէ:

յանձնապատանու թիւերը, կը յայտնէ Սէ Հայր Աստուած կարող է հոգեւորապէս փրկել միայն զանոնք, որք խոնարհութեամբ կը հաւատան իրեն:

38. Եւ ինքն Յիսուս եկած էր ոչ Սէ իւր անձին փառացը համար, այլ Հայր Աստուծոյ, ուստի կը յաւելու. «Ես երկնքէն իջայ, ոչ Սէ իմ կամքս կատարելու, այլ անոր, որ զիս զրկեց»:

39-40. Կը կրկնէ յարուժեան վարդապետութիւնը:

41-42. Կը գայթակղին Հրեայք Յիսուսի ազատահմը յիշելով:

43-44. Մտրդ ազատ է Քրիստոսն ընդունելի կամ ոչ, միայն Սէ Հայր գիտէ Սէ ո՞վ գալու է առ Քրիստոս:

45. (ԵՄ. ԵԴ. 13):

46. (Ա. 18, Գ. 13, Ը. 38):

47-52. Կը պնդէ Սէ ինքն է կենաց հացը և Սէ այդ հացն է իւր մարմինը, որ պիտի ընէր պատարագ ի փրկութիւն աշխարհի:

53-59. Ահա Յիսուս կը շեշտէ Սէ իւր մարմինը պիտի զոհէր և իւր ա-

66 Եւ կ'ըսէր. «Անոր համար ըսի ձեզի թէ մէկը չկրնար գալ ինձի, թէ որ անոր իմ Հօրմէս տրուած չըլլայ»:

*67 Ասոր վրայ անոր աշակերտներէն շատերն ետ գացին, եւ ալ անոր հետ չէին պարտեր: 68 Աշակերտներուն կ'ըսէ. «Միթէ դուք ալ կ'ուզէք երթալ»: 69 Սիմոն Պետրոս անոր պատասխան տուաւ. «Տէր, որո՞ւ երթանք, յաւիտենական կեանքի խօսքեր ունիս դուն»: 70 Եւ մենք հաւատացինք ու ճանչցանք թէ Աստուծոյ Որդին՝ Քրիստոսը դուն ես»: 71 Յիսուս պատասխան տուաւ անոնց. «Ես ձեզ՝ տանիւրկուքդ չընտրեցի». եւ ձեր մէջէն մէկը սատանայ է»: 72 Եւ կ'ըսէր Սկարիօվտացի Սիմոնեան Յուզային համար, որովհետեւ ան պիտի մատնէր զանի եւ տասներկուքէն մէկն էր:

Ք Լ Ա Ս Ի Ե

1 Եւ ասկէ ետքը Յիսուս Գալիլիայի մէջ կը պտըտէր, վասն զի չէր ուզեր Հրէաստանի մէջ պտըտիլ, որովհետեւ Հրեաները զանի սպաննել կ'ուզէին:

*2 Եւ Հրեաներուն տաղաւարահարի տօնը մօտ էր:

րիւնը պիտի թափէր: Կատարեց այս խորհուրդն ի խաչին, նախապէս հաղորդ ընելով իւր մարմնոյն և արեան իւր աշակերտներն ի վերնատան: Պիտի մեռնէր նա, այլ կենդանի պիտի մնար և կեանք պիտի ըլլար իւր ճշմարիտ հաւատացեալներուն, անոնց միշտ իւր մարմնէն ու արիւնէն տալով:

60-66. Նոյն իսկ իրեններէն շատեր երբ կը լսեն այս օրինակ բարձրագոյն վարդապետութիւն մը, կը զայնուզին, վասն զի նոքա չէին կրնար ըմբռնել և դեռ հատուկ չէին ի հուատու, ուստի Յիսուս կը յաւելու թէ հոգեւորն է միայն յաւիտենապէս օգտակար, մարմնակոսն է անցաւոր և անօգուտ: Թող որ գիտէր Յիսուս նոցա սրտին գաղտնիքը, ուստի երբ նոքա իրմէն կը մեկնին, և երբ կ'ըսէ միւսներուն. «Ե՛ւ դուք կամի՞ք երթալ»:

67-72. Կը լսէ Պետրոսի դաւանութիւնը, և կը գուշակէ Յուզայի մատնութիւնը:

2. Տաղաւարամարաց Տօն (տես 37 համարի մեկնութիւնը):

3-5. Թէ ունէր Քրիստոս եղբայրներ (Մատթ. ԺԳ. 55): Սոքա դեռ հա-

*3 Անոր եղբայրներն անոր կ'ըսեն . « Հոսկէ Հրէաստան գնա , որ քու աշակերտներդ ալ քու գործերդ տեսնեն որ կ'ընես » .
 4 Որովհետեւ չկայ մէկը որ դադարուկ բան ընէ , եւ ինք ուղէ յայտնի ըլլալ . քու անձդ աշխարհի յայտնէ » .
 5 Որովհետեւ անոր եղբայրներն ալ անոր չէին հաւատացած :
 *6 Յիսուս կ'ըսէ անոնց . « Իմ ժամանակս ամէն ատեն պատրաստ է :
 7 Աշխարհ ձեզ չկրնար ատել , բայց զիս ատեց , վասն զի ես անոր համար կը վկայեմ թէ իր գործերը չար են :
 8 Ի ուք այն տօնը գացէք , ես այն տօնը չեմ երթար , որովհետեւ իմ ժամանակս լցուած չէ » .
 9 Այս երբ ըսաւ , ինք նորէն Գալիլեա մնաց :
 10 Երբ անոր եղբայրներն ելան , յետոյ ինք ալ տօնին ելաւ , ոչ յայտնի , հապա ծածուկ :
 *11 Եւ տօնին ատեն Հրեայները զանի կը վինտոէին ու կ'ըսէին . « Ո՛ւր է ան » :
 12 Եւ ժողովրդին մէջ շատ փափառք կար :
 Կէտը կ'ըսէր թէ « Աղէկ ժող է » . ուրիշները կ'ըսէին . « Ոչ , հապա ժողովուրդը կը մոլորեցնէ » :
 13 Եւ մէկը անոր վրայով համարձակ չէր կրնար խօսիլ Հրեաներէն վախու՛ն համար :

ւատացած չէին , այլ յետոյ այո (Գործք. Ա. 14: Ա. Կորնթ. Թ. 5) , Կ'եռեւի Սէ սորս կը փափաքէին որ Յիսուս ըստ ականկալուՍեան հրէական ազգին վերահաստատէ իր Մեսիայ իւր Իսրայելեան ՍագաւորուՍինը , որով իրենք եւս իրր ազգական օգտուէին . փառասէր փափար :

6-10. Յիսուս չուզեց նոցա հետ երթալ նոցա փառասիրական խորհուրդը մերժած լինելու համար : Նորս Սէեւ ազգական , ինչպէս մենք Սէեւ քրիստոնեայ , երբ լոկ աշխարհասէր տածենք տենչ ի սրտի , արժանի չենք ընկերակցուՍեանն Քրիստոսի : Յիսուսի պէտք չկար հրապարակաւ երթալու , ուստի զնաց յետոյ տուանձին և զինքն անդէն յայտնեց և հրապարակաւ քարոզեց տաճարին մէջ (տես և 14:53) :

11-13. Ուրեմն ժողովրդեան մէջ կային զՅիսուսէ բարի վկայողներ , կային և չվկայողներ . սակայն որոշ կարծիք յայտնելէ առ ահի կ'զգուշանային , սպասելով անշուշտ Սէ ինչ պիտի ըլլայ ազգին զխաւորներուն կարծիքը :

14-15. Արդարեւ Հրէից մէջ մեծ խնդիր էր , Սէ Յիսուս այն գերագոյն շնորհն որով կը վարդապետէր բարձր իմաստուՍեամբ , կը մեկնէր զգիրս ուղիղ , կը քարոզէր անաչառ . ուստի էր Գիտէին Սէ նա Հրէական և ոչ մէկ դպրոցի աշակերտ էր , և Սէ ոչ իսկ մէկ դպրոցի դաւանած վարդապետական գաղափարաց կամ բարոյական սկզբանց հետեւող կամ շատագոյ՛

*14 Եւ երբ աօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը գնաց ու կը սորվեցնէր: 15 Հրեաները կը զարմանային ու կ'ըսէին, «Աս ինչպէս գիրքերը գիտէ, որովհետեւ ընտուռած չէ:» *16 Յիսուս անոնց պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա անոր որ զիս ղրկեց:» *17 Թէ որ մէկը կ'ուզէ անոր կամքը ընել, թող իմ վարդապետութիւնս գիտնայ, արդեօք Աստուծմէ է, թէ ինչ կը խօսիմ:» *18 Ով որ իրմէ կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ, բայց ով որ անոր փառքը կը փնտռէ, որ զանի ղրկեց, ան ճշմարիտ է. եւ անոր մէջ անիրաւութիւն չկայ: 19 Մովսէս ձեզի օրէնքը չըտուաւ, եւ ձեռնէ ոչ մէկը օրէնքը կը պահէ: 20 Ինչու զիս սպաննել կ'ուզէք:» Ժողովուրդը պատասխան տուաւ ու կ'ըսէ, «Քու մէջը դեւ կայ, ո՞վ կուզէ քեզ սպաննել:» 21 Յիսուս անոնց պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Գործ մը գործեցի, եւ ամէնքդ զարմացած էք:» 22 Անոր համար Մովսէս ձեզի թշտութիւն տուաւ, որովհետեւ ոչ թէ Մովսէսէն էր, հապա հայրերէն. եւ շաքաթ օրը

էր, այսինքն Յիսուս ոչ թէ ժիայն Փարիսեցւոց ու Սադուկեցւոց նման ապանդուորաց զգրոցներուն չէր պատկաներ, այլեւ ոչ իսկ այն զպրօցներուն, որոցմէ կ'ելնէին յայնժամ զգիրք և բահանայք:

16. Այլ առկայն Յիսուս հոգ չէր ըներ, թէ մարդիկ իւր վրայ չուէին քաղուստն գիտնականի և ձե՛ծ վարդապետի համարուած: Նա գիտէր թէ իւր գիտութիւնն ի գերուստ է, գիտէր թէ մարդկային իմաստութիւնն անփառող էր ժողովուն առաջնորդել ի կեանս, ուստի ինքն իսկ կը պնդէր թէ եթէ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս:»

17. Թւ ցոյց տալու համար թէ իւր վարդապետութիւնն է ժիայն ճշմարիտ և փրկարար, կը յաւելու. «Գիտոսցէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ իցէ արդեօք, եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմս:»

18-23. Յետոյ Յիսուս կը յայտարարէ թէ ինքն եկած է յաշխարհ, ոչ թէ իւր տե՛ճին փառք մուրալու, այլ աշխարհս փրկելու և Աստուծոյ փառքըն ի մարդիկ վերահաստատելու համար, և զի գիտէր թէ կային մոլեռանգներ, որք զայմակղած էին իւր շաքաթ օրերու մէջ բժշկութեան զործեր ընելուն վրայ, ուստի և մինչև իսկ զինքն սպաննելու խորհուրդն սկսած էին յղանալ, և ցոյց տալու համար թէ ինքն է սրտազտ տաննայնի, և աներկիր յամենայնէ, յանդիմանական իմն ձեւով կը ձայնէ առ ժողովուրդն. «Թի խնդրէք զիս սպանանել:» Յիսուսի Յշնամիջ փոխանակ սարսափահար

մարդը կը թլփատէք, 23 Ռւրեմն թէ որ շարաթ օրը մարդ թլփատութիւն կ'առնու, որ Մովսէսի օրէնքը չլուծուի, ինծի դէմ բարկացած էք որ շարաթ օրը ամբողջ մարդ մը բռնկեցի: *24 Աշտուութեամբ մի դատէք, հապա ուղիղ դատաստան ըրէք »:

*25 Այն Երուսաղեմացիներէն մէկ քանիներ կ'ըսէին. « Ա.ս ան չէ որ սպաննել կ'ուզէին 26 Եւ ահա յայտնի կը խօսի, եւ անոր բան մը չեն ըսեր. Կարելի է իշխաններն ալ գիտցան թէ աս է Քրիստոսը: 27 Բայց աս գիտնէք ուրկից է. իսկ Քրիստոսն երբ գայ, մէկը չգիտէր, թէ ուսկէ է »: *28 Յիսուս տաճարին մէջ աղաղակեց, կը սորվեցնէր ու կ'ըսէր, « Եւ գիտալ գիտէք, ուսկէց ալ եմ գիտէք, եւ ես ինծէն չեմ եկած, այլ ան որ գիտ դըրկեց, ճշմարիտ է, որ դուք չէք գիտեր: 29 Ես զանի գիտեմ, որովհետեւ ես անորմէ եմ եւ ան գիտ զրկեց »: 30 Կ'ուզէին զանի բռնել ու անոնց ձեռքէն ելաւ, ու մէկն անոր ձեռք չմխեց, որովհետեւ անոր ժամանակը

լուելու՝ կը ստեն, լրբուծեամբ պատասխանելով. « Դեւ զոյ ի բեզ, հով խնդրէ զբեզ սպանանել »: Ետքս կը գայժակդէին, Թէ նա շարաթը կը պղծէ բռնկութիւններ ընելով, մինչդեռ իրենք ի շարաթու Սլփատութիւն կ'ընէին: Հրէից այս նախանձայուզութիւնն կարի իմն ծրծագելի էր. զի Յիսուս ուրիշ շատ անգամ հաստատած էր Թէ բարերարելու համար բնաւ Աստուծոյ առջեւ հանգստեան օր չկայ:

24. Օրէնքին տառին հետեւելով կը զործէին. մինչդեռ բոլոր օրէնքներուն բովանդակութիւնն է սէր: Յիսուս առ գուժ սիրոյն կը բռնկէր:

25-27. Յիսուսի համարձակութասուծեմէն շատեր Թէեւ զարմացան, այլ գիտնալով Յիսուսի երկրուոր ծագումը, մանաւանդ Գալիլեացիութիւնը, կը տարակուսէին. վասնզի աւանզութիւն կար Թէ Մեսիա Թէեւ պիտի ծնի, այլ առ ժամանակ մի պիտի աներեւուծանայ, և ապա պիտի գայ յանկարծ և անպերով ու նորատեսիլ նշաններով:

28-30. Յիսուս կը հասկըցնէ Թէ քանի որ նորա չէին գիտեր իւր Հայրը, առ նա հաւատք ու սէր չունենալով և անհասգանդ լինելով Մուրբ-գրոց, ուրեմն կարելի պիտի չըլլար անոնց զիտնալ Թէ ինք քուռն իսկ հերկէ է:

- 32. Կը կատարին Փարիսեցիք և Յիսուսը ձերբակալելու փորձ կ'ընեն:
- 33. Կ'ակնարկէ իւր մահը:
- 34. Թէ մէկ չար և անհաւատ արժանի է երթալ հոն, ուր Քրիստոս կայ իւր փառօր:

հասած չէր: 31 Եւ ժողովուրդէն շատեր հաւատացին, ու կ'ըսէին. «Քրիստոսն երբ գայ, միթէ աւելի նշաններ պիտի ընէ, որքան որ սա կ'ընէ»:

*32 Եւ Փարիսեցիները լսեցին ժողովրդեան տրտունջը անոր վրայով. եւ քահանայապետներն ու Փարիսեցիները սպասաւորներ զրկեցին որ զանի բռնեն: *33 Յիսուս կ'ըսէ. «Քիչ ժամանակ դեռ ձեզի հետ եմ, եւ կ'երթամ անոր որ զիս զրկեց»: *34 Ձիս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք. եւ ուր ես երթամ, դուք չէք կրնար գալ»: *35 Հրեաներն իրարու կ'ըսէին. «Բայց ատ ո՛ւր պիտի երթայ, որ մենք զանի չգտնենք. միթէ հեթանոսներուն մէջ ցիրուցան եղողներո՞ւն պիտի երթայ եւ հեթանոսներո՞ւն պիտի սովորեցնէ»: 36. Ի՞նչ է այն խօսքը, որ ըսաւ. «Ձիս պիտի փնտռէք եւ պիտի չգտնէք. եւ ուր ես երթամ, դուք չէք կրնար գալ»:

*37 Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կը կենար, կ'աղաղակէր ու կ'ըսէր, «Թէ որ մէկը ծարաւ է, ինձի թող գայ ու խմէ»: *38 Ով որ կը հաւատայ ինձի, ինչպէս գիր-

35-36 Հրեայք չըմբռնեցին Յիսուսի այս խօսքերը և կարծեցին թէ Հրեայստանէն դուրս պիտի երթայ, քարոզէ առ ցանուցիր Հրեայս ի հեծանոս աշխարհս:

37: Յիսուս տօնի վերջին մեծ օրը ժողովրդեան կը խօսի. « Ով որ ծարաւ է, թող գայ ինձ ու խմէ»: Տաղաւարահարաց տօնն էր այս, որ կը կատարուէր ի յիշատակ Հրեայ ազգին քառասնամեայ պանդխտութեանն յանապատին: Բոլոր Հրեայներն այս տօնի ուժ օրերուն մէջ պարտուոր էին բնակիլ տաղաւարներու կամ հիւղերու տակ, զորս կը շինէին ծառի ռոտերէ, զարդարելով միանգամայն արմաւիճիի, ձիթենիի և մրտենիի ճիւղերով: Կը կատարուէր այս տօն Թշրի ամսոյ ուժէն սկսելով: Այս տօն միանգամայն էր նշանակ շնորհագրարտութեան առ Աստուած ցորենի հունձքին համար, ուստի և կոչուէր «Տօն հունձքի»: Ժողովրդեան համար երկու խոյ և տասնըչորս գառներ տօնի ամէն օրուան մէջ կը զոհուէին: Այս զոհերէն զատ՝ առաջին օրը կը զոհուէր տասներէք եգ, երկրորդ օրը՝ տասներկու, երրորդ օրը՝ տասնըմէկ, չորրորդ օրը՝ տասը, հինգերորդ օրը՝ ինը, վեցերորդ օրը՝ ուժ, եօթներորդ օրը՝ եօթը, իսկ ուժերորդ օր՝ մէկ եգ, մէկ խոյ և եօթը գառներ:

Բոլոր ժողովուրդն ամէն առաւօտ մեծ հանգէսով և նուազարաններով քահանայի մը առաջնորդութեամբ կ'երթար յաւազանն Սէլովամու, և որ.

քերն ալ կ'ըսեն . «Կենդանութեան ջուրի գետեր անոր որովայնէն պիտի բղխին» : *39 Այս կ'ըսէր Հոգւոյն համար , որ պիտի ընդունէին անոր հաւատացողները . որովհետեւ Հոգին չէր որսած , վասն զի Յիսուս փառաւորուած չէր : *40 Ժողովրդէն մէկ քանինքն երբ այս խօսքը կը լսէին , կ'ըսէին . «Ճշմարիտ մարգարէն աս է» . 41 Ուրիշները կ'ըսէին . «Քրիստոսն աս է» . իսկ կէսերը կ'ըսէին . «Միթէ Յիսուս Գալիլեայէն պիտի գայ» : 42 Գիրքերը չե՞ն բտեր թէ Վաւիթի զաւակէն եւ Բեթղէհեմ գիւղէն , ուր էր Դաւիթ , Քրիստոսը պիտի գայ» : 43 Եւ անոր համար ժողովրդեան մէջ երկպառակութիւն եղաւ : 44 Եւ անոնցմէ մէկ քանինքն զանի ուզեցին բռնել , սակայն մէկն անոր ձեռք չմխեց :

*45 Եւ նորէն սպասաւորները քահանայապետներուն ու Փարիսեցիներուն եկան , եւ անոնք անոնց կ'ըսեն . «Ինչո՞ւ զանի հոս չբերիք» : 46 Սպասաւորները պատասխան տուին ու կ'ըսեն , «Մարդ երբէք այնպէս չխօսեցաւ ինչպէս այն մարդը» : *47 Փարիսեցիները պատասխան տուին

չափ հնար էր . իւրաքանչիւր որ կը ջանար զոնէ պուտ մը ջուր խմել : Հոն ի Սելւովամ բարձրաձայն կը լսուէր Եսայի Մարգարէի սա խօսքը . «Ո՛վ բոլոր ծարուածներ , ջուրերուն եկէք . ուրախութեան ջուրը առէք փրկութեան աղբիւրներէն» . Քահանան ոսկեղէն ամանով մը ջուր սուռլով կը տանէր տաճարը ժողովրդեան խնդութեան ազալակներով : Հոն երբ նա ջուրը կը թափէր ողջակէզներուն վրայ , ուրիշ քահանայ մը զինի կը թափէր ի ձայն Հալլելի Սաղմոսաց (ՃժԳ—ՃժԸ) : Յայնժամ ժողովուրդը զոհաբանութեամբ կը յիշէր Սէ ինչպէս Աստուած երբեմն անապատին մէջ սպառաժէն ջուր խմցուց Իսրայելի , և այժմ կ'ազօթէր որ նոյն Աստուածն իրենց երկնքէն ջուր շնորհէ , այսինքն . անձրեւներու առատութիւն տայ :

38. Ուրեմն Քրիստոս ականարկելով ժողովրդեան այս արարողութիւնը , և ցոյց տալու համար Սէ ինչպէս երբեմն խօսեցաւ Սէ ինքն է հաց կենաց , այս անգամ կը յայտարարէ Սէ ինքն է միսնգամայն ջուր կենաց , և վկայութիւն կը բերէ Սուրբ-Գրքէն (Ք. Սր. ԺԸ . 15 : Առակք ԺԸ . 4 : Ես. ԺԲ . 3 : ԽԴ . 3 : Եղ. 3 : ԵՄԸ . 11 : Եզեկ . ԽԷ . 1-12 : Զաք. ԺԴ . 8) :

39. Այս եղաւ Պենտէկոստէի օրը (Գործք. Բ) :

40-44. Քրիստոսի այս բարոզութիւնն որքան որ ազդեցիկ եղաւ , այլ զի Գալիլեացի կը կարծուէր նա , ուստի վարսնում և երկպառակութիւն կը յաչորդէին իրարու :

եւ կ'ըսեն . « Միթէ զո՞ւք ալ մոլորեցաք : 48 Միթէ իշխաններէն կամ Փարիսեցիներէն մէկը անոր հաւատաց : 49 Բայց այն խաժամուժ մարտին որ օրէնքը չգիտեր , եւ նզովեալ են » : 50 Նիկողեմոս անոնց կ'ըսէ , որ անոր եկած էր առաջ գիշեր ատեն , եւ անոնցմէ մէկն էր . 51 « Միթէ մեր օրէնքը կը դատեն մարդը , թէ որ առաջ անորմէ չլսեն , կամ գիտնան ինչ կ'ընէ » : *52 Պատասխան տուին անոր ու կ'ըսեն . « Միթէ դուն ալ Գալիլեացի՞ ես . քննէ ու տես , որ Գալիլեայէն մարգարէն չելլէր » : 53 Եւ ամէն մէկն իր տեղը գնաց :

Պ Լ Ո Ւ Ծ Ը .

*1 Իսկ Յիսուս Զիթենեաց լեռը գնաց : 2 Եւ առաւօտուն նորէն տաճարն եկաւ , եւ բոլոր ժողովուրդն անոր կուգար , եւ նստելով կը սովբեցնէր անոնց : 3 Դպիրներն ու քահանայապետները եւ Փարիսեցիներն անոր կի՛ն մը բերին շնութեան մէջ բռնուած . եւ զանի առջեւը կեցնե-

45-46 Զեռնուծայն կը դառնան սպասուորք այսինքն Հրեայ ոստիկանք տաճարին , եւ Թէ քահանայապետներուն եւ Թէ ծերակուտին (Սանեարիոն) առջեւ վկայեցին Թէ չէ եղած մարդ մը որ Յիսուսի պէս խօսած ըլլար կամ խօսէր , այսինքն ոչ իսկ հին մարգարէներէն լսուած էին այն տեսակ գերընտիր խօսքեր կամ վարդապետութիւններ :

47-51. Փարիսեցիներն իսկոյն սաստեցին որ լռեն և դատապարտութեան վճիռ պիտի արձակէին Յիսուսի համար , եւ Թէ Նիկողեմոս չմիջամտէր և չըսէր . « Միթէ մեր օրէնքը կը ներէ դատապարտել մէկը , առանց զանի կանխաւ մտիկ ըրած ըլլալու » :

52-53. Ժողովականք պատասխանեցին , « Միթէ դուն ալ Գալիլիայէն ես . քննէ և տեսի՛ր Թէ այդ զաւառէն մարգարէ չելլեր » : Սուտ էին նորա , վասն զի Յովնան և ուրիշ մարգարէներ Գալիլեացի էին :

1-14. Ամբողջ այս հպարտածն ի հին ձեռագիրս կամ աստ , կամ ուրոյն ալլուր է . 36 համարէն յետոյ , կամ ի վախճանի Ղուկասու աւետարանի կայ դրուած : Ալ սովայն Եկեղեցին երբէք չտարակուսեցաւ այս հպարտածի հարագտութեանը վրայ : Եւսեբիոս կը պատմէ ի գիրս Պապիա-

լով : 4 կ'ըսեն անոր . « Վարդապետ , այս բռնուած կ'ինն' ինք յայտնի շնացած է : 5 Եւ Մովսէսի օրէնքը մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել . հիմա դու ի՞նչ կ'ըսես անոր համար » : *6 Այս կ'ընէին զանի փորձելու համար , որ անոր վրայով ամբաստանութիւն ունենան : *7 Բայց երբ ստիպեցին , անոր հարցնելով ; Յիսուս վար նայելով գետնի վրայ մատով կը գրէր , վեր նայելով կ'ըսէ անոնց . « Ձեր մէջէն անմեղն՝ ան առաջ ատոր վրայ թող քար ձգէ » : 8 Եւ նորէն վար նայելով գետնի վրայ կը գրէր : 9 Եւ երբ լսեցին , մի առ մի կ'ելլէին՝ առաջիններէն սկսելով մինչեւ վերջինները . եւ մինակ Յիսուս մնաց , եւ կ'ինն անոր առջեւ կը կենար : *10 Յիսուս անոր պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Կին դու , ո՞ւր են , մէկը քեզ չդատապարտեց » : 11 Եւ կ'ըսէ . « Ոչ , Տէր » . եւ Յիսուս կ'ըսէ . « Ես ալ քեզ չեմ դատապարտեր . զնա ասկէ ետքը մեղք մի գործեր » :

*12 Նորէն Յիսուս անոնց խօսեցաւ ու կ'ըսէ . « Այլասարհի լոյսն ես եմ . ով որ իմ ետեւէս կուգայ , խաւարի մէջ պիտի չքալէ , հապա կենաց լոյսը պիտի ընդունի » : *13 Փարիսեցիներն անոր կ'ըսեն . « Դու քու անձիդ համար կը վկայես , եւ քու վկայութիւնդ ճշմարիտ չէ » : 14 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց , « Թէպէտ ես իմ անձիս համար կը վկայեմ , իմ վկայութիւնս ճշմարիտ

սայ (Համարարբառ Աւետարանի) որ սպրեցաւ երկրորդ դարու առաջին կիսուն մէջ , կը վկայէ առ այս :

1.5. Չար էր սոցս նպատակ , վստն գի եթէ Մովսէսի օրէնքը ճշդիւ գործադրել ուզէին , բերելու էին նաեւ շնացող մարդը (Ղեւտ . Ի . 10 : Բ . Օր . ԻԲ . 22) : Չարամտութեամբ ըրին , որովհետեւ եթէ Յիսուս ըստ իւր գծոտ բնաւորութեան ներքէ կնոջ , պիտի հուշակուէր անոնցմէ իբր հրէական կրօնի թշնամի սուտ Մեսիայ . իսկ եթէ դատապարտէր կինը մահուան , պիտի ունենային առիթ ամբաստանութեան առ պետութիւնն Հռովմէական իբր սպստամբ և իւովարար , գի լայնժամ Հրեայք չունէին անկախ իշխանութիւն :

6. Ի՞նչ կը գրէր . — Գրեթէ բոլոր հին ու նոր մեկնիչներ կը կարծեն թէ կը գրէր իւրաքանչիւրին մեզրը : Կը գրէր տալու համար թէ կնոջ և թէ միւսներուն ժամանակ խղճահարութեան և միանգամայն ի յանդիմանութիւն նոցա որք իրենք մեղաւոր ըլլալով հանդերձ մեղաւորի մը դատա-

է. որովհետեւ գիտեմ ուրկէ եկայ եւ ուր կ'երթամ. բայց դուք չէք գիտեր ուրկէ կուգամ կամ ուր կ'երթամ: *15 Դուք մարմնոյ համաձայն կը դատէք, ես եւ ոչ մէկը կը գատեմ. *16 Թէեւ գատեմ մէկը, իմ դատաստանս ճշմարիտ է. որովհետեւ մինակ չեմ, հապա ես եւ զիս զրկող Հայրը: *17 Եւ ձեր օրէնքին մէջ ալ գրուած է թէ «Երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է»: *18 Ես եմ որ ինծի համար կը վկայեմ, եւ ինծի համար կը վկայէ Հայրն, որ զիս զրկեց»: *19 Անոր կ'ըսէին. «Ո՛ւր է քու Հայրդ»: Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Ոչ զիս գիտէք եւ ոչ ալ իմ Հայրս. թէ որ զիս գիտնայիք, եւ իմ Հայրս ալ գուցէ գիտնայիք»: *20 Այս խօսքերը խօսեցաւ զանձատուռնին մէջ, երբ հոն տաճարին մէջ կը սովորեցնէր. եւ մէկը զանի չբռնեց, որովհետեւ անոր ժամանակը հասած չէր:

*21 Յիսուս նորէն անոնց կ'ըսէ. «Ես կ'երթամ, եւ զիս պիտի փնտռէք, եւ ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. որովհետեւ ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ»: *22 Հրեաները կ'ըսէին. «Միթէ ինքնասպան պիտի ըլլայ. որովհետեւ կ'ըսէ թէ «Ուր ես կ'երթամ՝ դուք չէք կրնար գալ»: *23 Եւ կ'ըսէ անոնց. «Դուք վարէն՝ ասկէ էք, եւ ես վերէն՝ հոնկէ եմ. դուք այս աշխարհէն էք, ես այս աշ-

պարտութիւնը կը խնդրէին. ոչ ապարէն այսպիսիներն ուրիշ անգամ Յիսուս կոչեց «Չար և շնացող» (Մատթ. ԺԲ. Գ):

7-9. Ինչ ազգու դաս, և ինչ արդար վճիռ առ այնպիսիս, որք ի փոյժ և ի խիզախ են ուրիշներու մեղքը տեսնելու և ոչ երբէք իրենցը Յիսուսի պատասխանը միայնդամայն էր ըստ օրինի, վասն զի վկայն առաջին բարը նետելու էր (Բ. Օր. ԺԷ. 7): Եթէ նորս էին վկայ կնոջ շուրճեան և էին զերծ այդ օրինակ մեղքէ. ուրեմն կրնային բարկոծել. չորին. ուրեմն էին մեղուոր, և Յիսուս այս խօսքն ըսելով Օրէնքին ուեկի զործադրութեան հետեւեցաւ, քան ոչ:

10-11. Յիսուս մեղուոր կնոջ փոքր ինչ պատիժ ըլլալու համար յանդիմանութիւն մը անգամ չընէր, վասն զի կինն արդէն բուսական պատժը և՛ էր, հրապարակաւ խայտառակութիւն, բերուիլ դատուորի տողեւ վկայներով հանդերձ, զոգանար սպասել վճռին համար, չէ՞ն այս ամէնը բուսական պատիժ, ուստի Յիսուս կը ներէ. միայն Սէ պատուիրելով կնոջ որ այլ եւս չմեղանչէ:

խարհէն չեմ: 24 Բայց ըսի ձեզի թէ «Ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. որովհետեւ թէ որ չհաւատաք թէ ես եմ, ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք»: 25 Կ'ըսեն անոր. Գուցն ո՞վ ես». Յիսուս կ'ըսէ անոնց. «Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ: 26 Շատ բան ունիմ ձեզի համար խօսելու եւ դատելու. բայց ով որ զիս զրկեց, ճշմարիտ է. եւ ես ինչ որ անորմէ լսեցի, զայն աշխարհի մէջ կը խօսիմ»: 27 Եւ չգիտցան թէ Հօրը վրայով կ'ըսէր անոնց:

*28 Յիսուս կ'ըսէ անոնց. «Երբ մարդոյ Որդին բարձրացնէք, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ. եւ ես ինձէն բան մը չեմ ընել, հապա ինչպէս ինձի իմ Հայրո սովորեցուց, զայն կը խօսիմ: 29 Եւ որ զիս զրկեց, ինձի հետ է. ինձի մինակ չթողուց, վասն զի ես միշտ անոր հաճելին կ'ընեմ»: 30 Երբ այս խօսեցաւ շատեր անոր հաւատացին:

31 Յիսուս հաւատացող Հրեաներուն կ'ըսէր. «Թէ որ դուք իմ խօսքերուն մէջ կենաք, իմ ճշմարիտ աշակերտներս էք. 32 եւ ճշմարտութիւնը պիտի ճանչնաք եւ ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ». *33 Պատասխան տուին անոր ու կ'ըսեն. «Արրահամու զաւակ ենք, եւ երբէք մէկու մը չծառայեցինք. ինչպէս կ'ըսես թէ ազատ պիտի ըլլաք»: *34 Յիսուս անոնց պատասխան տուաւ ու կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ այն ամէնն՝ ով որ

12. Քրիստոս էր լոյս. բայց ոչ տաճարի գուլթին մէջ եղող. իբր յիսուսն կանգուն բարձր. երկու խոշոր աշտանակներուն արձկած լոյսին նման, որ կը լուսաւորէր տաճարի գուլթին ու դուրսը և էր ի յիշատակ հրեղէն սրւնին որ իսրայելի առաջնորդեց անապատին մէջ:

13-14. Եթէ ուզէին կրնային գիտնալ թէ ինքն ճշմարիտ է. բանի որ կը հրաշագործէր, ուրեմն էր երկնքէն:

15. (Գ. 17. է. 24):

16-18. Իւր գործերն ու Հօր վկայութիւն բաւական էին (Բ. Օր. Ժէ. 6, ԺԹ. 15):

19. (Ա. 18: ԺԳ. 7-9):

21. (է. 34). Մեղաց մէջ մեռնելով կը փակուէր յուսոյ դուռը: Ա'լ անհրնար էր դարմանը (Ղուկ. ԺԶ. 26):

22. (է. 35). Տխմար մտածութիւն նոցա:

23. (Գ. 31-33):

մեղք կը գործէ, մեղքին ծառան է: *35 Եւ ծառան յաւիտեան տան մէջ չկենար, բայց որդին յաւիտեան կը կենայ: 36 Ուրեմն թէ որ որդին ձեզ ազատէ, ճշմարտիւ ազատ պիտի ըլլաք: *37 Գիտեմ որ Աբրահամի զաւակ էք, բայց կ'ուզէք զիս սպաննել, որովհետեւ իմ խօսքս տեղ չունի ձեր մէջ: *38 Ես ինչ որ իմ Հօրս քով տեսայ, կը խօսիմ. եւ դուք ինչ լսեցիք ձեր հօրմէն, կ'ընէք»: 39 Պատասխան տուին անոր ու կ'ըսեն. «Աբրահամն է մեր հայրը». Յիսուս կ'ըսէ անոնց. «Թէ որ Աբրահամու որդիներ ըլլալիք, Աբրահամու գործերը կ'ընէիք: *40 Բայց հիմա կ'ուզէք զիս սպաննել, մարդ մը որ խօսեցայ. ձեզի ճշմարտութիւնը, ինչ որ իմ Հօրմէս լսեցի. այդ Աբրահամ չբռաւ: 41 Դուք ձեր հօր գործերը կ'ընէք». կ'ըսեն անոր «Մենք պտուտներ ենք ծնած չենք. մեր Հայրն է մէկ, Աստուած»: *42 Եիսուս կ'ըսէ անոնց. «Թէ որ ձեր Հայրն Աստուած ըլլար, անշուշտ զիս պիտի սիրէիք. որովհետեւ ես Աստուծոյ ելայ ու եկայ. եւ չէ թէ ինձէն եկայ, հապա ան զիս զրկեց: 43 Ի՞նչու իմ խօսքս չէք իմանար դուք. որովհետեւ չէք կրնար իմ խօսքիս մտիկ ընել: 44 Դուք հօրմէ՛ Սատանայէն էք, եւ ձեր հօրը բազմանքները կ'ուզէք ընել. որովհետեւ սկիզբէն մարգասպան էր, եւ ճշմարտութեան մէջ չկեցաւ, որովհետեւ անոր մէջ ճշմարտութիւն չկայ. երբ սուտ խօսի, իրեննե-

24-27. Կը կշտամբէ նա վերստին նոցա անհուատութիւնը:

28-29. (Գ. 14. ԺԲ. 33-34. ԺՁ. 32):

31-32. Ով որ Քրիստոսի խօսքերը կը պահէ, անոր կ'աշակերտի, որով ճշմարտութիւնը գիտնալով ազատ կ'ըլլայ. սուրբերն են ազատ, զի մեղք չունին:

33 Սուտ պարծանք, զի եղան երբեմն զերի յիգիպտոս և ի Բաբելոն և այժմ էին հպատակ Հռովմէական տէրութեան:

34. Բայց Յիսուսի միտքն այս էր Թէ էին ծառայ, չարին հնազանդ էին. այսինքն մոլութեան և մեղաց ծանր լուծին տակ էին:

35. (Գաղ. Գ. 21-31):

36, Մեղաց պատժէն ազատելով փրկուիլ (Ա. 12):

37. (Ե. 16. է. 1. 20. 32):

38. Չարին զուսկը չար կը գործէ, ըստ առածին՝ «չարագատ որդի զնմանութիւն հօրն բերէ»:

րէն կը խօսի . վասն զի սուտ է ան եւ անոր հայրը : 45 Բայց ես որովհետեւ ճշմարտութիւնը կը խօսիմ , ինծի չէք հաւատար : *46 Ո՞վ ձենէ պիտի զիս յանդիմանէ մեղքի համար . թէ որ ձեզի ճշմարտար կը ըսեմ , ի՞նչու ինծի չէք հաւատար : *47 Ով որ Աստուծմէ է , Աստուծոյ խօսքերը կը լսէ . եւ դուք անոր համար չէք լսեր , որովհետեւ Աստուծմէ չէք » *48 Հրեաները պատասխան տուին ու կ'ըսեն . « Աղէկ չենք ըսեր մենք թէ դուն Սամարացի ես , ու քու մէջդ դեւ կայ » : 49 Յիսուս պատասխան տուաւ ու կ'ըսէ . « Իմ մէջս դեւ չկայ , հապա իմ Հայրս կը պատուեմ , եւ զիս կ'անարգէք : *50 Ես իմ փառքս չեմ փնտռուեր . կայ , որ կը փնտռէ ու կը դատէ : *51 Ճշմարտ կ'ըսեմ ձեզի , թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մահ պիտի չտեսնէ » : *52 Հրեաներն անոր կ'ըսին . « Հիմայ գիտցանք թէ քու մէջդ դեւ կայ . Աբրահամ մեռաւ եւ մարգարէներն ալ , եւ դու կ'ըսես , « թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մահ պիտի չճաշակէ » : 53 Միթէ դուն մե՞ծ մէկն ես մեր հայր Աբրահամէն աւելի , որ մեռաւ , եւ մարգարէներն ալ մեռան . ուրիմն դուն ո՞վ կը կարծես քեզ » : 54 Յիսուս պատասխան տուաւ . « Թէ որ ես իմ անձս փառաւորեմ , իմ փառքս ոչինչ է . Հայրը կայ որ զիս կը փառաւորէ , որուն համար կ'ըսէք թէ մեր Աստ-

39. Աբրահամու սերունդէն էին , այլ ոչ նման նմին ի հաւատոս .

40-41 զԱստուած հայր կը դուռանին նորս , երբ դեւ կը խորհէին սպանել նորս Զուակը :

42-45 . Նորս չէին Աստուծմէ . այլ ստուգանայէն . քանի որ մարդասպանութիւն խորհեցան Յիսուսի անձին համար . Ես՝ Ստուտնան էր առաջին մարդասպանն , որ խարեց մեր նախածնողքն , և միշտ հետամուտ է մարդկային ազգը խարելու :

46. Իւր անձին սքառութիւնը կը յիշատակէ Քրիստոս . այս որպիսի համարձակութիւն . կը սարսափին Հրեայք , զի առաջին անգամն է որ կը լսէին բերնէ մը . Թէ մեզք չունիմ , մինչդեռ մարգարէէն լսած էին Թէ « Ո՞վ է մարդ , զի կեցցէ և մի մեղիցէ » : Ահա մեծ վկայութիւն մը Թէ էր նա բոլորովին անմեղ :

47. Ով որ Աստուծմէ չէ , նա չկարէ լինել բրիստոնեայ :

48. (Մատթ . Թ . 34 , ԺԲ . 24) .

50. (Ե . 41 , Է . 48) .

ուածն է . 55 եւ զանի չէք ճանչնար , բայց ես զանի գիտեմ . եւ թէ կրտսմ , որ զանի չեմ գիտեր , ձեզի պէս օուա կ'ըլլամ . բայց զանի գիտեմ ու անոր խօսքը կը պահեմ : 56 Ձեր հայրը Աբրահամ ցանկացաւ տեսնել իմ օրս , տեսաւ եւ ուրախացաւ » : *57 Հրեաները կ'ըսեն անոր . « Դեռ յիսուս տարեկան չես , եւ Աբրահամը տեսար » : *58 Յիսուս կ'ըսէ անոնց . « Աբրահամի ըլլալէն առաջ եմ ես » : *59 Քարեր առին որ անոր վրայ նետին , եւ Յիսուս խոյս տուաւ ու ելաւ գնաց տաճարէն :

Գ Լ Ա Խ Ե Ք .

1. Եւ երբ կ'անցնէր , ի ծնէ կոյր մարդ մը տեսաւ . *2 Եւ աշակերտները հարցուցին անոր եւ կ'ըսին . « Վարդապետ , յանցանքը որո՞ւնն է , ասո՞ր թէ իր հօրն ու մօրը , որ կոյր ծնի : » *3 Յիսուս պատասխան տուաւ . « Ոչ ատոր յանցանք կայ , ոչ ալ հօրն ու մօրը . բայց թէ Աստուծոյ գործերը յայտնի ըլլան այդ բանին մէջ : » *4 Եւ ինծի պէտք

51. (Ե. 24) :

52-56. Հրեայք կը պարծին թէ մեռած Աբրահամ և մարգարէք : Յիսուս կը պատասխանէ թէ իւր փառքն է Հօրմէն (ԺԲ. 23, ԺԳ. 31, ԺԷ. 1-5) , և թէ Աբրահամ և մարգարէք ցանկացան տեսնել իւր օրը (Մատթ. ԺԳ. 16-17, Ղուկ. Ժ. 23-24) :

57. Ոչ թէ Յիսուս էր յիսնամեայ , այլ զի չէր մինչեւ իսկ տարիքոտ որ :

58. Կը խոստովանի Յիսուս իւր աստուածուծիւնը , ուստի գայս լսելով Հրեայք կը կատողին , և որպէս Օրէնքը կը հրամայէր (Ղեւտ. ԻԴ. 16) ,

59. Քարեր կ'առնուն զանի քարկոծելու համար իբր հայհոյիչ : Այնա կ'աներեւութանայ (Ղուկ. Դ. 30) :

2. (Ղուկ ԺԳ. 1 . Ծանծազրուծիւն) :

3. Կուգան չարիք , որով և մարդ կը փառաւորուի իւր առաքինութի ի հանդէս հանելով , և թէ այդ չարիք ունին զաղտնիք , որով Աստուած փառաւորի մարդկային մտքի անհաս իւր գործերով . « Ո՞գիտաց զի Տեառն :

4 . Մահուամբ պիտի կնքէր Յիսուս իւր գործը :

անոր գործերը գործել որ զիս զրկեց, երբ դեռ օր կայ : կուգայ գիշեր, եւ մէկը չկրնար գործել : *5 Երբ դեռ աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ : *6 Այս երբ ըսաւ, գեախն թքաւ եւ թքէն կաւ շինեց, եւ կաւը կոյրին աշքերուն վրայ ծեփեց : *7 Եւ կ'ըսէ անոր. «Գնա, Սելովամի աւազանին մէջ լուա, որ Առաքեալ կը թարգմանուի» : Գնաց լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր : *8 Իսկ զրացիներն եւ որոնք տեսած էին զանի առաջուց թէ մուրացկան էր, կ'ըսէին. «Աս չէ՞ր որ կը նստէր ու կը մուրար» : կէսերը կ'ըսէին. «Ան է» : 9 Ուրիշները կ'ըսէին. «Ո՛չ, հապա անոր նման է» : եւ ինք կ'ըսէր թէ «Ես եմ» : 10 կ'ըսեն անոր «Բայց ի՞նչպէս քու աշքերդ բացուեցան» : 11 Ան պատասխան տուաւ. «Մարդ մը՝ որուն Յիսուս կ'ըսեն, կաւ շինեց ու իմ աշքերս ծեփեց ու ինձի ըսաւ. «Սելովամ գնա եւ լուացուէ» : գացի. լուացուեցայ ու կը տեսնեմ» : 12 կ'ըսեն անոր. «Ո՛ւր է ան» : կ'ըսէ անոնց. «Չեմ գիտեր» : 13 Ջանի Փարիսիցիներուն բերին, որ կոյր էր երբեմն : 14 Եւ շաբաթ էր, երբ Յիսուս կաւը շինեց, եւ կոյրին աշքերը բացաւ : 15 Նորէն Փարիսեցիներն անոր կը հարցնէին թէ «Ի՞նչպէս կը տեսնես» : եւ ան կ'ըսէ անոնց. «Իմ աշքերուս վրայ կաւ դրաւ ու լուացուեցայ եւ կը տեսնեմ» : 16 Փարիսեցիներէն մէկ քանինք կ'ըսեն. «Ան Աստուծոյ կողմէն մարդ չէ, որովհետեւ շաբաթը չպահեր» : կէսերը կ'ըսէին. «Բայց ի՞նչպէս մեղաւոր մարդը կրնայ ասանկ հրաշքներ ընել» : Եւ անոնց մէջ երկպառակութիւն կար : 17 Նորէն կոյրին կ'ըսեն. «Ի՞նչ անոր համար ի՞նչ կ'ըսես, որ քու աշքերդ բացաւ. եւ ան կ'ըսէ թէ «Մարգարէ է» : 18 Եւ Հրեաները անոր չէին հաւատար թէ կոյր էր ու բացուեցաւ, մինչեւ որ բացուողին ծնողքը կանչեցին : 19 Անոնց կը հարցնեն ու կ'ըսեն :

5. (Ը. 12):

6. Յիսուս մերժ բանիւ և մերժ դպչելով եւայլն կը հրաշագործէ, այս անգամ կաւ գործածելով և կոյրն ի Սելովամ յղելով հրաշք կ'ընէ :

7. Սելովամայ աւազանն էր ի խոր հովտի, որ ի հարաւոյ տաճարի գետնոյ : Յիշուած է շատ անգամ (Ես. Ը. 6. Նէեմ, Գ. 15) :

8-21. Ի՞նչ մանրակրկիտ հարցաքննութիւն. այլ սակայն կոյրն է որ կը դուռնի Թէ է մարգարէ Յիսուս :

«Ձեր որդին ան է, որուն համար դուք կ'ըսէիք թէ կոյր ծնաւ. հիմա ինչպէս կը տեսնէ»։ 20 Անոնց պատասխան տուին անոր ծնողքն ու կ'ըսեն. «Գիտենք որ աս մեր որդին է, եւ որ կոյր ծնաւ. 21 բայց ինչպէս հիմա կը տեսնէ, չենք գիտեր. կամ թէ ատոր աչքերն ո՛վ բացաւ, մենք չենք գիտեր. ատոր հարցուցէք. ինքն արդէն չափահաս է, թող խօսի իրեն համար»։ *22 Այս ըսին անոր ծնողքը, որովհետեւ Հրեաներէն կը վախնային, վասն զի Հրեաները ուխտ ըրած էին, թէ մէկը թէոր զանի Քրիստոս խոստովանի, ժողովրդանոցէն դուրս հանուի։ 23 Անոր համար անոր ծնողքն ըսին թէ «Ինքն արդէն չափահաս է, անոր հարցուցէք»։ *24 Նորէն կրկին անգամ մարդը կանչեցին որ կոյր էր ու կ'ըսեն անոր. «Աստուծոյ փառք տուր. մենք գիտինք որ ան մարդը մեղաւոր է»։ 25 Եւ ան կ'ըսէ. «Թէ որ մեղաւոր է, ես չեմ գիտեր. բայց այս գիտեմ, որ կոյր էի եւ հիմա կը տեսնեմ»։ 26 Նորէն անոր կ'ըսեն. «Ինչ ըրաւ քեզի. ինչպէս քու աչքերդ բացաւ»։ 27 Պատասխան տուաւ անոնց. «Հիմա ձեզ ըսի եւ չըլտեցիք. ինչու կ'ուզէք նորէն լսել. միթէ դուք ալ կ'ուզէք անոր աչակերտ ըլլալ»։ 28 Անոնք անոր կը հայնոյէին ու կ'ըսէին. «Դուն անոր աչակերտ եղիր. մենք Մովսէսի աչակերտ ենք»։ 29 Մենք գիտենք որ Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ, աս չենք գիտեր թէ ուրկէ է»։ 30 Մարդը պատասխան տուաւ ու կ'ըսէ անոնց. «Այդ է զարմանա-

22-23. Ժողովրդանոցէ դուրս ձգուիլն էր ստկալի պատիժ. բանադրուողին ամէն մարդ տալու չէր ուէ միւթարուծիւն. արգելուած էր մինչեւ իսկ ոչ թէ միայն անոր հետ խօսիլը. այլեւ չդպելու համար անոր չորս հինգ կանգուն հեռու կենալ պէտք էր։ Եթէ բանադրուողն ապաշխարէր, երեսուն օրուան մէջ կը վերջանար պատիժը. իսկ եթէ ոչ, ցմահ կը դատապարտուէր զրկուելով ընկերական և ազգային բոլոր իրաւունքներէ և կրօնական շրնորհներէ։

24-33. Վերստին հարցաքննութիւն, մինչ զի կոյրն իսկ կ'ուզէ գիտ թէ այս մանրակրկիտ հարցափորձութեամբ արդեօք մտաղբի էին նորս շակերտիլ Յիսուսի, որք կատգելով կը մերժեն և կուրին երեսին կը զար իւր մեղքը, այսինքն կոյր ծնած ըլլալով մեղաւոր ըլլալը։ Բարէ, Երբ չ այս օրինակ ամբարիշտներ, որք ուրիշի մը դժբաղդութիւնը կը համո հետեւանք նորս մեղքին և զնա կը քամահրեն։

լին, որ դուք չէք գիտեր թէ ուրկէ է, եւ իմ աչքերս բացաւ: 31 Գիտենք որ Աստուած մեղաւորներուն չլսեր, բայց թէոր աստուածապաշտ մէկն է, անոր կամքը կ'ընէ, անոր կը լսէ: 32 Սկիզբէն ի վեր մէկը չլսեց թէ մէկը բացաւ ի ծնէ կոյրի մը աչքերը: 33 Թէ որ այն մարդն Աստուծմէ չէր, չէր կրնար քան մը ընել: 34 Պատասխան տուին ու կ'ըսեն անոր. «Բոլորովին մեղքի մէջ ծնած ես, եւ դուն մեղի վարդապետ կ'ըլլաս». եւ զանի դուրս հանեցին: *35 Յիսուս լսեց որ զանի դուրս հանեցին, ու երբ զանի գտաւ, կ'ըսէ անոր. «Ի՞նչ Աստուծոյ Որդւոյն կը հաւատամ»: 36 Ան պատասխան տուաւ եւ կ'ըսէ անոր. «Տէր, ո՞վ է որ անոր հաւատամ»: 37 Յիսուս կ'ըսէ անոր. «Եւ զանի տեսար, եւ քեզի հետ կը խօսի, ան է»: 38 Եւ ան կ'ըսէ. «Կը հաւատամ, Տէր». եւ անոր երկրպագութիւն ըրաւ:

*39 Եւ Յիսուս կ'ըսէ. «Այս աշխարհը դատաստանի համար եկայ. որոնք չեն տեսներ, պիտի տեսնեն. եւ որոնք կը տեսնեն, պիտի կուրնան»: 40 Փարիսեցիներէն մէկ քանիներ լսեցին, որոնք անոր հետ էին ու կ'ըսեն անոր. «Միթէ մենք ալ կոյր ենք»: 41 Յիսուս անոնց կ'ըսէ. «Թէ որ կոյր ըլլայիք, մեղք չէիք ունենար. բայց հիմա կ'ըսէք թէ «Կը տեսնենք». եւ ձեր մեղքը ձեր վրայ հաստատուած է:

35-38. Կոյրը կ'արտաքուսի, այլ Յիսուսէն կը գտնուի. չճանչեր Յիսուսը, զի կոյր էր առաջ, այժմ կը տեսնէ ու կը հաւատայ:

39-41. Յիսուս կը յայտարարէ Թէ ինքն աշխարհ եկած է դատելու համար. իւր փառքը չտեսնողները պիտի տեսնեն, իսկ տեսնող, բայց չհաւատացողները պիտի կուրանան: Փարիսեցիք կ'ընդդիմաբանեն, որոց կը պատասխանէ Տէր Յիսուս. «Եթէ կոյր լինէիք, մեղք չէիք ունենար. բայց զի կ'ըսէք Թէ կը տեսնենք, ուրեմն մեղքը ձեր վրայ կը մնայ», որոյ հետեւանքը պիտի լինէր ճշմարիտ կուրութիւն չտեսնելու համար Մեսիայի յաւիտենական փառքը:

ՊԼՈՒԹ Ժ.

*1. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ով որ ոչխարներուն բակը դուռնէն չմտնեմ, հապա ուրիշ տեղէ կ'ելլէ, ան գող ու աւազակ է: 2 Բայց ով որ դուռնէն կը մտնէ, ոչխարներուն հովիւն է: 3 Գոնապանն անոր կը բանայ, եւ ոչխարներն անոր ձայնին կը լսեն, եւ իր ոչխարներն անունով կը կանչէ ու զանոնք կը հանէ: 4 Եւ երբ բռնորն ալ հանէ, անոնց առջեւէն կ'երթայ, եւ ոչխարներն անոր ետեւէն կ'երթան, որովհետեւ անոր ձայնը կը ճանչնան: 5 Օտարին ետեւէն չեն երթար, հապա անորմէ կը փախչին, որովհետեւ օտարին ձայնը չեն ճանչնար»:

6 Այս առակը Յիսուս անոնց ըսաւ, եւ անոնք չէին գիտեր թէ ինչ էր որ իրենց կը խօսէր: 7 Նորէն Յիսուս անոնց կ'ըսէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ոչխարներուն դուռն ես եմ: 8 Աւիէքքն ալ որ ինչէ առաջ եկան, գողեր ու աւազակներ էին, բայց ոչխարներն անոնց չլսեցին: 9 Ես եմ դուռը. ինձի հետ թէ որ մէկը մտնէ, պիտի ապրի. պիտի մտնէ ու պիտի ելլէ ու արօտ պիտի գտնէ: 10

4-15 Յիսուս Թէ ինքն է ճշմարիտ հովիւը բանաւոր ոչխարացն Աստուծոյ, որոց առջեւէն երթալով պիտի առաջնորդէ յերկինս, եւ Թէ ինքն է միանգամայն դուռն ընդ մէջ երկնի եւ երկրի, Յիսուս այն խարեքայններն ակնարկելով, որք Մեսիայի կեղծ անուան տակ իրմէ առաջ եկած էին (Գործք Ե. 36-38), կամ Թէ նոյն իսկ այն ազանդապետներն ակնարկելով, որք իսրայէլի միւլթիւնը լարաբաժին ըրած եւ Հրեայ ազգն այլ եւ ոչլ հակընդդէմ կուսակցութեանց մատնած էին, համարձակօրէն կը շեշտէ Թէ «Ամենեքեան՝ գողք էին եւ աւազակք»: Ապա կը կրկնէ Թէ ինքն է դուռն կենաց, իւր հետ մտնողը պիտի ապրի, արձակ համարձակ պիտի մտնէ ու ելնէ, և աստուածային փառացն շնորհօք պիտի պարարի:

16. Այս ոչխարներն էին հեթանոսները:

17-18. Ո՛վ անհուն սէր, զնել իւր անձը, մեռնիլ եւ ապա կենդ. ըլլալ և այս ամէնն ի փրկութիւն մարդոյ միայն:

19-21. (Ը. 48: Թ. 16):

22-30. Հրեայք՝ որք այնքան ժամանակ Յիսուսի այնքան ճշմարիտ սուրբ վարդապետութիւններն ո՛ւր գերահրաշ գործերը լսած ու տեսած է

Պող չգար՝ բայց եթէ գողնալու եւ սպաննելու ու կորսընցնելու համար . ես եկայ որ կեանք ունենան , եւ աւելին ալ ունենան :

11 Ես քաջ հովիւ եմ . քաջ հովիւն իր անձը ոչխարներուն վրայ կը դնէ : 12 Բայց վարձկանն , որ հովիւ չէ , որուն չեն ոչխարները , երբ կը տեսնէ գայլը որ կուգայ , օչխարները կը թողու ու կը փախչի . եւ գայլը զանոնք կը յափշտակէ ու կը ցրուէ . 13 վասն զի վարձկան է , եւ անոր հոգը չէ ոչխարներուն համար : 14 Ես եմ քաջ հովիւր . եւ իմիններս կը ճանչնամ ու իմիններէս կը ճանչցուիմ : 15 Ինչպէս Հայրը զիս գիտէ , ես ալ Հայրը գիտեմ . եւ իմ անձս ոչխարներուն վրան կը դնեմ : *16 Ուրիշ ոչխարներ ալ ունիմ , որոնք որ աս գաւիթէն չեն , եւ անոնք ալ պէտք է ինծի հոս բերել , եւ իմ ձայնիս լսեն , եւ մէկ հօտ ու մէկ հովիւ ըլլան : *17 Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ , որովհետեւ ես իմ անձս կը դնեմ , որ ուրիշ անգամ զանի առնում : 18 Մէկը զանի ինէ չկրնար հանել , հապա ես ինձէն զանի կը դնեմ , եւ իշխանութիւն ունիմ ուրիշ անգամ զանի առնուլ . աս պատուէրը իմ Հօրմէս առի » : *19 Նորէն հերձուած կ'ըլլար Հրեաներուն մէջ այս խօսքերուն համար : 20 Եւ շատեր

տակաւին տարակուսանաց մէջ լինելով թէ Յիսուս է ճշմարիտ Մեսիայն թէ ոչ , կը խնդուին նորս շուրջ եւ կ'աղաղակեն . շինեւ ես Քրիստոսնս :

Յիսուս որ ամենեւին կեղծել չէր զիտեր , Յիսուս որ ունէր նպատակ համօրէն մարդկութեան ընդունել տալ իւր փրկարար վարդապետութիւն և բոլոր աշխարհիս շնորհել իւր բարեբար Թագաւորութիւնն . Յիսուս առանց խռովելու այն բազմութենէն , որ սպառնական դիրք մը առած՝ հարցում կ'ուղղէր առ ինքն կատարի բարկութեամբ , կը պատասխանէ հեզօրէն . « Ըսի ձեզի եւ չէր հաւատար ինձ . այն զործերն , զորս ես կը զործեմ , նորին իսկ կը վկայեն թէ ես ով եմ » : Այսպիսի պատասխան մը եւս երբեմն տուաւ Յիսուս նոցա , որք Յովհաննէս Մկրտչի կողմէն եկած և հարցուցած էին թէ « Քրիստոսն ես » : Այժմ եւս իւր զործերը կը յիշէ , զործեր , որք մարդկային բնութենէն ի վեր անգր էին , զործե՛ր , որք աստուածային էին , որոց առջև մարդկային բանականութիւնը խոնարհելէ զատ՝ ուրիշ բան չունէր ընելու , այլ սակայն Հրեայք տակաւին յիմարաբար կը հակառակ էին , վասն զի Մեսիայէն բուն մը միայն կ'ակնկալէին , այն էր ազատութիւն Հռովմէական պետութեան լուծէն եւ վերահաստատութիւն փառաւոր

անոնցմէ կ'ըսէին . « Անոր մէջ դեւ կայ ու կը ցնորի , ինչու
անոր մտիկ կ'ընէք » : 21 Կէսերը կ'ըսէին . « Ասոնք գիււ-
հարի խօսքեր չեն . միթէ դեւը կրնա՞յ կուրին աչքերը
բանալ » :

*22 Այն ատեն Երուսաղեմի մէջ նաւակատիւք եղաւ ,
ու ձմեռ էր : 23 Եւ Յիսուս ասոճարը Սողոմոնի սրահին
մէջ կը պտըտէր : 24 Հրեաներն անոր բոլորտիքն ատին
ու կ'ըսեն . « Մինչեւ երբ մոր ողինները կը նեղես . թէ որ
Քրիստոսը դուն ես , մեզի համարձակ ըսէ » : 25 Յիսուս
պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ , « Ըսի ձեզի , եւ ին-
ծի չէք հաւատար . այն գործերն՝ որ ես կը գործեմ իմ
Հօրս անունով , անոնք իսկ ինծի համար կը վկայեն : 26
Բայց դուք չէք հաւատար , որովհետեւ իմ այն ոչխարնե-
րէս չէք : 27 Իմ ոչխարներս իմ ձայնիս կը լսեն , եւ ես
զանոնք կը ճանչնամ , ու իմ ետեւէս կուգան , 28 Եւ ես
անոնց յաւիտենական կեանք կուտամ եւ յաւիտեան պի-
տի չկորսուին , եւ մէկը զանոնք իմ ձեռքէս պիտի չյա-
փրչտակէ : 29 Իմ Հայրս որ զանոնք ինծի տուաւ , ամե-
նէն ալ մեծ է , եւ մէկը չկրնար յափշտակել իմ Հօրս ձեռ-
քէն : 30 Ես եւ Հայրս մէկ ենք » :

Սագաւորութեանն Դուրի , մինչդեռ Յիսուսի վարդապետութեանց ու քա-
րողութեանց բովանդակութիւնն եւ իՍԿԱԿԱՆ նպատակն էր ազատութիւն
Մեղաց լուծէն :

Հրեայք յայնժամ ի մեղս էին , ուստի եւ արժանի չէին աստուածային
շնորհաց . բաժնուած էին իրարմէ տարբեր ուղղութիւններէ առաջնորդուող
այլ եւ այլ կուսակցութեանց . իւրարանչիւր որ իւր անձին շահը կը նախ-
ընտրէր . սիրոյ , որ պիտի կուպէր այս զօքազգ ազգին ցիրուցան ան-
դամներն իրարու , սիրոյ , որ նոյն իսկ փրկութիւնն է , փոխանակուած
էր ԱՏԵԼՈՒԹԻՒՆԷՆԸ , ատկութիւն խորին եւ ստկալիչ Արդ՝ այսպիսի ազգի
մը վրայ կարելի էր հասնիլ Աստուծոյ արքայութիւնն , ուստի իրաւամբ
Յիսուս կը յաւելու . « Դուք ինձ չէք հաւատար , զի ոչխարներէս չէք ,
վանզի չունէին ոչխարի նման , ոչ արտի ամբոճութիւն եւ ոչ խնորհամատու-
թիւն : Գիտէր Յիսուս Սէ հըք պիտի հաւատային իրեն , եւ պիտի գ-
իւր ետեւէն . կը հաստատէր Սէ ինչպէս իւր հաւատացեալք պիտի
ժանի լինէին յաւիտենական կեանց , կը քարոզէր Սէ իւրայիններէն ո
պիտի կորսուէր , վասն զի իւր հաւատացեալք այնպիսի հզօր պահա-
մը , արժուն հովիւ մը պիտի ունենային , որոյ կարողութեան եւ ի

*31 Հրեաները քարեր առին որ զանի քարկոծեն: *32 Յիսուս անոնց պատասխան տուաւ. «Շատ բարի գործեր ձեզի ցուցուցի իմ Հօրմէս, այն գործերէն որոնն համար զիս կը քարկոծէք»: 33 Հրեաներն անոր պատասխան տուին. «Բարի գործի համար քեզ չենք քարկոծեր, հապա հայհոյութեան համար. որովհետեւ դուն մարդ ես, եւ քու անձդ Աստուած կ'ընես»: *34 Պատասխան տուաւ Յիսուս անոնց. «Ձեր Օրէնքին մէջ գրուած չէ. «Ես ըսի թէ աստուածներ էք»: 35 Իսկ թէ որ անոնց աստուածներ կ'ըսէ, որոնց Աստուծոյ խօսքն եղաւ, եւ կարելի չէ այն գրուածին աւրուիրը. 36 Բայց այն որ Հայրը որքեց ու աշխարհ դրկեց, դուք կ'ըսէք թէ «կը հայհոյես». վասն զի ըսի թէ Աստուծոյ Որդին եմ: 37 Թէ որ Հօրս գործերը չեմ գործեր, ինձի մի հաւատաք: 38 Բայց թէ որ կը գործեմ, թէեւ ինձի չէք հաւատար, սակայն այն գործերուն հաւատացէք. որպէս զի գիտնաք եւ ճանչնաք թէ Հայրն իմ մէջս է, եւ ես անոր մէջ»:

*39 Նորէն կ'ուզէին զանի բռնել. եւ անոնց ձեռքէն ելաւ: 40 Եւ նորէն Յորդանանի անդիի կողմը այն տեղը գնաց, ուր առաջուց Յովհաննէս կը կենար ու կը մկրտուէր. եւ հոն կը կենար: 41 Շատեր անոր եկան ու կը-

տուժեան չափ ու սահման չկար, «Հայր իմ որ ետ ինձ զնոսա մեծ է բան զամենայն»: Յետոյ Յիսուս Հրէից ցոյց տուլու համար Սէ ինքն եւս գործակից է Հօր Աստուծոյ ի մասին պահպանութեան հաւատացեալ հօտին — քրիստոնէական Եկեղեցւոյն, կ'արտասանէ սա վերջին խօսքը. «Ես եւ Հայր իմ Մի ենք»:

Յիսուս այս խօսքերն ըսաւ Նաւակատեաց տօնի ժամանակ, տաճարին ներքը, Սողոմոնի սրահին, եւ ոչ Սէ գաւթին մէջ. բայց տեղ, վասն զի ձմեռ էր. Յող որ Իսրայելի բարոյապէս անկման ձմեռն եւս հասած էր: Իսրայելեան այգին այլ եւս տերեւաՍափ՝ ձմրան սաստկութեան մատնուած էր, մեղաց ձմրան:

Նաւակատեաց տօնը հաստատեց Մեծն Յուդա Մակարէ, ի յիշատակ մաքրութեան տաճարին յետ պղծութեանն ի ձեռն Անտիոքոսի Եպիփանայ նախ քան զՔրիստոս 164-167: Այս տօն կը տեւէր ուժ օր, եւ կը կոչուէր նաեւ ձրազալուցի տօն, վասնզի Հրեայք ի սկզբան տօնին իրենց ընտանեաց իւրաքանչիւր անձին Յուով մէն մի ճրագ կ'սկսէին վառել, եւ ամէն երեկոյ հետգնեալ մի մի ճրագ կը յաւելուին տօնին բոլոր օրերը:

սեն . «Թէ Յովհաննէս հրաշք մը չըրաւ » : 42 Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ անոր համար , ճշմարիտ էր . եւ հոն շատերն անոր հաւատացին :

ՓԼՈՒԽ ԺԱ.

*1. Եւ Մարիամին եւ անոր քրոջ Մարթայի գիւզէն՝ Բեթանիայէն Ղազարոս մէկը հիւանդ էր : *2 Այս այն Մարիամն էր որ Տէրն իւղով օծեց եւ անոր ոտքերը սրբեց իր մազերովը , որուն Ղազարոս եղբայրը հիւանդ էր : 3 Անոր քոյրերը լաւ զրկեցին անոր ու կ'ըսէին . «Տէր , ահա ան որ դուն կը սիրէիր , հիւանդացած է » 4 Երբ Յիսուս լսեց , կ'ըսէ . « Այն մահուան համար հիւանդութիւն չէ , հապա Աստուծոյ փառքին համար , որ Աստուծոյ Որդին անով փառաւորուի » : 5 Եւ Յիսուս կը սիրէր Մարթան եւ անոր քոյրը՝ Մարիամն ու Ղազարը : 6 Երբ

34. (Ը. 59) :

32-38 Հրէից բարկութեան դէմ Յիսուս վերստին կը յիշատակէ իւր գործերը :

34. (Սաղմոս 2Բ. 6) :

39-42. (Ա. 28 41) :

1. Բեթանիա է գիւղ մերձ Երուսաղեմայ , ուրոյն միւս Բեթանիայէն որ առ Յորդանանու , ուր Յովհաննէս կը մկրտէր : Այժմ այս գիւղ կը կոչուի Էլ-Ազարիյէ կամ Էլ-Ազիր , այս գիւղին այս անունը տրուած է ի յիշատակ Ղազարոսի , որոյ յանձին գործուեցաւ Յիսուսի հրաշագործութեանց մեծագոյններէն մին :

2-38. Յիսուս իւր Թշնամիներէն հալածական կը դեգերի , մինչ յանկարծ որ մը իւր աշակերտներուն անխռով կը հրամայէ . «Եկայք , երթիցուք միւսանգամ ի Հրէաստան » : Աշակերտք կը պատասխանեն . «Ռաբբի , այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել , եւ դարձեալ ել անդրէն » : Յիսուս բնաւ չվարանիր . «Ո՞չ երկուտասուն ժամ է աւու Մարդկային կենաց օրերը շատ կարճ են , մարդ բաւական է որ ի երթայ , այսինքն բարոյական կեանք ունենայ , չվտանգիր : Յետոյ Ղարոսի մահը յայտնելով կը յաւելու . «Եւ ես ուրախ եմ վասն ձեր , զի

լսեց թէ հիւանդացած է, հոն կեցաւ երկու օր, ուր որ էր: 7 Յետոյ կ'ըսէ անոնց. «Եկէք, նորէն Հրէաստան երթանք»: 8 Աշակերտները կ'ըսին անոր. «Ռաբբի, դեռ հիմա Հրեաները քեզ քարկոծել կ'ուզէին ու նորէն հո՞ն կ'երթա»: 9 Յիսուս պատասխան տուաւ. «Ձէ՞ որ օրը տասներկու ժամ է. թէ որ մէկը ցերեկը քալէ, չգայթակղիր, որովհետեւ այս աշխարհիս լոյսը կը տեսնէ: 10 Բայց թէ մէկը գիշերը քալէ, կը գայթակղի, որովհետեւ լոյսը անոր հետ չէ»: 11 Այս երբ ըսաւ, յետոյ կ'ըսէ անոնց. «Մեր Ղազարոս բարեկամը քնացաւ, բայց ես երթամ, որ զանի արթնցնեմ»: 12 Աշակերտներն անոր կ'ըսեն. «Տէր, թէ որ քնացաւ, ուրեմն կ'ապրի»: 13 Բայց Յիսուս անոր մահուան համար կ'ըսէր. անոնց անանկ երեւցաւ թէ քուն քնանայուն համար կ'ըսէր: 14 Այն ատեն Յիսուս անոնց յայտնապէս կ'ըսէ. «Ղազարոս մեռաւ. 15 եւ ես ձեզի համար ուրախ եմ, որ դուք ինձի հաւատաք, որովհետեւ ես հոն չէի. բայց հիմայ եկէք, անոր երթանք»: 16 Երկու որևակ կոչուած Թովմաս կ'ըսէ աշակերտակիցներուն. «Օն. եւ մենք եկէք, որ անոր հետ մեռնինք»:

17 Եկաւ Յիսուս եւ զանի չորս օրէ ի վեր գերեզմանի մէջ գտաւ: 18 Եւ Բեթանիա Երուսաղեմին մօտ էր իբր քաան եւ հինգ ասպարէզով: 19 Հրեաներէն շաաերն եկած էին Մարթայի եւ Մարիամի, որ զանոնք մխիթարեն եղ-

հուստասչիք ինձ: Յետոյ կ'երթայ ի Բեթանիա, հոն կը խոնուին Հրեայք եւ ունկնդիր կը լինին հիանալի խօսակցութեան մը, վասն զի Մարթա՝ քոյր Ղազարու. Յիսուսի ընդ առաջ կը վագէ եւ կ'ազգակէ. «Տէր, ե՞՞՞տ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ: Յիսուսի պատասխանը կարճ ու կտրուկ է. «Յարիցէ եղբայր՝ քո»: Մարթա կը պատասխանէ. «Գիտեմ՝ զի յարիցէ ի յարուսեան յաւուրն յետեւում: Յիսուս այդ կնոջ նայելով աստուածաբան ձայնիւ կը գոչէ. «Ես իսկ եմ յարուսիւն եւ կեանք, որ հաւատոյ յիս, Թէպէտ եւ մեռանի, կեցցէ»: Յիսուսի այս բարբառն այնպէս խորամանկանց կը մտնէ ի սիրտ Մարթայի, եւ կը վառէ նորա միտքի ի լոյս հաւատոյ, որ իսկոյն կը զաւանի հաւատոյ բուն հանգանակը. «Այո, Տէր, ես հաւատացի, ե՞՞՞տ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ՝ որ յաշխարհ զալոց էիր: Մարթայի՝ քոյրն եւս Մարիամ կը հասնի, Յիսուսի ոտներուն կը փարի արտասուածոր աչքը: Յիսուս տեսնելով ամբոխը որ կ'արտասու-

բօրն համար : 20 Մարթա երբ լսեց թէ Յիսուս կուգայ ,
անոր ընդատաջ գնաց , բայց Մարիամ տունը կը նստէր :
21 Մարթա Յիսուսին կ'ըսէ . « Տէր թէ հոս եղած ըլլայիր ,
իմ եղբայրս մեռած չէր : 22 Բայց եւ հիմայ գիտեմ թէ
ինչ որ Աստուծմէն խնդրես , Աստուած քեզի կուտայ » : 23
Յիսուս կ'ըսէ անոր . « Քու եղբայրդ յարութիւն պիտի առ-
նու » : 24 Մարթա կ'ըսէ անոր . « Գիտեմ , որ վերջին օրը ,
յարութիւն պիտի առնու » : 25 Յիսուս կ'ըսէ անոր . « Ես
իսկ եմ յարութիւն եւ կեանք . ով որ ինձի կը հաւատայ ,
թէ եւ մեռնի , պիտի ապրի : 26 Եւ ամէնն՝ ով որ կեն-
դանի է եւ ինձի կը հաւատայ , յաւիտեան պիտի չմեռնի .
ասոր կը հաւատաս » : 27 Կ'ըսէ անոր . « Այո , Տէր , ես
հաւատացի , որ դուն ես Աստուծոյ որդին Քրիստոսը , որ
աշխարհ պիտի գայիր » : 28 Եւ այս երբ ըսաւ , գնաց եւ իբ
Մարիամ քոյրը գաղտուկ կանչեց ու կ'ըսէ . « Վարդապետն
եկած է եւ քեզ կը կանչէ » : 29 Ան երբ լսեց , ելաւ իսկոյն
եւ անոր եկաւ : 30 Յիսուս դեռ գիւղը չէր եկած , բայց
այն տեղն էր՝ ուր Մարթա անոր առջեւ ելաւ : 31 Իսկ
Հրեաներն՝ որ անոր հետ տանը մէջ էին եւ զանի կը
մխիթարէին , երբ Մարիամը տեսան թէ ելաւ իսկոյն եւ
գնաց , անոնք ալ անոր ետեւէն գացին . կը կարծէին թէ
գերեզման կ'երթայ որ հոն լայ : 32 Իսկ Մարիամ երբ ե-
կաւ , ուր Յիսուս էր , եւ զանի տեսաւ , անոր ոտքերն
ինկաւ ու կ'ըսէ . « Տէր , թէ որ հոս ըլլայիր , իմ եղբայրս
չէր մեռներ » : 33 Յիսուս երբ զանի տեսաւ որ կուլար , եւ
անոր հետ եղող Հրեաներն՝ որոնք կուլային , իր ոգին

ուեր , կը խռովի , կը հարցունէ . « Ո՞ւր եղիք զնա : Եւ անս արդարակ ամէն
բերնէ . « Եկ եւ տես : Եւ Յիսուս կ'արտասուէ :

Ո՞ւր արտասուք , որք նշունակ էիք սիրոյն Յիսուսի , որ ունէր իւր բարե-
կամին — համօրէն մարդկութեան — վրայ : Ո՞ւր արտասուք , որք յորդորակ
էիք մեզ լալու համար մեր սիրելեաց գերեզմաններուն վրայ : Ո՞ւր արտա-
սուք , որք միւռձեան կապ էր ընդ մէջ կենդանեաց եւ մեռելոց : Լ,
Յիսուս , որպէս զի իւրայինք ուսանին Սէ բարեկամք կը սիրուին ո
միայն ի կենդանութեան , այլ յետ մահու եւս : Այս վեհմտոյն բարոյ
է քրիստոնէական կրօնի :

39.44. Յիսուս կը հրամայէ տապանաբարը ի բաց հանել , բազի
բած կ'աղօթէ առ Հայր , եւ ապա որոտագին կը ձայնէ . « Դազարէ ,

խոռովեցաւ, իբր փղձկած. 34 եւ կ'ըսէ. «Ձանի ո՛ւր գրիք. կ'ըսեն անոր. «Տէր, եկ եւ տես»». 35 Եւ Յիսուս լացաւ: 36 Հրեաները կ'ըսէին. «Տեսէք, զանի որչափ կը սիրէր», 37 Անոնցմէ կէսերը կ'ըսէին. «Աս, որ կուրին աչքերը բացաւ, չէ՛ր կրնար ընել, որ աս ալ չմեռնէր»: 38 Յիսուս նորէն փղձկելով գերեզմանը կուգայ. եւ այր մը կար, եւ անոր վրայ քար մը գրուած: *39 Եւ Յիսուս կ'ըսէ. «Քարը մէկզի բրէք. կ'ըսէ անոր Մարթա՛ մեռելին քոյրը. «Տէր, եւ հիմա հոտած ըլլայ, վասն զի չորս օրուան է»»: 40 Յիսուս կ'ըսէ անոր. «Քեզի չըսի՞, թէ որ հաւատաս, Աստուծոյ փառքը պիտի տեսնես»: 41 Եւ երբ քարը վեր առին, Յիսուս իր աչքերը վեր վերուց ու կ'ըսէ. «Հայր, քենէ կը գոհանամ որ ինձի լսեցիր»: 42 Եւ ես գիտէի որ ամէն ատեն ինձի կը լսես. բայց այս ժողովրդին համար որ բոլորտիքս կը կենան, կ'ընեմ, որպէս զի հաւատան թէ դուն զիս զրկեցիր»: 43 Այս երբ ըսաւ, մեծ ձայնով աղաղակեց ու կ'ըսէ. «Ղազարոս, ել. դուքս եկուր»»: 44 Եւ մեռելն ելաւ, ոտքերը կապուած, ձեռքերն երիզապնդուած եւ վարչամակով երեսը գոցուած: Եւ Յիսուս կ'ըսէ անոնց. «Քակեցէք զատի եւ թողէք որ երթայ»: *45 Հրեաներէն շատերն որ Մարիամին եկած էին, իբր տեսան ինչ որ ըրաւ, անոր հաւատացին: 46 Եւ անոնցմէ մէկքանիներն Փարեսեցիներուն գացին, անոնց պատմեցին, ինչ որ Յիսուս ըրաւ:

եկ արտաքս: Ժողովուրդն անորեկ կը ծօխ, կը նայի դէպ ի փոս գերեզմանի: Եւ անա մեռելն է, չարեքօրեայ, գրեթէ հոտած մեռելն է որ կ'երեւայ: Մի եւ նոյն ձայնը նորէն կը լսուի. «Լուծէք զոս եւ թողէք երթալս. պատուեցէր պատանքը եւ թողէր որ Ղազարոս տեսնուի ոչ եւ առողջ»:

45-50. Ժողովուրդը սարսափած կը ցրուի, ամէն ուրեք կը տարածուի, կը հուշակուի այս հրաշք: Յիսուսի թշնամիք կորսալու իս կը լսեն, կը շուարին եւ կը շփոթին, իրարու կը հօծեն. «Ի՞նչ ընենք»: Եւ որպէսզի ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնն մասնակից ընեն իրենց չարահար խորհրդոց, զարհուրելով մը կը յաւելուն. «Գոյցեն Հոռոմք եւ բառնայցեն զազգ մեր եւ զտեղի», այսինքն Հռովմէական պետութիւնն, որուն Հրէաստան հպատակած էր յայնժամ. պիտի զսկ կործանել հայրենի տունն ու չնքել ազգն ի պատիժ ապատամբութեան մը՝ որ անպատճառ պիտի ծագէր Յիսուսի երեսէն. ուստի՝ որ զարհուրելին է, հայրենասիր-

47 Քահանայապետներն ու Փարիսեցիները ժողով գումարեցին ու կ'ըսեն . «Ի՞նչ ընենք , որովհետեւ այն մարդը շատ հրաշքներ կ'ընէ : 48 Թէ որ զանի այնպէս թողունք , ամէնքն ալ անոր պիտի հաւատան , եւ Հոռոմները պիտի գան եւ մեր ազգն ու տեղը պիտի վերցնեն » : 49 Անոնցմէ մէկը Կայիափա անուն , որ այն տարւոյն քահանայապետն էր , կ'ըսէ անոնց . «Դուք բան մը չէք գիտեր , 50 եւ չէք ալ խորհիր , թէ աղէկ է մեզի որ մարդ մը մեռնի ժողովրդին համար , եւ ոչ թէ բոլոր ազգը կորսուի » : 51 Այս խօսքն իրմէն չըտաւ , հապա որովհետեւ այն Ժարուոյն քահանայապետն էր , մարգարէացաւ թէ Յիսուս այն ազգին համար պիտի մեռնէր : 52 Եւ ոչ միայն այն ազգին համար , հապա եւ Աստուծոյ ցրուած որդիներն ալ մէկտեղ ժողովէ :

*53 Այն օրէն յետոյ խորհուրդ ըրին որ զանի սպաննեն : 54 Եւ Յեսուս անկէ ետքը Հրեաներուն մէջ համարձակ չէր պտըտեր , հապա գնաց անկէ երկիր մը՝ որ անսպասի մօտ էր , քաղաք մը՝ որուն անունը Եփրայիմ էր , եւ հոն աշակերտներուն հետ մէկտեղ կը կենար :

*55 Եւ Հրէից պատէքը մօտ էր , եւ այն գաւառէն շատեր Երուսաղէմ գացին զատիկէն առաջ , որպէս զի ի-

ական ու ազգասիրական այս տեսակետով անմեղի մը , նոյն իսկ բարեգործ եւ բարեգութ արդարի մը , Թո՛ղ Աստուծոյ Որդւոյ մը , մահը կ'որոշեն , անլուր վճիռ մը հնարելով եւ արձակելով . Դազարոսի դեռ ողջ ըլլալուն համար միւս Աւետարանիչք գրած չեն այս հրաշքը , որպէսզի Դազարոսի դէմ վերստին չգրգռեն Հրէից Թշնամութիւնը (ԺԲ. 10-11) :

51-52. Ինչպէս Բապտամ մարգարէացաւ յսկամոյս , Կայիափայ եւս կը մարգարէանայ յանգէտս , միայն Թէ Յիսուս ոչ Թէ միայն իր ազգին համար պիտի մեռնէր , այլեւ համօրէն մարդկութեան համար : Այլ այս վճիռն էր անարդար եւ արտասանուած անզգամ բերնէ . վասնզի ուրիշի կամ ուրիշներու բարւոյն կամ շտոնն համար անմեղի մը վնասելն է ոճիր : Նահատակութիւնն է արդար , եթէ է կամովին :

53-54. Յիսուս կ'երթայ յեփրայիմ . էր գուցէ Եփրայ , հեռի Երոզեմէ վեց ժամ. (Յնս. ԺԸ. 23 : Ա. Թագ. ԺԳ. 17) : Այժմ կը կոչուի Թայիպէ :

55. Մաքրուիլ ըստ օրինաց (Թիւք Թ. 10 : Բ. Մնաց. Լ. 17-18) :

56. Ժողովուրդը լսած էր Մանեսրիոնի՝ վճիռը , ուստի հետաքրքրի գիտեալ Թէ Յիսուս պիտի երեւի այս մեծ տօնի ատեն :

րենց անձր մաքրեն : *56 Եւ Յիսուսը կը փնտռէին եւ իրարու հետ կը խօսէին, երբ տաճարին մէջ կը կենային : « Զեզի թնչպէս կ'երեւի թէ չգա՞ր այս տօնին » : Քահանայապետներն ու Փարիսեցիները պատուէր տուած էին , թէ որ մէկը գիտնայ թէ ուր է , անոր վրայով իմաց տայ , որ զանի բռնեն :

Ք Ա Մ Ե Թ.

*1 Իսկ Յիսուս զատիկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ , ուր էր մեռած Ղազարոսն , որ մեռելներէն ողջնցուց : 2 Եւ հոն անոր ձաշ ըրին եւ Մարթա կը ծառայէր , եւ Ղազարոս նստողներէն մէկն էր : 3 Իսկ Մարիամ մեծագին ազնիւ նարդենիի լիոր մը իւղ առնլով , Յիսուսի ոտքերն օծեց , եւ իր մազերովն անոր ոտքերը կը սրբէր , եւ տունը իւղին հոտէն լցուեցաւ : *4 Աշակերտներէն մէկը՝ Իսկարիովտացի Յուդան , որ զանի պիտի մատնէր , կ'ըսէ . 5 « Ի՞նչու այդ իւղը չծախուեցաւ երեք հարիւր դնարի , եւ աղքատներուն չտրուեցաւ » : 6 Այս ըսաւ՝ ոչ թէ աղքատներուն հոգն ունէր , հապա գող էր ու արկղը ինք կը պահէր , եւ ինչ որ կը ձգուէր , ան կը կրէր : 7 Յիսուս կ'ըսէ . « Ատոր թող տուր , որովհետեւ իմ թաղմանս օրուան համար պիտի պահէ զայդ : 8 Աղքատներն ամէն ատեն ձեզի հետ ունիք , զիս միշտ ձեզի հետ չունիք » : *9 Երբ Հրեայ շատ ժողովուրդ գիտցաւ թէ հոն է , եկան , ոչ թէ միայն Յիսուսի համար , հապա որպէս զի եւ Ղազարը տեսնեն , որ մեռելներէն ողջնցուց : 10 Քահանայապետները խորհուրդ ըրին , որ Ղազարն ալ սպաննեն , որովհետեւ Հրեաներէն շատերը կ'երթային եւ Յիսուսի կը հաւատային :

1-8. Յիսուս կ'օժուի Մարիամէն (Մատթ . ԻԶ . I-16; մարկ . 1-11);
 4-5. Կ'երեւի Թէ Յուդայ նախ այդ դիտողութիւնն ըրաւ և յետոյ միւսներն ալ համարձակութիւն տունլով ձայնակցեցան նմա , որպէս կը գրեն Մատթէոս և Մարկոս :
 9-10. Այնքան մեծ ազդեցութիւն ըրաւ ժողովրդեան վրայ Ղազարոսի յարութիւնը :

*11 Յաջորդ օրը շատ ժողովուրդ եկած էր տօնին , երբ լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ կուգայ : 12 Արմաւենիներու ոստեր առին ու անոր ընդատաջ ելան , կը պրօռային ու կ'ըսէին . Վվսաննա , օրհնեալ , որ Տէրոջ անուանով կուգաս , Իսրայելի թագաւոր : 13 Եւ Յիսուս էջ մը գտնելով , անոր վրայ նստաւ . ինչպէս գրուած է . 14 « Մի վահնար , Սիովնի ազիկը ահա քու թագաւորդ կուգայ աւանակի վրայ նստած » : 15 Եւ անոր աշակերտները զայն առաջ չգիտցան , բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ , այն ատեն յիշեցին թէ այն էր , որ գրուած էր անոր համար , եւ զայն ըրին անոր : 16 Եւ ժողովուրդը կը վկայէր որ անոր հետ էր , թէ Ղազարը միայն գերեզմանէն կաննչեց , եւ զանի մեռելներէն ողջացուց : 17 Եւ անոր համար անոր առջեւ ելաւ ժողովուրդը , որովհետեւ լսեցին թէ ան հրաշքներ կ'ընէ : 18 Իսկ Փարիսեցիներն իրարու կ'ըսէին . « Կը տեսնէք որ չէք օգտուիր . ահա բոլոր աշխարհ անոր ետեւէն գնայ » : *19 Հոն ելլող մէկ քանի հեթանոսներ կային , որ տօնին հրկրապառլիւն ընեն : 20 Անոնք Փիլիպպոսին մօտեցան , որ Փալիլիսայիներու Բեթսայիլայէն էր , կ'աղաչէին անոր ու կ'ըսէին . « Տէր , կ'ուզենք Յիսուսը տեսնել » : 21 Փիլիպպոս կուգայ եւ Անդրէասին կ'ըսէ , Անդրէաս ու Փիլիպպոս Յիսուսին կ'ըսան : 22 Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց ու կ'ըսէ . « Հասաւ ժամանակը , որ Որդի մարդոյ փառաւորուի » :

11-18. Եաղկագարդ (Մատթ. ԻԱ. 1-12; Մարկ. ԺԱ. 1-11; Դուկ. ԺԲ. 29-44) :

19-22. Իսկ ով են սորա , որք յերուսաղէմ կը մտնեն , պարծեւական ունին հսկայ հասակ , սեւ ու աղու աչիւր : Սորա ոչ Հրեայ , ոչ Հռովմայեցի , ոչ Յոյն եւ ոչ Ասորի են . սորա Հոյեր են , դեպպէտք Արգարու , որք կը մօտենան Փիլիպպոսի և կողոսչեն ստելով . « Տէր , կամիմ զՅիսուս տեսանել » : Եւ Յիսուս կը իսայտայ զոչելով . « Եհոս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ » Զարմանալի՜ բան . Յիսուսը արգէն սոյն օրն կը վայլէր աշխարհի մեծազոյն փառքը , այն է արքայական պատիւ . յանկար փառքի մը վրայ կը խօսի , և աշակերտաց միտքն յապուշ կը կրճէ , նոր փառքի մը , իւր յաւիտենական Թագաւորութեան , զի պիտի ու ոչ Թէ միայն Իսրայելի , այլ և հեթանոսաց—բոլոր մարդկութեան ,— տիրէր երկներէն — բարոյապէ՛ս :

*23 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի . «Թէ որ ցորենի հատը գետին իյնալով չմեռնի , 24 Ինք միայն կայ . բայց թէ որ մեռնի , շատ արդիւնքներ կ'ընէ : Ով որ իր անձը կը սիրէ , զանի կ'արձկէ , եւ ով որ իր անձը այս աշխարհիս մէջ կ'ատէ , յաւիտեանական կեանքին համար զանի կը պահէ : 25 Թէ որ մէկը զիս պաշտէ , իմ ետեւէս գայ , եւ ուր ես եմ , հոն եւ իմ պաշտօնեաա պիտի ըլլայ . թէ որ մէկը զիս պաշտէ , իմ Հայրս զանի պիտի պատուէ :

*26 Բայց հիմա իմ անձս խռոված է . եւ ի՞նչ ըսեմ , թէ , Հայր , զիս այս ժամէն ազատէ . բայց անոր համար եկայ այս ժամին : *27 Հայր , քու անունդ փառաւորէ՛ : Երկինքէն ձայն եկաւ . «Եւ փառաւոր ըրի , եւ նորէն փառաւոր պիտի ընեմ» : 28 Եւ ժողովուրդը , որ կը կենար ու կը լսէր , կ'ըսէին . «Որոտում կ'ըլլայ» . կէսերը կ'ըսէին . «Անոր հետ հրեշտակ խօսեցաւ» : 29 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ . «Ինծի համար չեկաւ այս ձայնը , հապա ձեզի համար : 30 Հիմա այս աշխարհիս դատաստան է , հիմա այս աշխարհիս իշխանը դուրս պիտի ձգուի : 31 Եւ ես երբ աշխարհէս բարձրանամ , ամէնքն ալ ինծի պիտի բերեմ» : 32 Այս կ'ըսէր նշանակելով թէ ինչ մահով պիտի մեռնէր : 33 Պատասխան տուաւ անոր ժողովուրդը . «Մենք Թրէնքէն լսեցինք թէ Քրիստոսը յաւիտեան կայ , եւ դուք ի՞նչպէս կ'ըսես թէ պէտք է մարդոյ Որդւոյն բարձրանալ . ո՞վ է այն Որդին մարդոյ» : *34 Յիսուս կ'ըսէ անոնց .

23-25. Յորենն որ հատիկ մը է , հողին մէջ մտնելէն յետոյ փառաւոր և արդիւնաւոր կերպով յարուժիւն կ'առնու , որքան և պեկի մարդն , որ Աստուծոյ գերազոյն արարածն է , պիտի ունենայ իւր մեռնելէն յետոյ փառաւոր կեանք , միայն Թէ ինչպէս ցորենի հատիկն եթէ չըլլայ անարատ , չըռնիր , այսպէս մարդն եւս եթէ չըլլայ անարատ , այսինքն ըլլայ մեղաւոր , կեանք չունի , կորուստ ունի , ի դժոխս : Ուստի Յիսուս վերստին անձնանուիրուժիւն կը բարոզէ առ սէր արքայութեանն Աստուծոյ և մեր յաւիտեանական կենաց (Մատթ . ԺԶ . 24-26 : Մարկ . Թ . 36-39 : Դուկ . 23 27) :

26 . Այս տազնապն ունեցաւ և ի Գեթսեմանի :

27-32 . Հայր Աստուծոյ վկայութենէն յետոյ Յիսուս բազարձակապէս կը բարոզէ , Թէ այլեւս չարին իշխանութեւնը դարձած է , և իւր մահուպէս պիտի գնէ մարդկութիւնը :

«Քիչ ժամանակ ալ լոյսը ձեզի հետ է, զացէք, որքան որ լոյս ունիք, որպէս զի խաւարը ձեզի չհասնի. որովհետեւ ով որ խաւարի մէջ կ'երթայ, չգիտեր, ուր կ'երթայ: 35 Երբ դեռ լոյսը ձեզի հետ ունիք, լոյսին հաւատացէք, որպէս զի լուսոյ որդիներ ըլլաք»: Յիսուս այս խօսեցաւ, եւ գնաց պանուրտեցաւ անոնցմէ:

36 Եւ անոնց առջեւ այնչափ նշաններ ըրած էր, եւ անոնք անոր չէին հաւատար. *37 որպէս զի Եսայի մարգարէի խօսքը կատարուի, որ ըսաւ. «Տէր, ով հաւատաց մեր լուրին եւ Տէրոջ բազուկն որձու յայտնուեցաւ»: 38 Անոր համար չէին կրնար հաւատալ, որովհետեւ նորէն Եսայի մարգարէն կ'ըսէ թէ *39 «Անոնց աչքերը կուրցուց ու անոնց արտերն ապշեցուց, որպէս զի շտեմանն աչքով ու սրտով իմանան ու դառնան, եւ զանոնք թշկեմ»: 40 Եսայի այս ըսաւ, որովհետեւ անոր փառքը տեսաւ ու անոր համար խօսեցաւ: *41 Բայց սակայն այն իշխաններէն շատերն անոր հաւատացին, բայց Փարիսեցիներուն համար չէին յայտնուիր, որպէս զի ժողովրդանոցէն չելլին: 42 Վասն զի մարդիկներուն փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին:

*43 Եւ Յիսուս կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Ով որ ինձի կը հաւատայ, ինձի չհաւատար, հապա անոր՝ որ զիս ղրկեց. *44 Եւ ով որ զիս կը տեսնէ, զանի կը տեսնէ, որ զիս ղրկեց: 45 Ես աշխարհի լոյս եկայ, որովհետեւ ամէնն ով որ ինձի կը հաւատայ, խաւարի մէջ պիտի չմնայ: 46 Եւ թէ որ մէկը լսէ իմ խօսքերս ու չզօհէ,

33. Ժողովուրդը կը գայժակդի, քանզի գիտէր թէ Մեսիայն պիտի ապրի յաւիտեան (Սաղմ. Էթ. 36, ձԺ. 4, Ես. Թ. 6-7, Դան. Բ. 44, է. 13-14), չէր յիշեր թէ Մեսիայն պիտի չարչարուէր ու մեռնէր (Սաղմ. ԾԳ. Դան. Թ. 26, Ես. ԾԳ), և յետոյ պիտի տիրէր յաւիտեան:

34-35. (Ձ. 52-53, Ը. 12, Թ. 5):

37. (Ես. ԾԳ. 1):

39. (Ես. Զ. 9-10; Մատթ. ԺԳ. 14-15):

41. Որպիսիք էին Յովսէփ Արեմամացի և Նիկողոմոս, և ուրիշն:

43. (Ե. 44, Թ. 22):

44-46. Աստ կը կրկնէ Յիսուս ինչ որ խօսած էր ուրիշ անգամ (Է. Ը. 19, Ժ. 38):

ես զանի չեմ դատեր. որովհետեւ չեկայ որ աշխարհը դատեմ, հապա որպէս զի աշխարհը փրկեմ: *47 Ով որ կ'անարգէ զիս ու իմ խօսքերս չընդունիր, կայ որ զանի կը դատէ. այն խօսքն որ ես խօսեցայ, ան պիտի դատէ զանի վերջին օրը: 48 Որովհետեւ ես իմ անձէս չխօսեցայ, հապա Հայրն որ զիս զրկեց, ան ինձի պատուէր տուաւ, ինչ պիտի ըսեմ եւ ինչ պիտի խօսիմ: 49 Եւ գիտեմ թէ այն պատուէրն է յաւիտենական կեանք. ուրեմն ինչ որ ես կը խօսիմ, ինչպէս ինձի Հայր ըսաւ, այնպէս կը խօսիմ »:

Գ Լ ՈՒ Ե Ժ Գ.

*1 **Չատկի տօնէն առաջ գիտցաւ Յիսուս թէ անոր ժամանակը հասած է, որպէս զի մեկնի աշխարհէս առ Հայր, սիրեց իրեններն՝ որ աշխարհի մէջ են, միշտ սիրեց զանոնք:**

*2 **Եւ ընթրիքն ըլլալու ատեն՝ Սատանան Սկարիավտացի Սիմոնեան Յուզայի սրտին մէջ դրած էր, որ մատնէ զանի:** *3 **Գիտցաւ Յիսուս թէ ամէն բան տուաւ Հայրն անոր ձեռքը, եւ թէ Աստուծոյ էլաւ ու Աստուծոյ կ'երթայ:** 4 **Այն ընթրիքէն կ'ելլէ ու հազուամտները մէկդի կը գնէ եւ զինձակ մը առնլով փաթթեց:** 5 **Եւ յիսոյ ջուր առնլով կոնքին մէջ թափեց եւ սկսաւ աշակերտներուն**

47-50 (Գ. 17. Ը. 15): Բանը պիտի դատէ, այսինքն մեր գիտակցութիւնն լայնեմամ այնքան զօրաւոր պիտի ըլլայ, որ բաւական իսկ պիտի ըլլայ մեր դոտապարտութեանը, եթէ յաշխարհի աստ արհամարհած ենք Աստուծոյ բանը:

1. Միւրեց Յիսուս իրենները մեծադոյն սիրով լուսցմամբ ուսիցն աշակերտաց, որք յայնմամ կը վիճէին թէ ով է իրենց մէջ մեծը, ե ոչ որ յանձըն կ'առնոյր լուսցման արարողութիւնը կատարել՝ բր փոքրագոյն, որպէս օրէն էր ըստ Թալմուտի (Ղուկ. ԻԲ. 23-30):

2. Այսինքն Յուզայ մերագրուած էր Սատանայէն:

3-15. Յիսուս կը լուսանոյ իւր աշակերտներուն շտները. Գետրոս կը գիմարէ ե յետոյ կը գիշանի լսելով Յիսուսէն թէ ռոտիցդ պէտք են մաք-

սուքերք լուայ, եւ կը արբէր զենջակովն ար փաթթած էր :
 6 Սիմոն Պետրոսին կուգայ . եւ ան կ'ըսէ անոր . « Տէր ,
 գուն իմ սուքերս կը լուաս » : 7 Պատասխան տուաւ Յի-
 սուս անոր ու կ'ըսէ . « Ինչ որ ես կը գործեմ , գու հիմա
 չես գիտեր , բայց յետոյ պիտի գիտնաս » : 8 Պետրոս կ'ը-
 սէ անոր . « Իմ սուքերս յաւիտեան պիտի չլուաս » . Պատաս-
 խան տուաւ Յիսուս անոր . « Թէ որ քեզ չլուամ , ինձի
 հետ մատ չաւնիս » : 9 կ'ըսէ անար Սիմոն Պետրոս . « Տէր ,
 ոչ միայն իմ սուքերս , հապա ձեռքերս ու գլուխս ալ » : 10
 Յիսուս կ'ըսէ անոր . « Լուացուողը պէտք մը չունի , բայց
 թէ սուքերը լուայ , վասն զի բոլորովին սուրբ է . եւ դուք
 սուրբ էք , բայց ոչ ամէնքդ » : 11 Որովհետեւ գիտէր զանի
 որ պիտի մատնէր . անոր համար ըսաւ թէ « Ամէնքդ
 սուրբ չէք » : 12 Եւ երբ լուաց անոնց սուքերը , առաւ իր
 հագուստներն ու նորէն նստաւ , եւ կ'ըսէ անոնց . « Գի-
 տէ՛ք , ձեզի ի՞նչ բրի . 13 Իուք զիս Վարդապետ եւ Տէր
 կը կոչէք , եւ չիտակ կ'ըսէք , վասն զի եւ եմ : 14 Բայց
 հիմա թէ որ ես ձեր սուքերը լուացի՛ ես Տէր ու Վար-
 դապետս , եւ դուք պարտիք իրարու սուքերը լուայ : 15
 Որովհետեւ ձեզի օրինակ մը տուի , որ ինչպէս ես ձեզի
 բրի , դուք ալ ընէք :

* 16 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի . « ծառան իր տէրոջմէն մեծ

բուժեան , յօդի ի Գլուխ սրբուժեան (Շարական) : Այս լուացումն էր
 նշան Յիսուսի ծայրագոյն խնամարհուժեանն ու սիրոյն , և է մեզ դաս տալու
 զգուշանալու համար հպարտութենէ :

- 16. (Մատթ. Ժ. 24: 2. 40) :
- 17. (Ձ 65. 72) :
- 18. (Մարկոս ԻԱ. 9) :
- 20. (Մատթ. Ժ. 40) :

21. Կը խոսի Յիսուս , տեսնելով մարդկային սրտի օպականութիւնը ,
 որոյ օրինակն էր Յուզայ , որոյ սրտին մէջ բոյն դրած էր Սասանայ . Լը-
 նմար էր չիտովիլ , տեսնելով չար գտնել այնպիսի մէկէ մը որ իւր բարե-
 բարութիւնն էր վայելած , Յոյ որ իւր Աստուածային փառքն եւր : Ա՛լ ի
 կասկած , թէ հրեշտակը ապստամբած են երբեմն երկնքի մէջ :

- 22. (Ղուկ. ԻԲ. 21-23; Մատթ. 21-25; Մարկ. ԺԳ. 18-21) :
- 23. Կը մեկնուի թէ Յովհաննէս կրտսերագոյնը ըլլալուն համար կը ս
 բուէր : եւ թէ ունէր կամոզին և անխախտ սէր առ իւր Վարդապետ :

չէ, ոչ ալ զրկուողը մեծ է անարմէ, որ զանի զրկեց: *17 Թէ որ զայս գիտէք, երանելի եւս էք, թէ որ այս բնէք: *18 Ձեր ամենուն համար չեմ ըսեր, որովհետեւ ես գիտեմ, որոնք ընտրեցի. բայց որպէս զի գիրքը կատարուի թէ «Նա՛ որ ինձի հետ հաց կ'ուտէք, ինձի խաբէութիւն ըրաւ»: 19 Դեռ չեզամ ասկէ ետքը կ'ըսեմ ձեզի, երբ ըլլայ, հաւատաք թէ ես եմ: *20 Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի. ով որ կ'ընդունի, զոր ես պիտի զրկեմ, զիս կ'ընդունի. եւ որ զիս կ'ընդունի, զանի կ'ընդունի, որ զիս զրկեց: »

*21 Այն երբ Յիսուս ըսաւ, իր ոգին խռովեցաւ, վհայեց ու կ'ըսէ. «Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեռնէ մէկը զիս պիտի մասնէ»: *22 Իրարու կը նայէին աշակերտները տարակուսելով, թէ որու վրայով կ'ըսէ: *23 Եւ աշակերտներէն մէկը նստած էր Յիսուսին քով, եւ Յիսուս զանի կը սիրէր: *24 Սիմոն Պետրոս կ'աղկնարկէ հարցնելով. «Ո՞վ է ան, որուն համար կ'ըսէ»: 25 Եւ ան իջնալով Յիսուսի կուրծքին վրայ, կ'ըսէ անոր. «Տէր, ո՞վ է»: 26 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ. «Ինչ է, որուն ես պիտի թրջեմ պատառը ու պիտի տամ»: Եւ պատառը թրջելով Սկարիովացի Յուդային կուտայ: *27 Եւ պատառէն ետքը Սատանան անոր մէջ մտաւ, եւ Յիսուս կ'ըսէ անոր. «Հիմա ինչ որ պիտի ընես, շուտ ը-

24-25 Հրեայք կ'ուտէին զատիկը յոտին կեցած, որպէս Սէ պիտի ճամբորդէին (Նըք ԺԲ. 11), յետոյ, յետ Բարսիլանեան զգրութեան, ընկողմնելով ուտել սկսան, ըստ Պարսիկ սովորութեան:

27-30. Յիսուս մատնանիչ կ'ընէ մատնիչը, որ իսկոյն իսպառ անձնատուր եղաւ Սատանային և աշակերտը Սէ եւ զիսցան, բայց չդիտցան Սէ նոս պիտի կատարէ իւր մտտնութիւնն այնպէս որոտց, անիջապէս, և կարծեցին Սէ տօնի միւս օրերուն համար ինչ ինչ կարգադրութիւն ընելու համար նա մեկնեցաւ և կամ աղքատաց ողորմութիւն տալու (ՃԲ. 5) Գիշեր էր, ուրիմն Յուդայի սրտին մէջ ըյսը մտրած էր. «Ի՞նչու որ ոչ եզեւ նմա հասու»: »

31. Յիսուս կ'սկսի ընել իւր վերջին կատիքը. Յուդայի մտածութեամբ կ'սկսէր Յիսուսի փառքը. ցարդ Արգին իբր մարդ փառաւորեց Լուսը. այժմ Լուսին իւր Արգին պիտի փառաւորէր, վերապէն հազար ընելով զիս իւր աստուածային փառաց:

րէ) : 28 Եւ զայս այն նատողներէն մէկը չհասկցաւ , թէ ինչ ըսաւ անոր : 29 Որովհետեւ ոմանք կը կարծէին , թէ զամն զի արկղը կը պահէր Յուդա , ըսաւ անոր Յիսուս . « Գնէ , ինչ որ մեզի այս տօնին պէտք է , եւ կամ աղքատներուն ինչ պիտի սրուի » : 30 Իսկ ան պատառը առնլով իսկոյն դուրս ելաւ . եւ գիշեր էր :

*31 Եւ երբ ելաւ , կ'ըսէ Յիսուս . « Հիմա Որդի մարդոյ փառաւորուեցաւ , եւ Աստուած փառաւորուեցաւ անով . 32 եւ թէ որ Աստուած փառաւորուեցաւ անով , եւ Աստուած պիտի փառաւորէ զանի իր սննձին մէջ . եւ շուտով զանի պիտի փառաւորէ : *33 Զաւակներս , քիչ մը ատեն ալ ձեզի հետ եմ . պիտի փնտռէք զիս . եւ ինչպէս Հրեաներուն ըսի թէ « Ուր ես երթամ , դուք չէք կրնար գալ , եւ հիմա ձեզի կ'ըսեմ . *34 Ձեզի նոր պատուիրան կուտամ , որ իրար սիրէք . ինչպէս եւ ձեզ սիրեցի , դուք ալ իրար սիրէք : *35 Ասով գիտնան ամէնքն ալ թէ իմ աշակերտներս էք , թէ որ իրար սիրէք : *36 Սիրոն Պետրոս կ'ըսէ անոր . « Տէր , ո՞ւր կ'երթաս » . պատասխան տրուաւ Յիսուս . « Ուր ես կ'երթամ , դուն չես կրնար գալ իմ ետեւէս , բայց յետոյ պիտի գաս իմ ետեւէս » : 37 Կ'ըսէ անոր Պետրոս . « Տէր , ինչպէս չեմ կրնար գալ հիմա

33. (է. 33-3 ; Ը. 21) :

33. Սէր . այս է բովանդակ Նոր Կտակարանի պարունակութիւնը . « ԵՍԷ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց . . . եւ ԵՍԷ ունիցիմ մարգարէութիւն եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն , եւ ԵՍԷ ունիցիմ զամենայն հուսատս մինչեւ զլերինս փոփոխելոյ , եւ սէր ոչ ունիցիմ , ոչ ինչ եմ : Եւ ԵՍԷ ջամբիցեմ զամենայն ինչս աղբատաց եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն եւ սէր ոչ ունիցիմ , ոչ ինչ օգտիմ » (Ա. Կորնթ . ԺԳ. 1 10 ; Բ. Թեա . Ա. 3 ; Ա. Յովհ. Գ. 14 . 23 ; Ա. Պետ. Ա. 22 եւ այլն) : Նոր չէր այս պատուէր (Ղեւտ. ԺԹ. 18) : Այլ նոր էր գործադրութեան եղանակը , անմասն հինին : Սիրել զանձն իբրեւ զընկերն , այս էր հինը . նորն էր սիրել ոչ Թէ միայն ընկերն ու ազգակիցը , այլ Թշնամին իսկ եւ օտարազգին եւս . սիրել , ոչ ըստ հնոյն չափով մը , այլ յանչափս :

35. Հեթանոսք բրիստոնեայնեքը յառաջին դարս օրինակ ցոյց կուտային սիրոյ . ան որ չսիրեր , քրիստոնեայ չէ :

36-38. Գուշակութիւն ուրացութեանն Պետրոսի (Մատթ . ԻԶ. 31-35 ; Մարկ . ԺԴ. 27-31 ; Ղուկ . ԻԲ. 31-34) :

քու ետեւէդ, արդէն իմ անձս քու վրագ ես դրի): 38
 Պատասխան տուաւ Յիսուս. «Քու անձդ իմ վրա՛ս դնես.
 Ճշմարիտ կ'ըսեմ քեզի. դեռ հաւը չխօսած, դուն զիս
 երեք անգամ պիտի ուրանաս :

ՔԼՈՒԹ ԺԴ.

*1 Քեր սրտերը թող չխռովին, հապա Աստուծոյ հա-
 ւատացէք եւ ինծի հաւատացէք: *2 Իմ Հօրս տանը մէջ
 չատ՝ օթեւաններ կան, ապա թէ չէի ըսեր ձեզի թէ
 «Երթամ, ձեզի տեղ պատրաստեմ»: *3 Եւ թէ որ երթամ ու
 ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ եւ ձեզ իմ քովս
 կ'առնում, որովհետեւ ուր ես ըլլամ, դուք ալ հոն պիտի
 ըլլաք: *4 Եւ ուր ես կ'երթամ, գիտէք, եւ ճամբան գիտէք):
 *5 Կ'ըսէ անոր թովմաս. «Տէր, չենք գիտեր, ո՞ւր կ'երթաս,
 եւ ի՞նչպէս ճամբան կրնանք գիտնալ»: *6 Կ'ըսէ անոր
 Յիսուս. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք.
 մէկը Հօր չգար, թէ ոչ ինձմով: *7 Թէ որ զիս գիտնայիք,
 ուրեմն իմ Հայրս ալ կը գիտնայիք, եւ ասկէ ետքը պիտի

1. Աշակետք խռոված էին, լսելով թէ Յիսուս կը թողու աշխարհս ա-
 ռանց պատկելու Իսրայելի ակնկալութիւնը (Ղուկ. ԻԴ. 21):

2. Երկնքի արքայութիւնը սահման չունի, անհուն է. այլ մենէ իւրա-
 քանչիւրին տեղ հոն մեզ Քրիստոս կ'որոշէ:

3. Շատ սուրբեր տեսան Տէրն ի վախճանի կենաց, որպէս և Ստեփա-
 նոս (Գործք. է. 55): Հոգւոյ աչօք նա մեզ միշտ տեսանելի է: Նա կուգայ
 և մեր հոգիներուն կ'առաջնորդէ յերկին, յաւիտեան իրեն հետ ըլլալու
 համար:

4. Ան Հայր կ'երթար նա, չարչարանաց և մահուան ճանապարհով
 (Մատթ. ԺԶ. 21):

5. Յարութենէն յետոյ աշակերտք իմացան (Ղուկ. ԻԴ. 21):

6. Նա էր ճանապարհ, առաջնորդող մեզ յերկին. նա էր ճշմարտու-
 թիւն, զի մեզ աւանդեց գերընտիր վարդապետութիւններ ի փրկութիւն և
 յերշնակութիւն մեր. նա էր կեանք, զի մեզօք մեռեալներու շնորհեց կեն-
 դանութիւն: Հայրը կուտայ զմեզ իրեն և ինքն զմեզ կուտայ Հօր (Զ. 37):

7. (Ը. 19): Ընդունելով Սուրբ-Հոգին պիտի ճանչնային զինքն ա-
 Հայրը:

գիտնաք զանի) : *8 Կ'ըսէ անոր Փիլիպպոս , « Տէր , ցուցուր մեզի Հայրը , եւ մեզի հերիք է » : *9 Կ'ըսէ անար Յիսուս . « Այսչափ ժամանակ ձեզի հետ եմ , ու զիս չճանչցա՞ր , Փիլիպպոս . ով որ զիս տեսաւ , Հայրը տեսաւ , եւ դու ի՞նչպէս կ'ըսես թէ « Յուցուր մեզի Հայրը » : 10 Չե՞ս հաւատար թէ ես Հօր մէջ եւ Հայրն իմ մէջ է . այս խօսքերս որ ես կը խօսիմ ձեզի , չէ թէ ինձէն կը խօսիմ , հապա Հայրն որ իմ մէջ բնակած է , ան կը գործէ գործերը . 11 Կը հաւատա՞ք ինձի , թէ ես Հօր մէջ եւ Հայրն իմ մէջ է : *12 Ապա թէ ոչ գոնէ գործերուն համար հաւատացէ՞ք : Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ան որ ինձի կը հաւատայ , ան գործերն զոր ես կը գործեմ , ան ալ պիտի գործէ , եւ անոնցմէ աւելի մեծամեծները պիտի գործէ , որովհետեւ ես Հօր կ'երթամ : *13 Եւ ինչ որ իմ անունովս սուգէք , պիտի ընեմ զայն , որպէս զի Հայր փառաւորուի Որդւով : *14 Ինչ որ ուզէք ինէ , պիտի ընեմ զայն :

15 Թէ որ զիս սիրէք եւ իմ պատուէրներս պահէք : 16 Եւ ես Հօր պիտի աղաչեմ , եւ ձեզի ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ , որ ձեզի հետ յաւիտեան պիտի բնակի : 17 Ծշմարտութեան Հոգին , որ աշխարհ չկրնար ընդունիլ . որովհետեւ զանի չտեսներ ու զանի չճանչնար , բայց

8. Ձևստուած տեսնելու փափարն է տխմարուծիւն , վասն զի նա հոգի է , և կը պաշտուի հոգով և ճշմարտութեամբ (Գ. 24) :

9-11. Նա ունէր ոչ թէ միայն անստգիւտ և անմեղ բարբ ու վարբ , այլ և գործեր , որք կը վկայէին թէ ինքն էր Աստուած (Ժ. 38) :

12. Ոչ ապարէն թէ առաքեալք և սուրբք մեծամեծ հրաշքներ գործեցին և այսօր իսկ կը գործուին , ոչ թէ միայն առ կենդանութեամբ սրբոցն , այլ և յետ մահու նոցա ի ձեռն սուրբ նշխարաց իւրեանց : Ապարէն իսկ յաջողապէս քրիստոնէական կրօնի տարածումն իւր պաշտօնէից ձեռամբ ֆայսօր չէ մեծագոյն հրաշք :

13. (Մատթ. է. 7-8; Մարկ. ԺԱ. 24) : Պիտի փառաւորուէր նա (ԺԱ. 4; ԺԲ. 28; ԺԳ. 31) :

14-17. Հաւատալով մարդ Աստուծոյ , կը սիրէ զնա և սիրելով զնա Իստարէ նորս պատուէրները , որով կ'ընդունի ճշմարտութեան Հոգին . և մարտութիւնն էր ինքն իսկ Քրիստոս , ուրեմն նորա Հոգին պիտի ընդունէր , բայց ոչ աշխարհէս , այսինքն աշխարհասէր և մոքեկեցաց մօր երբէք պիտի չկրնան ընդունիլ զանի (Ա. Կորնթ. Բ. 14) :

գուք զանի կը ճանչնաք, որովհետեւ ձեր մէջ պիտի բռնակի ու ձեզի հետ պիտի ըլլայ: *18 Ձեզ որք չեմ թողուր, ձեզի կուգամ: *19 Քիչ ժամանակ եւս այս աշխարհ զիս պիտի չտեսնէ. բայց գուք զիս պիտի տեսնէք, վասն զի ես կենդանի եմ, եւ գուք կենդանի պիտի ըլլաք: *20 Այն օրը պիտի գիտնաք գուք, որ ես Հօր մէջ եւ գուք իմ մէջ եւ ես ձեր մէջ եմ: 21 Ով որ իմ պատուէրներս կը բռնէ եւ զանոնք կը պահէ, ան է որ զիս կը սիրէ. եւ ան որ կը սիրէ զիս, իմ Հօրմէս պիտի սիրուի. եւ ես զանի պիտի սիրեմ, եւ անոր զիս պիտի երեւցնեմ»: 22 Կ'ըսէ անոր Յուզա, ո՛չ Սկարիովտացին. «Տէր, ի՞նչ եղաւ, որ մեզի պիտի յայանես քեզ եւ ոչ աշխարհի»: 23 Պատասխան տուաւ Յիսուս ու կ'ըսէ անոր. «Թէ որ մէկը սիրէ զիս, իմ խօսքերս պահէ, եւ Հայրս զանի պիտի սիրէ. եւ անոր պիտի գանք ու անոր մէջ օթեւան պիտի ընենք: 24 Եւ ան որ չսիրեր զիս, իմ խօսքերս չպահեր. եւ իմ խօսքս որ կը լսէք, իմս չէ, հապա Հօր՝ որ զիս զրկեց: 25 Այս ձեզի խօսեցայ, երբ ես ձեզի հետ եմ: *26 Իսկ միսիթարիչ Սուրբ Հոգին՝ որ Հայր պիտի զրկէ իմ անունովս, ան պիտի սորվեցնէ ձեզի ամէնը, եւ պիտի յիշեցնէ ամէնը, ինչ որ ըսի ձեզի: *27 Ձեզի խաղաղութիւն կը թողում, իմ խաղաղութիւնս ձեզի կուտամ. ոչ ինչպէս աշխարհ կուտայ, ես ձեզի կուտամ. ձեր սրտերը թող չխռովին եւ թող չվախնան: *28 Լսե-

18. Նս միշտ իրեններուն հետ պիտի ըլլայ և պիտի երեւեր իրեններուն, ինչպէս յետոյ եղաւ յաճօխ, թող որ պիտի գայ աշխարհի վերջին օրը:

19. Հիտարանչ խօսք. ես կենդանի լինելով միշտ, կենդանի պիտի պահէ իրենները. մահ չկայ այլեւս: Իւր անձին կենդանութիւնը պիտի վկայէր թէ մարդն եւս իրեն պէս պիտի ըլլայ. կենդանի յուրտեսան:

20-25. Մարդիկ բանալով իրենց սիրտը, զայն օժեւան կ'ընեն Ատուծոյ. այս ո՛րպիսի գերահրաշ և փրկաւէտ վարդապետութիւն:

26. Պիտի գար Հոգին, ի քարոզութիւն Քանին (Ք. Պետ. Ա. 21):

27. Աշխարհիս մէջ խաղաղութիւնը սրով, այսինքն բռնի կը պահպանուի, այլ այն խաղաղութիւնը զոր Տէր պիտի շնորհէր և շնորհեց, պահպանուեցաւ ու կը պահպանուի ցարդ պիտի. ուրեմն երկրպի պէտք չկայ:

28. Վերստին կ'ունայնացնէ զինքը, իրմէն մեծ անուանելով Հայրը (Փիլիպ. Բ. 6-8):

ցիք որ ձեզի ըսի թէ կ'երթամ եւ ձեզի կուգամ .
 թէ որ զիս կը սիրէք, ուրեմն ուրախ ըլլալու էիք,
 որ ես Հօր կ'երթամ, որովհետեւ իմ Հայրս ինէ մեծ է:
 *29 Եւ ՚իմա ըսի ձեզի զեռ չեղած, որպէս զի երբ ըլլայ,
 հաւատաք: *30 Այլ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ. այս աշ-
 խարհիս իշխանք կուգայ եւ իմ վրայ բան մը չգտնեմ:
 *31 Բայց թէ ճանչնայ աշխարհ, որ Հայրը կը սիրեմ. եւ
 ինչպէս ինձի պատուիրեց Հայր՝ այնպէս կ'ընեմ. զի, ե-
 լէք. երթանք ասկէջ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

*1 Ճշմարիտ որթն ես եմ, եւ իմ Հայրս մշակ է: 2 Ա-
 մեն ուռ որ իմ վրաս է եւ պտուղ բերեր, զանի կը կտրէ-
 եւ ամէնն ու որ պտուղ կը բերէ, զանի կը սիրէ, որպէս զի
 ալ աւելի պտղաբեր ըլլայ: 3 Իուք արդէն սուրբ էք այն
 խօսքին համար, որ ձեզի խօսեցայ: 4 Կեցէք ինձմով եւ
 ես ձեզմով. ինչպէս ուռն ինքնին չկրնար պտուղ բերել
 թէ որ որթին հաստատուած չէ, նոյնպէս դուք ալ թէ որ
 ինձի հաստատուած չէք: 5 Ես որթն եմ եւ դուք ուռն.
 ու որ հաստատուած է ինձմով եւ ես անորմով, ան շատ
 պտուղ կը բերէ, որովհետեւ առանց ինձի չէք կրնար
 բան մը ընել: 6 Թէ որ մէկը հաստատուած չէ ինձի, ան
 դուրս ելաւ իբր ուռ ու ցամքեցաւ, եւ զանի կը ժողվեն
 եւ կրակը կը ձղին ու կ'այրի: 7 Թէ որ իմ մէջս կենաք եւ

29. (ԺԳ. 19): Կ'ակնարկէ հալածանաց ժամանակը:

30. Չարը տիրած էր աշխարհիս, եղած էր իշխան (ԺԲ. 31): Բայց
 նա պիտի չգտնէր սեղ Յիսուսի անձին մէջ, վասն զի էր նա սուրբ ամենն-
 լին:

31. Իբր մարդ կը տազնապի, յիշելով անուշի չարչարանքն ու մահը
 զոր պիտի կրէր (Մատթ. ԻԶ. 46: Մարկ. ԺԳ. 42):

1-8. Յիսուս կը հաստատէ թէ իւր եւ իրեններու մէջ եղած միութեան
 միայն կարելի է փրկութիւն. առանց Քրիստոսի չկայ պտղաբերութի-
 աշխարհն բարեգործութիւն, որ վարձատրուի Աստուծմէ:

իմ խօսքերս ալ ձեր մէջ կենան, ինչ որ ուզէք ու պիտի խնդրէք, եւ ձեզի պիտի ըլլայ: 8 Ասով փառաւորուեցաւ իմ Հայրս, որ շատ պատու դերէք եւ իմ աշակերաններս ըլլաք: *9 Ինչպէս Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սիրեցի: իմ սիրոյս մէջ հաստատուն կեցէք: 10 Թէ որ իմ պատուէրներս պահէք, իմ սիրոյս մէջ պիտի կենաք, ինչպէս ես իմ Հօրս պատուէրները պահեցի, եւ կամ անոր սիրովը: 11 Այս խօսեցայ ձեզի, որպէս զի իմ ուրախութիւնս ձեզի ըլլայ, եւ ձեր ուրախութիւն լցուած ըլլայ: 12 Իմ պատուէրս այս է. որ իրար սիրէք, ինչպէս ես ալ ձեզ սիրեցի: 13 Այս սէրէն աւելի մեծը մէկը չունի, թէ որ իր անձը գնէ իր բարեկամներուն վրայ: 14 Դուք իմ բարեկամներս էք, թէ որ ընէք, ինչ որ ես կը պատուիրեմ: *15 Ալ ձեզի ծառաներ չեմ կոչեր, որովհետեւ ծառան չգիտեր, անոր տէրն ինչ կը գործէ. հապա ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետեւ այն ամէնը որ իմ Հօրմէս լսեցի, ձեզի յայտնեցի: 16 Ոչ թէ դուք զիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրեցի. եւ ձեզ գրի, որ դուք երթաք եւ պտղաբեր ըլլաք, եւ ձեր պտուղը կենայ. եւ ինչ որ խնդրէք իմ Հօրմէս իմ անունովս, պիտի տրուի ձեզի: 17 Այս կը պատուիրեմ, որ իրար սիրէք: *18 Թէ որ աշխարհ ձեզ ատէ, գիտցէք որ առաջ զիս ատեց: 19 Թէ որ այս աշխարհէն էիք, աշխարհ իրենները կը սիրէր անշուշտ. բայց որովհետեւ չէք այս աշխարհէ, հապա ես ձեզ ընտրեցի աշխարհէն, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ: 20 Յիշեցէք այն խօսքը, որ ձեզի ըսի, թէ ծառան մեծ չէ իր տէրոջմէն. թէ որ զիս հալածեցին, ուրեմն ձեզ ալ պիտի հալածեն. թէ որ իմ խօսքերս պահեցին, ուրեմն

9-14. Վերստին յորդոր. սիրել զինքը. պահել իւր պատուէրները և սիրոյ մեծագոյնը ընել, մեռնիլ մինչեւ իսկ առ սէր ընկերի (Ժ. 10 · 15):
 15-17. Յիսուս իւր գերագոյն սէր առ իրանները կը յայտնէ, ոչ իբր Սէ ծառայներու, որք արգարեւ էին ծառայ, այլ զանոնք բարեկամ կը կոչէր Սող որ յետ իւր յարուժեան զանոնք, զորս ինքն ընտրեց (Ղուկ. 2. 13) ր եղբայր անուանելու շնորհն ըրաւ (Մատթ. ԻԸ. 10):
 18-21. Աշխարհ զինքն ու իրենները պիտի ատէր, պիտի լլկէր և մահու անգամ պիտի դատապարտէր. իրեններն Աւետարանի քարոզութեամբ պիտի արհամարհէին աշխարհս և սիրէին միայն երկինքը.

նորէն զիս պիտի տեսնէք : 20 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ դուք պիտի լուք եւ պիտի ողբաք եւ աշխարհ պիտի խընդայ . դուք պիտի տրտմիք , բայց ձեր տրտմութիւնը ուրախութիւն պիտի ըլլայ : 21 Կին մը երբ ծնի , անոր տրտմութիւն է , որովհետեւ անոր ժամը հասած է . սակայն երբ մանուկը ծնի , ուրախութենէն ալ չյիշեք նեղութիւնը , վասն զի աշխարհի մարդ մը ծնաւ : 22 Եւ դուք հիմա տրտմութիւն ունիք , սակայն նորէն պիտի տեսնեմ ձեզ , եւ ձեր սրտերը պիտի ուրախանան . եւ ձեր ուրախութիւնը ոչ մէկը պիտի հանէ ձենէ : 23 Եւ թոյն օրը ինծի բան մը պիտի չնարգնէք : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իմ անունովս ինչ որ ուզէք իմ Հօրմէս , պիտի տրուի ձեզի : 24 Մինչեւ հիմա իմ անունովս բան մը չուզեցիք , ուզեցէք եւ պիտի առնուք , որպէս զի ձեր ուրախութիւնը լցուած ըլլայ : 25 Չայս առակով ձեզի խօսեցայ , ժամանակ պիտի գայ , երբ առակներով ձեզի հետ պիտի չխօսիմ , հապա յայտնապէս Հօրը վրայով ձեզի պիտի պատմեմ : 26 Այն օրը պիտի ուզէք իմ անունովս , եւ չեմ բեր ձեզի թէ ես պիտի աղաչեմ Հօր ձեզի համար : 27 Վասն զի ինքն իսկ Հայր ձեզ կը սիրէ , վասն զի դուք զիս սիրեցիք , եւ հաւատացիք թէ ես Աստուծամէ ելայ : 28 Հօրմէն ելայ եւ աշխարհ եկայ եւ նորէն կը թողում աշխարհը եւ Հօր կ'երթամ :

*29 Կ'ըսեն անոր աշակերտներն . « Ահա հիմա յայտնապէս կը խօսիս , եւ ոչ մէկ առակ կ'ըսես : 30 Հիմա գիտենք , թէ գիտես ամէն բան , եւ բան մը պէտք չէ որ

նէր ու վերստին իրենց երեւեր , բայց նոցա տարակոյսը կը փարստէ նա . խոստանալով տալ նոցա լի ուրախութիւն և լիուրի գիտութիւն աստուծային ճշմարտութեանց :

29-33. Մինչ աշակերտք կը դաւանին իրենց հաւատքը , Յիսուս իբրեւ ամենագէտ , կը գուշակէ թէ նոցա հաւատքն էր դեռ խախուտ , եւ սպաս կ'արտասանէ խօսք մը . խօսք , որ աւետարանի ճանարտութեան կնիք խօսք , որ երբէք ռեւէ մարդկային բերնէ տրտամանուած եւ յետոյ կուռուած է . խօսք , որ այսօր բովանդակ մարդկութեան զարմանքն , եթէ ոչ մարտութիւնը , ի վեր կը հանէ . « Քաջալերուեցէք , ես յազմեցի աշխարհ Այն բերանն , որ այս խօսք յայնժամ կ'արտասանէր , իրեններէն ալ լքուած էր , եւ ոչ որ ունէր իւր հետ , բայց միայն իւր Հայրը , և այդ

մէկը հարցնէ քեզի . ասով կը հաւատանք թէ Աստուծոյ
 ելար» : 31 Պատասխան տուաւ անոնց Յիսուս ու կ'ըսէ .
 « Հիմա կը հաւատանք . 32 անա պիտի գայ ժամանակը եւ
 եկած ալ է , որ պիտի ցրուիք զատ զատ տեղեր , եւ զիս
 մինակ պիտի թողուք եւ մինակ չեմ , որովհետեւ Հայր
 ինձի հետ է : 33 Չայս խօսեցայ ձեզի , որպէս զի ինձի
 հետ խաղաղութիւն ունենաք . այս աշխարհիս մէջ նեղու-
 թիւն պիտի ունենաք , բայց քաջաւերուեցէք , որովհե-
 տեւ ես աշխարհի յաղթեցի » :

Ք Ա Ո Ւ Մ Ժ Է .

*1 Երբ Յիսուս այս խօսեցաւ , իր աչքերն երկինք
 վերուց ու կ'ըսէ . « Հայր , ժամը հասած է , քու Որդիդ
 փառաւորէ , որպէս զի Որդիդ ալ քեզ փառաւորէ : 2 Ինչ-
 պէս անոր փշխանութիւն տուիր ամէն մարմնի վրայ , որ
 ամենուն , որ տուիր անոր , տայ յաւիտենական կեանքը :
 3 Այս է յաւիտենական կեանքը , որ ճանչնան քեզ միայն
 ճշմարիտ Աստուած եւ Յիսուս Քրիստոսը որ զրկեցիր :
 4 Ես քեզ երկրի վրայ փառաւորեցի . կատարեցի այն գոր-
 ծերն որ տուիր ինձի , որ ընեմ : 5 Եւ հիմա փառաւորէ
 զիս , Հայր , այն քենէ ունեցած փառքովս որ քննէ ունիի
 աշխարհի ըլլալէն առաջ : 6 Քու անունդ մարդիկներուն

րանն , որ արտասանեց այդ խօսքը , որ և կատարուած է այսօր իսկ , այսին-
 քըն քրիստոնէական կրօնի յաղթանակը , այդ բերանն է բերան Աստուծոյ .
 եթէ ոչ այսպէս , ուրեմն յիմարութիւն է , եթէ ոչ ամբարշտութիւն , կարծել
 թէ այդ բերանն էր մարդոյ և ոչ Աստուծոյ :

1-12. Յիսուս կ'աղօթէ . այս որպիսի խորին դուս մեզ , վրան զի նա
 կ'աղօթէ ոչ թէ միան իւր փառաւորութեանն համար , զի նա արդէն ի յա-
 ւիտենից անաի փառաւորուած էր , այլ կ'աղօթէ որ իրեններն ալ փառա-
 ւորուին , մտրով շարէն զերծ , պահպանուելով իբրեւ աստուածային սեպ-
 ճականութիւն . ո՛վ աստուածափառ շնորհ և անհուն սէր առ մարդն ան-
 կեալ ու մեղուցեալ , որոյ օրինակն էր Յուզայ , որ կորսուեցաւ ըստ գրոյն
 (Սաղմ. ԽԱ. 9, ձԹ. 9) :

յաշտնեցի, որոնք տուիր ինձի աշխարհէն. քուկդ էին, եւ տուիր ինձի զանոնք, եւ քու խօսքդ պանեցին: 7 Հիմա դիտնան թէ ամէն բան որ տուիր ինձի, քննէ են: 8 Այսպէսեւ խօսքը որ ինձի տուիր, անոնց տուի. եւ անոնք ընդունեցին եւ ճշմարտութեամբ հանչցան թէ քե- նէ ելայ, եւ պիտի հաւատան թէ դուն զիս զրկեցիր: 9 Հիմա ես անոնց համար կ'ազաչեմ. եւ ոչ աշխարհի հա- մար կ'ազաչեմ, հապա անոնց համար՝ որ ինձի տուիր, որովհետեւ քուկդ են: 10 Եւ ինչ որ իմս է, այն ամէնը քուկդ է. եւ ինչ որ քուկդ է, ան իմս է, եւ ես անոնց մէջ փառաւորուած եմ: 11 Եւ ես այլ եւս աշխարհի մէջ չեմ, եւ ես քեզի կուգամ. սուրբ Հայր, պահէ զանոնք քու անունովդ, որով ինձի տուիր, որ մէկ ըլլան, ինչ- պէս մենք ալ մէկ ենք: 12 Երբ անոնց հետ աշխարհի մէջ էի, ես զանոնք քու անունովդ կը պահէի, որով ինձի տուիր, եւ պահեցի, եւ անոնցմէ մէկը չկորսուեցաւ, բայց կորստեան որդին, որպէս զի գրուածք կատարուի: 13 Բայց հիմա քեզի կուգամ, եւ այս կը խօսիմ աշխար- հի մէջ, որպէս զի իմ ուրախութիւնս լիովին ունենան իրենց անձերուն մէջ: 14 Ես անոնց տուի քու խօսքերդ եւ այս աշխարհս ատեց զանոնք, որովհետեւ աշխարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ: 15 Ոչ այս կ'ազաչեմ, որ զանոնք վերցնես աշխարհէ, հապա պահես զանոնք չարէ: 16 Այս աշխարհէս չեն, ինչպէս ես չեմ աշխարհէ: 17 Քու ճշմարտութեամբդ զանոնք սուրբ ըրէ, որովհետեւ քու խօսքդ ճշմարտութիւն է: 18 Ինչպէս զիս աշխարհ զրկե- ցիր, ես ալ զանոնք աշխարհ զրկեցի: 19 Եւ ես անոնց վրայ սուրբ կ'ընեմ իմ անձս, որպէս զի անոնք ճշմար- տութեամբ սրբուած ըլլան: 20 Բայց ոչ անոնց համար միայն կ'ազաչեմ, հապա եւ բոլոր անոնց խօսքով ինձի հաւատացողներուն համար ալ: 21 Որպէս զի ամէնքն ալ մէկ ըլլան, ինչպէս դու, Հայր, իմ մէջս եւ ես քու մէջդ,

13-18. Տուաւ Յիսուս իրեններուն ճշմարտութիւնը, և նորս Թէ և յի- խարհի, և էին յաշխարհէ, այլ պիտի չսիրուէին աշխարհէ, ուրեմն պէ- ունէին աստուածային պահպանութեան:

19-26. Պիտի սրբէր նա իւր անձը, այսինքն պիտի պատարագուէր յաշի, որով իրեններն եւս տեսնելով իւր սահաւորագոյն գործը, ճշմարտ:

որ անոնք ալ մեր մէջ ըլլան, որպէս զի աշխարհ ալ հաւատայ թէ դու զիս զրկեցիր: 22 Եւ ես այն փառքը՝ որ ինծի տուիր, անոնց տուի, որ մէկ ըլլան, ինչպէս մենք մէկ ենք: 23 Ես անոնց մէջ եւ դուն իմ մէջս, որ անոնք կատարեալ ըլլան, եւ գիտնայ աշխարհ, թէ դուն զիս զրկեցիր. եւ սիրեցի զանոնք, ինչպէս դուն զիս սիրեցիր: 24 Հայր, անոնք որ ինծի տուիր, կ'ուզեմ, ուր ես եմ, անոնք ալ ինծի հետ ըլլան, որպէս զի իմ փառքս տեսնեն, որ ինծի տուիր. որովհետեւ սիրեցիր զիս աշխարհի ըլլալէն առաջ: 25 Արդար Հայր, եւ աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ եւ անոնք ճանչցան թէ դուն զիս զրկեցիր: 26 Եւ քու անունդ անոնց ճանչցուցի եւ պիտի ճանչցնեմ, որ այն սէրն՝ որով զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, եւ ես ալ անոնց մէջ:

ՔԼՈՒԹ ԺԸ.

*1 Այս երբ ըսաւ Յիսուս, աշակերտներուն հետ մէկտեղ գնաց կեդրոնի ձորին անդիի կողմը, ուր կար պարտէզ, ուր մտաւ ինք եւ իր աշակերտները: 2 Յուզայ, որ զանի պիտի մասնէր, գիտէր այն տեղը, որովհետեւ շատ անգամ հաւաքուած էր հոն Յիսուս աշակերտներովը մէկտեղ, 3 Եւ Յուզայ իրեն հետ գունդն առնլով, եւ քահանայապետներուն ու Փարիսեցիներուն սպասաւորները, կուգայ հոն ջահերով, լապտերներով եւ զէնքերով: 4 Իսկ Յիսուս երբ տեսաւ իր վրայ եկող այն ա-

Թիւնք պիտի ըմբռնէին և առ ոէր ճշմարտութեան իրենք եւս պիտի սրբուէին նահատակութեամբ անձին, և այսպէս իւր և իրեններուն և Հօր մէջ միութիւնը պիտի հաստատուէր, միութիւն յաւիտենակտեան, այսինքն հաստատուութեան ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ: Եւ այս չէ միմէ մեզ յաւիտեան կեանք յամօթ և ի կորստնս նոցա, որք չուզեցին և չեն ուզեր ճանչել սրտութիւնը:

1-15. Յիսուս կը մտտնուի ու կը բռնուի (Մատթ. ԻԶ, 47-56: Մարկ. 143-52: Դուկ. ԻԲ. 47-54):

մէնը , ելաւ ու կ'ըսէ անոնց . « Ո՛վ կ'ուզէք » . 5 Պատասխան տուին անոր . « Նազովրեցի Յիսուսը » . կ'ըսէ անոնց Յիսուս . « Ես եմ » . եւ անոնց հետ կը կենար Յուզան ալ , որ զանի կը մասնէր : *6 Երբ ըսաւ թէ « Ես եմ » . ետ ետ գացին ու գետին ինկան : 7 Նորէն հարցուց անոնց . « Ո՛վ կ'ուզէք » . Եւ անոնք կ'ըսեն . « Նազովրեցի Յիսուսը » . *8 Պատասխան տուաւ անոնց Յիսուս . « Ըսի ձեզի թէ ես եմ , ուրիմն թէ որ զիս կ'ուզէք , թող տուէք որ ատոնք երթան » : *9 Որպէս զի կատարուի այն խօսքը որ ըսաւ թէ , « Անոնցմէ՛ զոր ինձի տուիր , անոնցմէ եւ ոչ մէկը պիտի կորսնցնեմ » : 10 Իսկ Սիմոն Պետրոս որովհետեւ սուր ունէր , հանեց զայն , եւ քահանայապետին ծառային զարկաւ , եւ անոր աջ ականջը մէկդի ձգեց , եւ ծառային անունը Մաղքոս էր : *11 Յիսուս կ'ըսէ Պետրոսին . « Սուրը նորէն իր պատեանը գիր . այն բաժակն որ Հայրս ինձի տուաւ , զայն չխմե՛մ » : 12 Իսկ գունդն ու հազարապետը եւ Հրէից սպասաւորները բռնեցին Յիսուսը ու կապեցին : *13 Եւ զանի բերին նախ Աննային որ Կայիափայի աներն էր , որ այն տարւոյն քահանայապետն էր : *14 Այս այն Կայիափան էր , որ Հրեաներուն խրատ տուաւ թէ « Լաւ է մարդու մը մեռնիլը ժողովրդեան վրայ » : *15 Եւ Յիսուսի ետեւէն կ'երթային Սիմոն Պետրոս եւ միւս աշակերտը . եւ այն աշակերան որովհետեւ ծանօթ էր քահա-

6. Ո՞ր չարը ստրափահար չլինիր և սրտաբեկ Թաւալզոր չընկնիր ի լուր ճշմարտութեան. « Ես եմ », անմեղին այս ձայնէն հնարին է չխռովիլ անիրուին և չզլորիլ ի գետին, ի վիհն կորստեան :

8. Այսպէս Յիսուս կամաւ կը յանձնուէր մահուան, այլ սակայն նախ հոգալով իւր աշակերտներուն տպահովութիւնը, նման հաւատարիմ ու քուց հովուին, որ աւելի իւր հօտին պահպանութեանն ունի փոյժ, քան անձին :

9. (Ժէ . 12) :

11. (Մատթ. ԻԶ. 39) :

13. Յիսուսի առ Աննա տարուիլը չեն յիշեր միւս աւետարանն . նախնական ու կարճ հարցաքննութիւն մը ըլլալուն համար Յիսուս կը տարուի առ Կայիափա, որ Սանեորիոնն էր գումարած և պատրաստ պաշտօնէ գծիսուս գատուպարտելու (Մատթ. ԻԶ. 57-58; Մարկ. ԺՂ-54; Դուկ. ԻԲ. 54-55) :

14. (ԺԱ. 49-51) :

նայապետին , Յիսուսին հետ մտաւ քահանայապետին գա-
 լիթը : *16 Եւ Պետրոս կը կենար դուրսը դրանը քով . ե-
 լաւ միւս աշակերտն որ ծանօթ էր քահանայապետին եւ
 ըսաւ դռնապանին եւ Պետրոսը ներս մտցուց : 17 Աղջիկն
 որ դռնապան էր , կ'ըսէ Պետրոսին . « Միթէ դո՞ւն ալ այն
 մարդուն աշակերտներէն ես » . եւ ան կ'ըսէ . « Չեմ » :
 18 Հոն կային ծառաներ եւ սպասաւորներ կրակ վառած
 ըլլալով , սրովհետեւ ցուրտ էր , եւ կը տաքնային , Պե-
 տրոս ալ անոնց հետ կը կենար ու կը տաքնար : 19 Եւ քա-
 հանայապետը հարցուց Յիսուսին իր աշակերտներուն եւ
 անոր վարդապետութեանը համար : 20 Պատասխան տուաւ
 անոր Յիսուս . « Ես աշխարհի մէջ յայտնապէս խօսեցայ .
 ես ամէն տտեւն սովբեցուցի ժողովրդին մէջ , եւ այն տա-
 ճարին մէջ , ուր բոլոր Հրեաները ժողովուած էին , եւ
 ծածուկ բան մը չխօսեցայ : 21 Ինծի ինչո՞ւ կը հարցընես ,
 անոնց հարցուր , որոնք լսեցին , թէ ի՞նչ խօսեցայ » : *22
 Երբ այն այս ըսաւ , սպասաւորներէն մէկը որ հոն կը
 կենար , Յիսուսին ապտակ զարկաւ ու կ'ըսէ . « Ատանկ
 պատասխան կուտաս քահանայապետիդ » : 23 Եւ Յիսուս
 կ'ըսէ անոր , « Թէ որ չար բան խօսեցայ , չարին համար
 վկայէ , բայց թէ որ բարի , ինչո՞ւ կը զարնես ինծի » : *24
 Եւ Աննա զանի կապուած զրկեց Կայիափայ քահանայա-
 պետին : 25 Եւ Սիմոն Պետրոս հոն կը կենար ու կը տաք-
 նար . կ'ըսեն անոր . « Միթէ եւ դու անոր աշակերտնե-

15. Կ'ուանդուի Թէ սո էր ինքն իսկ Յովհաննէս

16 27 Ուրացու Սիւն Պետրոսի (Մատթ. ԻԶ . 69-75 : Մարկ. ԺԴ . 66-72 :
 Ղուկ. ԻԲ . 56 62) :

22-23. Յիսուս կ'ապտակուի . այլ կը բողբէ , այսինքն սպասաւորին
 այս գործն իբր լրբու թեան գործ կը յանդիմանէ , որովհետեւ անոր հրաման
 չէր եղած : (Տես նաեւ Մատթէոսի Ե . 39ի ծանօթագրութիւնը) :

24. Կ'երեւի Թէ Աննա եւ Կայիափայ մի եւ նոյն պարտաի մէջ կը բնա-
 կէին , ուրոյն յարկ ու սրած ունենալով :

28. Յիսուս կը տարուի առ Պիլատոս (Մատթ. ԻԷ . 1-2 : Մարկ ԺԾ .
 1 : Ղուկ. ԻԳ . 1) : Ո'վ սաստկութիւն ապիրատութեան . նորս գտտիկը չը-
 պղծելու համար խից՞ կ'ընէին չմանել հեծանոսի մը բնակարանը , և չէին
 խից՞ ընել խնել աննեկի մը արիւնը : Զէր այս գտտկական առաջին ընթ-
 բիբը , այլ էր գտտկական տոնի , որ կը տեւէր եօթն օր , վերջիկը :

րէ՛ն ես) . Ան ուրացաւ ու կ'ըսէ թէ «Չեմ» : 26 Եւ քահանայապետին ծառաներէն մէկն՝ անոր ազգական , որուն ականջը Պետրոս կտրեց , կ'ըսէ . «Չէ՞, եւ ես քեզ տեսայ հոն , պարտէզին մէջ անոր հետ» : 27 Նորէն Պետրոս ուրացաւ . եւ խկոյն հաւը խօսեցաւ :

*28 Եւ կայիափայի պալատէն Յիսուսը դատաւորին ապարանքը բերին , եւ առաւօտ էր . եւ անոնք ապարանքը շտապն որ չպղծուին եւ ուտեն զատիկը : 29 Պիղատոս դուրս ելաւ ու անոնց կ'ըսէ . «Ան մարդուն վրայով ի՞նչ չարախօսութիւն կ'ընէք» : *30 Պատասխան տուին ու կ'ըսեն անոր . «Թէ որ այն մարդը չարագործ չըլլար , հիմա զանի չէինք մատնեք քեզի» : *31 Պիղատոս կ'ըսէ անոնց . «Առէք դուք զանի եւ ձեր օրէնքին համեմատ դատեցէք» . կ'ըսեն անոր Հրեաները . «Մեզի արժան չէ մէկը սպաննել» : *32 Որ կատարուի Յիսուսի այն խօսքն որ ըսաւ , նշանակելով թէ ինչ մահով մեռնելու է : *33 Նորէն Պիղատոս ապարանքը մտաւ , կանչեց Յիսուսը ու կ'ըսէ անոր . «Հրեաներուն թագաւորը դո՞ւն ես» : *34 Պատասխան տուաւ Յիսուս . «Քեանէ՞ կ'ըսես այդ , թէ ուրիշներն ըսին քեզի իմ վրայով» : *35 Պատասխան տուաւ Պիղատոս . «Մի՞թէ ես Հրեայ եմ . քու ազգդ ու քահանայա-

30. Ձի արդէն վճռած էին մահապարտութիւնը (Մատթ. ԻԶ. եւ այլն) :

31. Գիտէր Պիղատոս թէ նոքա կրօնական նախանձայուզութեամբ մոլեգնած էին , Յիսուսն իբր հայհոյիչ հրէական օրինաց մահապարտ ճանչելով , ուստի ինքն իբր հեծանոս՝ չուզեր լսել նոցա :

32. Խոսի պատիժն էր Հոովմէական և ոչ Հրէական . Հրեայք կը բարկոճէին հայհոյիչը :

33. Պիղատոս լսելով զՅիսուսէ բաղաւթական ամբաստանութիւն (Ղուկ. ԻԳ. 2) , կը հարցնէ անոր . «Դու ես թագաւորն Հրէից» :

34. Յիսուս Պիղատոսի միտը բանալ կ'ուզէ իւր այդ պատասխանով , այսինքն ե՞՞թէ ինքն անուանած ըլլար զինքը թագաւոր , ամբաստանողք իբր Հրեայ , որով և ականկալու գալստեան Մեսիայի , պիտի ըլլային իրեն կամ և ոչ թշնամի :

35. Պիղատոս չընդունիր թէ ինքն է հնարած այդ ամբաստանութիւնը կը նետէ Հրեայ ազգին ու քահանայապետներուն երեսին , իբր Բգէր ըսել . «Թէ որ դուն թագաւոր ես , ո՞ր է արքայական թագդ . ո՞ր քունի գաւազանդ . ո՞ր է թագաւորական ժիւղնիդ . ո՞ր են բանակներդ

պետանկրը քեզ ինձի մատնեցին . ի՞նչ գործ ըրած ունիս դուն» : *36 Պատասխան տուաւ Յիսուս . «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ . թէ որ իմ թագաւորութիւնս այս աշխարհէս ըլլար , իմ սպասաւորներս անշուշտ կը կռուէին , որ չմատնուիմ Հրեաներուն . բայց հիմա իմ թագաւորութիւնս ասկէց չէ» : 37 Կ'ըսէ անոր Պիղատոս . «Ուրեմն թէ որ ատանկ է , թագաւոր մը ես դուն» : Պատասխան տուաւ Յիսուս . «Դուն կ'ըսես թէ թագաւոր եմ , բայց ես ատոր համար ծնած եմ , եւ ատոր համար աշխարհ եկած եմ , որ վկայեմ ճշմարտութեանը . այն ամէնն , ով որ ճշմարտութենէ է , իմ ձայնիս մտիկ կ'ընէ» : *38 Կ'ըսէ անոր Պիղատոս . «Ի՞նչ է ճշմարտութիւն» : Այս

գրեզ Սագաւոր կարծեմ . գրեզ , որ նկուն լըուն ինձ բերուած , ինձ մատնուած ես :

36-37. Յիսուս կը փաստարանէ Սէ այն ամբաստանութիւնը չէր բոլորովին սուտ , այսինքն ունէր Սագաւորութիւն , ուրեմն էր Սագաւոր , այլ ոչ իւր Սագաւորութիւնը նման աշխարհի Սագաւորութեանց . ուրեմն չէր ոտիս Հրեայմայ եւ ոչ ապստամբ . այլ իւր Սագաւորութիւնն էր երկնային , այսինքն պիտի տիրէր աշխարհի երկնքէն , տալով ճշմարտութիւնը , անխտիր առ հասարակ համօրէն մարդկութեան , որոյ համար միայն ծնած ու եկած էր յաշխարհ . մինչեւ յայնժամ ստուծութիւնը տիրած էր աշխարհի (Ը. 44, ԺԲ. 31) , Վլ այնուհետեւ ճշմարտութիւնը պիտի տիրէր , զի իւր ձայնին շնորհիւ , որ է ճշմարտութիւն , Սշուաւութիւն ու այլ աղէտք և բոլոր չարիք իբր հետեւեանք մեղաց . պիտի վերջանային (Ը. 32-36) , և անիծեալ աշխարհս պիտի ըլլար օրհնեալ աշխարհ :

38. Աւանդ , Եբր եղած չեն մարդիկ , որք ի խնդիր ելած չեն գիտնալ ճշմարտութեան , արդարութեան , այս կամ այն աւարինութեան սահմանն ու գործադրութեան եղանակը , այլ սակայն սնուպարծաբար և կամ հարեւանցի իմն հետազօտութիւն ցոյց տուած են և միշտ Պիղատոսի նման կրօնակնին զարձնելով , այսինքն կիսատ թողլով իրենց հետազօտութիւնը , մանաւանդ ի գիտութիւն ճշմարտութեան , որպէս զի չլինին խղճահատ : Այսպէս Պիղատոս ե՞՞թէ սպասէր լսել Յիսուսի բերնէն Սէ քնչ է ճշմարտութիւն , ե՞՞թէ մարդ էր , պիտի աղաղակէր առ ամբաստանող ժողովուրդը . «Զիս ալ խաչը հանեցէք , վասն զի ես ալ ձայնակից եմ ամա» , իսկ ե՞՞թէ մարդ չէր , պիտի գոչէր իսկոյն . «Տարէք , խաչեցէք այդ մարդը , իբր խանգարիչ և հայհոյիչ» . ոչ այս , ոչ այն ըրաւ Պիղատոս . անտարբեր մնալն բարւոր համարեցաւ , այսինքն ձեռնպահ մնալ :

երբ ըսաւ, նորէն Հրեաներուն ելաւ ու կ'ըսէ անոնց. «Ես անոր վրայ ոչ մէկ պատճառ կը դռնեմ, *39 Բայց զուր սովորութիւն ունիք, որ այս զատկին մէկը ձեզի արձկեմ. ուրեմն կ'ուզէ՞ք որ ձեզի արձկեմ Հրեաներուն թագաւորը»: 40 Ամէնքն ալ պտռացին ու կ'ըսէին. «Ոչ ատի, հապա Բարսարան». եւ այն Բարսարան աւազակ էր:

ՊԼ ԱԻ Ե ԺԲ.

*1. Այն ատեն Պիղատոս Յիսուսը առաւ ու ծեծեց: 2 Եւ գինուորները փշերէ պսակ շինելով անոր գլուխը դրին, եւ անոր ծիրանի լաթ հագուցին, 3 Եւ կուգային անոր ու կ'ըսէին. «Բարեւ, Հրեաներու թագաւոր»: Եւ անոր ապատակներ կը զարնէին: *4 Պիղատոս նորէն զուրս ելաւ ու կ'ըսէ անոնց. «Ահա զանի զուրս՝ ձեզի կը բերեմ, որ գիտնաք թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ»: 5 Դուրս ելաւ Յիսուս եւ փռչերէ պսակ եւ ծիրանի հագուստ ունէր. եւ կ'ըսէ անոնց. «Ահա այդ մարդը ձեզի»: 6 Քահանայապետներն ու սպասաւորներն երբ զանի տեսան, ձայն վերուցին ու կ'ըսեն. «Խաչը հանէ. խաչը հանէ զատի»: Կ'ըսէ անոնց Պիղատոս. «Ձեզի առէք զատի, եւ ձեզէն խաչ հանեցէք, որովհետեւ ես ատոր վրայ յանցանք չեմ գտներ»: 7 Հրեաներն անոր պատասխան տուին. «Մենք օրէնք ունինք, եւ մեր օրէնքին համաձայն պէտք է որ մեռնի, որովհետեւ իր անձը Աստուծոյ Որդի ըրաւ»: *8 Երբ Պիղատոս այս խօսքը լսեց,

39-40. (Մատթ. Իէ. 15-18: Մարկ. ԺԵ. 6-10: Դուկ. ԻԳ. 13-17):

1-3. Յիսուս կը ձապկուի (Մատթ. Իէ. 26-30: Մարկ. ԺԵ. 13. Դուկ. ԻԳ. 24-25):

4-7. Պիղատոս Յիսուսն արիւնլուայ, փշեպսակ, և ծիրանազգ զուրս կը հանէ, յայտ յանդիման կը բերէ, ժողովրդեան սիրտն ի զուր գելու նպատակաւ, արտասանելով սա կարճ ու ազդու խօսքը «Ահա քձեզ»: Այլ ի զուր. աղաղակք կը զոռան. «Խաչեցի՞ն»:

8. Կը զարհուրի Պիղատոս, Թէ ժողովրդեան այս վկայութիւնը լսա

այլ աւելի վախցաւ : *9 Իսկոյն ապարանքը մտաւ ու կ'ըսէ Յիսուսի . « Դունն ո՛րակէ ես » . Եւ Յիսուս անոր պատասխան չտուաւ : *10 Կ'ըսէ անոր Պիղատոս . « Ինձի հետ չե՞ս խօսիր . չե՞ս գիտեր թէ իշխանութիւն ունի՞մ քեզ խաչ հանելու , եւ իշխանութիւն ունի՞մ քեզ արձրկելու » : *11 Պատասխան տուաւ Յիսուս . « Դունն իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չէիր ունենար , թէ որ քեզի վերէն տրուած չըլլար . անոր համար անոր՝ որ զիս քեզի մատնեց , մեղքն է մեծ » : *12 Եւ անկէ ետքը Պիղատոս կ'ուզէր զանի արձկել . եւ Հրեաները կը պոռային ու կ'ըսէին . « Թէ որ զատի արձկես , կայարին բարեկամը չես . այն ամէնն՝ ով որ իր անձը թագաւոր կը կոչէ , կայարին հակառակ է » : 13 Իսկ Պիղատոս երբ լսեց այս խօսքերը , Յիսուսը դուրս բերաւ , եւ բեմին վրայ նստաւ այն տեղը , որ Քարայատակ կը կոչուէր , եւ Եբրայեցերէն կապաթթա : 14 Չատկի ուրբաթն էր , եւ վեցերորդ ժաֆն էր , եւ Հրեաներուն կ'ըսէ . « Ահա ձիր թագաւորը ձեզի » : 15 Եւ անոնք կը պոռային . « Վերցուր մենէ , վերցուր մենէ , եւ զանի խաչ հանէ » . Կ'ըսէ անոնց Պիղատոս . « Ես ձեր թագաւորը իմո՛չը հանեմ » . քահանայապետները պատասխան տուին . « Մենք թագաւոր չունինք կայարէն »

Սէ Յիսուս է որդի Աստուծոյ և Սէ յիշելով անշուշտ իւր կնոջ երազը (Մատթ. Իէ. 19), կը կասկածի Սէ մի գուցէ, ըստ հուսատոյ հեծանոսական կրօնի, աստուածներէն մին ի կերպարանս մարդոյ յաշխարհ եկած ըլլայ և ինքն իւր այս գործով, զատապարտելով Յիսուսը, աստուածներուն վրէժխնդրութիւնը գրգռէ :

9. Գիտէր Սէ ո՛րակէ էր, այսինքն Գալիլեացի նա, այլ կ'ուզէր գիտնալ Սէ Աստուած էր նա Սէ մարդ : Լսեց Յիսուս, վասն զի եՍէ յայտնէր զինքը յայնժամ փրկուձեան մեծ գործը չէր կատարուեր :

10. Պիղատոս կը նեղարտի, տեսնելով Յիսուսի լուռութիւնը, և երբ կը պարծի իւր իշխանութեան վրայ, Յիսուսէն կը լսէ,

11. Թէ իշխանութիւնն է յԱստուածուստ անտի, չորին և եՍ ի պատուհաս (Հառվմ. ԺԳ. 1), ուրեմն մատնիչք էին աստուածամարտ, քանի որ իշխանութիւնը խաբելու անհարագոյն մեղքը կը գործէին :

12-16. Ի զուր Պիղատոս ջանահնար կը լինի ազատելու համար Յիսուսը, այլ երբ կը պնդեն կայսեր անունը յիշատակելով, և իւր անձին փութըն աւելի նախընտրելով կը հրամայէ, որ խաչուի Յիսուս գոհացում տա-

զատ» : 16 Այն ատեն զանի անոնց ձեռքը տուաւ , որ խաչելէ :

*17 Եւ անոնք առնելով զանի կը տանէին եւ ինքնին խաչափայտը շաղկած էր , եւ կ'ելլէր այն տեղը , որ անուանուած էր Գազաթ , եւ կ'ըսուէր Եբրայեցերէն Գողգոթայ , *18 ուր եւ զանի խաչ հանեցին եւ անոր հետ ուրիշ երկուք ալ , մէկ կողմը եւ միւս կողմը եւ մէջ տեղ Յիսուսը : 19 Եւ Պիղատոս տախտակ մը գրեց եւ խաչին վրայ դրաւ , եւ գրուած էր . « ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՏԻ ՀՐԵԱՆԵՐՈՒՆ ՔԱՎԱՒՈՐ » : 20 Այն տախտակը Հրեաներէն շատերը կարդացին , որովհետեւ այն տեղը ուր Յիսուս խաչուեցաւ , քաղաքին մօտ էր . եւ գրուած էր Եբրայեցերէն , Դաղմատերէն եւ Յունարէն : 21 Հրեաներուն քահանայապետները կ'ըսեն Պիղատոսին . « Մի՛ պրեր Հրեաներուն թագաւոր , հապա ան ըսաւ թէ Հրեաներուն թագաւորն եմ » : 22 Պիղատոս պատասխան տուաւ . « Ինչ որ գրեցի , գրեցի » :

23 Իսկ զինուորներն երբ Յիսուսը խաչը հանեցին , անոր հագուստներն առին եւ չորս կտոր ըրին , ամէն մէկ զինուորի մէկ կտոր , բայց պատմուճանը որովհետեւ առանց կարի էր վերէն բոլորովին հիւսուած , 24 կ'ըսեն իրարու . « Զպատենք զայդ , հապա վիճակ ձգենք ատոր վրայ , որու որ ելլէ » . որպէս զի կատարուի գրուածը , որ կ'ըսէ . « Իմ հագուստներս բաժնեցին իրենց մէջ , եւ իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին » : Զինուորներն այս բանն ըրին :

*25 Եւ Յիսուսի խաչին քով անոր մայրն ու անոր մօր քոյրը՝ կղէովպայի Մարիամը եւ Մագդաղենացի Մարիամը կը կենային : 26 Յիսուս երբ տեսաւ այն աշակերան

յու համար այն ժողովրդեան , որ քիչ ատենէն նոյն իսկ կայսեր իշխանութեան դէմ կուռելուն համար պիտի կործանուէր ու ցիրուցան լինէր :

17. (Մատթ. Իէ. 31-33; Մարկ. ԺԵ. 20-22; Դուկ. ԻԳ. 26-32) :

18-24. Խաչելու Թիւն Տեառն (Մատթ. Իէ. 34-38; Մարկ. ԺԵ. Դուկ. ԻԳ. 33-34) :

25-27. Յիսուս իւր խաչաչարչար վիճակին մէջ իսկ իւր ծնող Թեան պարտըր կատարելու համար կը մխիթարէ իւր մայրը . այս սր. գերահրաշ զաս մեզ , սիրելու և հոգալու համար մեր ծնողը .

որ կը սերէր, որ կը կենար մօտը, կ'ըսէ մօրը. «Ով կին, տհա քու որդիդ»: 27 Յետոյ կ'ըսէ այն աշակերտին. «Ահա քու մայրդ». Եւ այն ժամանակէն ի վեր այն աշակերտըն առաւ զանի իր քով: *28 Ասկէ ետքը երբ գիտցաւ Յիսուս թէ ամէն բան կատարեալ է, որպէս զի կատարուի գրուածը կ'ըսէ. «Մարաւի եմ»: 29 Եւ հոն քացախով լեցուն աման մը կար եւ անոնք լեղիի հետ քացախով սպունգ մը լեցնելով, զոպայի մշտիկի վրայ փաթթած՝ անոր բերնին մօտեցուցին: 30 Երբ Յիսուս լեղիով մէկտեղ քացախն առաւ, կ'ըսէ. «Ամէն բան կատարեալ է». եւ գլուխը ծռելով հոգին աւանդեց:

*31 Իսկ Հրեաներն որովհետեւ ուրբաթ էր, որպէս զի չմնան մարմինները խաչին վրայ, որովհետեւ այն շաբաթին մեծ օրն էր, Պիղատոսի աղաչեցին որ անոնց սրբունքները կտարտեն եւ վերցուին: *32 Զինուորներն եկան եւ առաջինին սրունքները կտարտեցին, նոյնպէս եւ միւսինը՝ որ անոր հետ խաչ ելած էր: 33 Բայց երբ Յիսուսի եկան եւ տեսան որ դեռ նոր մեռած էր, անոր սրունքները չկտարտեցին. 34 Բայց զինուորներէն մէկը տէգով անոր կողը խոցեց, եւ իսկոյն արիւն ու ջուր ելաւ: 35 Եւ ան որ տեսաւ վկայեց, եւ անոր վկայութիւնն է ճշմարիտ, եւ ան գիտէ թէ ճշմարիտ կ'ըսէ որ զուք ալ հաւատաք: *36 Այս եղաւ որ կատարուի գրուածը թէ

չուներ հաւագաս եղբայր, եթէ ունենար, պէտք չկար իւր մայրը յանձնել ուրիշին:

28 30. Մահ Յիսուսի (Մատթ. Իէ. 45-50: Մարկ. Ժե. 33-37: Դուկ. ԻԳ. 44-46): Կը ծռէր Յիսուս իւր գլուխը, աշխարհի մեղաց ԱՀԱԳԻՆ քաննէն ճնշուած. կը ծռէր, զի չուներ մէկն որ իւր գլուխը բռնէր, և այնպէս իւր հոգին աւանդելու միսթարուծիւնը տար իրեն. իբր անտէր, անտիրական կը մեռնէր աշխարհի տէրն ու արարիչը. եղ՛ուկ, «Ով սքանչելի տեսիլ անաւոր» (Շարական):

31. Զէր ներքի Օրէնքը (Բ. Օր. ԻԱ. 22-23), վասն զի յաշորդ օրն էր, ուրախութեան, վերջին օր զատկի, ուստի խաչեալներուն համար Պիտոսի այս աղաչանքը կ'ընեն:

35. Վերստին հրաշք. վասն զի Քրիստոսի կողէն կը հոսի արիւն և ջուր. «Կրկնավտակ կողին աղբերքը եկեղեցի իւր հաստատի. շրոյն մաքրէ՛րիւնն ըմպէ» (Շարական):

«Անոր ոսկորները պիտի չփշրուին» : *37 Եւ նորէն միւս դրուածը կ'ըսէ թէ «Անոր պիտի նային, որուն խոցեցին» :

*38 Ասկէ ետքը Յովսէփ որ Արիմաթեայէն էր եւ Հրեայներէն վախուն համար Յիսուսի ծածուկ աշակերտ էր, Պիղատոսի աղաչեց, որ Յիսուսի մարմինը վերցնէ. եւ Պեղատոս հրամայեց. եկաւ եւ զանի վերուց : 39 Եւ Նիկողեմոս՝ որ Յիսուսի առաջուց եկած էր գիշեր ատեն, բերաւ հարիւր լիտրի շափ զմոսի ու հալուէի խառնուրդ մը : 40 Յիսուսի մարմինն առին եւ կտաւներով, խունկերով պատեցին, ինչպէս Հրեաներուն օրէնքն էր պատելը : 41 Եւ այն տեղ ուր խաչուեցաւ, պարտէզ կար. եւ այն պարտէզին մէջ նոր գերեզման, որուն մէջ մէկը դրուած չէր : 42 Հոն Հրեաներուն ուրբաթին համար որովհետեւ գերեզմանը մօտ էր, Յիսուսը դրին :

ՔԼԱՅԻՆ Ի.

*1 Եւ միաշարաթի օրը Մարիամ Մագդաղենացի առտուն արշալոյսին կուգայ գերեզմանը, եւ քարը գերեզմանի դռներէն վերցուած կը տեսնէ : 2 Յետոյ կը վազէ եւ Սիմոն Պետրոսին կուգայ եւ միւս աշակերտին՝ որ Յիսուս կը սիրէր, եւ կ'ըսէ անոնց. «Տէրը վերուցին այն գերեզմանէն, եւ չեմ գիտեր, ուր դրին զանի» : 3 Ելաւ Պետրոս եւ միւս աշակերտն ու գերեզման կուգային : 4 Երկուքն ալ մէկտեղ կը վազէին, եւ միւս աշակերտը յառաջացաւ, Պետրոսէն աւելի շուտ վազեց եւ կանուխ գե-

36. (Ելք ԺԲ. 46. Թիւք Թ. 12), զի էր նա զտուն Աստուծոյ :

37. (Ձաք. ԺԲ. 10) :

38-42. Թաղումն Քրիստոսի (Մատթ. Իէ. 57-60. Մարկ. ԺԵ. 42-47. Ղուկ. ԻԳ. 50-56) : Նիկողեմոս եւս կ'ընկերակցի Յովսէփայ, բերելով զմուռըս և հալուէի դիւպատուծիւն Տեսուն, որպէս սովոր էին Հրեայք նալ դիսկն ու օծել. կտուներով փաթածել, խունկ ու կնդրուկ ծխել :

1-4. Մարիամ տեսնելով քարը վերցուած գերեզմանէն, ետ կը դիտուի, Յողով միւս իւր ընկեր կիները, որք կը լսեն հրեշտակային

բեզմանն եկաւ : *5 Եւ ծռելով կը տեսնէ որ կտաւները հոն կը կենային , բայց ներս չմտաւ : 6 Եւ Սիմոն Պետրոս եկաւ , որ անոր ետեւէն կուգար , եւ գերեզմանը մտաւ , եւ կը տեսնէ կտաւներն որ հոն կը կենային : 7 Եւ վարչամակը որ անոր գլուխն էր , ուրիշ կտաւներուն հետ չկար , հապա ծալլած զատ տեղ մը դրած էր : *8 Այն ատեն եւ միւս աշակերտը մտաւ , որ աւելի առաջ գերեզման եկած էր , տեսաւ ու հաւատաց : *9 Որովհետեւ չէին գիտեր գրուածը թէ պէտք է անոր մեռիչներէն յարութիւն առնուի : 10 Նորէն իրարու քով գացին աշակերտները : 11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կը կենար ու կուլար . եւ երբ կուլար , գերեզմանը ծռեցաւ : 12 Եւ ճերմակ հագուստներով երկու հրեշտակներ կը տեսնէ , որ կը նստէին , մէկը գլխին եւ միւսը ոտքերուն կողմը , ուր Յիսուսի մարմինը կար : 13 Եւ անոնք կ'ըսեն անոր . « Ով կին , ինչո՞ւ կուլաս » . կ'ըսէ անոնց . « Որովհետեւ իմ Տէրս այս գերեզմանէն վերուցին , եւ չեմ գիտեր ուր դրին զանի » : 14 Այս երբ ըսաւ , ետին դարձաւ , կը տեսնէ Յիսուսը որ կը կենար , եւ չէր գիտեր թէ Յիսուան է : 15 Կ'ըսէ անոր Յիսուս . « Ով կին , ինչո՞ւ կուլաս , ո՞վ կ'ուզես » . ան անանկ կարծեց թէ պարտիզպանն է , կ'ըսէ անոր . « Տէր , թէ որ դուն վերուցիր զանի , ըսէ ինձի . ո՞ւր դիր զանի , որ ես առնուիմ զանի » : 16 Կ'ըսէ անոր Յիսուս . « Մարիամ » . եւ ան դարձաւ ու կ'ըսէ անոր Եբրայեցիներէն . « Բարունի » , որ կը թարգմանուի վարդապետ : *17 Կ'ըսէ անոր Յիսուս . « Մի մօտենար ինձի . վասն զի զեռ չեմ ելած իմ Հօրս . հա-

աւետեաց (Մատթ. ԻԲ. 1-4; Մարկ. ԺԶ. 1-4; Ղուկ. ԻԳ. 1-2):

- 8. Յովհաննէս առաջինը կ'ըլլայ Յիսուսի յարութեանն հաւատացողը
- 9. Միւսներուն զեռ տգէտ ըլլալը կ'ակնարկէ:
- 5-10 Պետրոս և Յովհաննէս կ'երթան ի գերեզման անցը (Ղուկ. ԻԳ. 12):
- 11-16. Յիսուս կ'երեւի Մարիամ Մագդաղենացոյ (Մարկ. ԺԶ. 9-11):
- 1. Յիսուս չճողուր որ Մարիամ զպի իւր անձին, մինչդեռ միւս կի-
ուն ճողուց, որ փարին իւր ոտներուն, վասն զի Մարիամի նպատակն էր,
լած իւր բուն սէրէն, չճողուլ, պինդ բռնել, որ Տէրն այլ եւս չմեկնի.
Յիսուս որովհետեւ իրեններուն վերահապահած էր ալ աւելի բարձրա-
ւ՝ վիճակ, երկնքի մէջ, ուստի եղբայր անուանելով իրենները, կ'ըսէ.

պա գնա դուն իմ եղբայրներուս, եւ ըսէ անոնց. «Ես իմ Հօրս եւ ձեր Հօրը կ'ելլեմ, եւ իմ Աստուծոյս ու ձեր Աստուծոյն»։ 18 Կուգայ Մարիամ Մագդաղենացին եւ աշակերտներուն կը պատմէ թէ Տէրը տեսաւ, եւ այս ինչ բանն ըսաւ անոր։

*19 Եւ այն օրը միաշարաթի իրիկուն էր, եւ աշակերտները Հրեաներէ վախերնուն համար, դռները փակած ժողովուած էին, եկաւ Յիսուս եւ անոնց մէջտեղը կեցաւ ու կ'ըսէ անոնց. «Բարեւ ձեզի»։ 20 Երբ այս ըսաւ, ցուցուց անոնց ձեռքերը եւ իր կողը. եւ աշակերտներն ուրախացան, երբ Տէրը տեսան։ *21 Կ'ըսէ անոնց նորէն. «Բարեւ ձեզի, ինչպէս իմ Հայրս զիս զրկեց, եւ ես ձեզ կը զրկեմ»։ *22 Եւ այս երբ ըսաւ, փչեց անոնց ու կ'ըսէ. «Առէք Սուրբ Հոգին»։ *23 Թէ որ մէկու մը մեղքերը թողուք, անոր թողուած թող ըլլայ. եւ բռնէք, բռնուած ըլլայ»։

*24 Իսկ Երկուորեակ կոչուած Թովմաս՝ տասներկուքէն մէկը՝ անոնց հետ չէր, երբ Յիսուս եկաւ։ 25 Կ'ըսէին անոր միւս աշակերտները թէ «Տէրը տեսանք»։ եւ ան կ'ըսէ անոնց. «Թէ որ անոր ձեռքերուն վրայ չտեսնեմ բեւեռներուն նշանները, եւ իմ մատներս չխոթեմ բեւեռներուն տեղերը, եւ իմ ձեռքս չխոթեմ անոր կողը, չեմ հաւատար»։

26 Եւ ութ օր ետքը նորէն ներսն էին աշակերտներն

«Իմ Հօրս բով ելնեմ ու ձեր Հօր բով»։ չլսեք մեր Հօր բով, վասն զի նա իւր հայրն էր Ի Բնիկ, իսկ մեզ Հայր է շնորհիւ իւր Որդոյն։ Աստուած կ'անուանէ իւր Հայրն, զի էր ինքն ի նմանէ ծնունդ, Աստուած յԱստուծոյ։ 19-20. (Մարկ. ԺԶ. 14-18; Ղուկ. ԻԴ. 36-49)։

21. (Մատթ. ԻԸ. 18)։

22. Յիսուս կուտայ Հոգին Սուրբը, որպէս զի անդէն իսկ գէՊ իմանան զգիրս (Ղուկ. ԻԴ. 45)։

23. (Մատթ. ԺԶ. 19; ԺԸ. 18)։

24-29. Յիսուս Թովմասու եւս կ'երեւի ուրեմն Յիսուսի բեւեռն տտն Թովմաս ներկայ չէր, ուստի կը Թերահաւատի. անգամ կը տեսնէ ու կը դաւանի ըսելով. «Տէր իմ և Աստուած անդէն իսկ զինքն անձամբ կենդանի չտեսնողներու և հաւատարմեծագոյն երանութիւնը կուտայ Քրիստոս»։

ու թովմաս անոնց հետ . կուգայ Յիսուս , երբ դռները գոց էին , եւ կեցաւ մէջտեղն ու կ'ըսէ . « Բարեւ ձեզի » : 27 Յետոյ կ'ըսէ թովմասին . « Բեր քու մասներդ եւ հոս խոթէ , եւ իմ ձեռքերս տես . եւ բեր քու ձեռքդ ու իմ կողս մխէ , եւ անհաւատ մի՛ ըլլար , հապտ հաւատացեալ » : 28 Պատասխան տուաւ թովմաս եւ կ'ըսէ անոր . « Իմ Տէրս եւ իմ Աստուածս » : 29 Կ'ըսէ անոր Յիսուս . « Հիմա որովհետեւ տեսար զիս եւ հաւատացիր . երանի՛ , որոնք չտեսած պիտի հաւատան » : *30 Ուրիշ շատ նշաններ ալ ըրաւ Յիսուս աշակերտներուն առջեւ , որոնք այս գրքին մէջ գրուած չեն : 31 Հապա այսչափ գրուեցաւ , որ դուք հաւատաք թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է . եւ թէ հաւատաք եւ յաւիտենական կեանքն անոր անունովն ընդունիք :

ԳԼՈՒԹ ԻԱ.

*1. Ասկէ ետքը նորէն Յիսուս իր անձը յայանեց իր աշակերտներուն Տիբերեայ ծովագրին քով , եւ այսպէս յայանեց : 2 Մէկտեղ էին Սիմոն Պետրոս , Երկուորեակ կոչուած թովմասն ու Նաթանայէլն , որ Գալիլեացիներու Կանաչէն էր , եւ Զբեղդեայի որդիները , եւ այն աշակերտներէն ուրիշ երկու : 3 Կ'ըսէ անոնց Սիմոն Պետրոս . « Երթամ ձուկ որսալ » . Կ'ըսեն անոր . « Մինք ալ քեզի հետ կուգանք » . Գացին եւ նաւ մտան , եւ այն գիշերը բան չբռնեցին : 4 Երբ առտու եղաւ , Յիսուս ծովուն եզերքը կը կենար , բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուս է : 5 Կ'ըսէ անոնց Յիսուս . « Տղաքներ , միթէ ուտելու բան ունիք » . պատասխան տուին անոր եւ կ'ըսեն . « Ոչ » : 6

30-31. Յիսուս գործեց ուրիշ այլեւայլ հրաշքեր , այլ այս ամէնն էին մեր փրկութեան և յաւիտենական կենաց :

10. Կ'երեւի Յիսուս առ ծովագրեր Տիբերեայ իւր այս վեց աշակերտներն , որոց երկուքն , որք յանուանէ յիշուած չեն , կ'երեւի Թէ էին 72էն : միւս հաւատացելոց խմբէն :

Կ'րսէ անոնց . «Նաւին աջ կողմը ուռկանը ձգեցէք եւ պիտի գանձք» . ձգեցին , եւ չէին կրնար քաշել այն ձրկներուն շատութենէն : 7 Կ'րսէ Պետրոսին այն աշակերտն որ Յիսուս կը սիրէր . «Ան Տէրն է » : Սիմոն Պետրոս երբ լսեց թէ Տէրն է , զինքը զենջակով պատեց , վասն զի յերկ էր , եւ զինքը ծովը ձգեց : 8 Եւ միւս աշակերտները նաւով կուգային , որովհետեւ ցամաքէն հեռու չէին , հապա երկու հարիւր կանգունի շափ , եւ գործիքը ձկներով մէկտեղ կը քաշէին : 9 Երբ ցափաք ելան , կը տեսնեն վառած կրակ , եւ վրան ձուկ մը ու հաց : 10 Կ'րսէ անոնց Յիսուս . «Այդ ձուկերէն բերէք , որ Կուք հիմա բռնեցիք» : *11 Մտաւ Սիմոն Պետրոս , եւ գործիքը ցամաք կը քաշէր հարիւր յիսուն երեք մեծ ձկերով լեցուն . եւ այնչափ բան կար ու գործիքը չպատռեցաւ : *12 Կ'րսէ անոնց Յիսուս . «Եկէք , կերէք» . եւ աշակերտներէն մէկը չէր համարձակեր հարցնել թէ «Դուն ո՞վ ես» . որովհետեւ գիտէին թէ Տէրն է : 13 Եկաւ Յիսուս եւ կ'առնու հացն եւ անոնց կուտայ , եւ նոյնպէս այն ձուկը : 14 Այս երեք անգամ երեւցաւ Յիսուս աշակերտներուն , մեռելներէն յարութիւն անելով :

*15 Եւ երբ ճաշեցին , կ'րսէ Յիսուս Սիմոն Պետրոսին . «Յովնանի Սիմոն , զիս կը սիրեն ատոնցմէ աւելի» : Կ'րսէ անոր . «Այո , Տէր , եւ դուն գիտես , որ քեզ կը սիրեմ» : Կ'րսէ անոր . «Արածէ իմ պառներս» : 16 Նորէն կ'րսէ անոր . «Յովնանի Սիմոն , կը սիրեն զիս» . Կ'րսէ անոր . «Այո , Տէր , եւ դուն գիտես , որ քեզ կը սիրեմ» . Կ'րսէ անոր . «Իմ ոչխարներս արածէ» : 17 Կ'րսէ անոր երրորդ անգամ . «Յովնանի Սիմոն , կը սիրեն զիս» . Պետրոս տրտմեցաւ , որովհետեւ անոր երեք անգամ ըսաւ թէ «Կը սիրեմ զիս» . եւ կ'րսէ անոր . «Տէր , եւ դուն ամէն քան գիտես եւ ամէն բան կը ճաննեսս , եւ թէ քեզ կը սիրեմ» :

11. Ի զուր է 153 Սուրբ Ի խնդիր ըլլալը , և ուռկանին չպատու , հրաշք արդարեւ :

12-14. Այս էր երրորդ անգամ երեւումն Յիսուսի :

15-17. Գեզեցիկ կը գրէ Սահակ Պարթեւ . «Երիւք հարցմամբն ուրացուծիւնն (Պետրոսի) բժշկելով (Շարական , Օրհ . Կանոն Աւար բաժու)» :

րեմ) . կ'ըսէ անոր Յիսուս , «Արածէ իմ ոչխարներս» : *18
 Ճշմարիտ կ'ըսեմ քեզի , որ երբ տղայ էիր , ինքնին գօտի
 կը կապէիր եւ կ'երթայիր ուր ուզէիր . եւ երբ ծերանաս ,
 ձեռքդ վեր պիտի վերցնես եւ ուրիշները քեզի գօտի պիտի
 կապեն , եւ պիտի տանին , ուր չես ուզեր» : 19 Այս ըսաւ ,
 նշանակելով թէ ինչ մահով փառաւոր պիտի ընէր զԱստ-
 ուած . եւ այս երբ ըսաւ , կ'ըսէ անոր «Իմ ետեւէս եկու» :
 *20 Դարձաւ Պետրոս ու կը տեսնէ այն աշակերտն , որ Յի-
 սուս կը սիրէր , որ անոր ետեւէն կ'երթար , եւ որ ինկաւ
 անոր կուրծքին վրայ եւ կ'ըսէ . «Տէր , ո՞վ է որ քեզ
 պիտի մասնէ» : 21 Պետրոս զանի տեսնելով , կ'ըսէ Յի-
 սուսին . «Տէր , բայց աս ի՞նչ» : 22 կ'ըսէ անոր Յիսուս .
 «Թէ կ'ուզեմ , որ ադ կենայ , մինչեւ ես գամ . քեզի ի՞նչ .
 դուն իմ ետեւէս եկու» : 23 Եւ այս խօսքն ելաւ աշա-
 կերտներուն մէջ եւ կարծեցին թէ այն աշակերտը պիտի
 շմեռնի . եւ Յիսուս չըսաւ անոր թէ «Պիտի շմեռնի ,
 հապա « Թէ կ'ուզեմ ես որ ադ կենայ , մինչեւ ես գամ » :
 *24 Այս այն աշակերտն է , որ կը վկայէ ասոնց համար ,
 եւ որ ասոնք գրեց , եւ գիտենք թէ անոր վկայութիւնը
 ճշմարիտ է : 25 Բայց կայ ուրիշ շատ բան , որ Յիսուս
 ըրաւ , որ թէ որ գրուած ըլլար մի առ մի , կարծեմ թէ
 եւ աշխարհս բաւական չէր կրել գրքերը , թէ որ գրուած
 ըլլային :

Վ Ե Ր Ջ

18-19. Պետրոսի մահուան մարգարէութիւնն էր այս , որ զխիվայր խա-
 չեցաւ Ներոնի հրամանով :

20-23. Յովհաննէս պիտի երկար սպրէր տեսնելով կատարուած Յի-
 սուսի մարգարէութիւնն ի պատիժ Լրեայ ազգին . նա կենդանի պիտի մը-
 նար ուրիշներու հետ (Մատթ . ԺԶ . 28 : ԻԲ . 27-34) :

24-25 . Ականատես էր Յովհաննէս այն ամենուն զորս Յիսուս խօսե-
 ցաւ ու գործեց : ուրեմն իւր վկայութիւնն է ժանրակշիռ և ճշմարտագոյն :

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՉԱՆԵԱՆԻ
Կարգաթիվ.....

Վ Ր Ի Պ Ա Կ Ք



Եջ	Տող	Սխալ	Ուղիղ
13	1	երեւեցաւ երագի մէջ եւ ըսաւ	կ'երեւնար երագի մէջ ու կ'ըսէր
24	22	եւ նորա հրեշտակներ	եւ հրեշտակներ
40	15	• Այլ որովհետեւ	• այլ կը մտանէ ի պատիժ իրենց մեղաց. և զի մարգո
46	7	այս է	այս են
51	17	[Ղուկ. 2-3]	[Ղուկ. Ը. 2-3]
54	11	խոզուն մէջ	խոզերուն մէջ
56	29	բժշկեի	բժշկելի
61	33	նահատակեցաւ	Յակորոս նահատակեցաւ
67	20	Սշնամուծեան մը	Սշնամուծիւն մը
76	5	Հեծանառներէն	հեծանառներն
104	6	եզած	եկած
135	18	ամէն դասու մէջ	ամէն դարու մէջ
158	3	նորէն խմեմ	նոր խմեմ
159	8	իմ Հոգիս	իմ հոգիս
164	7	Բակ Պետրոս	Իսկ Պետրոս
186	32	անհնազանդութեան	անհնազանդութիւն
224	30	Աստուծոյ նորարքայունքը մէջ	նոր խմեմ գայն Աս . . .
225	3	երեք անգամ չխօսած՝	չխօսած՝ երեք անգամ
236	34	քահանային երբ	քահանայն երբ
239	32	ի պատիւն նա	ի պատիժ նա
247	17	տրաքոնտացիներու	Տրաքոնիացիներու
273	7	✠ 44 եւ երբ	եւ երբ
275	33	[Մարկ Ժ.	[Մատթ. Ժ.
282	31	[Մատթ. Մարկ. 28-33]	[Մատթ. Ժ. 28-33]
282	17	մտերբէն չէ	մտերբէն է
1	12	չեն քաշեր	չեն քաղեր
2	4	այն քարն ոչ	այն քարն որ
3	28	զողշակութիւն ու բախուի	զողշակութիւն ու բացուի
5	35	հոգևով և մարմնով	հոգևով և ճշմարտութեամբ
5	21	կը տրանցին	կը տրանցային
15	9	ատոր հասար ձեւած եմ	ատոր մէջ ձեւած եմ

